

# Ավերիս Փափագյան

ԹՈՒՐԵԱԿԱՆ  
ՎԱՎԵՐՆԳՐԵՐԸ  
ՀԱՅՈՍՏԱՆԻ  
ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(16-19-րդ դարեր)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(16-19-րդ դարեր)



ԵՐԵՎԱՆ 1999

A II  
85190

ԴՏՅ 941 (479.25)

ՊՄԴ 63.3 (23)

Փ 311

Փ 311 **Փափագյան Ավետիս.** Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարի).- Եր. : Եզհաս, 1999թ.-284 էջ

**Տպագրվում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

*Աշխատությունն ունի հետազոտական և աղբյուրագիտական բնույթ: Առաջաբանում տրվում է թուրքական պատմական աղբյուրների և վավերագրական նյութերի վերլուծությունը, իսկ երեք գլուխներում հաջորդաբար խոսվում է Օսմանյան կայսրությունում հայերի իրավական վիճակի, հողային քաղաքականության ու հարկային կառուցվածքի, ինչպես նաև Դայաստանին վերաբերող թուրքական պատմա-աշխարհագրական աղբյուրների մասին:*

*Հավելվածում ընդգրկված են հայ ժողովրդի պատմության և Կ.Պոլսի հայ համայնքին վերաբերող մի շարք թուրքական նորահայտ վավերագրերի քարգմանությունները (օսմաներեն բնագրերից):*

*Յուրաքանչյուր նյութ համալրված է ծանոթագրություններով, իսկ վերջում տրված է տերմինների քառաբան:*

*Published on the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies, NAS Armenia*

*The following text is an accumulation of both research and documentary material. The preface includes an analysis of Turkish historical documentary sources. Following the preface, the book delves into the first of three chapters, which is about the juridical situation of Armenians in the Ottoman empire. The second chapter encompasses both terrestrial politics and rental structures. The final chapter is an assortment of Turkish historical and geographical sources about Armenia.*

*The appendix contains translations of Ottoman documents about the history of the Armenian people and about the history of the Armenian Community of Constantinople.*

*Annotations have been provided for all of the researched materials, while a terminological dictionary appears at the end.*

Փ 0503020913 99  
0069(01)-99

ՊՄԴ 63.3(23)

ISBN 99930-808-1-0

© YEGEA Publishing House

*Նվիրում էմ լավագույնս՝*

**ԷՎԱՆԹԻՆ ՓԱՓԱԶՅԱՆԱ (1927-1998)**

*և*

**ԹԱԳՈՒՀԻ ՄԱՆՈՒՅԱՆԱ (1910-1999)**

*անուր հիշատակին*

---

*Ես երախտադրյալ եմ և երջանիկ,  
որ սրտանոց խոտերին այս երկր  
հրատաղանքում է դախանելիս՝*

**ՏԵՐ և ՏԻՎԻՆ  
ՀԱՄԲԱՐՉՈՒՄ և ԷՄԹԱ ՓԱՓԱԶՅԱՆՆԵՐԻ**

*և*

**ՏԵՐ և ՏԻՎԻՆ  
ԱՐՏԱՆԱԶԴ և ՄԱՐԻ ԳՈՒԲՈՒՆՅԱՆՆԵՐԻ**

*Հախնադրյալ թրանք՝*

---



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ	
Ստեփան Ալաջաջյան - ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	7
ԱՌԱՋԱԲԱՆ	9
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	34
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՀՈՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	78
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐԷ ԱՇԽԱՐՀԱԳԻՐՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ	106
ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ	
ԿԱՆՈՒՆԱՄԵՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՒՆՆԵՐ	130
1. Գալլիպոլիի շուկայում արգելման հրամանագիր	130
2. Կ.Պոլսի խասսերին վերաբերող բերաթի պատճենը	130
3. Էրզանիի լիվայի տասնհինգ հայկական գյուղերի մասին	131
4. Կայսերական հրովարտակի իմաստն այս է	134
5. Երևանի լիվայի կանոննամեն	135
6. Բասենի լիվայի կանոննամեն	140
7. Բասենի լիվայի կանոննամեն ըստ հնագույն դաֆթարի	143
8. Քըղիի լիվայի կանոնը	145
9. Կարսի լիվայի ընդարձակ դաֆթարը	146
10. Ղիարբեքիի լիվայի կանոննամեն	147
11. Արաբկիրի լիվայի կանոննամեն	148
12. Աղանայի լիվայի կանոննամեն	150
13. Բայբուրդի վիլայեթի կանոննամեն	152
ԿԱՆՈՒՆՆԵՐ	154
Կումանաթի քրիստոնյաների նկատմամբ կատարվող զուլումները	161
Թոքաթի վիլայեթի հարկերի բաշխման մասին	161
ՂԵՎՇԻՐՄԵՆ (մանկածողով) ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ	166
1. Բարձրագույն և սրբազնագույն ֆերմանի իմաստն այս է	166
2. Հրամանագիր Սիսի բեյին և կադիին	168
3. Հրամանագիր Կայսերիի բեյին	168
4. Հրամանագիր ենիչերիների աղային	169
5. Հրամանագիր ենիչերիների աղային	169
6. Հրամանագիր սուլթանական պալատի ենիչերիական զորամասի Սամսոնջու բաշի Ջաֆեր սուբաշիին	170
7. Հրամանագիր Կարամանի բեյերբեյին և վիլայեթի կադիներին	170
8. Հրամանագիր ենիչերիների աղային	171
9. Հրամանագիր Ղիարբեքիի բեյերբեյին	171
10. Հրամանագիր ենիչերիների աղային	172
11. Հրամանագիր ենիչերիների աղա Սեհմեդին	172

12. Հրամանագիր ենիչերինների աղային	172
13. Հրամանագիր Մնատուխայի բեյլերբեյին	172
14. Հրամանագիր ենիչերինների աղային	173
15. Ենիչերինների աղայի կողմից առանձին կադիներին ուղղված 1031 (1621) թվագրությունը կրող նամակի պատճենը	173
16. Կոջաէլիի և Բուլուի, Արաբկիրի և Բայբուրդի կադիներին ուղղված ֆերմանը	175

**ԲԵՐԱԹՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... 182

1. Սուլթան Սեհմեդ II-ի թուղթան	182
2. Բերաթ (ուղղված Գրիգոր Պասմաջյան պատրիարքին)	183
3. Հայոց պատրիարքին ուղղված կայսերական բարձր հրովարտակի պատճենը	185
4. Սեծ վեզիրի գրությունը	189
5. Քիրմասի մեծահարգ նայիրին և մյուս վեզիրներին	189
6. Բերաթ (ուղղված հայ կաթոլիկ համայնքին)	190
7. Բերաթ (ուղղված Ստեփաննոս Աղավնի պատրիարքին)	191
8. Հայ կաթոլիկների պատրիարք Հասուն էֆենդիին շնորհված կայսերական հրովարտակի պատճենը	195
9. Օսմանյան կայսրության մեջ գտնվող ոչ-մահմեդական ժողովուրդների տաճարների վերանորոգման մասին տրված սուլթանական հրովարտակ	199
10. Հայ պատրիարք Արշարունի Հովհաննես էֆենդիի պաշտոնավարությունը թուրքական կողմից բերաթը	200

**ԿՊՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՌԻԿՏԱՏԵՂՐԻՆԵՐԻ ԶԱՆՂԱՍՆ,  
ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՐՈՎԱՐՏԱԿԱՆԵՐ.....**

1. Մահմուդ փաշայի խանում (մահմեդականների) քրիստոնյաներից զանգատելու մասին	207
2. Ոչ-մահմեդականների մոտ գտնվող ստրուկների ցուցակագրման մասին	208
3. Ոչ-մահմեդականների մոտ գտնվող ստրուկները վերցնելու և մահմեդականների վաճառելու մասին	209
4. Անօրինական կառուցված եկեղեցիները քանդելու մասին	210
5. Սուլու-մանաստրում հայ կրոնավորների կողմից անօրինական կառուցված շինության մասին	212
6. Մզկիթների շրջակայքում քրիստոնյաներին չբնակեցնելու մասին	213
7. Ուսկյուտարում գտնվող գյուղերի խաղողից զինի չպատրաստելու մասին	214
8. Պալատի դարբասից դուրս անօրինական կառուցված եկեղեցիներ քանդելու մասին	214
9. ԿՊՈՍԻ քանակվող ոչ-մահմեդականների տարագի մասին	215
10. ԿՊՈՍԻ զինետները վերացնելու մասին	216
11. Փողոցում քրիստոնյաների տիկով զինի կրելու մասին	217
12. Էյուր սուլթանի սերուցք վաճառող խանութները կանանց մուտքը արգելելու և այդ խանութներում քրիստոնյաներին տեղ չտալու մասին	218
13. Քրիստոնյաների ԿՊՈՍԻ զինի բերելու մասին	218

14. Պաշտոնանկ եղած Կ.Պոլսի պատրիարքին Այնորոգ աջտրելու մասին	219
15. Քրիստոնյաների կողմից մահմեդական թաղամասերում զինետներ չբացելու մասին	220
16. Ոչ-մահմեդականներից գինի չվաճառելու մասին	221
17. Ոչ-մահմեդականները իրենց արտաքին տարազով մահմեդականին չճանաչելու մասին	221
18. Կ.Պոլսում հրեաների և քրիստոնյաների գլխարկ կրելու մասին	222
19. Էյուբ Սուլթանի շրջանում քրիստոնյաներ չբնակեցնելու մասին	223

<b>ԶԱՆԱԶԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ</b>	228
1. Հրամանագիր Վանի բեյլերբեյին	228
2. Հրամանագիր Ռումի (Սըվազի) բեյլերբեյին	228
3. Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը XVII դարում	229
4. Օսմանյան կայսրության և Իրանի միջև Կասրի-Շիրինում կնքված հաշտության պայմանագիրը	230
5. Սուլթան Մուստաֆա II-ին ուղղված անանուն ուղերձ	231
6. Հարձակում մի եկեղեցու և վանքի վրա	233
7. Էրզրումցի Խուդավերդի օլու մանուկ	233
8. Չինվորական հարկի բաշխման և գանձման մասին մեծ վեզիրի հրամանագիրը	233
9. Ոչ-մահմեդական հպատակներից զինվորական հարկ գանձելու մասին մեծ վեզիրի գրուքյունը	235
10. Ոչ-մահմեդական զինակոչիկների վիճակահանության վերաբերյալ կանոնի բարեփոխման մասին	237
11. Յըղդզի կայսերական պալատի գլխավոր քարտուղարության գրասենյակի որոշումը («Հայաստան» աշխարհամաս անունը արգելելու մասին)	238
12. Կայսերական հրաման Մարաշի սանջակի ներսում «Ձեթուն» կազան «Սուլեյմանլը» վերանվանվելու մասին	238

**ՀԱՎԵԼՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ** ..... 242

1. Ազգիս հայոց պատրիարք Չաքարիայ աստուածաբան վարդապետի պատրիարքութեան խատտի շերիֆի հայկական թարգմանեալ օրինակն է	242
2. Օրինակն ֆերմանի Ղալաթիայու վոյստային հայկական բառի	245
3. Ի Ղալաթիայ նստեալ դեսպանաց ֆերմանի հայկականն է	249
4. Սա է եմնիչէր աղասուն ֆերմանի հայկական թարգմանեցեալն	251
5. Եկեղեցեաց թէֆթիշ չամնելոյ ֆերմանի հայկականն է	255

**ԹՈՒՐԹԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ** ..... 260

**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ** ..... 262

**ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐ** ..... 272

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ** ..... 278

**ԹՈՒՐԹԵՐԵՆ ԱՍՓՈՓՈՒՄ** ..... 282

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր միջնադարի պատմության հյուսվածքը թել առ թել առնչվում է նույն հողի վրա ապրող մեկ ուրիշ ժողովրդի՝ իմա թուրքերի պատմության հետ: Որ ասպարեզին էլ ձեռք տանք, նրանք իրենց էջերն ունեն մեր պատմագրության մեջ, սեւացած էջեր, մեզ դառնացնող էջեր: Այդ դառնությունները գալիս են մեր դեմ հանած իրենց օրենքներից, որ գրված ու շարադրված են օսմաներեն՝ իրենց շահերի, իրենց ցանկությունների, բռնության թելադրած կանոններով:

Ոչ նրանց գրած օրենքների մեջ ցատում կա, ո՛չ էլ կանոնների մեջ: Բայց դրանք հայ հանրությանը ոչնչացնող օրենքներ են: Մեր պատմության բոլոր դրվագներում, հողագործի, եկեղեցու, բանվորի, աշխատանքից մինչև մեր ազատագրական պայքարները, մեր հերոսական ու պաշտպանական արդար կռիվները նրանց դեմ են: Եվ մեր պատմությունը մեր աշխատանքի, մեր հավատքի, մեր իրավունքների ու մեր ազատության համար մղված պայքարի պատմությունն է:

Իսկ նրանց մո՞տ:

Ո՛չ: Նրանք չեն նշում մեր հերոսական պայքարը, չեն էլ նշում մեր ապստամբությունները ճնշելու իրենց պատմությունը, որպեսզի չպատասխանեն այն հարցին, թե «ի՞նչն է են հայերը ապստամբել, այդ ինչպես եք վերաբերվել նրանց, որ զենք են վերցրել ձեր դեմ»... Իսկ ինչպիսի՞ տեղ են տվել նրանք իրենց պատմության էջերում, նույն հողի վրա ապրող, նույն օրենքների ու կանոնագրերի ներքո գտնվող մի այլ ժողովրդի նկատմամբ:

Ահա դա՛ է պակասում մեր պատմական իմացության մեջ եւ ահա դրան է նվիրված պրոֆ. Ավետիս Փափագյանի այս երկը: Մենք դեռ շատ քիչ ենք գիտականորեն թափանցել միջնադարի թուրքական աղբյուրների, արխիվների ու այլ պետական օրենսդրական ու վարչական արձանագրությունների մեջ: Թուրք պատմագիրների մեկնաբանությունները մեր կողմից չեն ուսումնասիրված:

Ահա դա՛ է պակասում մեր պատմության իմացության մեջ:

Հայը չի սիրում ու չի կարող եկեղեցի քանդել:

Հայը իր ծիսակատարությունները չի պղծում:

Հայը ուրիշ ազգից մանկահավաք չի կատարում վատ նպատակներով:

Հայը հարկեր չի դնում իր հարեւան թուրքի հողի, ունեցած ինչ-

քի վրա:

Իսկ թուրքն ի՞նչ արեց, ի՞նչ կանոններով, ինչպիսի՞ հրամաններով ու վարչական ձեւակերպումներով դրանք կատարեց հայ շինականի վրա:

Քաջ հայտնի է, որ կանոնագրությունների, վարչական հրամանների ու օրենքների ձեւակերպման մեջ ոչ ցասումն է երեւում, ոչ վրեժխնդրությունը, բայց տաղանդավոր պատմաբանները իսկույն բացահայտում են թե տվյալ պետության (այս դեպքում՝ Օսմանյան) հողային, վարչական, հարկային քաղաքականության մեջ եղած գերբարձր որոշումները ուն են վերաբերվում եւ ովքեր են գերծ մնում այդ հարկերից:

Քրտնաջան եւ ներհուն աշխատանքի շնորհիվ Ավետիս Փափազյանը կարողացել է Օսմանյան կայսրության այդ օրենքների ուղղվածությունը բացահայտել եւ կշռել դրա ծանրությունը հայ գյուղացիների եւ ռանչպարների ուսերի վրա:

Այդ վավերագրերի հայտնաբերումը, թարգմանությունն ու մեկնաբանումն է, որ կատարում է Փափազյանը, մի ազնիվ աշխատանք, որով նոր լույս է սփռում հայ միջնադարի իրադարձությունների վրա:

Սա այն ազնիվ քայլերից մեկն է, որ արեւելագետները եւ պրոֆ. Ավետիս Փափազյանը կատարում են, իմանալու, թե ինչպիսի տեղ ենք մենք գրավում թուրքական վավերագրության մեջ, նրանց պատմական թղթերում, ինչպես են մեկնաբանում իրենց վայրագությունները եւ մեր ժողովրդի կրած տառապանքները:

## ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆ

*Մշակույթի վաստակավոր գործիչ*

## ՍՈՍՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ թե՛ մայրենի եւ թե՛ օտար՝ բյուզանդական, պարսկական, վրացական եւ արեւմտաեվրոպական լեզուներով կան հարուստ աղբյուրագիտական նյութեր: Պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար նշանակություն ունեն նաեւ միջնադարի թուրք պատմագիրների հաղորդած տեղեկությունները, հատկապես Արեւմտյան Հայաստանի պատմության 16 -19 - րդ դդ. վերաբերող պատմագրական նյութերն ու վավերագրական փաստաթղթերը, քանի որ դրանք սերտորեն առնչվում են Օսմանյան կայսրության ընդհանուր պատմության հետ: Թուրք հեղինակները, նկարագրելով միջնադարի քաղաքական իրավիճակը, միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի եւ հարեւան երկրների ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության, մասամբ էլ սոցիալ - տնտեսական կյանքի լուսաբանման եւ այլ հարցերի շուրջ:

Թուրք պատմագիրները հատուկ ուշադրություն են դարձրել Եվրոպայի հարավ - արեւելյան երկրներում ծավալված ռազմական գործողություններին, ինչպես նաեւ Անդրկովկասում եւ հատկապես պատմական Հայաստանի տարածքում տեղի ունեցած թուրք-իրանական երկարատե պատերազմներին: Հարկ է նշել, որ թուրք պատմագիրները, շատ չնչին բացառությամբ, իրենց ուշադրությունը կենտրոնացնում են հիմնականում սուլթանների, վեզիրների, փաշաների եւ նրանց կատարած նվաճողական պատերազմների գովերգմանը: Թե ինչ ծանր ազդեցություն են գործել երկարատե եւ կործանարար պատերազմները նվաճված երկրների տնտեսական կացության վրա, այդ մասին թուրք պատմագիրները գրեթե չեն խոսում:

1 ✓ Թուրքական աղբյուրների գիտական ուսումնասիրության ու հայերեն թարգմանության նախաձեռնությունը, ինչպես նաեւ իրապարակունը պատկանում է Ա. Խ. Սաֆրաստյանին: Նրա պարակի վրա գտնվող «Թուրքական աղբյուրների» չորս հատորները՝ հանդիսանում են նրա երկար տարիների արզասավոր եւ քրտնաջան աշխատանքի արդյունքը: Մինչեւ Ա. Խ. Սաֆրաստյանը, հայ պատմագրության մեջ ոչ ոք չէր զբաղվել թուրքական աղբյուրները վերծանելու, թարգմանելու եւ գիտական շրջանառության մեջ դնելու խնդրով: Նա առաջինն էր, որ ձեռնարկեց օսմաներենի իրապարակուն եւ պատմական տերմինների թարգմանության բարդ գործընթացը: «Թուրքական աղբյուրները» մատենաշարի չորս հատորներում ընդգրկ-



վել են թուրքական այն պատմագիր - տարեգիրների երկերը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հայ ժողովրդի պատմության համար: Մ. Խ. Սաֆրաստյանը չի սահմանափակվել միայն հայ ժողովրդի պատմությանը վերաբերող նյութերի թարգմանությամբ: Նշված հատորները բավական հարուստ նյութ են պարունակում նաեւ Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Քաղվածաբար արված թարգմանությունները հիմնականում վերաբերում են 16 - րդ դարի սկզբին ծավալված այն իրանա - թուրքական պատերազմների մանրամասն նկարագրությանը, որոնք որոշ դադարներով շարունակվեցին մինչեւ 18 - րդ դ.:

16 - րդ դ. առաջին կեսի պատմական դեպքերը պարսկական շահերի «պատմագիրների» նման մեծ մասամբ գրի են առել «Շահնամե - խան» (Շահնամե կարդացող կամ ասող) կոչվող արքունական բանաստեղծները: Տվյալ ժամանակաշրջանի հեղինակները ժամանակագրական կարգով նկարագրել են հատկապես սուլթան Սուլեյման Կանունիի (1520 - 1566) արշավանքները եւ զովերգել ու փառաբանել նրա ռազմական հաջողությունները արեւելյան ռազմաճակատներում: Նման աշխատանքները կոչվում էին «Ջաֆերնամե», (Հաղթանակի գիրք), «Սելիմնամե» (Սելիմի գիրք), «Սուլեյման նամե» (Սուլեյմանի գիրք), կամ էլ «Թարիհ -ի Սուլեյման» (Սուլեյմանի պատմություն):

Տվյալ ժամանակաշրջանի կարեւորություն ներկայացնող պատմագիրներից հիշատակության արժանի են Քյուչյուկ Նիշանջին, Քենալ փաշա զադեն (1468 - 1536), (նրան հաճախ անվանել են նաեւ Իբն Քենալ), ինչպես նաեւ Սուլեյման Կանունիի մեծ վեզիրներ Լյութֆի փաշան (մահ. մոտ 1564 թ.), Ռուստեմ փաշան (1500 - 1561), որոնք հիմնականում գրել են Օսմանյան կայսրության քաղաքական պատմությունը սկզբից մինչեւ իրենց ժամանակաշրջանը, «Թեվարիհ - ի ալի Օսման» (Օսմանյան դինաստիայի պատմություն) խորագրի տակ: Տվյալ ժամանակաշրջանի համար կարեւոր նշանակություն ունի նաեւ հոջա Սադեդդին էֆենդիի (1536 - 1601) «Թաջ ութ - թեվարիհ»<sup>3</sup> (Պատմության թագ) ժամանակագրությունը, որն ընդգրկում է Օսմանյան պետության հիմնադրումից մինչեւ Սելիմ III - ի ժամանակաշրջանը:

17 - րդ դ. մի շարք պատմագիրներ, շարունակելով իրենց նախորդների ավանդույթը, նույնպես շարադրել են Օսմանյան կայսրության պատմությունը՝ նրա հիմնադրումից մինչեւ իրենց ժամանակաշրջանը: Այդ աշխատանքներում հիմնական ուշադրությունը



բեւեռված է Օսմանյան կայսրության ռազմա-ավատատիրական կառուցվածքի պատմության վրա: Մի քանիսը նույնիսկ քննադատական վերլուծություն են կատարել օգտագործված աղբյուրները: Առավել ակնառու պատմագիրներից հիշատակության արժանի են Ֆերիդուն Ահմեդ բեյը, Մուստաֆա Սելանիկին, Յեմեթի Սուլաքադեմ (մահ. 1658 թ.), Կարաչելեբիզադե Աբդուլ Ազիզը (մահ. 1653 թ.), Մյունեջջիմբաշին (մահ. 1702 թ.): Այս պատմագիրների ավանդույթով է շարադրված նաև Կոջա Յյուսեյն էֆենդիի (մահ. 1644 թ.) «Բեդա - ի ուլ - վեքայ» (ուշագրավ իրադարձություններ) աշխատությունը, որն ընդգրկում է Օսման II - ի գահակալության վերջին շրջանը (1520 թ.): Կոջա Յյուսեյնի պատմության 2 -րդ հատորը հայտնաբերվեց 1950 թվականին Ս. Պետերբուրգի արեւելագիտության ինստիտուտի ձեռագրային ֆոնդում:<sup>4</sup>

18-րդ դարի սկզբում Օսմանյան պատմագրությունը ավելի պաշտոնական բնույթ է կրում, քանի որ կառավարության կողմից նշանակվում են հատուկ պատմագիր-տարեգիրներ՝ վակաա-նյուվիսներ: Այդպիսով տարեգրությունը կապվում է պետական պաշտոնի հետ: Տարեգիրները նշանակվում են սուլթանի կողմից, իրենց գրական հմտությամբ հայտնի անձնավորություններից: Թվով 29 թուրք պատմագիր-տարեգիրների շարքում կան երկրորդական պատմագիրներ, կան եւ այնպիսիները, որոնք իրենց «Թարիհներով» (պատմություններով) կարելուր տեղ են գրավում Օսմանյան պետության տարեգրության մեջ:

1709 թվականին առաջին պետական պաշտոնական տարեգիր է նշանակվում Մուստաֆա Նայիման: Նայիմայի տարեգրությունը շարունակել են հաջորդաբար նշանակված տարեգիրները,<sup>5</sup> որոնցից առավել ակնառու են՝ Սեհմեդ Ռաշիդը (գրի է առել 1660-1726 թթ. դեպքերը): Իսմայիլ Ասըմը՝ Քյուչուկ Ձելեբիզադե մականունով (1722-1728 թթ.), Մուստաֆա Սամին (1729-1733 թթ.), Յյուսեյն Շաքիրը (1733-1742 թթ.), Սուլեյման Իզզին (1744-1751 թթ.), Սադուլախ Ենվերին (1769-1792 թթ.), Ահմեդ Վասըֆը (1752-1774 թթ. եւ 1788-1805 թթ.), Ջելվեթ Փաշան (1774-1825 թթ.), Յաֆըզ Ահմեդ Լյուքֆի փաշան (1825-1876 թթ.):

Բացի պետության կողմից պաշտոնական նշանակված վակաա-նյուվիսներից պատմագրական կարելուր աշխատություններով հանդես են եկել նաև ոչ պաշտոնական այլ հեղինակներ, որոնք ուսումնասիրել են որոշ պատմական ժամանակաշրջաններ եւ գրել արժեքավոր երկեր: Նրանցից են՝ Իբրահիմ Փեչելին, Կոչի բեյը, Այնի Ալի էֆենդին, Բյաթիբ Ձելեբին եւ այլն:

Թուրք պատմագիրները իրենց աշխատություններում հաճախ ավելորդ մանրամասնություններով կանգ են առնում սուլթանական արքունիքի եւ պատերազմական գործողությունների վրա: Չասկանալի է, որ պատմագիր-տարեգիրը նշանակված է սուլթանի կողմից եւ ամենից առաջ պարտավոր է ամենադրական գույներով նկարագրել սուլթաններին, վեզիրներին, այլ բարձրաստիճան պաշտոնյաներին եւ հավերժացնել նրանց անուններն ու գործերը: Ընդհանրապես թուրք պատմագիրների աշխատությունների մեջ նկարագրված դեպքերն ու իրադարձությունները ներկայացված են Օսմանյան նվաճողական քաղաքականության պաշտպանության հայեցակետից:

Ստորեւ մենք կանգ կառնենք թուրք այն պատմագիրների վրա, որոնց աշխատությունները այս կամ այն չափով առնչվում են հայ ժողովրդի պատմության հետ:

16-րդ դարի թուրք պատմաբան Մուստաֆա Սելանիկին հայտնի է իր «Թարիհ-ի Սելանիկի» պատմությամբ, որը ընդգրկում է 1568-1599 թթ. դեպքերը:

Մ. Սելանիկիի գրքի առանձին գլուխներում տրված տեղեկություններից իմանում ենք, որ նա զբաղեցրել է պետական բարձր պաշտոններ: Եղել է սիփահիների զորախմբի քարտուղար (մեհմանդար): Իր պաշտոնի բերումով նա մասնակցել է կառավարական բանակցություններին եւ պալատական հանդիսություններին: Նա հանգամանալից կանգ է առել տվյալ շրջանում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների, հաշտության պայմանագրերի կնքման կապակցությամբ տեղի ունեցած բանակցությունների վրա: Նրա աշխատությունը կարելու է այն իմաստով, որ ինքը մասնակից է եղել սուլթան Սուլեյման II-ի արշավանքներին: Սելանիկիի պատմության առաջին հատորը հրատարակվել է 1281 (1865) թվականին:<sup>5</sup>

16-րդ դարի հանրահայտ պատմագիրներից է նաեւ Ֆերիդուն Աինեդ բեյը (մահ. 1583 թ.), որը հայտնի է իր «Մյունշեթ-եւ-Սելաթին» (սուլթանների գրություններ) աշխատությամբ: Այն պատմական եւ քաղաքական փաստաթղթերի մի ժողովածու է, որն ընդգրկում է Օսմանյան կայսրության հիմնադրումից մինչեւ սուլթան Մուրադ III-ի գահակալության շրջանին վերաբերող սուլթանական հրովարտակներ, պայմանագրեր, պետություններին ուղղված հայտարարություններ եւ զանազան այլ գրություններ: Պաշտոնական տեղեկություններ կան նաեւ Օսմանյան կայսրության 16-րդ դ. վարչական բաժանման մասին: Այն ունի կարելու նշանակություն, քա-

նի որ տվյալ ժամանակաշրջանի այլ աղբյուրներում են նման ամբողջական տեղեկություններ երկրի վարչական կառուցվածքի մասին: Այդ փաստաթղթերի ընդհանուր թիվը կազմում է մոտ 1880 միավոր: Ֆերիդուն բեյը, նույնպես լինելով պետական բարձրաստիճան գործիչ, լայն հնարավորություն է ունեցել օգտվելու արքունական բոլոր տեսակի փաստաթղթերից: Ֆերիդուն բեյի պատմությունը առաջին անգամ հրատարակվել է 1265(1843), իսկ երկրորդ անգամ՝ 1274(1858) թվականին Ստամբուլում:<sup>6</sup>

17-րդ դարի թուրք պատմագիր Իբրահիմ Փեչեվիի (1574-1650) «Թարիհ-ի Փեչեվի» (Փեչեվիի պատմություն) կոչված աշխատությունը ընդգրկում է 1520-ից մինչև 1639 թվականը ընկած ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության պատմությունը: Ի. Փեչեվիի մասին կենսագրական շատ քիչ տեղեկություններ կան: Հայտնի է, որ նա իր երկիստորյա պատմությունը գրել է սուլթան Մուրադ IV-ի ժամանակ եւ վարել է մի շարք վարչական պաշտոններ Անատոլիայում: Աշխատության մեջ բերված փաստերը ցույց են տալիս, որ նրա հաղորդած տեղեկությունները մեծ մասամբ հավաստի են, քանի որ նյութերի զգալի մասը նա շարադրել է որպես ականատես: 1593 թվականին եւ հետագա տարիներին նա մասնակցել է Օսմանյան կայսրության թե՛ եվրոպական եւ թե՛ ասիական ռազմաճակատներում մղած մի շարք պատերազմներին: Հիմնականում նա նկարագրել է թուրք-պարսկական պատերազմները եւ սուլթան Սուլեյման Կանունիի արշավանքը ավստրիացիների դեմ: Բավականաչափ նյութեր կան նաեւ ջելալիական ապստամբությունների մասին: Ի. Փեչեվիի վերաբերմունքը դեպի այդ շարժումները խիստ բացասական է, քանի որ շարժման մասնակիցներին նա անվանում է «ավազակներ», «գողեր» եւ այլն: -

«Թարիհ-ի Փեչեվի» տպագրված է Ստամբուլում 1866 թվականին: Պատմաբանի լեզուն պարզ է եւ ընդհանրապես զերծ է բանաստեղծական գեղուններից: Դեպքերը նկարագրված են ժամանակագրական կարգով:

Ն Մեզ համար առավել հետաքրքրություն են ներկայացնում թուրք-պարսկական այն պատերազմները, որոնք տեղի են ունեցել 1533-1535 թվականներին՝ պատմական Հայաստանի տարածքում, Սուլթան Սուլեյման Կանունիի եւ շահ Թահմասայի միջեւ: Այդ շրջանում է, որ Օսմանյան բանակի մեծ վեզիր Իբրահիմ փաշան հարձակվելով պարսիկների վրա, գրավում է Վանը, Արճեշը, Ադիլջեվազը (Արծկե), Խլաթը եւ այնուհետեւ նվաճում Թավրիզն ու ամբողջ Ադրպատականը:

«Երեւանի, Ղարաբաղի եւ Նախիջեւանի կողոպուտն ու թալանը» գլխում Ի.Փեչեվին մանրամասնությամբ նկարագրում է թուրքական բանակի կատարած բարբարոսությունները, ձեռք բերված հսկայական ավարն ու կողոպուտը, ինչպես նաեւ գեղանի աղջիկների եւ տղաների գերեվարումը սուլթանական բանակի համար:<sup>7</sup> ✓ 47

Նույն դարաշրջանի թուրք պատմագիր եւ աշխարհագիր Զյաթիբ Զելեբիի պատմագիտական աշխատությունները<sup>8</sup> հարուստ նյութ են տալիս տվյալ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության եւ այլ երկրների ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքը ուսումնասիրելու համար, ժողովուրդներ, որոնք դարերով գտնվել են թուրքական նվաճողների ծանր լծի տակ:

5 962 էրի  
3  
Յատկապես նրա «Ֆեզլեբե» (համառոտ պատմություն) խորագիրը կրող աշխատությունը հավաստի սկզբնաղբյուր է 16-րդ դարի վերջում եւ 17-րդ դարի առաջին կեսում տեղի ունեցած պատմական դեպքերի ու իրադարձությունների ուսումնասիրման համար: «Ֆեզլեբեում» հեղինակը մեծ ջանասիրությամբ պատկերել է հարավ-արեւելյան Եվրոպայում, Յայաստանում եւ Անդրկովկասի այլ երկրներում տեղի ունեցած ռազմական գործողությունները: Յայաստանի պատմությանն առնչվող նյութերը վերաբերում են թուրք-պարսկական պատերազմների 3-րդ շրջանին, որը սկսվել էր 1603 թվականին եւ ընդհատվեց 1639 թվականին կնքված «Կասրի Շիրինի» հաշտության պայմանագիրը: Բավականաչափ նյութեր կան նաեւ ջելալիների շարժման մասին: ✓ 5

«Ֆեզլեբե»-ն որպես սկզբնաղբյուր կարելուք նշանակություն ունի, քանի որ հեղինակը անձամբ մասնակից եւ ակամատես է եղել շարադրված բազմաթիվ դեպքերին ու իրադարձություններին: Բացի այդ, «Ֆեզլեբե»-ում օգտագործված աղբյուրների հեղինակները նույնպես մասնակից են եղել նկարագրվող դեպքերին: Դեռ ավելին, նա իր աշխատությունը շարադրելիս օգտագործել է նաեւ օսմանյան արշավանքների մասնակից զինվորների հաղորդած տեղեկությունները:<sup>9</sup>

Կարելուք է նշել նաեւ այն հանգամանքը, որ Զյաթիբ Զելեբին, օգտագործելով բոլոր պատմագիրների աշխատությունները, ոչ թե բառացիորեն արտագրել կամ մեքենայաբար կրկնել է նրանց, որը յուրահատուկ է եղել տվյալ ժամանակաշրջանի օսմանյան պատմագիրներին, այլ արել է տարբեր սկզբնաղբյուրների համեմատություններ, վերլուծել այդ աշխատությունները եւ հանգել այս կամ այն եզրակացության:<sup>10</sup>

Ընդհանրապես, Օսմանյան կայսրության պատմությունը ուսումնասիրող մասնագետների համար «Ֆեզլեքե»-ն շատ հաճախ հանդիսացել է առաջնակարգ սկզբնաղբյուր, քանի որ հեղինակը աչքի է ընկել դեպքերի ճիշտ եւ մանրամասն շարադրանքով: «Ֆեզլեքե»-ում հեղինակը հաճախ հիշատակում է իր աշխատության մեջ օգտագործված 16 եւ 17-րդ դարի առաջին կեսին ապրած պատմագիրներին: Դրանք են՝ Հասան Բեյզադե (մահ. 1636 թ.)<sup>11</sup>, Ի.-Փեչելի<sup>12</sup>, Կարա-Չելեբիզադե Աբդուլ Ազիզ<sup>13</sup> (մահ. 1658 թ.), Աթայի (Նեվիզադե 1582-1635)<sup>14</sup>, Թովչուլար Քյաթիբի Աբդել Քադիր էֆենդի (մահ. 17-րդ դ. սկզբում)<sup>15</sup>, Ջերրախզադե<sup>16</sup>, Փիրի Փաշազադե<sup>17</sup>, Էդիրնելի Մեհմեդ<sup>18</sup> (մահ. 1640 թ.): Վերջին պատմագրին հիշատակելիս Քյաթիբ Չելեբին նշում է միայն նրա ծագումը, այսինքն՝ Էդիրնեցի լինելը եւ այն, որ հիշյալ պատմագիրը երկար ժամանակ եղել է կայսերական դիվանի քարտուղար եւ գրել «Նուհբեթ-ուբ-թեվարիի վել ահբար» (Պատմությունների եւ տեղեկությունների ընտրանք) վերնագրով պատմությունը:

Ինչպես նշեցինք, Քյաթիբ Չելեբին մասնակցել է հատկապես Հայաստանում տեղի ունեցած ռազմակազմ գործողություններին: Այդ ժամանակաշրջանը, որն ընդգրկում է 1622-1623 թթ. տեղի ունեցած դեպքերը, գրի են առնված «Ֆեզլեքե»-ի երկրորդ հատորում: Քյաթիբ Չելեբին մանրամասն նկարագրել է Երեւանի բերդի պարիսպների տակ տեղի ունեցած թեժ մարտերը՝ «Երեւանի պարիսպի տակ առաջին մարտը», «Երրորդ մարտը» վերնագրերի տակ՝ Այդ նկարագրությունների ընթացքում պատմագիրը գովերգում եւ դրվատում է օսմանցիների հերոսություններն ու սխրագործությունները, իսկ մյուս կողմից անարգանքի խոսքեր ասում պարսիկներին:<sup>19</sup>

«Ֆեզլեքե»-ից կարելի է բերել բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են նրա անմիջական մասնակցությունը բազմաթիվ արշավանքներին: Այդ մասին Քյաթիբ Չելեբին խոսում է նաեւ իր երկու այլ աշխատությունների վերջում, որոնք հետեւյալներն են՝ «Միզան ուլ-հակկ Ֆի իթիար ալ-ահակկ» (Արդարության չափը ամենաարդարը ընտրելու մեջ) եւ « Սուլամ ալ-վուսուլ իլա թաբա-կատ ալ ֆուհուլ» (Ամենագորեղների աստիճաններին հասնելու սանդուխտ): Նա 1635 թվականին մասնակցում է Պարսկաստանի մեծ արշավանքին եւ Երեւանի պաշարմանը: Ահա թե ինչ է գրում հեղինակը այդ մասին:

«1635 թվականին սուլթան Մուրադ IV-ի հետ մեկնելով Բեւանի- (Երեւան) արշավանքին, որտեղից վերադարձա Ստամբուլ 1636



թվականին... Գտնվելով ավելի քան 10 տարի մարտերում եւ արշավանքներում, ես ականատես եղա բազմաթիվ դեպքերի եւ ճակատամարտերի»:<sup>20</sup>

Քյաթիբ Չելեբիի պատմագրական աշխատություններից ուշադրության արժանի է նաեւ «Թակվիմ-ի թեվարիի» (Պատմությունների տարեցույց) ժամանակագրական աշխատությունը, որը նա կազմել է 1648 թվականին երկու ամսվա ընթացքում:<sup>21</sup> Ժամանակագրական կարգով վաղ ժամանակներից սկսած մինչեւ 1648 թվականը շարադրված են կարեւոր դեպքերը, արշավանքները, նվաճումները, սուլթանների գահակալությունը, կենսագրական տվյալներ բարձրաստիճան զինվորականների մասին եւ այլն:

Իր ժամանակին այս երկը ներկայացվել է մեծ վեզիր Կոջա Մեհմեդ փաշային, որը բարձր գնահատելով այն, Քյաթիբ Չելեբիին շնորհել է երկրորդ աստիճանի խալիֆեյի կոչում:

Գերմանացի հանրահայտ պատմաբան՝ Ի.Յամմերը Քյաթիբ Չելեբիի այս աշխատության մասին գրել է հետեւյալը.«Եթե Քյաթիբ Չելեբիի այս աշխատությունը գոյություն չունենար, Օսմանյան կայսրության պատմությունը գրելու մեծ դժվարություն կառաջանար»:<sup>22</sup> Քյաթիբ Չելեբիի այս աշխատությունը բուրքերեն տպագրված առաջին գրքերից մեկն է: Այն հրատարակվել է 1733 թվականին Ստամբուլում:

17-րդ դ. Օսմանյան կայսրության ռազմա-ավատատիրական կառուցվածքի քայքայումը խիստ անհանգստացնում էր սուլթանական արքունիքին: Սուլթանների եւ մեծ վեզիրների կարգադրությամբ գործին տեղյակ անձիք աշխատում էին որոնել քայքայման դրդապատճառները եւ միջոցներ ձեռնարկել կայսրության երբեմնի հզորությունը վերականգնելու համար:

1607 թվականին Այնի Ալի էֆենդին, սուլթան Ահմեդ 1-ի կարգադրությամբ կազմում է մի ռիսալե (ուղերձ)՝ «Օսմանյան օրենքները եւ դիվանի մատյանների բովանդակությունը» խորագրով<sup>23</sup>, որտեղ ցույց են տրվում կայսրության քայքայման էական դրդապատճառները: Այնի Ալին, պետական բարձր պաշտոններում գտնվելու հանգամանքով լավատեղյակ էր Օսմանյան կայսրության տնտեսական եւ ֆինանսական դժվարություններին: Գիտեր նաեւ, թե ինչպիսի վնաս են հասցնում պետությանը կառավարիչների գործադրած չարաշահումներն ու օրինազանցությունները:

Օսմանյան կայսրության անկման շրջանում Քյաթիբ Չելեբին եւս ցուցաբերել է բուռն պատրաստակամություն եւ ներգործություն՝ տերության նախկին հզորությունը վերականգնելու խնդրում:

Եւ մասնակցել է սուլթան Մեհմեդ IV-ի (1648-1687) հրամանով գումարված ժողովին, ուր քննարկվել էր երկրի բյուջեն եւ ներքին զանազան հարցեր, կապված կայսրության անկման դրդապատճառների հետ:

Այս առթիվ «Ֆեզլեթե»-ի մեջ գրել է հետեւյալը.

«Այն ժամանակ (1652 թ.) ձեր խոնարհ ծառան նույնպէս գտնվում էր խորհրդակցության մասնակիցների մեջ: Խորհրդակցութիւնից հետո ես գրեցի մի ուղերձ «Դյուսքուր ուլ-ամալ» (Գործողության ուղեցույց) վերնագրով: Սակայն, տվյալ ժամանակ ես չներկայացրի իմ աշխատությունը, նկատի ունենալով, որ չկա այն զնահատող անձնավորությունը: Այնուհետեւ, երբ Դուսեյն զադեմ դարձավ շեյխ ուլ-խւլամ, կարգադրեց ինձ մաքրագրել այդ ուղերձը եւ ներկայացնել սուլթանին: Դետո ինձ ասացին,-«Մենք կարդացինք ձեր ուղերձը փաղիշահին»: Սակայն ես գործին խորամուխ չեղա, քանի որ նվաստս գիտեր, որ այդ բոլորը մնալու է առանց որեւէ հետեւանքի: Թող որ մեկ այլ փաղիշահ զբաղվի դրանով»<sup>24</sup>:

Թուրքիայի ներքին կյանքի վերլուծմանն է նվիրված նաեւ Կոչի բեյի (Նրան հաճախ անվանում են նաեւ «Գյումյուրջիներլի» մակա-նունով) աշխատությունը՝ «Ռիսալեյի Կոչի բեյ» (Կոչի բեյի ուղերձը) վերնագրով, որն ուղղված է սուլթան Մուրադ IV-ին (1623-1640): Կոչի բեյը որոշ ժամանակ անց գրում է իր երկրորդ ուղերձը՝ ուղղված սուլթան Իբրահիմին (1640-1648): Կոչի բեյը այս ռիսալենե-րում իր մասին կենսագրական տեղեկություններ չի հաղորդել: Նրա գրքի հրատարակիչ Ահմեդ Ռեֆիկի տվյալներով պարզվում է, որ նա Ստամբուլ է եկել Ալբանական Գորիցա քաղաքից: Նրա ուղերցները խիստ հարուստ են Թուրքիայի թուլացման եւ անկման, ինչպէս նաեւ հարկերի հարատեւ բարձրացման հետեւանքով ռեա-յայի ծանր դրությանը վերաբերող արժեքավոր նյութերով: «Կառա-վարությունը նախ եւ առաջ, ըստ տեղի բնակչության թվի պետք է ճիշտ սահմանի հարկի եւ տուրքի բաժանումը, - գրել է Կոչի բեյը իր ռիսալեյի 9-րդ գլխում»:<sup>25</sup> Մանրամասն վերլուծվում են Թուր-քիայի պետական, վարչական եւ սոցիալ-տնտեսական կյանքի բո-լոր բնագավառները: Քննարկվում են երկիրը դեպի քայքայման տանող չարաշահումներն ու ապօրինությունները, թալանն ու կո-րուպտը, ենիչերիական բանակի եւ այլ զորամասերի բարոյալ-քումն ու անկարգապահությունը: «Շռայլությունն ու զեխությունը հետզհետեւ այնպիսի աստիճանի հասան,-գրում է Կոչի բեյը,- որ սո-վորական պաշտոնյաների եւ «Կուլ» դասի եկամուտը չէր բավա-կանացնում նույնիսկ հացի փողի... Բռնության եւ թշնամության

A II 85/90



պատճառով, աշխարհն ավերվեց»:<sup>26</sup>

Կոչի բեյի այս ուղերձները վաղուց դարձել են մասնագետների ուսումնասիրման առարկա: Այս երկու ուղերձներն էլ թարգմանվել են ռուսերեն: Առաջին «Ուղերձը» ուսումնասիրված է թարգմանված է Վ.Սմիռնովի<sup>27</sup>, իսկ երկրորդը՝ Ա.Տվերիտինովայի<sup>28</sup> կողմից: Գոյություն ունեն նաև «Ռիսալեյի» ֆրանսերեն, գերմաներեն եւ հունգարերեն թարգմանությունները: Ա.Սաֆրաստյանը Կոչի բեյի «Ռիսալեյից» հայերեն է թարգմանել սուլթանական վարչակարգի բարոյալքմանը, ենիչերիական կարգապահության խախտման, ռեայաների ծայրաստիճան աղքատացման վերաբերյալ առանձին հատվածներ<sup>29</sup>: Կարելոր նշանակություն ունի նաև թուրք պետական բարձրաստիճան պաշտոնյա Ալի Չաուշի (Սոֆիայից) 1653 թ. կազմած Օսմանյան կայսրության ազրաբային իրավական կառուցվածքին վերաբերող զեկուցագիրը, որը տալիս է հավաստի տեղեկություններ կայսրության վարչական բաժանման, թիմարային տիրույթների, ինչպես նաև հողի հաշվառման եւ բաժանման մասին:<sup>30</sup>

Ինչպես նշեցինք, թուրքական պատմագրության մեջ կարելու տեղ են գրավում նաև պետական պաշտոնական տարեգիրները: Առաջին պատմագիր-տարեգիր Մուստաֆա Նայիմայի պատմությունը (Թարիհ-ի Նայիմա), բաղկացած է 6 սովար հատորներից, որոնք ընդգրկում են 1591-1659 թթ. իրադարձությունները: Առաջին անգամ այն լույս է տեսել 1734 թվականին՝ Ստամբուլում: Մ.Նայիման իր ժամանակաշրջանի իրադարձությունները նկարագրել է որպես ականատես, իսկ նախորդ շրջանի դեպքերի համար օգտագործել է սուլթանական արքունիքի պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի պատմագիրների երկերը: Թուրք պատմաբան Ասաֆ Յալետ Չելեբին, որն ուսումնասիրել է Մ.Նայիմայի կյանքն ու գրական ժառանգությունը, գրում է, որ Նայիման իր պատմությունը շարադրելիս մեծ մասամբ օգտագործել է նաև իրեն նախորդող պատմագիրներին<sup>31</sup>: Յատկապես, Օսմանյան կայսրության արեւելյան շրջանում 16-րդ դ. վերջին եւ 17-րդ դ. սկզբին վերաբերող նյութերը շարադրելիս, ոչ միայն մեջբերումներ է կատարել Փեչեվիից, Կարա-Չելեբիզադեից, Զյաթիբ Չելեբիից, Մ.Սելանիկիի երկերից, այլև ամբողջությամբ արտագրել է, կատարելով որոշ ռճաբանական ուղղումներ: Մ.Նայիման օգտագործել է նաև մի շարք արաբական աղբյուրներ:

Մ. Նայիման իր աշխատության մեջ հիմնականում նկարագրել է թուրք-պարսկական պատերազմները, ինչպես նաև Օսմանյան

կայսրության՝ Եվրոպայում մղած ռազմական գործողությունները: Նա ընդհանուր խորհրդածություններ է կատարել նաեւ Օսմանյան հզոր պետության աստիճանական անկման, ներքին տնտեսական քայքայման, ենիչերիների խռովությունների եւ ջեւախական շարժման պատճառների մասին:

Մ. Նայիմայից հետո Թուրքիայի երկրորդ պատմագիր-տարեգիրը Ռաշիդ Մուհամմեդ էֆենդին է (մահ. 1735թ.): Նա հայտնի է նաեւ իր գրած բանաստեղծություններով: Վարել է պետական բարձր պաշտոններ: 1729 թվականին եղել է Թուրքիայի դեսպանը Իրանում: Տարբեր ժամանակներում եղել է Ստամբուլի կադին, ինչպես նաեւ Անատոլիայի կազասկերը: «Թարիհ-ի Ռաշիդը» հրատարակվել է 1665թ. Ստամբուլում: Այն ընդգրկում է 1660թ. մինչեւ 1721թ. 66 տարվա պատմությունը: 6-րդ հատորը, իբրեւ Ռաշիդի պատմության հավելված, գրել է մի այլ պատմագիր-տարեգիր՝ Չելեբի Չադեն: Օսմանյան կայսրությունը այդ շրջանում շարունակում էր պատերազմական գործողությունները Եվրոպայում: Ռաշիդի պատմության մեծ մասը վերաբերում է այդ երկարատե պատերազմական գործողությունների մանրամասն նկարագրությանը: Ուշադրության արժանի են Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությանը վերաբերող նյութերը, ինչպես նաեւ բնական աղետների, երկրաշարժների, հրդեհների նկարագրությունները:

Հաջորդ տարեգիրներից հիշատակության արժանի են Սուբհին, Սամին, Շաքիրը, Սուլեյման Իզզին եւ Վասըֆը: Այս տարեգիրների պատմությունը ընդգրկում է 1780-1788 թվականների դեպքերը: Նրանք հիմնականում խոսել են թուրք-պարսկական պատերազմների եւ Թուրքիայի ներքին իրադարձությունների մասին:

18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբին դեպքերը գրի է առել պաշտոնապես 27-րդ տարեգիրը հանդիսացող Ահմեդ Ջեվդեթ փաշան (1822-1895): Ջեվդեթ փաշան եղել է պետական բարձր պաշտոններում: Տարբեր ժամանակներում նշանակվել է վակուֆի, լուսավորության, արդարադատության եւ առետրի կառավարիչի պաշտոններում: Բացի տարեգրությունից, գրել է բանաստեղծություններ, ուսումնասիրություններ է կատարել արդարադատության եւ լուսավորության ասպարեզներում: Հրատարակել է լեզվի եւ քերականության վերաբերյալ դասագրքեր եւ այլն:

«Թարիհ-ի Ջեվդեթը» բաղկացած է 12 սովոր հատորներից եւ ընդգրկում է 51 տարվա՝ 1774թ. մինչեւ 1825թ. քաղաքական դեպքերը:<sup>22</sup>

Իր տարեգրության մեջ Ջեվդեթ փաշան մեծ տեղ է հատկացրել

Օսմանյան կայսրության ներքին, վարչական, տնտեսական եւ ռազմա-քաղաքական խնդիրներին, ինչպես նաեւ սուլթան Սելիմ III-ի (1789-1807) նախաձեռնած բարեփոխումներին:

Լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն, Ջեվդեթ փաշան ձգտել է իր աշխատանքը շարադրել հավաստի աղբյուրների եւ արխիվային պաշտոնական վավերագրերի հիման վրա: Վերլուծելով եւ քննադատելով նախկին տարեգիրների աշխատանքներում տեղ գտած թերությունները, նա գրում է.

«Առանց ականատես լինելու դեպքերի ընթացքին, որեւէ պատմագրի համար դժվար է շարադրել իր դարաշրջանի ճշմարիտ պատմությունը: Տարեգիրների գրի առած պատմությունները, որոնք լի են գովասանքի խոսքերով, անհրաժեշտ է մաքրել եւ զտել ավելորդություններից»:<sup>33</sup>

Ջեվդեթ փաշան բավականաչափ խոսել է նաեւ Օսմանյան կայսրությունում հայերի շրջանում կաթոլիկական դավանանքի տարածման եւ հայ լուսավորչական եկեղեցու հետ նրա ունեցած արմատական տարածայնությունների մասին:<sup>34</sup>

7 ✓ Հայաստանի, հայերի եւ հարեւան ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար կարելորդ նշանակություն ունեն նաեւ միջնադարյան թուրք հեղինակների գրի առած համառոտ ժամանակագրությունները, օրագրերը, զեկուցագրերը եւ այլն: Նման ժամանակագրությունների թվին են պատկանում Քեմանի Մուստաֆա աղայի գրի առած «Գիրք Երեւանի գրավման մասին»<sup>35</sup> եւ Գյուրջիզադեի «Գիրք Թիֆլիսի գրավման մասին»<sup>36</sup> ժամանակագրական գործերը: Երեւանի եւ Թիֆլիսի գրավմանը վերաբերող այս գրքույկներում նկարագրվում են 1723-1724 թվականների ընթացքում թուրքական բանակի նվաճողական պատերազմները Անդրկովկասում: Քեմանի Մուստաֆա աղան անմիջական ակամատես է եղել Երեւանի բերդի գրավման մարտական գործողություններին եւ դեպքերը գրի է առել տեղվույն վրա, ամենայն մանրամասնությամբ: Հայտնի է, որ տվյալ ժամանակ Երեւանի բերդը նվաճվեց թուրքերի կողմից՝ 3 ամսյա պաշարումից հետո: Այս զեկուցագիրը ներկայացվել է սուլթան Ահմեդ III-ին (1703-1730) 1724 թվականի հոկտեմբերի 25-ին: Բնականաբար շարադրանքը կրում է կողմնակալ բնույթ, քանի որ այնտեղ գովերգվում են թուրքական բանակի հաղթական գործողությունները, փաշաները, սերասքերները, մուհաֆիզները:

Երեւանի գրավման դեպքերը նկարագրվում են նաեւ պատմագիր-տարեգիր Իսմայիլ Ասըմ Էֆենդիի (Չելեբի-Չադե) կողմից<sup>37</sup>:

Նրա պատմության ժամանակագրությունն է 1721-1728 թթ.: Չելեբի-Չաղեն իր պատմության մեջ հիշատակում է Քեմանի Մուստաֆա աղային, քանի որ նրա միջոցով է առաքվել թուրքական բանակի հրամանատարին ուղղված կայսերական հրովարտակը, որը բովանդակում էր «Երեւանի բերդը շտապ գրավելու մասին» հրամանը<sup>39</sup>: Դեպքերի նկարագրության ընթացքում Չելեբի-Չաղեն անդրադարձել է նաեւ Երեւանի բերդից դուրս գտնվող բնակավայրերի քանդմանը եւ կատարված այլ ավերածություններին:

«Հաղթական բանակի դեպի Երեւան գնալը եւ իսլամական բանակի շարժման ուղղությունը որոշվելուց հետո, Երեւանի բերդի պարիսպների մոտ գտնվող եւ նրանց կից տները ամբողջովին հողին հավասարվեցին եւ պարիսպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց»<sup>39</sup>:

Վ 1724 թվականի դեպքերի նկարագրման ընթացքում Չելեբի-Չաղեն կանգ է առել Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ կնքված հաշտության պայմանագրի վրա: Պայմանագիրը եւ այդ առթիվ սուլթան Ահմեդ III-ի տված հատուկ հրովարտակը նա իր գրքում բերել է ամբողջությամբ: Այդ պայմանագրով, երկու կողմերն էլ Իրանից գրավված վայրերը պահեցին իրենց ձեռքին: Դերբենդը, Բաքուն եւ Դաղստանի մի մասը մնաց Ռուսաստանի տիրապետության տակ, իսկ Շիրվանի խանությունը՝ Շամախի կենտրոնով անցավ Օսմանյան գերիշխանության տակ:

Ուշադրության արժանի են նաեւ կաթոլիկ հայ համայնքին վերաբերվող թուրքական աղբյուրները: Հայտնի է, որ եվրոպական պետությունները 16-րդ դարի վերջերից միսիոներների քողի տակ իրենց գործակալներին ուղարկելով Արեւմտյան Հայաստան, նպատակ էին հետապնդում հայերին կաթոլիկ դարձնել եւ այդպիսով ուժեղացնել իրենց ազդեցությունը Օսմանյան կայսրությունում: Թուրք պատմագիր-տարեգիր Չելեբի-Չաղեն իր «Պատմության» մեջ մանրամասն կանգ առնելով այդ իրադարձությունների շուրջ՝ գրել է.

«Փրանսիացի կաթոլիկ վարդապետների ցեղից որոշ սատանայական անձիք, նենգ նպատակներով, Օսմանյան փաղիշահական երկրում մեծ ու փոքր քաղաքներ շրջելով, այս ու այն կողմ երթնեկելով, հույն եւ հայ քրիստոնյա ռեայանների մեջ ֆրանսիական (էֆրեսնչի) սնուտի դավանանքն ու անմիտ ծիսակատարությունն էին քարոզում»:<sup>40</sup>

Հայ լուսավորչականների եւ հայ կաթոլիկների միջեւ տեղի ունեցող վեճերի եւ պայքարի մասին հետազայում իր տարեգրության

մեջ մանրամասն կանգ է առել նաեւ պատմագիր Ահմեդ Չելեքֆ փաշան՝ «Հիջրայի 1195 (1780) թվականից սկսած, -գրում է Չելեքֆ փաշան, -կաթոլիկ վարդապետները, շրջագայելով Օսմանյան կայսրությունում, աշխատում էին հայերին կաթոլիկ դարձնել: Իսկ Չայոց պատրիարքը, սուլթանական հրովարտակով իրեն շնորհված իրավունքով ամեն կերպ պայքարում էր կաթոլիկ քարոզիչներին դեմ: Կաթոլիկները ընդհանրապես օսմանյան երկրում ինքնուրույն եկեղեցիներ չունեին եւ նրանց մեռյալները, հայոց գերեզմանատներում չընդունվելու պատճառով, հաճախ անթաղ էին մնում եւ գարշահոտում, ուստի նրանք ստիպված էին լինում մեռելները թաղել իրենց տների բակերում»:<sup>41</sup>

Սուլթան Աբդուլ Չամիդ I-ի (1774-1789) կողմից արձակված հրամանագրերը ցույց են տալիս, որ սուլթանական կառավարությունը աջակցել է Կ.Պոլսի հայ պատրիարքարանին՝ կանխելու կաթոլիկ միսիոներների գործունեությունը հայաշատ շրջաններում: Այդ վեճերն ու տարածայնությունները կարգավորելու համար սուլթան Աբդուլ Չամիդ I-ը արձակել է մի քանի հրամանագրեր, որոնցում ակնարկվում էր հայ կաթոլիկներին խտտագույնս պատժելու եւ քարոտելու մասին: Այդ հրովարտակների թարգմանությունները հրապարակված են «Դիվան հայոց պատմության» մեջ հետեւյալ խորագրերով՝ «Օրինակն ՖերմանիՂալաթիայու վոյվոտային հայկական բառիվ» (էջ 229-234), «Ի Ղալաթիայ նստեալ դեսպանաց Ֆերմանի հայկականն է» (էջ 233-240), «Սա է եւնիչեր աղասուն Ֆերմանի հայկական թարգմանեցեալն» (էջ 239-248):

Չայ լուսավորչական եկեղեցու սկզբունքային պայքարին հակառակ, 18-րդ դարի սկզբներին թուրքական կառավարությունը Ֆրանսիայի եւ Ավստրիայի ազդեցության ներքո, ժամանակ առ ժամանակ զիջումներ էր կատարում եվրոպական պետությունների այս ազգապառակտիչ գործունեության նկատմամբ:

Առաջին օրենսդրական քերաթը՝ ուղղված հայ կաթոլիկ համայնքին տրվել է հիջրայի 1246 (1831) թվականին<sup>42</sup>: Երկու տարի անց, Ստամբուլի ֆրանսիական դեսպանության պահանջով Բարձրագույն դուռը հայ կաթոլիկ կրոնապետին շնորհեց նաեւ պատրիարքի տիտղոս: Չետագայում կաթոլիկ պատրիարքի իրավասության տակ անցան ասորիները, քաղղեացիները, մարոնիները, մելքիդները:<sup>43</sup>

Ինչպես նկատեցինք, թուրքական պատմագրության մեջ բերված նյութերը առավել նշանակություն ունեն Օսմանյան կայսրության ռազմա-քաղաքական պատմության համար: Ինչ վերաբերվում



է երկրի սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող տեղեկություններին, դրանք բավականին աղքատ են: Այս տեսակետից առաջնակարգ կարեւորություն են ստանում թուրքիայի եւ այլ երկրների արխիվներում պահվող Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող վավերագրական նյութերը:

9 ✓ Վերջին տասնամյակներում թուրքական պատմագրությունը սկսել է հատուկ ուշադրություն դարձնել Օսմանյան կայսրության վաղ շրջանի պատմության ուսումնասիրությանը: Թուրքիայում լույս են տեսել արխիվային բազմաթիվ նյութեր եւ վավերագրեր: Այդ հրապարակություններում որպէս կանոն, շատ քիչ ուշադրություն է դարձված Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող փաստագրական նյութերին, մինչդեռ, թուրքիայի պետական արխիվներում եւ գրադարաններում կան չափազանց հարուստ հավաքածուներ:

10 ✓ Օսմանյան օրենքների, հրովարտականների եւ այլ վավերագրերի հավաքածան գործում երկար տարիների քրտնաջան աշխատանք է կատարել հայազգի իրավագետ Սարգիս Կարագոչը: Նա հավաքել է Ստամբուլի, Բեռլինի, Վիեննայի եւ Դրեզդենի պետական մատենադարաններում պահվող վավերագրերի պատճենները, ինչպէս նաեւ Ստամբուլի հույն եւ հայ առաջնորդների արխիվների փաստաթղթերը եւ կազմել «Քյուլլիաթ-ի կավանին»<sup>44</sup> օրենքների ժողովածուն: Այսօր այն անտիպ վիճակում պահվում է «Թուրքական պատմական ընկերության ձեռագրային ֆոնդում»: «Քյուլլիաթ-ի կավանին»-ը բաղկացած է քառասուն թղթապանակներից, որոնք պարունակում են 35000 փաստաթղթեր: Առաջին թղթապանակի մեջ ընգրկված են սուլթան Մահմեդ II-ի ժամանակաշրջանին վերաբերող հրամանագրեր, իսկ մյուսների մեջ ժամանակագրական կարգով բերված են 1517թ. մինչեւ 1908թ. հրապարակված փաստաթղթերը:<sup>45</sup> ✓ 10

Օսմանյան օրենքների եւ դաֆթարների մեծ մասը պահվում է Ստամբուլի «Մինիստրների խորհրդի» (Basvekalet arsi) եւ «Թուրքական թանգարանի» (Top-kapu muzesi) արխիվներում: Վերջին շրջանում թուրքիայում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ մեծ թվով դաֆթարները պահպանվել են նաեւ «Քյամիլ Զեմիեջիի հավաքածույում»: Թուրք պատմաբան Յավուզ Էրջանի տվյալներով, այս հավաքածույում ամենահնագույնը 2539 համարի տակ գտնվող դաֆթարում ամփոփված, 1517 թվականին սուլթան Սելիմ II-ի կողմից երուսաղեմի հայ պատրիարք Սարգիս III-ին տրված հրովարտակն է:<sup>46</sup> Ստամբուլի կայսերական դիվա-

նուն գտնվում են նաև «ոչ մահմեդական համայնքներին վերաբերող դաֆթարները», ուր հայերին վերաբերող մասերը հերթականությամբ դասավորված են հետևյալ վերնագրերի տակ. 1) 1860-1904թթ. հայերին վերաբերող վճիռների դաֆթար, 2) 1839-1910թթ. հայերին վերաբերող բերաթների դաֆթար, 3) 1820-1857թթ. հայերին վերաբերող հնագույն վճիռների դաֆթար, 4) 1511-1915թթ. հայերին վերաբերող բերաթների դաֆթար: Նույն արխիվում 7 առանձին խմբերով դասավորված են նաև 1869-1921թթ. վերաբերող արեւմտահայերի «Եկեղեցական դաֆթարները»:<sup>47</sup>

Օսմանյան արքունիքի դիվանատան վավերագրերի մի մեծ հավաքածու գտնվում են Սոֆիայի Կիրիլ եւ Մեթոդիի անվան հանրային գրադարանի արեւելյան բաժնի արխիվում: Հ. Փափազյանի տվյալներով, 16-19-րդ դդ. ավելի քան 300 ամյա մի ժամանակաշրջանի վերաբերող վավերագրերի ընդհանուր թիվը մոտավորապես 30000 է, որոնց 11500 արխիվային միավորներ վերաբերվում են զուտ Պատմական Հայաստանին (ներառյալ նաև Արեւելյան Հայաստանը), իսկ 18000 միավոր՝ Կլիկիայի եւ Օսմանյան կայսրության այլ հայաշատ նահանգներին:<sup>48</sup>

Հ. Փափազյանը ուսումնասիրության նյութ դարձնելով «Սոֆիայի Կիրիլ եւ Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը», նշում է, որ միայն Վանի նահանգին վերաբերող փաստաթղթերի թիվը 927 միավոր են, որոնցից հնագույնը կրում է հիշքի 985 (1577) թվականը: Այդ նյութերը, որպես պատմական սկզբնաղբյուր, մեծ նշանակություն ունեն Վանի նահանգի հողատիրության, հարկատվության, սոցիալ-տնտեսական կյանքի զանազան բնագավառների եւ ռազմա-ավատատիրական համակարգի վերաբերյալ: Տվյալ հոդվածի վերջում Հ. Փափազյանը հրատարակել է նաև Վանի մուհաֆիզ (կառավարիչ) Թեյմուր փաշայի՝ 1786 թ. Բարձրագույն դռանը ներկայացրած մի զեկուցագրի բնագրի պատճենը, վերծանությունն ու հայերեն թարգմանությունը:

Այդ նյութերի հրապարակումը բնականաբար կնպաստեր Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի արեւմտյան հատվածի պատմության բազմակողմանի ուսումնասիրության գործին: Թեւեւ Թուրքիայում առայսօր հրապարակված վավերագրերը արխիվներում պահվող հարուստ ֆոնդերի խիստ աննշան մասն են կազմում միայն, այնուհանդերձ այդ փաստաթղթերում կարելի է որոշակի տեղեկություններ գտնել նաև Արեւմտյան Հայաստանի նահանգ-



ների եւ հայաբնակ շրջանների վերաբերյալ:

12 v Արեւմտյան Հայաստանի՝ 16-19-րդ դարերի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն տվյալ ժամանակաշրջանում գործածության մեջ գտնվող Օսմանյան օրենքները, որոնք առաջին անգամ հրապարակվեցին Թուրքիայում Օ. Լ. Բարկանի կողմից<sup>50</sup>: Որպես պատմական աղբյուրներ, դրանք բավականին պարզորոշ ցույց են տալիս Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արեւմտյան Հայաստանի գյուղացիության իրավական վիճակը, լուսաբանում հողատիրության ու հարկային սիստեմի հետ կապված բազմաթիվ հարցեր: Այդ օրինամատյաններից հայ ժողովրդին վերաբերող նյութերն առաջին անգամ թարգմանաբար հայ ընթերցողին են ներկայացրել Ա. Սաֆրաստյանը եւ Մ. Ջուլալյանը<sup>51</sup>: Նշված աշխատության մեջ հրատարակիչների նպատակը չի եղել բերված օրինամատյանների բազմակողմանի ուսումնասիրությունը: Այնուհանդերձ, նրանք առաջաբանում եւ ծանոթագրություններում տվել են օսմանյան կանոննամենների ծագման եւ զարգացման համառոտակի պատմությունը եւ դրանց հետ կապված մի շարք հարցերի լուսաբանությունը: Հարկ է նաեւ նշել, որ հայ ժողովրդի պատմության հետ առնչվող մի շարք վավերագրեր դուրս են մնացել տվյալ հրատարակությունից: Թվով 10 այդ վավերագրերը առաջաբանով եւ ծանոթագրություններով հրապարակվել է սփյուռքահայ պատմաբան Լեւոն Վարդանի կողմից<sup>52</sup>:

13 v 1962-1965 թվականներին լույս տեսան թուրք պատմաբան Հադիե Թունջերի կազմած կանոնների եւ կանոննամենների երկու ժողովածուները<sup>53</sup>: Հեղինակը համառոտ առաջաբանում նշում է, որ կանոննամենների պատճենները վերցրել է Թուրքիայի Մինիստրների հորհրդի գլխավոր վարչությունում գտնվող բնագրերից, իսկ կանոնները՝ հայտնաբերել է Դրեզդենի ազգային գրադարանում: Ընդհանրապես, կանոնների հրապարակման տարեթիվը չի նշված, եւ մի քանիսի մասին մենք գաղափար ենք կազմում լոկ տվյալ ժամանակի սուլթանի կամ վեզիրի հրամանագրի թվագրությունից: Հեղինակի կարծիքով, այդ կանոնների ժամանակաշրջանը ընդգրկում է Օսման I-ից (1299-1325) մինչեւ սուլթան Ահմեդ III-ը: Այնուհանդերձ, փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վերաբերում են 15-17-րդ դարերին: Այդ կանոնների բովանդակությունները մասամբ քաղված են սուլթանական հրովարտակներից, ինչպես նաեւ այս կամ այն վիլայեթների կանոննամեններից: Կարելի է, առանձին կանոններ ինքնու-

րույն են եւ պարունակում են հետաքրքիր նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում եւ հայերի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Երեւանի, Բասենի եւ այլ լիվաների կանուներն են կարելուր նյութեր են բովանդակում այդ շրջանի հողատիրության եւ հարկային համակարգի մասին: ✓ 45

Նման կարելուր սկզբնաղբյուր են համարվում նաեւ Հայաստանի տարբեր շրջաններին վերաբերվող թուրքերեն հարկացուցակները: Այդ հարկացուցակներից մեկը, որը կազմվել է 1724-1736 թթ. թուրքական գորքերի կողմից Անդրկովկասի նվաճման ընթացքում, վերաբերվում է Վաղարշապատ գյուղին: Այս հարկացուցակի բնագիրն ու հայերեն թարգմանությունը հրատարակել է Հ.Փափազյանը<sup>53</sup>: Նա ուսումնասիրության առարկա է դարձրել 1728 թվականին գործածության մեջ մտած մի այլ հարկացուցակ եւս, որը կարելուր նյութեր է բովանդակում Էջմիածնի վանքի կալվածքների եւ նրա հարկային արտոնությունների մասին: Այս հարկացուցակները միեւնույն ժամանակ որոշակի պարզություն են մտցնում 18-րդ դարասկզբում Օսմանյան կայսրության՝ Արեւելյան Հայաստանում եւ ընդհանրապես Անդրկովկասում վարած հարկային քաղաքականությանը: Հարկ է նշել, որ Հ.Փափազյանը հայ ընթերցողի ուշադրությանը հանձնեց նաեւ Երեւանի բերդի 1724-1725 թթ. մուկաթաանների՝ Աբքունի Դիվանին ներկայացված ելից եւ մտից դաֆթարի թուրքերեն արժեքավոր բնագրի լիակատար վերծանությունն ու հայերեն թարգմանությունը:<sup>54</sup>

1979 թվականին հրատարակվեց «Չըլդըրի էյալեթի ջաբա դաֆթարը»<sup>55</sup>, ուր տրված է 17-18-րդ դդ. Ախալցխայի վիլայեթի Օսմանյան կայսրության պաշտոնական հաշվառումը<sup>56</sup>: Դաֆթարի օսմաներեն բնագիրը, որը գրված է դիվանի դժվարընթեռնելի գրչությամբ, վերծանել եւ վրացերեն է թարգմանել վրացի աղբյուրագետ Յ.Աբուլաձեն, իսկ բովանդակությունը ուսումնասիրության նյութ է դարձրել Մ.Սվանիձեն: Ջաբա դաֆթարի բնագիրը պահվում է Սոֆիայի Կիրիլ ու Մեթոդիի անվան հանրային գրադարանի արեւելյան բաժնում:

Մ.Սվանիձեի տված տեղեկության համաձայն, «Ջաբա դաֆթարը» կազմված է Կարսի եւ Տրապիզոնի համանման հաշվառման մատյանների հետ միատեղ: Այս երեք մատյանները բաղկացած են 243 էջերից, որոնցից 178-ը կազմում են «Չըլդըրի էյալեթի ջաբա դաֆթարը»: Ընդհանուր առմամբ, «Ջաբա դաֆթարում» գրված է Չըլդըրի էյալեթի ավատատիրական տիրույթների հաշվառումը

ժամանակագրական կարգով՝ սկսած հիջրայի 1106 (1694)թ. մինչև 1143 (1732) թվականը: Նշված են տվյալ վիայլեթում գտնվող նահիենների, լիվաների ավատատերերի անունները (երբեմն հայրանունների հետ միասին), ավատատերերին ենթակա գյուղերը, հաստատման տարեթվերը եւ վերջում՝ տարեկան եկամուտները: Այստեղ գրանցված երեք տեսակի տիրույթները՝ խասսը, զեամեթը եւ թիմարը շնորհում էին սուլթանի կողմից տվյալ ավատատիրոջը, որը պարտավոր էր պատերազմի ժամանակ, ըստ իր տարեկան եկամտի, ջեբելու տրամադրել եւ հոգալ նրա ծախսերը:

«Ջաբա դաֆթարում» արձանագրված են 17 խասսեր, 90 զեամեթներ եւ 767 թիմարներ: Տարեկան եկամուտների վերլուծումը ցույց է տալիս, որ Չըլզըրի էյալեթում գերակշռել է խոշոր ավատատիրական հողատիրությունը: Ավատատերի 60 տոկոսը տարեկան եկամուտ է ունեցել 5000 ակչե եւ ավելի: Չըլզըրի էյալեթի սանջակների տարեկան եկամուտը կազմել է 4499589 ակչե: Հարկ է նշել, որ Չըլզըրի էյալեթում մի շարք սանջակբեյիներ իրենց տրամադրության տակ գտնվող խասսերը օգտագործել են Յուրթլուբի եւ օջաքըլբի ժառանգական իրավունքով: «Ջաբա դաֆթարից» երևում է, որ ավատատերերի մեծ մասը կրել են մահմեդական անուններ: Մ. Ավանիծեն ենթադրում է նրանց մի մասի՝ ծագումով վրացի լինելը: Մեր կարծիքով, չի բացառվում նաեւ, որ նրանց մեջ լինեն հայ ավատատերեր, քանի որ հաշվառման ցուցակում հիշատակվում են բավականաչափ հայկական գյուղերի, շրջանների անուններ:

Հայ ժողովրդի՝ տվյալ դարաշրջանի պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար կարելուր նշանակություն ունեն նաեւ մատենադարանում պահպանված մեծ թվով վավերագրերը: Այդ առումով, հարկ է նախ եւ առաջ հիշատակել միջմատարում էջմիածնի դիվանատանը պահվող պարսկերեն եւ թուրքերեն վավերագրերի ուսումնասիրության գործում Սիմեոն կաթողիկոս Երեւանցու (1763-1780 թթ.) մեծ խնամքով կատարած աշխատանքը:<sup>57</sup> Սիմեոն Երեւանցին իր գրքում տվել է հայ եկեղեցու պատմությունը, մանրամասն կանգ է առել անցյալի եւ իր ժամանակվա նշանավոր իրադարձությունների վրա, իսկ վերջում, պատմողաբար տվել պարսկերեն եւ թուրքերեն վավերագրերի համառոտ բովանդակությունը: Բնականաբար այդ համառոտ ամփոփումները չեն կարող լիարժեք համարվել, քանի որ հրովարտակներում արտահայտված հարցերը չեն շոշափվել իրենց բոլոր կողմերով: Համառոտագրված թուրքերեն վավերագրերը թվով 87 են եւ տրված են

«Ջամբռի» երկու գլուխներում.

1) Գլ. 22 «Ֆարմանք օսմանցուց թագաւորաց եւ հարկաւոր գրեանք, զորս տուեալ են սրբոյ Աթոռոյս»<sup>58</sup>: Այս գլխում ընդգրկված հրովարտակաները տրված են Մեհմեդ IV (1648-1687 թթ.), Մուստաֆա II (1695-1703 թթ.), Ահմեդ III (1703-1730 թթ.), Մահմուդ I (1730-1757 թթ.) եւ Մուստաֆա III (1757-1774 թթ.) օսմանյան սուլթանների կողմից:

2) Գլ. 23 «Յարկաւոր գրեանք օսմանցուց փաշայից, Շէս (շեյխ-Ա. Փ.) իսլամից եւ այլոց իշխողաց, զորս տուեալ են սրբոյ Աթոռոյս»<sup>59</sup>: Այստեղ բերված են մահմեդական հոգեւոր առաջնորդի ֆեթվաները, մեծ վեզիրի եւ տեղական նահանգապետերի հրամանագրերը:

Այս խորագրերի տակ բերված վավերագրերը հիմնականում վերաբերվում են հայ կոթողիկոսների իրավունքների եւ արտոնությունների հաստատման, էջմիածնի նվիրակների կամ ուխտավորների ազատ շրջագայության, հարկահավաքման, հարկերի քանակի ճշտման, վանական ստացվածքների իրավունքների եւ այլ կրոնական վեճերի կարգավորման հարցերին: Սիմեոն Երեւանցու այս աշխատություններից հետո բավականաչափ հարստացել եւ բազմապատկվել է էջմիածնի հրովարտակաների ու կալվածագրերի թիվը մատենադարանում: Մատենադարանի «Կաթողիկոսական դիվանի» արխիվային ֆոնդում պահվող թուրքական վավերագրերը շուրջ 300 միավոր են, որոնցից հնագույնը կրում է հիջրայի 995 (1586) թվականը: Այս վավերագրերը բնութագրված են Զ. Փափագյանի «Մատենադարանի թուրքական վավերագրերի աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածում<sup>60</sup>: Միեւնույն ժամանակ նա հրատարակել է Երեւանի կառավարիչ Ռաջաբ փաշայի հրամանագրի (տրված 1726թ.) բնագիրը, նրա վերծանությունը ռուսերեն թարգմանությամբ, որը վերաբերվում է էջմիածնի վանքի իրավունքներին եւ հարկային արտոնություններին:

Ստամբուլի հայ համայնքին եւ մասամբ էլ ոչ մահմեդական այլ հպատակներին վերաբերող թուրքական պաշտոնական վավերագրերը հիմնականում ամփոփված են թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի «Ստամբուլի 16-րդ դարի կյանքը» խորագրով փաստաթղթերի ժողովածույում<sup>61</sup>: Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր վավերագրերը վերցված են Ստամբուլի պետական արխիվից: Յուրաքանչյուրին՝ ըստ բովանդակության, տրված է համապատասխան վերնագիր: Իսկ վավերագրերի վերջում նշված տարեթվերը ցույց են տալիս, որ դրանք հրապարակվել են սուլթան Սուլեյման I-ի

(1520-1566), սուլթան Սելիմ I-ի (1566-1574) եւ սուլթան Մուրադ III-ի (1574-1595) ժամանակաշրջանում:

Սուլթանական այս հրովարտակաները բովանդակում են եկեղեցիների եւ այլ պաշտամունքային շինությունների քանդման, դավանափոխության, կրոնական ծիսակատարությունների եւ քրիստոնյա բնակչության ազգային տարազի հարցում եղած սահմանափակման, գինու վաճառքի արգելման վերաբերյալ եւ այլ բնույթի նյութեր:

15 Վայր կանոնները, կանոննամեները, հարկացուցակները, հրովարտակաները եւ այլ բնույթի վավերագրերը որոշակի պատկերացում են տալիս Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում՝ պրեմտահայերի սոցիալ-տնտեսական ծանր դրության մասին: Հարկ է նշել, որ քրիստոնյա բնակչությունը պարտավոր էր այնպիսի լրացուցիչ հարկեր վճարել պետությանը, որոնք չէին գանձվում մահմեդականներից: Նման հարկերից են՝ կանոննամեներում հաճախակի հիշատակվող խառաջը, իսպենջը, մուրախասիեն եւ այլն: Բացի այդ 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած ֆինանսական աճող դժվարություններից ելնելով, պետությունը տեսական նոր հարկեր էր սահմանում ոչ մահմեդական բնակչության վրա, որը բացասաբար էր ազդում տնտեսության զարգացմանը, քանի որ հողագործը հարկադրաբար լքում էր իր բնակավայրը:

Առկա փաստերը բերում են այն եզրակացության, որ օսմանյան սուլթանների բռնատիրությունն իր բոլոր կողմերով խափանում էր թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների տնտեսական, քաղաքական եւ մշակութային կյանքի զարգացումը:

Աշխատության մեջ հիմնականում կանգ ենք առել Օսմանյան կայսրությունում հայերի իրավական վիճակի, հողային քաղաքականության եւ հարկային կառուցվածքի, ինչպես նաեւ Հայաստանին վերաբերող թուրքական պատմա-աշխարհագրական աղբյուրների վրա: Հավելվածում տրված են 16-19-րդ դարերի թուրքական վավերագրերի՝ մեր կողմից կատարված հայերեն թարգմանությունները, որոնք քաղված են վերջին տարիներին թուրքիայում հրատարակված, միջնադարին վերաբերող արխիվային նյութերից: Բերված վավերագրերը առնչվում են Կ.Պոլսի հայկական եկեղեցիների եւ ուխտատեղերի քանդմանը, կրոնական եւ կենցաղային ծիսակատարությունների սահմանափակումներին, ինչպես նաեւ հողային հարաբերություններին ու հարկապահանջությանը: Տրված են նաեւ մանկաժողովի, հայ պատրիարքներին ուղղված մի շարք

քերաքնների, ինչպես նաև զանազան բնույթի վավերագրերի թարգմանություններ: Ինչպես նշեցինք, բերված վավերագրերը հիմնականում առնչվում են 16-19-րդ դդ. ժամանակաշրջանին: Սակայն, նկատի ունենալով մի քանի փաստաթղթերի խիստ կարեւորությունը, ընդգրկել ենք նաև վաղ եւ ավելի ուշ շրջանին վերաբերող մի քանի վավերագրեր եւս:

Բերված նյութերը առավել կհարստացնեն եւ կնպաստեն հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությանը: Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ թուրքական վավերագրերի հրատարակությունները հաճախ չեն համապատասխանում մասնագիտական պատշաճ մակարդակին: Հարցն այն է, որ երբեմն տեքստերը օսմաներենից լատինատառ թուրքերենի են փոխադրել ազատ, բացթողումներով եւ առանց անհրաժեշտ ծանոթագրությունների: Միշտ չէ, որ հրատարակությանը կցվել է տվյալ վավերագրերի պատճենները, որպեսզի մասնագետները անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենային անմիջականորեն ծանոթանալու բնագրի հետ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա.Խ.Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատ. Ա., Երեւան, 1961, Հատ. Բ., 1964, Հատ. Գ., 1967, Հատ. Դ., 1972:

2. Ժամանակակից թուրք պատմաբան Յավուզ Էրջանը սխալվում է, նշելով, որ իբր հայ պատմաբանները անտեսում են թուրքական աղբյուրները եւ չեն օգտագործում դրանք: Իրականում հայ պատմաբանները մանրակրկիտ ուսումնասիրել են ոչ միայն միջնադարի թուրք պատմագիր-տարեգիրների երկերը, այլևս հատուկ ուշադրություն են դարձրել ուշ շրջանի հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող ուսումնասիրությունների վրա եւ տվել դրանց իրական գնահատականը: Տես՝ YAVUZ ERCAN, Türkiye XV ve XVI yüzyıllarda gayrimüslimlerin hukuki, ictimai ve iktisadi durumu, «Belleten», 1948, No. 188, s. 1187.

3. SADEDDIN HOCA EFENDI, Tac üt-tevarih, C.I-II, Istanbul, 1279, (արաբատառ)

4. Хюсейн, Беда'и ул Века'й, издание текста, введение и общая редакция А.С.Тверитиновой, Ч. 1-2, М., 1961.

5. MUSTAFA SELANIKI, Tarih-i Selaniki, Istanbul, 1281 (արաբատառ)

6. AHMET FERIDUN RUKSANZADE, Münseat-es-selatin, Istanbul, 1858 (արաբատառ)

7. Թուրքական աղբյուրներ, Հատ. Ա., էջ 34:



8. Քյաթիբ Չելեբիի աշխարհագրական երկի՝ Ճիհան-Նյունայի մասին տես այս աշխատության 3-րդ գլուխը:

9. Fezleke, C. 1-2, Istanbul, 1286-1287, S. 41, 347 (արաբատառ)

10. Fezleke, C.I, S. 150, 221, 256.

11. Fezleke, C.I, S. 71, 126, 150.

12. Fezleke, C., S. 93, 118, 122.

13. Fezleke, C. 2, S. 328.

14. Fezleke, C. I, S. 373.

15. Fezleke, C. I, S. 151.

16. Fezleke, C. I, S. 328.

17. Fezleke, C. II, S. 255, 262, 268, 277.

18. I.H.UZUNÇARŞILI, Osmanli Tarihi, C. 3, II-ci kisim, Ankara, 1964, S. 497. Այս հաստատում է նաև Վոլշը: I.K.WALSH, The Historiography of Ottoman Safavid Relations in the Sixteenth and seventeenth centuries, Stu «Historical writing on the peoples of Asia», London, 1962, p. 200

19. Джихан-ньюма и фезлеке Кятиба Челеби как источник по истории Армении (XVIIв.). Предисловие, перевод и комментарии Аветиса Папазяна, Ереван, 1973, Стр. 113-132.

20. Keşf el-Zunun, neşri Şerefeddin Yaltkay, Ankara, 1941, S. 18 (արաբատառ)

21. Katip Çelebi, Takvim-i tevarih, Kostantinya, 1146 (արաբատառ)

22. Von Hammer, Geschichte des Osmanischen Reiches, T. 6, Pest, 1827-1835, S. 45.

23. Ayni Ali, Kavanin-i Ali Osman ve hulasa-i muzamini defter-i divan, Istanbul, 1280.

Այս աշխատությունը ուսումնասիրված եւ թարգմանված է գերմաներեն Փ.Ա.Թեշների կողմից: Stu P.A.Tuschendorf, Das Lehnwesen in den meslsmischen Staaten insbesondere im Osmanischen Reiche, Leipzig, 1872.

24. Fezleke, C. 2, S. 384.

25. В.Д.Смирнов, Кочибей Гемюрджинский и другие османские писатели XVIIв., о причинах упадка Турции, СПб., 1873, Стр. 238.

26. «Թուրքական աղբյուրներ» Հատ., Ա. էջ 226:

27. Վ.Տ.Սմիռնով, Կոչիբեյ Գյունյուրջինսկի...:

28. А.С.Тверитинова, Второй трактат Кочибея, "Ученые записки института востоковедения", М.-Л., 1953, т. 4.

Կոչիբեյի այս երկրորդ Ռիսալեն թուրքական արխիվներից 1937 թ. հայտնաբերել է հրատարակել է Ա.Ք.Ակսուտը: Koçi bey risalesi, Şimdiye kadar elde edilmemiş olan tarihi eserin tamamı. Eseri bulup tahşiye eden Ali Kemal Aksut, Istanbul, 1939.

29. «Թուրքական աղբյուրներ» Հատ., Բ., էջ 226-232:

30. Ալի Չաուշի տրակտատը հայտնաբերել է առաջին անգամ 1947 թ. սերբա-խորվաթական լեզվով հրատարակել է Խ.Նաջիբեկովիչը: Ուսե-



րեն քարգմանությունը տե՛ս Аграрный строй Османской империи XV-XVII вв., документы и материалы. Составление, перевод и комментарий А.С.Тверитиновой, М., 1963, Стр. 92-127.

31. Asaf Halet Çelebi, Naima, Hayati, sanati, eserleri, Istfnbul, 1953, S. 19.

32. «Թարիհ-ի Ջեվղեթը» հրատարակվել է մի քանի անգամ, Ստամբուլի պետական տպարանում: Առաջին հրատարակության մեջ առաջաբանի նյութերը ցրված են եղել տարբեր հատորների մեջ: Երկրորդ հրատարակության ժամանակ հրատարակիչները հավաքելով, ի մի են բերել առաջաբանի նյութերը եւ հրատարակել առաջին հատորում: Մյուս հատորները բովանդակում են Օսմանյան կայսրության պատմական դեպքերը:

33. Tarih-i Gevdet, 2-ci tabi, Dersaadet, 1309, C. I, S. 4.

34. Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», Հատ., Ա., էջ 210-213:

35. Aktepe Münir, 1720-1724 Osmanli-Iran münasebetleri ve silahşör Kemani Mustafa ağanın Revan fetih-namesi, Istanbul, 1970.

36. Гурджизаде, Книга завоевания Тбилиси, Турецкий текст с грузинским переводом, введением и примечаниями издала И.А. Абуладзе, Тбилиси, 1975

37. «Թուրքական աղբյուրներ», Հատ. Ա., էջ 141-152:

38. Նույն տեղում, էջ 142:

39. Նույն տեղում, էջ 143:

40. «Թուրքական աղբյուրներ», Հատ. Ա., էջ 156:

41. Նույն տեղում, էջ 300-301:

42. Ա.Պերպլեբան, Հայոց Պատմություն, Կ.Պոլիս, 1871, էջ 28:

43. Убичини и П. де Куртейль. Современное состояние Оттоманской империи, СПб., 1877, Стр. 187.

44. Ahmet Mumcu, Külliyat-i kavanin, Sarkis Karakoçun Osmanli mevzuati derlemesi, «Belleten», 1972, No. 143, S. 380.

45. Նույն տեղում:

46. «Belleten», 1984, No. 188, S. 1120.

47. Նույն տեղում, էջ 1121:

48. Տե՛ս Հ.Ղ.Փափազյան, Սոֆիայի Կիրիլ եւ Մեթոդիի ժողովրդական գրադարան, Օսմանյան դիվանական վավերագրերը, ՊԲՀ., 1984, Թիվ 3, էջ 195-214:

49. O.L.Barkan, XV ve XVI-ci asirlarda Osmanli Imparatorluğunda zirai ekonominin hukuki ve mali esaslari, C.I.Kanunlar, Istanbul, 1945.

50. Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում 16-17-րդ դդ., Կանուն-Նամեներ: Թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Ա.Ասֆրաստյանի եւ Ա.Ջուլայանի, Երեւան, 1964.

51. Տե՛ս Օսմանյան հարկային կանոնագրությունները եւ Արեւմտահայությունը, «Հայկական հայագիտական հանդես», Պէրյուք, 1977-1978, էջ 105:

52. Hadiye Tüncer, 1) Osmanli İmparatorluğunda toprak hukuku, arazi kanunlari ve kanun aciklamalari, Ankara, 1962. 2) Osmanli İmparatorluğunda toprak kanunlari, Ankara, 1965.

53. Տե՛ս Վաղարշապատ գյուղի 1725-1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», 1960, Թիվ 5, էջ 461-464:

54. Տե՛ս ՊԲՀ, 1984, Թիվ 3, էջ 195-214:

55. Джаба дефтер чилдырского зялета, 1694-1732 гг. Тбилиси, 1979.

56. Նույն տեղում, էջ 209:

57. Ս.Երեւանցի, Ջամբո, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց սրբոյ Աթոռոյս, եւ իւրոյ շրջակայից Վանօրէիցն, Վաղարշապատ, 1873:

58. Նույն տեղում, էջ 234-249:

59. Նույն տեղում, էջ 249-252:

60. А.Д.Папазян. Источниковедческие значения турецких документов Матенадарана, "Средневековый Восток", М., 1980, Стр. 208-217.

61. Ahmet Refik, On altinci asirda Istanbul hayati, (1553-1591), 2-ci basim, Istanbul, 1953.

## **Հայերի իրավական վիճակը Օսմանյան կայսրությունում**

Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ոչ-մահմեդական ժողովուրդները աշխարհիկ եւ հոգեւոր արտոնություններ ստացան սուլթան Մեհմեդ II-ի (1451-1481) գահակալության շրջանում: Այլադավան հպատակներին աշխարհիկ եւ հոգեւոր իշխանություն տալով, սուլթան Մեհմեդ II-ը եւ նրա հաջորդները ջանում էին համայնքների համակարգը ծառայեցնել իրենց նվաճողական նպատակներին: Նրանք օգտագործում էին պատրիարքների հեղինակությունը՝ հպատակներին հլու հնազանդ եւ օտար պետությունների արգելեցությունից հեռու պահելու համար: Համայնքի առաջնորդը ուներ ոչ միայն հոգեւոր, այլեւ քաղաքացիական իշխանություն՝ միեւնոյն դավանանքին պատկանող անձանց նկատմամբ: Հարսանիքը, ապահարզանը, գույքային եւ կենցաղային վեճերը լուծվում էին տվյալ համայնքի կրոնական օրենքներով: Նրանք միջոցով գանձվում էին տարբեր տեսակի հարկեր թե՛ պետության օգտին եւ թե՛ տվյալ պատրիարքության համար:

Սուլթան Մեհմեդ II-ի եւ նրա անմիջական հաջորդների ֆերմանները, որոնք վերաբերում էին հույն եւ հայ պատրիարքների «առանձնաշնորհուններին», չեն պահպանվել: Այդ ֆերմանները չեն հայտնաբերվել ոչ հույն եւ ոչ էլ հայ պատրիարքարաններում եւ ոչ էլ Օսմանյան կայսրության արխիվներում: Շատ հավանական է, որ դրանք ոչնչացել են Կ.Պոլսում բռնկված հրդեհներից: Միայն հետագա պատմագիրներն են արձանագրում այն փաստը, որ Մեհմեդ II-ը Կ.Պոլիսը գրավելուց հետո (1453 թ.) հույն եւ հայ համայնքների համար հատուկ ֆերմանով հաստատել է պատրիարքարաններ:

Հայ համայնքի (Ermeni milleti ) պատրիարքությունը հատուկ հրովարտակով հաստատվել է 1461 թ., այն ժամանակ, երբ Մեհմեդ II-ը Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին տեղափոխելով Կ.Պոլիս, նշանակեց պատրիարք: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հովակիմ եպիսկոպոսով չէ, որ սկսվում է հայոց պատրիարքության գոյությունը Կ.Պոլսում: Փաստերը վկայում են, որ Կ. Պոլսում հայկական հոգեւոր առաջնորդություն եղել է դեռեւս Բյուզանդական կայսրության օրոք: 1360 թվականին Կ. Պոլսում հայերն ու-

նեին Ս. Սարգիս եկեղեցին եւ նրա շուրջը համախմբված հայկական համայնք:<sup>1</sup>

Մեզ հասած ամենահին կայսերական հրովարտակը, որը հաստատում է հայոց պատրիարքության իրավունքներն ու պարտականությունները կայսրության սահմաններում, 1764 թվականի հունիսի 3-ին Գրիգոր Պասամճյանին (1764-1773) շնորհված բերաթն է, որն առաջին անգամ հայատառ թուրքերենով հրատարակել է Ա. Բերբերյանը:<sup>2</sup> 1774թ. հունվարի 22-ին սուլթան Աբդուլ Համիդ I-ը (1774-1789) համանման բերաթ է շնորհել նաեւ Ջաքարիա պատրիարքին (1773-1781), որի հայերեն թարգմանությունը՝ «Ազգիս հայոց պատրիարք Ջաքարիայ աստվածաբան վարդապետի պատրիարքության խատտի շերիֆի հայկական թարգմանյալ օրինակն է» վերնագրով, հրապարակված է «Դիւան հայոց պատմութեան» մեջ<sup>3</sup>: Ընդհանրապէս, համայնքների կողմից ընտրված կրոնական առաջնորդը հաստատվում էր կայսերական հատուկ բերաթով, ուր սովորաբար կրկնվում էին նախորդ սուլթանների կողմից տրված իրամանները: Այս մասին սուլթան Աբդուլ Համիդ I-ի կողմից շնորհված ֆերմանում կարդում ենք՝ «Ձի բոլոր եւ համանգահայն Ֆերմանք եւ իրամանագիրք առ նախնեոք մեծագոր արքայից, կրկին եւ վերստին նորոգիցի եւ հաստատիցի ընդ որս եւ իրամայեցավ ի տերութենէ նորոգիլ եւ ֆերմանքն մեծի Պօլսոյս»:<sup>4</sup> Այնուհետեւ բերաթում նշվում էր համայնքի կրոնական առաջնորդի վարչական իրավունքները իր հոտի նկատմամբ, ինչպէս նաեւ կրոնական ծիսակատարությունները, որոնք յուրահատուկ էին տվյալ համայնքին: Բնականաբար այդ բոլորը, ինչպէս նշվում էր իրամանագրում, չպետք է հակասեին շարիաթի դոգմաներին: Անհրաժեշտ է նշել, որ այդ կայսերական բարձր բերաթները շաղախված էին լինում բավականին ծեփծեփուն խոսքերով եւ փքուն խոստումներով, որոնց մեծ մասը բնականաբար չէր գործադրվում կյանքում:

Հայոց պատրիարքությանը շնորհված բերաթների բովանդակությունը ցույց է տալիս, որ համայնքի կողմից առաջադրված յուրաքանչյուր նոր պատրիարք պարտավոր էր 100 հազար ակչե միանվազ նվիրել սուլթանական գանձարանին, որպեսզի ծեռք բերեր իր պաշտոնին նշանակվելու բերաթը: Այնուհետեւ պատրիարքը պարտավոր էր հայ համայնքից հավաքել «Միրի մուկաթաա» հարկը (100-140 հազար ակչե) եւ հանձնել կառավարությանը: Այս հանգամանքը խիստ շահագրգռում էր սուլթաններին համախակի փոփոխելու պատրիարքներին, որպեսզի ամեն մի նորընտիր պատրիարքից կորզեր 100 հազար ակչե: Օր., սուլթան Մուստաֆա

III-ի (1757-1774) կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարք Գրիգոր Պասաճյանին (1764-1773) տրված կայսերական բերաթում նշվում է.

«Յնուց եկած սովորության համաձայն, եւ եպիսկոպոսների նախկին մուկաթաանների արձանագրությունների հիման վրա, Կ. Պոլսի, Ռումելիի եւ Անատոլիայի հայ համայնքի նորընտիր պատրիարքը պետական գանձարանին հատկացրել է 100000 ակչե փեշքեշ եւ պարտավորվել յուրաքանչյուր տարի որպէս մուկաթաա վճարելու 100000 ակչե գումար: Այսպէս է վարվել նաեւ հոգեւորական Չակոբը, երբ ստանձնել էր պատրիարքությունը Գեւորգ անունով հոգեւորականից եւ արժանացել կայսերական բարձր բերաթի: Ավանդական այդ կարգով, նորընտիր Գրիգոր պատրիարքը 25 զուլքաղե 1177 (26 մայիս 1764) պետական գանձարանին հատկացրեց նշանակված 100 000 ակչե փեշքեշը, եւ եւ շնորհում եմ նրան սույն կայսերական բարձր բերաթը եւ հրամայում եմ, որ Կ. Պոլսի, Փերաքենդեի, Ռումելիի եւ Անատոլիայի հայ համայնքի առաջնորդները, քահանաները եւ նրանց ենթակա վայրերի բոլոր հայերը հիշյալ հոգեւորական Գրիգորին ճանաչեն որպէս իրենց պատրիարքը»:<sup>5</sup>

Նույն միտքն ու բովանդակությունը արտահայտված է նաեւ սուլթան Մահմուդ II-ի կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարք Ստեփանոս Աղավնուն եւ հետագա պատրիարքներին տրված բերաթներում:<sup>6</sup>

Տարեկան բարձր տուրք վճարելու մասին խոսվում է նաեւ սուլթան Մահմուդ II-ի (1808-1839) կողմից կաթոլիկ եպիսկոպոս Չակոբ Մանվելյանին շնորհված բերաթում, որտեղ ասված է. «...1246 թ. ռեջբե ամսի 21-ին (5 հունվար 1831), Մանվելի որդի Չակոբ հոգեւորականին կայսերական բարձր ֆերմանով եպիսկոպոս նշանակեցինք Կ. Պոլսի, ինչպէս նաեւ ամբողջ Օսմանյան կայսրության մեջ գտնվող կաթոլիկադավան հայերի վրա: Այն պայմանով, որ նա կանխիկ 150 000 ակչե նվիրատվություն անի կայսերական գանձարանին, ինչպէս նաեւ 30 յուր, 380 000 ակչե տարեկան հարկ վճարի»:<sup>7</sup>

Չովակիմից սկսած մինչեւ Չակոբ եպիսկոպոս Պոլսեցին (1848 թ.) պատրիարքական աթոռին հերթականորեն բազմել են մոտ 82 անձնավորություններ: Վերջին հարյուրամյակում դրամի ավելի շատ կարիք զգացող սուլթանները առանց պատճառի փոխել են սրանց, երբեմն նույն մարդուն երկու անգամ նշանակելու արտոնություն տվել եւ անեն անգամ էլ ստացել սահմանված հարկագու-



մարը<sup>8</sup>: Փաստերը ցույց են տալիս, որ սուլթանները ժամանակի ընթացքում բարձրացրել են պատրիարքության գինը: 1657 թ. Թուլմաս Բերիացին մեծ վեզիր Քյուփրուլյու Մեհմեդ փաշայից պատրիարքության հրովարտակ է ձեռք բերել վճարելով 400 000 ալշե<sup>9</sup>: Պատրիարքները միաժամանակ պարտավոր էին նոր վեզիրին տալ 500 դուրուշ, վեզիր-փոխանորդին՝ 250 դուրուշ, չավուշ բաշուն՝ 200 դուրուշ<sup>10</sup>: Մի խոսքով, հայ հոգեւորականությունը օսմանյան կենտրոնական կառավարության համար եկամտի կարեւոր աղբյուր էր: Ով տրամադրում էր մեծ գումար, նա էլ ձեռք էր բերում բարձր պաշտոն:

Ահմեդ Ռեֆիկի հրապարակած<sup>11</sup> 16-րդ դարի սուլթանական հրովարտակներից իմանում ենք, որ սուլթան Սելիմ I-ի ժամանակ 4. Պոլսի եկեղեցիները ընդհանուր ստուգման ենթարկվելով, շատերը քանդվել են<sup>12</sup>: Իսկ սուլթան Սուլեյմանի գահակալության շրջանում, 4. Պոլսի կադիին ուղղված հատուկ ֆերմանով քանդվել է Սուլու-մանասարի (Ս. Գեւորք) հայկական եկեղեցուն կից կառուցված շինությունն ու սահմանափակումներ դրվել կրոնական ծիսակատարությունների վրա. «Իմ բարձր հրամանագնը առնելուդ պես, քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող շինությունը: Միեւնույն ժամանակ թույլ չտաս իրենց հնագույն եկեղեցիներում ծնծղա խփելու, բարձր ծայնով երգելու եւ գինի խմելու: Պետք եղածի պես զգուշացրու հիշյալ վանքի քահանաներին, որ այսուհետեւ շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ, եթե որեւէ շինություն կառուցեն, նույնպես ենթարկվելու է քանդման»<sup>13</sup>:

Թե՛ հայկական եւ թե՛ թուրքական պատմագրական աղբյուրներում եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձեւափոխման փաստերը շատ են: Հայտնի է, որ 4. Պոլսի գրավման հաջորդ օրը Ս. Սոֆիա տաճարը վերածվեց մզկիթի: Նույն ճակատագրին արժանացավ նաեւ Ս. Առաքյալների տաճարը եւ այլ եկեղեցիներ: Սուլթանական հրովարտակով արգելվեց նաեւ նոր եկեղեցիների կառուցումը:

Այս չարաբաստիկ երեւոյթը շարունակվեց նաեւ հետագա դարերում, ոչ միայն 4. Պոլսում, այլեւ պատմական Հայաստանի քաղաքներում եւ գյուղերում: Այս կապակցությամբ 16-րդ դարի ժամանակագիր Հովհաննիսի ծարեցին նշել է. «Իսկի ՈԼԲ (1583) թվականին, դարձեալ հրաման եղեւ ի Մուրատ հոնդկեարեւ զօրպպետաց եւ զօրաց իւրոց՝ ելանել ի վերայ Յերեւանայ եւ առնուլ գնա: Եւ եկին իսկ եւ աւերեցին, եւ բազում եկեղեցիք քակեալ, զքարինս ի շինումն բերդին տանին, որ եւ կամեցան զմեծ եկեղեցին, որ Յերու երեսի ասի, եւս քակել»<sup>14</sup>:

Մի այլ ժամանակագիր Էրզրումի բերդում կատարված ավերածությունների մասին հայտնել է հետևյալը. «... Բազում եկեղեցիք, զորն երեւին եւ զորն արարեալ են մզկիթ եւ զորն քակեալ կան: Եւ է գերեզման սրբոց Սահակայ եւ Յօսեփայ, որ այժմ եկեղեցիցն անարատ եւ է ի ձեռս անհաւատից»: «Եկեղեցիք բազումք, որ այժմ է ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարին ամբարայնույք եւ զորն քակեալ եւ քայքայեալ են այժմոյս չեն երեւիլ»<sup>16</sup>:

Իսկ 17-րդ դարի թուրք հանրահայտ ճանապարհորդ Եվլիա Չելեբին Կարսում եկեղեցիները մզկիթի վերածելու մասին արձանագրել է հատելյալը. «Կարսում գտնվող «Սուլեյման էֆենդի» մզկիթը մուսուլմանական հավատի ոճով կառուցված, շքեղ արտաքինով լավ սրբավայր է: Այն քրիստոնեական եկեղեցի է եղել եւ ձեւափոխվել է մզկիթի: «Յուսեյն քետխուդա» մզկիթը նախապես եղել է քրիստոնեական հոյակապ մի տաճար, որը կոչվել է «Կարմիր եկեղեցի», սակայն սուլթանական հրամանագրով այն եւս ձեւափոխվել է մզկիթի եւ այդպես փրկվել անհավատների ձեռքից»<sup>16</sup>:

Սուլթանական ֆերմաններից իմանում ենք, որ նույնիսկ նախկին եկեղեցիների վերանորոգման համար անհրաժեշտ էր դիմել կայսերական դիվանին եւ հատուկ թույլտվություն ստանալ: Մահմեդականներից կազմված հանձնաժողովը ստուգում, արձանագրում էր վերանորոգման ենթակա կետերը եւ այնուհետեւ տալիս էր արտոնություն այն պայմանով, որ նորոգումը կատարվեր նախկին շինության նյութով եւ միեւնույն չափսերով: Այս մասին սուլթան Յամիդ I-ի՝ եկեղեցիների նորոգման վերաբերյալ հրովարտակում (22 հունվար 1774 թ.) ասված է. «Նախապես ուր ուրք եւ իցէ քաղաքի մօլլայն եւ այլք կարդացօղք եւ տաճիկք մեծամեծք, գնացեալ աչօք իւրեանց տեսցեն եւ քայքայեցեալ աւերեալ տեղեացն վերահասու լիցին, երկայնութիւնն եւ լայնութիւնն այնը եկեղեցւոյն ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի եւ ոչ պակաս՝ գննիցեն՝ տեսցեն եւ վկայեսցեն եւ ի գիրս աւանդեսցեն հեօճէփու, ապա յետ այնը հրամայեցեալ է զաւերեալ տեղիս նորոգել եւ շինել ոչ աւելի եւ ոչ պակաս, մի լիցին ձեռնամուխ րայայք, զի մի յետոյ վնասիցին»<sup>17</sup>:

Եկեղեցիների ստուգման վերաբերյալ սուլթան Աբդուլ I-ի ֆերմանում նշված է, թե ինչպես մի շարք մուլեռանդ թուրքեր իրենց չարամիտ նպատկներով օգտագործել են եկեղեցիների վերանորոգման առիթը եւ անտեղի բողոքներ ներկայացրել կառավարական պաշտոնատար անձանց ու մահմեդական հոգեւորականությանը: Վերջիններս, հավատ ընծայելով նման մարդկանց խոսքերին,

իրենց հերթին անարգել գործադրել են հայ ռեայայի նկատմամբ իրենց թշնամանքի ու ատելության կիրքը. «Այլեւ յոմանս քաղաքս եւ գիւղս, եւ յայլս նահանգս ոչ զլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու, կամ վասն կաշառս առնելոյ եւ կամ վնասս հասուցանելոյ մաքառին ընդ խղճալի հայոց ազգին եւ երթեալ առ մօլլայն, առ վօյվօտայն եւ առ մեծամեց անձինս բառնալով՝ դրդեն զնոսս ի բարկութիւն, զի կամ տուգանօք վնասս հասուցեն եւ կամ զնորուլեցեալ տեղիսն քայքայեսցեն, մեծամեծքն տրուութեան իմոյ, հավատացեալ նոցին նախանձախնդիր խօսից՝ զօրացուցանեն զբարկութիւնս իւրեանց, եւ լինին վրեժխնդիրք խղճալի թայային, զի կրկին տուգանք եւ փող առցեն, եւ զծառասն ազահութեանց յագեսցուցեն, եւ եթէ ոչ տայք զտուգանս ասեն թայային ի բանտ եւ ի տանջանս մատնենք զձեզ, որով երկուցեալ վշտացուցանեն զազգն հայոց, եւ նոքա ոչ կարացեալ տանին զայսպիսի նեղութիւնն, թողուն զտեղիս եւ զտունս եւ փակողին անտի, լինելով ցիր ու ցան եւ ոմանք եւս ի բանտ արգելեալք եւ խոշտանկեալք այս վայրութեամբ գրաւեն զկեանս իւրեանց»<sup>18</sup>: Այնուհետեւ սուլթանական Ֆերմանում նշվում է, թէ ինչպես նոր պաշտոնի անցած կադիները, մոլլաները հարստանալու տենչով համակված զանազան որոգայթներ են հյուսում եւ տուգանքներով, կաշառակերությամբ նեղում եւ վշտացնում հայ ռեայային: Այս կապակցությամբ սուլթանը միջոցներ է ձեռնարկում, իբրեւ թէ, կանխելու նման չարագործների անօրինական վարմունքը, բայց՝ ապարդյուն:

Թուրքական պետական գործիչները, կիրառելով հռոմեական «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը, տեղական թշնամություն էին սերմանում իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդների միջեւ: Իրար հետ համերաշխ ապրող աշխատավոր ժողովուրդներին ազգային եւ կրոնական հողի վրա լարում էին միմյանց դեմ, ստեղծելով բազմապիսի տարածայնություններ եւ խարդավանքներ: Բալկանյան երկրների ժողովուրդներին զրգռում էին իրար դեմ: Փոխադարձ անհանդուրժողականություն էին սերմանում նաեւ հայերի եւ հույների միջեւ:

Փաստերը ցույց են տալիս, որ որեւէ մոլեռանդ շեյխի նենգ քնահաճությամբ կարող էին նույնիսկ եկեղեցիները հիմնահատակ ավերվել: 1662 թ. սուլթան Մեհմեդ IV-ի կրոնական խորհրդական շեյխ Վանիի դրդումով հրաման է արձակվում Կ. Պոլսում քանդելու նայն բոլոր հունական եւ հայկական եկեղեցիները, որոնք սկսվել էին վերանորոգվել 1660 թ. մեծ հրդեհից հետո: Սիւս թէ ինչպես է

նկարագրում այդ դեպքերը 17-րդ դարի հայ մատենագիր Հակոբ Կարնեցին. «... (Մուլլայի Վանին) օժապատ իր չար խորհրդովն եւ անօրեն լեզւաւն իւրով հաւանեցոյց զմիտս վազիրին եւ արքային (սուլթան Մեհմեդ IV-ին Ա.փ.), որ ետուն սաստիկ հրաման ՌեժԱ (1662) թվին ի մէջ Ստամպոլա, որ մինչեւ Ժ (10) եկեղեցի հռոռմաց եւ Հայոց քանդեալ աւերեցին, եւ զգլուխս ամենայն քրիստոնէից մինչեւ ի Սեբաստիայ վիճակն եւ ի Թոխաթ սիաւ գտակ անցուցին եւ զօտին եասախ արարին»<sup>19</sup>:

1661 թ. Բարձրագոյն Դուռը, նկատի ունենալով, որ հունական, հայկական եւ հրեական համայնքները Ջուլումիեի մզկիթի կառուցման համար նշանակված գումարները չեն հատկացրել, վաճառքի է հանում Կ. Պոլսում գտնվող նրանց ազգային սեփականությունը: Այդ չարանեմզ կարգադրությունից առաջին հերթին տուժում են մայրաքաղաքի հրեաները՝ «... որոնք ծախսեցին զամենայն տեղիս եւ զբնակութիւնս եւ զթաղս եւ զաղոթանոցն վասն ճամոյն շինութեան»<sup>20</sup>, իսկ հույները եւ հայերը շտապ վճարելով մզկիթի շինութեան գումարը, կարողանում են որոշ չափով մեղմացնել այդ որոշումը:

Հետագա դարերի ընթացքում եւս այս կամ այն պատրվակով հիմնահատակ քանդվել են մեծ թվով եկեղեցիներ: Բերենք մի օրինակ Թոքաթին վերաբերող թուրքական վավերագրերից. «1720 թ. հոկտեմբերին, Թոքաթում, Քառասուն մանկանց եկեղեցին ընդարձակելու համար երբ կառավարությունից թույլտվություն է ձեռք բերվում, մահմեդական բնակչությունը, գազազելով, (22 շեվվալ, կիրակի օրը) եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ աղմուկ աղաղակ բարձրացնելով, հարձակվում են, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում»<sup>21</sup>: Այս իրադարձությունը արձանագրված է նաեւ հայկական աղբյուրներում: Թոքաթում պահվող «Պատկերահանի Ավետարան» կոչված մի ձեռագիր հիշատակարանում նշված է. «Ֆերման բերին զսուրբ քառասնից եկեղեցին նորոգելու, առին հրաման եւ նորոգիցին մինչեւ ոչ թամամիլն (լրանալն) ժողովեցան Թոխաթու այլազգիքն ամենայն գրոհ տուեալ հասին ի սուրբ Քառասունք եւ քակեցին»<sup>22</sup>:

Ինչպես տեսնում ենք, իրականում եկեղեցիների վերանորոգման համար կառավարությունից թույլտվություն ձեռք բերելուց հետո էլ, տեղի մոլեռանդ մահմեդական բնակչությունը, որեւէ պատրվակ գտնելով խանգարում կամ քանդում էր վերանորոգված մասերը:

Աստվածատուր, Հովհան եւ Առաքել Ակնեցիների ժամանա-

կագրության մեջ (18-րդ դ.), Ակնում եւ շրջակայքում եկեղեցիների քանդման մասին խոսելիս նշվում է հետեւյալը. «Դարձեալ թուին ՌԱԼԲ (1783) որ մտաք Ստամպօլ Տաճիկներն արգուհալ էին տուեր քազաւորին, թէ Չոպի Մուսթաֆան նոր ժամ է շինել տուեր - քազաւորն ալ խափուճիպաշին քային արաւ, (նշանակեց) թէ «Գնա տես թէ սուտ է, թէ իրաւ»: Մեծ պասին իքինճի (երկրորդ) կիրակին (մարտի 12-ին) խափուճիպաշին եկաւ, ելաւ ժամուն վրայ. Տաճիկները ոտք կոխեցին, թէ ժամ է պարիսպ չէ: Խափուճին ալ խուսուր մնացածն ալ քակել տուաւ, քարն աստիս անդին տէլը ընել տուաւ: Շատ ստակ գնաց թէ խափուճուն, թէ խատուն, իլամին, կարծեմ թէ 6(100) քետ ստակ գնաց, պատն ալ մնաց այնպէս երեսի վրայ»:<sup>23</sup>

17-րդ դարի հայ ականավոր հրապարակախոս եւ պատմագիր Երեմիա Զյոմուրճյանը, եւս սրտի կսկիծով տալիս է թուրք տիրակալների կողմից քրիստոնյա եկեղեցիները քանդելու, թալանելու, հրդեհելու նկարագրությունները, ինչպես նաեւ ժողովրդի դառը բողոքը. «Յայն ժամ եւ սուզ առնույր երկրին եւ ողբայր երկիր վասն դիպուածոյ մերուն թշառութեանս, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտ ահագին եւ արեւ ծածկեցաւ եւ հողս սաստկագին յոյժ մինչեւ ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զաղաղակս իւրեանց յերկինս տարածեին ընդ հողմոյն եւ փոշոյն, որ բարձրանայր յերկրէ, եւ ծովն ալեօքն փոփրայր եւ բարձրանայր ընդ պարիսպն եւ անձրեւ գայր»:<sup>24</sup>

Մինչդեռ հայ պատրիարքներին տրված սուլթանական բերաթներում հաճախակի շեշտվում էր, որ «հնուց ի վեր հայերին պատկանող եկեղեցիների, վանքերի եւ ուխտատեղիների մեջ ծեսեր կատարելու ընթացքում կողմնակի միջամտություն չկատարվի: Ֆեթվա-ի շերիֆով կամ կայսերական բարձր հրամանագրով եկեղեցիները կամ վանքերը նորոգելիս, պետական պաշտոնյաների կամ կողմնակի անձանց կողմից արգելք չհարուցվի»<sup>25</sup>: Միեւնույն ժամանակ շեշտվում էր, որ «Որեւէ հայ զիմնի չի կարող բռնի դաւանափոխ լինել առանց իր համաձայնութեան»<sup>26</sup>:

Այս բոլորով հանդերձ անհրաժեշտ է նշել, որ հայկական մի շարք հանրահայտ վանքեր (ինչպես օրինակ Էջմիածինը, Ախթա-մարը, Մշո Ս. Կարապետ վանքը) դուրս են մնացել թուրքական ոտնձգություններից: Նախ, այս բարեբաստիկ հանգամանքին նպաստել է այն, որ այդ վանքերը հեռու են եղել մահմեդական մուլեռանդ վերնախավի աչքից: Երկրորդ, ավերման վտանգ առաջանալու դեպքում հայ մեծամեծները հավաքվելով, ամեն կերպ աշխատել են կանխել այն: Բնական է, որ առաջին հերթին մեծ դեր է



խաղացել բարձրաստիճան փաշաներին տրված ծանրակշիռ պարգևներն ու դրամական կաշառքները: Ահա այդպիսի վտանգ սպառնացել է էջմիածնի տաճարին, 18-րդ դարի առաջին քառորդին տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների ժամանակ: էջմիածինը անվնաս թողնելու համար հայ մեծամեծները միացյալ ջանքերով դիմում են ներկայացնում Կ. Պոլիս՝ սուլթան Ահմեդ III-ին եւ ձեռք բերում էջմիածնի տաճարի «ազատության» ֆերմանը: Այս մասին կան պատմագրական մի շարք հիշատակումներ, սակայն այդ ֆերմանի թուրքական պատճենը մեզ չի հասել: Միայն վերջերս, Լ. Դանեղյանի՝ Մատենադարանի ձեռագրական ֆոնդից հայտնաբերած Իզմատիոս Տիգրանակերտցու «Յամառոտության» հրապարակման մեջ ենք հանդիպում այդ ֆերմանի հայերեն ամփոփ բովանդակությանը:

«Ով իմ փաշէք ազնւական  
եւ ոսկեզլուխքն իմ սիրական,  
Զայն մանաստուռն ի Պարսկաստան՝  
Ուչ Քիլիսայ անունական,  
Զնայ պահեսչիք յանդորական՝  
Յանփոյթ մընալ ի հախտեան»:՝<sup>27</sup>

Շարիաթի օրենքները, այլադավանների նկատմամբ տածած իր բոլոր հարաբերական հանդուրժողականությամբ, ուղղահավատների հետ համեմատած, նրանց դասում է իրենց անհավատ դիրքով: Կ. Գիրգասը, վերլուծելով դուրանի եւ շարիաթի դրույթները, նշել է, «որ Մուհամեդը իր կրոնը տարածելու համար անհավատների դեմ պատերազմը հայտարարեց պարտադիր, այնպես, ինչպես պարտադիր էին աղոթքը, պասը եւ մահմեդականների այլ պարտականությունները»:՝<sup>28</sup>

Շարիաթը քրիստոնյաներին զրկում էր բազմաթիվ ազատություններից: Քրիստոնյան հրավունք չունեի մահմեդական թաղամասերում բնակություն հաստատելու: 1809 թ. մեծ վեզիր Յուսուֆ Չիա փաշան (1809-1811 թթ.) Թոքաթից անցնելու ընթացքում երբ տեղեկանում է, որ մահմեդականների տներում քրիստոնյա վարձակալներ են ապրում, հրամայում է նման մարդկանց անմիջապես հեռացնել մահմեդական թաղերից, փաստարկելով, որ այդ երեւույթը հակառակ է շարիաթի սկզբունքներին»:՝<sup>29</sup>: Այս կարգը մի անգամ եւս հիշեցվում է 1872 թ. սուլթան Աբդուլ Ազիզի (1861-1876) արձակած հրամանագրով եւ շեյխ ուլ իսլամի հաստատած ֆեթվայով: Այս հրամանագրում շատ պարզ ասվում է, որ «Այսուհետեւ մուսուլմանական թաղամասերում գտնվող տներում ըստ օրենքի պիտի

բնակվեն միայն մահմեդականները»:<sup>30</sup>

Հասարակական անբարո շեղումների եւ քրեական հանցագործությունների մասին սուլթան Սելիմ I-ի ժամանակ կազմված օրենքի մեջ նույնպես նկատվում են խտրականության փաստեր: Քրեական հանցագործությունների մասին բերված հողվածների վերջում նշվում է, որ «եթե վերոհիշյալները տեղի ունենան անհավատների (քրիստոնյաների) հետ, կամ արտոնյալ իրավունքներից օգտվող օտարականների հետ, թող որ հարկը նրանցից գանձվի կրկնակի չափով»:<sup>31</sup>

Փաստերը ցույց են տալիս, որ խտրականություն է եղել նաեւ բնակարանների կառուցման չափսերի խնդրում: Այս կապակցությամբ թուրք տարեգիր Շանի Ջադեն գրել է. «...Հունց ի վեր ընդունված կարգով մուսուլմանների շենքերի երկարությունը 12 արշին էր, իսկ ռեայաներինը՝ 10 արշին, ավելին արգելված էր: Ռեայաների դասի շենքերի համար ընդամենը 10 արշին հատկացված լինելով, այն հողամասը (արսա), որի վրա կառուցվում էր շենքը, շատ նեղ էր, շենքերի միջեւ ընկած տարածությունը նույնպես նեղ էր, իսկ շենքերը ցածր էին»:<sup>32</sup>: Շանի Ջադեն արծանագրում է նաեւ, «որ քարուկիր շենքերի կառուցումը միայն մուսուլմաններին էր վերաբերում, իսկ ռեայաներին երբեք չէր թույլատրվում»:<sup>33</sup>:

Մահմեդական հոգեւոր եւ աշխարհիկ վերնախավի համար սկզբունքային հարց էր այլահավատ հպատակների մահմեդականացումը, որի իրականացման համար նրանք գործադրում էին ամեն տեսակի բռնություն: Փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության կողմից նվաճված երկրներում տեղի բնակչությանը մահմեդականացնելու ուղղությամբ խիստ եւ համատարած միջոցներ են ձեռնարկվել: Առաջին հերթին պահանջվել է ավատատերերի ներկայացուցիչներից հավատափոխ լինել, հակառակ դեպքում սպառնալով նրանց հողերը բռնագրավել: Օր., Քյաթիբ Չելեբին նշում է, որ Ախալցխայում մեծ թվով ավագանիներ մահմեդականություն են ընդունել:<sup>34</sup> Պարսկական տիրապետության տակ գտնվող Արեւելյան Հայաստանում նույն մեթոդով բռնի մահմեդականացման են ենթարկվել նաեւ հայ ավատատիրական տոհմերի վերջին ներկայացուցիչները, որոնք ըստ միջնադարյան աղբյուրների, հայտնի են «ազատորդիներ» անվան տակ<sup>35</sup>: Բազմաթիվ փաստեր կան, որոնք հաստատում են հայ ավատատերերի բռնի մահմեդականացման, իսկ հրաժարվողների նկատմամբ նրանց հոդերի հափշտակման մասին:

Ա. Ժելյազկովան, բալկանյան երկրներում բռնի մահմեդակա-

նացման քաղաքականության մասին խոսելիս, հենվելով թուրքական վավերագրական նյութերի վրա, նշում է, որ նույնիսկ քաղաքային բնակչության ամենացածր խավը դիմել է հավատափոխության, նախ, որպեսզի ազատվի ծանր հարկապահանջությունից եւ երկրորդ, ստանա մահմեդականությունը ընդունողի համար սահմանված նվերներն ու դրամական բարձր պարգեւը: Իր հետազոտության վերջում Ա. Ժեյլազկովան ընդհանրացնելով նշել է այն կարեւոր գործոնները, որոնք նպաստում էին մահմեդականության բռնի տարածման քաղաքականությանը: Դրանք են. սրբազան պատերազմների (ջիհադ) ընթացքում մահմեդական կրոնի մոլեռանդության սաստկացումը, գերեվարությունը, մանկաժողովը եւ ծանր հարկապահանջությունը:<sup>36</sup>

Արեւմտյան Չայաստանի արհեստավորների շրջանում մեծ դեր է խաղացել նաեւ տնտեսական հողի վրա մահմեդականացնելու «ֆութուվվաթի» քաղաքականությունը: Գ. Անասյանի բնութագրմամբ՝ «Թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներում հայ արհեստավորները, իրենց արհեստները ի գործ դնելու իրավունքին տիրամալու համար, բռնադատվում էին իսլամների հետ միասին անդամակցելու թուրքական արհեստավորական միավորումներին, իսկ անդամակցելու համար՝ նրանց նման ենթարկվում էին իսլամական սահմանված ծիսակատարություններին եւ այդ միջոցով՝ իսլամություն ընդունելու թելադրանքներին»<sup>37</sup>:

Թուրք պատմաբան Գ. Թյունջերի հրապարակած թուրքական միջնադարյան կանոննամեններում եւս պարզ նշվում է, որ մահմեդականությունը ընդունելու դեպքում քրիստոնյան անմիջապես ազատվում էր իսպենջ վճարելու հարկից: Ահա այդ կանոննամեն.

«Ոչ-մահմեդական ռեայայից սիփահին իսպենջի հարկ է գանձում: Հետագայում ոչ-մահմեդականը դավանափոխ լինելով, եթե մահմեդականություն ընդունի, սիփահին իրավասու չէ նրանից իսպենջ գանձելու: Միմիայն հարկ կարող է գանձել: Այս մասին գոյություն ունի կայսերական ֆերման»:<sup>38</sup>

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ ոչ-մահմեդական ժողովուրդները զրկված էին մարդկային բարոյական արժանապատվությունից եւ ընդհանրապես ամենատարրական իրավունքներից:

Իսկ նրանք, որոնք հրաժարվում էին մահմեդականությունից եւ ձգտում էին կրկին վերադառնալ իրենց նախկին հավատին, սահմանվում էր խիստ պատիժ: Բանտային խոշտանգումներից կարող էր ազատվել նա, ով վերջնականապես կվերադառնար դեպի մահ-

մեղականությունը:

Ահա թե ինչ է գրում այդ մասին միջնադարի հայ ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին. «Տաճիկը մեծ վարձք համարելով զքրիստոնեից ուրանալ զքրիստոս եւ ի Մահմեդի օրէնս եւ ի կրօնս դառնալ, զխաչ եւ զեկեղեցի բեկանել եւ խորտակել եւ հաւատացեալք, որ ոչ հաւանին Մահմեդի եւ չար կրօնից նորին, ազգի-ազգի տանջանօք չարչարեն եւ հրով այրեն եւ համարեն պաշտօն աստուծոյ մատուցանել»:՝<sup>39</sup>

Իսկ Մուշից 4. Պոլիս ուղարկված մի բողոքագրում ասվում է. «Խլաթա մեջ հայ կին մը սաստիկ ծեծելով թեւն ու գլուխը քարոճեցին զորով տաճիկցնելու համար»:՝<sup>40</sup>

3. Մանանդյանի եւ 3. Աճառյանի հրապարակած միջնադարյան աղբյուրներում եւս կան բազմաթիվ վկայություններ հայերի բռնի մահմեդականացման մասին:

1517 թ. Խաչատուր Կողբեցի անունով մի հայ, որը բնակություն էր հաստատել Ամիդ քաղաքում՝ մի օր շուկայում հաց գնելու ընթացքում, թուրքերը շրջապատում են նրան եւ հարկադրում մահմեդականություն ընդունել, ապա թե ոչ սպառնում են այրել խաբույկի վրա: «Եւ խրատ տային նմա թէ «Ուրացիդ զքրիստոս եւ եկի յօրէնս մեր»: Եւ նա ամենեկին ոչ խօսէր ընդ նոսա, այլ օրհնէր զաստված եւ ասէր թէ «Ես քրիստոնեայ ամ»: Եւ նոյն ժամացն բորբոքեցին զհուրն եւ արկին ի ձեռսն եւ յոտսն շղթայս, եւ բուռն հարեալ զօրականացն եւ տարան զնա մերձ հրոյն, զի խորովեսցեն եւ ապա այրեսցեն: Եւ ճենճերէին ոսկերք անդամոց նորա, եւ նա էր ի մէջ նոցա՝ որպէս զգառն ի մէջ գայլոց»:՝<sup>41</sup>

1694 թ. վկայության մեջ նշվում է, որ Բրուսա քաղաքից Նիկողայոս Այվազ անունով մի հայ, որը ընդհանրապես չէր էլ ընդունել մահմեդականությունը, սակայն մահմեդական ամբոխը կեղծ պատրվակով տանում է նրան քաղաքի կադիի մոտ, ասելով, որ «Սա առաջի մեր ուրացաւ զհաւատն իւր եւ դաւանեաց զհաւատն մեր»: «Յայնժամ ամենքեան դատապարտեցին զսուրբն թէ «յառաջ ուրացաւ զքրիստոս եւ տաճկացաւ եւ այժմ կրկին դարձեր է ի քրիստոնէութիւն. մուրթատ է» ասելով մահապարտ գրեցին զնա, եւ վճիռ ետուն զլխատման»: Այնուհետեւ վկայությունը շարունակելով նշվում է, «Կատարեցաւ սուրբն Նիկողայոս ի թուականիս 3այոց ՌճԽԳ (1694) ամին եւ յանսեանն մարտի չորեքտասաներորդի, յաւուր չորեքշաբթի յաղուհացից քառասնորդաց պահոցն, չորրորդումն շաբաթու միջնացն, ի թագաւորութեանն 3ագարացւոց Սուլտան Ահմետին եւ ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝

Տեր Նահապետ կաթողիկոսին եւ վերատեսչութեան քաղաքին Պրուսայու՝ Սուքիասայ եպիսկոպոսի: Որոյ սրբոյ Նիկողայոսի յիշատակն օրհնութեամբ եղիցի»:՝<sup>42</sup>

1843 թ. սամաթիացի Յովակիմ անունով մի հայ երիտասարդ, որը հանկարծական մղունով ընդունել էր իսլամը, երբ փորձեց կրկին քրիստոնեութեանը վերադառնալ, հրապարակայնորեն, եվրոպական դեսպանների աչքի առջեւ, դատապարտվեց մահապատժի: Նույն չարաբաստիկ բախտին արժանացավ նաեւ Սալոնիկ քաղաքում մահմեդականությունից հրաժարված մի բուլղար աղջիկ:<sup>43</sup>

Այսպես, ուրեմն մահմեդականությունը միշտ էլ քարոզել է տեւական սրբազան պատերազմ մղել անհավատների, այսինքն՝ ոչմահմեդական դավանանքին հարողների դեմ, նվաճել նրանց երկիրը եւ ստրկացնել նրա ժողովրդին:

Իրավական տեսակետից անհավատն իրավունք չուներ աշխարհի վրա ազատ ապրելու: Նա կամ հարկատու պիտի լիներ մահմեդականի, կամ էլ դավանափոխ լիներ, ընդունելով մահմեդականությունը:<sup>44</sup> Փաստորեն Թուրքիայում միլիոնավոր քրիստոնյաներ չէին կարող դիտվել որպէս պետության օրինավոր քաղաքացիներ պարզապէս նրա համար, որ չէին պատկանում մահմեդական իշխող կրոնին:

Ձանգվածային բռնի մահմեդականացման լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Յանշենի բնակչության հավատափոխությունը: Յանշենահայերը՝ բուն Յանշենում, Կարադերեի շրջանում եւ Եորոխի հովտում մահմեդականություն են ընդունել տասնամյակներ տեւած համառ պայքարից հետո: Յանշենի հայության մահմեդականությունը բռնի ընդունելու եւ թրջանալու մասին կարելոր տեղեկություն է տալիս Ղ. Ինճիճյանը. «Բնակիչք երկրի յառաջագոյն հայք էին, այլ ի յելս ժէ դարուն եւ ի սկիզբն ժԸ երրորդին առհասարակ հանդերձ ամենայան շրջակայ գիւղօրէիք դարձան ի տանկութիւն սակս բռնութեան հարկապահանջութեան...»<sup>45</sup>: Լ. Խաչիկյանի բերած փաստերը ցույց են տալիս, որ 19-րդ դարի վերջին տասնամյակներին արդեն այդ շրջաններում մահմեդականությունն ըստ ամենայնի գանգվածային տարածում էր ստացել:<sup>46</sup>

Հայերի բռնի մահմեդականացման քաղաքականություն է գործադրվել նաեւ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արեւելյան Հայաստանում, որտեղ միեւնույն ծանր հարկապահանջության եւ հատկապէս գլխահարկի գանձման գործելակերպով ճնշում է բանացնել հավատափոխելու հայ չքավոր աշխատավորությանը: Սակայն նյութական մեծ վնասներ կրելով հանդերձ, հա-



յերն ամենուրեք պայքարել են այդ չարաբաստիկ աղետի դեմ: Հայ բնակչության հիմնական մասը, թե իր հայրենիքում, ինչպես նաև Սպահանում եւ Նոր Ջուղայում, վճարելով գլխահարկը, վճռակա- նապես պայքարել են ուժացման բոլոր փորձերի դեմ: Այնուհան- դերձ, ինչպես նշում է Դ. Փափազյանը, 18-րդ դարում կոտորածի սպառնալիքի տակ, Պարսկաստանի խորքերը, հատկապես Ֆարսի եւ Մազանդարանի նահանգներն արտագաղթած հայերի շրջանում տեղի են ունեցել զանգվածային մահմեդականության ընդունման դեպքեր:<sup>47</sup>

Այնուհանդերձ, մահմեդականացման եւ թուրքացման այս գա- նազան գործոնների համընդհանուր քաղականության դեմ մեծ դեր խաղաց հայ եկեղեցին, որը հոգեւոր եւ հասարակական իր գործու- նեությամբ պահպանեց հայ ժողովրդին զանգվածային ուժացու- մից: Հայ եկեղեցին էր, որ կարողացավ պահպանել ազգային հա- վաքականությունը եւ ղեկավարել ազգային ազատագրական շար- ժումները: Հայ հոգեւորականության, ինչպես նաև հայ առաջավոր մտավորականության ջանքերով բացվում էին դպրոցներ, հիմնվում տպարաններ, հրատարակվում դասագրքեր եւ պարբերականներ:

Մահմեդականների եւ ոչ-մահմեդականների միջեւ խտրակա- նություն կար սովորական կենցաղային հարցերում: Քրիստոնյան չէր կարող իր ցանկացած ձեռով հարսանիք կատարել կամ հու- դարկավորություն անել պատշաճ ծիսակատարությամբ: Չէր կա- րող նաև մահմեդականին հատուկ զգեստներ եւ կոշիկներ կրել ե-ւ ձի նստել նրա ներկայությամբ:

17-րդ դարի սկզբներին Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստա- նում ճանապարհորդած Սիմեոն Լեհացին եւս մանրամասն նկա- րագրում է այն հարստահարություններն ու ճնշումները, որոնց են- թակա էր սուլթանական բռնապետության տակ հեծող հայ ժողո- վուրդը: Սիմեոն Լեհացին կենցաղային խտրականության մասին խոսելիս նշել է, որ գավառական քրիստոնյաները զրկված էին լավ չուխա հագնելու կամ մեծ տուն ու այգի ունենալու իրավունքից: Նրանց արգելված էր անգամ ձի, ջորի կամ էջ հեծնելը: Հակառակ պարագային պետք է «ուլախ» կոչված դրամական տուգանք վճա- րեին:<sup>48</sup>

Ահա թուրքերեն մի փաստաթուղթ (թեզքերե), որը տրված է եղել Կարնեցի Երեւելի սարաֆ Մահտեսի Մանուկ Աստվածատրյանի (Ալահվերտի ամիրա)։

«Օսմանյան պետության բարձր պաշտոնատներում իր մատու- ցած ծառայություններին համբավ ձեռք բերած, սարաֆների դա-

սակարգին հիշյալ անձնավորությունը հիվանդ եւ ծեր լինելու պատճառով սույն թեզքերեն տրվեց: Մահմեդականի ծի նստելու կերպին չնմանվելու պայմանով, թող ոչ ոք արգելք չհանդիսանա նրա ծի հեծնելուն»:49

Թուրքական վավերագրերը լիովին հաստատում են, որ հրեայի, հույնի, հայի հազած տարազը թանկարժեք կերպասից կամ ունամանը արժեքավոր կաշվից չպետք է լինեին: Թուրքերը գլխապանի գույնից եւ ձեւից պետք է ճանաչեին, թե մարդիկ որ կրոնի կամ ինչ դիրքի են պատկանում: Յենց այս մասին էլ 1577 թ. սուլթան Մուրադ III-ը Ստամբուլի կադիին անում է հետեւյալ կարգադրությունը՝ «Այսուհետեւ հրեաների եւ քրիստոնյաների հազած չուխաները, իշքարլատները, խալաթները չպետք է պատրաստված լինեն ատլասից, կանկալից եւ այլ մետաքսյա գործվածքներից: Ֆերաջները նույնպես չպետք է մետաքսից լինեն, այլ աստառացու կտորից: Դյուլբենտը (շղարշ) նույնպես բարակ եւ նուրբ տեսակի՝ չի լինելու եւ իրենց գլխի փաթոցներն էլ՝ ոչ այնքան շքեղ: Մի խոսքով, չպետք է իրենց արտաքինով եւ շարժուծեւերով նմանվեն մահմեդականներին... Նրանք, ովքեր չեն հնազանդվի եւ կվարվեն հակառակ իմ բարձր հրամանին, ենթարկվելու են պատժ: Անհազանդներին կալանքի տակ առնելով՝ կբանտարկես եւ կտեղեկացնես»:50 Ոչ մահմեդականներին վերաբերվող այս սահմանափակումները հաստատվում են նաեւ տվյալ ժամանակաշրջանի հայկական աղբյուրներով: 16-րդ դարի մի ժամանակագրության մեջ արձանագրված է. «Եւ ի Ռիթ (1580) թին հայոց նեղացյալ Մուրատ խոնդքեարն ի հրեից եւ ի քրիստոնեից համարձակութենէն եւ վերացոյց զփակիղն ի գլխոց նոցա, եւ սաստիկ եասախ արար եւ սահմանեաց զսե գտակ դնելն, բայց ի տեղիս կաշառս ետուն եւ առին զհրաման դնել զփակիղ, յետ ժԸ ամի (1598թ.) ապա Կոստանդինուպոլիս. եւ այլ բազում քաղաքք մնացին գտակով»:51

Երեմիա Քյոմուրճյանը իր օրագրության մեջ նշում է. «Իսկ յայգուցն մուսնետիկ աղաղակեալ յամենայն քաղաքս՝ եսասղ արաին զփակեղս քրիստոնեից զխայտ եւ զկապույտն զի բնավ մի երեւեսցի: Եւ ի մեծամեծաց մինչեւ ցփոքունըս եղին գտակ ի գլուխս եւ դալփաղ եւ զհանդերձս ի վատ եւ ի տգեղ ամենեվիմբ»:52

Յետագա դարերում եւս արգելված է եղել ազգային տարազի ազատ կրումը, այդ է վկայում 18-րդ դարի թուրք պատմագիր Վասըֆը: Նա իր տարեգրության մեջ 1757 թ. դեպքերը շարադրելիս, «ռեայաների հագուստի կանոնի» տակ նշում է հույն, հայ եւ հրեա համայնքների սահմանափակմանը վերաբերող սուլթանական

հրամանագրի մասին<sup>53</sup>: Տարօրինակ է, որ ժամանակակից թուրք պատմաբան Յավուզ Էրջանը տարագի խնդրում գոյություն ունեցող այդ խտրականությունը փորձում է մեկնաբանել տնտեսական դժվարությունների հողի վրա:<sup>54</sup> Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ խտրականություն է եղել կենցաղային ամենապարզ հարցերում եւս: Օր., թուրք պատմաբան Յ. Թյունջերի հրապարակած միջնադարյան կանոններից մեկում կարդում ենք. «Բաղմիքում միեւնույն սրբիչը քրիստոնյային եւ մահմեդականին տալը արգելված է: Քրիստոնյաներին տրվող սրբիչները պետք է նշանով առանձնացված լինեն: Վարսավիրները միեւնույն ածելիով չեն կարող մահմեդականի եւ քրիստոնյայի գլուխը ածիլել»:<sup>55</sup> Մի խոսքով, շարիաթի հիմնական դրույթները չէին կարող հավասարություն դնել մահմեդականի եւ ոչ մահմեդականի միջեւ: Չնայած որ, քրիստոնյան էլ միեւնույն պետության հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկվեր ու հարկատու լիներ մահմեդականին:

Արեւմտյան Հայաստանում մանկահավաքի (դեւչիրմե) կիրառման քաղաքականությունը եւս կատարյալ մի պատուհաս էր հայ ժողովրդի համար: Արեւմտյան Հայաստանի նահանգներում մանկահավաքը սկսել է կիրառվել 1519 թվականից: Այդ մասին Անանուն Սեբաստացին իր ժամանակագրության մեջ նշում է հետեւյալը. «Ի թիւն ՏԿԸ (1519) բարկութիւնն Աստոյ սաստկացաւ եւ սուլթան Սելիմն տղայ ժողովեց ի քրիստոնէից»<sup>56</sup>:

Վկայություն կա նաեւ այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռեւս 1464 թ.: Այդ մասին ծեռագիր հիշատակարանում ասված է հետեւյալը, «... Իսկ անօրեն արքայն տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկուսն եւ եբեր Շստամբուլ, իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկացն եւ եբեր զթուրք ազատութեան հայոց, իսկ անօրեն արքայն ոչինչ համարեցաւ զթուրքն»:<sup>57</sup>

Մանկահավաքին վերաբերող պատմագիտական եւ հատկապես վավերագրային նյութերը, Ստամբուլի արխիվներից վերցրել եւ երկու հատորով հրատարակել է թուրք պատմաբան Ի. Ուզունչաբշլըն<sup>58</sup>: Հրապարակված հրովարտականներից իմանում ենք, որ մանկահավաքը տեղի է ունեցել յուրաքանչյուր երկու կամ հինգ տարին մեկ անգամ: Մանկահավաքի պաշտոնին նշանակված վերակացուն սուլթանական ֆերմանը ձեռքին շրջում էր իրեն հատկացված կադիություններում եւ հավաքագրում ութից քսան տարեկան ֆիզիկապես առողջ եւ ամրակազմ քրիստոնյա տղաներին: Այնուհետեւ պահակների հսկողության ներքո տղաներին բերում էին Ստամբուլ եւ հատուկ զբանցման դաֆթարներով ներկայացնում

ենիչերինների աղային: Այստեղ փոխելով նրանց հագուստները, հագցնում էին դեղին գույնի դուամա, իսկ վրայից էլ կարմիր արա: Մանկահավաքի ենթարկված յուրաքանչյուր խմբին Ստամբուլ հասնելուց հետո, տրվում էր երկու-երեք օր հանգիստ: Այնուհետև փոխում էին նրանց անունները, կատարում մահմեդական հավատը ընդունելու երդման արարողություն եւ ապա ենթարկում թլպատման: Պարզվում է, որ մանկահավաքի ենթարկված տղաների հագուստն ու ճանապարհածախսերը «կուլ ակչեսի» (ստրուկի ակչես) անվան տակ զանձել են նրանց բնակավայրերից 80 կամ 100 ակչեսի սահմաններում: Փաստերը վկայում են, որ այս գումարը 17-րդ դարում հասել է մինչեւ 600 ակչեսի:<sup>59</sup>

Վերոհիշյալ արարողությունից հետո, հատուկ զորանոցային պայմաններում տղաներին դաստիարակում էին մուլեռանդ մուսուլմանական ոգով եւ դարձնում ենիչերի: Մանկահավաքին վերաբերող հրովարտականերից տեղեկանում ենք նաեւ, որ զինվորական ծառայության փոխարեն հաճախ տղաներին որպես ծրի աշխատուժ աշխատեցրել են նավաշինարաններում, անտառներում, շինարարության վրա եւ այլուր: Իսկ զեղեցիկ, վայելչակազմ տղաներին օգտագործել են պալատական զանազան աշխատանքներում:<sup>60</sup>



Դելչիրնեի ենթարկված քրիստոնյա երեխաներ.  
16<sup>րդ</sup> դարի փորանկար, արտատպված է Ա.Ի. Ռոստավալի զրթից:  
*Sbu' Zapiski Янычара. М., 1978, стр.108*

Մանկահավաքի ընթացքում երեխաներին ծնողներից բաժանելու տխուր պատկերը, որը զուգակցում էր թուրք պաշտոնյաների

գործադրած վայրագություններով, մի կատարյալ ողբերգություն էր: Ծանր գրկանքներից եւ հատկապես հավատափոխությունից խույս տալու նպատակով, հաճախ տղաները փորձել են փախուստ տալ կամ էլ ծնողները կաշառքի ուժով ամեն կերպ ձգտել են ազատել իրենց երեխաներին այդ չարաբաստիկ աղետից: Այսուհանդերձ, այդպիսիների նկատմամբ ձեռնարկվել են կտրուկ միջոցներ եւ հայտնաբերելով՝ կրկին վերադարձրել ենիչերի աղային: Այդ մասին Կեսարիո բեյին ուղղված սուլթանական հրովարտակներից մեկում ասված է. «Արդ, հրամայում եմ, երբ իմ բարձր Ֆերմանը տեղ հասնի, հետամուտ եղիր այս գործին եւ իմ բարձր հրամանով դեւշիրմեի ենթարկված այն տղաները, որոնք փախուստի դիմելով հավատափոխ են եղել, հավաքիր, անունները գրելով դաժար կազմիր եւ վստահելի անձանց հետ ուղարկիր Ստամբուլ: Նրանց հսկող անձանց կարգադիր, որ ճանապարհին խիստ ուշադիր լինեն»:<sup>61</sup>

Փաստերը ցույց են տալիս, որ երբեմն հայ կրոնավորները, մանկահավաքի չարաբաստիկ աղետից ազատվելու համար, նշանակված հատուկ հարկը (Օղլանջի ալչեսի) վճարելով, կարողացել են ազատել հայ երեխաներին: Գրիգոր Դարանաղցու ժամանակագրությունից իմանում ենք, որ Մաղաքիա Դերջանցի վարդապետը 1543 թ. Կ. Պոլիս մեկնելով, կարողացել է մեծ դժվարությամբ, հարկ վճարելու պայմանով ձեռք բերել սուլթանական գրութուն:

«Եւ այլ ասեն՝ թէ տղայժողովն, որ եղել է սուլթան Սելիմի աւուրսն, նա գնաց վարդապետն ի յըՍտամպուլ, այնքան տքնութիւն արար ի դրունս արքային եւ ժողութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց տեսանել զերեսս արքային մինչ ծանուցին թագաւորին եւ նա կողեաց առ ինքն եւ ետարց զվարդապետն. զի՞նչ խնդրես... ասէ վարդապետն, եթէ գրի շնորիս առաջի քո, նա կամ է գճարգուլունի (Կարնոյ) տղայ ժողովելն ինձ օժիտ այնես եւ ի տեղի գին տղայոցն սակաւ հարկս դնես: Եւ հաճոյ թուեցաւ թագաւորին, հրամայեաց սկաւ դնես: Եւ հաճոյ թուեցաւ թագաւորին, հրամայաց այնպէս լինել, որ կուգայր տղայոց ժողովն մինչ ի Սելաստ, եւ անդից դառնայր եւ ոչ գայր ի մեզ. եւ զիտեմք, որ երեք տարին անգամ մի կուգայր հարկահանեն տղայաժողովին, որ օղլանջի ստակ ասէին»:<sup>62</sup>

Ի. Ուզունչարշըլըն ընդունում է, որ բալկանյան ժողովուրդներից բացի հայերն ու վրացիները եւս ենթարկվել են մանկահավաքի: Նույնիսկ բերում է մի քանի օրինակներ, որտեղ ցույց են տր-



վում, թե դեւշիրմեի ենթարկված հայ պատանիները հետագայում հասել են բարձր պաշտոնների: Պարզվում է, որ 16-րդ դարի համարահայտ ճարտարապետ Կոջա Սինանը, նույնպես դեվշիրմեից հավաքարված երեխաներից է:

«Հանրահայտ ճարտարապետ Սինանը, - գրում է Ի. Ուզումչարշըլըն, - սուլթան Սելիմ Ահեդի ժամանակ Կեսարիայից առաջին անգամ մանկահավաքի ենթարկված երեխաներից էր»:<sup>63</sup> Սակայն Ի. Ուզումչարշըլըն ճարտարապետ Սինանի մասին խոսելիս ստույգ չի նշում նրա ազգությունը: Փաստերը լիովին ապացուցում են, որ Սինանը ազգությամբ եղել է հայ: Այն հաստատվում է Թուրքիայի Մինիստրների Խորհրդի արխիվում պահվող մի վավերագրից<sup>64</sup>: Այս վավերագրի հիման վրա Բարս Թուղլաջըն (Բարսեղ Թուղլաջյան) նշում է հետևյալը. «Կոջա Սինանը, որը 16-րդ դարում Օսմանյան ճարտարապետական արվեստի զարգացմանը իր խորն ազդեցությունն է ունեցել, ծագումով եղել է հայ»:<sup>65</sup>

Յավուզ Էրջանը աղավաղելով փաստերը, աշխատում է ժխտել պատմաբանների կողմից ընդունված այն թեզը, որ դեւշիրմեն իբր պատմականորեն մեծ դեր չի խաղացել քրիստոնյաներին զանգվածաբար մահմեդականացնելու եւ թուրքացնելու խնդրում:<sup>66</sup> Յավուզ Էրջանը համենայն դեպս պետք է, որ ծանոթ լիներ Ի. Ուզումչարշըլըի արձանագրած հետեւյալ փաստին. «Յըլդըրըն Բայազեդից հետո հպատակ քրիստոնյա երեխաներին մանկաժողովի ենթարկելու համար կազմվել է մի օրենք: Այս նոր օրենքով Ռումելիի բոլոր ոչ մահմեդական ժողովուրդները աստիճանաբար պիտի մահմեդականացվեին: Իսկ մահմեդականացված այդ զինվորների քանակով հզորանալու էր թուրքական բանակը»:<sup>67</sup>

Իրոք, որ զինվոր հավաքագրելու վերոհիշյալ եղանակով օսմանցիները նախ կրկնապատկում էին իրենց զինվորների քանակը եւ միեւնույն ժամանակ աշխատում էին մեջտեղից վերացնել քրիստոնյաների ամենաառնական տարրերին: Այս նույն միտքը հաստատում է նաեւ անգլիացի հանրահայտ պատմաբան Յ. Ա. Գիբբոնսը, նշելով, որ բալկանյան ժողովուրդների շրջանում բանակի համար զինվոր հավաքագրելը, իրենց համար առավել մի ծանր հարված էր, քան հարեմի համար աղջիկների հավաքը, որովհետեւ հավաքում եւ ջոկում էին ամենավայելչակազմ եւ ուժեղ պատանիներին:<sup>68</sup>

Նման եղենակով մահմեդականացնելու եւ թուրքացնելու մասին կարելու փաստեր է բերում նաեւ Ա. Ժեյազկովան: Նա նշում է, որ 16-րդ դ. ստեղծվել է վարժովի մի հեծելագունդ «Ալթը Բյուլյը

խալքը» անուճով, որի կազմը սուլթան Սուլեյման Կանունիի ժամանակ եղել է մոտ 1000 հոգի: Այդ հեծելազորի մեջ բացարձակապես ընդգրկված են եղել մահմեդականություն ընդունած քրիստոնյաներ: «Ձիմվորական այս խմբավորումը, ինչպես նաեւ ենիչե-րիական մյուս դասակները,- գրում է Ա. Ժելյազկովան,- աչքի էին ընկնում իրենց յուրահատուկ էթնիկական խայտաբղետությամբ: Նրա կազմում կային ալբանացիներ, բոսնիացիներ, խորվաթներ, հույներ, հայեր եւ մահմեդականություն ընդունած այլ ազգություններ, որոնք մեկուսացվելով իրենց բնիկ էթնիկական միջավայրից, ենթարկվել էին կատարյալ ուժեցման»:<sup>69</sup>

Անկասկած, մանկահավաքը մի հզոր միջոց էր թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց համաձուլման քաղաքականության իրականացման ճանապարհին: Այստեղ տեղին է հիշատակել 16-րդ դ. թուրք պատմագիր Մուստաֆա Սելանիկի էֆենդիի եզրակացությունները դեշիքմեի մասին: Նա իր «Պատմության» մեջ գրել է. «Ժամանակի իշխողները տղաների դեշիքմեի գործում անխիղճ են եղել եւ նվերի անվան տակ մեծ կաշառքներ վերցրել, ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ազահորեն հարձակվել են երկրի ռեայաների վրա: Հարուստ ռեայաներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ռեայաներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»:<sup>70</sup>

16-17-րդ դդ. նվաճողական քաղաքականության հետեւանքով տեղի ունեցած երկարատեւ պատերազմական գործողությունները Թուրքիայի եւ Իրանի միջեւ, ավերիչ հետեւանքներ ունեցան հատկապես Հայաստանի համար:

Տվյալ ժամանակաշրջանի հայ պատմիչները, ժամանակագիրներն ու հիշատակարանների հեղինակները, ամենայն իրավամբ, խիստ մռայլ գույներով են նկարագրում հայ ժողովրդի վիճակը թուրքական եւ պարսկական տիրապետության տակ: Այդ ժամանակաշրջանում հայկական աղբյուրներում բնորոշվում է որպես «վրդովման» ու «ալեկոծման» շրջան: Բերենք մի հատված Հովհաննես Արժիշեցու տարեգրությունից (16-րդ դար), որտեղ հեղինակը ականատեսի աչքով նկարագրել է 1531-1534 թթ. թուրքերի եւ պարսիկների միջեւ տեղի ունեցած պատերազմները Վանա լճի շրջակա գավառներում. «Աւաղ զիմ հոգիս հայրք եւ եղբայրք, թէ քանի չարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս եւ ի վրդովմանցս, - գրել է Հովհաննես Արժիշեցին, - քանի քաղաք եւ գաւառ աւերեցան եւ քանի վանօրայք եւ եկեղեցիք քակտեցան, քանի մեծատունք աղքատացան, եւ վաճառականք թալանեցան, քանի քրիստոնեաք

գերի վարեցան եւ անմեղ տղայքն ի յանօրէնքն խառնեցան եւ չենք կարճար գրել չարիքն, զոր վերին աշխարհն քաշեց եւս առաւել բոլորս»:<sup>71</sup> Իսկ Ա. Դավրիժեցին այսպէս է պատկերում այդ պատերազմները. «Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս որք զարթուցեալք են ի պատերազմ, եթէ Սարդարն՝ որ եկն յարեւմտից, եւ թէ շահն՝ որ ի կողմս արեւելից՝ թէ որքան ւաւերումն եւ քանդումն եղեւ աշխարհի, թէ ի գալն եւ թէ ի դառնալն, թէ որքան ծանրագեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն...»:<sup>72</sup>

Թուրքիայի եւ Իրանի հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին սուլթան Սելիմ Յավուզի (Ահեղ, 1512-1520) իշխանության տարիներին: 1514 թվականին Սելիմը հզոր բանակով շարժվում է շահ Իսմայիլի վրա: Օգոստոս ամսին Չալդրանում տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը հաղթեցին կրճբաշների և գրավեցին Թավրիզը: Այնուհետև Արեւմտյան Հայաստանի քաղաքներն ու գյուղերը մեկը մյուսի հետեւից ընկան թուրքերի ձեռքը: Այդ իրադարձությունները մանրամասն նկարագրված են ոչ միայն հայկական, այլև թուրքական եւ պարսկալեզու աղբյուրներում:

«Այդ նույն տարին (1548 թ.), - գրում է թուրք պատմաբան Ի. Փեչեւիս, - մոլորայլ շահը, իմանալով Վանի գրավման մասին եւ ի վիճակի չլինելով դիմագրավել իսլամական բանակին, սկսեց կողոպտել Ադիլբեվազի (Արծկե), Մշո դաշտի եւ Խւաթի բնակիչներին, կոտորեց իր ձեռքն ընկած թույլերին, չքավորներին եւ որբերին: Կողոպտված արջառի, ոչխարների, կովերի ու հորթերի հովիվ դարձած՝ բռնեց ու տարավ»:<sup>73</sup>

Պատերազմները մեծ վնաս հասցրին գյուղատնտեսությանը: Վախենալով, որ կողոպտված անասունները կընկնեն թուրքերի ձեռքը, շահը նահանջի ընթացքում ոչնչացնել էր տալիս բնակչության ցանքերն ու անասունները:

1554 թվականի գարնանը սուլթանական բանակը Դիարբեքիի վրայով շարժվեց դեպի Էրզրում եւ Կարս, իսկ այնուհետև Արեւելյան Հայաստան: «Հաղթական բանակը մինչեւ հիմքը կործանեց ու ավերեց բարեշեն գյուղերը, - գրում է Ի. Փեչեւիս, - քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան անայացել, ավերվել եւ բուրեքի ու ագռավների բնակավայրեր էին դարձել, որ տեսնողին ահու սարսափ էին պատճառում...: 4-5 օրվա տարածության վրա գտնվող ճանապարհի բոլոր գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինություններն այն աստիճան քանդեցին ու ավերեցին, որ շինության եւ կենդանության հետքն անգամ չմնաց»:<sup>74</sup>

Պատերազմական գործողությունները դադարեցին շահ Թահ-

մասայ Լ-ի նախածեռնությանը սկսած հաշտության բանակցություններով: Այն կնքվեց 1555 թ. մայիսի 29-ին՝ Ամասիայում: Այդ պայմանագրով վերականգնվեցին նախկին սահմանները՝ Արեւմտյան Հայաստանը անցավ Օսմանյան կայսրությանը իսկ Արեւելյան Հայաստանը, Արեւելյան Վրաստանն ու ամբողջ Ադրպատականը մնաց Իրանի տիրապետության տակ: Ամասիայի պայմանագիրը երկար չտևեց: Չնայած այն վերահաստատվեց 1566 թվականին, սակայն այն դարձյալ ժամանակավոր բնույթ էր կրում: 1578 թվականին օսմանյան բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Արեւելյան Հայաստան: Նույն թվականի օգոստոսի 10-ին «Չըլղըրում առավոտից մինչեւ երեկո կատաղի մարտեր տեղի ունեցան, որտեղ հաղթանակ տարան օսմանցիները»: <sup>75</sup>

Չըլղըրի ճակատամարտից հետո օսմանյան մեկ ուրիշ բանակ՝ Օզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ, 1580 թվականին ասպատակում է Արարատյան դաշտավայրը: Ի. Փեչեւին նշում է, թե ինչպիսի ծանր հետեւանքներ բերեցին այդ պատերազմները տեղի բնակչությանը: «Օսմանցիները սկսեցին կողոպտել եւ թալանել երեւան քաղաքն ու երկիրը: Այնտեղի բոլոր ոսկեզօծ եւ գեղեցիկ կառուցված պալատներն ավերվեցին եւ գետնին հավասարվեցին: Գեղազարդ եւ ոսկեփայլ կամարներն ու ծածկերը խորտակվեցին, եւ 20 հազարից ավելի կանանց ու երեխաների գերի տարան: Դրանից հետո իսլամական բանակը, մեծ ավարով, ուրախ տրամադրությամբ կայսերական բանակատեղի հասավ»: <sup>76</sup> Այնուհետեւ, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում թուրքերին հաջողվեց գրավել ամբողջ Անդրկովկասը:

16-րդ դարի վերջերին սկսեցին նկատվել Օսմանյան կայսրության ռազմա-ավատատիրական համակարգի քայքայման նշաններ: Այդ երեւույթի ամենավտանգավոր գործոններից մեկը թիմարների մասնատման պրոցեսն էր: Թիմարը աստիճանաբար սկսել էր կորցնել իր ռազմա-ավատատիրական բնույթը: Սուլթանները անգոր էին կանգնեցնելու նրա քայքայման ընթացքը, քանի որ այն կազմալուծվում էր հենց իր մեջ գոյություն ունեցող հակասությունների հետեւանքով: Եվրոպական ճակատում պատերազմական նոր արկածախնդրություններն եւս ոչ մի հաջողություն չբերեցին: Դրությունը լարվեց նաեւ երկրի ներսում ծայր առած ջեղախական հզոր ապստամբությամբ: <sup>77</sup> Սկսեցին հաճախակի դառնալ նաեւ պալատական հեղաշրջումները, ենիչերիների եւ սիփահիների խռովությունները եւ վերջապես, կենտրոնախույս ձգտումների հետեւանքով

բռնկվեցին մի շարք ավատատիրական խոշոր ապստամբություններ: Այդ ժամանակաշրջանը թուրքական պատմության մեջ հայտնի է որպես կազմալուծման տարիներ (Bojgun senesi): Ջելալիական շարժումներն ու այդ տարիներին շահ Աբասի կազմակերպած «Մեծ սուրգունն» (բռնագաղթ), աղետալի հետեւանքներ ունեցան հայ ժողովրդի համար: Տասնյակ հազարավոր հայ բնակչության տեղահանումը, ճանապարհի զրկանքներն ու վայրագությունները ոչ միայն մարդկային մեծ զոհեր խլեցին, այլև ամայացրին երկիրը: Միջնադարի հայտնի թուրք պատմաբան Քյաթիբ Չելեբին 1635 թվականին սուլթան Մուրադ IV-ի (1623-1640) հետ մասնակցել է Երեւանի պաշարմանը եւ եղել պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Նա իր «Գյուստուր ուլ-ամել» (Գործողության ուղեցույց) աշխատության մեջ, խոսելով ռեայալի ժանր դրության մասին, գրել է. «Այնուհետեւ ժամանակավոր անդորրից հետո հայտնվեցին ջելալիները, որոնք եւ պատճառ հանդիսացան ռեայալի աղքատացման: Գյուղացիները լքելով իրենց տներն ու գյուղերը, փախան դեպի քաղաքները: Նվաստս, մինչեւ 1045 (1635) թվականը, տասներկու տարի շրջագայել են երկրում եւ տեսել մեծ ավերածություններ»:<sup>78</sup>

Իրոք, որ մղձավանջային ժանր իրողություն էր ստեղծվել ջելալիական շարժման ընթացքում եւս, սովն ու վայրագությունները, բնակչության ունեցվածքի կողոպուտն ու ժանր հարկապահանջությունը, մյուս կողմից էլ Օսմանյան կայսրության վարած համաձուլման քաղաքականությունը ստիպում էին հայ բնակչությանը դիմել զանգվածային արտագաղթի դեպի օտար երկրներ:

17-րդ դարի սկզբին տեղի ունեցած պատերազմական գործողությունները Թուրքիայի եւ Սեֆյան Իրանի միջեւ, կրկին ավերիչ հետեւանքներ ունեցան Հայաստանի եւ այս անգամ հատկապես նրա արեւելյան մասի համար: Այդ պատերազմներն ավարտվեցին 1639 թվականին Կասրի Շիրիմի հաշտության պայմանագրով: Թուրքիայի եւ Իրանի միջեւ այդ պայմանագրով հաստատված սահմանագիծը հետագա դարերում համարյա էական փոփոխություն չկրեց:

Կասրի Շիրիմի հաշտության պայմանագրի կնքումից հետո, արեւմտահայ բնակչության քաղաքական անդորրը հաճախակի խանգարվում էր փաշաների հակակառավարական ապստամբություններով, էրզրումի, Վանի փաշաների ու քուրդ ցեղապետերի ընդհարումներով, վերջիններիս թալանչիական արշավանքներով դեպի հայկական գավառներն ու առանձին վանքերի վրա:

Ամերիկայի ժամանակակից պատմաբան ճեյմս Սիմենդը 1996 թ. հրատարակած իր շահեկան ուսումնասիրության մեջ, նշում է, որ «Քրդական զինված ցեղերի դեմ հայերն անգոր ին եւ հաճախ ստիպված էին հարկ վճարել իրենց անվտանգությունը ապահովելու համար: Հայերի նկատմամբ կատարվող քրդական ճնշումները առավելաբար տնտեսական բնույթ էին կրում, քան կրոնական»:<sup>79</sup>

Թուրք-իրանական հետագա ընդհարումների ժամանակ հայերը կրկին տուժեցին թե՛ ռազմական գործողություններից եւ թե՛ պատերազմներից հետո ծավալված լեվենդների, քրդերի եւ ենիչե-րիների ապստամբական ելույթներից: Ընդհանուր առմամբ ռեայա-յի վիճակը գանձվող բազմաթիվ հարկերից այնքան էր ծանրացել, որ գյուղերից ցիր ու ցան լինելով սկսել էին փախչել այս ու այն կողմ: Տվյալ ժամանակաշրջանի թուրքերեն մի անանուն ուղեր-ծում, որն ուղղված է սուլթան Մուստաֆա II-ին (1695-1703), գրված է.«Իմ տիրակալ, Չեզ համար շատ կարելություն ունեցող ռեայա-յի վրայից անհրաժեշտ է վերացնել անտեղի հավաքվող հարկերը: Միեւնույն ժամանակ բարձր հրաման արձակեք Օսմանյան կայս-րությունում հաշվառում անցկացնելու մասին: Բեյլերբեյիներին եւ սանցկարբեյիներին կայսերական հանձնարարական տվեք, որպես-զի այսուհետեւ ռեայայից չգանձվեն բահայի, սելամյեյի եւ նել բա-հայի հարկերը, քանի որ ռեայայի վիճակը առանց այն էլ շատ ծանր է»:<sup>80</sup> Այս անանուն հեղինակի խոսքերը հաստատվում են նաեւ 18-րդ դարի թուրք պատմագիր-տարեգիր Ահմեդ Ջեւեթի կողմից:- «Երկրի այս աստիճան ավերածության պատճառը միայն պատե-րազմական շարժումները չէին. երկրի ավազանին, կազինկի, վա-յիբները եւ այլ պաշտոնյաները, ի շահ իրենց, բռնությամբ եւ դա-ժանությամբ սովորական պատերազմական տուրքերից մի քանի անգամ ավելի գանձումներ էին կատարում աղքատ ռեայայից»:<sup>81</sup>

Թուրքիայի եւ Իրանի միջեւ տեղի ունեցած երկարատեւ պա-տերազմների ընթացքում հայերի եւ մյուս քրիստոնյա բնակչու-թյան համար աղետալի հետեւանքներ է ունեցել նաեւ խաղաղ բնակչության գերեվարությունը եւ նրանց՝ որպես ստրուկի, վա-ճառքը 4. Պոլսում եւ այլ մեծ քաղաքներում: Էվլիա Չելեբիի տվ-յալներով ստրուկի առետրով զբաղվող վաճառականների թիվը միայն 4. Պոլսում եղել է մոտ 2 000, որոնք Կովկասից, Վրաստանից եւ Ղրիմից իբրեւ նվիրական պատերազմի ապրանք, ստրուկներ են բերել եւ վաճառել:<sup>82</sup>

Կանոնադրված ստրուկները եւս պարզ երեւում է, որ 16-17-րդ դդ. ստր-կությունը բավականին տարածում է ստացել Օսմանյան կայսրու-



յունում: Երզրունի վիլայեթի կանուննամնում, որը հաստատված է 1540 թ., նույնիսկ առանձին հոդված կա (36) Երզրունի լիվայի փախստական ստրուկների եւ անասունների հավաքման եւ հանձնման մասին. «Երզրունի լիվայում գտնված եւ բռնված ստրուկներն ու ստրուկուհիները եւ անասունները, ով էլ որ նրանց բռնի, պետք է բերի եւ հանձնի կայսերական խասախ լծիներին եւ օրենքի համաձայն, ստանա իր վարձատրությունը: Եթե նրանց տերերը չգտնվեն, ընդունված ժամկետը լրանալուց հետո վիլայեթի կադիի միջոցով աճուրդով պիտի վաճառվեն եւ արժեքը պիտի գանձվի հոգուտ պետության»:<sup>83</sup>

Միջնադարի հայ պատմիչ Սիմեոն Տիգրանակերտցին ահա թե ինչպես է նկարագրում քրիստոնյաների գերեվարման տխուր պատկերը. «Ի թուականս հայոց Ռիւծ (1580)... Բազում զօրս առաքեաց (սուլթան Մուրադը) ի Պարսկաստան... եւ ւաւրեցին զբազում երկիր՝ եւ զամենեսեանսն սուր սուսերի մաշեցին. եւ ի քրիստոնէին բազում եւ անթիւ գերի վարեցին... զոմանս սրոյ ճարակ տուին եւ զբազումս գերեցին, զայր եւ զկին, զմեծ եւ զփոքր, զաղջկունս եւ զանձեղ տղայս ի քրիստոնէից, եւ այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել կամ լեզուով ճառել զդառնություն եւ զնեղութիւն ժամանակի»:<sup>84</sup>

Սիմեոն Լեհացին եւս ականատեսի աչքով նկարագրել է եւ տվել Կ.Պոլսի «Եսիր բազարում» հայ գերիների վաճառահանման սրտաճնլիկ պատկերը. «Որք ծերք են եւ պառաւք նստել են: Իսկ զաղջուկնս եւ զմանկունս, զտղայս եւ զաղվորերես կանայս տէլլալնին առեալ ի ծեսս զնոսա՝ շուրջ աճէին եւ ծախէին որպես զծի եւ զգորի. եւ զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօտանի՝ իբրեւ զոչխարս ի փարախի: Իսկ զնօղքն եկեալ բանային գերեսն եւ զծոցս աղջկանց եւ զամենայն մարմինս նոցա շօշափէին յտաց մինչեւ ի գլուխ, զի մի փոս, խոց կամ այլ ինչ սպի վեր ունիցին: Եւ նոքա լուռ եւ անմունչ կային, եւ զօրս հաճէին՝ զնէին, եւ որոշեալ ի հօրէ, ի մորէ կամ ի քվերաց եւ յեղբարաց բաժանեալ առեալ տանէին ի տուն»:<sup>85</sup>

Հայկական աղբյուրները ցույց են տալիս, որ հայ կրոնական առաջնորդներն ու հեղինակություն վայելող անձինք անտարբեր չեն մնացել եւ ամեն կերպ պայքարել են կանխելու եւ վերջ տալու հայ բնակչության գերեվարության ողբերգական երեւույթին: Հակոբ Կարնեցին վկայում է, որ 1630 թ. կաթողիկոսի, ինչպես նաեւ Երզրունի հայ մեծահարուստ վաճառականների ջանքերով դրամի ուժով ազատվել են մեծ թվով հայ գերիներ եւ ուղարկվել իրենց

ճախկին բնակավայրերը:<sup>86</sup> Իսկ 1724 թ. (հավանաբար օգոստոս ամսին), հայոց Կոլոտ պատրիարքը բողոք է հայտնել մեծ վեզիր Իբրահիմ փաշային, որ Կովկասի կողմերից մեծ թվով հայ գերիներ են բերված 4.Պոլիս վաճառելու համար:<sup>87</sup> Հայերը, ինչպես նաև մյուս ոչ-մահմեդական բնակիչները 4.Պոլսում հաճախ ձգտել են գնել իրենց ազգակից ստրուկներին եւ պահել իրենց տներում: Սակայն, 16-րդ դարում արծակված սուլթանական հրովարտակներում նկատում ենք, որ 4.Պոլիսի ոչ-մահմեդական հարուստներին խստիվ կերպով արգելվել է ստրուկ գնելը: Օրինակ, 1560 թ. սուլթան Սուլեյմանի արծակած մի ֆերմանում կարդում ենք. «Այսուհետեւ հրեաների եւ քրիստոնյաների մոտ գերիները ծառայություն չպետք է անեն, ազատ արծակված գերիները հանձնվելու են մահմեդականներին, իսկ գերի համարվողները վաճառվելու են նույնպես մահմեդականներին»:<sup>88</sup>

Իզուր չէ, որ քրիստոնյաների նկատմամբ գործադրվող այս բուլլոր բռնությունները նկատի ունենալով, 1815 թ. Ռուսաստանի կառավարությունը Վիեննայի կոնգրեսում եվրոպական ներկայացուցիչների ուշադրությանը ներկայացնելով Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության ծանր վիճակը, հայտարարեց, որ իրենք խիստ մտահոգված են նրանց ճակատագրով:<sup>89</sup>

Երկրագործության ցածր մակարդակը եւ անչափ բարձր եւ անկանոն գանձվող հարկերը չափազանց ծանր վիճակ էին ստեղծել ամբողջ կայսրության աշխատավոր գյուղացիության համար: Այս կապակցությամբ 17-րդ դարի թուրք պատմագիր Կոչի բեյը սուլթանին ուղղված իր ուղերձում մատնանշում է գյուղացու աշխատանքի դաժան շահագործումն ու ծայրաստիճան աղքատությունը. «Մի խոսքով, իմ հզոր տիրակալ, ռեայան փաղիշախի գանձարանն է, նշում է Կոչի բեյը, - եթե ռեայան լավ վիճակում է եւ չի ենթարկվում ճնշման, փաղիշախի գանձարանը կլինի լիքը: Հենց այսօր էլ սրբազան հրաման տվեք, որպեսզի ռեայայից հավաքեն մեկական ղուրուշ: Չէ որ այն կհասնի հարյուր հազարավոր ղուրուշների: Ժամանակն է հոգալ ռեայայի մասին եւ թույլ չտալ, որպեսզի նեղություն պատճառեն նրան»:<sup>90</sup>

Բնականաբար ավելի վատ վիճակում էր գտնվում գյուղացիությունը, քանի որ երկրում իշխող վարչակարգի չարաշահումներին եւ զանազան բռնություններին չափ ու սահման չկար:

Թուրք տարեգիր Ահմեդ Ջեվդեթ փաշան եւս բավականին իրական գույներով է նկարագրել եւ վերլուծել տիրապետող դասակարգի ճնշումները ռեայայի նկատմամբ, որը մենք ընթերցողին ենք

ներկայացնում ամբողջությամբ:

«Երկրի շինարարությունը կամ ռեյաների բարօրությունը միտք անգամ չբերելով, նրանք (վալիները) իրենց ծախսերը հանելու եւ իրենց դրությունը բարելավելու համար աղքատների ձեռքից խլում էին նրանց ունեցվածքը, վաճառել տալիս նրանց անասուններն ու կենդանիները, հովանավորում ու քաջալերում ավագանիների բռնությունները, սրանք էլ մյուս կողմից կողոպտում էին աղքատներին: Ավագանիների բռնություններն ամեն սահման անցնում էին, իսկ ամրակուռ կրոնի սյունը հանդիսացող բարձր ուլեման էլ փոխանակ ժողովրդի մեջ արդարության եւ իրավունքի հիման վրա դատ ու դատաստան անելու, նպաստում էր դրան: Այսպիսով, մի շարք տգետ մարդիկ իրենց էությունն ու արտաքինը փոխելով, կադի էին դարձել եւ այդ ճանապարհով մեծ կադիի փոխանորդության արժանանալով, նվիրական շարիաթի հիմքերը խախտել»:<sup>91</sup>

Կոչի բեյը եւս իր ժամանակին խիստ քննադատության է ենթարկել Օսմանյան Թուրքիայում ժողովրդական զանգվածներին ճնշող եւ շահագործող շրջանների չարաշահումներն ու բռնությունները, հարկերի գանձման գործում արմատացած ապօրինությունները, երկրում ստեղծված անապահովությունը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի եւ այլ զորամասերի սանձարձակությունները: Գոյություն ունեցող ծանր իրավիճակից նա կատարել է հետեւյալ եզրահանգումները. «Ռեյաները ինչպե՞ս կարող են տանել այս բռնությունները: Երկրի ժողովուրդները ինչպե՞ս կարող են ապրել այսպիսի պայմաններում...: Աղքատ ռեյաների նկատմամբ կիրառվող այդ ճնշումներն ու բռնությունները տեղի չեն ունեցել ոչ մի ժամանակ, ոչ մի տեղ եւ ոչ էլ փաղիշահի որեւէ երկրում»:<sup>92</sup>

Չայ ժողովրդի ծանր դրության մասին տեղին է հիշատակել նաեւ 1584 թ. Ազարիա կաթողիկոսի կատարած հետեւյալ դառը եզրահանգումը. «Եմք իբրեւ զմի այգի առանց պարսպի պահնորդի ցրուեալք աստ եւ անդ, եւ եմք զետ ոչխար ի մեջ գայոց եւ որպէս զգառինք ի մէջ արյուծոյ, եւ ամենաքին եմք զերի ի ներքոյ անողորմ տերանց, որք վասն ամենայն օր տանջեն եւ չարչարեն զմեզ ազահութեամբ եւ ոչ կշտանան բնաւ զի տնանկ եւ աղքատ եմք եւ կարեմք շարժել քայլ մի առանց երկյուղի մեծ փորձանաց»:<sup>93</sup>

Իրոք որ, միջնադարյան աղբյուրներում եւ վավերագրերում բերված նյութերը ցույց են տալիս, որ պետական ծանր հարկերն ու ոչ պաշտոնական կեղեքումները, վատ վարչակարգի հետեւան-

քով՝ կյանքի անապահովությունը միացած կրոնական հալածանքներին, անտանելի էին դարձնում կյանքը սուլթանական իրավակարգում: Օսմանյան սուլթանների բռնություններն իր բոլոր կողմերով նպաստում էր երկրի հետամնացությանը եւ արգելակում թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների, այդ թվում եւ հայերի տնտեսական, քաղաքական եւ մշակութային կյանքի զարգացումը: Վերելում բերված փաստարկները վճռականորեն հերքում են ժամանակակից թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների այն պնդումը, որ իբր օսմանյան սուլթանները հանդուրժողական քաղաքականություն են վարել հպատակ ազգերի նկատմամբ, թե քրիստոնյա ժողովուրդները ունեցել են արտոնություններ եւ չեն ենթարկվել ազգային ու կրոնական ճնշման ու հալածանքների:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ որպես հետամնաց հողագործական երկիր՝ գյուղատնտեսական արտադրության ծայր աստիճան ցածր մակարդակով: Աշխատավոր գյուղացիության դրությունը չափազանց ծանր էր, հատկապես տարեցտարի աճող աշարի (տասանորդի) եւ այլ բազմապիսի գանձվող հարկերից: Երկրում մեծ չափերի էր հասել կաշառակերությունը, չարաշահումները եւ հատկապես խտրականությունն ու ճնշումները: Իրականում, տվյալ ժամանակ կայսրությունում իշխում էր ժամանակի թուրք հասարակության ամենահետադիմական խավը: Բացարձակապես բացակայում էր կյանքի եւ ունեցվածքի ապահովությունը: Գյուղացու ծանր վիճակը բոլորովին չէր հետաքրքրում ոչ կենտրոնի եւ ոչ էլ գավառների կառավարիչներին: Սուլթանական պաշտոնյաները մտածում էին միայն այն մասին, թե ինչպես ավելի շատ դրամ շորթեն ժողովրդից, որպեսզի ձեռք բերեն չերքեզ աղջիկներ, արաբական ձիեր, փարիզյան կառքեր եւ կառուցեն շքեղ ապարանքներ Բոսֆորի ափերին:

Հարկ է նշել, որ ոչ-մահմեդական աշխատավորության վիճակը ավելի ծանր էր, քանի որ նրանք հավելյալ շահագործման էին ենթարկվում պետության հարկահավաքների կողմից: Իսկ քրիստոնյաների համար գոյություն ունեին բազմաթիվ հարկեր եւ տուրքեր, որոնց գանձումները կատարվում էին քմահաճ եղանակով: Հարկատեսակների անհամամասնությունը, անօրինական գանձումները Օսմանյան կայսրության վարած տնտեսական քաղաքականության օրինաչափությունն էին:

Թուրքերի կիրառած դաժանությունը պատահական չէր, այլ բնահատուկ եւ տեւական: Նրանց իրավական կառուցվածքը իր եությանը ծայր աստիճան անարդար էր քրիստոնյա հպատակների

հանդեպ: Մահմեդականը կարող էր առեւանգել, թալանել, սպանել քրիստոնյային եւ ապահովաբար մնալ անպատիժ: Իսկական իմաստով, օրենք գոյություն չունէր սուլթանական Թուրքիայում:

Իր ժամանակ իրավաբան եւ պատմաբան՝ Ռոլեն ժեկմենը Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի արխիվային փաստերը ուսումնասիրելուց հետո հետեւյալ երեք եզրակացություններն է արել թուրքերի կատարած բռնությունների մասին.

1. Չարաշահումներ, որոնք գործածվել են հարկերի նշանակման եւ գանձման ընթացքում:

2. Չարաշահումներ, կիրառված կառավարական պաշտոնյաների կողմից. կանանց եւ փոքրահասակների բռնի մահմեդականացում:

3. Բռնի հարկեր, թալան, երիտասարդ աղջիկների եւ կանանց առեւանգում, սպանություն: Խոչընդոտներ եկեղեցու կառուցման, զանգերի օգտագործման, թաղման եւ այլ կրոնական ծիսակատարությունների կատարման խնդրում:<sup>94</sup>

Այս ամենը հավասարապես գործադրվում էին կայսրության բոլոր ոչ-մահմեդական բնակչության նկատմամբ: Այն պետական պաշտոնյաները, որոնք նշանակված էին կառավարելու հայկական վալայեթներում, իրենց զգում էին ավելի ազատ եւ սանձարձակ իրենց չարաշահումների մեջ, քանի որ նրանք հեռու էին մեծ պետությունների դիվանագետների ուշադրության կենտրոնից: Կայսրության արեւելյան շրջանների կառավարիչների մեծ մասը, զուրկ լինելով վարչական ղեկավարման ունակություններից, իր պաշտոնն օգտագործում էր միայն ավելի շատ կաշառք ու ավար ձեռք բերելու համար:

Քաղաքական, տնտեսական եւ դրամական ճգնաժամից դուրս գալու, կեղեքված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները կանխելու նկատառումներով թուրքական կառավարությունը 1839 թ. նոյեմբերի 3-ին սուլթանական պալատի Գյուլխանե կոչված պարտեզում հրապարակեց կայսերական հրովարտակը՝ «Յաթթը շերիֆը» (Սրբազան գիր), որը հետագայում ընդհանուր անունով կոչվեց Թանզիմաթ<sup>95</sup>: Այս հրովարտակով կառավարությունը հիմնականում խոստանում էր ապահովել Օսմանյան կայսրության բոլոր հպատակների կյանքը, պատիվն ու ունեցվածքը, հարկերի արդարացի բաշխումը եւ գանձումը, կանոնավորել զինվորական ծառայության ժամկետը, դատական գործը, ժառանգության հարցերը, վերացնել կաշառակերությունը, չարաշահումները եւ այլն:

«Հաթթը շերիֆի» հեղինակը Մուստաֆա Ռեշիդ փաշան էր, եվրոպական կրթության տեր մի անձնավորություն, որը իբրև դեսպան պաշտոնավարել էր Փարիզում և Լոնդոնում, և ապա ստանձնել կայսրության արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Մուստաֆա Ռեշիտ փաշան և նրա կողմնակիցները այս հրովարտակով նախ և առաջ ձգտում էին շահել եվրոպական պետությունների վստահությունը, թույլ չտալ նրանց միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և թուլացնել ներքաղաքական ճգնաժամը:

Դժբախտաբար, բարենորոգումի այս նախաձեռնությունը և նրա հետագա ընթացքը ցույց տվեց, որ այն խախտու էր իր հիմքից, որովհետև նախ այն խորթ էր ավատատիրական, աստվածապետական երկրին և ընդհանրապես՝ մահմեդական մտայնությանը: Մյուս կողմից ռեշիտականները, հանդիպելով հատադիմական պահպանողականների կատաղի դիմադրությանը, հետևողականորեն չպահպանեցին մահմեդականների և ոչ-մահմեդականների միջև հավասարություն հաստատելու խնդրում:

Ահմեդ Ջեվդեթը իր նամակներից մեկում գրել է, որ «թանգիմաթի հռչակման այդ օրերին մահմեդականներից շատերը դառնորեն ասում էին. մենք այսօր կորցրինք մեր պապերի և նախնիների արյան գնով ձեռք բերված մեր ազգային սրբազան իրավունքը: Մահմեդական ժողովուրդը, որ իշխող ժողովուրդ էր, զրկվեց այդ սրբազան իրավունքից: Մահմեդականների համար այս օրը լացի ու սուգի օր է...»<sup>96</sup>

«Հաթթը շերիֆի» հրապարակումից հետո էլ, երբ փորձ էր արվում իրականացնել քաղաքացիական որևէ ռեֆորմ, մուլեռանդ կրոնավորները անմիջապես մզկիթներում և մետրեսներում (դպրոցներում) սկսում էին պախարակել նախաձեռնողներին, քարոզներ կարդալ մահմեդականության անձեռնմխելիության և քրիստոնյաների նկատմամբ նրանց ունեցած գերիշխանության մասին: Ռեշիտականները աշխատեցին երկրի իրավական կյանքում տարածել արեւմտյան կանոններ՝ առանց դիպչելու մահմեդական իրավական կառուցվածքին:

«Հաթթը շերիֆով» բավականին մեծ ազատություններ էին խոստացվում ժողովրդին, սակայն այն խիստ կասկածելի էր քրիստոնյաների աչքում, քանզի բոլորն էլ գիտեին, որ մի հրովարտակով, մի թղթի կտորով չէին կարող վերացնել այն բռնություններն ու հարստահարությունները, որոնք գոյություն են ունեցել դարեր շարունակ:



«Շաթթը շերիֆը» իր եռօրյամբ օրենք չէր, այլ կայսերական մի հրովարտակ, որի հիմնական հարցերի շուրջ պատրաստվելու էին օրենքներ: Իհարկե, հրովարտակի հրապարակումից հետո Մուստաֆա Ռեշիդ փաշան անմիջապես ձեռնամուխ եղավ եւ պատրաստեց այդ օրենքները, որոնք պետության կողմից վավերացվելուց հետո հրապարակվեցին շատ քիչ տպաքանակով՝ 1267 (1850-51) թվականին:

Այսպես՝ 1840թ. մայիսին հաստատվեց քրեական օրենքը: Նույն թվականին բարեփոխություն կատարվեց նաեւ հարկերի գանձման սիստեմում: 1843 թ. մահմեդական հպատակների համար հաստատվեց նոր կանոնադրություն՝ զինվորական ծառայության մասին: 1847 թ. ստեղծվեցին առեւտրական դատարաններ, որտեղ ոչ-մահմեդականները առաջին անգամ հավասար իրավունքներով վկայություն էին տալու: Բարեփոխություններ եղան լուսավորության, առեւտրի ասպարեզում, ստեղծվեցին նահանգային խորհուրդներ եւ այլն:

1855 թ. մայիսի 7-ին սուլթանական նոր հրովարտակով վերացվեց ոչ-մահմեդականների համար վաղուց ի վեր նշանակված «խարաճը» եւ սահմանվեց մահմեդականների հետ հավասար զինվորական ծառայության իրավունքը: Այս հրովարտակը մեծ դժգոհություն առաջացրեց Թուրքիայի քրիստոնյա հպատակների շրջանում, որոնք սարսափով լսեցին այդ լուրը եւ ամեն ջանք գործադրեցին այն արգելելու համար: Խիստ դժգոհ էին նաեւ մահմեդականները: Քրիստոնյաները դժգոհ էին նրա համար, որ զինվորագրվելով թուրքական բանակին, իրենց գեները ուղղելու էին քրիստոնյա պետությունների եւ հատկապես Ռուսաստանի դեմ, որի հետ կապում էին իրենց ազատագրման հույսերը: Իսկ մուեռանդ մահմեդականները վախենում էին կորցնել իրենց գերիշխող դիրքը կայսրությունում: Այս երկկողմանի դժգոհությունները ստիպեցին Օսմանյան կայսրությանը քրիստոնյաներից զորք հավաքագրելու խնդիրը հետաձգել անորոշ ժամանակով: Փաստորեն «խարաճը» փոխարինվեց ոչ-մահմեդականներին զինվորական ծառայություններից ազատելու հարկով (bedel-i askeriye): Այսպիսով, քրիստոնյաները առաջվա նման մեկուսացված էին զինվորական ծառայությունից: Դեռ ավելին, ծառայությունից ազատվելու համար նշանակված զինվորական հարկը ավելի ծանր էր, խան գլխահարկը՝ խարաճը: Խարաճը, - գրում է Չիխաշովը, - վատագույն դեպքում մարդագլուխ հասնում էր 30-40 դուրուշի, իսկ հարկը՝ 300-400 դուրուշի:<sup>97</sup>

Դժբախտաբար, այդ օրենքների գործադրության ոչ անկեղծ ցանկություն կար, ոչ էլ դրանք կյանքի կոչելու հարմար եւ կարող պաշտոնյաներ: «Օրենքն իր իսկական իմաստով եւ օրենքի գործադրությունն իր իրական նշանակությամբ երբեք գոյություն չեն ունեցնլ թուրքիայում եւ այն հիմնարկությունները, ուր իբր թե օրենքը պետք է գործադրվեր, հանդիսանում էին թուրք պաշտոնյաների համար ժամանակ անցկացնելու, թեյ, սուրճ խմելու, թգպեհ-համրիչ քաշելու, անճոռնի զրույցներ անելու մի զվարճավայր, մի թեմպել-հանե, եւ ժողովրդական այն ներկայացուցչությունը, որ ժողովրդական շահերի պաշտպան, պահանջների եւ կարիքների թարգման պիտի հանդիսանար, ոչ միայն երեւութական, ծեւական էր, այլեւ խաղաղ, երկրագործ զանգվածը կողոպտող, կեղծքող բեյերի, էֆենդիների մի ժողով էր դառնում»:<sup>98</sup>

Մի երկրի օրինավորության ու արդարության չափը որոշվում է ոչ թե գոյություն ունեցող օրենքներով, այլ դրանց գործադրությամբ: Լեոյի կողմից կազմված «Հայոց հարցի վավերագրերը» ժողովածուի մի փաստաթղթում կարդում ենք հետեւյալը.

«Օսմանեան օրենսգիրքը (Դյուստուր) թեւ ի պաշտօնէ գործադրելի հրատարակուած է, թող որ արդէն շատ մը պակասներ ունի իր մէջ, սակայն եւ միանգամայն Կ. Պոլսէն մերթ ընթ մերթ եկած որեւէ հրամանագիր բաւական եղած է փոխել կամ ջնջել օրենսգիրքին այս կամ այն յոդուածները, մինչդեռ որ զարմանալի է, ուրիշ մեկ հրամանագիր ուրիշ անգամ նախորդացն հակառակը կը հրամայէ եւ այսպէս կը շարունակուի, որով մեր երկրին մէջ ոչ թէ օրենքը կը տիրէ, այլ քմահաճ կամքը (իտարտ-ի քեյֆիյէ)»:<sup>99</sup>

Փաշաները, կապալառուները, վաշխառուները, հոգեւորականները եւ հետադիմական մյուս տարրերը վիժեցրին բարեփոխողունների կիրառումը: Առաջվա պես գյուղացին հարկ էր տալիս թե՛ պետության հարկահավաքին եւ թե՛ կապալառուին: Հետադիմականները երբեք չէին կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ իրավական տեսակետից կարող է հավասարություն լինել մահմեդականի եւ գյավուրի միջեւ:

1856 թ. Ղրիմի պատերազմից հետո Անգլիան եւ Ֆրանսիան, նկատի ունենալով, որ հաշտության բանակցությունների ընթացքում Ռուսաստանը կարող է հարց հարուցել թուրքիայում ապրող քրիստոնյաների իրավունքների պաշտպանության մասին, նախապես ստիպեցին սուլթան Աբդուլ Մեջիդին, որպեսզի նա հրապարակի մի հրովարտակ՝ թուրքիայում ոչ-մահմեդական ժողովուրդների վիճակը բարելավելու վերաբերյալ:

Եվ այդպես, սուլթան Աբդուլ Մեջիդը, իբրև թե կանովին, 1856 թ. փետրվարի 18-ին ստորագրեց մի հրովարտակ, որը հայտնի է «Հաթթը Յյումայուն» անունով: Իր բովանդակությամբ այս նոր հրամանագիրը մի նոր փաստաթուղթ չէր, այլ Գյուլիանեի «Հաթթը շերիֆի» կրկնությունը՝ միայն ավելի ընդարձակ եւ մանրամասնված:

Փաստերը վկայում են, որ «Հաթթը Յյումայունի» խմբագրության գործում մեծ դեր են խաղացել Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ավստրիայի դեսպանները:<sup>100</sup>

Հետագայում այս հրովարտակը պաշտոնապես հաստատվեց նաև Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածով:

Իրականում քրիստոնյա բնակչության նկատմամբ Թուրքիայի, Անգլիայի եւ Ֆրանսիայի տածած այս «հոգածությունը» ոչ մի առնչություն չուներ նրանց ազգային շահերի պաշտպանության հետ: Փարիզի հաշտության բանակցություններին մասնակցող յուրաքանչյուր եվրոպական պետություն հետապնդում էր մի նպատակ, այն է՝ մեկուսացրնել Ռուսաստանին եւ ամրապնդել իր դիրքերը մերձավոր Արեւելքում:

Ահա թե ինչպես է գնահատել Պ. Ա. Չիխաչովը Փարիզի հաշտության պայմանագիրը. «Վերջերս Փարիզում կնքված պայմանագրի հոդվածներում դժվար է գտնել այնպիսի մի հոդված, որը անկեղծորեն ու բանիմացորեն լուծեր որեւէ հարց»:<sup>101</sup>

Ինչպես «Հաթթը շերիֆի», այնպես էլ «Հաթթը Յյումայունի» մեջ սուլթանը նորից խոստանում էր «ապահովել իր հպատակների երջանկությունը»: «Հաթթը Յյումայունի» նախաբանում ասված խոսքերը, - գրում է Ռուլեն Ժեկմենը, - նույնքան փքուն ստեր էին, ինչպես 1839 թ. «Հաթթը շերիֆի» եւ 1876 թ. Օսմանյան սահմանադրության խոստումները: Սուտ են նաև նրա բոլոր օրենսդրական եւ ֆինանսական փաստաթղթերը, որոնցով փորձում է հանդարտեցնել իր հպատակներին եւ պարտատերերին»:<sup>102</sup>

Իրոք, որ թե մեր ուշադրությունը բեւեռենք սուլթանական հրովարտակներից ստորեւ բերված հատվածներին, որոնք առնչվում են հպատակների բարեկեցությանը, եւ ընդհանրապես՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովմանը, պարզ կտեսնենք, որ յուրաքանչյուր հրովարտակ կրկնում է նախորդի միտքը եւ անվերջ խոստումներ անում այդ ուղղությամբ «ազդեցիկ միջոցներ» ձեռնարկելու մասին: Այնուհանդերձ, իրավիճակը մնում էր միշտ նույնը եւ այդ խոստումները համառորեն մնում էին թղթի վրա:

Ահա մի հատված 1839 թ. Գյուլիհանեի հրովարտակից. «Մենք անհրաժեշտ համարեցինք ձեռնարկել միջոցառումներ եւ հրապարակել նոր օրենքներ, որպեսզի բարեւավի Օսմանյան երկրների կառավարումը: Այդ օրենքների հիմնական դրույթուններն են լինելու՝ 1) կյանքի, պատվի եւ ունեցվածքի ապահովումը. 2) հարկերի համահավասար բաշխումը եւ գանձումը. 3) զորակոչիկների ճիշտ հավաքագրումը եւ ծառայության ժամկետի ճշտումը»:<sup>103</sup>

Հատված 1856 թ. «Հաթթը Յյումայունի» կայսերական հրովարտակից. «Կյանքին, ունեցվածքին, ինչպես նաեւ պատվի ապահովությանը վերաբերող այն երաշխավորությունները, որոնք շնորհվեցին Գյուլիհանեի «Հաթթը շերիֆով» եւ Թանզիմաթի շրջանում հրապարակված օրենքներով, առանց դավանանքի եւ դասի խտրության, այսօր կրկին վավերացվում է եւ ամրացվում: Եվ այսուհետեւ ձեռնարկվելու են ազդեցիկ միջոցներ, որպեսզի դրանք կատարյալ ուժ ունենան»:<sup>104</sup>

Հատված 1876 թ. սահմանադրությանը վերաբերող սուլթանական հրովարտակից.

«... Մեր պետության կառավարման ձեւը բոլորովին գոհացուցիչ չէ թե՛ երկրի ներսում եւ թե՛ արտաքին հարաբերությունների մեջ: Ուստի մեր մեծագույն ցանկությունն է վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են հանդիսացել բոլոր մեր հպատակների առաջադիմության եւ զարգացման ճանպարհին»:<sup>105</sup>

Իրականում «Հաթթը շերիֆից» մինչեւ 1876 թ. հրատարակված օրենքները խիստ թշնամությամբ դիմավորեցին մոլեռանդ հոգեւորականները եւ հետադիմական տարրերը, նույնիսկ ամբողջ մահմեդական բնակչությունը, քանի որ քրիստոնյաներին շնորհված ամեն մի արտոնություն դավաճանություն էր համարվում շարիաթին: Եվ իրոք, շարիաթի հիմնական դրույթները չէին կարող հավասարություն դնել մահմեդականի եւ ոչ-մահմեդականի միջեւ: Չնայած, քրիստոնյան էլ միեւնույն պետության հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկվեր եւ հարկատու լիներ մահմեդականին:

Այն մերձեցումը, որը պիտի իրականացներ Թանզիմաթը թուրքերի եւ քրիստոնյաների միջեւ, ոչ մի կերպ չիրականացավ: Իրականում Ռեայայի իրավունքները չվերականգնվեցին եւ նա առաջվա նման մնաց ենթակա օսմանցիներին: Երկու կողմերի միջեւ տեւական թշնամանքը շարունակվեց եւ մահմեդականների մոլեռանդությունը երբեք չվերացավ:<sup>106</sup>

1856 թ. «Հաթթը Յյումայունի» Կ.Պոլսում հրապարակվելուց մի քանի ամիս հետո, պաշտոնապես ուղարկվում է Երզրումի փաշա-

յին, որպեսզի վերջինս ժողովրդականացնի այն նահանգում: Փաշան անմիջապես գաղտնի ժողով է գումարում, որտեղ որոշում է կայացվում, որ այդ փաստաթուղթը չի կարող հրապարակվել, քանի որ դրանում խիստ վարկաբեկված է Օսմանյան կառավարության արժանապատվությունը: Այնուհետև նա կանչում է ժողովի երկու քրիստոնյա անդամներին՝ հայ լուսավորչական եւ հայ կաթոլիկ արքեպիսկոպոսներին, ծանոթացնում բովանդակությամբ եւ յուրաքանչյուրին տալիս է հրովարտակի մեկական պատճենը, որպեսզի նրանք ծանոթացնեն նաեւ իրենց դավանակիցներին: Միեւնույն ժամանակ փաշան ավելացնում է, որ ինքը պատասխանատու չի կարող լինել ոչ նրանց անձնական եւ ոչ էլ նրանց եկեղեցական համայնքի կյանքի համար: Իհարկե, երկու կրոնապետներն էլ դողով ու սարսափով, լուռ խոնարհվում են եւ հեռանում, որպեսզի անհապաղ թաքցնեն այդ վտանգավոր փաստաթուղթը:<sup>107</sup>

Իսկ Իգմիրի հույն արքեպիսկոպոսը, երբ լսում է «Հաթթը Հյուսնայունի» ընթերցումը եւ այնուհետեւ տեսնում, թե ինչպես են այն դնում մետաքսյա ծրարի մեջ, բացականչում է. «Աղոթենք Աստծուն, որ այնտեղ էլ մնա», վստահ լինելով, որ այն ոչ մի արծագանք չի գտնի կայսրության մեջ, այլ ընդհակառակը, կխորացնի այն անդունդը, որը գոյություն ունի մահմեդականների եւ քրիստոնյաների միջեւ:<sup>108</sup>

Թանգիմաթի շրջանում սուլթանական հրովարտակներով արգելվեց բռնությունների գործադրումը ոչ-մահմեդականների նկատմամբ, սակայն իրականում այն շարունակվում էր գոյատևել: Թանգիմաթի հրամանագրով ոչ-մահմեդականը իրավունք ուներ զբաղեցնել պետական բարձր պաշտոններ թե՛ քաղաքացիական եւ թե՛ զինվորական ծառայության ասպարեզում, սակայն իրականում նրանք զբաղեցնում էին միայն ցածր պաշտոններ: Դեռեւս հրովարտակի հրապարակումից հետո, մի շարք թուրք պաշտոնյաներ, դիմելով Ֆուադ փաշային, հարց են տվել, թե «այսուհետև այդ հրովարտակի պայմաններով ռեայայից եւս նախարարներ կարո՞ղ են նշանակվել արդյոք»: Ֆուադ փաշան ցինիկորեն պատասխանել է, որ ռեայայից ոչ թե նախարարներ, այլ նույնիսկ մեջլիսի անդամներ չեն կարող նշանակվել, քանի որ հրովարտակի մի տեղում մատնանշված է, որ անհրաժեշտության դեպքում միայն քրիստոնյա հպատակներից մի քանիսը կարող են հրավիրվել մեջլիսի քննարկումներին: Ահա այս կետը մտցված է հրովարտակի մեջ նրա համար, որպեսզի սահմանափակվի նրանց անդամությունը մեջլիսում:<sup>109</sup>



Չեւական բնույթ ունի նաեւ դատարաններում քրիստոնյաների վկայություն տալը: Նախ հոգեւոր դատարաններում (մահքեմե) եւ վիլայեթների մեջլիսներում քրեական ծանր հանցագործությունների դեպքում քրիստոնյաների վկայությունը չէր կարող ընդունվել, քանի որ դատը ընթանում էր աստվածային օրենքներով՝ շարիաթի հիման վրա եւ քադիի (դատավոր) ղեկավարությամբ: Քրիստոնյաների վկայությունը ընդունվում էր միայն խառը դատարաններում (Մեջլիս-ի ֆահքիք, Մեջլիս-ի քիճարեթ), որոնք կազմված էին մահմեդականներից եւ քրիստոնյաներից: Այստեղ էլ մահմեդական անդամների գերակշռության հետեւանքով ուժի մեջ էին մտնում միայն նրանց ընդունած որոշումները:

Դրիմի պատերազմից հետո 1856 թ. հրապարակված կայսերական հրովարտակը մասամբ նպաստավոր պայմաններ ստեղծեց ազգային փոքրամասնությունների հասարակական կյանքի աշխուժացման համար: Հրովարտակը երաշխավորում էր ոչ-մահմեդականների կրոնական պաշտամունքների եւ ներքին վարչության ազատություն: 1862-63 թթ. հայ, հույն, եւ հրեա համայնքները իրենց համար կազմեցին կանոնադրություններ, որոնք ուժի մեջ մտան նույն թվականին՝ Բարձրագույն Դռան կողմից պաշտոնապես հաստատվելուց հետո:

Այս բոլորով հանդերձ, քրիստոնյաների եկեղեցիները գտնվում էին ողբալի վիճակում:

Փոքր Ասիայի խառը բնակչություն ունեցող շատ վայրերում քրիստոնյա բնակիչները մոլեռանդ մահմեդականների գայրութից խուսափելու համար գաղտնի կերպով էին կատարում իրենց կրոնական ծեսերը: Փաստական շատ կարեւոր վկայություններ կան Պ. Չիխաչովի՝ «Նամակներ Թուրքիայի մասին» խորագիրը կրող հուշագրության մեջ: Հեղինակը 19-րդ դարի կեսերին երկար ժամանակ գտնվելով Թուրքիայում, ականատես է եղել քրիստոնյաների իրավագուրկ եւ թշվառ վիճակին: Նա հետաքրքիր վկայություններ է տալիս դավանանքի խտրականության մասին: Բերենք մի օրինակ. «Գիրեսունի եւ Տիրեպոլուի, ինչպես նաեւ Տիրեպոլուի եւ Գյումուշխանեի միջեւ գտնվող հետամնաց գյուղերի բնակչությունը, իրենից ներկայացնում էր բավականին հետաքրքիր մի երեւույթ: Այդ գյուղերի ազգաբնակչությունը խառն է, բացեիքաց հարում է մահմեդականությանը եւ հասարակական վայրերում խոսում է միայն թուրքերեն: Սակայն գաղտնի կերպով հետեւում է հունական արեւելյան եկեղեցու ծիսակատարությանը: Տանը խոսում է հունարեն, եւ յուրաքանչյուրը կրում է երկու անուն: Այսպես՝ եթե



նրանցից մեկը առավոտյան դուրս է գալիս սպիտակ կամ կանաչ չալմայով եւ կրում է Ահմեդ կամ Սելիմ անունները, երեկոյան աղքատ խրճիթում կամ գաղտնի քարայրում միանում է իր դավանակիցներին, որպէսզի թաքուն կատարի քրիստոնեական կրոնի ծիսակատարությունը քահանայի առաջնորդութեամբ, որը դրանից մի քանի ժամ առաջ արդեն հանդես էր եկել որպէս Սուլա՝ մզկիթում»։<sup>10</sup>

Բացառութեամբ Կ.Պոլսի եւ ծովափներում գտնվող երկու-երեք քաղաքների, որտեղ կային դեսպանություններ, քրիստոնյաներին չհաջողվեց երկրի մյուս մեծ քաղաքներում թույլտվություն ստանալ իրենց եկեղեցիների զանգերն օգտագործելու համար: Գիրեսու մոտ, որտեղ քրիստոնյաներն ավելի շատ են, քան մահմեդականները, Էրզրումում, Ադանայում, Քոնիայում, Թարսուսում, Թուկադում, Ամասիայում, մի խոսքով Փոքր Ասիայի մեծ քաղաքներում, փաշաները, վախենալով մահմեդականների զայրույթից, չէին համարձակվում քրիստոնյաներին նման թույլտվություն տալ, հակառակ Կ.Պոլսից կրկնվող հրամաններին, որոնցով ծանուցվում էր քրիստոնյաների եւ մահմեդականների միջեւ սոցիալական եւ կրոնական ամեն մի անհավասարութեան վերացման մասին: <sup>11</sup>

Մեր օրերում եւս թուրքիայի տիրապետութեան տակ գտնվող Արեւմտյան Հայաստանի տարածքում պատմական հնություն ունեցող եւ մշակութային արժեք ներկայացնող հուշարձանները սկսել են քանդվել եւ անհետանալ: Հատկապէս սրբապղծվում են եկեղեցիներն ու վերածվում մզկիթի: Նույնիսկ թուրքական թերթերը չեն թաքցնում հայկական եկեղեցիների եւ հուշարձանների քանդման եւ երկրի երեսից վերացման չարաբաստիկ փաստերը: Թուրքական «Իքիբինե տոփրու» (Դեպի երկու հազարը) շաբաթաթերթում «Հայերու՝ ւ կպատկանի, փլցուցեք ուրեմն» խորագիրը կրող հոդվածում նշվում է, որ 16-րդ դարի կրթական եւ ուսման կենտրոն Յոթ եկեղեցիները եւ Վարագի վանքը այժմ ավերակ են եւ այլ նպատակների են ծառայում: «Վանի Շատախի շրջանի այս եկեղեցիները միտումնավոր քանդումի հետեւանքով երկրագունդի վրայեն սրբվելու վրա են, Գաչքթի եկեղեցին քարակոյտ մը դարձած է, Էլմաճըզ գյուղի եկեղեցին աղբանոց դարձած է. Շատախ առուի Թաշքոյի կամուրջի վրայի հայերեն գրերը սրբված են Պատմական հնություններու պաշտպան կոմիտեի կողմէ»:

Յրանսիական «Ժեռ» հայտնի աշխարհագրական ամսագրում լույս տեսած «Հիշատակություն բնաջնջված երկրի մասին» հոդվածում Կլոդ Մուտաֆյանը, որը շրջագայել է Թուրքիայի արեւել-

յան շրջաններում, գրում է. «... Անիի հյուսիսում գտնվող 10-րդ դ. կաթողիկոսանիստ կենտրոն Արզիմայի 60-ական թթ. դեռևս կանգուն եկեղեցին 1977-ին պարզապես մի քարակույտի էր վերածվել: ... Այլևս չկան խծկոնքի եկեղեցիները... Ներկայումս Վանից մնացել են սոսկ քարակույտեր: Կարծես թե քաղաքը քանդված է հազարավոր բուլղոզերներով: ... Կիլիկիայի տարածքում դրությունը նույնն է»<sup>112</sup>:

Այսօր մեծ թվով հայկական եկեղեցիներ քարուքանդ, ավերված վիճակում են, կամ վերածված են մզկիթի, թանգարանի, բաղնիքի եւ պահեստանոցների: Իսկ 1996 թ. վերջերին մամուլը տեղեկացրեց, որ Էրզրումի մեջ հայկական մի հինավուրց եկեղեցի նույնպես վերածվել է մզկիթի:

Ինչպես վերը նշեցինք, 1856 թ. կայսերական հրովարտակը որոշ աշխուժություն առաջացրեց ու հուսադրեց խուլ վայրերի բնակչությանը, սակայն իրականում այդ հրովարտակի դրույթները չիրականացան: Միայն այն վայրերում, որտեղ հայերը կամ հույները թվով գերակշռում էին տեղի մահմեդական բնակչությանը, կարողացան օգտվել այդ հրամանագրից եւ եկեղեցական որոշ արտոնություններ ստանալ: Եթե մինչեւ այդ հրամանը որեւէ վանքի կամ եկեղեցու խալիխած մասերը նորոգելու համար պահանջվում էր սուլթանի հրամանը, կամ փաշայի ու քուրդ խանի թույլտվությունը, դարակեսից սկսած պատրիարքին էր վերապահվում հոգեւոր հիմնարկությունների, վանքաշինության ու եկեղեցաշինության գործերը կարգավորելու իրավունքը:<sup>113</sup>

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ քրիստոնյաների վիճակը բարելավելու վերաբերյալ սուլթանական կառավարության կողմից ընդունված բազմաթիվ օրենքները մնացին թղթի վրա եւ չգործադրվեցին կյանքում: Ընդհակառակը, կայսրության ոչ-մահմեդական բնակչության դրությունը գնալով ավելի վատթարացավ: Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնություններին շնորհիված հրամանագրերից, առանձին սահմանափակումներով եւ խոչընդոտներով, կյանքում կիրառվեցին միայն կրոնական համայնքներին վերաբերող կանոնադրությունները, ինչպես նաեւ քրիստոնեաբնակ առանձին նահանգներին տրված ներքին ինքնավարության արտոնությունները (ինչպես օր. Կրետե կղզին, Լեռնալիբանանը, Սամոս կղզին, Աֆոնի լեռը եւ այլն), իսկ հպատակների պատվի, անձի եւ գույքի ապահովության վերաբերյալ հրամանագրերը եւ տրված բազմաթիվ խոստումները երբեք չկիրառվեցին եւ մնացին թղթի վրա:

Թանգիմաթի բարենորոգումները չկենսագործելու խնդրում մեղավոր էին նաեւ եվրոպական մեծ պետությունները: Նրանց բուրոկրատիկ չէր հետաքրքրում թուրքական բռնապետությունը վերացնելու եւ կեղեքված ժողովուրդներին ազատագրելու հարցը: Նրանք բարենորոգումներով շահագրգռված էին լոկ նրա համար, որպեսզի պատրվակ ծառայեցնեն Թուրքիայի ներքին գործերին միջամտելու եւ Մերձավոր Արեւելքում իրենց դիրքերն ամրապնդելու համար:

\*\*\*

19-րդ դարում, իրենց տարածքային ամբողջականությունը պահպանելու համար, սուլթանական իշխանություններն ամենայն դաժանությամբ ճնշում էին ազգային ազատագրական ամեն մի շարժում: Իսկ որեւէ ապստամբություն ճնշելու համար, ինչպես իրավամբ նշել է Արկայսկին, թուրքերը միայն մեկ գործելակերպ ունեին՝ անկանոն բանակ կազմելու համար գորակոչում էին երկրում գտնվող ամենազարհուրելի մարդասպաններին, որոնք ի նշանավորումն տարած հաղթանակի, անխնա կոտորում էին տղամարդկանց, կանանց եւ երեխաներին:<sup>114</sup>

Սուլթան Աբդուլ Չամիդի գահակալության շրջանում ազգային հարցը ծայրաստիճան սրվեց ու դարձավ ոչ միայն ներքին, այլեւ միջազգային կարեւոր հարցերից մեկը: Չեւեւելով «բաժանիր՝ որ տիրես» վաղեմի սկզբունքին, Աբդուլ Չամիդը իր բազմազգ հպատակների միջեւ տեսապես բորբոքում էր ազգային եւ կրոնական թշնամանք:

Խորամանկորեն օգտագործելով հայկական հարցում մեծ տեղությունների միջեւ գոյություն ունեցող հակասությունները, Աբդուլ Չամիդը իրագործեց Արեւմտյան Չայաստանը իր վաղեմի բնակչությունից դատարկելու հանցագործ ծրագիրը՝ տնտեսապես քայքայելու, ֆիզիկապես ոչնչացնելու եւ բռնի արտաքսելու ճանապարհով:

Արյունարբու սուլթան Աբդուլ Չամիդը եւ նրա պետական բարձրաստիճան գործիչները 1878 թվականի Բեռլինի վեհաժողովից հետո ցինիկաբար հայտարարում էին, որ հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ է ոչնչացնել հայ ժողովրդին: Չայերի բնաջնջման համիդյան քաղաքականությունը սկսվեց կիրառվել 19-րդ դարի 90-ական թվականներից: Հատկապես 1894-96 թթ. երկու տարիների ընթացքում կոտորվեցին 300 000 հայեր, ավերակ դարձան հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, ամայացան ամբողջ շրջան-

ներ:

«Աբղոլ Դամիդը իր 32 տարվա «զուլումի» բռնապետության շրջանում, - ինչպես իրավամբ իր ժամանակին նշել է ռուս դիվանագետ Ա. Մանդելշտամը, - ծայր աստիճան զարգացրեց այն բոլոր բացասական կողմերը, որոնք հատուկ են ընդհանրապես թուրքական տիրապետությանը, առանձնապես դաժան հալածանք՝ բոլոր հպատակների նկատմամբ, իսկ երբեմն էլ՝ քրիստոնյաների ջարդը, տգիտության եւ կրոնական մոլեռանդության պահպանումը ժողովրդի մեջ»:<sup>15</sup>

Իսկ ի՞նչ արեցին երիտթուրքերը ազգային հարցը լուծելու համար: 1908 թ., իշխանության գլուխ անցնելուց հետո նրանք ոչ միայն մոռացան մինչ այդ իրենց տված խոստումները, այլև դարձան ժողովուրդների ազգային ազատագրական շարժման բացահայտ թշնամիներ: Ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին այդ ազգերը թուրքացնելու կամ ոչնչացնելու ճանապարհը:

Եվ այդպես, Առաջին Դամաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքերի կողմից դաժանորեն կազմակերպվեց արեւմտահայերի զանգվածային ջարդերը, որին ինչպես հայտնի է, զոհ գնացին մոտ մեկ եւ կես միլիոն անմեղ մարդիկ: Տեղի ունեցավ 20-րդ դարի՝ մարդկության դեմ ուղղված առաջին ցեղասպանությունը:

### ՇԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դայ ժողովրդի պատմություն, հատ. 4, Երևան, 1972, էջ 301:
2. Ա. Պերպլեբան, Դայոց պատմություն, Կ.Պոլիս, 1871, էջ 227-233: Վերջին շրջանում Թուրքիայում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Ստամբուլի «նախարարների խորհրդի» եւ «Թուրքափու պալատի» արխիվներից բացի, մեծ թվով դաֆթարներ պահպանվել են նաեւ «Բյամիլ Քեփեջիի անձնական հավաքածուում»: Թուրք պատմաբան Յավուզ Էրջանի տվյալներով, այս հավաքածուում ամենահինագույնը 2539 համարի տակ գտնվող դաֆթարում ամփոփված՝ 1517 թ. Յավուզ սուլթան Սելիմի (1512-1520) կողմից Երուսաղեմի հայ պատրիարք Սարգիս III-ին տրված հրովարտակն է:
3. Մանր մատենագիրք, Ժե-ԺԹ դդ., գիրք Ժ, հրատ. Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 219-228:
4. Նույն տեղում, էջ 248:
5. Թուրքերեն բնագրի պատճեն, տես Ա. Պերպլեբան, նշվ. աշխ., էջ 227:
6. Նույն տեղում, էջ 222:
7. Թուրքերեն բնագրի պատճեն, տես Ա. Պերպլեբան, նշվ. աշխ., էջ 28:

8. Հայ ժողովրդի պատմություն, հատ. 4, էջ 303:
9. Մ. Զուլայան, Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երեւան, 1980, էջ 232:
10. Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատ. 5, 2-րդ մաս, Վենետիկ, 1804, էջ 117:
11. Ahmet Refik, On altinci asirda Istfnbul hayati, (1553-1591), 2-ci basim, Istanbul, 1935.
12. . Նույն տեղում, էջ 45:
13. . Նույն տեղում, էջ 27:
14. Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դարերի, կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. 2, Երեւան, էջ 244:
15. Նույն տեղում, էջ 563,564:
16. Эвлия Челеби, Книга путешествия, Вып. 3, М., 1983, стр. 197.
17. Մանր մատենագիրք, էջ 250-251:
18. Նույն տեղում, էջ 251:
19. Տես մանր ժամանակագրություն, Գ. 2, էջ 567:
20. Նույն տեղում, էջ 375:
21. H. T. Cinlioğlu, Tokat tahiri, 2-ci kisim, 1950, s. 34-35.
22. Մանր մատենագիրք, էջ 378.
23. Մանր ժամանակագրություններ, Գ. 2, էջ 476:
24. Օրագրություն Երեմիա Չէլէպի Քեօնուրճեանի, հրատ. Մ. Նշա-  
նեան, Երուսաղեմ, 1939, էջ 386:
25. Ա. Պէրպէրեան, նշվ. աշխ., էջ 226:
26. Նույն տեղում:
27. Տես Լ. Դանեղյան, ԺԸ դարի նորահայտ հայկական աղբյուր իրա-  
նա-թուրքական պատերազմների եւ Հայաստանի պատմության վերաբեր-  
յալ, «Արեւելյան աղբյուրագիտություն», պրակ 1, Երեւան, 1988, էջ 175:
28. В. Гиргас, Права Христиан на Востоке, по мусульманским законам, СПб., 1863, стр. 52.
29. Գ. Չինլիօղլու, նշվ. աշխ., 3-րդ մաս, էջ 55:
30. Düstur, Tertip-i envvel, Istanbul, 1300, с. 4, s. 375 (արարատառ):
31. Книга законов султана Селима I., Публикация текста, перевод терминологический комментарий и предисловие А. С. Тверитиновой, М., 1969, стр. 35.
32. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի  
մյուս ժողովուրդների մասին, հատ. ք, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երե-  
ւան, 1964, էջ 250:
33. Նույն տեղում, էջ 405-407:
34. Джихан-нюма и Фезлеке Кятыба Челеби как источник по истории  
Армении (VIII в.) предисловие, перевод и комментарии А. А. Папазяна,  
Ереван, 1973, стр. 77.
35. А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-  
XVII веках, Ереван, 1972, стр. 75.



36. А. Желязкова. Некоторые аспекты распространения ислама на Балканском полуострове в XV-XVIII вв., "Османская империя", сб. статей, М., 1986, стр. 113-115.
37. Գ. Ա. Անասյան, Թուրքական ֆուրուվվաթը եւ հայերը (Օսմանյան կայսրության ծուլողական քաղաքականության պատմությունից), Վիեննա, 1985, էջ 8:
38. H. Tüncer, Osmanli imparatorluğunda toprak kfnunlari, Osman Gazidesi 3-cu Ahmet zamanina kadar (1299-1750), Ankara, 1965.
39. Գրիգոր Դարանաղցի, ժամանակագրություն, Երուսաղեմ, էջ 467-468:
40. Մանր մատենագիրք, էջ 493:
41. Հայոց նոր վկաները, կազմեցին Յ. Մանանդեան եւ Հ. Աճառեան, Վաղարշապատ, 1902, հատ. ք., էջ 27-28
42. Նույն տեղում, էջ 185-189:
43. Նույն տեղում, էջ 316:
44. R. R. Madden, The Turkish Empire in its relation with christianity and civilization, London, 1862, p. 7.
45. Դ. Ինժիճյան, նշվ. աշխ. էջ 396:
46. Լ. Խաչիկյան, «Էջեր համընթաց պատմությունից», «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, նո. 2, էջ 138:
47. А. Д. Папазян, Аграрные отношения..., стр. 158.
48. Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Վիեննա, 1931, էջ 193-194:
49. Բազմավեպ, 1934, նո. 1, էջ 31:
50. Ա. Ռեֆիկ, նշվ. աշխ., էջ 51:
51. Մանր ժամանակագրություններ, էջ 516:
52. Օրագրություն Երեմիա Չելեպի Քեօնուրճեանի, էջ 400.
53. Թուրքական աղբյուրները, հատ. 1, էջ 215:
54. Belleten, 1984, N. 188, s. 1142.
55. Հ. Թյունցեր, նշվ. աշխ., էջ 62:
56. Մանր ժամանակագրություններ, հատ. 1, էջ 169:
57. Ժեղարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Հ. Բ., Երևան, 1956, էջ 302:
58. I. H. Uzunçarşılı, Osmanli devleti teşkilatından kapukulu ocaklari, c. 1, Ankara, 1943, c. 2, 1944.
59. Նույն տեղում, հատ. 1, էջ 18.
60. Նույն տեղում, էջ 126.
61. Նույն տեղում:
62. Գրիգոր Դարանաղցի, ժամանակագրութիւն, Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ. Սեսրոպ Նշանյանի, Երուսաղեմ, 1915, էջ 340-341:
63. Ի. Ուզունչարըլը, նշվ. աշխ. հատ. 1, էջ 20: Կեսարիայում հայերի բազմաշատության մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Էվլիա Չելեբին: Իր «Ուղեգրության» առաջին հատորում Ստամբուլի շքերթը նկա-



րագրելու ընթացքում, լաղընջիների մասին խոսելիս նշում է, որ «Սրանց մեծ մասը կեսարացի հայեր են, թվով 5 000 մարդ»: Տես էվլիա Չելեբի, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1967, էջ 35:

64. Başbakanlık arşivi, mühimme defterleri serisi, nu. 123, s. 240, Pars Tuğlaci, Osmanlı mimarlığında batılâşma dönemi ve Balyan ailesi, İstanbul, 1981, s. 1.

65. Նույն տեղում:

66. Belleten, 1984, N. 188, s. 1137.

67. Ի. Ուզունչարչըլը, նշվ. աշխ. հատ. 1, էջ 13:

68. H. A. Gibbons, Osmanlı İmparatorluğunun kuruluşu, İstanbul, 1928, s. 100 (արաբատառ թուրքերեն թարգմանություն):

69. Ա. Ժեյազկովա, նշվ. աշխ., էջ 111:

70. Թուրքական աղբյուրներ, հատ. Բ., էջ 137:

71. Մանր ժամանակագրություններ, Գ. 2, էջ 231:

72. Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 78:

73. Tarih-i Pecevi, İstanbul, 1283 (1868), c. I, s. 274 (արաբատառ)

74. Թուրքական աղբյուրներ, հ. 1, էջ 34:

75. «Մեծ պատերազմը Չըլդըրի դաշտում» վերնագրով եւ օսմանցիների հետագա առաջխաղացումը դեպի Արեւելք մինչեւ Թիֆլիսի գրավումը՝ Ի. Փեչեւին նկարագրել է իր գրքի երկրորդ հատորում: Տես «Թուրքական աղբյուրներ» Գ. Ա., էջ 35-38:

76. Թուրքական աղբյուրներ, հ. Ա., էջ 46-47:

77. Մանրամասն տես Մ. Կ. Ջուլայյան, Ջալալիների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:

78. Ayni Ali, Kavanin-i Al-i Osman der hulasa-i mezamin-i defter-i divan, Dersaadet, 1280, s. 127 (արաբատառ)

79. The Kurds state and Minority in Turkey, Iraq and Iran, New York, 1996, p. 84.

80. Belleten, 1969, N. 129, s. 24-34.

81. Ahmet Gevdet, Tarih-i Gevdet, c. 4, Dersaadet, 1871, s. 235 (արաբատառ)

82. Թուրքական աղբյուրներ, հ. 2, էջ 584:

83. Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում, էջ 26:

84. Գ. Մանանդյան, Գ. Աճառյան, Հայոց նոր վկաները (1155-1843), Վաղարշապատ, 1903, էջ 413-414:

85. Սիմեոն Լեհացի, նշվ. աշխ. էջ 18-19:

86. Մանր ժամանակագրություններ, հատ. 2, էջ 566:

87. Տես Գ. Բամպուրճեան, Յովհաննես պատրիարք Կոլոտ եւ իր աշակերտները, Ստամբուլ, 1984, էջ 43:

88. Ա. Ռեֆիկ, նշվ. աշխ., էջ 43-44:

89. Н. А. Тулина, Танзимат и Мустафа Решид паша, М., 1984, стр. 4.

90. Второй трактат Кочи бей..., стр. 245.

91. Թուրքական աղբյուրներ, հատ. 1, էջ 277-278:
92. Թուրքական աղբյուրներ, հատ. Բ, էջ 230:
93. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս, Վիեննա, 1878, էջ 309:
94. Ролен Жекмен М. К., Армения, Армяне и трактаты, М. 1897, стр. 24.
95. Արարերեն Թանգհն բառի հոգնակին. այստեղ օգտագործվել է բարեփոխումի իմաստով:
96. Tezakir-i Gevdet, 1-12, Ankara, 1953, s. 68.
97. П. А. Чихачев, Письма о Турции, М., 1960, стр. 40.
98. Տե՛ս «Հողային հարցը Թուրքահայաստանում», «Գործ», թիվ 4, 1917, էջ 62:
99. Լեօ, հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 137:
100. Կ. Թումանեան, Պատմութիւն Արեւելեան խնդրոյ եւ առաջնորդ հայկական հարցի, Լոնտոն, 1905, էջ 498:
101. П. А. Чихачев, Великие державы и Восточный вопрос, М., 1970, стр. 173-174.
102. Ролен Жекмен М. К., Армения, Армяне и трактаты, М. 1897, стр. 24.
103. Düstür, Tertib-i evvel, cild I, Istanbul, 1289 (1872-73), s. 4-7, (արարատառ թուրքերեն)
104. Նույն տեղում, էջ 7-14:
105. Doustour-i Hamidié, Appendict a La Legislation Ottomane, publié, D. Nicolai-des, 5-ème partie, Constantinople, 1878, p. 2-7.
106. Տե՛ս Ed. Engel Hardt. La Turquie et Le Tanzimat, Paris, 1882, p. 111.
107. П. А. Чихачев, Письма о Турции, стр. 129.
108. Charles Eliot, Turkey in Europe, London, 1908, p. 293.
109. Տե՛ս Tezakir-i Gevdet, 1-12, Ankara, 1953, s. 71.
110. П. А. Чихачев, Письма о Турции, стр. 23.
111. Նույն տեղում, էջ 40:
112. Տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1988, թիվ 1, էջ 212-215.
113. Հ. Ղազարյան, Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացութիւնը 1800-1870 թթ., Երեւան, 1967, էջ 245:
114. Герцог Аргайльский, Ответственность Англии в Восточном вопросе, СПб., 1908, стр. 55.
115. Ա. Ն. Մանդելշտամ, Երիտասարդ թուրքերի պատմությունը, Ա. էջ-միածին, 1916, էջ 5:

**Հողային քաղաքականությունն  
ու հարկային կառուցվածքը <sup>1</sup>**

Օսմանցիները պատմական Փոքր Հայքի տարածքում երեւացին դեռեւս 14-րդ դ. վերջին: 1392-1398 թթ. ընթացքում գրավելով մինչեւ Երզնկա ու Կամախ ընկած տարածությունը, նրանք ընդհուպ մոտեցան Մեծ Հայքի սահմաններին: 1473 թ. սուլթան Մեհմեդ II-ը (1451-1481) Երզնկայի եւ ապա Դերջանի մոտ Ակ-Կոյունլու թուրքմենների պետության փաղիշահ՝ Ուզուն Հասանի (1453-1477) դեմ տարած հաղթանակներից հետո, տիրեց Մեծ Հայքի հյուսիս-արեւմտյան մասը: Այնուհետեւ Հայաստանը ռազմական թատերաբեմ դարձավ Օսմանյան հզոր կայսրության եւ Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի միջեւ: Ընդհանուր առմամբ, նվաճված երկրներում օսմանցիները միառժամանակ պահպանում էին այդ երկրներում գոյություն ունեցող օրենքներն ու սովորությունները: Թուրք պատմաբան Օ. Լ. Բարկանը, երկար տարիներ ուսումնասիրելով Թուրքիայի արխիւներում եւ գրադարաններում պահվող կանոնները, օրինամատյանները, նշել է, որ թուրքական եւ մահմեդական այլ պետություններից փոխանցված օրենսդրական հողվածների մեծ մասում նկատվում են անփոփոխ եւ միեւնոյն անվանումներով նախկինից փոխանցված օրենքներ: Ինչպես օրինակ, Ակ-կոյունլու փաղիշահ Ուզուն Հասանի, Եգիպտոսի սուլթան Կայըթբայի (1468-1495), Դուլկադիր իշխաններից՝ Ալա-ուդ-դեվլե բեյի եւ այլ մի շարք արաբական եւ պարսկական օրենքները: Օսմանյան թուրքերը Փոքր Ասիայի կենտրոնական մասում հիմնականում ժառանգել էին 12-13-րդ դարերում գոյություն ունեցած սելջուկյան պետության ռազմա-ավատատիրական հարաբերությունների բնորոշ կողմերը՝ նրանց վարչական ձեւերը, ինչպես նաեւ հողերի բաժանման թիմարի եւ զեամեթի սիստեմը:

Արեւմտյան Հայաստանում գործածության մեջ է եղել Ակ-կոյունլու տիրակալների, հատկապես Ուզուն Հասանի օրենքները: Օսմանյան սուլթանների կողմից հռչակված օրենքների՝ վերոհիշյալ Ուզուն Հասանի կանոնների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ Արեւմտյան Հայաստանի նվաճված տարածքներում թուրքերը պահպանել եւ երկար ժամանակ փոփոխության չեն են-

թարկել Ուզուն Հասանի օրենքները: Օրինակ, Բաբերդում, Կամախում առանց փոփոխության գործածության մեջ են մնացել Ուզուն Հասանի օրենքները, ինչպես նաև նրա կողմից հաստատված կշռի չափերն ու դրամական միավորները:

Ժամանակի ընթացքում թուրքերը, իրենց ազդեցությունը ուժեղացնելով, աստիճանաբար հրաժարվեցին տեղական նախկին սովորություններից և օրենքներից: Սակայն այդ երեւոյթը կանոնամեններում (օրենքների ժողովածուներ) ներկայացվում էր այնպես, թե իբր, այդ փոփոխությունները կատարվել են տեղի բնակչության պահանջով: Էրզրումի վիլայեթի կանոննամետում նշվում է. «Ռայաթները, առետրականները եւ Օսմանյան երկրի մյուս բնակիչները չկարողացան տոկալ Հասան փաղիշահի հաստատած օրենքներին եւ դիմելով բարձր արքայական գահին, խնդրեցին, որ Ռումի օրենքը գործադրվի նաեւ նրանց նկատմամբ»:<sup>4</sup> Իհարկե, այս եւ այլ վիլայեթների կանոննամեններում բերված նման հիշատակումները չեն համապատասխանում պատմական ճշմարտությանը, քանի որ, եթե ուշադրություն դարձնենք օսմանցիների հարկային ծանր քաղաքականությանը, կտեսնենք, որ քրիստոնյա հպատակների վիճակը անհամեմատ ավելի ծանր էր, քան մահմեդականներինը:

Վրացի պատմաբանները եւս ուշադրություն են դարձրել այս հանգամանքի վրա. նշելով, որ հայերը եւ վրացիները իրենց կամքով երբեւէ չեն համաձայնվել օսմանյան օրենքների գործադրումը իրենց երկրի վրա. «Թե որքան դժբախտություն են պատճառել օսմանցի նվաճողները հայ ժողովրդի նկատմամբ եւ թե ինչպես նրանք տեսապես պայքարել են իրենց ազատագրության համար, բոլորին հայտնի է» -, գրել են Կ. Կուցիան եւ Մ. Սվամիձեն:<sup>5</sup>

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչեւ 15-րդ դարի կեսերը Օսմանյան պետությունում այս կամ այն սուլթանի կողմից հրապարակված վճիռները (hukum) կամ օրենքները ընդհանուր տեսքի չեն բերվել: Դրանք միատեսակ չեն եղել եւ օգտագործվել են համաձայն յուրաքանչյուր վայրի սովորությունների: Առաջին ձեւակերպված պետական պաշտոնական կանոննամեն Օսմանյան կայսրությունում կազմվել է սուլթան Ահմեդ II-ի օրոք:<sup>6</sup> Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Մեհմեդ II-ի օրենսդրության հիմնական դրույթները մշակված են եղել դեռեւս մինչեւ նրա գահ բարձրանալը, քանի որ նրա օրենսդրության սկզբում նշվում է, որ «Այս կանոննամեն հանդիսանում է իմ հոր, իմ պապի, ինչպես նաեւ իմ օրենքը»:<sup>7</sup> Մեհմեդ II-ի օրենքը հիմնականում բովանդակում է այնպիսի հողվածներ, որոնք առնչվում են հարկերի,

առեւտրական տուրքերի, քրեական հանցագործությունների հետ: Մեհմեդ II-ի կանուներում բավականաչափ հողվածներ շարադրված են ոչ այնքան հիմնավորված փաստարկներով: Հողի սեփականատիրական իրավունքի զանազան պայմաններն ու զանձվող հարկերը բազմակողմանի եւ ամբողջական չեն արտացոլվել այս օրենսդրության մեջ:

Օսմանյան օրենսդրությունը որոշ զարգացման հասավ 16-րդ դարում՝ սուլթան Սուլեյման I-ի (1520-1566) ժամանակ: Նրա կանուներում<sup>8</sup> ընդգրկված հողվածներն ի տարբերություն վերը նշվածի, ավելի մանրամասն են մշակված եւ հիմնավորված: Այն առավել ընդարձակ հողվածներ է բովանդակում հողատիրության, հարկային համակարգի, քրեական հանցագործությունների, ինչպես նաեւ ավատատիրոջից ռեայայի ունեցած կախյալ վիճակի զանազան ձեւերի մասին: Սուլթան Սուլեյման I-ի ժամանակ կազմվել են նաեւ Օսմանյան կայսրության առանձին վիլայեթներին վերաբերող կանուները, որտեղ որոշակիորեն արտացոլվել են տվյալ վիլայեթի պայմաններն ու սովորույթները:

Մինչեւ վերջերս փաստացի տվյալներ չլինելու պատճառով թուրքական պատմագրությանը հայտնի չէր, թե ինչ փոփոխություն կամ զարգացում են ունեցել օսմանյան օրենքները վերոհիշյալ սուլթանների միջեւ ընկած ժամանակաշրջանում: Այս տեսակետից մեծ նշանակություն ունեցավ Ա. Տվերիտինովայի կողմից հայտնաբերված եւ հրատարակված սուլթան Սելիմ I-ի (1512-1520) կանուները: Մինչ այդ, թուրքական եւ եվրոպական պատմագրության մեջ այս սուլթանի օրենսդրական գործունեության մասին ոչ մի տեղեկություն չկար: Ա. Տվերիտինովան սույն կանուներում ձեռագրային երկու տարբերակները հայտնաբերել է Մոսկվայի արեւելագիտության ինստիտուտի թուրքերեն վավերագրային ֆոնդից, եւ աղբյուրագիտական բարձր մակարդակով հրատարակել 1969 թվականին:<sup>9</sup> Սելիմ I-ի կանուներն իր ծավալով, հողվածների բազմազանությամբ եւ լեզվի շարադրման տեսակետից առավել ամբողջական է եւ մշակված: Այստեղ, ի տարբերություն Մեհմեդ II-ի օրենսդրության, առկա են այնպիսի հողվածներ, որոնք վերաբերում են առեւտրի եւ արհեստի կանոնավորման հարցերին, հողային սեփականության ձեւերին, ռեայայի եւ քոչվոր անասնապահների հարկատվությանն ու պարտականություններին: Այս բոլորը ցույց են տալիս, որ դեռեւս Սելիմ I-ի գահակալության շրջանում առավել ուշադրություն է դարձվել իրավական կողմի գործադրմանը: Այսպիսով, այն գնահատականը, որ մինչ այդ տրվում էր հետա-



գլոտոլների կողմից միայն սուլթան Սուլեյման I-ին, մասամբ պետք է վերագրել նաև Սելիմ I-ին: Բնականաբար հետազայում, վերոհիշյալ սուլթանների հաստատած օրենքները հիմք ունենալով, մասնակի փոփոխություններ են կատարվել հողագործության եւ հարկապահանջության վերաբերող կանոննամաների հողվածներում: Այդ տեսակետից հիշատակության արժանի է սուլթան Ահմեդ I-ի (1603-1617) հրապարակած կանոննաման, որը հայտնի է նաև «1609 թ. հողային օրենքը» խորագրով: Այն բուլղարերեն լեզվով հրապարակել է Գ. Գըլբրովը:<sup>10</sup>

Վիլայեթների կանոննամաներին զուգահեռ, 16-17-րդ դդ. կազմվում են նաև դաֆթարները:՝ Կազմության ձեւով այդ դաֆթարները լինում էին ընդարձակ (muqassal) եւ համառոտ, փոքր (muhtasar, icmal): Ընդարձակ դաֆթարում թվարկվում են հարկերն ու հարկատվության վայրերը, իսկ համառոտում նշվում էր թիմարի, զեւամեթի եւ խասսի տերերն ու տարեկան եկամուտները: Հողի, բնակչության, եկամտի, հարկերի հաշվառումը տեղի էր ունենում 30 տարին մեկ անգամ, հաճախ վարչական միավորների փոփոխության, կամ էլ նոր սուլթանի գահ բարձրանալու կապակցությամբ: Գրանցման մատյան էր կազմվում նաև ամնիջապես որեւէ նոր երկրամաս նվաճելուց հետո: Դաֆթարները շատ կարելուր նշանակություն ունեն տվյալ երկրամասի ռեայայի եւ ավատատիրոջ փոխհարաբերության, հողային սեփականության ուսումնասիրության համար: Նոր դաֆթարներ կազմելու ընթացքում բնականաբար պակասեցվում կամ ավելացվում էին նոր հողվածներ, ճշգրտումներ կատարում հարկապահանջության սիստեմում, նկատի ունենալով կայսրության տարեցտարի աճող տնտեսական դժվարությունները: Օր., ներկայումս հրապարակվում առկա է էրզրումի վիլայեթի կանոննամանի երկու տարբերակներ. մեկը հաստատված է 1540 թ.՝ սուլթան Սուլեյման Կանունիի, իսկ մյուսը՝ 1592 թ. սուլթան Մուրադ III-ի ժամանակ: Հարկ է նշել, որ այս երկրորդ տարբերակը հայտնաբերել է վրացի թուրքագետ Յ. Աբուլաձեն Վրաստանի հանրատնտեսության ԳԱ ձեռագրային ինստիտուտի արեւելյան ֆոնդից եւ հրապարակել 1961 թ.:<sup>12</sup> Այս երկու կանոնների համեմատությունը ցույց է տալիս, որ 1592 թ. կանոննամանում ընդգրկված են 8 նոր հողվածներ, որոնք բացակայում են նախկինի մեջ: Այս նոր հողվածներում հաստատվում են մի շարք մթերքների գները, տրվում են զինմանից գանձվող զինու հարկերը եւ այլն: Բնականաբար, նման տարբերություններ կան նաև մյուս վիլայեթներին վերաբերող կանոննամանների միջև: Այդ նկատվում է,



երբ համեմատում ենք Օ. Բարկանի եւ Գ. Թունջերի հրապարակած նյութերը: Այստեղ եւս նկատվում են հարկերի գանձման եղանակների եւ մաքսային գնացուցակների տարբերություններ: Այս երևույթը հաստատվում է նաեւ մի շարք կանոննամեներում բերված դրույթներով: Օր., 1612 թ. հրապարակված կանոններից մեկում ասվում է. «Մի շարք վիլայեթների դաֆթարներում հարկերը քիչ են արձանագրված, իսկ մի շարք վիլայեթներում՝ շատ: Զարկերը գանձվելու են յուրաքանչյուր վիլայեթի ընդարձակ դաֆթարի համաձայն»:<sup>13</sup> Մի խոսքով, գոյություն չի ունեցել մշակված եւ ձեակերպված մի ընդհանուր պետական օրենսդրություն: Այս հաստատում է նաեւ Օ. Բարկանը, նշելով որ «այդ օրենքները օսմանյան երկրներին հատուկ, միատեսակ, ընդհանուր կանոններ չեն, այլ՝ յուրաքանչյուր վայրի, սովորությունների համաձայն հավաքված մասնավոր օրենքներ»:<sup>14</sup> Իմիջիայլոց, հակասություններ են նկատվում նաեւ միեւնույն հարցին վերաբերվող հոդվածներում: Օր., Գ. Թունջերի հրապարակած կանոններից մեկում կարդում ենք՝ «Զրիստոնյա մի անձնավորություն, եթե քահանա դառնա եւ աշխատի իր ժողովրդի օգտին, իսպենջ եւ խարաջ չի վճարելու: Նրա ռայաթ որդիները եւ ճորտացունից ազատվածները ռեայայի նման հարկ են վճարելու»:<sup>15</sup> Նույն հարցին վերաբերող մի այլ կանոնում նկատում ենք, որ «Դաֆթարում ռայաթ արձանագրված ոչ-մահնեղականը, եթե հետագայում քահանա դառնա, շարունակելու է վճարել խարաջի եւ իսպենջի հարկերը: Եթե տվյալ կրոնավորը, նյութական մեղ պայմանների մեջ գտնվելով, դժվարանա խարաջի եւ իսպենջի հարկերը վճարել, ապա տվյալ դեպքում նրանից ոչ մի բան չի վերցվում»:<sup>16</sup>

Դեռեւս Թուրքիայում, հանրապետական կարգեր հաստատվելուց հետո, թուրք պատմաբանները իրենց աշխատություններում ամեն կերպ ձգտել են իդեալականացնել Թուրքիայում գոյություն ունեցող ավատատիրությունը եւ աշխատել ապացուցելու, որ Օսմանյան կայսրությունը, Բալկանյան երկրների եւ Փոքր Ասիայի ժողովուրդներին ազատագրելով բյուզանդական բռնակալությունից, այդ վայրերում վերացրել է ճորտատիրական հարաբերությունները: Օրինակ, 1937 թ. հրատարակած «Օսմանյան կայսրության գյուղացիության իրավական վիճակը» խորագիրը կրող հոդվածաշարում, Օ. Բարկանը, ժխտելով ճորտատիրության առկայությունը Օսմանյան կայսրությունում, նշում է, որ Օսմանյան կայսրությունում գյուղացին իրավական առումով երբեւէ չի կորցրել իր ազատ կացությունը, որ թուրքական տիրակալության տակ գտնվող ժողո-

վորդները շատ շուտ ընտելացել եւ հարմարվել են արդար կարգերին:<sup>17</sup>

Արդի թուրք պատմաբանները եւս, ժխտելով Օսմանյան կայսրությունում ավատատիրության ամկայությունը, առաջ են քաշում այն թեզը, որ իբր շարիաթը սկզբունքորեն դեմ է ավատատիրական հարաբերություններին: Այստեղից էլ նրանք պնդում են, որ Օսմանյան կայսրության մեջ ճորտի եւ ճորտատիրոջ հարաբերություններ չեն եղել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավատատերը Օսմանյան կայսրության մեջ ի տարբերություն Արեւմտյան Եվրոպայի ավատատերի, որտեղ ճորտերը ամրացված էին կալվածատիրոջից, գյուղացու անձի նկատմամբ չունեւ իրավական իշխանություն, որովհետեւ նա «հողի տերը» (sahib-i arj) չէր, այլ հողը գտնվում էր նրա ժամանակավոր օգտագործման ներքո:<sup>18</sup> Ինչպես իրավամբ նշում է Ա. Համբարյանը, այդ առանձնահատկությունը բխում էր մի կողմից՝ հողատիրության ռազմա-ավատատիրական բնույթից, իսկ մյուս կողմից՝ շարիաթի սկզբունքներից: Ռազմա-ավատատիրական հողատիրության ժամանակ կալվածատերն իրավաբանորեն ցմահ էր տիրում տվյալ շրջանին կամ գյուղին, որի հետեւանքով ճորտերը չէին կարող գրանցվել նրա անունով, իսկ շարիաթը արգելում էր անձնական կախվածությունը:<sup>19</sup>

ճորտատիրական հարաբերությունների ամկայությունը Օսմանյան կայսրությունում հաստատում է նաեւ Ա. Տվերիտինովան՝ իր «Օսմանյան կայսրությունում գյուղացիության եւ գյուղացու հողօգտագործման հարցի շուրջ (15-16-րդ դդ.)» ուսումնասիրության մեջ: Նա նշում է, որ թուրքական միջնադարյան փաստագրական նյութերը կասկածի տակ են առնում բուրժուական եւ հատկապես թուրք պատմաբանների տեսակետները, որ իբր միջնադարում Օսմանյան կայսրությունում գոյություն չի ունեցել ճորտատիրական հարաբերություններ: Ա. Տվերիտինովան իրավացիորեն նշում է նաեւ, որ գյուղացու անձնական կախվածությունը ավատատիրոջից չի հասել այն աստիճանի, ինչպիսին եղել է Եվրոպայում:<sup>20</sup> Նա հանգում է այն եզրակացության, որ միջնադարյան Թուրքիայում գյուղացին ինչ-որ չափով կախվածություն ունեցել է ավատատիրոջ անձից:

Իրոք որ, կանոննամեններում նկատում ենք ճորտատիրական հարաբերությունների գոյության յուրահատուկ փաստեր: Այն, որ գյուղացուն արգելվում էր փոխադրվել մի վայրից մի այլ վայր, հաստատվում է մի շարք կանոննամեններում բերված դրույթներով: Բերենք մի օրինակ Երեւանի վիլայեթի հաշվառման դաֆթարից,

որը կազմված է 1586 թ., սուլթան Մուրադ III-ի ժամանակ: «Եթե ռեայան, իր տրամադրության տակ հողակտոր ունենալով համ-դերձ՝ փախչի, սիփահիին օրենքի հիման վրա կարող է նրան վերադարձնել իր նախկին տեղը: Սակայն տաս տարուց ավելի մի տեղում բնակվողին ետ բերելն արգելվում է»:<sup>21</sup> Նույն միտքը, արձանագրված է նաև Էրզրումի վիլայեթի 13-րդ հողվածում<sup>22</sup>, ինչպես նաև մի շարք այլ վիլայեթների կանոնադրամեններում:

Այդ փաստերը ցույց են տալիս, որ գյուղացին կապված է եղել հողի հետ եւ կախման մեջ է գտնվել ավատատիրոջից: Սակայն, իրականությունից չչեղվելու համար նշենք, որ կանոնադրամենների մի մասում գյուղացուն ուղակի արգելված չի եղել հեռանալու իր հողակտորից:

Ճորտատիրական հարաբերությունները առավել ակնհայտ երեւում են քրդական դերբեթյությունների շրջանում: Մ. Բոջոլյանը Օսմանյան կայսրությունում այանլըք եւ դերբեթլիք ինստիտուտների մասին խոսելիս հաստատում է, որ դերբեթլի եւ նրան ենթակա գյուղացիության փոխհարաբերությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ավատատիրոջ եւ ճորտի փոխհարաբերություններ:<sup>23</sup>

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության հիմնադրումից հետո, նվաճված բոլոր հողերը պատկանում էին պետությանը: Թիմարների բաժանման սիստեմը դեռևս հաստատվել է Օսման I-ի ժամանակ: Այն տրամադրվել է պատերազմների ընթացքում աչքի ընկած ցեղային առաջնորդներին: Օսման I-ի հրապարակած օրենքում ասված է. «Իմ կողմից շնորհված թիմարները երբեւէ առանց պատճառի հետ չեն վերցվում նրանց տերերից: Տիրոջ մահվան դեպքում թիմարը փոխանցվում է նրա որդուն: Եթե մահացածի տղան անչափահաս է, ապա մինչեւ զինվորական ծառայության պիտանի դառնալը, արշավանքին մասնակցում են նրա ծառաները: Իմ կողմից հաստատված թիմարի այս կարգը, իմ հաջորդներից ոչ ոք իրավունք չունի խախտելու»:<sup>24</sup>

Որեւէ երկիր նվաճելու ընթացքում գյուղացու հողը չէր խլվում տիրոջից, այլ առաջվա նման շարունակում էր մշակել այն: Գյուղացու մշակած հողը իրեն չէր պատկանում, այլ պետությանը: Փաստորեն գյուղացին հողին տիրում էր ժամանակավոր թափուի իրավունքով եւ այն ժառանգաբար անցնում էր իր զավակներին: Սակայն արտադրանքից ստացված եկամտի համաձայն, պետությանը վճարում էր 10-ից մեկը, կամ 8-ից, 6-ից մեկ հարկ, որը կոչվում էր խարաջ-ի մուկասեմե (համամասնական խարաջ): Ոչ-մահմեդականների ձեռքին գտնվող հողակտորը կոչվում էր արագի-ի խարա-

ժին (խարաջի հողեր):

16-րդ դարի հանրահայտ թուրք օրենսդիր Մյուֆթի Աբուսուուդը հողային իրավունքի վերաբերյալ սուլթան Սուլեյման Կանունիին տված իր մեկնաբանության մեջ հայտնում է, որ «Ռեայայի ձեռքին գտնվող հողը իրենց սեփականությունը չի համարվում: Դրանք պետական հողեր են: Նվաճման ընթացքում հրահանգ է եղել, որպեսզի այդ հողերը ոչ մեկի սեփականությունը չդառնա, այլ ցանկի եւ մշակվի, որպեսզի վճարվի եկամտահարկը տասանորդի անվան տակ (ուշը), եւ հողային հարկ (խարաջ)՝ կալվածի հարկ (ռեսմի չիֆթ) անվան տակ»:

16-18-րդ դդ. Օսմանյան կայսրության այլ երկրամասերի նման, Արեւմտյան Հայաստանում եւս բոլոր մշակելի հողերը բաժանվում էին 3 հիմնական խմբի:

1) Պետական հողեր (արզի միրիյե կամ արզի մենլեքեթ):

2) Վակֆային հողեր:

3) Մասնավոր սեփականատիրական հողեր (մուլք կամ հայրենիք):

Պետական հողերը բաժանվում էին 3 խմբերի, դրանք են՝ խասը, զեամեթը եւ թիմարը: Խասը հատկացվում էր վեզիրներին, բարձրաստիճան պաշտոնյաներին եւ սուլթանների ընտանիքի անդամներին: Խասսի հողերի եկամուտը տարեկան կազմում էր 100 000 ալչե եւ ավելի: Խասսի տերը իր մեկ ջեբելու կոչված հեծյալ տալ, հոգալով նրա ծախսերը: Ջեամեթի տարեկան եկամուտը 20 000-ից հասնում էր 100 000 ալչեի: Իսկ թիմարի տարեկան եկամուտը կազմում էր մինչեւ 20 000 ալչե: Այն տրվում էր սիփահուն, որը պարտավոր էր պատերազմի ժամանակ տրամադրել որոշ թվով զինվորներ:

Օսմանյան կայսրության մեջ վակֆի հաստատումը կապում են սուլթան Օրիհանի տիրապետության հետ, որը 1348 թ. հիմնադրել է առաջին վակֆը՝ Բրուսայում: Վակֆը, դա որեւէ հողատարածության կամ ունեցվածքի բարեգործական նպատակներով հանձնումն է: Իսկ մյուլքը (կամ հայրենիք) մասնավոր սեփականատիրական հողի իրավունքով հատկացվում էր այն պաշտոնյաներին, որոնք աչքի էին ընկել հայրենիքի հանդեպ կատարած իրենց հատուկ ծառայություններով: Փաստերը ցույց են տալիս, որ Արեւմտյան Հայաստանում, բացի թուրք եւ քուրդ ավատատերերից, մյուլքի իրավունքով հողային տարածություններ ունեցել են նաեւ հայ գյուղացիներն ու առետրականները. «Եվ անհավատներից ոմանք քաղա-

քում եւ գյուղում ժառանգաբար անկախ են դարձել եւ գնել են մյուլքեր՝ այգիներ, պարտեզներու հողեր», - գրված է Էրզրումի վիլայեթի կանոննամեում:<sup>25</sup>

Բացի հողի թիմարային հիմնական տիրույթներից, Արեւնտյան Յայաստանում գոյություն են ունեցել նաեւ հողատիրության այլ տեսակներ: Ինչպես օրինակ՝ յուրտլուք-օջաքլըքները, հյուքլումեթությունները, մալիքանեն, մյուլքերը, արփալըքը, այանլըքը, դեբեթյությունը:

Յյուքլումեթությունը՝ օսմանյան սուլթանների քուրդ բեյերին, ցեղապետերին սեփականատիրական իրավունքով շնորհած խոշոր տիրույթներն էին, որոնք ունեին զինվորական եւ վարչական ինքնուրույնություն, կատարում էին ռազմա-ավատատիրական ծառայություն եւ իրենց զորքով մասնակցում սուլթանի ռազմարշավներին:

Ինչպես նկատվում է, հյուքլումեթությունը հատկապես տարածված է եղել Քուրդիստանի քրդական ցեղերի մոտ, ինչպես նաեւ Արեւնտյան Յայաստանի՝ քրդական ազդեցությունների ոլորտն ընկած տարածքում: Իմիջիայլոց հյուքլումեթության իրավական դրության մասին կարելու տեղեկություն է տալիս 17-րդ դարի թուրք բարձրաստիճան պաշտոնյա՝ սոֆիացի Ալի Չաուշը: Նա իր ուղերձն արծանագրում է, որ ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում գոյություն ունեն 9 հյուքլումեթություններ: Դրանք են՝ Տեզիրեն, Էգիլը, Գենջը, Բալուն, Դարրուն, Էքրադը, Միհրիվան, Ուշդյուն, Ամադիեն: Այս հյուքլումեթությունները օսմանյան սուլթանների նվաճումից հետո սեփականատիրական իրավունքով տրամադրել են տվյալ տիրույթների տերերին, իրենց մատուցած ծառայությունների եւ հնազանդության համար: Նշվում է նաեւ, որ այդ տիրույթները ենթակա չեն եղել գրանցման եւ ստորաբաժանման: Նրանց եկամուտները չեն գրանցվել պետական ընդհանուր մատյանի մեջ: Այնտեղ չեն գտնվել ո՛չ էմիր եւ ո՛չ էլ օսմանյան բանակ: Բոլոր կառավարչական գործերը կատարվել են տեղի իշխանությունների կողմից: Այնուհանդերձ, նրանք բոլորն էլ ենթարկվել են սուլթանի իրամաններին եւ կարգադրություններին: Մյուս էմիրների մեան, նրանք եւս արշավանքի են գնացել այն վիլայեթների բեյերեթյունների հետ, որոնց ենթակայության տակ են գտնվել: Իրենց տրամադրության տակ ունեցել են աշխարհագրային, ցեղային եւ այլ բնույթի զորքեր: Ինչպես տեսնում ենք, Ալի Չավուշը բավական ճիշտ է նկարագրել հյուքլումեթությունը: Սակայն նրա հաղորդած 9 հյուքլումեթությունների անվանումների եւ քանակի



խնդրում կան հակասություններ: Այս կապակցությամբ առավել ստույգ տեղեկություններ կան Քյաթիբ Չելեբիի եւ Էվլիա Չելեբիի հաղորդած նյութերի մեջ, քանի որ նրանք անձամբ շրջագայել են Արեւմտյան Հայաստանում եւ ակննատես եղել պատմական դեպքերին: Օրինակ՝ Քյաթիբ Չելեբին իր հանրահայտ աշխարհագրական երկում՝ Ջիհան-նյունայուն ակնարկություն է արել միայն Վանի վիլայեթում գտնվող հետեւյալ 8 հյուլքյունեթությունների մասին: Դրանք են՝ Հաքքյարիի, Ամադիեի, Բիթլիսի, Սեիրանի, Խոշաբի, Սոքմանապատի, Բերկրիի, Խոյի հյուլքյունեթությունները:<sup>26</sup> Իսկ Էվլիա Չելեբու ուղեգրության մեջ նկատվում են հյուլքյունեթության տարբեր ձեւեր: Այդ տարբերակները Մ. Ջուլպյանը իր ուսումնասիրության մեջ բաժանել է 3 մասի: 1) Հյուլքյունեթներ, որոնք պատկանել են քուրդ բեկերին հնագույն ժամանակներից: 2) Հյուլքյունեթներ, որոնք սուլթանների կողմից տրվել են հաքիմներին (կառավարիչներին), որպես ազատ միլիտարանլը: 3) Հյուլքյունեթներ, որոնք հաճախ գտնվել են կառավարության կողմից նշանակված վիլայեթի բեյլերբեյի կամ սանջակբեյի՝ եթե ոչ անմիջական իշխանության, գոնե հսկողության տակ:<sup>27</sup>

Դիարբեքիի վիլայեթի վարչական բաժանումը նկարագրելու ընթացքում Ալի Չաուշը նշում է, որ այն բաղկացած է 10 սանջակից եւ 12 յուրթուրք եւ օջաքլըքից: Այստեղ եւս նա հիմնավորված բնութագրում է յուրթուրք եւ օջաքլըք հողատիրության իրավական վիճակը: Պարզվում է, որ նրանց էմիրներին իրավունք էր վերապահվում ունենալու թմբուկ եւ դրոշակ, որը ցույց էր տալիս այդ տիրույթների վարչական ինքնավարության իրավունքը: Այդ իրավունքը ամեն անգամ հաստատվում էր կայսերական բերաթով, որտեղ նշվում էր «խասս-ի իջմալու»-ի ձեռք բերման իրավունքը: Այսինքն՝ այդ նշանակում էր, որ տվյալ տիրույթը առանց տրոհվելու ժառանգաբար կարող էր անցնել սերնդից-սերունդ: Ավատատեր էմիրը հեռացման եւ կամ այլ տեղ նշանակվելու ենթակա չէր: Ուշադրություն է ներկայացնում այն հարցը, որ այս հողատիրության համակարգում գոյություն են ունեցել թիմար եւ զեամեթներ: Պատերազմների ժամանակ թիմարատերերն ու զայիմները իրենց բեյլերբեյիների հետ մասնակցել են ռազմարշավանքներին:

Հողատիրության այս ձեւը տարածում է ստացել սուլթան Սելիմ I-ի (1512-1520) ժամանակ: Էվլիա Չելեբին Դիարբեքիի վիլայեթի վարչական կառուցվածքը նկարագրելու ընթացքում նշում է, որ «սուլթան Սելիմ խանը Քուրդիստանը նվաճելու ժամանակ նրանց (քուրդ բեյերին) յուրթուրք եւ օջաքլըք է շնորհել»:<sup>28</sup> Փաստերը ցույց



են տալիս, որ դրանք գոյություն են ունեցել առավելաբար նոր նվաճված սահմանամերձ գոտիներում: Տվյալ տիրույթի ավատատեր էմիրը պարտավոր էր պահպանել երկրի սահմանները:

«1045 (1635) թվականին Ահմեդ խանի որդին՝ սուլթան Մուրադ խանը վեզիր Կենան փաշային տրամադրեց որոշակի քանակությամբ զինվորներ, որը 23 օրվա պաշարումից հետո կըզլբաշների ծեռքից, առանց կռվի գրավեց Ախալցխան: Տվյալ ժամանակ գրավվեցին նաեւ 6 բերդեր, որոնք որպէս օջաքլըքի հանձնվեցին Սեֆեր փաշային» - գրում է Քյաթիբ Չելեբին իր հանրահայտ Ջիհան-նյումայում:<sup>29</sup> Ախալցխայի վիլայեթի նկարագրության ընթացքում Քյաթիբ Չելեբին նշում է, որ Փեթքերեկը, Շուշատը, Նեսֆի Լեվանեն հանդիսանում են օջաքլըքներ:<sup>30</sup> Այս հաստատում է նաեւ Ալի Չաուշի տվյալներով: Նա արձանագրել է, որ Ախալցխայի վիլայեթում կան 3 միավոր յուրթլուք եւ օջաքլըքներ, իսկ Վանի վիլայեթում՝ 8-ը:

Թուրքական աղբյուրները ցույց են տալիս նաեւ, որ սկզբնական շրջանում օջաքլըքներ եղել են նաեւ Էրզրումի վիլայեթում: Դրանք են՝ Կեվանիսի եւ Բայազեդի օջաքլըքները:<sup>31</sup>

Յողատիրության այս ձեւը գոյություն է ունեցել նաեւ Բալկաններում: Սակայն ժառանգականության վերոհիշյալ իրավական կողմը չի պահպանվել: Սուլթանական կենտրոնական իշխանության դեմ անհնազանդություն ցուցաբերելու դեպքում յուրթլուք եւ օջաքլըքը հետ է վերցվել տվյալ էմիրի ծեռքից եւ հանձնվել է մեկ ուրիշի:

Մալիքանեն այն հողատիրությունն էր, որը տրվում էր բարձրաստիճան պաշտոնյաներին, զինվորականությանը՝ սեփականատիրության իրավունքով: Հարկ է նշել, որ մալիքանե ինստիտուտի գոյությունը առկա է եղել Օսմանյան կայսրության նախորդ ժամանակներում եւս: 3. Փափազյանի տվյալներով, մալիքանե ինստիտուտը գոյություն է ունեցել ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլեւ Պարսկաստանում, սեֆեվիդների տիրապետության շրջանում, որ նրա արմատները նույնիսկ հասնում են մինչեւ արաբական տիրապետության շրջանը:<sup>32</sup> Մալիքանե հողագործության համակարգը տարածում է ստացել հատկապէս սուլթան Մուստաֆա II-ի ժամանակ: Ըստ Մուստաֆա II-ի հրամանագրի, այն փոխարինելու էր նախկինում գոյություն ունեցող մուկաթաները<sup>33</sup>, այսինքն՝ կապալառության (իլթիզամ) տրված ավատատիրոջ տարեկան եկամուտը վերածվեց ցմահ հատկացված եկամտի: Մի խոսքով, կապալի միջոցով հարկահավաք դառնալու իրավունքը պաշտոնապէս տրվեց

գավառաբնակ մեծահարուստներին:

Ըստ Ալի Չաուշի տվյալների, մալիքանեն սուլթանների կողմից տրամադրվել է կայսրության նեցուկը հանդիսացող, արտակարգ վստահություն վայելող բարձրաստիճան պաշտոնյաներին: «Նորանց ձեռքին առկա է եղել հրովարտակներ (մյուլքեմանե), շնորհված նախկին եւ իրենց ժամանակի աշխարհի ապավեն սուլթանի կողմից: Դա նման էր ժառանգական սեփականատիրության. ըստ ցանկության այն կարող էր վաճառել, նվիրատվություն անել որեւէ մեկին կամ վերածել վակֆի: Եվ քանի բարձրագույն իրաման չէր եղել տվյալ տոհմի վերացման կամ դադարեցման մասին, ավատատերը տիրում էր դրան սեփականատիրական իրավունքով, - գրել է Ալի Չաուշը»:<sup>34</sup>

Փաստերը ցույց են տալիս, որ օգտվելով իրենց սեփականատիրական եւ կառավարչական անսահման իրավունքներից, մալիքանեն նպաստել է գյուղացիության աներեւակայելի շահագործմանը: Դիվրիկի լիվայի կանուննամեում նշված է, որ «տվյալ լիվայում գտնվող գյուղերի մշակելի տարածությունների եւ հողակտորների մեծ մասից մալիքանե եւ դիվանի բաժին անվան տակ, երկրագործության միջոցով ստացված հացահատիկի հինգից մեկը առնելով, կրկնակի տասանորդ վերցնելը ժողովրդի մեջ հին սովորություն է եղել»:<sup>35</sup>

Ուշադրության արժանի է, որ այանլըք ինստիտուտի ծագումը մասնագետները սերտորեն կապում են մալիքանե սիստեմի հետ: Մ. Բոջոլյանը «Այանլըք եւ դերեբեյլիք ինստիտուտների» ուսումնասիրության մեջ նշում է, որ «Այանները ստանձնեցին հարկահավաք-մուհասըլի պաշտոնը՝ դառնալով կապալառուներ: Այս մատյանները կազմելու ժամանակ կատարած մեքենայությունների շնորհիվ նրանք դարձան մեծահարուստներ»:<sup>36</sup>

Օսմանյան կայսրության մեջ այան հասկացությունն արմատավորվել է 16-րդ դարում՝ սուլթան Սուլեյման Կանունիի օրոք: Սկզբնապես այն եղել է պետական ապարատի եւ հոգեւորականության բարձրաստիճան պաշտոնյաների մակդիր: 17-րդ դ. վերջերին եւ 18-րդ դ. սկզբներին առաջ է գալիս այանների մի նոր դաս, որը բաղկացած էր գավառային ավագանու ներկայացուցիչներից: Նոր այանների քաղաքական ազդեցության աճը բխում էր նրանց հողային եւ դրամական հարստության կուտակումից:

17-րդ դ. վերջերից այանների հեղինակությունը այն աստիճան է բարձրացել, որ սուլթանական ֆերմաններով նրանք սկսել են մասնակցել այնպիսի հարցերի վճռման, ինչպիսիք էին՝ հարկերի

նշանակումն ու հավաքումը, զինվորների հավաքագրումը, ինչպես նաև իրենց նահանգներում կարգ ու կանոնի ապահովումը: Այդպիսով նրանք տեղական վարչակարգում սկսում են աստիճանաբար հանդես գալ, որպես մի նոր միավոր:

18-րդ դ. Օսմանյան կառավարությունը, նկատի առնելով նրանց օրեցօր աճող ինքնուրույնությունն ու կենտրոնախույս ձգտումները, փորձել է վերջ տալ այանների ռազմաքաղաքական հզորությանը: Սակայն ապարդյուն, քանի որ գավառներում նրանց դիրքն ու կարողությունը չափազանց հզոր էր: 1785 թ. Աբդուլ Չամիդ I-ը Իզմիրի վիլայեթի ավագ մուլլային եւ մյուս մեծամեծներին հատուկ հրովարտակ է ուղարկում, որտեղ նշում է, որ տվյալ վիլայեթի բոլոր քաղաքներում եւ կազաներում այանները, խախտելով օրենքները, ինքնակամ փոփոխություններ են մտցրել ելք ու մուտքի մատյանի մեջ, կողոպտել են թշվառ ռեայաներին ու, հանուն իրենց անձնական շահերի, քարուքանդ արել երկիրը: Չրովարտակում նշվում է նաև, որ «այսուհետեւ արգելվում է նույնիսկ արտասանել այան անունը: Ով չի ենթարկվի մեր կամքին եւ շարունակի տանջել ու կեղեքել խեղճ ռեայային, ենթարկվելու է դաժան պատժի»:՝<sup>27</sup> Միայն Մահմուդ II-ին հաջողվեց վերջ տալ այանների սանձարգակ գործունեությանը, այն էլ երկարատեւ համառ պայքարից հետո:

Թուրք եւ օտար ուսումնասիրողները փորձել են նույնացնել այաններին դերբեյների<sup>30</sup> հետ, որպես միեւնույն սոցիալական խավի ներկայացուցիչներ: Սակայն, իրականում այս կարգերի միջեւ կան որոշակի տարբերություններ: Չայտնի է, որ 16-17-րդ դարերում Արեւմտյան Չայաստանի հարավային շրջանների սոցիալտնտեսական կյանքում կարեւոր դեր էին խաղում քուրդ ավատատերերը: Քրդական որոշ իշխանություններ համարյա դարձել էին կիսանկախ եւ իրենց ենթակա աշխատավոր հայ գյուղացիությանը ենթարկում էին դաժան շահագործման: Այնպես որ, դերբեյությունը քուրդ վերնախավի եւ հայ աշխատավորական գյուղացու միջեւ գոյություն ունեցող ավատատիրական հարաբերությունների դրսևորումն էր: Բնականաբար, հետագայում դերբեյության ինստիտուտը սկսել է տարածվել նաև ամբողջ Անատոլիայի վրա: Իսկ այանները հիմնականում առաջ են եկել կայսրության եվրոպական գավառներում եւ Փոքր Ասիայի արեւմտյան ու կենտրոնական շրջաններում:

Ինչպես նշեցինք, Մ. Բոջուլյանը, բազմակողմանի ուսումնասիրության ենթարկելով այանը եւ դերբեյիք ինստիտուտները,

իրավամբ նշում է, որ «Այանլըքը ծագեց պետական հողատիրույթ-  
յունից մասնավոր հողատիրության անցման շրջանում եւ, թուլաց-  
նելով ավատատիրական հարաբերությունները երկրի սոցիալ-տն-  
տեսական կյանքում, նպաստեց ավելի առաջավոր արտադրական  
հարաբերությունների զարգացմանը: Ի հակադրություն այանների,  
դերերեյներն ամեն կերպ ձգտում էին հավերժացնել ֆեոդալական  
հարաբերությունները, մեծ հարված հասցնելով երկրի սոցիալ-տն-  
տեսական առաջընթացին: Այդ պատճառով նրանք հանդես էին  
գալիս բոլոր տեսակի բարեփոխությունների դեմ եւ նրանց ելույթ-  
ները շատ հաճախ ստանում էին անջատողական բնույթ»:<sup>39</sup>

Հողատիրության այլ տեսակներից էր նաեւ արփալըքը, որը,  
իրենց ծառայություններով համբավ ձեռք բերած պետական բարձ-  
րաստիճան պաշտոնյաներին, պալատականներին թոշակի գնալու  
ընթացքում տրված հողակտորի, տիրույթի կամ պետական եկա-  
մուտներից՝ որպէս լրացուցիչ նշանակվող հատկացումների տր-  
վող համընդհանուր անվանումն էր: Երբեմն, քաղաքներ, սանջակ-  
ներ եւ նույնիսկ վիլայեթներ արփալըքի կարգով շնորհվել են վե-  
զիրներին եւ փաշաներին եւ բարձրաստիճան պաշտոնյաներին:

Արփալըքի շնորհման մասին հետաքրքիր տվյալներ կան Էվ-  
լիա Չելեբու ուղեգրության մեջ: Տրապիզոն քաղաքը նկարագրելու  
ընթացքում նա նշում է, որ սուլթան Մուրադ IV-ի եւ սուլթան Իբրա-  
հիմի տիրապետության ժամանակ մի շարք թուղ ունեցող վեզիրնե-  
րին շնորհվել է արփալըքներ:<sup>40</sup> Իսկ Վանի վիլայեթի նկարագրման  
ընթացքում գրում է հետեւյալը. «Այնուհետեւ 953 (1547) թվակա-  
նին, երբ աջեմները գրավում են Վանը, Սուլեյման խանը անձամբ  
գալիս, պաշարում եւ սադրազամ Ռուստեմ փաշայի միջոցով գրա-  
վում է այն: Սկզբում, իբրեւ արփալըք, վեզիրության աստիճանով  
շնորհվում է Ստամբուլում միջին դեֆթերտարի պաշտոն վարող  
Չերքեզ Իսքենդեր փաշային, որը քաջ եւ հերոս անձնավորություն  
էր»:<sup>41</sup> Նման նվիրատվության մասին Վանի բնակչությունը բողո-  
քարկում է, այն համարելով իրենց քաղաքի համար ստորացու-  
ցիչ:<sup>42</sup>

Օսմանյան հպատակ բնակչության վճարած հարկերը բաժան-  
վում էին երկու խմբի՝ 1) Օրինական հարկեր, որոնք հիմնվում էին  
մահմեդական շարիաթի վրա (թեքալիֆի շերիե կամ ռուսումի շե-  
րիե), 2) Սովորութային հարկեր, (թեքալիֆի օրֆիե կամ ռուսում-ի  
օրֆիե) :

Ըստ օրենքի, անիրաժեշտ էր հաշվի առնել հարկատուի նյու-  
թական վիճակը: Հարկատուները բաժանվում էին՝ հարուստների

(ալա), միջակների (էվսատ) եւ աղքատների (էղնա): Սակայն այս բաժանումը ձեւական բնույթ ուներ, քանի որ իրականում այդ սկզբունքը չէր կիրառվում կյանքում:

Մ. Մեյերը հարկապահանջության մասին խոսելիս, վերոհիշյալ երկուսին ավելացնում է նաեւ որպէս 3-րդ խումբ՝ ավարիզ-ի դիվանին (արտակարգ հարկեր), որոնք սկզբնական շրջանում գանձվում էին անկանոն ձեւով, պետության կարիքներից ելնելով, 3-4 տարին մեկ անգամ: Սակայն այս հարկերի գանձման ընթացքում ավատատերերի գործադրած կամայականությունները այն աստիճանի հասավ, որ ի վերջո կենտրոնական կառավարությունը այն հայտարարեց անօրինական գանձվող հարկեր (Tekalif-i Sakka):

Դեռեւս XVII-րդ դ. սկզբներին այդ անօրինական հարկերի գանձումը շարունակվում էր: Դրանք էին հագուստի հարկ (kaftan baha), տեսչական հարկ (devir), նվիրատվություն՝ որեւէ կենտրոնական վարչությունից եկած պաշտոնյայի պատվին (selamiye, peskes), մթերքի հարկ (zahire beha), ճանապարհածախսի հարկ (konak akce), ձիերի կերակրման հարկ (nal baha), շքախմբին կերակրելու հարկ (kapi harci):<sup>43</sup>

Օրինական հարկերի մեջ մտնում էին աշարը (տասանորդը), հողային հարկը, որը ոչ-մահմեդականներից գանձվում էր խարաջ եւ ջիզիե (եկամտահարկ) անվան տակ: Ջիզիեի անվան տակ բնակչությունից գանձվել են նաեւ տարբեր անվանումներով լրացուցիչ հարկեր: Հայկական աղբյուրներում ապօրինի գանձվող գլխահարկերը կոչվել են «ավելորդ գլխահարկ», «ավելի խարաջ», «խարաջի կոտոր» ու «խարամ խարաջ»:<sup>44</sup>

Սովորութային հարկերի թիվը շատ է եղել եւ ոչ կայուն: Ժամանակի ընթացքում, ըստ երկրի իրադրության եւ տիրողների կամքի, այն փոփոխվել է նոր հարկատեսակներով:

Թուրք պատմաբան Մ. Ակդաղը հարկերը բաժանում է երկու որոշակի խմբի 1) Պետության կողմից գանձվող հարկեր (թեքալիֆ-ի օրֆիե) 2) Տեղական ավատատերերի կողմից գանձվող հարկեր (ռուսումի ռայաթ): Արեւմտյան Հայաստանի բնակչությունից գանձվող հարկերը նկատի ունենալով, մասնագետներն առավել գործածական են համարում Մ. Ակդաղի այս բաժանումը:<sup>44</sup>

Պետական հարկերի մեջ, բացի հիմնական համարվող գլխահարկը (ջիզիե, խարաջ), մտնում էին նաեւ արտակարգ դրության հետ կապված ավարիզը, սուրսաթը, ինդադիեն: Այս հարկերը 16-րդ դարի վերջերից սկսած սկսեցին գանձվել յուրաքանչյուր տարի, թեքալիֆ-ի դիվանին անվան տակ:



16-18-րդ դդ. Թուրքիայի եւ Իրանի միջեւ տեղի ունեցած երկարատեւ պատերազմները խիստ բացասական ազդեցություն պիտի ունենային նաեւ Օսմանյան կայսրության քրիստոնյա բոլոր հպատակների վրա: Ոչ-մահմեդական ժողովուրդները սկսեցին ենթարկվել տնտեսական եւ քաղաքական դաժան շահագործման: Ընդհանուր առմամբ, ռեայայի վիճակը գանձվող բազմաթիվ հարկերից այնքան էր ծանրացել, որ գյուղերից ցիր ու ցան լինելով, սկսել էին փախչել այս ու այն կողմ: Տվյալ ժամանակաշրջանի թուրքերեն մի անանուն ուղերձում, որն ուղղված է սուլթան Մուստաֆա II-ին (1695-1703), կարդում ենք. «Իմ տիրակալ, Ձեզ համար շատ կարեւորություն ունեցող ռեայայի վրայից անհրաժեշտ է վերացնել անտեղի հավաքվող հարկերը: Միեւնույն ժամանակ բարձր հրաման արձակեք Օսմանյան կայսրությունում հաշվառում անցկացնելու մասին: Բեյլերբեյիներին կայսերական հանձնարարական տվեք, որպեսզի այսուհետեւ ռեայայից չգանձվեն կաֆթան բահայի, սելամիյեյի եւ նալ բահայի հարկերը<sup>45</sup>, քանի որ ռեայայի վիճակը առանց այն էլ շատ ծանր է»:<sup>46</sup>

Իրոք որ, բազմապիսի եւ ծանր են եղել Արեւմտյան Հայաստանի բնակչությունից պետության եւ կալվածատեր-ավատատիրոջ օգտին գանձվող հարկերը: Նշենք, որ ոչ-մահմեդական բնակչությունից ամենածանր գանձվող հարկերից մեկը գլխահարկն էր (ջիզիեն): Այն ամենածանր հարկ լինելով հանդերձ, երբեք կայուն չափ չի ունեցել: Չնայած, որ թուրքական կանոննամեններում, որպես օրենք ընդունված է եղել 25 ակչե գումար, սակայն այն ունեցել է խիստ փոփոխական բնույթ եւ տարբեր ժամանակներում հասել է մինչեւ 240 ակչեի: Իսկ 17-րդ դարի պատմագիր Կոչի բեյի տվյալներով այն հասել է նույնիսկ մարդագլուխ 285 ակչեի: Սուլթան Իբրահիմին (1640-1648) ներկայացրած իր երկրորդ ուղերձում Կոչի բեյը գրել է. «Ավարիզ է կոչվում այն հարկը, որը գանձվում է յուրաքանչյուր մահմեդական տնից 300 ակչե գումարով: Իսկ «խարաջ» է կոչվում այն հարկը, որը գանձվում է անհավատներից մարդագլուխ 285 ակչեի գումարով»: Փաստորեն եղել են դեպքեր, ուր հարկահավաք պաշտոնյաները գանձել են նույնիսկ ավելի: Ուստի, Կոչի բեյը առաջարկում է սուլթան Իբրահիմին հրաման արձակել, որպեսզի հարկահավաքները ավարիզ եւ խարաջ գանձելու ընթացքում մատչանում նշվածից ավելի չվերցնեն:<sup>47</sup>

Հայկական աղբյուրներում եւս պարզ երեւում է, որ գլխահարկի դրույքների տատանումները շատ մեծ են եղել: Օր., «Վանում գլխահարկ գանձվել է 10 դուրուշ կամ 400 փարա, ապա այն նույն



միջոցին Կարսում, որ նույնպես տաճկական նահանգ էր, առնվել է մարդագլուխ 16 փարա, այսինքն, ուղիղ 25 անգամ ավելի քիչ»:<sup>48</sup>

Այս բոլորով հանդերձ, կանոնմամեններում կան փաստեր, երբ առանձին վայրերում հաճախ նկատի է առնվել գյուղացու սոցիալական պայմանները եւ կամ հողի մատչելիության հարցը: Օր., Բիթլիսի վիլայեթի կանոնմամեում նշվում է, որ Խոյթ, Ունուր եւ Կեվաշ նահիեներում, որոնք խիստ անմատչելի եւ քարքարոտ են, հողամշակութունն շատ քիչ է եւ ռայաթների մեծ մասն աղքատ են, ուստի նրանց յուրաքանչյուր անձին 35 ակչե ջիզիե նշանակվեց: Հիշյալներից բացի, մյուս նահիեներում ջիզիեն 55 ակչե է որոշված:<sup>49</sup>

Իսկ սովորաբար, գլխահարկի հավաքման ընթացքում պաշտոնյաները գործադրել են կոպիտ կամայականություններ, նույնիսկ պատերազմների ընթացքում պետության կողմից ապօրինի գլխահարկ է գանձվել տարին երկու անգամ: Նրանք, որոնք ի վիճակի չեն եղել վճարելու գլխահարկը, ենթարկվել են մարմնական ծանր պատժի:<sup>50</sup>

Հակոբ Կարնեցին եւս անդրադարձել է Օսմանյան կայսրության կենտրոնական եւ տեղական իշխանությունների հարկային ծանր քաղաքականությանը: Նա իր ինքնագիր հիշատակարաններում ահա թե ինչ է գրում Կարինի բերդում տեղի ունեցած անարդար իրավիճակի մասին. «... Չի որչափ զագիր եւ անօրեն գործք կայ, որ քրիստոնեից խոտելի է եւ պարսաւելի է, զայն սոցա օրէնք է՝ զի եւ գործելի է, զի ցեղ ու ցեղ եւ ազգի-ազգի սուտ պատճառաւ հարկապահանջութունն եւ կեղեքելն անասելի է եւ անպատմելի»: «Ով եղբայրք, յորժամ հանդիպիք ի յայս բոթիս մի մեղայորք գրիս, զի Տաճիկք խիստ կու նեղազնին հարկապահանջության եւ խիստ տրտմեալ էի եւ իբր գերագի գրեցի»:<sup>51</sup> Իսկ 18-րդ դ. մի այլ տարեգիր Հակոբ Տիվրիկեցին եւս անդրադառնալով այս խնդրի շուրջ, գրել է. «Եւ Մուստաֆա փաշան կրկին նստաւ Կիւմիւշխանէ, եւ քաղաք Տելի Մեհմետին ձեռքը մնաց, որ ինքզ տարեկան տղայոցմէ լման խարաճ կառնէր եւ մարդ չէր կարէր հետը գրուցել»:<sup>52</sup>

Ավարիզը պետական կարիքների անհրաժեշտության դեպքում գանձվող հարկն էր, որը գանձվում էր մոտ 500 ակչե սահմաններում, 4-5 տարին մեկ անգամ: Իսկ սուրսաթը եւ ինդադիեն պատերազմների ժամանակ գանձվող հարկերն էին, որոնց տարբերակներն էին «իմդադ-ի ջիհադիեն» (օգնություն սրբազան պատերազմի համար), «բեդել-ի նյուզուլը» (իջեւանի հարկ), որը գանձվում էր բերդերի երկարաժամկետ պաշարման ընթացքում:

Ինչպես նշեցինք, 15-րդ դարում Արեւմտյան Հայաստանի որոշ շրջաններում դեռեւս գործում էր թե՛ Ուզուն Հասանի եւ թե՛ Օսմանյան սուլթանների հողային, մաքսային եւ քրեական օրենքները: Սակայն 16-րդ դարից սկսած Ուզուն Հասանի օրենքները աստիճանաբար դուրս մղվեցին գործածությունից եւ համատարած սկսեց օգտագործվել թուրքական օրենքներն ու հարկային համակարգը: Արեւմտյան Հայաստանի առանձին շրջաններում Ուզուն Հասանի ժամանակաշրջանից պահպանված հարկերից գործածության մեջ են եղել եւ գանձվել են հետեւյալ հարկերը՝ շանեկի, վալիջեկ, ըրգադիե, տոնական (resm-i iydiyye), թյուրեմնջեկ, թեմուրջեկ, նախբջեկ, դիվանջեկ, արոտավայրի հարկ (resm-i merai), շահնեկի, շիրեջըլըք, մուշակ (resm-i muşak), կարա սալզուն:

Ավատատերերի կողմից գանձվող հարկերի թիվը, ինչպես այն երեւում է հայկական նահանգներին վերաբերող կանոննամեներից, ավելի շատ են նդել: Մ. Ջուլայանը նշում է, որ այստեղ գոյություն են ունեցել ֆեոդալական ռենտայի բոլոր երեք ձեւերը՝ պարհակային, բնատուրքային եւ դրամական<sup>53</sup>: Բայց բոլորից շատ տարածված է եղել բնավճարը: Կանոննամեններում, հայկական նահանգներում գանձվող բնատուրքային հարկերից առավելաբար հանդիպում են տասանորդը (ուշր կամ աշար), բաիրան, սալարիեն, իսպենջը եւ այլն: Իսպենջը իրականում կալվածատեր ավատատիրոջ օգտին գանձվող գլխահարկն էր, քանի որ այն վերցվել է համատարած բոլոր ոչ-մահմեդական բնակիչներից (հիմնականում 25 ակչեի սահմաններում):

Դիարբեքիի վիլայեթի կանոննամեում նշված է, որ «Անհավատներին չիֆթի հարկ գրված չլինելով, ամեն մեկ հարկատուի համար 25 ակչե իսպենջ եւ ամուսնացածներին՝ վեց ակչե ըրգադիե է արձանագրված»<sup>54</sup>: Համանման սահմանում կա նաեւ Բիթլիսի, Արաբկիրի վիլայեթների կանոննամեններում:

Ավատատիրական ռենտայի պարհակային աշխատանքային ձեւերից կանոննամեններում հանդիպում է ըրգադիե կամ ռեսմ-ի ըրգադիեն<sup>55</sup>: Ռեսմ-ի ըրգադիեն էրգանիի լիվայի կանոննամեում անվանվում է ռեսմ-ի մուշակ (մշակի հարկ): Այն տարեկան 6-օրյա ծրի աշխատանք էր ավատատիրոջ օգտին կամ դրա փոխհատուցումը դրամով տարեկան 24 ակչեի սահմաններում:

Կանոննամեններում նշված սովորության գանձվող հարկերից են եղել նաեւ կալի հարկը (harman resmi), ջրաղացի հարկը (resmi asiyab), յայլադի հարկը (resm-i yaylak), չոբան բեկի հարկը (çobanbegi hakki), ոչխարի հարկը (resm-i ađnam, adet-i ađnam),

փեթակի հարկ (resm-i kovan), ամուսնության հարկ (resm-i arusiye), մեղրի հարկ (resm-i asel), չիֆթ քայքայողի հարկ (cift bozan), անասունների հարկ (resm-i mevasi), բայրամցեք (bayramcek), այգու հարկ (bag haraci), ամուրիության հարկ (resm-i mücerred), արոտի հարկ (resm-i otlak), ծխի հարկ (resm-i duhan), կերի հարկ (resm-i alef), հողի հարկ (resm-i zemin), հումուս (humus), մակթու (maktu), միրաբի հարկ (resm-i mirab), կամ հակկ-ի շուրուք (hakk-i surub):

Բիթլիսի վիլայեթում եւ այլ քրդաբնակ շրջաններում հարկեր են գանձվել նաեւ քրդերի սովորության համաձայն: Առավել տարածված այդ հարկերից են եղել՝ տան հարկը (resm-i hane), ջուլ-հակի հարկը (resm-i cullah), տոնական հարկ (resm-i iydiyye), նեվրուզի հարկ (resm-i nevrusiye), հողն անմշակ թողնելու հարկ (resm-i boz), կեֆենդուզի հարկ (resm-i kefenduz), դշլաղի հարկ (resm-i kislak), յուրի հարկ (resm-i rugan), ապաստանի հարկ (resm-i mekan) եւ այլն:

Այս հարկերից բացի, հայկական նահանգներում տարածված է եղել ավատատիրոջի ցանկությամբ նշանակված զանազան բնույթի անօրինական հարկերը: Օրինակ, Չմշկածագի լիվայի կանու-նում նշված է, որ մինչեւ այժմ այդ վիլայեթում, ըստ քրդական սովորության, թաբիր (tabhir), շահնեգի (şahnegi), նայիբջեկ (naibcek), հզրջաք (hızırcağ), եւ այլ անուններով ու միջոցներով առնված հարկերը ապօրինի լինելով, կայսերական հրամանով անբողջովին վերացվեցին:<sup>56</sup>

Անօրինական գանձվող հարկերի մասին նշված է նաեւ Էրզրու-մի վիլայեթի կանուննամեի նո. 43 հոդվածում. «Վերոհիշյալ լիվայի բերդերի, սանջակի բեյերի նվագախմբերի (mehter) նվագողները տարին մի քանի անգամ ռայաթների մեջ ման գալով՝ «տղա ամուսնացրիք եւ աղջիկ մարդու տվիք, ձեր բոլոր հավաքույթներից մենք հնգական ակնի առնելու սովորություն ունենք» ասելով, օրենքին հակառակ, բռնի կերպով նրանցից փող են վերցնում, իսկ գյուղի նվագողներն էլ՝ «մեր շնորհիվ գյուղերում ամեն օր նվագում ենք» ասելով նրանցից տուգանք են վերցնում: Այս պարագան եւս ակնհայտ ապօրինություն լինելով, վերացված է: Այսուհետեւ դա չպիտի արվի: Ժամանակի իշխողները պետք է արգելեն այդպիսի ապօրինությունները»<sup>57</sup>:

Ըստ կանուննամեների տվյալների, ապօրինի հարկեր են գանձվել նաեւ Մալաթիայի, Բիհիսնիի վիլայեթներից՝ հետեւյալ անվանումներով. սուբաշիույան (subaşılık), գրագրության

(yazıcılık), կալի ակչե (harman akçesi), ձմեռային պաշար (kış yegusu), չափելու (ölçülük), շտեմարանի (ambarlık), ախոռապետության (emir-i ahurluk), ճանապարհի ակչե (yol akçesi), չուբուքի ակչե (çubuk akçesi)<sup>59</sup>:

Հարկերի գանձման բնագավառում թույլ տրված ապօրինությունների մասին է խոսում նաև 1751 թ. սուլթան Մահմուդ I-ի հրապարակած այսպես կոչված «Աղայեթնամե»-ն (Արդարության հրովարտակ), ուր սուլթանը ամենախիստ ձեռով զգուշացրել է բարձրաստիճան պաշտոնյաներին՝ դադարեցնել գյուղացիներից գանձվող հարկերի հարցում թույլ տրված կամայականությունները:<sup>59</sup>

Կանոննամեներում հաճախ է նկատվում ռայաթների իրավունքները պաշտպանելու հարցում սուլթանական կառավարության կարգադրությունները այն մասին, որ տվյալ վայրում նշանակված հարկից կան մաքսից ավել գումար չգանձվեն: Նման միջոցառումները բխել են այն բանից, որ ավատատերերը, վիլայեթի պաշտոնյաները հաճախ անտեղի չարաշահումներ են գործադրել եւ օրենքով սահմանված գումարից ավելի գանձումներ են կատարել, որը եւ առջացրել է աշխատավոր գյուղացու զայրույթն ու բողոքը: Օր., Սալահյեյի լիվայի կանոննամեի 14-րդ հոդվածում նշված է. «Կափանով եթե իրեր, հացահատիկ, օճառ, արմավ, թուզ եւ այլն են կշռել, մեկ բեռին երկուական ակչե վերցնելուց հետո, յուրաքանչյուր բեռից դարձյալ որոշ բան են պահանջել: Ապօրինություն լինելով՝ վերացվում է: Միայն յուրաքանչյուր բեռի համար երկուական ակչե, հակից՝ մեկական ակչե եւ կես հակից՝ կես ակչե տալուց հետո իրերից մի հատիկ անգամ չպիտի վերցնել եւ ռայաթներին նեղություն չպիտի պատճառել»<sup>60</sup>:

Կամայականություններն ու բռնությունները, սոցիալական վիճակի անհավասարությունը մահմեդականի եւ ոչ-մահմեդականի միջեւ առավել բացահայտ են եղել Դիվոկի լիվայում, որտեղ նույնպես հրահանգվում է ապօրինությունները կանխելու եւ վերացնելու մասին: Սակայն այդ բոլորով հանդերձ, դրությունը բոլորովին չէր փոխվում: Օրինակ, կանոննամեում նշված է, որ սանջակի սուրաշիները Դիվոկի լիվայի<sup>61</sup> ռայաթների մոտ իջեւանելով, ապօրինաբար ուտելիք եւ կեր են վերցրել, տարին մեկ անգամ յուղ, թաղիք, փայտ, գարի, խոտ, հարդ եւ ածուխ վերցնելով, չնչին գումար են վճարել: Որսի գնալիս ռայաթներին բազմիցս քշել, տարել են, աշխատանքից կտրել են օրերով, ստիպել են հսկել իրենց ձիերին: Մյուս կողմից էլ սանջակի բեյերը եւ սիփահիները, ռայաթներին մի քանի օր խոտհնձի տանելով, խանգարել են նրանց աշ-

խատանքը<sup>62</sup>:

Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի եւ վանքերի համար նշանակված հարկերի խնդրում նույնպես եղել են չարաշահույններ եւ տեղի իշխանությունների կողմից գործադրվող կամայականությունների հետեւանքով գանձվել են ապօրինի հարկեր: Նման փաստերի մասին բավականաչափ հիշատակություններ կան «Մանր ժամանակագրությունների» մեջ: Բերենք մի օրինակ.

«ՌճԵՆԴ (1695) Գուրճի Մահմատ փաշայն եկն ի քաղաքն վան յօգոստոս 18, սա ետ պլիկ կտրել եւ զտարաղաճ շինեաց, եւ ի նոյնմբեր 20 մանգուլ եղաւ. սա երկու անգամ մախթու էառ ամենայն վանօրէից<sup>63</sup>». (ընդգծումը մերն է Ա. Փ.):

Ա. Դավրիժեցին եւս վկայում է կաթողիկոսներից գանձվող ծանր հարկերի մասին: Նրա հավաստմամբ. «այլազգիների հարկապահանջությունը ծանրացել էր քրիստոնյաների վրա, որոնք (այլազգիները) կեղեքում էին նրանց կյանքը: Կաթողիկոսից եւս պահանջում էին շատ ինչք, իսկ նա ինչ կարողանում, տալիս էր եւ ինչը չէր կարողանում, հալածական էր ընկնում եւ թաքնվում պահնջողներից<sup>64</sup>»:

Կանոնաձեռներում, վանքերից գանձվող հարկերից հիշատակվում է առաջնորդական հարկը (marahasiye akcesi)<sup>65</sup>: Վանքապատկան հողերի մշակած արտերի համար պարտադիր է եղել բահրա վճարելը<sup>66</sup>:

17-րդ դարի կեսերին պատրիարքական տուրքերի վրա ավելանում են նաեւ «քյուրեկճի» (թիավարման) կոչված հարկը, որը առաջին անգամ գանձվել է ժողովրդից Կանդիայի պատերազմից հետո (1648 թ.), մեծ վեզիր Մեհմեդ փաշայի կողմից: Այս մասին հետեւյալ հիշատակություններ է կատարել Ե. Բյուսյուրջյանը.

«Վեզիրիւս այսու նոր իմն  
գհարկատուուացս չհարկ պահանջեալ,  
որոյ քիւրեկճի անուանեն,  
ի պէտս Կրիտեայ լինին ծախեալ<sup>67</sup>»:

«Բյուրեկճի» տուրքը վճարել են ոչ միայն հայերը, այլեւ հույները, հրեաները: Այն հավասարապես ծանր է եղել երեք համայնքների համար էլ: Համայնքների ղեկավարները հաճախ տարբեր ձեւերով աշխատել են թեթեւացնել կամ ընդհանրապես վերացնել այդ հարկը: Այս տեսակետից մեծ դեր է խաղացել հայ մեծահարուստ Մաղաքիա Չելեբիի ծանոթությունը Մելիք Ահմեդ փաշայի հետ: Վերջինիս միջոցով նա կարողացել է որոշ ժամանակով վերացնել այդ հարկը. «Մաղաքիա Չելեպի որդի երեսելի իշխանին երեմիայի

համթեցւոյ՝ այր պիտանի ի բազում գործս ազգիս հայոց առ մեծամեծ իշխանաւորս հազարացւոց, որ ի ժամանակս Մելիք վեզիրին պակասեցւոյց քիւրեկճիի վարծ ի վերայ եկեղեցացն, որոյ վասն բազում լինէր աղմուկ շփոթի յազգս մեր»։<sup>68</sup>

Այս բոլորով հանդերձ, կրոնապատկան կալվածքները ունեին հնուց եկած որոշ հարկային արտոնութիւններ: Կրոնապատկան հողերի որոշակի արտոնութիւն ունենալու իրավունքը գալիս է դեռեւս Ակկոյունլուների տիրապետության շրջանից: Գ. Փափագյանը «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» աշխատության մեջ նշում է, որ Կարա-կոյունլուների եւ Ակկոյունլուների, ինչպէս նաեւ շաի Իսմայիլ I-ի հրովարտակներում, ոչ միայն հաստատվում են հայոց եկեղեցու եւ հայ հոգեւորականության մուսաֆուքայան իրավունքները, այլ նաեւ խստորեն հրահանգվում է հայ ռայաթներին անխափան կատարել իրենց պարտավորությունները եկեղեցու սպասավորների՝ հայ կղերի նկատմամբ:<sup>69</sup>

Նման արտոնութիւնների մասին նշված են սուլթան Աբդուլ Չամիդ I-ի կողմից Ջաքարիա պատրիարքին տրված հրովարտակներում. «... Ի պատրեարգութեանն բապի տեղոց ի վերայ հին օրինաց իւրեանց, յեկեղեցական եղեալ զայգի եւ պախսնայ եւ չիֆթլիք եւ չայիր, եւ արտեր. եւ ջաղացք եւ այազմայ եւ բանայիր, եւ վանքեր, եւ տներ եւ խանութներ. եւ պտղաբեր եւ անպտուղ ծառք. եւ այլ նույնպէս եկեղեցւոց վախճ եղեալ իրք եւ տավարներն առաջի կանոնի վերայ զայս բարձրագործ պետաթովս հայոց պատրիարգ եղեալ Ջաքարիայ անուն վարդապետի (1774-1789) կողմանէ բռնել եւ զապթ անել տուի՝ յայլմէ միջամուխ չի լինին. եւ եկեղեցեաց եւ վանքերուց փոխանորդ լիցի»:<sup>70</sup>

Վակֆային իրավունքով հողային խոշոր կալվածքներ են ձեռք բերել Վարագա Ա.Նշանը, Մուշի Ա.Կարապետը, Սեբաստիայի Ա.Նշանը, Աղթամարի ու Սսի կաթողիկոսները, որոնք իրենց տրամադրության տակ ունեին 300-ից ավել հեկտար հողային տարածութիւններ, մանր ու խոշոր եղջերավոր անասունների ամբողջ հոտեր:<sup>71</sup>

Այսպիսով, թե՛ Չասան փառիշահի օրերնքներում եւ թե՛ օսմանյան շրջանի կանոննամներում պարզ նկատվում է հարկատվութայան ասպարեզում ոչ-մահմեդականների նկատմամբ կատարվող խտրականությունը: Բացի դա, եղել են հարկեր, որոնք գանձվել են միայն անհավատներից, մահմեդականներից չեն գանձվել: Ստորեւ, սուլթանական կանոննամներից հաջորդաբար բերում ենք մի քանի փաստացի օրինակներ, որոնք ընդհանուր պատկերա-



ցում կտան այդ մասին:

1. Էրզանիի լիվայի կանուճանմեից.

«Անհավատներից մուշակի հարկ մարդագլուխ տաս թանգա է վերցվում, որը քսան օսմանյան ակչե է անում: Սակայն մուսուլմաններից չի վերցվում»:

«Այգի ունեցող անհավատների յուրաքանչյուր տնից վեց բաժակ շիրե է վերցվում եւ մեկ բաժակի համար՝ մեկական թանգա, որը 12 օսմանյան ակչե է անում»<sup>72</sup>:

2. Սսի լիվայի կանունից.

«Ամուսնացած թուրք ռայաթներից Չալեպի ակչեով տարեկան 70 ակչե սուլթանական նեվրուզին տան հարկ են առնում:

Ամուսնացած զիմնի ռայաթներից տարեկան Չալեպի ակչեով 130 ակչե տան հարկ են վերցնում, ըստ որում 60 ակչեն՝ տարեսկզբին (նեվրուզին) եւ 66 ակչեն՝ աշնան սկզբին»<sup>73</sup>:

3. Ջերմուկի լիվայի կանունից.

«Չացահատիկը՝ հնգից մեկ (hums) եւ բամբակը՝ վեցից մեկ, մուսուլմանների այգիների ամեն հարյուր տունկից՝ չորս ակչե, իսկ անհավատների ամեն հարյուր տունկից՝ հինգ ակչե, բանջարեղենը տասանորդով, իսկ ծառերի պտուղները՝ յոթից մեկ արծանագրվեց»<sup>74</sup>:

4. Արաբկիրի լիվայի կանունը.

«Չայերից եւս մարդագլուխ երեքական օր ըրգաղըք են վերցնում եւ աշխատեցնում, սրա աշխատեցնելու պահը կեսը՝ գարնան ցանքսի ժամանակն է, մյուս կեսը՝ հունձքի»<sup>75</sup>:

5. Չմշկածագի լիվայի կանունը.

«Չիշյալ վիլայեթի այգիների յուրաքանչյուր 100 տունկի համար մուսուլմաններից 5 ակչե եւ անհավատներից 6 ակչե պիտի վերցնել, ոչ ավելի»<sup>76</sup>:

Այս եւ այլ նման փաստերը նկատի ունենալով, լիովին հերքվում է Կեսարիայի լիվային վերաբերող կանունի այն թեզը, որ «անհավատները հնուց ի վեր քսանվեցական ակչե խարաջ տալով, այլ հարկերը մուսուլմանների նման են տվել»<sup>77</sup>:

Իրանա-թուրքական երկարատեւ պատերազմների, ջալալիական շարժումների ընթացքում տեղի ունեցած բռնությունների, առաջ եկած սովի, ինչպես նաեւ, ընդհանուր առմամբ ծանր հար-

կապահանջության պատճառով, բավականաչափ թվով հայեր հարկադրաբար հեռացան իրենց հայրենի երկրից եւ բնակություն հաստատեցին օտար ափերում:

Դիարբեքիրի վիլայեթի կանոննամեում ռայաթի դրության մասին խոսելիս նշվում է: որ «Ռայաթի հացահատիկը չափելու ժամանակ սիփահիները իրենց բաժինը բնատուրքով չեն վերցրել, այլ կանխիկ դրամով, այն էլ ընդունված չափից ավելի, այսպիսով անիրավություն է տեղի ունեցել եւ ռայաթի նկատմամբ բռնություն է գործադրվել, այդ պատճառով ռայաթների որոշ մասը երկիրը լքել է, իսկ որոշ մասն էլ նյութապես քայքայված եւ կարիքավոր լինելով, հողը չի մշակել»<sup>76</sup>:

Բնակամաքար, կանոննամեներում խոսվում է նաեւ կատարվող ապօրինությունների վերացման մասին: Օրինակ, Ամիդի լիվայի կանոննամեի թիվ 34 հոդվածում նշված է գյուղի բնակիչ անհավատների նկատմամբ: «Դու շիրան ամայի դաշտից վերցնում եւ խմում ես» ասելով՝ բռնաճում եւ ակչե են վերցնում, վերացվեց. «այսուհետեւ չափտի վերցնել»<sup>77</sup>:

Այնուհանդերձ, հակառակ այս եւ այլ միջոցառումներին, չարաշահումներն ու բռնությունները շարունակվում էին առաջվա նման եւ իրականում ոչ մի փոփոխություն չէր կատարվում:

Կանոննամեում արձանագրված փաստերը ցույց են տալիս, որ երբեմն ծանր աշխատանքային պայմանները եւս ստիպել են հայ բնակչությանը հեռանալու իր մշտական բնակավայրերից: Էրզրումի վիլայեթի կանոննամեում բերված թիվ 57 հոդվածը ցույց է տալիս, որ պաղլեղի 4 հանքերում աշխատող 23 գյուղերի անհավատների (իմա՝ հայերի) վիճակը այնքան ծանր է եղել, որ նրանք երբեմն սուլթանական ֆերմանով ազատվել են ջիզիեի, իսպենջի, բահրայի եւ այլ հարկերից, ինչպես եւ աջեմի օղլանից (մանկաժողովից), ավարիզից, քյուրեկչիի եւ սովորության հարկերից<sup>78</sup>: Սակայն աշխատանքային ծանր պայմանները, ապրուստի դժվարությունները ստիպել են բնակչությանը լքելու իրենց բնակավայրերը: Այս կապակցությամբ ահա թե ինչ է ասված նույն կանոննամեում, բարձրագույն ատյանին ուղղված զեկուցագրում:

«Շաբխանեի գյուղերի հողերը քարքարոտ են, մշակության համար պիտանի հողը քիչ է եւ գյուղացիների ապրուստը մեծ դժվարությունների հետ է կապված. չքավորներից ոմանք խարաջն ու իսպենջը եւ այլ հարկերը վճարելու կարողություն չունենալով՝ լքել են հայրենիքը եւ ոմանք էլ ցրվելու վրա են: ...Երբ գործին ծանոթ մարդիկ մանրակրկիտ կերպով քննեցին վերոհիշյալ գյուղերի ռա-

յաթների վիճակը, պարզվեց, որ երկու տարուց ի վեր հարյուր ութսուն ընտանիք լքել են հայրենիքը և նրանց ուր գնալը հայտնի չէ. նրանց խարաջից, խսպենջից և այլ հարկերից ոչ մի եկամուտ չի ստացվել»<sup>81</sup>:

Վերելում բերված փաստերը լիովին բացահայտում են Օսմանյան պետության կողմից նվաճված վայրերում, հատկապես պատմական Հայաստանի տարածքում բնակչության նկատմամբ կիրառվող խտրականության, ծանր հարկապահանջության և զանազան չարաշահումների և կոլոպուտի հետևողական քաղաքականությունը:

### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հողատիրության և հարկապահանջության ժամանակաշրջաններին վերաբերող հարցերը ուսումնասիրված են նաև Մ. Չուլայյանի, Ա. Համբարյանի, Ե. Սարգսյանի, Գ. Ղազարյանի, Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակում և այլ երկերում: Մենք այս գլխում աշխատել ենք կանգ առնել հատկապես վերջին շրջանում լույս տեսած թուրքական արխիվային նյութերի և այլ ուսումնասիրությունների վրա:

2. O. L. Barkan, XV ve XVI- ci asirlarda Osmanli Imparatorlugunda zirai ekonominin hukuki ve mali esaslari, birinci cilt, Kanunlar, Istanbul, 1945, s. LXIV.

3. Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում (XVI-XVIIդդ. Կանոննամաներ), Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Չուլայյանի, Երևան, 1964, էջ 34, 39, 41, 48, 77, 85:

4. Նույն տեղում, էջ 19:

5. Տե՛ս ՊԲՀ, 1966, թիվ 2 (33), էջ 276:

6. Տե՛ս Kanun-name-i Mehmed Fatih, Kanun-name-i Ali Osman (M. Arif "Tarih-i Osmani encumeni mecmuasi", Istanbul, 1330. Kraelitz-Grei fenhorst Fr., Kanun-name Sultan Mehmeds des Froberers, Die altesten Osmanischen Straf und Finanzgesetze, Mitteilungen zur Osmanischen Geshichte, B. I. Wien, 1921/22, s. 13-58.

Լատինատառ թուրքերենով լույս է ընծայել Օ. Լ. Բարկանը, տե՛ս նշվ. աշխ., էջ 387-95:

7. "Османская Империя" Сборник статей, М., 1966, стр. 20.

8. Mehmed Arif, Kanun-name-i Suleyman, Kanun-name-i Ali Osman, "Tarih-i Osmanni encumeni mecmuasi", Istanbul, 1329 (արարատառ):

9. Книга законов султана Селима I., Публикация текста, перевод, терминологический комментарий и предисловие А. С. Тверитиновой, М., 1969.

10. Закон за земята 1609 г., Превод на Гьльб Гьльбов, Турски извори за историята на правото в българското земи, т. I, София, 1961, стр. 129-161.

11. Օսմանյան պետության կազմավորման շրջանում առաջին դաֆթարը գրի է առնվել 1396 թ.: Սակայն վիլայեթների գրանցման մատյանները լայն չափով գործադրության մեջ են մտել XVI դարից սկսած:

12. И. А. Абуладзе, Канун-наме Арзрумского вилайета 1592 г., "Известия института рукописей АН Грузии", т. 3, Тбилиси, 1961, стр. 53-85.

13. H. Tüncer, Osmanli İmparatorluğunda toprak kanunlari, Ankara, 1965.

14. Օ. Լ. Բարկան, նշվ. աշխ., էջ :

15. Դ. Թյունջեր, նշվ. աշխ., էջ 17:

16. Նույն տեղում, էջ 18:

17. Տե՛ս Սիկն, 1937, N53, s. 335.

18. Մ. Զուլպյան, Արեւմտյան Հայաստանը XVI-XVIIIդդ., Երեւան, 1980, էջ 257:

19. Ա. Համբարյան. Գյուղացիության ճորտական կախվածության մասին Արեւմտյան Հայաստանում XIX դարի վերջին քառորդում եւ XX դարի սկզբում (ՊԲՀ, 3(30), 1965, էջ 139):

20. А. С. Тверитинова, К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании в Османской империи XV-XVI вв., Ученые записки института востоковедения. Т. XVII, М., 1959, стр. 26.

21. H. Tüncer, Osmanli İmparatorluğunda toprak hukuku, arazi kanunlari ve kanun aciklamalari, Ankara, 1962, s. 462.

22. Տե՛ս Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում, էջ 22:

23. Մ. Բոջոյան, «Այանլըք եւ դերեբեյլիք ինստիտուտների մասին, «Լրագրեր», 1981, էջ 57:

24. Aşıkpaşazade, Tevarih-i Ali Osman, Istanbul, 1913, s. 20 (արարատառ)

25. Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում, էջ 21:

26. Джихан-нюма и фезлике Кятиба Челеби, как источник по истории Армении ( XVIIв.), предисловие, перевод и комментарии Аветиса Папазяна, Ереван, 1973, стр. 55-75.

27. Մ. Զուլպյան, նշվ. աշխ., էջ 202:

28. Թուրքական աղբյուրներ, Գ. Գ., Երեւան, 1967, էջ 25:

29. Джихан-нюма и фезлике Кятиба Челеби..., стр. 78.

30. Նույն տեղում, էջ 77:

31. Նույն տեղում, էջ 83, 86:

32. А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении XVI-XVII вв., Ереван, 1972, стр. 86.

33. Մալաթիայի լիվայի 1528 թ. կանուննամնում նշված է, որ «որոշ գյուղերում ու դաշտերում տասանորդի որոշ մասը մուկաթա է արծա-

- նագրված» (տես Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 92:
34. Аграрный строй..., стр. 99. Մալիքանեի վերաբերյալ Ալի Չաուշի բնութագրումը նույնությամբ համընկնում է XVII դարի մի այլ թուրք պատմագիր Ավնի Օմեր է ֆենդիի հաղորդած տվյալների հետ: (տես «Kanun-i Osmani mefhumî defter-i hakani», "Belleten", 1951, s. 59.).
35. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 53:
36. Տե՛ս Մ. Բոջոլյան, «Այանլըք եւ դերեբեյլիք ինստիտուտների մասին, «Լրաբեր», 1981, թիվ 9, էջ 52-53:
37. Şen u M. Z. Pakalin, Tarih terimleri ve deyimleri sözlüğü, c. 1, Istanbul, 1946, s. 947.
38. Բառացի նշանակում է գետահովտի տիրակալ, հովտապետ:
39. Մ. Բոջոլյան, նշվ. աշխ., էջ 59:
40. «Թուրքական աղբյուրներ», Հ. Գ., էջ 40-41:
41. Լույն տեղում, էջ 240-241:
42. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վարդա Առաքելյանի, Երևան, 1988, էջ 36:
43. "Османская Империя" Сборник статей, М., 1986, стр. 165.
44. Թ. Ավդալբեկյան, Գլխահարկը Թուրքիայում XVII-XVIII դարերում հայ պատմագրության տվյալներով, ՊԲՀ, 1959, նո. էջ 178:
45. Անթրոնական գանձվող հարկեր:
46. Belleten, 1969, N 129, s. 24-34.
47. А. С. Тверитинова, Второй Трактат Кочи бая, "Ученые записки института востоковедения", М-Л., 1953, стр. 251.
48. Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 177:
49. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 46:
50. Г. М. Керчимова, Шарият и его социальная сущность, М. 1978, стр. 189.
51. Մանր ժամանակագրություններ XII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 563-584:
52. Լույն տեղում, էջ 464:
53. Մ. Զուլայան, Արևմտյան Հայաստանը, էջ 293:
54. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 65:
55. Լույն տեղում, էջ 45, 108:
56. Լույն տեղում, էջ 80:
57. Լույն տեղում, էջ 29:
58. Լույն տեղում, էջ 94-97:
59. Մ. Զուլայան, Արևմտյան Հայաստանը, էջ 306:
60. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 95:
61. Ըստ Էվլիա Չելեբիի տվյալների, Դիվրիկի լիվան XVI դ. մտնում էր Սիվասի էյալեթի մեջ: (Տե՛ս Թուրքական աղբյուրներ, Հ. Գ., էջ 25):
62. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 53:
63. Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 418:



64. Առաքել Ղավրիժեցի, էջ 18-19:
65. Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում, էջ 27, 44:
66. Նույն տեղում, էջ 27:
67. Երեմիա Քեօնիլոճեան, Պատմութիւն համառօտ ՂԾ տարւոյ Օսմանցւոց թագաւորացն, աշխատասիրութեամբ ժ. Մ. Ավետիսյանի, Երեւան, 1982, էջ 200:
68. Ղիվան հայոց պատմութեան, հ. ժ., էջ 84:
69. Գ. Փափազյան, Սատենադարանի պարսկերէն հրովարտակները, հ. 1, Երեւան, 1956, էջ 30:
70. Ղիվան հայոց պատմութեան, հ. ժ., էջ 223:
71. Մ. Զուլայան, Արեւմտյան Հայաստանը, էջ 222:
72. Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում, էջ 90:
73. Նույն տեղում, էջ 108:
74. Նույն տեղում, էջ 106:
75. Նույն տեղում, էջ 78:
76. Նույն տեղում, էջ 81:
77. Նույն տեղում, էջ 104:
78. Նույն տեղում, էջ 63:
79. Նույն տեղում, էջ 75:
80. Նույն տեղում, էջ 31:
81. Նույն տեղում, էջ 31-32:

## **Պատմական Հայաստանը բուրք աշխարհագիրների երկերում**

Թուրքական աշխարհագրական գրականության զարգացման համար որոշակի աշխատանքներ են կատարվել դեռևս 15-րդ դարում: Նախ, թարգմանվել են բավականաչափ թվով արաբերեն և պարսկերեն աշխարհագրական գրքեր, այնուհետև 16-րդ դ. թուրք առանձին աշխարհագիրներ սկսել են զբաղվել Միջերկրական ծովի ավազանի քարտեզագրությամբ: Այդ տեսակետից կարելի է հիշատակել փիթի Ռեխի «Բահրիե»-ն (Ծովագնացություն), Մեհմեդ Ալըքի «Մանագիր ալ-ավալիմ» (Աշխարհի տեսարաններ) աշխատությունները:

Այնուհանդերձ, թուրքական պատմա-աշխարհագրական գրականությունը իր բազմակողմանի զարգացման հասավ 17-րդ դարում:

17-րդ դարի թուրքական պատմագրության և աշխարհագրության ականավոր ներկայացուցիչներ Զյաթիբ Չելեբին, Եվլիա Չելեբին, Մյունեջջիմ բաշին իրենց երկերում չափազանց հարուստ նյութ են տալիս Մերձավոր Արևելքի, Եվրոպայի հարավ-արևելյան և կենտրոնական շրջանների մի շարք երկրների մասին: Թուրք աշխարհագիրները պատմական և աշխարհագրական կարեւոր տեղեկություններ են տալիս նաև Հայաստանի մասին:

Զյաթիբ Չելեբին (1609-1657) տվյալ ժամանակաշրջանի օսմանյան իրականության մեջ բազմակողմանի զարգացած անձնավորություններից մեկն էր համարվում: Զյաթիբ Չելեբին հանրահայտ է ոչ միայն որպես ականավոր թուրք աշխարհագիր. նա իր ավանդն է ներդրել գիտության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ պատմությունը, փիլիսոփայությունը, մատենագիտությունը և այլն: Նրա աշխատությունները, որոնք իրենց մեջ պարունակում են հարուստ փաստական տեղեկություններ, լայն ուշադրության են արժանացել ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս, Եվրոպայում: Քանի որ նա առաջինն է եղել, որ հատուկ ուշադրություն է դարձրել եվրոպական գրականության թարգմանության գործին և իր երկերում օգտագործել է մեծ թվով նյութեր օտար աղբյուրներից:

Ռուս գիտնական Ակադ. Վ. Բարթոլդը մահմեդական գրականությունը բնութագրելիս, Զյաթիբ Չելեբիի աշխատություններին տվել է հետևյալ գնահատականը.

«17-րդ դարը առնչվում է Քյաթիբ Չելեբիի գործունեության հետ, որը ի միջի այլոց գրել է գիտության և գրականության բոլոր ճյուղերին վերաբերող մի ընդարձակ մատենագիտական աշխատություն: Նրա այլ աշխատություններից ուշագրավ է աշխարհագրական երկը, որտեղ կիրառված է եվրոպական աշխարհագրական գիտության նյութերի համեմատության առաջին փորձը, մահմեդական տվյալների հետ»<sup>1</sup>:

Իսկ մի այլ ռուս պատմաբան Ակադ. Ի. Կրաչկովսկին իր թուրքական աշխարհագրական գրականության մեջ հատուկ զուլխ է նվիրել Քյաթիբ Չելեբիի աշխատություններին, անվանելով նրան գիտնական պոլիգիտոր, աշխարհագրագետ, և համարել նրան թուրքական գրականության ականավոր գործիչներից մեկը, մատենանշելով, որ «նրա բարեխղճությունը թույլ չի տվել, որպեսզի նա աչք փակի Արեւմուտքից եկող փաստերի դիմաց: Իր ուժերի ներածի չափ նա ձգտել է օգտագործել բոլոր նորությունները, չվախենալով, որ այդ նորամուծության համար ինքը կկշտամբվի և կամ նույնիսկ կամբաստանվի իբրև հերետիկոս»<sup>2</sup>:

Իրենց հետազոտություններում Քյաթիբ Չելեբիին վկայակոչում են նաև բազմաթիվ այլ պատմաբաններ, գնահատելով նրա աշխատությունները որպես հավաստի և լավագույններից մեկը թուրքական աղբյուրների մեջ:

Քյաթիբ Չելեբիի «Ճիհան-նյումա»-ն (Աշխարհի հայելի) հանդիսանում է առաջին ընդհանուր պատմա-աշխարհագրական աշխատությունը, որի թուրքերեն շարադրանքը նա ձեռնարկել է 1648 թ.: Գոյություն ունեն «Ճիհան-նյումա»-ի երկու անավարտ խմբագրություններ: Նրանցից առաջինը գրված է արաբական և պարսկական աղբյուրների հիման վրա: Եվրոպական երկրների վերաբերյալ բավարար նյութերի բացակայության պատճառով աշխատությունը մնացել է անավարտ: Այդ պատճառով, եվրոպական մի քանի ատլասների, հատկապես Գերհարդ Մերկատորի «Atlas minor»-ի թարգմանությունից հետո Քյաթիբ Չելեբին ձեռնամուխ է լինում «Ճիհան-նյումա»-ի երկրորդ խմբագրությանը և վերստին մաքրագրում է այն 1654 թ.:<sup>3</sup> Այստեղ ի հակադրություն եվրոպացի աշխարհագիրների, որոնց համար բնորոշ էր առաջին տեղը տալ արեւմտյան երկրներին, Քյաթիբ Չելեբին սկսեց իր շարադրանքը Ասիայի երկրների նկարագրությունից՝ ճապոնիայից:

«Ճիհան-նյումա»-ն թուրքերեն տպագրված առաջին գրքերից մեկն է. այն հրատարակվել է թուրքական առաջին տպարանի հիմնադիր, ծագումով հունգարացի Իբրահիմ Մյութեֆերրիկյան 1732 թ.: Այս հրատարակությունը ունի բազմաթիվ լրացումներ՝ կատար-

ված 17-րդ դարի արաբ աշխարհագիր Աբու-Բեքր իբն Բահրամի (մեռ. 1691 թ.) «Ճուրղա-ի Քաբիր» (Մեծ աշխարհագրություն) գրքի հիման վրա եւ մի շարք հավելվածներ ու քարտեզներ բերված հրատարակչի կողմից: Անհրաժեշտ է նշել, որ Իբրահիմ Մյուսթեֆերրիկան մտադիր է եղել «Ճիհան-Նյումա»-ն հրատարակել երկու հատորով, որոնցից առաջինը պետք է ընդգրկեր Ասիա մայր ցամաքի նկարագրությունը, իսկ երկրորդ հատորը՝ Եվրոպան, Աֆրիկան եւ Ամերիկան: Սակայն երկրորդ հատորը հրատարակելու նրա մտադրությունը չի իրագործվել:

«Ճիհան-Նյումա»-ի հրատարակությունը, որը ներկայումս հանդիսանում է մատենագիտական հազվագյուտ օրինակ, բաղկացած է ընդարձակ ներածությունից եւ առանձին գլուխներից, ուր տրված է ասիական երկրների նկարագրությունը: Քառասունմեկերորդ գլուխը նվիրված է Չայաստանի նկարագրությանը: Այս գլխում խոսվում է միայն Արեւմտյան Չայաստանի մասին, այսինքն այն նահանգների մասին, որոնք Կասր-ի Շիրինի (14 սեպտեմբեր 1639 թ.) թուրք-պարսկական պայմանագրով մնացին Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Քյաթիբ Չելեբին այս գլխում Արեւելյան Չայաստանի նկարագրությունը առանձին չի տվել: Արեւելյան Չայաստանը, որտեղ կազմվել էին Երեւանի, Նախիջեւանի եւ Ղարաբաղի խանությունները, այդ ժամանակ գտնվում էր Սեֆյան Պարսկաստանի գերիշխանության ներքո: Արեւելյան Չայաստանի նահանգների նկարագրությունը տրվում է 39-րդ գլխում, Վրաստանի եւ Ատրպատականի քաղաքների նկարագրության հետ:

«Ճիհան Նյումա»-ի հեղինակային ձեռագիրը, որը գտնվում է Ստամբուլի «Թոփկափը»-ի պալատում եւ այլ ձեռագրային ընդօրինակությունները վերջանում են Վանի վիլայեթի նկարագրությամբ: Չայտնի է, որ Քյաթիբ Չելեբիի գրչին է պատկանում «Արմենիա երկրի մասին» նկարագրության միայն մի մասը, այսինքն՝ Վանի եւ Կարսի վիլայեթները: Մնացած վիլայեթների նկարագրությունը վերցված է վերոհիշյալ աշխարհագրի՝ Աբուբեքր իբն-Բահրամի աշխատությունից եւ լրացված է «Ճիհան Նյումա»-ի հրատարակիչ Իբրահիմ Մյուսթեֆերրիկայի կողմից:

Այս կապակցությամբ Իբրահիմ Մյուսթեֆերրիկան իր «Չրատարակչի հավելվածում» ( tezeil ul-tabii )տալիս է հետելյալ բացատրությունը.

«Թյուրիմացությունից խուսափելու համար անհրաժեշտ է նշել, որ այս հետաքրքիր երկի հեղինակը՝ հանգուցյալ Քյաթիբ Չելեբին գրքի սկզբում խոստացել էր, որպեսզի այս հանրահայտ խմբագրության մեջ նկարագրի աշխարհի պետությունները եւ երկրները

դիրքը Արեւելքից դեպի Արեւմուտք: Այսուհանդերձ այն հասցվում է մինչեւ այստեղ: Հեղինակային ձեռագիրը եւ տարբեր մարդկանց մոտ գտնվող ընդօրինակությունները Վանի վիլայեթի նկարագրությունից այն կողմ չեն անցնում: Ի միջի այլոց, հարկ եղավ գրքի սկզբից մինչեւ այստեղ տալ մի շարք բացատրություններ, իսկ վերջում ամբողջացնել այն: Ինչպես ձեռագրում, այնպես էլ այս հրատարակության մեջ 41-րդ գլուխը ընդգրկում է «Արմենիա երկրի» նկարագրությունը: Հիշյալ երկրի բաժանման եւ սահմանագատման ժամանակ, մատնանշելով գոյություն ունեցող տարածայնությունները, Քյաթիբ Չելեբին ասել է՝ «Էրզրումի եւ Կարսի վիլայեթները, որոնք մտնում են Մեծ Արմենիայի մեջ, նկարագրելու ենք առանձին բաժիններով»: Այնուհայտ է, որ Քյաթիբ Չելեբին այս նկարագրությունները տալիս է զուգընթացաբար հարեւան երկրների տարբեր գլուխներում եւ բաժիններում: Հավանական է, որ այս գրքի շարունակությունը կորել է կամ անժամանակ մահը թույլ չի տվել հեղինակին կատարելու իր խոստումը: Ուստի, նվաստս՝ (այսինքն՝ Իբրահիմ Մյութեֆերրիկան - Ա. Փ.) որպեսզի գոնե մոտավորապես իրագործեն հանգուցյալի նպատակն ու ցանկությունը, խոնարհաբար, իմ հնարավորության սահմաններում տալիս են երկրների ու պետությունների նկարագրությունը, ձգտելով պահպանել նրա (Քյաթիբ Չելեբիի) աշխատության շարադրանքի ոճն ու հաջորդականությունը: Քանի որ Կարսի եւ Չըլդըրի վիլայեթները նախապես համառոտ հիշատակվում եւ նկարագրվում են Գյուրջիստանի եւ Ախասխայի (Ախալցխա) գլուխներում, ուստի մենք կսկսենք Էրզրումի վիլայեթի նկարագրությունից: Դրանով մենք արժանի հարգանք մատուցած կլինենք նաեւ նրանց, որոնք հաստատում են, որ հիշյալ վիլայեթի քաղաքները պատկանում են Մեծ Արմենիային: Այնուհետեւ կաշխատենք անցնել Ասիայի մյուս երկրների նկարագրության, որպեսզի ամենաբարձրյալ Աստոծ օգնությամբ գիրքը ամբողջացնենք: Երկրների եւ պետությունների նկարագրության ընթացքում մենք ընտրեցինք եւ կրճատեցինք Աբու Բեքր իբն Բահրամ ալ-Դիմեշկիի թարգմանած «Տոկրաֆիյա-ի Քաբիր» գրքի առանձին մասերը, իսկ երբեմն էլ դիմեցինք տեքստի անփոփոխ տեղադրման»<sup>4</sup>:

Այս ծանոթագրությունից պարզվում է, որ Քյաթիբ Չելեբիի «Ճիհան նյումա»-ում հրատարակչի կողմից ընդգրկվել են Աբու Բեքր իբն Բահրամի՝ «Մեծ աշխարհագրություն» երկը, որի հիմքում ինչպես հայտնի է, ընկած է Հոլանդացի գիտնականներ՝ հայր եւ որդի Բլեւուների հանրահայտ «Atlas major»-ի թարգմանությունը:<sup>5</sup>

«Ճիհան նյումա»-ին նվիրված մի շարք հետազոտությունների



հեղինակները նշում են, որ Աբու Բեքր իբն Բահրամը հանդիսացել է «Ճիհան Նյումա»-ի շարունակողը:<sup>6</sup>

Մենք հնարավորություն չունեցանք de visu ստուգելու, թե ինչպես է կատարվել այդ շարունակությունը հիշյալ ձեռագրերում: Դժբախտաբար, Ա. Ա. Աբդուլհակը չի մատնանշել ընդօրինակված այն ձեռագրերի տարեթվերը, որոնք ինչպես ինքն է նշում, ունեցել են Իբն Բահրամի կողմից կատարած շարունակությունը:<sup>7</sup> Ուստի, քանի որ «Ճիհան Նյումա»-ի հեղինակային ձեռագրում բացակայում է Իբն Բահրամի կողմից գրված շարունակությունը, ապա այն հարցը, թե վերջինս ե՞րբ եւ որտե՞ղ է կատարել իր շարունակությունը, մնում է դեռես չլուսաբանված: Ի միջի այլոց, վերելում բերված Իբրահիմ Մյուսեֆերիիկայի բացատրությունից երևում է, որ հատկապես նա՝ Իբրահիմ Մյուսեֆերիիկան է կատարել այն նյութերի ընտրությունը Իբն Բահրամի երկից, որոնք բացակայում են «Ճիհան Նյումա»-ում: Այսպիսով մեզ համար հավաստի է մնում այն փաստը, որ «Ճիման Նյումա»-ի հրատարակության վերջում՝ 422 էջից հետո բերված նյութերը փոխառնված են Իբն Բահրամի գրքից: Այսուհանդերձ, Իբն Բահրամի աշխատության բնագրի անմիջական կապը «Ճիհան Նյումա»-ի բնագրի հետ դեռես չի կարելի լիովին լուսաբանված համարել, քանի որ տվյալ հարցը չի ուսումնասիրված:

Իբն Բահրամի աշխատությունների նշանակության մասին անհրաժեշտ է գրել հատուկ հետազոտություն: Դեռես չի ուսումնասիրված օգտագործված աղբյուրների եւ նրա ստեղծագործության ինքնուրույնության մակարդակը: Պողսում եւ, թե նրա աշխատությունը ի՞նչ աստիճանի է փոփոխության ենթարկվել Իբրահիմ Մյուսեֆերիիկայի կողմից, երբ վերջինս ընտրել է կրճատել է իր օգտագործված նյութերը:

Ընդհանուր առմամբ շարադրանքի ոճը խիստ համանման է Քյաթիբ Չելեբիի շարադրանքի ոճին: Այսուհանդերձ, հեշտությամբ կարելի է նկատել, որ Իբն Բահրամի աշխատությունից փոխ առնված տեքստի լեզուն պարունակում է նշանակալից քանակությամբ արաբական տարրեր, չնայած որ քերականական կառուցվածքը թուրքերեն է: Ըստ երեւույթին, այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ Իբն Բահրամը ծագումով Դամասկոսից լինելով՝ հիմնականում ապրել է Զալեպում եւ ապա՝ Պոլսում եւ Քյաթիբ Չելեբիի նման լավ տիրապետելով թուրքերեն եւ արաբերեն լեզուներին, առավելապես արաբերենի ազդեցության տակ է մնացել:

Չարկ է նշել, որ «Ճիհան Նյումա»-ն շարադրված է մինչեւ 17-րդ դարը գոյություն ունեցող աշխարհագրական ու մասամբ պատմական երկերի ուսումնասիրության հիման վրա: Աղբյուրների շար-

քում, որոնք Քյաթիբ Չելեբին օգտագործել է «Ծիհան նյունա»-ն շարադրելիս, հիշատակվում են մեծ մասամբ արաբական, պարսկական եւ թուրքական աշխարհագրական երկերը, նաեւ եվրոպացի գիտնականների աշխատությունները:

«Ծիհան նյունա»-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացի առաջաբանում նշված աղբյուրներից, տեքստում հիշատակվում են նաեւ այլ աղբյուրներ: Այսպես, որպես աղբյուր 41-րդ գլխի համար օտագործված են նաեւ հետեւյալ աշխատությունները, Շերեֆ խան Բիթլիսիի՝ «Շերեֆ-նամե»-ն, Աշ-Շարիշիի՝ «Մակամաթ»-ը, Այնը Ալի էֆենդիի՝ «Կավանիի ալ-ի Օսման»-ը եւ Կոջա Նիշանջիի՝ «Թարակաթ ալ-Մամալիք»-ը: Բացի նշված աշխատություններից, Քյաթիբ Չելեբին գրի է առել նաեւ իր անձնական հուշերը, որոնք լոկ պատմական բնույթ են կրում՝ կապված սուլթան Մուրադ IV-ի արեւելյան արշավանքի հետ, որին մասնակից է եղել ինքը:

Քյաթիբ Չելեբիի օգտագործած աղբյուրների շարքում աչքի ընկնող տեղ է գրավում պարսիկ պատմաբան եւ աշխարհագրագետ՝ Համդալլահ Ղազվինիի «Նուսխաթ ալ-Կուլուբ» (սրտի զվարճանք) աշխատությունը, գրված՝ 1339 թ.: Այստեղ մի շարք երկրների նկարագրության հետ մեկտեղ բերվում է մոնղոլական պետության կողմից սահմանված Անդրկովկասի վարչական բաժանումը (1254-1255), ինչպես նաեւ տնտեսական-աշխարհագրական տվյալներ եւ տեղեկություններ հարկային սիստեմի մասին:

Ընդհանրապես Քյաթիբ Չելեբին ուշադրություն չի դարձրել օգտագործված աղբյուրի ժամանակի վրա եւ այդ է պատճառը, որ «Ծիհան նյունա»-ում տեղ են գտել մի շարք անճշտություններ: Օր., հարկային սիստեմի բոլոր թվերը, որոնք բերված են «Ծիհան նյունա»-ում, վերցված են «Նուզհատ ալ-Կուլուբ»-ից: Բայց չէ որ այս աղբյուրը կապված է մոնղոլական արշավանքի հետ եւ ոչ մի առնչություն չունի 17-րդ դ. Օսմանյան կայսրության հարկային սիստեմի հետ:

Անճշտություն կա նաեւ վարչական բաժանման մեջ: Քյաթիբ Չելեբին 410-րդ էջում նշում է, որ Կարսի վիլայեթը մտնում է Մեծ Հայքի սահմանների մեջ, մինչդեռ Կարսի նկարագրությունը տրված է Վրաստանի բաժնում, այսինքն՝ պարզապես հիմնված է «Նուզհատ ալ-Կուլուբ»-ում բերված վարչական բաժանման վրա:<sup>9</sup>

14-րդ դ. Համդալլահ Ղազվինին գրել է, որ «Սիսը, Թարսուսը եւ Կիպրոսը նրա (Հայաստանի) անենամեծ քաղաքներից են»: Բայց չէ որ Սիսը 12-14-րդ դդ. եղել է Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաքը, իսկ Կիպրոսը որոշ ժամանակով քաղաքակա-

նապես ենթարկվել է նրան: Բայց երբ Քյաթիբը Չելեբին գրում է, որ «Ներկայումս նրանց (հայերի) մայրաքաղաքը Սիսն է», չի համապատասխանում իրականությանը: 17-րդ դ. Սիսը, Թարսուսը եւ Կիպրոսը մտնում էին առանձին վարչական միավորի կազմում՝ Կիպրոսի վիլայեթի մեջ:<sup>9</sup>

Վանի վիլայեթի քաղաքների նկարագրության ընթացքում Քյաթիբը Չելեբին լայնորեն օգտագործել է Շերեֆ խան Իթլիսիի պատմական երկը՝ «Շերեֆ նամե»-ն<sup>10</sup>, գրված պարսկերեն լեզվով՝ 1596 թվականին: Քյաթիբը Չելեբին այս գրքից կատարել է տառացի քաղվածքներ կրճատումներով, իսկ երբեմն էլ տեքստի ինքնուրույն մշակումով: Այսպես ամբողջությամբ քաղվածաբար բերված են Բաղեշի, Խլաթի, Մուշի, Խնուսի, Սուքմանաբաղի, Խոշաբի, Բայանի, Խիզանի նկարագրությունները եւ մի շարք պատմական տեղեկություններ Վան քաղաքի եւ նրա վիլայեթի այլ շրջանների մասին, այն տարբերությամբ, որ փոխառնված նյութերը տրված չեն աղբյուրում գոյություն ունեցող հաջորդականությամբ:

Քյաթիբը Չելեբիի օգտագործած մյուս աղբյուրների մեջ, ըստ փոխառնված նյութերի ծավալին, առավել կարեւոր տեղ է գրավում հռչակավոր արաբ աշխարհագրագետ Աբուլ-Ֆիղայի (1273-1331) «Թակվիմ ալ-Բուլղան» (երկրների կարգավորում) աշխատությունը<sup>11</sup>:

Աբուլ-Ֆիղան, մյուս արաբ աշխարհագիրների նման Հայաստանը նկարագրում է Վրաստանի, Ատրպատականի եւ Աղվանքի հետ: Սակայն քաղաքների նկարագրության ընթացքում նա ստույգ նշում է, թե որ երկրին է պատկանում այս կամ այն քաղաքը: Օր., Թիֆլիսը «Թակվիմ ալ-Բուլղան»-ի մեջ նկարագրված է ընդհանուր բաժնում, բայց ցույց է տրված նաեւ, որ այն վրացական քաղաք է, Բայլականը (Փայտկարան) աղվանական, իսկ Բարդան եւ Սուլթանին՝ Ատրպատական<sup>12</sup>: Ըստ երեւութի Քյաթիբը Չելեբին խորանուխ չի եղել այս ծանոթագրություններից, քանի որ Հայաստանի քաղաքները հիշատակելիս նա տալիս է նաեւ վերոհիշյալ քաղաքների անունները:

Անհրաժեշտ է նշել, որ «Ճիհան նյումա»-ում տեղ են գտել որոշ անճշտություններ, որոնք վկայում են Քյաթիբը Չելեբիի եւ օգտագործված աղբյուրների հեղինակների սահմանափակ պատկերացումների մասին: Քյաթիբը Չելեբին հաճախ տեղեկություններ է բերում վաղ շրջանի աղբյուրներից, առանց որեւէ ուղղումներ մտցնելու նրանց մեջ: Այսպես, Հայաստանի սահմանները նկարագրելիս Քյաթիբը Չելեբին նշում է, որ «Ներկայումս Մեծ Արմենիան բաղկացած է Վանի, Կարսի եւ Երզրունի վիլայեթներից, իսկ փոքր Արմե-

նիան՝ Ադանայի եւ Մարաշի վիլայեթներին»<sup>13</sup>:

Ինչպես հայտնի է, Մեծ եւ Փոքր Հայքի բաժանումը կապված է հայ ժողովրդի վաղ շրջանի պատմության հետ: Սելեւկյանների տիրապետության ժամանակ մ.թ.ա. 4-րդ դ. վերջերից մինչեւ 2-րդ դարի սկզբները Հայաստանը բաղկացած էր երեք մասերից՝ 1. Փոքր Հայք, 2. Մեծ Հայք, 3. Ծոփք: Սելեւկյանների տիրապետության անկումից հետո նրանց բաժանվեցին Մեծ Հայքը եւ Ծոփքը, որովհետեւ նրանց կառավարիչները՝ Արտաշեսը եւ Ջարեհը իրենց անկախ հռչակեցին:<sup>14</sup>

Սրանից անենամեծ եւ հզոր պետությունը Մեծ Հայքն էր, որտեղ համարյա վեց դար թագավորում էին նախ Արտաշեսյանների՝ ապա Արշակունիների դինաստիան (189 թ. մ.թ.ա.-428 մ.թ.): Տիգրան II-ի տիրապետության (95-56 թթ. մ.թ.ա.) շրջանում, երբ Մեծ Հայքը հասել էր իր ամենաբարձր հզորության, Ծոփքը միանում է Մեծ Հայքին:

Ինչպես իրավամբ նշում է Ա. Տեր-Ղեւոնդյանը, արաբ մասնագետները նույնպես ստույգ տեղեկություն չեն արձանագրել «Մեծ Հայք» տեղանվան մասին: Նա, ուսումնասիրելով այս հարցը, գրում է, որ «Արաբական աղբյուրները Մեծ Հայքի փոխարեն օգտագործում էին Արմինիա անունը, իսկ Բյուզանդական Հայաստանը, որն այլ նահանգների հետ ընդգրկում էր նաեւ Փոքր Հայքը, նրանք կոչում էին Հայոց երկիր (բիլադ-ի արման): Ճիշտ է, ուշ շրջանում (13-րդ դ.) արաբ աշխարհագիր՝ Յակուտ ալ-սմավիի աշխարհագրական բառարանում հանդիպում ենք Մեծ Հայաստան անուններին, սակայն այստեղ առաջինը նշանակում է Իսլաթի թագավորությունը՝ Շահ արմենների իշխանությունը Հարավային Հայաստանում, իսկ երկրորդը՝ Հյուսիսային Հայաստանն է, որը Յակուտի մոտ հիշվում է որպես Թիֆլիսի երկիր»<sup>15</sup>:

«Ճիհան նյումա»-ում ճիշտ չէ պատկերված Մեծ Հայքը, որովհետեւ բոլորովին մոռացության է տրված Արեւելյան Հայաստանը: Զյաթիբ Չելեբին, ինչպես վերը նշեցինք, Հայաստանը նկարագրելիս՝ նկատի է ունեցել միմիայն Արեւմտյան Հայաստանը: Բացի այդ, 17-րդ դարում Արեւմտյան Հայաստանի տարածքում մտնում էին ոչ թե երեք, այլ հինգ վիլայեթներ՝ Վանը, Կարինը, Կարսը, Դիարբեքիը, Չըղըզը եւ մի քանի քրդական իշխանապետություններ:

Նկատի առնելով Զյաթիբ Չելեբիի եւ Համդալլահ Ղազվինիի Հայաստանի վարչական բաժանման տվյալները, անհրաժեշտ է տարբերել վաղ շրջանում գոյություն ունեցող Փոքր Հայքը Կիլիկիայի «Փոքր Հայքից», որը հիմնվեց 1080 թ. եւ գոյատևեց մինչե-

Լ 1375 թ.:

Լատինական ժամանակագիրները եւ միջնադարի այլ պատմագիրները Կիլիկիայի հայկական թագավորությունը անվանում էին «Փոքր Արմենիա», իսկ երբեմն էլ պարզապես «Արմենիա» (Armenia minor, Armenia): Կիլիկիայի հայկական թագավորության շրջանի հայկական աղբյուրները Կիլիկիան անվանում էին «Աշխարհ» կամ «Տուն», «Կիլիկիայի աշխարհ», կամ «Հայկական աշխարհ», ինչպես նաեւ «Սիսվան»<sup>16</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ արաբ աշխարհագիրները նույնպես որոշակի պատկերացում ունեին Կիլիկիայի հայկական թագավորության մասին: Արաբները Կիլիկիայի հայկական թագավորությունը հաճախ անվանում էին «Սիսի երկիր»: Յակուտ ալ-Համալին հիշատակում է այն որպէս «Հայոց սուլթան իբն Լավոնի երկիր» կամ պարզապէս «Իբն Լավոնի երկիր»<sup>17</sup>:

Ինչ վերաբերվում է Կիլիկիայի հայկական թագավորության տարածքին, ապա այն կազմվել էր բուն Կիլիկիայից եւ նրա սահմանամերձ մարզերից:

«Եհիան Նյունա»-ում Մարաշի վիլայեթի կազմում հիշատակվում են այնպիսի քաղաքներ, որոնք երբեւէ չեն ընդգրկվել նրա մեջ: Ինչպէս օր. Էլբիստանը, Այնթաբը, Մալաթիան, Կախտան եւ այլն: Անհրաժեշտ ուշադրություն չի հատկացված Կիլիկիայի արեւմտյան հատվածի նկարագրությանը: Մարաշի եւ Ադանայի վիլայեթների նկարագրությունները, որտեղ վարչական բաժանումը վերաբերվում է 17-րդ դարին, լրիվ պատկերացում չի տալիս Կիլիկիայի ամբողջական երկրամասի մասին: Կիլիկիայի հայկական թագավորությունը Միջերկրական ծովի ափին ավելի ընդարձակ տարածություն ուներ, քան այն ցույց է տրված «Եհիան Նյունա»-ում:

Նշենք նաեւ այն, որ Զյաթիբ Չելեբին մոռացության է տվել Հայաստանի մի շարք հանրահայտ քաղաքների եւ բերդերի նկարագրությունը՝ (ինչպէս Անին, Օլթին (Ուղթիք), Քանիսան եւ այլն), որոնց մասին խոսվում է թե՛ արաբական եւ թե՛ պարսկական աղբյուրներում:

«Արմենիա երկրի մասին» գլխում Դվինը եւ Դաբիլը համարվել են տարբեր հայկական քաղաքներ. նույնիսկ Դաբիլը (էջ 418) ընդգրկվել է Վանի վիլայեթի նկարագրության մեջ: Մինչդեռ Դաբիլն ու Դվինը միեւնույն քաղաքի տարբեր անվանումներն են: Դվինը հայկական անվանումն է, իսկ Դաբիլը՝ արաբական: Դվինը պատմականորեն երբեք չի մտել Վանի վիլայեթի մեջ: 17-րդ դարում այն մտնում էր Երեւանի խանության կազմի մեջ:



«Ճիհան Նյունա»-ի Հայաստանին վերաբերող նյութերի ռուսերեն առաջին գիտական թարգմանությունը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով եւ առաջաբանով կատարել եւ հրատարակել ենք առանձին գրքով 1973 թ. Երեւանի Արեւելագիտության ինստիտուտում:

17-րդ դարի թուրքական իրականության հանրահայտ դեմքերից է նաեւ թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբին, որը համաշխարհային արեւելագիտության մեջ մեծ ճանաչում է ստացել իր պատմա-աշխարհագրական բնույթի «Ուղեգրությամբ»: Նրան հաճախ անվանել են թուրքական իբն Բաթուբա կամ աշխարհաշրջիկ:

Էվլիա Չելեբին դեռեւս վաղ հասակից մեծ հակում է ունեցել դեպի աշխարհագրությունն ու երկրագործությունը: Չգտել է ճանապարհորդել, ծանոթանալ տարբեր երկրների ժողովուրդների լեզվին, մշակույթին, կենցաղին եւ սովորություններին: Նա ճանապարհորդել է տարբեր երկրներում, այդ թվում Փոքր Ասիա, Հայաստան, Զուրդիստան, Կովկաս, Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Եգիպտոս, Հարեշստան, Բալկանյան երկրներ, Ուկրաինա, Մոլդովա, Ղրիմ, Գերմանիա, Հոլանդիա, Լեհաստան:

Դեռեւս 1631 թ. Էվլիա Չելեբին իր առաջին շրջագայությունն է կատարում Կ.Պոլսում եւ նրա արվարձաններում: Մոտ 9-ը տարի տեւող շրջագայությունները նա գրի է առել իր «Ուղեգրության» առաջին հատորում: Այնուհետեւ նա տարբեր պաշտոնների բերումով մասնակցել է սուլթանական բանակի նվաճողական արշավանքներին: Էվլիա Չելեբին իր ուղեւորությունները կատարել է մերթ իբրեւ հոգեւորական՝ իման կամ մյուսեզին, մերթ իբրեւ բարձրաստիճան անձանց ուղեկցող խորհրդական, անձնական քարտուղար, երբեմն իբրեւ տուրքեր հավաքողի քարտուղար, սուրհանդակ, ռազմիկ եւ այլն:

Թուրք պատմագիր Նեջիբ Ասըմը հետեւյալ բարձր գնահատականն է տվել Էվլիա Չելեբու «Ուղեգրությանը».

«Էվլիա Չելեբին իսկական ուղեւոր է, պահանջվող բոլոր հատկանիշներով, հիանալիորեն նկարագրել է անցած եւ տեսած վայրերը եւ ըստ ամենայնի իրականացրել իր ուղեւորության նպատակները: Իր այցելած վայրերը նկարագրել է պատկերավոր լեզվով, հավաքել է բերանից բերան անցած ավանդույթները, գրի առել հասարակական շինությունների վրա գրած արձանագրությունները եւ կազմել ժողովրդական զանազան տարրերի վիճակագրությունները»<sup>10</sup>:

Ավադեմիկոսներ Ի. Կրաչկովսկին եւ Վ. Բարբուլդը եւս ըստ արժանավույն են գնահատել Էվլիա Չելեբիի ուղեգրությունը. «Էվլիա

Չելեբիի տասը հատորանոց աշխատությունը, - գրում է ակադ. Ի. Կրաչկովսկին, - որպես հուշեր, իր դարաշրջանը բնութագրող կարևոր փաստաթղթերից է, առաջնակարգ աղբյուր այդ ժամանակի պատմության համար, իսկ ակամատեսի աչքով մարդկանց եւ երկրների նկարագրությունը նույնքան կարեւոր եւ միակն է արեւելյան գրականության մեջ եւ ամեն տեսակետից պատմամշակութային ուսումնասիրությունների համար անսպառ աղբյուր է»<sup>19</sup>:

Իսկ ակադ. Վ. Բարթոլդը գրում է. «Էվլիա Չելեբիի «Ուղեգրությունը» թուրքերեն լեզվով յուրահատուկ աշխարհագրական երկ է, որը հարուստ է բազմաթիվ նյութերով (աշխարհագրական, ազգագրական եւ լեզվագիտական), իրենից շատ է ետ թողնում արաբական դասական աշխարհագրագետների աշխատությունները, թեեւ մյուս կողմից ընդգրկում է բազմաթիվ մտացածին տարրեր»<sup>20</sup>:

«Ուղեգրության» այն մասերը, որոնք շարադրված են ակամատեսի աչքերով, հակառակ գոյություն ունեցող չափազանցությունների եւ թերությունների, որոշակի արժեք են ներկայացնում եւ բովանդակում կարեւոր փաստեր եւ տվյալներ: Վստահություն չեն ներշնչում նրա լսողության, այսինքն առանձին մարդկանց պատմությունների հիման վրա շարադրված նյութերը: Հաճախ նա սնոտիապաշտ է, գուշակությունների հավանացող: Էվլիա Չելեբին կողմնակալ վերաբերմունք է ունեցել պատմական առանձին դեպքերի նկարագրության ընթացքում, մեծ տեղ հատկացնելով սուլթանական բանակի հաղթական գովերգման, այլ երկրների նվաճողական քաղաքականության փառաբանման, կողոպուտի եւ թալանի պատկերավոր նկարագրություններին: «Ուղեգրության» մեջ կարմիր թելի սման անցնում է իսլամի մոլեռանդությունը: Այնպես որ, անհրաժեշտ է տեսապես քննադատական մոտեցում ունենալ նրա տվյալների նկատմամբ:

1967 թվականին Արամ Սաֆրաստյանը «Ուղեգրության» հատորներից քաղվածաբար հայերեն հրատարակեց Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդներին վերաբերող նյութերը: Հարկ է նշել, որ թարգմանության որոշ մասերը Ա. Սաֆրաստյանը կրճատել եւ երբեմն էլ առանձին դեպքեր պատմողաբար է մատուցել հայ ընթերցողին: Էվլիա Չելեբիի «Ուղեգրության» առաջին հատորից, որը նվիրված է Ստամբուլի եւ շրջակայքի նկարագրությանը, Ա. Սաֆրաստյանը այլ նյութերի հետ հրատարակել է սուլթան Սուլեյման Կանունիի հաստատած վարչական, տնտեսական, զինվորական եւ այլ օրենքների այն մասերը, որոնք որոշ չափով առնչվում են Հայաստանի եւ անդրկովկասյան մյուս երկրների ժողովուրդների պատմության հետ:<sup>21</sup>

«Ուղեգրության» նյութերը ցույց են տալիս, որ Էվիա Չելեբին քաղաքների եւ բերդերի նկարագրության ընթացքում օգտվել է նաեւ արաբ, պարսիկ, հույն եւ հայ պատմագիրներից: Սակայն, նա իր օգտագործած պատմական աղբյուրների մասին ոչ մի լրացուցիչ տեղեկություն չի տալիս: Նա չի նշել օգտագործված պատմագիրների կամ նրանց երկերի անունները: Այսպես, Էվիա Չելեբին Թոքթաթի բերդի նկարագրության ընթացքում իր օգտագործած արաբական, պարսկական, հունական աղբյուրների հետ հիշատակում է նաեւ հայկական աղբյուրները, առանց ստույգ նշելու հեղինակներին<sup>22</sup>: Պատմական Հայաստանի տարածքում գտնվող գյուղերի եւ քաղաքների նկարագրության ընթացքում, ժողովրդի կենցաղն ու սովորությունները նկարագրելիս, օգտագործել է նաեւ հայերեն բառեր, տալով նրանց ճիշտ իմաստը (օրինակ՝ վանք, գերան, վարդապետ, մշակ, մեռն, կաթնապուր, կենցաղային օգտագործման առարկաների անուններ եւ այլն):

Հայտնի է, որ հայերը Փոքր Ասիայի եւ Եվրոպայի շուկաներում լայն առևտրական գործունեություն են ծավալել, եւ մեծ է նրանց ներդրած լուծան արհեստի զարգացման ասպարեզում: Էվիա Չելեբին մի շարք հայկական քաղաքների նկարագրության ընթացքում որոշ տեղեկություններ է տալիս արհեստագործական արտադրության կամ արդյունահանվող ապրանքների մասին, սակայն այդ տվյալները չենք կարող ամբողջական համարել, քանի որ առանձին տեղերում դրանք սահմանափակ բնույթ են կրում: Այս տեսակետից նա իր ուշադրությունը կենտրոնացրել է հատկապես տվյալ ժամանակ առավել կարեւորություն ներկայացնող քաղաքների վրա: Այսպես.

«Աշխարհում Տրապիզոնի ոսկերիչների նման կատարելագործված վարպետներ չկան: Այստեղ այնպիսի սանձեր, բուրվառներ, վարդաքիլի ամաններ, սրեր, խոհանոցի դանակներ են պատրաստում, որոնց նմանը այլ երկրներում հնարավոր չէ ճարել» - գրում է Էվիա Չելեբին: «Բիթլիսում պատրաստված «շեյխանի» եւ «գիարդին» անունով հայտնի սրերը նմանը չունեն եւ ոչ մի երկրում: Դերձակները հիանալի վարպետներ են: Կաշեգործների արհեստանոցներում, ներկատներում դեղին, վարդագույն, երկնագույն, կանաչ, մանիշակագույն եւ այլ բազմերանգ ընտիր կոշիկներ են պատրաստում: Այստեղ այցելուները դրանք գնում են նվիրատվության համար: Այստեղ արտադրվող կաշիները արտահանվում են մինչեւ Ֆրանգիստան (նկատի ունի Եվրոպան) ու այնտեղ բարձր են գնահատվում»<sup>23</sup>:

Էվիա Չելեբին իր «Ուղեգրության» մեջ Զյաթիբ Չելեբիի նման

ստույգ պատկերացում չի տալիս պատմական Հայաստանի տարածքի, նրա սահմանների, հնագույն քաղաքների, բերդերի եւ գյուղերի մասին: Օր., տվյալ ժամանակաշրջանում հանրահայտ հայկական քաղաքներ Վանի, Կարինի, Բաղեշի, Կարսի, Դիարբեքիի նկարագրություններից երբեմն այն տպավորությունն է ստացվում, որ կարծես այդ քաղաքներում հայեր չեն ապրել: Նա հիմնական շեշտը դնում է մզկիթների, մեդրեսեների, բաղնիքների եւ արաբական կրոնական շինությունների նկարագրության վրա: Ծիշտ է նկատել Մ. Ջուլպյանը, որ էվլիա Չելեբին խուսափել է գրել Հայաստանի մասին, որպես երբեմնի գոյություն ունեցած մի պետության, ինչպես նաեւ ոչ վաղ ժամանակաշրջանում գոյություն ունեցած հայկական թագավորությունների մասին<sup>24</sup>: Ընդհանրապես նրա մոտ հասկացողություն էլ չկա հայկական հողերի մասին: Բայց մեծ մասամբ հայերով բնակեցված պատմական Հայաստանի տարածքը նրան ստիպել է երբեմն կանգ առնելու նրանց գոյության վրա: Այդ տեսակետից «Ուղեգրության» մեջ կան բավականաչափ կարելուր նյութեր ոչ միայն պատմա-աշխարհագրական բնույթի, այլեւ տվյալ դարաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության եւ պատմական իրադարձությունների վերաբերյալ:

Կարինի, Երզնկայի եւ այլ վայրերի նկարագրությունների ընթացքում որոշակի հետաքրքիր տվյալներ է հաղորդում հայերով բնակեցված գյուղերի, նրանց տարազի եւ սովորությունների մասին:

«Ընդհանրապես Երզրունի (Կարինի) արվարձաններում մեծ մասամբ հայ ռեայաներ են ապրում, որոնք ունեն 13 եկեղեցիներ: Երեւելի մարդիկ, ըստ իրենց սովորության, կրում են կապույտ ասվից պատրաստված հագուստներ, իսկ գլուխներին փաթաթում են սրբիչներ: Սովորական մարդիկ հագնում են շալից պատրաստված հագուստ, իսկ ոտքերին՝ պարզ տրեխներ: Նրանք վերին աստիճանի աշխատասեր ռեայաներ են: Հայ կանայք տափակագլուխ են եւ կրում են սպիտակ ծածկոցներ»<sup>25</sup>:

Հաճախ ուշադրություն է դարձվում առեւտրա-քարավանային հաղորդակցության ճանապարհներին, դրանց ուղղություններին, հեռավորության վրա:

«Դեվիրան գյուղը հնուց ի վեր հայերով բնակեցված, մոտավորապես 100 տներով գյուղ է: Գյուղը գտնվում է Կելկիտ գետի մոտակայքում, Ակշարայի հովտում: Այստեղից դեպի արեւելք գնալով, մենք 4 ժամվա ուղեւորությունից հետո հասանք Էնդերուս գյուղի իջեւանատունը: Այն հայկական բարեկեարգ գյուղ է եւ գեա-

մեք մոտ 100 տներով: Գտնվում է նույնպես Ակշարայի հովտում, Շաբին-Կարահիսարի մոտակայքում»<sup>26</sup>:

Այլ տեղերում էվլիա Չելեբին խոսում է հայերով եւ մահմեդականներով բնակեցված գյուղերի, քաղաքների, ինչպես նաեւ քաղամասերի մասին<sup>27</sup>, բայց նա, որպես թուրք ճանապարհորդ, իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է մահմեդական կրոնական շինությունների վրա եւ աշխատում է ճշգրիտ տեղեկություններ տալ գոյություն ունեցող մզկիթների մասին: Օրինակ՝ «Էրզրումի մզկիթների նկարագրության» ընթացքում նշում է, որ «այնտեղ կան 77 մզկիթներ եւ նիշաներ (փոքր սրբատեղի), որոնցից ամենամեծը համարվում է Ուլու Ջամին (մեծ մզկիթ)»<sup>28</sup>: Սակայն, էվլիա Չելեբին անտեսում է այն հարցը, որ այդ մզկիթների մեծ մասը նախկինում եղել են եկեղեցիներ: Դեռեւս 1662 թ. Հակոբ Կարնեցին իր «Տեղագիր Վերին հայոց» ժամանակագրության մեջ հաղորդում է, որ իր ծննդավայր Էրզրումում թուրքերը քանդել են մոտ 10 հայկական եւ հունական եկեղեցիներ, իսկ մի մասն էլ վերածել են մզկիթների<sup>29</sup>:

Էվլիա Չելեբին իր ճանապարհորդության ընթացքում կանգ է առել նաեւ ժողովուրդների կրոնական պաշտամունքների, ինչպես նաեւ ուխտատեղիների նկարագրության վրա: Սովորաբար, հայկական եկեղեցիներին վերաբերող նրա տվյալները խիստ սահմանափակ են: Այնուհանդերձ, է. Չելեբին անտարբեր չի անցել միջնադարում կառուցված հանրահայտ վանքերի կողքով եւ հնարավորության սահմաններում կարելու էր նյութեր է հաղորդել նրանց մասին: Այդ տեսակետից առավել հետաքրքրություն են ներկայացնում Էջմիածնի, Մշո Ս. Կարապետ, Վարագ եւ Ախթամարի վանքերը: Էջմիածնում նա ակնատես է եղել մեռոնի արարողությանը, բայց ինչպես հատուկ է էվլիա Չելեբուն, այն նկարագրված է ավելորդ չափազանցություններով եւ երեւակայական պատկերներով: Առավել ուշադրության արժանի է Մշո Ս. Կարապետ վանքին վերաբերող նյութերը: Այստեղ ցույց է տրված, որ վանական կալվածքների գոյությունը վտանգից զերծ պահելու համար, վանքի հոգեւոր առաջնորդները ինչպիսի մեծ նվիրատվություններ են կատարել թուրք փաշաներին:

«Չանըը քլիսեն» Մշո դաշտի հյուսիսում, խիտ անտառների եւ այգեստանների միջեւ ընկած, դեպի երկինք խոյացած հոյակապ գմբեթներով մի վիթխարի վանք է: Հիմնադիրը հայտնի չէ: Վանքի չորս կողմում պատրիարքի եւ հարյուրավոր վարդապետների կացարաններ կան: Վանքում ամեն օր հազարավոր ամաններով առատ կերակուր է տրվում ուխտավորներին: Տոնական օրերին



հարյուր ոչխար, հինգ կով է մորթվում ու հիսուն սոմար ցորենի հաց է թխվում եւ բաժանվում հյուրերին:

Վանքն ունի 300-ից ավելի վարդապետներ եւ աշակերտներ (սարկավագ), որոնցից յուրաքանչյուրը երգում է Քրիստոսի վանքում եւ հատուկ եղանակով Ավետարանը այնպես է կարդում, կարծես մարդկանց սրտերին Քրիստոսի շունչ է փչում: Գյուրերին մեծ պատիվ եւ հարգանք են տալիս, կաթ խմեցնում, խուրմա են տաք երկրների այլ պտուղներ կերակրում, ամեն գիշեր հարյուրավոր մետաքսյա սփռոցներ, գերբաֆից (ոսկեթել) անկողիներ փռում եւ այդպես են սպասարկում: Վանքի էվկաֆը շատ մեծ է: Փաշային հինգ քիսե եւ անսահման նվերներ են տալիս»<sup>30</sup>:

Շատ երկրներում ճանապարհորդած եւ շատ բան տեսած էվլիա Չելեբին ասա թե ինչպիսի գուներդ համեմատություններ է կատարում Ախթամարի վանքը նկարագրելիս:

«Բերդի միջի հիշյալ վանքը հնագույն վանքերից է: Երեւանի մոտի Ուչ-քիլիսեն (Էջմնածինը), Նախիջեւանի մոտի Եդի-քիլիսեն եւ Երուսաղեմի Կամամեի եկեղեցին սրա հետ համեմատած՝ աննշան են: Այս վանքի կառուցվածքը, սենյակները եւ այլ շինությունները եթե առանձին-առանձին նկարագրենք, շատ երկար կտևի»<sup>31</sup>:

«Ուղղեգրության» մեջ կարելու տեղ են գրավում նաեւ է. Չելեբիի կողմից նկարագրված քաղաքական դեպքերը, որոնց մի մասին ինքը մասնակից եւ ականատես է եղել: Այդ տեսակետից ուշադրության արժանի են թուրք-իրանական երկարատե պատերազմներին վերաբերող նյութերը: Գայտնի է, որ այդ պատերազմները ծանր հետեւանքներ ունեցան ոչ միայն Գայաստանի, այլեւ Անդրկովկասի հարեւան մյուս ժողովուրդների վրա:

Էվլիա Չելեբին բազմաթիվ փաստեր է բերում օսմանյան եւ պարսկական զորքերի բախման հետեւանքով տեղի ունեցած քաղաքների եւ գյուղերի կործանման մասին: «Դետագայում 940 (1533-34) թվականին Մուլեյման խանը Նախիջեւանի վրա արշավելու ընթացքում, հրամայեց մահմեդական իր զորքերին նվաճել Երեւանը: Նա քանդել է տալիս փոքրածավալ բերդը ամբողջությամբ եւ մեծ ավարով վերադառնում իր մայրաքաղաքը: Գետագայում, Մուրադ III-ի օրոք, Աջեմի երկրի (Պարսկաստան) վրա սերդար է նշանակվում մեծ վեզիր Ֆարիադ փաշան, որը կողոպտում ու թալանում է Գեմչեն (Գանձակ), Շիրվանը, Շամախին, Երեւանը եւ Նախիջեւանը, ավերում եւ քարը քարի վրա չի թողնում շահի որդու եւ նրա մերձավորների դոյակները»<sup>32</sup>:

Կարելի է շատ օրինակներ բերել «Ուղղեգրությունից», որտեղ էվլիա Չելեբին ամենուր գովերգում է Օսմանյան կայսրության

նվաճողական քաղաքականությունն ու գործադրված արյունահեղությունները, թալանն ու կողոպուտը, սակայն բավարարվեցնք այսքանով:

Հիշատակության արժանի է նաև 17-րդ դարի թուրք պատմագիր Մյունեջջիմ Բաշին (պալատական գլխավոր աստղագետ, Դերվիշ Ահմեդ էֆենդի, մահացել է 1702 թ.): Նրա աշխատանքը պատմագիտական բնույթ ունի, սակայն նա կանգ է առել նաև պատմա-աշխարհագրական հարցերի վրա: Մյունեջջիմ Բաշին թուրք պատմագիրներից առաջինն է, որ փորձել է պարսկերեն, թուրքերեն և արաբերեն սկզբնաղբյուրների հիման վրա գրել համաշխարհային պատմություն արաբերեն լեզվով: Նա սուլթան Մեհմետ IV-ի պալատում վարել է աստղագուշակի պաշտոնը: Նրա աշխատանքը՝ «Ջամի աղ-դուվալ» (Պետությունների պատմության հավաքածու, կամ Տիեզերական պատմություն), թարգմանվել է թուրքերեն նրա մահից հետո, 1720-1730 թթ.: Թուրքերեն թարգմանությունը, որը կատարել է Ահմեդ Նեդիմը, կրում է «Սահաիֆ ուլ-ախթար» (Տեղեկությունների էջեր) խորագիրը, որը հրատարակվել է 1868 թվականին, երեք հատորով: Առաջին հատորում Մյունեջջիմ Բաշին կանգ է առել հայ ժողովրդի համառոտ պատմության վրա: Այն տրված է չորս մասով ըստ հարստությունների՝ 1. Հայկյաններ, 2. Արշակունիներ, 3. Բագրատունիներ, 4. Ռուբինյաններ: Երկրորդ հատորում արաբական աղբյուրների հիման վրա պատմա-աշխարհագրական նյութեր է հաղորդում նաև Հայաստանի մասին: Մյունեջջիմ Բաշին գրում է.

«Արմինիայի վիլայեթը մեծ է: Նրա արեւմտյան կողմը Արմեն<sup>33</sup> վիլայեթն է, արեւելյան եւ հարավային կողմը՝ Առանի (Աղվանք), Ատրպատականի սահմաններն ու Միջագետքի մի քանի քաղաքներն են: Հյուսիսային կողմը նորից Առանի սահմաններն են: Այս երկրի մեծ մասը լեռնային է եւ բաժանվում է երեք մասի: Մի մասը՝ Կալիկալա (Կարինը), Շիմշատ (Աշունշատ) եւ նրանց հարակից շրջաններն են, մյուս մասը՝ Ջուրզան եւ Բաբալան քաղաքներն ու դրանց միջեւ ընկած տարածությունը: Երրորդ մասը՝ Բարդան (Պարտավ), Բաբ ուլ-Աբվաբը եւ հարակից մասերը: Որոշ հեղինակներ Արմինիան բաժանում են չորս մասի, որից մի մասը Բայլականը (Փայտկարան) եւ Շիրվանն է եւ դրանց միջեւ ընկած տարածությունը: Մի մասը Ջուրզանն է, որ Թիֆլիս է կոչվում, եւ Ֆիրուզ Աբադի ու Լակզի (Լեզգի) գավառները: Հաջորդ մասը՝ Շիրվանն ու Նախճավանն են, իսկ մյուս մասը իսլաբերդը, Ախլաթը (Խլաթ), Էրզնամը եւ նրանց հարակից մասերը: Յուրաքանչյուր նահիեում անկախ վալի է իշխում: Արմինիայի եւ Ռումի կլիմայի<sup>34</sup> միջեւ գտնվող

քաղաքներն են Կաստանոնուն, Սինուպը եւ Սամսունը: Արմինիայի սեւծովյան նավահանգիստը Տրապիզոնն է: Նրա (Արմինիայի) նշանավոր քաղաքները հետեւյալներն են. Էրզինջանը (Երզնկա), Մուշը, Արզնը (Արծն), Մալազլերտ (Մանազկերտ), Բիթլիսը (Բաղէշ), Ախլաթը, Արճեշը, Ոստանը, Շիրվանը եւ Դաբիլը (Դվին), որը մայրաքաղաք է»<sup>36</sup>:

Մյունեջիմ Բաշիի մոտ շփոթւթյուն է առաջացել օգտագործած արաբական աղբյուրների նկատմամբ, քանի որ նրա տվյալները արաբական աղբյուրների հետ համեմատելիս նկատվում է, որ դրանք ամբողջական չեն: Ա. Սաֆրաստյանը նկատել է, որ Մյունեջիմ Բաշիի մոտ հայկական տեղանունների եւ անձնանունների մեծ մասը տրված են խեղաթյուրված ձեւով<sup>36</sup>: Ինչպես նշվեց, Մյունեջիմ Բաշիի աշխատանքը գրված է նախ արաբերեն եւ հետո թարգմանվել է թուրքերեն: Տառադարձման ընթացքում առաջ են եկել որոշ սխալներ, հավանաբար թարգմանչի անփութության հետեւանքով:

Սովորաբար, արաբական աղբյուրներում Հայաստանը ներկայացվում է առանձին նահանգների ձեւով, առանց ստույգ սահմանագատման: 13-րդ դ. սկզբին արաբական խալիֆաթը անդրկովկասյան երկրներից նվաճված երկրամասում սահմանեց նոր վարչական բաժանում, որի հետեւանքով Հայաստանը, Վրաստանը եւ Աղվանքը կազմեցին մեկ լայնարձակ վարչական միավոր Էրմինիա (կամ Արմինիա) անվան տակ: Այս անվանումը արաբ աշխարհագրագետները սկսեցին գործածել նոր բովանդակությամբ, որի կառավարումը գտնվում էր արաբական մեկ էմիրի իշխանության ներքո: Վարչական կենտրոնն էր Դվինը (մինչեւ 789 թ.), իսկ հետո Բարդան: Ա. Տեր-Ղեւոնդյանը նշում է, որ արաբական այս կուսակալությունը Հայաստանի անվամբ կոչվելը պատահականություն չէր, որովհետեւ Սասանյան պետության մեջ Անդրկովկասում գլխավոր մարզպանությունը Հայաստանն էր<sup>37</sup>:

Արաբ աշխարհագիրների մի մասը Հայաստանը բաժանում էր երեք կամ չորս մասերի, տարբեր փոփոխված անվանումներով, իսկ մի մասն էլ բերում էր «Արմինիայի» մեջ մտնող բոլոր նահանգները համատեղ, կամ էլ տալիս էր տարածքի ընդհանուր սահմանագատումը: Այս տարբերությունը կայանում է նրանում, որ 7-9-րդ դդ. սուր պայքար էր գնում արաբական խալիֆաթի եւ բյուզանդական կայսրության միջեւ հողային տարածքներ գրավելու համար, որը եւ պատճառ է հանդիսացել սահմանների փոփոխության: Արեւմտյան Հայաստանը մերթ անցել է արաբական խալիֆաթի իշխանության, մերթ էլ՝ բյուզանդական կայսրության ներքո:

Չարկ է նշել, որ 17-րդ դարում Օսմանյան կայսրության ամբողջ տարածքը բաժանված էր առանձին նահանգների (եյալեթ կամ վիլայեթ): Վիլայեթը իր հերթին բաժանվում էր սանջակների կամ լիվաների: Իսկ լիվաները բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների, որոնք կոչվում էին կազաներ: Իսկ կազաներն էլ բաժանվում էին նահիեների: Վիլայեթները կառավարվում էին սուլթանների կողմից նշանակված բեյլերբեյիների կամ միրիմիրանների կողմից: Վիլայեթի կառավարիչը ուներ նաև փաշայի տիտղոս եւ հաճախ վիլայեթին տրվել է փաշայության անվանումը: Օսմանյան կայսրության վարչա-քաղաքական բաժանումը որոշ տարբերությամբ տրվում է 16-17-րդ դարերի մի շարք թուրքական աղբյուրներում:

Ստորեւ տալիս ենք Արեւմտյան Չայաստանի վարչական բաժանումը 17-րդ դարում, ըստ թուրք պատմագիր Այնի Ալիի գրքի բովադակության, քանի որ այն առավել հավաստի է, ամբողջական եւ վերցված է պետական պաշտոնական ցուցակից: Նշենք, որ Այնը Ալին հանդիսացել է Օսմանյան կայսրության արքունական Դեֆթերխանեի պետը<sup>30</sup>:

Երզրումի էյալեթ - Սանջակները՝ Երզրում, Կարահիսար-ի Շարքի, Խնուս, Վերին Բասեն, Մանազկերտ, Թեքման, Կուզիբան, Իսփիր, Թորթում, Ստորին Բասեն, Մամթվան: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 1 214 000, իսկ միրլիվաներինը՝ 100 հազարից մինչեւ 320 հազար ակչե էր: Եյալեթում կար 120 զեամեթ, 5 195 թիմար: Չինվորական ուժը ջեբելուներով միասին 7 800 հեծելազորից էր կազմված:

Վանի էյալեթ - Սանջակները՝ Վան, Ադիլջեվազ, Էրճիշ (Արճեշ), Մուշ, Բարկիր (Բերկրի), Կարկար, Քեսանի, Իյսաբերդ, Աղաքիս, Էքրադ Բենի Կոթուր, Բայազեդի բերդ, Բերդա, Օվաջըբ:

Բեյլերբեյի տարեկան եկամուտը կազմված էր 1 միլիոն 32 հազար, միրլիվաններինը՝ 200 հազարից մինչեւ 420 հազար ակչե խասսերից: Այս էյալեթում կար 199 զեամեթ եւ 916 թիմար:

Դիարբեքիրի էյալեթ - Փաշայի սանջակը՝ Ամիդ, այսինքն Դիարբեքիրն էր: Սանջակները՝ Խարփուտ (Խարբերդ), Էրզանի (Արդնի), Սիվրիք, Նեսիբին, Չիսնիքեֆ, Չմշկեզ (Չմշկածազ), Սիիրդ, Մեֆարկին (Մուֆարդին), Ալչակալա, Սենջար, Խաբուր, Սեֆման, Կուլեր, Մեիրան, Թերջիլ, Օթաք, Փերմեք, Չապակջուր, Չերմիկ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը կազմված էր 1 միլիոն 200 հազար, միրլիվաններինը՝ 100 հազար ակչեից մինչեւ 500 հազար ակչե: Այս սանջակներից 8-ը գտնվում էին քուրդ բեյերի իշխազարության ներքո՝ «յուրալուքի եւ օջաքլըքի» կարգով: Բացի այդ, կա-

յին նաեւ 400-ից ավելի քուրդ աշիրեթների բեյեր, որոնք միրլիվայի բեյերի նման թուրի (դրոշակի) տեր չէին, այլ պարզապէս զեամեթի տերեր էին համարվում:

Կարսի էյալեթ - Սանջակները՝ Կարս, Խոջեւան, Ջարիշատ, Քեջվան, Կաղըզման, Շորագյալի հետ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 820 հազար, միրլիվաներինը՝ 200 հազարից մինչեւ 400 հազար ակչե էր: Էյալեթում կար 1 200 թիմար եւ զեամեթ:

Չըլըզըի էյալեթ - Սանջակները՝ Չըլըզը, Օլթի, Խերդուշ (Խերթ-վիս), Արտանուշ, Արտահան, Յաջրեք, Փոցխով, Մախջել, Աջարա, Փենեք, Բերդբերեք (Բերդագրակ), Լիվանե, Նըսֆի-Լիվանե, Շավշատ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 925 հազար, միրլիվաներինը՝ 200 հազար ակչեից մինչեւ 600 հազար ակչե էր: Փեթբերեքը, Լիվանեն, Նըսֆի-Լիվանեն եւ Շավշատը կառավարում էին իբրեւ «յուրթուլը եւ օջաքլըք»: Էյալեթում կար 97 զեամեթ եւ 559 թիմար: Չինվորական ուժը ջեբելուների հետ միասին հասնում էր 1 800 հեծելազորի:

Բնականաբար, այս վարչական բաժանումը հետագայում ենթարկվել է փոփոխությունների, որը պայմանավորված է եղել թուրքերի նոր նվաճումներով եւ դրանից թխող տնտեսական եւ քաղաքական շահերով: Այն վիլայեթներում, ուր ոչ-մահմեդականները մեծամասնություն էին կազմում, թուրքական իշխանությունները ձգտում էին տրոհել կամ միացնել այնպիսի շրջանների հետ, որտեղ ապրում էին քրդեր եւ թուրքեր:

Եզրակացնելով նշենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում նման տիպի պատմա-աշխարհագրական աղբյուրներ բացակայում են հայ պատմագրության մեջ: Մեզ համար կարեւոր է, որ վերոհիշյալ աշխատանքները հանդիսանում են թուրք պատմագիրների գրչի արգասիքը, հատկապէս Քյաթիբ Չելեբիի, որը տվել է իր անձնական եզրակացությունը Յայաստանի սահմանների եւ 17-րդ դարի Օսմանյան կայսրության մեջ մտնող նրա հողերի վարչական բաժանման մասին:

Քաղաքական նկատառումներով, այսօրվա թուրք պատմաբանները ձգտում են շրջանցել անցյալի որոշ առումով իրական տվյալները: Բնականաբար, ժամանակակից թուրք պատմաբանները իրենց աշխատություններում հետապնդում են ազգայնամոլական նպատակներ, փորձելով նենգափոխել եւ խեղաթուրել համաշխարհային ճանաչում ստացած պատմական դեպքերը: Նրանք հատկապէս ճգնում են ժխտել հայ ժողովրդի պատմական անցյալի, Արեւմտյան Յայաստանի գոյությունը:

1957 թվականին, Քյաթիբ Չելեբիի մահվան 300 ամյակի կապակ-



ցույթամբ Անկարայում լույս տեսավ ժամանակակից թուրք պատմաբանների ժողովածուն, որտեղ Համիդ Սադի Սելենը տպագրել է առանձին ուսումնասիրություն «Գիհան նյումա»-ի վերաբերյալ: Այդ ուսումնասիրության մեջ նույնությամբ բերված են այն երկրների անունները, որոնք նկարագրվել են Զյաթիբ Չելեբիի կողմից, սակայն «Գիհան նյումա»-ում շատ պարզ գրված «Արմենիա երկրի մասին» վերնագիրը դարձել է «Արեւելյան Անատոլիա»<sup>39</sup>:


Ավելին, 1957-1963 թթ. Ստամբուլում լույս տեսավ հատուկ հանձնաժողովի կողմից գրված «Ընդարձակ օսմանյան պատմություն»<sup>40</sup> խորագիրը կրող վեցհատորյա աշխատությունը, որը բովանդակում է Թուրքիայի պատմությանը վերաբերող նյութերը՝ սկզբից մինչև 1923 թվականի հանրապետական կառավարությունը: Այս բազմահատորյակում օգտագործված են Թուրքիայում պահվող հարուստ արխիվային նյութերն ու վավերագրական փաստաթղթերը: Այդ աղբյուրները հաճախ նույնությամբ մեջ են բերված ժամանակակից լատինատառ թուրքերենով: Այս հատորներում օգտագործված են նաև Զյաթիբ Չելեբիի, Էվլիա Չելեբիի եւ մյուսների աշխարհագրական եւ պատմական բոլոր աշխատությունները: Գրքում բացի պատմական դեպքերի նկարագրությունից, պարբերաբար բերված են հավելվածներ պատմական հայտնի դեմքերի, տերմինների, Օսմանյան կայսրության ներքին կառուցվածքի, որս սահմանների մեջ մտնող երկրների եւ այլ հարցերի վերաբերյալ: Բայց Հայաստանի մասին՝ ոչ մի խոսք:

Թուրք պատմաբանները, հավատարիմ մնալով պատմության խեղաթյուրման եւ նենգափոխման իրենց առանձնահատուկ «արվեստին», չարամտորեն ոչ մի տող չեն հատկացրել Հայաստանին, կարծելով, որ այդպիսով մոռացության կտան պատմական Հայաստանի գոյությունը:

Հարկ է նշել, որ դարասկզբին Թուրքիայում լույս տեսած աշխարհագրական որոշ գրքերում եւ դասագրքերում պատմական Հայաստանի տարածքը մատնանշվել է «Հայաստան» անվամբ: Դեռես 1873 թ. Ստամբուլում Ահմետ Համիտի հեղինակությամբ լույս տեսավ «Մեծ աշխարհագրություն» վերնագրով մի գիրք եւ մեծ քարտեզ, որտեղ Հայաստան երկիրը սահմանագատված է գծիկներով: Ուշադրության արժանի է նաև 1913 թ. Ստամբուլում հրատարակված Սաֆեթի հանրահայտ աշխարհագրական գրքում բերված քարտեզը (էջ 59), որտեղ նույնպես օսմաներեն մեծ տառերով Հայաստան երկրամասի վրա գրված է "ERMENISTAN" (արաբատառ):

Ստորեւ առաջին անգամ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում հիշյալ քարտեզը: Պարզ եւ հասկանալի լինելու համար

օսմաներենի կողքին տալիս ենք լատինատառ "ARMENIA" գրութ-  
յունը:



## ՇԱՆՈՒԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. В. В. Бартольд, Культура мусульманства, Пг., 1918, стр. 104.
2. И. Ю. Крачковский, "Турецкая географическая литература XV-XIX вв.", Избранные сочинения, т. IV, М. Л., 1957, стр. 582.
3. Օսլար գրականության քարգմանության գործուն նրան օգնել է ֆրանսիացի դավանափոխ Շեյխ Մուհամեդ Իվլասին:
4. Katip Çelebi, Cihannuma, Istanbul, 1732, s. 422, (արաբատառ թուրքերեն):
5. St'u Joan Blaeu, Atlas Major seu cosmographia blaeuiana gua solum, salem, coelum accuratissime describuntur, Amsterdam, 1662.
6. St'u Ի. Կրաչկովսկի, նշվ. աշխ., էջ 619, 632: F. Babinger, Die Geschichtschreiber der osmanen und ihre Werke, Leipzig, 1927, Ss. 119, 226: O. S. Gökyay, "Katip Çelebi, Hayati ve eserler: Hakkında incelemeler, Ankara, 1957, s. 66-68. A. A. Abdulkhak, La science cher les turcs ottoman, Paris, 1934, p. 121.
7. Ա. Ա. Արղուլիակը նշում է, որ «Ճիհան Նյունա»-ի ծեռագիր օրինակներից մեկը՝ Իբն Բահրամի շարունակությամբ, գտնվում է Բրիտանական քանդադարանում՝ 1030 համարի տակ:
8. Տես Զամդալլահ Մուստաֆա Ղազվինի, Նուզհաղ ալ-Կուլուբ, Թեհրան, 1957, էջ 108 (պարսկերեն): Զամդալլահ Ղազվինիի մոտ Վրաստանի նկարագրության բաժնում ընդգրկված է նաև Բագրատունիների հայկական թագավորության մայրաքաղաքը՝ Անին (961-1045 թթ.): Սա պատահական չէ: Մոնղոլական նվաճման ժամանակ Զայաստանի եւ Վրաստանի երկրամասերը բաժանվել էին երկու վիլայեթների. 1. Գյուրժիստանի վիլայեթ, 2. Մեծ Արմենիայի վիլայեթ: Գյուրժիստանի վիլայեթը իր մեջ ընդգրկում էր նաև Զայաստանի հյուսիս-արևելյան շրջանը, այսինքն՝ այն մասերը, որոնք Թամար թագուհու իշխանության շրջանում (1184-1213) գտնվում էին վրացական տիրապետության ներքո:
9. Ayni Ali efendi, Kavanin-i Ali Osman der hulasa-i meramin-i defter-i divan, Istanbul, 1018, s. 21 (արաբատառ թուրքերեն):
10. «Շերեֆ-նամե»-ի պարսկերեն բնագիրը առաջին անգամ հրատարակել է ռուս արևելագետ Վ. Վելյամինով-Ջերնովը: Տես Scheref-nameh ou histoire des kourdes par Scheref, prince de Bidlis, publie par V. Veliaminof - Zernof, texte pers, vol. I-II, Spb., 1860-1862. Գոյություն ունի նաև Շարմուայի ֆրանսերեն քարգմանությունը: Տես Cheref - nâmech ou fastes de La Nation kourde par Chérefouddine, traduits et commentes par F. B. Charmoy, vol. I-II., Spb., 1868-1875.
- Մեր համեմատությունը «Ճիհան-Նյունա»-ի տեքստի հետ կատարված է Կահիրեի հրատարակության հետ. Տես Mir Şeref han Bidlisi, Şerefname, Kahire, 1931.:
11. M. Reinaud, et de Slane M. G., Géographie d'Aboulfeda, texte arabe, Paris, 1840. Գոյություն ունի նաև թուրք նյութերի ֆրանսերեն

բարգմանությունը: St u M. Reinaud, Geographie d'Aboulfeda, traduite de L'arabe en francais, T. 2, seconde partie, Paris, 1883.:

12. St u «Թաքվիմ ալ-բուլդան», էջ 353, 355, 357:

13. «Ճիհան-նյունմ», էջ 410:

14. Страбон, География, М., 1964, стр. 498.

15. «Տեղեկագիր», Երևան, 1961, թիվ 5, էջ 65:

16. Г. Г. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, стр. 5-6.

17. Գ. Թ. Նալբանդյան, Արարական աղբյուրները Հայաստանի եւ հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 45,83,100, 120:

18. Ikdan, 1314 (1896 p.) N 701 (արարատառ):

19. St u Ի. Կրաչկոսկի, նշվ. աշխ., էջ 607:

20. В. В. Бартольд, История изучения Востока в Европе и Россия, Л., 1925, стр. 114.

21. St u «Թուրքական աղբյուրներ», հրատ. Գ., էվլիա Չելեբի, բարգմանություն բնագրից, առաջարան եւ ծանոթագրություններ Ա. Ն. Սաֆրաստյանի, Երևան, 1967:

22. Հայկական աղբյուրները ճշտելու խնդրում կարևոր ուսումնասիրություն է կատարել Չիկագոյի համալսարանի դասախոս Ռոբերտ Դանկովը: Նա նշում է, որ էվլիա Չելեբիի «Ուղղեգրության» զանազան մասերում քսանից ավելի անգամ հիշատակվում է Մուղտիսի մի հայ պատմագրի անունը: (St u "Muğdisi"; An armenian source for the seyahatname, by Robert Dankoff, (Wiener Zeitschrift fur die Kunde des Morgenlandes, 76 band, Wien, 1986)):

23. Ahmed Cevdet, Necip Asim, Evliya Çelebi, c. 2, Istanbul, 1314, s. 91 (արարատառ):

24. Эвлия Челеби, Книга путешествия (извлечения из сочинения турецкого путешественника XVII в.). Перевод и комментарии. Вып. 1. Земли Молдавии и Украины, М., 1961. Вып. 2, Земли Северного Кавказа, Поволжья и Подонья, М., 1979. Вып. 3, Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана, М., 1983, стр. 14.

25. Նույն տեղում, էջ 94:

26. Նույն տեղում, էջ 80:

27. Նույն տեղում, էջ 81, 191, 193, 203, 209, 251:

28. Evlia Çelebi, c. 2, s. 210:

29. Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1956, հատոր 2, էջ 567:

30. Արամ Սաֆրաստյան, էվլիա Չելեբի, հատ. Գ, էջ 170-171:

31. Նույն տեղում, էջ 257:

32. էվլիա Չելեբի, հատ. 3, էջ 150 (ոուսերեն հրատարակություն):

33. Հավանաբար նկատի է ունեցել Կիլիկիան:

34. Արաբերեն «իկլիմ» բառից, գործածվում է կլիմայական գոտու իմաստով: Հին աշխարհագրական գրքերում արեւմտյան կիսագնդի (Ամե-

րիկայի) եւ արեւելյան կիսագնդի հարավային կեսի հայտնաբերումից առաջ, երկագնդի հյուսիսային բնակեցված մասը, այսինքն՝ հասարակածից մինչեւ հյուսիսային բեւեռ, բաժանվում էր 7 կլիմայական գոտիների:

35. Müneccim başı, Sahaif-ul-ahdar, Istanbul, 1285 (1868 թ.), գ. 507 (արաբատառ թուրքերեն):

36. Արամ Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրներ, հատ. Բ, էջ 184:

37. Արամ Տեր-Ղեւոնդյան, «Քուստի կապկոհ» վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ (տե՛ս «Տեղեկագիր», 1958, թիվ 9, էջ 74):

38. Ayni Ali, Kavanin-i Ali Osman der hulasa-i mezamin-i defter-i divan, Istanbul, 1280, s.7. (արաբատառ թուրքերեն):

39. Katip Çelebi, Hayati ve eserleri hakkında incelemeler, Ankara, 1957, s. 127.

40. Mufassal Osmanlıtarihi, Istanbul, 1957-1963.:



# ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

## I

ԿԱՆՈՒՆԱՄԵՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՒՆԵՐ

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

#### ԳԱՆՆԻՊՈՒՄԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԳԵԼՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ՝

...Մյուսեւլլիմնամն չունեցող անհավատներից ով ամուսնանա, թող ամուսնական հարկի արժեքը վերակացուներին՞ վճարի: Քանի դեռ չի վճարել գերդեկ, թող չծեւակերպվի:

Հայերը եւ թե՛ հրեաները եւ այլ մարդիկ շիրայի ժամանակ իրենց այգիներից բերած շիրան առանց հիշյալ վերակացուներին հարցնելու, սայլերից ցած չիջեցնեն: Եթե իջեցնելով իրենց տները տեղափոխեն, ապա իմ հսկիչը հայտնաբերելու դեպքում, թող նրանց պատժի, ինչպես հարկն է: Եվ շիրայի յուրաքանչյուր մեդրեից մեկ ակչե թող գանձվի: Հարկատու անհավատները իրենց թաղում գտնվող գինետներից բացի մի այլ տեղ գինի չվաճառեն: Եվ իրենց այգու բերքից բացի, եթե մի այլ այգուց շիրա բերեն եւ իրենց տներում վաճառեն, ապա իմ հսկիչը հայտնաբերելու դեպքում գինին թող բեկլիք<sup>3</sup> դարձնի եւ նրանց էլ պատժի:

...Շիրայի ժամանակ շիրա բերող սայլորդները առանց իմ վերակացուներին հարցնելու, շիրան ցած չիջեցնեն եւ չտեղափոխեն իրենց տները: Հակառակ դեպքում, իմ հսկիչը նրանց սայլերն ու գոմեշները թող բեկլիք դարձնի եւ նրանց էլ պատժի: Եվ առանց վերակացուներին հարցնելու, տակառը չբացեն, գինի չքանեն եւ չծախսեն: Հակառակ դեպքում, իմ հսկիչը թող գտնի նրանց եւ տուրքը առնելուց հետո՝ պատժի ենթարկի:

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 2

#### Կ.ՊՈՒՆԻ ԽԱՄՍԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԵՐԱԹԻ ՊԱՏՃԵՆ՝

Հրովարտակը տվեցի եւ հրամայեցի, որ Էդիբնի մյուղով երկու մյուղ սերմ ցանեն: Մեկ մյուղը ցորեն, կես մյուղը գարի եւ կես մյու-

ղը վարսակ: Ստացված բերքից թող բեկլիք սերմը առանձնացնեն եւ հետո կեսը թող իրենք վերցնեն եւ կեսն էլ տան բեկլիքին: Սալարիեն, գերդեկի արժեքը եւ գինու հարկը թող վճարեն ըստ սովորության: Ինչ գանցանք եւ հանցագործություն կատարեն, թող դրա համեմատ էլ տույժ վճարեն:

Կալի ժամանակ իմ ավագ վերակացուն թող ներկա գտնվի: Եթե ցանկանա, հարկը թող հասկերով վերցնի, կամ էլ կալսելուց հետո: Երեք մեդրե շիրայից թող մեկը վերցնի: Սալարիեն թող վճարեն ըստ սովորության:

Յիշյալ խասսի գյուղերի շրջակայքում ցանքս անողները թող տասնորդ ու սալարիեն վճարեն: Երկու ամիս թող մոնոպոլիա լինի<sup>6</sup>: Կ.Պոլսի եւ Գալաթայի ցանքս անողները թող տասնորդն ու սալարիեն վճարեն: Յիշյալ խասսի գյուղերում գտնվող անհավատները իրենց այգիները վաճառքի են հանել: Գնորդները թող երեք մեդրե գինուց մեկը վճարեն որպես հարկ, կամ էլ այգին թող վարձեն:

Եթե որեւէ մեկը ավելիով ցանքս կատարի, թող նախքը նախապես նրանց հաշիվը տեսնի: Թող տարեկան մեկ անգամ ցանքս անեն եւ չաշխատված օրերի համար պահանջ չներկայացնեն:

Առանց պատճառաբանության, ինչպես նշված է, թող այդպես էլ լինի:

Ոչ ոք չմիջամտի եւ արգելք չհանդիսանա:

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 3**

#### ***ԷՐԳԱՆԻԻ ԼԻՎԱՅԻ ՏԱՄՆՀԻՆԳ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՄԱՍԻՆ <sup>6</sup>***

Այս հարկերը վճարողները հիշյալ լիվայի տասնչորս հայկական գյուղերն են<sup>7</sup>: Նշված հարկերը տալուց հետո դարձյալ այդ գյուղերի ռեայայի վրա որոշ մակթուներ էլ կան, որոնք նրանց հնագույն հարկերից են եւ յուրաքանչյուր գյուղ ինչ քանակով տվել է, այստեղ հիշվում է.

1. Առաջին Բայուր գյուղը, որը հայկական գյուղ է, չորս հազար սեւ ակչե տալիս է որպես այգու խարաջ, որից երեք հազարը օսմանյան ակչեի հաշիվով է. երեք հարյուր սեւ ակչե՝ թիմուրջեք, չորս հարյուր սեւ ակչե՝ նախքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրջեքլիք եւ չորս հազար սեւ ակչե իբրեւ սեւ սալգուն:

2. Նիֆե գյուղը եւս տալիս է չորս հազար սեւ ակչե՝ որպես այ-

գու խարաջ, չորս հազար չորս հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, երեք հարյուր սեւ ակչե՝ նախքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ դիվանքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ բայրամքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրեքելիք, մեկ Ամիդի մյուդ հացահատիկ: Այս հարկը հիշյալ գյուղի բնակիչների հարկերն են: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

3. Դարբենդ գյուղի բնակչությունը եւս տալիս է հինգ հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, չորս հազար չորս հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, երեք հարյուր սեւ ակչե՝ թիմուրքօքեք, չորս հարյուր սեւ ակչե՝ նախքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ դիվանքօքեք, չորս հազար երկու հարյուր սեւ ակչե՝ բայրամքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրեքելիք եւ մեկ Ամիդի մյուդ հացահատիկ: Դիշյալ գյուղը եւս այս ձեւով...է արծանագրված, որը նրանց հնուց եկած հարկերն են: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

4. Մալա գյուղի բնակչությունը եւս տալիս է երեք հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, երկու հազար սեւ ակչե՝ կարա մալ, երկու հարյուր սեւ ակչե՝ նախքօքեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ բայրամքօքեք, հարյուր սեւ ակչե՝ շիրեքելիք եւ կես Ամիդի մյուդ հացահատիկ: Նշված այս հարկերը վճարել են հնուց սահմանված օրենքով: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

5. Բանհոր գյուղի բնակչությունը եւս տալիս է չորս հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, երեք հազար սեւ ակչե՝ կարա մալ, երեք հարյուր սեւ ակչե՝ թիմուրքօքեք, չորս հարյուր սեւ ակչե՝ նախքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ դիվանքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ բայրամքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրեքելիք եւ մեկ Ամիդի մյուդ հացահատիկ: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

6. ...Գյուղի բնակչությունը եւս տալիս է երեք հազար սեւ ակչե՝ կարա մալ, երեք հարյուր սեւ ակչե՝ թիմուրքօքեք, չորս հարյուր սեւ ակչե՝ նախքօքեք, երկու հարյուր սեւ ակչե՝ դիվանքօքեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ շիրեքելիք, կես Ամիդի մյուդ հացահատիկ, երկու հարյուր սեւ ակչե՝ բայրամքօքեք: Նշված հարկերը դարծյալ նույն կերպով որոշվեց:

7. ...Գյուղը շեն ու բարվոք եղած ժամանակ հարկերի քանակը շատ է եղել, այժմ կիսով չափ քարուքանդ է: Բնակչությունը եւս տալիս է չորս հարյուր ակչե՝ այգու խարաջ, չորս հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, հարյուր սեւ ակչե՝ թիմուրքօքեք, հարյուր սեւ ակչե՝ նախքօքեք, հարյուր սեւ ակչե՝ դիվանքօքեք, հարյուր սեւ ակչե՝ բայրամքօքեք, հարյուր սեւ ակչե՝ շիրեքելիք եւ չորս քիւն Ամիդի մյուդ հացահատիկ: Նշված հարկերը դարծյալ նույն կերպով որոշվեց:

8. ...Գյուղի բնակչությունը տալիս է երեք հազար սեւ ակչե՝ այ-

գու խարաջ, երկու հազար հինգ հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, երկու հարյուր սեւ ակչե՝ նախբջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ թիմուրջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրեջելիք, տասներկու քիլե Ամիդի մյուղ հացահատիկ: Նշվածները եւս առաջվա նման որոշվեց:

9. Հերսենիդ գյուղի բնակչությունը տալիս է երեք հազար հինգ հարյուր սեւ ակչե՝ այգու խարաջ, երեք հազար սեւ ակչե՝ կարա մալ, երեք հարյուր սեւ ակչե՝ թիմուրջեք, երեք հարյուր սեւ ակչե՝ նախբջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ դիվանջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ բայրամջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրեջելիք, կես Ամիդի մյուղ հացահատիկ: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

10. Մենդեբենդ գյուղի բնակչությունը տալիս է երեք հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, հազար սեւ ակչե՝ կարա մալ, հարյուր հիսուն սեւ ակչե՝ թիմուրջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ նախբջեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ դիվանջեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ բայրամջեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ շիրեջելիք, ութ քիլե Ամիդի մյուղ հացահատիկ: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

11. Էքրեքտեն գյուղի բնակչությունը հնուց ի վեր տալիս է չորս հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, երկու հազար հինգ հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, երկու հարյուր հիսուն սեւ ակչե՝ նախբջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ դիվանջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ բայրամջեք, երկու հարյուր սեւ ակչե՝ շիրեջելիք, կես Ամիդի մյուղ հացահատիկ: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

12. Թեթնիկ-ի Ուլյա գյուղի բնակչությունը հնուց ի վեր տալիս է երկու հազար վեց հարյուր սեւ ակչե՝ այգու խարաջ, երկու հազար հինգ հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, երկու հարյուր սեւ ակչե՝ թիմուրջեք, երեք հարյուր սեւ ակչե՝ դիվանջեք, երեք հարյուր սեւ ակչե՝ նախբջեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ բայրամջեք, հարյուր հիսուն սեւ ակչե՝ շիրեջելիք, ութ քիլե Ամիդի մյուղ հացահատիկ: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

13. Նուրսենիկ գյուղի բնակչությունը հնուց ի վեր տալիս է հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, հազար երկու հարյուր սեւ ակչե՝ կարա մալ, երկու հարյուր սեւ ակչե՝ թիմուրջեք, հարյուր սեւ ակչե՝ դիվանջեք, երեք հարյուր սեւ ակչե՝ նախբջեք, հարյուր սեւ ակչե՝ բայրամջեք, հարյուր սեւ ակչե՝ շիրեջելիք, ութ քիլե Ամիդի մյուղ հացահատիկ: Դարծյալ նույն կերպով որոշվեց:

14. Դուրսուդ գյուղի բնակչությունը եւս տալիս է հազար սեւ ակչե՝ այգու խարաջ, հազար սեւ ակչե՝ կարա մալ, երկու հարյուր սեւ ակչե՝ թիմուրջեք, հարյուր սեւ ակչե՝ դիվանջեք, հարյուր սեւ ակչե՝ շիրեջելիք, ութ քիլե Ամիդի մյուղ հացահատիկ: Դարծյալ

նույն կերպով որոշվեց:

15. Կրճըլջա գյուղի բնակչությունը եւս տալիս է երեք հազար սեւ ակչե՝ այգու խարաջ: Այս եւս նախկինի նման որոշվեց:

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 4**

#### **ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՔԱԿԻ ԻՄԱՍՏԸ ԱՅՍ Է\***

Ներկայումս մեծագույն քաղաք Կ.Պոլսի Յավայի<sup>9</sup> անհավատներից 977 (1569) թ. խարաջը գանձելու համար Սաղթյուլուք Կուրաբայի<sup>10</sup> 46-րդ գունարտակից Սեհմեդ իբն Կասին անունով իմ ծառան, որին օրավարձ է հատկացված 14 ակչե, նշանակվել է էմին եւ անցյալ տարվա խարաջի դաֆթարները ձեռքին ուղարկվում է:

Արդ, հրամայում եմ: Իմ հիշյալ ծառան տեղ հասնելուն պես պաշտոնական դաֆթարների հիման վրա եւ կադիի հովանավորությամբ թող գանձի վերոհիշյալ ոչ-մահմեդականների խարաջները՝ եւ միեւնույն ժամանակ կազմի առանձին, մանրամասն հարկացուցակ: Հրամայում եմ նաեւ արձանագրել այս տարի Յավա եկած ոչ-մահմեդականների անունները: Հիմա, անհրաժեշտ է փնտրել եւ գտնել հիշյալ ոչ-մահմեդականներին, նրանց քահանաներին եւ բացահայտել խարաջ վճարելու կարող ռեայաներին: Այնուհետեւ արձանագրել նրանց անունները դաֆթարի մեջ եւ շարիաթական օրենքով գանձել խարաջները: Թող ոչ ոք չթաքցնի խարաջ վճարելու կարող ոչ-մահմեդականներին: Մի խոսքով, պետք եղածի պես ջանք թափեք, որպեսզի խարաջ վճարելու կարող ոչ-մահմեդականները դաֆթարից դուրս չմնան եւ բոլորն էլ արձանագրվեն հարկացուցակներում: Արձանագրելուց հետո եթե մահացողներ լինեն, թող վկաների միջոցով ստուգում կատարվի, որպեսզի հարկագանձման չենթարկվեն եւ դաֆթարից նմանների անունները հանվեն եւ առանձին դաֆթարի մեջ արձանագրվեն: Հետագայում էլ մահացողների անունները արձանագրվելու են այդ նույն դաֆթարի մեջ: Թող ուշադրություն դարձվի, որ մեռածի անվան տակ որեւէ մեկը դուրս չմնա հարկ վճարելուց: Հիշյալ ծառայիս 16 ռեջեբ 977 (25 դեկտեմբեր 1569) թվականից սկսած երեք ամիս ժամանակ է տրված: Թող ոչ ոք, ոչ մի օրով չխախտի տրված ժամկետը: Առանց բացառության, խարաջը հավաքելուց հետո յուրաքանչյուր ոչ-մահմեդականից անհրաժեշտ է հավաքել երեքական ակչե եւս, որից երկու ակչեն մուտք է գործելու իմ կայսերական գանձարանը.



իսկ մյուս մեկը մնալու է էմին նշանակված վերոհիշյալ ժառանգի տրամադրության տակ: Սրանից բացի ոչ մի ակչե չի գանձվելու:

Խարաջից հավաքված ակչեի մեջ եթե կեղծ կամ ոչ պիտանի ակչե լինի, ապա այն ստուգելով փոխանակվելու է իսկականի հետ: Խարաջի գանձման ընթացքում պետք է վարվել արդար եւ ոչ մի պատրվակով որոշված գումարից ավելին չգանձել եւ հնուց ի վեր կիրառվող կարգից չշեղվել: Եթե նման դեպքեր լինեն, թող կադին արգելի: Մի խոսքով, խարաջի գանձումը, մահացածներին ցուցակից հանելը եւ նորերի գրանցումը թող լինի կադիի գիտությամբ: Առանց կադիի գիտության ոչ մի գործարք չլինի:

Այդպես իմացեք<sup>12</sup>:

Գրված է 15 ռեջեբ 980 թվականին<sup>13</sup> (21 նոյեմբեր 1572):

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 5**

*ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆՆԱՍԵՆ ԳՐՎԱԾ Է 997 Թ.  
(1586) ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՀՆՇՎԱՌՍԱՆ ԳԱՅԹԱՐԻՑ “  
ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԱԳ ՈՒ-Ի ԺԱՄԱՆԱԿ*

#### Չիֆթի հարկի մասին

Լրիվ չիֆթիք արձանագրված ռայաթից որպես չիֆթի հարկ գանձվում է 50 ակչե, կես չիֆթիքից՝ 25 ակչե, իսկ որոշակի հողակտորի համար, որպես էքինլու-բեննաք՝ 18 ակչե: Հնուց եկած օրենքի համաձայն, ջաբա-բեննաք արձանագրված որեւէ մեկից գանձվում է 12 ակչե:

Ղաֆթարի խականիում չիֆթ, կես չիֆթ կամ բեննաք արձանագրված ռեայաներից մեկը, եթե մահանա եւ թողնի մի քանի արուզավակներ, ապա նրա տեղ ղաֆթարի խականիում արձանագրվում է ամուրի տղան, իսկ ամուսնացածների համար արձանագրվում է ջաբա: Հողը մշակում են համատեղ եւ յուրաքանչյուր անձ իր հասանելիք բաժինը վճարելով, հավաքում է ջաբայի եւ տեղի հարկը: Ջաբա-բեննաք վճարող տվյալ ռայաթը իր հոր տեղից չի կարող զրկվել: Այս նման է ժառանգական մուլքի:

Եթե ռայաթի տղան անչափահաս է, ապա սիփահին չի կարող նրանից հարկ պահանջել մինչեւ չափահաս դառնալը: Չափահաս

դառնալուց հետո, նրա բաժինը կարող է փոխանցվել իր որդուն, բայց ոչ եղբորը: Այսուհանդերձ, թափուի հարկը եթե եղբայրը պարտավորվի վճարել, ապա սփիահին փոխանակ ուրիշին տալու, կարող է տվյալ հողակտորը հատկացնել նրան: Եղբոր հատկացվելիք բաժինը պետք է սփիահին ձեռակերպի իրավասու մարդկանց ներկայությամբ, որպեսզի խաբեություն տեղի չունենա եւ ավելի բան չվերցնի: Եթե եղբայրը շահախնդրություն ցույց չտա, ապա թիմարատերը այն կարող է հատկացնել տվյալ գյուղի ցանկացած մարդուն:

Որեւէ ռայաթի համար եթե դաֆթարում արձանագրված է լրիվ չիֆթ կամ կես չիֆթ, եւ եթե ռայաթը որդի ու թոռ ունենա, ապա իր եւ որդու մահից հետո ունեցվածքը չի փոխանցվում թոռանը, ինչպես եղբոր հողը չի փոխանցվում եղբորը: Այսուհանդերձ, թափուի իրավունքով եթե եղբայրը ցանկանա վերցնել, ապա այն պետք է հանձնել նրան, այլ ոչ թե մեկ ուրիշին:

Անհավատները հողակտորները եւս ժառանգաբար փոխանցվում են հորից որդուն եւ մշակվում են համագործակցության կարգով: Եվ մինչեւ անչափահասները հողագործությամբ զբաղվելու կարող դառնան, հոր հողը ավանդ է մնում:

Վերոհիշյալ վիլայեթի անհավատները խարաջները վճարելուց հետո, չիֆթի հարկից սփիահինն որպես գլխահարկ հատկացնելու համար մարդագլուխ նշանակված է 25-ական ակչե իսպենջե<sup>19</sup>: Այս էլ վճարելուց հետո իրենց հողակտորներից լրիվ չիֆթի հարկ, կես չիֆթի հարկ եւ դեռնունի հարկ չեն հատկացնում: Հիշյալ վիլայեթում մի շարք մահմեդականներ մյուլքի հիման վրա տիրացած այգիների եւ պարտեզների համար տասնորդ են վճարում, իսկ հողից ստացված եկամտուի համար՝ սալարիտ: Որպես սալարիտ վճարում են բերքի մեկ տասներորդ մասը: 40 քիլեի համար գանձվում է մեկ քիլե:

Հումուս վաճառողները սալարիտ չպիտի տան: Եթե կինը իր տրամադրության տակ գտնվող հողակտորը մշակելով բահրան եւ հարկը վճարում է, ապա հողը նրա ձեռքից վերցնելը օրենքին հակառակ է: Եթե որեւէ մեկը սփիահիի թիմարում մշակելու պիտանի չիֆթիլիքը լքելով մեկնի մի այլ տեղ մշակությամբ զբաղվելու, ապա նրանից ըստ օրենքի գանձվելու է կրկնակի տասնորդի հարկ: Սակայն, եթե սփիահիի թիմարում մշակության համար պիտանի հող չկա, կամ էլ եթե կա, ապա տվյալ հողը մշակելուց հետո կարող է մի այլ տեղ անարգել վար ու ցանք անել: Եթե ռեայան իր տրամադրության տակ հողակտոր ունենալով հանդերձ փախչի, սփիահին

դառնալուց հետո, նրա բաժինը կարող է փոխանցվել իր որդուն, բայց ոչ եղբորը: Այսուհանդերձ, թափուհի հարկը եթե եղբայրը պարտավորվի վճարել, ապա սփիառիին փոխանակ ուրիշին տալու, կարող է տվյալ հողակտորը հատկացնել նրան: Եղբոր հատկացվելիք բաժինը պետք է սփիառիին ձեռակերպի իրավասու մարդկանց ներկայությամբ, որպեսզի խաբեություն տեղի չունենա եւ ավելի բան չվերցնի: Եթե եղբայրը շահախնդրություն ցույց չտա, ապա թիմարատերը այն կարող է հատկացնել տվյալ գյուղի ցանկացած մարդուն:

Որեւէ ռայաթի համար եթե դաֆթարում արձանագրված է լրիվ չիֆթ կամ կես չիֆթ, եւ եթե ռայաթը որդի ու թոռ ունենա, ապա իր եւ որդու մահից հետո ունեցվածքը չի փոխանցվում թոռանը, ինչպես եղբոր հողը չի փոխանցվում եղբորը: Այսուհանդերձ, թափուհի իրավունքով եթե եղբայրը ցանկանա վերցնել, ապա այն պետք է հանձնել նրան, այլ ոչ թե մեկ ուրիշին:

Անհավատների հողակտորները եւս ժառանգաբար փոխանցվում են հորից որդուն եւ մշակվում են համազործակցության կարգով: Եվ մինչեւ անչափահասները հողագործությամբ զբաղվելու կարող դառնան, հոր հողը ավանդ է մնում:

Վերոհիշյալ վիլայեթի անհավատները խարաջները վճարելուց հետո, չիֆթի հարկից սփիառիին որպես գլխահարկ հատկացնելու համար մարդագլուխ նշանակված է 25-ական ակչե խսպենջե<sup>19</sup>: Այս էլ վճարելուց հետո իրենց հողակտորներից լրիվ չիֆթի հարկ, կես չիֆթի հարկ եւ դեռունի հարկ չեն հատկացնում: Հիշյալ վիլայեթում մի շարք մահմեդականներ մյուլքի հիման վրա տիրացած այգիների եւ պարտեզների համար տասնորդ են վճարում, իսկ հողից ստացված եկամուտի համար՝ սալարիե: Որպես սալարիե վճարում են բերքի մեկ տասներորդ մասը: 40 քիլեի համար զանձվում է մեկ քիլե:

Հունուս վաճառողները սալարիե չպիտի տան: Եթե կինը իր տրամադրության տակ գտնվող հողակտորը մշակելով բահրան եւ հարկը վճարում է, ապա հողը նրա ձեռքից վերցնելը օրենքին հակառակ է: Եթե որեւէ մեկը սփիառիի թիմարում մշակելու պիտանի չիֆթից լքելով մեկնի մի այլ տեղ մշակությամբ զբաղվելու, ապա նրանից ըստ օրենքի զանձվելու է կրկնակի տասնորդի հարկ: Սակայն, եթե սփիառիի թիմարում մշակության համար պիտանի հող չկա, կամ էլ եթե կա, ապա տվյալ հողը մշակելուց հետո կարող է մի այլ տեղ անարգել վար ու ցանք անել: Եթե ռեայան իր տրամադրության տակ հողակտոր ունենալով հանդերձ փախչի, սփիառիին

օրենքի հիման վրա կարող է նրան վերադարձնել իր նախկին տեղը: Սակայն 10 տարուց ավելի մի տեղում բնակվողին ետ բերելն արգելվում է: Ռայաթի որդին արձանագրվում է դարձյալ նայաթ: Ուրիշի մոտ արձանագրվելու դեպքում կդառնա տվյալ սիփահուու ռայաթը:

Թափուի իրավունքով մշակվող հողակտորը օտար ռայաթից առնելով՝ տեղացի ռայաթին տալը արգելվում է: Օտարի նկատմամբ տեղացի ռայաթին նախապատվություն տալն արգելվում է: Դաֆթարում արձանագրված մահմեդական ամուրիներից ոչ մի բան չի գանձվում: Ամուրին ամուսնանալու դեպքում, նրանից գանձվում է էքիսլու բեննաքի հարկ: Ջաբայի հարկ չեն վերցնում: Զիֆթ չարձանագրված ռայաթները չիֆթլիքի տեր դառնալու դեպքում չիֆթի հարկ չեն վճարելու: Ռայաթը եթե լրիվ չիֆթլիքի տեր է, ապա սիփահուուն վճարելու է լրիվ չիֆթի հարկ: Կես չիֆթլիքի դեպքում՝ չիֆթի հարկի կեսը, իսկ եթե չիֆթլիքը կեսից էլ պակաս է, ապա վճարելու է էքիսլու բեննաքի հարկ: Սա վերաբերում է տեղացի ռայաթներին: Օտար ռայաթը վճարում է դեռնումի իրավունք: Եթե հողը պիտանի է, ապա հնուց եկած օրենքի համաձայն, ամեն տարի ցանելու դեպքում երկու դեռնումից գանձվում է մեկ ակչե, իսկ եթե պիտանի չէ, երեք դեռնումից՝ մեկ ակչե:

Լավ հողի ութսուն դեռնումը, միջակ հողի հարյուր դեռնումը եւ անպետք հողի հարյուր երեսուն դեռնումը մեկ չիֆթլիք է համարվում: Մեկ դեռնումը սովորական քայլով՝ ըստ երկարության եւ լայնության քառասունական քայլ է: Զիֆթի հարկը գանձվում է մարտ ամսին: Ռայաթի մի այլ գյուղում մշակած բերքից սիփահին կալի իրավունք կամ այլ բան չի կարող պահանջել: Ռեայան, առանց հիմնավոր պատճառի, չի կարող պիտանի հողը երեք տարի շարունակ անմշակ թողնել: Անմշակ թողնելը վնաս է պատճառում տվյալ թիմարին, ուստի թափուի իրավունքով այդ հողը կարելի է հանձնել մեկ ուրիշին: Տվյալ հողակտորը եթե գտնվի լեռնային անջուր վայրերում, եւ մշակության համար էլ պիտանի չլինի, ապա ռայաթից վերցնելով ուրիշին տալը արգելվում է: Ռայաթը կարող է այդ հողակտորի մի մասը օգտագործել որպես արոտատեղի: Արգելված չէ: Այգուց եւ պարտեզից բահրա վերցնելը համապատասխանում է օրենքին եւ շարիաթին: Սակայն տասնորդի հարկը իր ժամանակին չգանձելու դեպքում սիփահին չի կարող ռեայայի վրա ճնշում բանեցնել: Նման դեպքում, իրավասու անձիք բահրայի քանակի համաձայն այգիների եւ պարտեզների համար մշանակում են մակթուի հարկ: Զիամներին եւ սիփահիներին հասանելիք



տասնորդը ռեայան պարտավոր է ըստ օրենքի տանել մոտակա շուկան, իսկ դրսից եկած մշակները՝ գյուղերի շտեմարանները: Բերքահավաքի ժամանակ ռայաթների հացահատիկը չափելուց հետո սալար առնողները, առանց հապաղելու, բերքը պետք է չափեն եւ ռայաթների վրա ճնշում չբանեցնեն: Եթե ռայաթները, աշխատանքի շատութեան եւ կամ անհոգութեան պատճառով բերքահավաքը տաս օր հետաձգելով, վնասի պատճառ դառնան, ապա գյուղի իմանը եւ քեթխուդան բերքը պիտի չափեն, բահրան առանձնացնեն եւ երբ տերերը գան, հանձնեն նրանց: Եթե մի բարեբեր չիֆթլիքում այգի է մշակվում, եկամտի քառորդը պատկանում է թիմարի տիրոջը:

*Պատկած.* Զրադացի հարկը երկրի մեծ մասում կալի ժամանակ վերցնելը օրենք է դարձել: Այն պիտի վերցնել դաֆթարում արձանագրվածի չափով, ոչ ավելի: Եթե դաֆթարում չի արձանագրված, ապա քանի ամիս ուզում է տեւի, յուրաքանչյուր ամսից գանձվելու է հինգական ակչե հարկ:

*Պատկած.* Եթե որեւէ մեկը սիփահու թիմարում ծմեռի եւ եթե ամուսնացած լինի, որպէս ծմեռելու (ղշլաղի) հարկ, նրանից վեց ակչե պիտի վերցվի, եւ եթե ամուրի լինի, բայց ծուխ ունենա, որպէս ծխի հարկ նրանից երեք ակչե պիտի վերցվի: Եվ եթե ծմեռողը ծմեռած վայրում վար ու ցանքով զբաղվի, զշլաղի հարկի փոխարեն հողի հարկ պիտի տա: Զմեռող անձը երեք տարի զշլաղի հարկ պիտի տա, իսկ եթե երեք տարուց ավելի ծմեռի՝ նրանից բեննաքի հարկ պիտի վերցվի:

*Պատկած.* Տեղացիների մոտ ոչխարի հարկը՝ երկու ոչխարին մեկ ակչե է: Ոչխարի հետ միասին գառն էլ հաշվելը օրենք է դարձել: Ոչխարի հարկը որոշված է ապրիլ ամսվա սկզբին գանձել:

*Պատկած.* Աղըլի հարկը: Ոչխարը ծմեռելու դեպքում յուրաքանչյուր հոտից յաթաղի հարկ անունով մի միջակ ոչխար առնելը օրենքով որոշված է:

*Պատկած.* Մեղրի տասնորդ: Լավագույն փեթակից երկու ակչե եւ վատից՝ մեկ ակչե պիտի գանձեն: Եթե մի թիմարում նախապէս փեթակ ու ոչխար, այգի ու պարտեզ եւ ջրաղաց գոյութեան չեն ունեցել եւ հետո են երեւան եկել, ապա դրանց տասնորդն ու հարկերը թիմարի տիրոջը պիտի պատկանեն:

*Պատկած.* Բաջ: Եթե ցորեն ու գարի են բերում քաղաք ու վաճառում, ապա, ամեն մեկ մյուդից՝ կես քիլո բաջ պետք է վերցնել, մյուս հացահատիկներից՝ նույն ձեւով: Եթե այլուր է բերվում շուկա վաճառքի համար, ապա, մեկ բեռի համար, եթե այն կշռում է վեց



քիլե, վաճառողից գանձվում է երկու ակչե: Ստամբուլի քսան քիլեն հավասար է մեկ մյուդի: Եթե ապրանքի որակը ցածր է, ապա կադիի գիտությանը պետք է ըստ ապրանքի որակի հարկ գանձել: Չորացած թուզ, խաղող, սալոր եւ ընդհանրապես այլ ջրալի մրգերին նարի է նշանակվում: Գարին ինչ գնով էլ վաճառվի, յուրաքանչյուր մյուդի համար հինգ ակչե ավելի նարի է նշանակվելու: Մեղր, յուղ, քնջութի յուղ, պանիր, դոշաք եւ սրանց նման այլ ապրանքներ խանութպանի վաճառելու դեպքում՝ տասից-տասնմեկ նարի է նշանակելու<sup>16</sup>:

\*\*\*

Էրզրումի եւ Երեւանի վսեմափայլ բեյլերբեյին թող միշտ երջանիկ լինի: Նախիջեւանի կադիի հետ նամակներ են հղել: Հաղորդվում է, որ Նախիջեւանի բնակչությունը կըզլբաշների ձեռքից դժգոհ լինելով, այժմ ուլու հնազանդ ենթարկվում է Օսմանյան կայսրությանը: Նախիջեւանի բերդը կառուցելու ընթացքում, մեծ մասամբ իրենց տները փուլ տալով, շինանյութով օժանդակել են: Հրաման եղավ այն մասին, որ բերդի հյուրերին, իրենց ցուցաբերած ծառայության համար, մինչեւ Նախիջեւանի վիլայեթի հաշվառումը, բնակչությունից սեմեն վերցնեն: Մի շարք նախիջեւանցիներ հայտնել էին, որ քաղաքի բնակչության մեծ մասը մշակելու հող չունի եւ քաղաքի ջուրը հագիվ է բավարարում իրենց այգիների ոռոգմանը: Ցանքսերը կարիք ունեն ոռոգման, քանի որ անձրեւ չէրած տարիներին ստացված բերքը չի բավարարում իրենց պահանջներին: Բնակչության մոտ գտնվող պարտամուրհակներից պարզվել է, որ դեռեւս ակ-կոյունլու փաղիշահների ժամանակվանից վար ու ցանքի համար նրանք տասնորդ են վճարել: Հնուց եկած այս սովորության համաձայն անհրաժեշտություն է զգացվել, որ Նախիջեւանի բնակչության տրամադրության տակ գտնվող այգիներից ստացված երեք տարվա բերքի հիման վրա, անշահախնդիր եւ իրավասու անձիք ստուգում կատարեն, եւ մեծ, միջին եւ փոքր նշանակություն ունեցող այգիներից իրավունքի վճռով (hak karari) մակթու, իսկ հողագործությունից ստացված բերքից՝ տասնորդի եւ սալարիեի հարկ գանձվի:

Այսպիսով, ռեջեք ամսի 997 (մայիս 1589) թ. կրող սերդար Ֆարհադ փաշայի<sup>17</sup> հրամանի համաձայն, կարգադրվեց այգիներից իրավունքի վճռով մակթու վերցնել, իսկ ցանքսերից ստացված բերքի համար՝ տասնորդ եւ սալարիե<sup>18</sup>:

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 6

**ԲԱՍՏԵՆԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆԻՑ: ԲՆԱԿՉՈՒ-  
ԹՅԱՆԸ ԵՎ ԲԵՐՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՇՎԱՌՍԱՆ ԴԱՖ-  
ԹԱՐՆԵՐ: ԳՐՎԱԾ Է 987 Թ. (1589) ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԱԳ III-  
Ի ԺԱՄԱՆԱԿ, ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆԵՐԻ ՀՆԱ-  
ԳՈՒՅՆ ԴԱՖԹԱՐԻՑ:**

### Չիֆթի հարկի մասին

Լրիվ չիֆթլիք արձանագրված ռայաթից, որպես չիֆթի հարկ, գանձվում է հիսուն ակչե, կես չիֆթլիքից՝ քսանհինգ ակչե, իսկ որոշակի հողակտորի համար, որպես էքիմլու-բեննաքի՝ տասնութ ակչե: Հնուց եկած օրենքի համաձայն, ջաբա-բեննաք արձանագրված որեւէ մեկից գանձվում է տասներկու ակչե, քանի որ աղքատ ռեայայի հովանավորումը գովելի գործ է: Դաֆթարի խականիում չիֆթ, կես չիֆթ կամ էքիմլու-բեննաք արձանագրված ռեայաներից մեկը, եթե մահանա եւ թողնի մի քանի արու գավակ, ապա նրա տեղը դաֆթարի խականիում արձանագրվում է բեննաք: Հողը մշակում են համատեղ եւ յուրաքաչյուրը, իրեն հասանելիք բաժինը վճարելով, հավաքում է բեննաքի եւ տեղի հարկը: Ջաբա-բեննաք վճարող ռայաթը իր հոր տեղից չի կարող գրկվել: Այս նման է ժառանգական մյուլքի: Ընդհանուր առմամբ, այդպիսի կարգ է հաստատվել ռեայայի համար: Փաղիշահական արդարության համաձայն շնորհ տրվեց եւ արքայական նոր դաֆթարում նույնությամբ արձանագրվեց:

Եթե ռայաթը մահանա եւ անչափահաս որդի եւ չիֆթլիք թողնի, եւ եթե անչափահասը չկարողանա չիֆթլիքը մշակել, սիփահին՝ «Քո հոր չիֆթլիքն է» ասելով, նրանից չիֆթլիքի հարկ չպետք է պահանջի: Մինչեւ չափահաս դառնալը չիֆթլիքը որպես ավանդ, մեկ ուրիշին պետք է տալ, որովհետեւ հողը մշակելն ու ծառայություն մատուցելը փաղիշահական օրենք է: Երբ որդին մեծանա ու հողը՝ մշակելու կարող դառնա եւ եթե հորից մնացած ու իբրեւ ավանդ տրված հողը պահանջի, ապա հողը նրան պետք է վերադարձվի: Սիփահին նրանից թափու չպիտի վերցնի: Եթե ռայաթը մահանա եւ շատ որդիներ թողնի, նրա հողը համաձայնության ու համագործակցության կարգով որդիները պիտի մշակեն: Եթե որդիներից մեկը մահանա եւ եթե մահացողը որդի ունենա, մահացո-

դի բաժինը որդուն պիտի փոխանցվի եւ ոչ թե եղբորը: Եթե եղբայրը սահմանված գումարը տա, ապա հողը եղբորն է տրվում եւ ոչ թե օտարին:

Վերոհիշյալ լիվայի անհավատները իրենց լավ, միջակ կամ միջակից էլ ցածր հողակտորների համար խարաջներ վճարելուց հետո իրենց սփահիիներին, հնագույն օրենքի համաձայն, ամեն մի շնչի դիմաց քսանհինգ ակչե խպենջ պետք է վճարեն: Իրենց հողի համար լրիվ չիֆթի հարկ, կես չիֆթի հարկ, կամ դեռնումի հարկ չպիտի վճարեն: Որոշ սփահիիներ, սփահիիների որդիներ, նյոքարներ եւ նյոքարների որդիներ, եթե հնուց հյուջջեթով չիֆթլիք ու հող ունենան, արծանագրված են հուճուս տալու հիման վրա: Նյոքար ու նյոքարի որդի բառերը արեւելքցիների մոտ նշանակում են սփահիու որդի: Եթե ռայաթը իր ձեռքում հող ունենալով հանդերձ փախչի, սփահիին օրենքով իրավունք ունի նրան իր տեղը վերադարձնելու: Սակայն տաս տարուց ավելի մի տեղում բնակվողին ետ բերելն արգելվում է: Եթե կինը իր տրամադրության տակ գտնվող հողակտորը մշակելով բահրան ու հարկը վճարում է, ապա հողը նրա ձեռքից վերցնելը օրենքին հակառակ է: Կրկնակի տասնորդ այն ռայաթից պիտի վերցվի, որը իր սփահիու մշակելու չիֆթլիքը թողնելով, ուրիշ տեղում հողագործությամբ է զբաղվում:

Դաֆթարում արծանագրված մահմեդական ամուրիներից ոչ մի բան չի վերցվում: Եթե ամուրին ամուսնանա, նրանից բեննաթի հարկ է գանձվում, եթե բեննաթը էքինլու լինի, նրանից էքինլուի հարկ է գանձվում: Չիֆթ չարծանագրված ռայաթները չիֆթլիքի տեր դառնալու դեպքում չիֆթի հարկ են վճարելու: Տվյալ դեպքում հաշվի է առնվելու չիֆթլիքի չափը: Եթե չիֆթլիքից ավել հող ունենա, հարկը պետք է օտար ռայաթի նման ավելի վճարեն: Ռայաթը եթե լրիվ չիֆթլիքի տեր է, ապա սփահիուն վճարելու է լրիվ չիֆթի հարկ: Կես չիֆթլիքի դեպքում՝ չիֆթի հարկի կեսը, իսկ եթե չիֆթլիքը կեսից էլ պակաս է, վճարելու է էքինլու-բեննաթի հարկ: Օտար ռայաթը վճարում է դեռնումի իրավունքը: Եթե հողը պիտանի է, ապա հնուց եկած օրենքի համաձայն, ամեն տարի ցանելու դեպքում երկու դեռնումից գանձվում է մեկ ակչե, իսկ եթե պիտանի չէ, երեք դեռնումից՝ մեկ ակչե: Լավ հողի ութսուն դեռնումը, միջակ հողի հարյուր դեռնումը եւ անպետք հողի հարյուր երեսուն դեռնումը մեկ չիֆթլիք է համարվում: Մեկ դեռնումը սովորական քայլով՝ ըստ երկարության եւ լայնության քառասունական քայլ է: Չիֆթի հարկը գանձվում է մարտ ամսին:

Ամուսնության հարկեր: Խասսերում, զեամեթներում եւ այլ

ազատ թիմարներում կույս աղջիկներից վաթսուն ակչե եւ այրի կանանցից՝ երեսուն ակչե պիտի գանձվի: Այլ թիմարներում ամուսնական հարկի կեսը թիմարի տերերը պիտի վերցնեն եւ մյուս կեսը՝ սանջակում արծանագրված սանջակի պետերը: Ձեամեթում արծանագրվածները ամուսնության հարկերը զեամեթի պետերին պիտի տան, իսկ կույս աղջկա հայրը (աղջիկը ուր է որ գնա) ամուսնության հարկը տալու է իր ռայաթին:

Այրի կինը ամուսնության հարկը տալու է այն հողատիրոջը, որտեղ ինքը ապրում է, սա համապատասխանում է օրենքին:

Մեղրի հարկ. Լավագույն փեթակից երկու ակչե եւ վատից՝ մեկ ակչե պիտի գանձվի: Եթե մի թիմարում նախապես փեթակ ու ոչ-խար, այգի ու պարտեզ եւ ջրաղաց գոյություն չեն ունեցել եւ հետո են երեւան եկել, ապա դրանց տասնորդն ու հարկերը թիմարի տիրոջը պիտի պատկանեն: Փեթակի հարկը եւս ջրաղացի հարկի մասն է<sup>20</sup>:

Հիշյալ լիվայում մի քանիսը կան, որոնք հայտնի են կարաբաշ<sup>21</sup> անունով եւ յուրաքանչյուրը իր տրամադրության տակ մեկական վանք ունի: Այդ վանքի անվան տակ յուրաքանչյուրին, որպես մակթու, որոշ գումար ակչե է նշանակված: Այդ գումարը ըստ դաֆթարի վճարելուց հետո, իսպենջ չեն վճարում եւ ըստ սովորության, իրենց ներքին հարկերը իրենք են տնօրինում: Թող իրենց ձեռքին գտնվող բարձր հրամանի համաձայն գործեն եւ ոչ ոք արգելք չհանդիսանա:

Անհավատներից (այսինքն հայերից - Ա. Փ.) որեւէ մեկը գալով, եթե հիշյալ վանքում ծառա լինի կամ իրենց սովորության համաձայն ուտում առնի, ապա նա իր իսպենջի հարկը վճարելու է իր նախկին սիփահուն, իսկ վանքի հողերում կատարած վար ու ցանքի համար՝ բահրա է վճարելու: Հիշյալ քահանաների վանքերը վակֆ են: Ջրաղացները, այգիները եւ պարտեզները արծանագրված են կայսերական նոր դաֆթարում, ավելի ոչ մի բան չգանձվի<sup>22</sup>:

Օրենքից շեղվողներին տվյալ ժամանակի իշխողները պիտի արգելեն<sup>23</sup>:



## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 7**

### **ԲԱՍՆԵՆԻ ԼԻՎԱՆ (ընդարշակ դաֆթար N 9) գրված է**

988թ. (1580)

#### Բասենի լիվայի կանուցնամեն ըստ հնագույն դաֆթարի

Շուկայի հարկերին վերաբերող կանուցն.

Որեւէ ծի վաճառելու դեպքում, երկու ակչե ծախողից եւ երկուսն էլ՝ գնողից է գանձվելու: Մեկ եզի համար, վաճառողից վերցվում է 2 ակչե, երկու ոչխարից՝ մեկ ակչե նույնպես վաճառողից է վերցվում: Մեկ սրգի բեռից՝ երկու ակչե վաճառողից է վերցվում: Ավանակի բեռից հին դաֆթարում, Բայբուրդի եւ Կեմախի կանուցնի համաձայն, 10-ական ակչե հարկ է նշանակված: Թող այդպես էլ գանձվի: Սակայն քրիստոնյաները, այլ վիլայեթներից բերվող խաղողն ու չամիչը գինի պատրաստելու համար շատ բահայիե (հարկ) վերցնելով, նեղել են մահմեդականներին: Ժամանակի իշխողները մնան արարքները թող արգելեն, մինչեւ որ մահմեդականները եւս կարողանան իրենց ազդեցությունը ունենալ:

Տասանորդի եւ այլ հարկերի մասին Յիշյալ լիվայում բնակիչներից հունուս առնելը հին օրենք է: Լիվայի բնակիչները իրենց լեզվով սունար (կշռի չափ) են օգտագործում, որը հավասար է մեկ քիլեի, այսինքն 32 վուքքիեյի: 100 սունարը հավասար է Ստամբուլի 170-ի: Յոնջայից էլ հունուս է վերցվում, քանի որ այստեղ տեսապես զբաղվում են դրա մշակությամբ: Մարգագետիններից եւս հունուս են վերցնում:

Մշակվող ցանքատարածությունները, մի քանի տարի հանգստանալու համար անմշակ թողնելով, դառնում են մարգագետիններ: Տասանորդ վերցնելը հին օրենք է եւ թող այդ ձեւով էլ շարունակվի:

Դեշտիբանի հարկը Յուրաքանչյուր ընտանիքից գանձվում է 5-ական ակչե, որը նույնպես հին օրենք է:

Բոստանի հարկը Յուրաքանչյուր ընտանիքից գանձվում է 2-ական ակչե: Բաղիիավանի կեսը պատկանում է սիփահուն, իսկ մյուս կեսը՝ սանջակբեյուն: Որպես յայլաքի հարկ, յուրաքանչյուր ընտանիքից 200 դիրիեմ յուղ է վերցվում սանջակբեյի կողմից: Սակայն ամառանոց չգնացողներից ոչ մի բան չի վերցվում:

Ոչխարի հարկը Երկու ոչխարից մեկ ակչե է վերցվում, ապրիլ ամսին: Ոչխարը ձմեռելու ընթացքում հարյուր ոչխարից մեկը վերցնելը ընդունված կարգ է: Թող այդպես էլ շարունակվի: Թող



վերցվի միջին կարգի ոչխարը: Քրիստոնյաների խոզերից յուրաքանչյուրի համար մեկ ակչե է գանձվում: Մորթի ժամանակ վերցվելու է 5-ական ակչե:

**Ուեսի կեվարեն** Շարիաթական տասնորդով է, սակայն հին դաֆթարում 2-ական ակչե է նշանակված եղել, նույն ձևով էլ գրանցվեց կայսերական նոր դաֆթարում:

**Չատված.** Գողերի, մարդասպանների եւ այլ ավազակների պատժի չափը, ըստ շարիաթի, որոշվում է երկրի օրենքներով, սանջակբեյի կողմից: Սակայն տեղի ունեցած հանցագործությունը, ըստ շարիաթի եւ քաղաքացիական օրենքներով, եթե ներում չնորսվի, ապա պատժի փոխարեն հանցագործից ակչե վերցնելը օրենքից դուրս է: Պատժի ենթարկված որեւէ մեկից տուգանք չի վերցվում, իսկ ներման դեպքում տուգանք վերցնելու իրավասությունը ռեայայի տիրոջն է պատկանում: Եթե աղմուկից (ուներոր դաս) է՝ 400, եղնայից (ստորին դաս)՝ 100, վասատից (միջակից) 200 ակչե է գանձվում: Անառակություն անողները, եթե ամուսնացած են եւ ուներոր՝ 300 ակչե: Միջակից՝ 200, իսկ աղքատից՝ 100 ակչե է գանձվում: Եթե անառակություն անողը ամուրի է, հարուստից՝ 200 ակչե, միջակից՝ 150, իսկ աղքատից՝ 100 ակչե է գանձվում:

Աչք հանող եւ ձեռք ջարդող որեւէ մեկը անձամբ ինքն է փոխհատուցում: Եթե գլուխը պատռվի եւ ոսկորը երեւա, կամ ատամը դուրս գա, կամ սրով եւ այլ իրերով վերք հասցվի, կատարողը եթե *firas* է՝ տուգանքը 100 ակչե է: Սրանցից ավելի թեթեւ հանցանքները, եթե հանդիմանելու անհրաժեշտություն չի, տուգանքը 30 ակչե է: Եթե վերքը քերծվածք է՝ 10 ակչե վերցնելը ընվունված կարգ է: Որեւէ մեկի կատարած հանցագործությունը մինչեւ որ չքննվի եւ մինչեւ մեղսակցությունը չբացահայտվի, սանջակբեյին սուբաշիները եւ նրանց կատարածուները ինչ որ բան վերցնելով ճամփու դնելն արգելված է: Անպայման հանցագործությանը արժանի պատիժ է նշանակվելու: Յուրաքանչյուր հանցագործություն վիլայեթի կադիի իրավասությամբ, քննիչի առաջ պետք է բացահայտվի եւ մեղադրյալի պատիժը հաստատվի: Առանց քննչական մարմիններին հանձնելու, բռնելն ու պատժելը շարիաթով եւ օրենքով հակաօրինական է համարվում: Սակայն հանցագործ եւ մեղավոր հանդիսացող անձը, եթե չկամենա եւ համառի ներկայանալ դատարան, այդ դեպքում բռնի ուժով բերելը չի արգելվում: Մի խոսքով, վիլայեթի կադին, երկրի մեծերը փադիշահական օրենքի հիման վրա, ըստ շարիաթի եւ ընդունված օրենքներով, պետք է դատաստան տեսնեն (էջ 269-271):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 8

*Քրդիի լիվայի կանոնը: Գրված է 960 թ. (1552)*

### Ուեայայի վիճակի մասին

Բերքի հիմնից՝ մեկը, ապրանքի երեքից՝ մեկը, իսկ այգիները տասնորդի հաշվով թող արծաճագրվեն: Հիշյալ լիվան չիֆթլիքի համար հարմար տեղ չունենալով, որպես ապրուստի միջոց՝ օգտվում են մի շարք այլ վայրերից: Ուստի, նրանց չիֆթի հարկ չնշանակվեց: Ըստ իրենց ունեցածի, լավ տեղի երկու դեռնումի համար՝ մեկ ակչե, իսկ վատ տեղի երեք դեռնումի համար՝ մեկ ակչե հողային հարկ գրանցվեց: Ամուսնացածներից 12 ակչե բեննաքի եւ 6 ակչե ըրգադիեի հարկ, իսկ անուրիներից 12 ակչե բեննաքի, 6 ակչե ըրգադիեի եւ 6 ակչե ամուրիության հարկ գրանցվեց: Ոչխարի հարկի գանձումը կատարում են թիմարատերերը: Թող որ յուրաքանչյուր սիփահի ինքը գանձի իր թիմարի ոչխարի հարկը: Դեշտիբանի հարկը գանձվում է այսպես. որեւէ մեկի տավարը եթե մեկ ուրիշին վնաս հասցնի, տավարատիրոջը հիմզ ճիպտի հարված եւ հիմզ ակչե տուգանք է հասնում: Փոխհատուցվելու է նաեւ հասցված վնասը:

Հիշյալ լիվայի ռեայաները «մեզ վրա չիֆթլիք չի նշանակված» ասելով եւ իրենց զբաղեցրած վայրերը անմշակ թողնելով, այլ վայրերում եւ հողերում մշակություն անելու իրավունք չունեն: Իրենց զբաղեցրած վայրերը ամբողջապես մշակելուց հետո, եթե նրանց սիփահին այլ տեղեր չի գտնում, ապա այդ դեպքում նրանք այլ վայրերում մշակություն անելու իրավունք ունեն: Այնպես որ, իր մշակելու հողը, եթե անմշակ թողնի եւ իր սիփահու օգտին չաշխատելով, մի այլ վայրում վար ու ցանք անի, ապա, այդ դեպքում նրանից գանձվում է բոզի բահրա եւ ըստ դաֆթարի, նրանց հասույթը չափելու ընթացքում ցորենից՝ ցորեն, գարիից՝ գարի եւ այլ հացահատիկային բերքից, ինչ ուզում է լինի, սուլթանի հրամանով տվյալ հասույթից նույնությամբ գանձում է կատարվում: Իսկ որպես Գալլա-բահա (հացահատիկի տասնորդ)՝ ոչ մի ակչե եւ ոչ մի ցորեն չգանձվի: Թող որ ժամանակի տիրակալները արգելեն եւ վերացնեն (էջ 244):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 9

*Կարսի լիվայի ընդարչակ դաֆթարը: Գրված է 971 թ.  
(1563) Սուլթան Սուլեյման Կանուննիի շրջանում:*

Առ այսօր Կարսի սանջակում չիֆթի հարկը, լրիվ չիֆթլիք արձանագրված ռեայայից, 25 փարա է գանձվում, որը հավասար է 6 ակչեի:

Խասս համարվող վայրերը մշակվում են ամեն տարի եւ բերք ստանալու դեպքում 2 դեոնումից՝ մեկ ակչե է գանձվում: Եթե միջին կարգի լիմի՝ 3 դեոնումից՝ մեկ ակչե, իսկ վատ հողակտորից՝ 4-5 դեոնումից մեկ՝ ակչե հարկ է գանձվում:

Չիֆթլիքները լիմում են բարձր, միջակ եւ վատ: Բարձր չիֆթլիքը հավասար է 60 դեոնումի, միջակը՝ 80-90-ի եւ վատը՝ 120 դեոնումի: Սակայն ժողովրդի մեջ ընդունված եւ տարածված չիֆթլիքը այն է, որ մեկ չիֆթը հերկելու եւ մշակման համար յուրաքանչյուր տարի զբաղվող հողագործը այն անվանում է մեկ չիֆթի վայր, որը Ստամբուլի մյուղդի հավասար է 6 մյուղի: Եվ հիշյալ լիվային է ենթարկվում Կարսի կազան: Տվյալ կազայի կենտրոնական մասում, ռեայայի մշակած վայրերում տասնորոշ վերցնելուց հետո, որպես սալգուն վերցվում է բերքի կեսը, որոշ մասերում՝ չիֆթի հարկը, իսկ մի քանիսում էլ՝ քաղելու հարկը: Որպես սալգուն, գանձվում է 16 քիլե: Այս կապակցությամբ, երբ դիմեցին բարձր իշխանություններին, չեղյալ համարվեց եւ կրկին ֆերման եղավ այն մասին, որ գետափներին՝ ութի հաշվով, իսկ ամառանոցներում հունուսի ձեռով գանձվի: Այդպես էլ արձանագրվեց: Բանջարանոցներից տասնորոշ վերցնելը օրենքին չի հակասում:

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 10

*Ռուհայի (Ուրֆա) լիվայի ընդարչակ դաֆթարից: 973  
(1565) քվականին գրված է (Կանուննիի շրջան)*

### Դիարբեքիի լիվայի կանուննաանեն

Ռեայայի դրության մասին. Ռեայայի ծավարեղենը չափելու ժամանակ, տասնորդի դիմաց՝ որպես հարկ, դրամ չի վերցվել, այլ ցորենից՝ ցորեն, գարուց՝ գարի եւ այլ հացահատիկային բերքից ինչ որ լիմի, նույն ձեռով է վերցվել եւ մթերվել: Վաճառքը կատարվել է



օրվա նշանակված գումարով եւ ռեայայի նկատմամբ բռնություն չի գործադրվել: Վսեմափայլ փառիշահի կայսրությունում թող որ մշակութայամբ զբաղվեն իրենց ուժի ներածի չափ:

*Բահրայի մասին* Որոշվեց երկու ձեւով բահրա գանձել, երկու կողմերի համաձայնությամբ: Մեկ ձեւն այն է, որ ռեայան իր բերքն ամբողջությամբ բերուն է գյուղ եւ մի վայրում դիզոււմ: Նրա բերքը չափվում է եւ բահրան ըստ դաֆթարի՝ հինգից, վեցից կամ յոթից՝ մեկը գանձվում է: Յորենից՝ ցորեն, գարուց՝ գարի եւ տարվում է շտեմարան ու ամբարվում: Իսկ մյուս ձեւն այն է, որ եթե ռեայան չկարողանա բերքը գյուղ բերել եւ կալսել մոտակայքում, ապա նրա նմանները, իրենց բերքը հնձելուց հետո, ըստ դաֆթարի, որքան որ արծանագրված (5-ից մեկ արծանագրվածները՝ 5 բաժին եւ 6-ից մեկ արծանագրվածները՝ 6 բաժին), այդքան էլ բաժանում է կատարում եւ թիւնատերը ընտրում է դրանից մեկ բաժին: Դրանից հետո ռեայան բահրան տանում է գյուղի մոտ եւ հանձնում է աղաներին: Ամեն մի գյուղի բահրայի համար ռեայան իր գյուղում մի ապահով տեղ է առանձնացնում կամ մի շտեմարան է գտնում: Իսկ հավաքված բահրան մոտակա շուկա տանելն ընդունված կանոն է: Մոտակա շուկան եւս ամենաշատը մի ավուր ճանապարհ պետք է լինի: Ռեայան պարտավոր չէ ավելի հեռու տանելու: Չպետք է պահանջել: Ռեայայի հացահատիկի հարկը, լինի հինգից՝ մեկ, կամ վեցից՝ մեկ, ըստ նրա բնակավայրի, արծանագրված է ընդարձակ դաֆթարում: Բանջարանոցների համար՝ տասնորդ եւ մրգերի համար 7-ից՝ մեկը արծանագրվեց:

*Չիֆթլիքի մասին* Երկարությամբ եւ լայնությամբ քառասուն քայլ տեղը մեկ դեռնում է համարվում: Ոռոգվող եւ ամեն տարի մշակվող լավագույն հողերից 80 դեռնում հողը՝ մեկ չիֆթլիք է կոչվում: Միջակ հողերում, 100 դեռնում տեղը մեկ չիֆթլիք է համարվում: Հիշյալ կարգը դաշտավայր տեղերի համար է: Լեռներում չիֆթլիք չլինելու պատճառով դեռնումի չափն է օգտագործվում:

*Չիֆթհնդի մասին* Այս անձինք, որոնց վրա դաֆթարում չիֆթ է գրանցված, իրենց տեղերը թողնելով, այլ տեղերում հողամշակություն չափտի անեն: Սակայն, իրենց վրա գրանցված տեղերը լրիվ մշակելուց հետո եթե գնան եւ այլ տեղերում մշակություն անեն, այսինքն, ավելի աշխատել ցանկանան, այդպիսիներին աղաները արգելք չափտի հանդիսանան, բայց իրենց վրա գրանցված տեղերը թողնելով, այլ տեղերում եւ այլ հողերում մշակություն անել ցանկացողներին աղաները պետք է արգելեն: «Քո տեղը թողնելով, այլ հողում եթե մշակություն անես, մեկ բահրա եւս կառնեն»

ասելով՝ պիտի զգուշացնեն: Այսպիսի զգուշացումնից հետո, եթե ռեայան իր վրա գրանցված հողը անմշակ թողնելով, այլ գյուղում հող մշակի, այդպիսիներից կրկնակի բահրա պիտի պահանջվի:

Չիֆթ քայթայողի մասին Եթե որեւէ մեկը ի վիճակի լինելով հանդերձ, իր վրա գրանցված հողը չմշակի եւ հողն անմշակ մնա, եւ այդտեղից սփափին բահրայի ու հողի հարկի եկամուտ ունենա, այդպիսիներից չիֆթի հարկ եւ բոզ բահրա պիտի պահանջվի: Սակայն հողի գրանցում ունեցող սփափին, եթե հողը մեկ ուրիշին թափույով տա կամ մի ուրիշ ռայաթ այդ հողը մշակի, եւ այդ հողից սփափառն հողի հարկ եւ եկամուտ հասնի, այն ժամանակ հին տիրոջից բեննաքի հարկ եւ ըրգադիե պիտի պահանջվի, իսկ չիֆթի հարկ եւ բոզ բահրա՝ ոչ: Ովքեր աղքատ եւ կարիքավոր լինելով կամ երկնային աղետների ենթարկվելով՝ չկարողանան չիֆթը մշակել եւ դրանց չիֆթը քայթայվի, այդպիսիներից չիֆթի հարկ եւ բոզի բահրա չպիտի պահանջվի, այլ մյուս բեննաքի հարկ եւ ըրգադիե: Երեք տարին անցնելուց հետո, եթե ռայաթը դարձյալ մշակույթուն չկարողանա անել, թիմարատերը հողը ում որ ցանկանա, նրան պիտի հանձնի եւ մշակել տա:

Լրիվ չիֆթ արձանագրված մահմեդականներից 50 ակչե չիֆթի հարկ է վերցվում, կես չիֆթ արձանագրվածից՝ 25 ակչե եւ բեննաքի հարկը՝ 12 ակչե է վերցվում: Ամուրիության հարկը 6 ակչե է: Ամեն մի ծխին երեք օր ըրգադիե է գրանցված եւ ամեն օր 2 ակչե է զնահատված, այնպես որ ամեն մեկ ծխից 6 ակչե է վերցվում: Ռայաթները սփափառն երեք օր կամ բանվորություն պիտի անեն եւ կամ նրան ակչե պետք է տան: Եթե ռեայաթները միայն բանվորություն անեն, ակչե չեն վճարելու: Անհավատներին չիֆթի հարկ գրանցված չլինելով, ամեն մեկ հարկատուի համար 25 ակչե իսպենջ եւ ամուսնացածներին՝ 6 ակչե ըրգադիե է արձանագրված, իսկ ամուրիներից ըրգադիե չպիտի պահանջել: (Էջ 419-420)

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ - 11**

### ***Արաբկիրի լիվան***

***Արաբկիրի լիվայի կանուննամեն, գրված է 976 թ. (1568)***

Ունայայի դրության մասինՍրանից առաջ ռեայան հացահատիկի հարկ է վճարել: Երկու ցորենը զնահատվում էր մեկ զարու դիմաց: Բահրան գանձվել է ավելիով, որից եւ ռեայան չափից ավելի



ճնշման է ենթարկվել: Այդ պատճառով ռայաթների մեծ մասը լքել է և հեռացել է երկրից, շատերը սնանկացել են և դարձել աղքատ ժողովուրդ:

*Բահրայի մասին* Որոշվեց երկու ձեռով բահրա գանձել: Կողմերը որ ձեւի հետ համաձայնվեն, այդպես էլ թող լինի: Մեկ ձեւն այս է, երբ ռայաթը բերքն ամբողջությամբ բերում է և գյուղի մոտ մի տեղում կախում, մյա բերքը պիտի չափվի և բահրան 6-ից՝ մեկ, կամ 5-ից՝ մեկ, կամ էլ 7-ից՝ մեկ պիտի գանձվի, ցորենից՝ ցորեն, գարուց՝ գարի: Հանաքված բահրան մոտակա շուկա տանելն ընդունված կանոն է: Մոտակա շուկան ամենաշատը մեկ օրվա ճանապարհի պիտի լինի, ավելի հեռու տանելը ռայաթի պարտականությունը չէ, չպիտի պահանջել: Ռեայան պետք է գյուղ բերի և մի տեղ կալսի իր բաժինը: Այդպիսիները իրենց իմացածի պես 6-ից մեկ գրանցվածը 6 թեզ, 5-ից՝ մեկ գրանցվածը 5 թեզ է անում: Թիմարատները դրանցից ընտրում և վերցնում են մեկ թեզը: Այնուհետև տվյալ ռայաթի բահրան տանում է գյուղի մոտ, աղում և հանձնում սահիբ-ի արզին և աղային: Գյուղի ժողովուրդն էլ պետք է մի ապահով տուն կամ շտեմարան ունենա և իր բերքից երբ որ ցանկանա, վերցնի:

*Չիֆթի հարկի մասին* Եթե որեւէ մեկը ի վիճակի լինելով հանդերձ, իր վրա գրանցած հողը չմշակի և հողն անմշակ թողնի, և այդտեղից սիփահին բահրայի և հողի հարկի եկամուտ չունենա, այդպիսիներից չիֆթի հարկ և բոզի բահրա պիտի պահանջվի: Սակայն գրանցված հողը եթե սիփահին մեկ ուրիշին թափուով տա կամ մի ուրիշ ռայաթ այդ հողը մշակի և այդ հողից սիփահուն հողի հարկ ու եկամուտ հասնի, այն ժամանակ նախկին տիրոջից բեննաքի հարկ և ըրգադիե պիտի պահանջվի, իսկ չիֆթի հարկ և բոզի բահրա՝ ոչ: Ովքեր աղքատ և կարիքավոր են և կամ տարերային աղետների ենթարկվելով՝ չկարողանան չիֆթը մշակել և դրանց չիֆթը քայքայվի, այդպիսիներից չիֆթի հարկ և բոզի բահրա չպիտի պահանջվի, այլ միայն բեննաքի հարկ և ըրգադիե:

Երեք տարին անցնելուց հետո, եթե ռայաթը դարձյալ մշակություն անելու ընդունակ չլինի, թիմարի տերը հողը ում որ ցանկանա, նրան պիտի հանձնի և մշակել տա:

**ՎԱՎԵՐԱԳԻՐ 12**  
**ԱԳԱՆԱՅԻ ԼԻՎԱՆ**  
**Գրված է 980 թ. (1572)**

**Աղանայի կանոննամեն**

Հիշյալ լիվայում բնակվող ռեայայից, մահմեդական կամ զիմ-մի, նվաճումից առաջ եւ հետո<sup>24</sup>, յուրաքանչյուր տարվա համար, որպէս ընտանիքի ծխի հարկ (ռեսմի հանե) գանձվել է 25 փարա, որը հավասար է 50 օսմանյան ակչեի: Դաֆթարում ըստ օրենքի արծանագրված լինելով, գրանցվել է նաեւ կայսերական նոր դաֆթարում: Թող որ կեսը գանձվի սուլթանութեան նեվրուզի ընթացքում, իսկ մյուս կեսը՝ աշնան ամսի սկզբին: Տորենը, գարին, վարսակը, բամբակը, սոււսանը, սոխը, մրգերի մի մասը, այգիներն ու բերքը առաջվա նման գանձվում է տասնորդով: Ըստ վաղեմի սովորության, նույնպէս 10-ից մեկը գրանցվեց:

Հիշյալ լիվայում բնակվող անհավատների հարկը հնուց ի վեր գանձվել է 24-ական փարա , որը հավասար է 48 ակչեի: Հիշյալ անհավատների յուրաքանչյուր շնչին ընկնում է 30 փարա, որը հավասար է 60 օսմանյան ակչեի: Հետագայում 30-ական փարա գրանցվեց: Հին դաֆթարում արծանագրվեց, որ ավել կամ պակաս չգանձվի եւ այնուհետեւ նույնութեամբ գրանցվեց նոր դաֆթարում: Համաձայն փաղիշահի հրամանի, որոշվեց 20 քանթար բրնձի սերմ ցանել: Ոռոգողները եւ ջուր բաժանողները ցանելու են երկուական քանթար: Մեկական քանթարը որպէս իրենց աշխատանքի հատուցում, իսկ մյուս մեկ քանթարից, այլ հողագործներից գանձվածի նման, վերցվելու է պետութեան բաժինը: Պետութեան կողմից ուրիշ ոչ մի բան չի գանձվելու: Սերմը եթե ավել կամ պակաս լինի, ապա հաշվարկը թող կատարվի այս նույն ձեւով: Եվ հիշյալ գետերին ծառայող մարդիկ (ջրբաշ), իրենց կատարած աշխատանքի համար թող որ ազատվեն ավարիզի դիվանիէ, թեքալիֆի օրֆի, ռեսմի հանե եւ ռեսմի կանեմ հարկերից եւ նրանց մյուսեւլլեմ լինելու մասին եղած հրովարտակի համաձայն, արծանագրութիւն կատարվեց հնագույն դաֆթարում եւ այնուհետեւ գրանցվեց նոր դաֆթարում: Եվ յուրաքանչյուր գետը տնօրինողը պետք է նախապատրաստի եւ առանձնացնի բրինձ ցանելու վայրը եւ նկատի ունենա տվյալ գետի ջրով ոռոգում կատարելու խնդիրը: Այդ նույն տարում բրինձի ցանքը որ վայրում էլ մշակվի, հողատերը պետք է զգուշացնի հո-

ղագործներին, որ այլ բան չցանեն, եւ ճիշտ ժամանակին, առանց հապաղման, զբաղվեն բրնձի ցանքսով: Եվ թող վստահ լինեն, որ անհրաժեշտության դեպքում բրինձի սերմը ապահովվելու է պետության կողմից ըստ հողագործի նախատեսած չափի, եւ փոխհատուցվելու է արժեքը ըստ նրա աշխատանքի: Այնուհետեւ, բրինձը հասունանալուց հետո էմինները (վերակացուները) կադիի գիտությամբ գալիս եւ տնօրինում են ցանքսը: Առանձնացվում է պետության կողմից տրված սերմը, ինչպես նաեւ վերցվում է պետության բաժինը եւ այնուհետեւ գետափի մերձակա տարածքում գտնվող վայրի համար գանձվում է կյուրեկչիի տասնորոգը:

Ժամանակի գործող օրենքով եւ այսօր էլ հիշյալ լիվայում գտնվող հին վայրում արգելված է եղել բամբակի վաճառքը:

Յուրաքանչյուր ոք, իր ծախու բամբակը Աղանայի շուկան բերելով եւ վաճառելով, տալիս էր

«ռեսսի կապան» հարկը: Հին դաֆթարում այդ հաշվարկով 70 000 ակչե հարկ է սահմանել: Նախկինի նման 70 000 ակչե արծանագրվեց նաեւ նոր դաֆթարում: Ռեսայաներից մի շարք մարդիկ, երկու տարվա ընթացքում եկել եւ բողոք են ներկայացրել բարձր իշխանություններին: Կայսերական հրամանագիր էր եղել այն մասին, որ յուրաքանչյուր ոք այսուհետեւ պարտավոր չէ բամբակը ծախելու համար շուկա տանել: «Մինքնաթի գզուշացնելով տար», «նրանից վերցնելով շուկա տար»<sup>25</sup> ասելով, կայսերական հրամանին հակառակ ռեսայային զուլում եւ փոխանակություն չլինի:

Աղանայի կամրջի բաջը հին կանոնով. Քաղաք ծախու բերված ապրանքից, կամուրջը անցնող ուղտից, ձիուց եւ ջորուց, բոլորի համար վերցվում է մեկական ակչե հարկ, իսկ եթե Հալեբից ուղտերի քարավան ժամանի, մեկ քարավանից գանձվում է չորսական ակչե: Եթե ոչխարի հոտ անցնի, 100 ոչխարից գանձվում է 10 ակչե: Մի այլ սանջակից ամառանոց կամ ձմեռանոց գնացող մարդկանց յուրաքանչյուր ընտանիքից գանձում է երկուական ակչե: Եթե դաֆթարում բացատրություն չլինի, ապա կատարվում է «բաջը ջեզիրե Աղանա»: Հին դաֆթարում այդպես է արձանագրվել եւ այդպես էլ գրանցվեց:

Ջաղացքի հարկը. Հնուց ի վեր ամբողջ տարին գործող ջաղացքից գանձվել է 60 ակչե, 6 ամիս գործող ջաղացքից՝ 30 ակչե:

Յուրաքանչյուր փեթակից գանձվել է 2-ական ակչե:

Ոչխարի հարկը. Յուրաքանչյուր ոչխարից գանձվել է մեկ ակչե:

Գոմեշի հարկը. Առողջ գոմեշից՝ 6 ակչե: Այսպես արձանագրվեց:



Քրեական հանցագործության համար անհրաժեշտ է դիմել օսմանյան օրենքներին: Ավել բան չգրանցվի:

Շարկի (բաքի) կանոննամեն. Առանց Ադանայի կամուրջը անցնելու, քաղաքում վաճառվող ապրանքից, վաճառքի համար շուկա բերած մահուդից, կեբեներեկից, գորգից, ձեթից, կաշվից, այծի կաշվից եւ նման ապրանքների մեկ բեռից զանձվում է 2-ական փարա, եթե մի կապոց լինի, զանձվում է մեկ փարա: Եթե կես կապոց լինի, մեկ օսմանյան ակչե է զանձվում: Եթե ավելի պակաս լինի, 40 ակչեի արժողության համար մեկ բաջ է վերցվում:

Շուկայում սպիտակեղեն վաճառողների մասին. 4 կապոց սպիտակեղենից մեկ օսմանյան ակչե է զանձվում, եթե մի կապոց լինի՝ մեկ փարա: Եթե բեռը ամբողջական լինի, 2 փարա է զանձվում:

Ստրուկ եւ ստրկուհի վաճառելու դեպքում 2 փարա է զանձվում: Վաճառողից եւ գնողից 2-ական փարա է զանձվում: Յուղ եւ պանիր բերելու դեպքում, մեկ ուղտի բեռից զանձվում է մեկական փարա: Ձիու եւ ջորու բեռից զանձվում է մեկական օսմանյան ակչե:

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 13**

#### **ԱԳԱՆԱՅԻ ԼԻՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԱՄԵՆ**

**Գրված է 954 թ. (1547)**

Որեւէ մեկը կարող է ցանկացած վայրում իր բամբակը վաճառել, եւ որպեսզի «շուկա տար» ասելով՝ առաջարկություն չլինի, այդ մասին եղել է կայսերական հրաման:

Զննիչ կաղը հանդիսացող Սամսունցի զաղեն, իր գալու ժամանակ, ցույց տալով այդ հրամանագիրը, ասել է, որ զուլումի հետեւանքով բողոքի պատճառ է եղել: Առաջարկ է եղել տվյալ շուկա չգնալու, բայց դրանից հետո շուկա բամբակ բերելը դադարել է: Այդպիսով, առանց պատճառի, ռեսմի կապանը դարձել է 15 000 ակչե: Այն նվազել է 55 000 ակչեով: Այս մասին երբ դիմել են Ստամբուլ, շուկա տանելու առաջարկը վերացվել է եւ 20 000 ռեսմի կապան նշանակելու մասին հրովարտակ է եղել: Բարձր հրամանի բովանդակությամբ հիշյալ լիվայի ռեայայի ծախս բամբակը շուկա տանելու առաջարկը չի ընդունվել եւ իրենց ցանկությամբ շուկա բամբակ տանողներից զանձվել է 20 000 ակչե ռեսմի կապան: Այդպես էլ արձանագրվել եւ գրանցվել է նոր դաֆթարում (էջ 448):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 14

### **ԲԱՅՔՈՒՐԳԻ (ԲԱՔԵՐԳ) ՎԻԼԱՅԵԹԻ ԿԱՆՈՒՆԱՍԵՆ**<sup>26</sup>

Զիֆթ ունեցող եւ մեկ չիֆթլիքի սահմանում հող մշակելու կարողություն ունեցող եւ այս վիլայեթում բնակվող մահմեդական ռեայաներից 50-ական օսմանյան ակչե չիֆթի հարկ է գանձվում: Նրանցից, որքեր չիֆթ չունեն եւ երկրորդ անգամ են ամուսնանում, 12-ական ակչե բեննաքի հարկ է գանձվում: Նրանցից, ովքեր ամուրի լինելով, իրենց ծնողներին չեն ծառայում եւ առանձին, իրենց հատուկ աշխատանքով են զբաղվում, այդպիսիներից 6-ական ակչե ջաբա բեննաքի հարկ է գանձվում: Անհավատներից վերոհիշյալ հարկերը չեն վերցվում, սակայն մեկ հարկատուից 25-ական ակչե իսպենց է գանձվում:

Զիֆթ չունեցող բեննաք կոչված մահմեդականներից, եթե մեկը որոշ քանակությամբ հող ունենա, ըստ մշակած հողի քանակի, ամեն երկու դեռնումից՝ մեկ օսմանյան ակչե է գանձվելու:

Վերոհիշյալ հարկերը թե՛ անհավատներից եւ թե՛ մուսուլմաններից գանձելու ժամանակը զարման սկիզբն է՝ մարտ ամիսը: Այդ ժամանակ պիտի վերցնել, դրանից առաջ չի կարելի: Արձանագրված է, որ թե մահմեդականների եւ թե անհավատների ցանքսերից հարկը հինգից՝ մեկի հիման վրա պիտի վերցվի:

Մեղրի հարկը. Ստացված մեղրի տասնորդի հիման վրա պետք է վերցնել:

Ջրաղացի հարկը. Յուրաքանչյուր ջրաղացից ամսական 5-ական ակչեի հաշվով պիտի գանձել, որը տարեկան կազմում է 60 ակչե:

Ղջխարի հարկը. Յուրաքանչյուր երկու ոչխարից մեկ ակչե պիտի գանձել:

Յայլաղի հարկը. Յուրաքանչյուր յայլաղ գնացողից, որը չորքուտանիներ ունի, մեկ նուկի յուղ պիտի վերցնել, որը հավասար է 200 դիրհեմի:

Եթե ձին, կովն ու եզը ցանքս մտնելով, վնաս պատճառեն, ամեն մեկ անասունի համար 5 ակչե տուգանք է գանձվում: Ցանքսի տիրոջ վնասը անասունի տերը պիտի հատուցի: Ամեն մի անասունի պատճառած վնասի համար, իբրեւ պատիժ, տիրոջը 5 գավազանի հարված պիտի տան: Սակայն նման դեպքում յուրաքանչյուր տնից որոշ գումարի ակչե չպիտի գանձել:

Հացահատիկների գինը եւս Ստամբուլի քիլեով պիտի հաշվել.



որը հավասար է 20 օքքայի: Տորենի քիլեն՝ 8 ակչե, գարու եւ կորեկի քիլեն՝ 6 ակչե, շիրայի բաթմանը՝ 5 ակչե, պտուղների բաթմանը՝ 2 ակչե հաշվելով եկանուտ է գրված: Սակայն թիմարի տերը բահրա նույնությամբ պիտի վերցնի եւ ինքը վաճառի, ավելի կամ պակաս ինչ ուզում է լինի, վնասը իրենն է, ռայաթից ակչե չպիտի պահանջի, օրենք չէ:

Բայբուրդի վիլայեթում վակֆ եղած գյուղերից, հնուց ի վեր բերքի տասից՝ երեքն է վերցվել, երկուսը դիվանի, մեկը՝ մալիքանե: Դարծյալ առաջվա նման տասից՝ երկուսը դիվանի եւ մեկը վակֆի համար արձանագրվեց: Դիվանին հատկացվեց թիմարին, իսկ վակֆին՝ մզկիթների եւ մեդրեսենների կարիքների համար: Այդ բոլորը նույնությամբ արձանագրվեց:

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 15**

### **ԿԱՆՈՒՆՆԵՐ<sup>27</sup>**

#### **Կանուն 1**

Ինքնուրույն գործի տեր մահմեդական ռայաթից գանձվում է 30 ակչե հարկ եւ առանձին 6 ակչե ամուրիության հարկ:

Ամուրի կամ ամուսնացած ոչ-մահմեդականից, որպես իսպենջի հարկ, գանձվում է 25 ակչե: Որեւէ մահմեդական կամ ոչ-մահմեդական, եթե ինքնուրույն գործ կամ արհեստ չունի, նրանից ռայաթի հարկ կամ իսպենջի հարկ չի գանձվում: Մահմեդական ռեայայի ամուրի տղան եթե ամուսնանա, նրանից որպես բեննաքի հարկ գանձվում է 12 ակչե: Եթե մահմեդական ռեայայի կինը մահանա, ապա նրանից գանձվելու է ամուրիության հարկ: Որեւէ ամուրի մահմեդական իր տրամադրության տակ ստրկուհի ունենալու դեպքում, նրանից եւս ամուրիության հարկ է գանձվում (էջ 10):

#### **Կանուն 2**

Ոչխարի խարաջ եւ ոչխարի հարկերի վերաբերյալ փաղիշահի ֆերմանը այսպես է հրամայում.

Ջրիստոնյայից, որպես մակթու կանխիկ գանձվում է 150 ակչե: Սրա 140 ակչեն պահ է տրվում, իսկ 10 ակչեն հատկացվում է խա-

րաջ հավաքողների աշխատավարձի համար: Հնուց ի վեր որոշված է եղել բարձր խարաջի գանձումը, այն փոփոխության չի ենթարկվում եւ մնում է նախկինի պես: Որպես ոչխարի հարկ, յուրաքանչյուր ոչխարից գանձվում է մեկ ակչե: 300 ոչխարի դիմաց, որպես աղըլի հարկ գանձվում է 5 ակչե: Հրամայված է յուրաքանչյուր 100 ոչխարից հավաքողների համար 25 ակչե հատկացնել: Այս հրամանից ավելի կամ պակաս չգանձելու մասին գոյություն ունի փաղիշահի հրամանը եւ այս կապակցությամբ 1004 թ. (1595) գանձատան եւ դիվանի կողմից արձակված են վճիռներ: Այս խստությունը մտցրել է Սինան փաշան<sup>28</sup>: Թող սրա պատասխանը հանդերձյալ աշխարհում տա: Մեկ ոչխարի դիմաց վերցրած մեկ ակչեն միմիայն գանձատան համար է հատկացվում: Թիմարատերերի, բեյլերբեյիների եւ սանջակբեյերի կողմից խասսերից վակֆի համար երկու ոչխարից մեկ ակչե վերցնելը հին օրենք է<sup>29</sup> (էջ 11):

### Կանոն 3

1012 (1603) թ.

Ոչ-մահմեդական ռայաթը իր սիփահիում իսպենջ տալու ընթացքում եթե մահմեդական դառնա, այլեւս սիփահին «դու մինչեւ հիմա իսպենջ էիր տալիս եւ շարունակելու ես տալ» ասելով, չի կարող նրանից իսպենջ պահանջել: Մահմեդական դառնալուց հետո նրանից գանձվելու է բեննաքի հարկ: Այսպես է օրենքը (էջ 13):

### Կանոն 4

Չիֆթի, բեննաքի եւ մյուզերբեդի հարկերը ըստ օրենքի գանձվում է յուրաքանչյուր տարվա մարտ ամսին: Մարտ ամսվա առաջին օրը ով որ նշանակված է չիֆթի, բեննաքի եւ մյուզերբեդի հարկերը հավաքելու, նրան է այն պատկանելու: Մի շարք վիլայեթների դաֆթարներում հարկերը քիչ են արձանագրված, իսկ մի շարք վիլայեթներում՝ շատ: Հարկերը գանձվելու են յուրաքանչյուր վիլայեթի ընդարձակ դաֆթարի համաձայն: Ոչ-մահմեդականի համար նշանակված է իսպենջի հարկ: Լինի ամուսնացած կամ ամուրի, հող ունենա կամ չուենա, միելնույնն է, 25 ակչե իսպենջ տալը արձանագրված է Ռումի<sup>30</sup> վիլայեթի կանոննամեում (էջ 13):

### Կանոն 5

Ոչ-մահմեդականի տրամադրության տակ գտնվող վայրերը եթե հետագայում իր կնոջ կամ որեւէ մահմեդականի ձեռքը անցնի, դաֆթարում նշանակվածի համաձայն իսպենջի հարկ է վճարելու (էջ 14):

#### **Կանոն 6**

*1021 (1612)թ.*

Նախկինում որպես այգի արձանագրված հողակտորը եթե հետագայում անմրգատու դառնա, տերը կարող է ծառերը կտրատել եւ դաշտի վերածել: Երեք անընդմեջ տարիների ընթացքում եթե չվարի եւ դատարկ թողնի, ապա այն թափուի իրավունքով տիրոջից վերցնել եւ վարել: Տվյալ հողակտորի մեջ եթե ընկույզի ծառեր գտնվեն, ապա իսկական տերը՝ «այն իմն է » ասելով, չի կարող բերքը քաղել: Այն պատկանում է թափուի իրավունքով վերցրած անձին: Այս բարձր հրամանը տրված է հանգուցյալ Համզա փաշայի կողմից՝ նիշանջի եղած ժամանակ (էջ 11):

#### **Կանոն 7**

Որեւէ մեկը իր տրամադրության տակ հողակտոր ունենալով եթե մահանա, տվյալ հողակտորը փոխանցվում է որդուն: Եթե տվյալ հողակտորի տերը տղա է, որեւէ մեկը չի կարող ասել՝ «այդ վայրը քեզ չի կարող պատկանել, քանի որ քո ձեռքին պարտամուրհակ չկա»: Այս խնդրում տվյալ հողակտորի տիրոջ համար պարտամուրհակ տալու անհրաժեշտություն չկա (էջ 15):

#### **Կանոն 8**

*1010 (1601) թ.*

Որեւէ մեկի հայրը պետությանը պարտք ունենալով եթե մահանա, հողը փոխանցվում է որդուն եւ կողմնակի մի անձ մեջտեղ գալով չի կարող ասել «ես քո հոր պարտքը մարեցի եւ այդ վայրը իմն է»: Այդ պարտքը փոխհատուցվում է մեռնողի մի այլ ունեցվածքից:

#### **Կանոն 9**

Որեւէ մեկը, եթե իր հողակտորը ժամանակավոր օգտագործ-

ման համար հատկացնի մեկ ուրիշին, ապա վերջինս, թեկուզ տաս տարով էլ վերցրած լինի, պարտավոր է տասնորդն ու հարկը պարբերաբար վճարել հողատիրոջը: Տաս տարուց հետո հողատերը եթե ցանկանա հետ վերցնել իր հողը, ապա օգտագործող անձը չի կարող հակառակվել եւ ասել, որ «տաս տարուց ի վեր այս հողը ես եմ մշակում եւ տասնորդն ու հարկն էլ ես եմ վճարում» (էջ 15):

#### **Կանոն 10**

Դաֆթարում արձանագրված քրիստոնյա ռայաթը կամ նրանց որդիները, եթե դեվչիրմեի ենթարկվեն, կամ էլ մահմեդականությունը ընդունելով՝ աճեմի օղլանը դառնան, ապա նրանք այլևս ռայաթ չեն համարվի: Սակայն սրանց որդիները, որոնք դաֆթարում ռայաթ են արձանագրված, այդպիսին էլ կմնան, մինչեւ իրենց ծնողների՝ ենիչերի: դառնալը: Այդպիսիները առաջվա նման համարվում են ռայաթ: Միմիայն ենիչերի դառնալուց հետո նրանց որդիները ռայաթ չեն համարվի: Դաֆթարում արձանագրված ռայաթը, եթե կաղը, մյուղերրիս կամ մյուլագիմ դառնա, նրանից բեննաքի եւ մյուջերրեդի հարկ չի գանձվելու: Դանիշմեններից նույնպես հարկ չի գանձվելու: Եթե դանիշմենը իր պարտականությունը չկատարի եւ այստեղ-այնտեղ թրե գա, ապա նրանից ռայաթի հարկ է գանձվելու: Կրոնական գործերով զբաղվողները, եթե դաֆթարում ռայաթ արձանագրված լինեն, նրանցից բեննաքի եւ մյուջերրեդի հարկ չի գանձվելու: Իմամը եւ հաթիբները նույնպես կրոնական պարտականություն կատարելու ընթացքում այս հարկերից ազատվելու են (էջ 17):

#### **Կանոն 11**

Քրիստոնյա մի անձնավորություն եթե քահանա դառնա եւ աշխատի իր ժողովրդի օգտին, իսպենջ եւ խարաջ չի վճարելու: Նրա ռայաթ որդիները եւ ստրկությունից ազատվածները ռեայայի նման հարկ են վճարելու (էջ 17):

#### **Կանոն 12**

Ռեայան իր դաշտը հանգստացնելու նպատակով եթե հերկի, բայց անմշակ թողնի՝ տվյալ տարում իր ամասուններին խտտ քաղելու համար, ապա նրանից տասնորդի հարկ չի գանձվում: Եթե



դաժճարուն չի արձանագրված, այլ հետագայում այդ առթիվ վի-  
լայեթի քարտուղարը իր նախածեռնությամբ նշում կատարած լի-  
նի, ապա այն ուժի մեջ լինել չի կարող: Հողը հանգստացնելու հա-  
մար, եթե որեւէ մեկը երեք տարի չնշակի եւ տվյալ վայրը որպես  
մարգագետին օգտագործի, ապա հողատերը մարգագետնի հարկ  
է գանձում, իսկ դաժճարուն գրանցված չլինելու դեպքում՝ տաս-  
նորդի հարկ: Տվյալ վայրը երեք տարուց հետո մարգագետին է հա-  
մարվում:

Ուայթի կալվածքում եթե ջրհեղեղ լինի եւ հողը աննշակ մնա-  
լով՝ մարգագետին դառնա, ապա այդ վայրը ուայթի ծեռքից չի  
վերցվում: Տվյալ վայրից մարգագետնի հարկ է գանձվում: Հետա-  
գայում, ջրհեղեղի տակ մնացած հողը եթե մշակելի դառնա եւ սի-  
փահու համար եկամուտ բերի, ապա այն այլեւս մարգագետին չի  
համարվի, այլ մշակելի հող (էջ 21):

### **Կանոն 13**

...Բաղնեպանները պետք է իրենց բաղնիքները մաքուր պահեն:  
Բաղնիքի ջրերը ոչ շատ տաք եւ ոչ էլ շատ սառը պետք է լինի: Դալ-  
լաքները գործունյա, գլուխ ածիլելու մեջ վարպետ եւ իրենց ար-  
հեստում գիտակ անձ պետք է լինեն: Հաճախորդին մատուցած սր-  
բիչները պետք է մաքուր լինեն: Միեւնույն սրբիչը քրիստոնյային եւ  
մահմեդականին տալը արգելված է: Քրիստոնյաներին տրվող սր-  
բիչները պետք է նշանով առանձնացված լինեն: Վարսավիրները  
միեւնույն ածելիով չեն կարող մահմեդականի եւ քրիստոնյայի  
գլուխը ածիլել<sup>31</sup> (էջ 62):

### **Կանոն 14**

#### *Բաջի հարկի գանձման տեսակները*

Ոչ-մահմեդական կամ մահմեդական մեկը, ով ուզում է լինի,  
եթե մի այլ տեղից վաճառքի համար կեբե, կեբենեք, կաշի, մեղր,  
յուղ եւ նման այլ իրեր քաղաք բերի, ապա որպես հարկ 40 ակչե  
արժող ապարանքի համար վճարելու է մեկ ակչե: Կերպասեղենի մեկ  
բեռի համար՝ մեկ ակչե: Չուխա, քաթամ, բամբակ, ամագ, արճիճ  
եւ սրանց նման այլ իրերի համար մեկ բեռից գանձվում է երկու ակ-  
չե: Նոր բերք տված մրգի մեկ բեռի համար՝ մեկ ակչե: Մրգի առատ  
ժամանակ բերք ներմուծելու դեպքում՝ 2-3 բեռի համար՝ մեկ ակչե:



Մարխի մեկ բեռից մեկ մարխ է վերցվում: Էջը իր բեռով բերդ մտնելու ընթացքում, դռնապանը, որպես հարկ, վերցնում է մեկ հեծան (գերան): Շուկայում եղջերավոր անասուն ծախելու ժամանակ որպես հարկ, երկու ակչե վաճառողից, երկու ակչե էլ գնողից է վերցվում: Շուկայում վաճառվող ոչխարների մեկ կանթարի համար երկու ակչե է գանձվում: Մեկ ակչեն վճարում է վաճառողը, մեկն էլ գնողը: Մի այլ կասաբայից բերված եւ մորթված երկու ոչխարի համար վերցվում է մեկ ակչե: Որեւէ կասաբայի մեջ, որեւէ մեկին պատկանող մորթված ոչխարը ծախելու դեպքում, չորս ոչխարի համար գանձվում է մեկ ակչե:

Սաավաճառը իր մորթած եղջերավոր անասունը ծախելու դեպքում հարկ չի վճարում:

Մեկ նավ բեռից գանձվում է 130 ակչե հարկ:

Մեկ սայլ սոխի բեռից՝ 4 ակչե:

Մեկ սայլ բրնձի բեռից՝ 8 ակչե:

Մեկ սայլ ձկան բեռից՝ 8 ակչե:

Գերի վաճառելու դեպքում, երկու տարեկանի համար 4 ակչե է գանձվում: Երկուսը առնողն է վճարում, երկուսը՝ վաճառողը:

Վաւախսիայից, Ֆրեմկից<sup>32</sup>, Վիդինից, Նիկդեից եւ այլ վայրերից ինչ-որ ներմուծվի, 100-ից երկու հարկ է գանձվում:

Մեկ սայլ փայտից մեկ փայտ է վերցվում:

Քաղաք բերված մեկ տակառ գինու համար 15 ակչե հարկ է վերցվում:

Մորթված խոզը ծախելու դեպքում, յուրաքանչյուրի համար վերցվում է մեկ ակչե:

Վաճառքի համար ներմուծվող ոչխարի համար, երկուսից գանձվում է մեկ ակչե (եջ 70):

## Կանոն 15

### *Ամուսնական հարկի մասին*

Սիփահիի նոր դաֆթարի մեջ գերդեկի արժեք անունով ամուսնական հարկ է արձանագրված: Սիփահիի մահմեդական ռեայայի աղջիկների համար, որպես ամուսնական հարկ 60 ակչե է նշված: Եթե կինը որբեվայրի է, ապա չափի հարկը կապված է հողային ունեցվածքի հետ. եթե յուրյուք չէ, ամուսնական հարկ է գանձվում 30 ակչե:

Եթե սիփահիի ռեայան ոչ-մահմեդական է, ապա նրանց ամուսնի աղջիկներից 30 ակչե, իսկ որբեվայրիներից 15 ակչե հարկ է

զանձվում (էջ 72):

### **Կանոն 16**

Եթե անհրաժեշտություն լինի պակմազից տասնորդ վերցնել, ապա այդ մասին պետք է գրանցում լինի դաֆթարում: Ըստ դաֆթարի, պակմազի տասնորդը տասնհինգից մեկն է վերցվում, իսկ կոֆթեի համար՝ տասնչորսից մեկը, քանի որ վառելիքի ծախս կա: Այդպես է նշված կանոննամեում:

Ռայաթի համար մյուջերրեդի հարկը ամեն անգամ միատեսակ չի լինում: Ռայաթի աշխատունակ մահմեդական տղաներից որպես մյուջերրեդի հարկ զանձվում է 50 ակչե: Ռչ-մահմեդականների ամուսնացած զավակներից 25 ակչե իսպենջի հարկ է զանձվում: Իսպենջի հարկը զանձելու համար անհավատի երեխաները պետք է չափահաս լինեն: Անչափահաս եւ անաշխատունակ ոչ-մահմեդական տղաներից իսպենջի հարկ չի զանձվում: Մահմեդական ռեայայի որդին եթե ամուսնանա, նրանից որպես բեննաքի հարկ զանձվում է 12 ակչե: Անուրի մահմեդականները եթե իր տրամադրության տակ ստրկուհի պահի, պարտավոր է մյուջերրեդի հարկ վճարել (էջ 74):

### **Կանոն 17**

Ռչ-մահմեդական ռեայայից սիփահին իսպենջի հարկ է զանձում: Դետագայում ոչ-մահմեդականը դավանափոխ լինելով, մահմեդականություն ընդունի, սիփահին իրավասու չէ նրանից իսպենջ զանձելու: Միմիայն բեննաքի հարկ կարող է զանձել: Այս մասին գոյություն ունի կայսերական հրամանագիր (էջ 77):

### **Կանոն 18**

Ռչ-մահմեդականի տրամադրության տակ գտնվող վայրերը եթե հետագայում իր կնոջ կամ որեւէ մահմեդականի ձեռքը անցնի, դաֆթարում նշանակվածի համաձայն իսպենջի հարկ է վճարելու:

Դաֆթարում հաշմանդամ արժանագրված որեւէ մեկը եթե իրականում տկար լինելով, հնարավորություն չունենա աշխատելու, նրանից ոչ մի բան չի զանձվում: Իրականում ոչ մի պակասություն չունեցող մեկը եթե դաֆթարում հաշմանդամ է արժանագրված, պարտավոր է ռայաթի հարկը վճարելու: Ըստ դաֆթարի, ռայաթի

հարկից ազատված որեւէ մեկից բեմնաքի հարկ չի գանձվում (էջ 78):

### **Կանոն 19**

Ղաֆթարում ռայաթ արձանագրված ոչ-մահմեդականը եթե հետագայում քահանա դառնա, շարունակելու է վճարել խարաջի եւ իսպենջի հարկերը: Եթե տվյալ կրոնավորը, նյութական նեղ պայմանների մեջ գտնվելով, դժվարանա խարաջի եւ իսպենջի հարկերը վճարել, ապա տվյալ դեպքում նրանից ոչ մի բան չի վերցվում (էջ 81):

### **Կանոն 20**

Ղաֆթարում ռայաթ արձանագրված մեկը, օգտագործման պիտանի իր չիֆթը եթե առանց պատճառի լքի եւ մի այլ գործ կատարելու համար մեկնի որեւէ տեղ, ապա նրանից գանձվելու է «չիֆթ բոզանի» հարկ: Եթե չիֆթը լրիվ է, նրանից գանձվում է 300 ակչե, եթե կես է՝ 150 ակչե, եթե կեսից էլ պակաս է, ըստ օրենքի, 70 ակչե: Այս կապակցությամբ մուհարրեմ ամսին ֆերման է տրված (էջ 81):

### **Կանոն 21**

Անձնական շահույթ ունեցող մահմեդական ռայաթից 6 ակչե մյուջերրեդի հարկ է գանձվում եւ 30 ակչե՝ ռայաթի հարկ: Ձիմնիներից (ամուսնացած կամ ամուրի) որպես իսպենջի հարկ, վերցվում է 25 ակչե: Իսպենջի հարկ վճարողները հնուց ի վեր արձանագրված են Ղաֆթարում: Մահմեդական կամ անհավատ մեկը եթե անձնական շահույթ չունի, նրանից հարկ կամ իսպենջ չի գանձվում: Մահմեդական ռայաթի ամուրի որդին եթե ամուսնանա, նրանից որպես բեմնաքի հարկ, գանձվում է 12 ակչե: Եթե կինը մահանա, կրկին մյուջերրեդի հարկ է գանձվում: Որեւէ մահմեդական ամուրի անձ իր տրամադրության տակ ստրկուհի պահելու դեպքում կրկին մյուջերրեդի հարկ է վճարելու (էջ 99):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 16

### ԿՈՒՄԱՆԱՏԻ՝ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԻ ԿԱՏԱՐ- ՎՈՂ ՉՈՒԼՈՒՄՆԵՐԸ

Կուսմանատ գյուղի քրիստոնյաները բողոքարկել են այն մասին, որ իրենց վրա նշանակված հարկերը ամբողջությամբ վճարելուց հետո, գյուղի սուբաշին յուրաքանչյուր անհատի համար նշանակված 62 փարայից ավելիով գանձումներ է կատարել: Փաղիշահը<sup>24</sup>, ուղարկած իր հրամանագրում պահանջել է, որ նման բռնություններին վերջ տրվի եւ 62 փարայից ավելի հարկ չգանձվի<sup>25</sup>:

Գրված է 1232 (1817) թ.

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 17

### ԹՈՒՔԱԹԻ ՎԻՒԱՅԵԹԻ ՀԱՐԿԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ:

Մահմեդական, քրիստոնյա եւ հրեա թոքաթցիները, հարկերի բաշխման եղանակից դժգոհ լինելով, շարունակ վեճի մեջ են գտնվել: Ի վերջո, ժողով գումարելով, ընդունել են հետեւյալ որոշումը<sup>26</sup>:

Վիլայեթի ընդհանուր գումարից թողանալու, Կուսմանատի եւ Կաֆիրնեի նահիյեները հանելուց հետո, բոլոր հարկերն ու վճարումները բաժանվելու են հինգ մասի: Հինգից երկու բաժինը վճարելու են մահմեդականները, իսկ երեքն էլ՝ հույները, հայերը եւ հրեաները: Մահմեդականների մնացորդը գանձվելու է մահմեդականներից, իսկ մնացածն էլ մյուսներից: Այնպես որ, մնացորդները մեկը մյուսի հետ չպետք է շփոթել:

Այս ժողովին մահմեդականներից մասնակցել են՝ Մյուֆթի Իմարեթճի զադե Օմեր էֆենդին, Աբդուլ Լաթիֆ զադե Հյուսեյն աղան, Թոռուն աղա զադե Էրուբեքիր աղան, Կուրու Ալի զադե հաջի Իբրահիմը եւ Խալիլ էֆենդիները, Էլմայի զադե Սալիհ էֆենդին, Եշիլ Բաբա էֆենդին, Հաջի Մյուֆթի զադե Մահմուդ էֆենդին եւ բոլոր էսնաֆ հաջիները...:

Մյուս կողմից, ռեայայի երեւելի անձերից մասնակցել են՝ Ներսես օղլու Մուղդիսը, Կարապետը, Բենբեջի օղլու Պողոսը, Իբել օղլու Ֆոկասը, Թամաջան օղլու Անդոն, Կիրաստն օղլու..., Թաթոս օղլու Ակոբը, Կազեզ Բըղըկ օղլու Սեդրակը, Քեջեջի օղլու Ավետիքը, Ալթըն օղլու Հովսեփը, Սեֆեր օղլու Ստեփանը, Բասմաջըն քյուքյունջու օղլու Կարապետը եւ ռեայայի այլ ներկայացուցիչ-



ճեր<sup>27</sup>:

Գրված է 1246 (1831) թ.

## ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քաղվածաբար բերված արգելման այս հրամանագիրը հրապարակվել է սուլթան Մեհմեդ II-ի (1451-1481 թթ.) օրոք՝ 1476 թ. ( տես R. Anhegger, H. Inalcik, "Kanunname-i sultan ber muceb-i örfi osmani", Ankara, 1956, s. 64-65.): Հայերին եւ հրեաներին վերաբերող այս հրամանագիրը նույնությամբ հիշատակվում է նույն գրքի հետևյալ գլուխներում՝ «Կ.Պոլսի եւ Գալաթայի վարսակի մասին» (էջ 45), «Կ.Պոլսի եւ Գալլիպոլիի նավահանգիստներին վերաբերող հրամանագրի պատճեն» (էջ 75): Մենք այստեղ չենք բերել քրիստոնյաներին վերաբերող մյուս հոդվածները, քանի որ դրանք առնչվում են Կ.Պոլիս ժամանած եվրոպացի առևտրականների կամ բալկանյան թերակղզու ժողովուրդների հետ:

2. Խոսքը սուլթան Մեհմեդ II-ի կողմից նշանակված պաշտոնյայի մասին է:

3. Բեկի իշխանության ենթակա:

4. Տես Ռ. Անհեկկեր, Խ. Ինալջըկ նշվ. աշխ. էջ 51: Հրատարակիչների ծանոթագրության մեջ նշված է, որ այս բերաթի սկիզբը թերի է: Բերաթը կրում է 904 թվարկությունը (1498): Հրատարակիչների կարծիքով, այն հրապարակված պետք է լինի սուլթան Մեհմեդ II-ի գահակալության վերջին շրջանում, մոտավորապես 1479 թ., քանի որ այս կանոնմանի պատճենը արտագրված է եղել 884 (1479) թվարկությունը կրող մի դաֆթարից (տես նշվ. աշխ., էջ 21, 51):

5. Հունարեն բառ է եւ ունի մի քանի իմաստներ, այստեղ «արտոնյալ վաճառքի իրավունքից օգտվելու» իմաստ ունի:

6. Խոսքը Երզանիի (Արզնի) լիվայի մասին է: Այն 15-17-րդ դդ. մտնում էր Դիարբեքիի վիլայեթի մեջ (տես Մ. Ջուլպյան, Արեւմտյան Հայաստանը..., էջ 184):

7. Բովանդակության մեջ 15 գյուղերի մասին է խոսվում: Հայկական այս 15 գյուղերի հարկային կանոնմանն վերցված է Երզանիի լիվային վերաբերող կանոնների դաֆթարից, որը հաստատված է 924 (1218) թ.: Երզանիի լիվայի կանոնմանն հայերեն թարգմանաբար բերված է «Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում» հրատարակության մեջ (տես էջ 85-91): Հրատարակիչներն այն նույնությամբ քաղել են Օ. Բարկանի երեք հատորանի վավերագրերի ժողովածուի (տես Օ. L. Barkan, XV ve XVI asirlarda Osmanlı İmparatorluğunda zirai ekonominin hukuki ve mali esasları, İstanbul, 1945.): Այստեղ բերված այս 15 գյուղերի (բացի երկուսից) հարկային կանոնմանների պատճենը չի ընդգրկված Օ. Բարկանի նշված հրատարակությունում: Այն բացակայում է եւ «Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում» գրքում: Մենք պարզեցինք նաեւ, որ Օ. Բարկանը այս կանոնմանն դեռեւս լույս է ընծայել 1941 թ. «Պատմական փաստաթղթեր» պարբերականում: (Տես Tarih vesikalari, c.I sayı I. Haziran, 1941, s. 98.)



Հետագայում, 1945 թ., երբ նա ձեռնամուխ է եղել փաստաթղթերի ամբողջական հրատարակությանը, զարմանալիորեն երգանիի լիվայի մեջ չի ընգրկել հայկական 13 գյուղերի կանոննաման: Նա բավարարվել է միայն 2 գյուղերի կանոննամաններով, տողատակին ավելացնելով, որ 15 գյուղեր առանձին-առանձին նույն ձևով են արձանագրված: Մենք համոզված ենք, որ հայկական գյուղերի անտեսումը այս հրատարակության մեջ Բարկանի կողմից պատահական չէ, այլ միտումնավոր: Նախկին հրատարակության մեջ նա առանձնապես ջանք էլ չի գործադրել վերծանելու հայկական գյուղերի անունները:

8. Հրովարտակը տրված է սուլթան Սելիմ II-ի (1566-1574 թթ.) կողմից:

9. Նկատի ունի Կ.Պոլսի ծովափնյա շրջանը:

10. Կուրաբ - նշանակում է դարիբներ: Ենիչերական զորախմբում քրիստոնյա մարտունակ զերիներից կազմված հեծելազորային գումարտակ: Բաղկացած էր 100 հոգուց: Բաժանվում էր երկու խմբի՝ Կուրաբայ-ի եմին (աջ դարիբների գումարտակ), կուրաբայի եսար (ձախ դարիբների գումարտակ):

11. Խարաջը կամ ջիզիեն ոչ-մահմեդականներից գանձվող հարկերից եղել են ամենածանրը: Հայկական աղբյուրներում նշվում է, որ խարաջ են գանձել ոչ միայն տեղի բնակիչներից, այլև տվյալ վայրից հեռացվածներից եւ նույնիսկ մեռածների հաշվին (Մ. Ջուլայան, Արեւմտյան Հայաստանը..., էջ 287):

12. I. H. Uzunçarşili, Osmanli devleti teşkilatından kapukulu ocakları. Ankara 1944, c.2, s. 231-232.

13. Այստեղ վրիպակ է թույլ տրված, քանի որ բնագրի բովանդակության մեջ հիջրայի 977 թվականը զրված է տառերով, այնպես որ Հրովարտակը պետք է տրված լինի հիջրայի 977 (1569) թ.:

14. Այս կանոննաման հաստատվել է Մուրադ III-ի (1574-1595 թթ.) գահակալության շրջանում: Մուրադ III-ի օրոք Երեւանը երկու անգամ գրավվել է թուրքերի կողմից: Առաջին անգամ՝ 1579 թ. Մուստաֆա Լալա փաշայի կողմից, այնուհետեւ 1583 թ.՝ Ֆահրադ փաշայի կողմից: Վերջինս Երեւանի բերդը վերակառուցելուց հետո այնտեղ բեյլերբեյի նշանակեց Ջըղալե գաղե Յուսուֆ Սինան փաշային:

15. Օսմանյան թուրքերը որեւէ երկրի գրավումից հետո պահպանում էին տեղական օրենքներն ու սովորությունները: Երեւանի, Նախիջեւանի եւ ընդհանրապես Արեւմտյան Հայաստանի կազմի մեջ մտնող վիլայեթներին, լիվաներին վերաբերող կանոննամանների վրա նկատվում է Ակ-կոյունլու թուրքմենական պետության օրենքների ազդեցությունը: Օսմանյան պետության կողմից եւ տեղական ավատատերերի օգտին գանձվող բազմապիսի հարկերի մասին տե ս նաեւ Մ. Ջուլայան, Արեւմտյան Հայաստանը..., էջ 253-307:

16. H. Tüncer, Osmanli Imperatorlusunda toprak hukuku, s. 462.

Հաջորդ կանոննամանների էջերը նշված են թարգմանության վերջում:

17. Ամլթան Մուրադ III-ի մեծ վեզիրը:

18. Հ. Թյունցերի գրքում այս հատվածի մասին ոչ մի ծանոթագրություն չկա: Այն բերված է Երեւանի կանոննամանից անմիջապես հետո:

19. Բասենի լիվան 15-17-րդ դդ. մտնում էր Երզրումի վիլայեթի մեջ:

20. Երզրումի վիլայեթի կանուճնամեյուն նշված է, որ փեթակի հարկը գանձվում է հուլիսի 9-րդ օրը, այսինքն տաք օրերի առաջին օրը (տե՛ս Օսմանյան օրենքները Արեւմտյան Յայաստանում, էջ 26):

21. Կարա-բաշ - նշանակում է սեւ գլուխ: Սկատի ունի հոգեւորականներին:

22. Յայ եկեղեցին նման հողային տիրույթներ ուներ Արեւմտյան Յայաստանի տարբեր մասերում: Միայն Վանի շրջանում կային 64 վանքեր, Բաղեշի շրջանում՝ 48 (տե՛ս Յայ ժողովրդի պատմություն, հատ. 4, էջ 282):

23. Տե՛ս H. Tuncer, նշվ. աշխ., էջ 446: Այս կանուճնամեյի մի այլ տարբերակ բերված է նաեւ նույն գրքի 351-353 էջերում:

24. Աղանան նվաճվել է Օսմանյան կայսրության կողմից 1516 թ.:

25. Բնագրում բաց թողնված բառեր կան: Ուստի միտքը այնքան էլ պարզ չէ:

26. Թվագրությունը չի նշված:

27. Այս կանուճները քաղել եւ թարգմանել ենք Յ. Թյունջերի հետեւյալ գրքից. H. Tüncer, Osmanlı İmparatorluğunda toprak kanunları, (Osman Gaziden 3-cü Ahmet zamanına kadar 1299-1730), Ankara, 1965. Կանուճների վերջում ցույց է տրված թուրքերեն բնագրի հրատարակության էջերը:

28. Սիման փաշան սուլթան Մուրադ III-ի (1574-1595 թթ.) եւ սուլթան Մեհմեդ III-ի (1595-1603 թթ.) ժամանակ հինգ անգամ զբաղեցրել է մեծ վեզիրի պաշտոնը: Նա հայտնի է Կոջա Սիման մականունով:

29. Երբեմն կանուճների բովանդակությունը կրկնվում է կամ նույն կանուճի մի այլ տարբերակ աննշան փոփոխությամբ բերված է Յ. Թյունջերի գրքի երկրորդ մասում: Օրինակ, այս կանուճի մի այլ տարբերակ բերված է նաեւ 99 էջում: Նման դեպքերում կրկնությունից խուսափելու համար ընտրել ենք միայն մեկը:

30. Ռումի վիլայեթի կենտրոնն էր Սվազը (Սեբաստիան): Սանջակները՝ Սվազ, Ամասիա, Չորում, Բոզոք, Դիվրիկ, Ջանիկ, Արաբկիր:

31. 18-րդ դվիսի մեջ մտնող այս կանուճում խոսվում է քրեական գործերի եւ մահնդականության հետ առնչվող կենցաղի մասին: Տվյալ գլխից մենք թարգմանաբար բերել ենք միայն այս հատվածը:

32. Թուրքերի կողմից կենտրոնական եւ Արեւմտյան Եվրոպայի երկրներին տրված անվանումը:

33. Թոքթաթի շրջակա գյուղերից մեկը, որի բնակիչների մեծ մասը հայեր էին:

34. Սկատի ունի սուլթան Մահմուդ II-ին (1808-1839 թթ.):

35. H. T. Çinlioğlu, Osmanlılar zamanında Tokat, 3-cü kısım, Tokat, 1951, s. 83. Չինլիօղլուն իր այս աշխատությունը կազմել է ժամանակագրական կարգով թուրքական վավերագրերի հիման վրա:

36. Ժողովին մասնակցած անձերի անուններից երեւում է, որ տվյալ ժամանակաշրջանում Թոքթաթի բնակչությունը մեծ մասամբ բաղկացած է ժամանակաշրջանում Թոքթաթի վերջին թուրքերի մոտ գեղել հայերից: Այդ է վկայում նաեւ 16-րդ դարի վերջին թուրքերի մոտ գեղելի ընկած մի ռուս զինվոր (տե՛ս Մ. Ջուլալյան, Արեւմտյան Յայաստան..., էջ 236):

37. Յ. Չինլիօղլու, նշվ. աշխ., էջ 162-163:

## ԴԵՎՇԻՐՄԵԻՆ (ՄԱՆԿԱԺՈՂՈՎ) ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

#### ՔԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՖԵՐՄԱՆԻ ԽՄԱՍՆ ԱՅՍ Է՝

Հնուց ի վեր, Օսմանյան իմ կայսրության մեջ, ենիչերիների համար պատանի տղաների հավաքագրումը ընդունված կարգ է: Ըստ այդ սովորության, մախ որոշվում է կաղիությունում բնակվող ընտանիքների քանակը եւ այնուհետեւ, քառասուն ընտանիքից՝ մեկ պատանի վերցնելով, կազմվում էր հավաքագրված տղաների ընդհանուր դաֆթարը:

Ներկայումս իմ կայսրության հետեւակային զորքի հարգարժան հրամանատարներից որեւէ մեկին (թող նրա փառքն ու պատիվը բազմապատկի եւ ձեռք բերած վստահությունն էլ հարածուն լինի), երբ իմ սրբազնագույն հրամանս հասնի, թող անհապաղ տարին ու օրը որոշելով, մեկնի նշված կաղիությունները եւ առանց բացառության, ոչ մի գյուղ բաց չթողնելով, անհավատ երեխաներին իրենց հայրերի հետ միասին հավաքի իր մոտ: Այնուհետեւ, ամծամբ ստուգում կատարելով, բազմազավակ ընտանիքներից թող ընտրի 14, 15 եւ նույնիսկ 17 տարեկան ամրակազմ տղաներից մեկին եւ ենիչերիության համար դաֆթար կազմելով՝ տիրություն անի: Այն ընտանիքը, որը շատ արու զավակներ չունի, հավաքագրումից թող դուրս մնա, իսկ բազմազավակ ընտանիքներից մեկ հոգի ընտրելուց հետո, մնացածներին թող ետ ուղարկի իրենց հոր մոտ: Թող անիրավություն եւ դաժան վերաբերմունք տեղի չունենա եւ իմ հրամանի համաձայն, մեկ արու զավակ գրանցելուց հետո այլեւս փոփոխություն չկատարվի<sup>2</sup>:

Այնուհետեւ անհրաժեշտ է արձանագրել տղայի անունը, հոր անունը, գյուղի եւ սիփահիի անունը եւ միեւնույն ժամանակ նկարագրել նրա ֆիզիկական կազմն ու բնորոշ գծերը: Որեւէ մեկին կորցնելու դեպքում, ըստ դաֆթարի, պետք է ի հայտ բերել նրա ինքնությունն ու որ գյուղից լինելը: Կորածին հայտնաբերելուց հետո կրկին ետ վերադարձնել իր տեղը: Նախկինում մնան դեպքերի

ժամանակ, ոճանք, խարդախության դիմելով, լեւեհներ<sup>3</sup> են ընդգրկելիս եղել...: Նման խաբեությունից թող հեռու մնան եւ հավաքագրեն միմիայն անհավատ ռեայայների զավակներին: Ենիչերիների զորախմբի համար տղաներ տավաքագրելու ընթացքում, երբ նրանց թիվը հարյուրի կամ հարյուր հիսունի հասնի, հրամայում են դաֆթարի հետ նրանց հանձնել պատասխանատու առաջնորդին: Տղաներին ապահով տեղ հասցնելու համար, կադիները տվյալ առաջնորդին պետք է տրամադրեն վստահելի մարդիկ եւ որոշ թվով զինվորներ: Այն վիլայեթներում, ուր վոյնուկներ կան, պետք է վոյնուկ տրամադրեն, իսկ վոյնուկ չեղած վայրերում՝ մյուսելլեմներ կամ սիփահիներ, որպեսզի տղաները ապահով հասցվեն Ստամբուլ եւ հանձնվեն ենիչերի աղային: Ծանապարհին պետք է ուշադիր լինել, որպեսզի ոչ մեկը հնարավորություն չունենա փախչելու կամ էլ կորսվելու:

Ենիչերիների զորախմբի համար տղաներ հավաքագրող անձնավորությունը պետք է երկու դաֆթար կազմի: Այդ դաֆթարներից մեկը պահելու է իր մոտ, իսկ մյուսը հանձնելու է տղաների առաջնորդին: Թող հիշյալ առաջնորդը տղաներին այդ դաֆթարի հիման վրա հանձնի ենիչերիների աղային: Հետագայում այդ երկու դաֆթարները իրար հետ համեմատելով, պարզելու է, տղաների մեջ փոփոխություն կատարվել է, թե ոչ:

Միեւնույն ժամանակ հրամայում են, որ տղաներին Ստամբուլ տանող անձնավորությունը ճանապարհին զվարճություններով չտարվի եւ ոչ մեկից ոչ մի ակչե կամ այլ մանրուք չվերցնի, եւ առանց փորձանքի հանդիպելու, աշխատի ուղիղ ճանապարհով հասնել Ստամբուլ: Ուղեւորության ընթացքում թող ուշադիր լինի եւ չքիտթի իջեւանները եւ միեւնույն գյուղում երկու անգամ կանգ չառնի, որպեսզի գյուղացիները տղաներին հաց տալով եւ իրենց տները հրավիրելով, դժվարություններ չհարուցեն: Կազաների կադիները, նայիբները, սուբաշիները կամ նրանց փոխանորդները եւ գյուղական քեդիսուղաները այս գործում պետք է իրենց ձեռքից եկած բոլոր օժանդակությունները անեն եւ իրենց տնօրինության տակ գտնվող գյուղերում, նահիեներում որքան տղաներ կան, բուլրին, առանց բացառության, հավաքելով՝ ներկայացնեն հիշյալ անձնավորությանը: Երբեք չփորձեն որեւէ մեկի որդուն խաբեությանը տանը թողնել կամ մի այլ տեղ փախցնելով՝ բաքցնել: Հիշյալ անձնավորությունը, նրա տրամադրության տակ գտնվող մարդիկ, կամ այս գործին մասնակցություն ունեցողները չփորձեն որեւէ մեկից ակչե կամ այլ մանրուք վերցնել: Նրանք, ովքեր կփորձեն



իրենց թիմարում, գյուղում կամ տանը որեւէ տղա բաքցնել կամ խաբէությամբ դրսից լեւենդ ընդգրկել եւ այլ թերացումներ կատարել, ապա այդպիսիները անհապաղ ենթարկվելու են պատժի: Թող լավ իմանան, որ այս հարցին պետք է հատուկ ուշադրություն դարձնել եւ ձեռք առնեն անհրաժեշտ միջոցներ:

Տվյալ վիլայեթի կադիները, սուբաշիները, նրանց փոխանորդները եւ գյուղական քեդխուղաները պետք է պատրաստակամ լինեն օգնելու տղաների հավաքագրման եւ ստուգման խնդրին եւ տեղյակ լինեն, թե տվյալ տղան ում է պատկանում, ինչ ֆիզիկական կազմ ու բնորոշ գծեր ունի: Թող խաբէության եւ կեղծիքի առիթ չտրվի: Ուղիղ ճանապարհից շեղվողները ենթարկվելու են խստագույն պատժի: Ուստի, թող հլու հնազանդ լինեն եւ գործեն ըստ իմ բարձր հրամանի:

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 2**

### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՍՍԻ ԲԵՅԻՆ ԵՎ ԿԱԳԻՆ**

Սրանից առաջ, որպես կադի նամակ էիր ուղարկել, հայտնելով, որ դեւչիրմեի համար այնտեղ ժամանած Դավութ անունով յայաբաշին, Մեքի գյուղից յոթը տղա հավաքելով, բերել էր Ստամբուլ, փոխել նրանց հագուստը՝ եւ ներկայացրել ենիչերի աղային: Հայտնել էին նաեւ, որ հիշյալ տղաների բարեկամներից մի շարք զիմնիներ, գալով Ստամբուլ, այդ տղաներին տարել էին վերոհիշյալ գյուղը եւ իրենց սովորության համաձայն՝ աղոթել եկեղեցիներում:

Արդ, հրամայում եմ, իմ բարձր ֆերմանը տեղ հասնելուն պես, հիշյալ տղաներին եւ անհատ զիմնիներին հավաքելով, ուղարկիր սուլթանական պալատ: Ուշադիր եղիր, որ ճանապարհին չփախչեն:

Այդպես իմացիր<sup>6</sup>:

26 ջեմազի ուլ-էվվել 972 թ.  
(2 հունվար 1564 թ.)

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 3**

### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԿԱՅՍԵՐԻԻ (ԿԵՍԱՐԻԱ) ԲԵՅԻՆ**

Սրանից առաջ , իմ բարձր հրամանով քո իշխանության տակ



գտնվող վայրերում դեւչիրմեի ենթարկված տղաները, Ստամբուլ գալով, հավատադարձվել էին դեպի մահմեդականությունը: Ականջալուր եղանք, որ նրանցից մի քանիսը, փախուստի դիմելով, վերադարձել են իրենց նախկին վայրերը եւ դավանափոխվել:

Արդ, հրամայում են, երբ իմ բարձր ֆերմանը տեղ հասնի, հետեւիր այս գործին եւ իմ բարձր հրամանով դեւչիրմեի ենթարկված այն տղաները, որոնք փախուստի դիմելով, դավանափոխ են եղել, հավաքիր, անունները գրելով դաֆթար կազմիր եւ վստահելի անձանց հետ ուղարկիր Ստամբուլ: Նրանց հսկող անձանց կարգադրիր, որ ճանապարհին ուշադիր լինեն:

Այդպես իմացիր<sup>6</sup>:

972 (1564) թ.

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 4**

##### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱՅԻՆ**

էդիրնեում բոստանջի բաշի Խըզըր-զադեն իմ կայսերական սեմին նամակ էր ուղարկել, հայտնելով, որ պալատի պարտեզում աշխատող այգեգործներից մի քանիսը մահացել են: Ներկայումս բոստանջի բաշին հայտնում է, որ շուտով աշխատանքային շրջանը սկսվելու է եւ իրեն հարկավոր են 72 տղաներ:

Արդ, հրամայում են, հրամանս տեղ հասնելուն պես, ներկայումս Անատոլիայի վիլայեթներից հավաքված աճեմի տղաներից 72-ին առանձնացնես եւ տրամադրես նրան: Միաժամանակ, նշանակված տղաների համար դաֆթար կազմիր եւ այդ դաֆթարն ուղարկիր վերոհիշյալ բոստանջի բաշիին<sup>7</sup>:

Ումազան 975 (մարտ 1568) թ.

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 5**

##### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱՅԻՆ**

Իմ կայսերական նավաշինարանում շտապ նավեր կառուցելու համար ֆերման էր տրվել այն մասին, որ աճեմի տղաների մեջ որքան ատաղժագործություն եւ խժուժագործություն իմացող եւ կամ նավաշինարաններում աշխատող արհեստավոր տղաներ կան, ուղարկվեն իմ կայսերական նավաշինարանը:

Արդ, հրամայում եմ. իմ հրամանը տեղ հասնելուն պես, ատաղ-  
ժագործ եւ խծուծող աճեմի տղաներին եւ այլ նավաշինարաննե-  
րում աշխատող բոլոր արհեստավոր տղաներին շտապ ուղարկես  
իմ կայսերական նավաշինարանը:

Տեղ հասնելուն պես, շտապ անցնեն նավեր կառուցելու գոր-  
ծին: Միեւնույն ժամանակ աճեմի օղլանների համար դաֆթար  
կազմիր եւ ուղարկիր Ստամբուլ: Եվ մինչեւ գործի ավարտվելը թող  
ուշադիր լինեն նրանց նկատմամբ<sup>8</sup>:

978 (1571) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 6**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԵՆԻՉԵՐԻՎ- ԿԱՆ ՁՈՐԱՄԱՍԻ ՍԱՄՍՈՆՋՈՒ ԲԱՇԻ՝ ՋԱՅԵՐ ՍՈՒՐԱ- ՇԻՐՆ**

Սրանից առաջ, տղաներ հավաքագրելու համար իմ կայսերա-  
կան բերաթով քեզ ուղարկել էի Մարաշի, Կեսարիայի, Նյոյդեի եւ  
Բեյշեհիրի սանջակները:

Արդ, մեծ թվով տղաներ հավաքագրելու անհրաժեշտությամ  
կապակցությամբ հրամայում եմ. վերոհիշյալ բեյլերբեյությունների  
սանջակներից բացի, հարյուրական տղաներ հավաքագրես նաեւ  
Կարամանի<sup>10</sup> եւ Ջուլքադերիեի<sup>11</sup> վիլայեթների սանջակներից: Տվ-  
յալ սանջակները երբ հասնես, իմ կայսերական հրամանի համա-  
ձայն եւ գոյություն ունեցող կարգով, հարյուրական տղաներ հա-  
վաքագրիր: Հավաքագրումը կատարիր անհավատների բազմա-  
գավակ ընտանիքներից:

Թող ոչ ոք չհակառակվի իմ բերաթին: Դու եւս ուշադիր եղիր, մի  
զիջիր ոչ մեկին եւ գործիր ըստ բերաթի բովանդակությամբ<sup>12</sup>:

981 (1573) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 7**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԿԱՐԱՄԱՆԻԱՅԻ ԲԵՅԼԵՐԲԵՅԻՆ ԵՎ ՎԻԼԱՅԵԹԻ ԿԱԳԻՆԵՐԻՆ**

Ձեր իշխանության տակ գտնվող գյուղերում եւ կասաբաներում  
դեւշիրմեհին վերաբերող իմ ֆերմանը գործադրելիս, տղաներին

թաքցնելով, չեն ներկայացրել: Այս գործում դուք եւս ներողամտութիւն եք հանդես բերել:

Արդ, հրամայում եմ. յուրաքանչյուրդ անձամբ օգնեք դեւչիրմնէի գործին: Յայաբաշիների ժամանման ընթացքում ուշադիր եղեք եւ ամեն ջանք գործադրեք, որպէսզի անհավատների երեխաները փախուստի չդիմեն<sup>13</sup>:

981 (1573) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 8**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱՅԻՆ**

Սուլթանական պալատի գլխավոր ճարտարապետ Սինանը<sup>14</sup> հայտնել է, որ Էդիրնէի սրբազան մզկիթի<sup>15</sup> վրա աշխատող յոթ ածեմի տղաները վերջացրել են մզկիթի լուսամուտների երկաթակերտ աշխատանքները եւ խնդրել, որ հիշյալ տղաները վերադարձվեն ենիչերիական գորամաս:

Արդ, հրամայում եմ. դաֆթարով ուղարկված յոթ տղաներին, ըստ ածեմի տղաների համար գոյութիւն ունեցող կանոնադրութեան, ընդունել եւ գրանցել դաֆթարում<sup>16</sup>:

26 ռեբի ուլ-էվլել 981 թ. (1 հուլիս 1573 թ.)

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 9**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ԲԵՅԼԵՐԲԵՅԻՆ**

Իմ բարձր հրամանով, Չուլքադերիեի վիլայեթում մանկաժողով անցկացնելու համար ուղարկված յայաբաշիները, որոշ թվով տղաներ հավաքելով, ենիչերիների հսկողութեամբ ուղարկվել էին դեպի Ստամբուլ: Ճանապարհին նրանք կորցրել էին տասնութ հոգու: Այդ տղաներին հայտնաբերելով, դուք կրկին հանձնել էիք ենիչերիների հսկողութեանը: Այնուհետեւ, Պալոյի<sup>17</sup> բեյ Յուսեյմի մարդիկ հիշյալ տղաներից տասներկուսին խլել էին ենիչերիների ձեռքից:

Արդ, հրամայում եմ. այդ տղաներին գտնելով, շտապ ուղարկել Ստամբուլ եւ ամեն կերպ օժանդակել ենիչերիներին: Նրանք, ուրբեր, համառութիւն ցուցաբերելով կհակառակվեն, անունները գրեք եւ ուղարկեք<sup>18</sup>:

981 (1573) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 10**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱՅԻՆ**

Նախապես կարգադրված էր Թորբայուն<sup>19</sup> գտնվող աճեմի տղաներից, ինչպես նաև պալատներում եւ նավերի վրա ծառայող տղաներից 150 հոգի վերադարձնել ենիչերիական գորամաս:

Արդ, հրամայում եմ. պալատներում եւ նավերում ծառայող տղաներից փորձառություն եւ վստահություն ձեռք բերածներին ուղարկել ենիչերիական գորամաս եւ գրանցել<sup>20</sup>:

984 (1576) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 11**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱ ՄԵՀՄԵԳԻՆ**

Կայսերական պալատի չավուշներից սուբաշի Դավութը նամակով հայտնել էր, որ ջրային գծերը շատանալու պատճառով, դժվարացել է ջրի մատակարարման հարցը: Այս կապակցությամբ նա խնդրել էր դեւշիրմեի տղաներից 25 հոգի տրամադրել իրեն:

Արդ, հրամայում եմ. դեւշիրմեի տղաներից, ովքեր հարմար կնկատվեն ջրային գործերի վրա աշխատելու, 25 հոգու համար առանձին դաֆթար կազմիր եւ տրամադրիր վերոհիշյալին: Այդպես ինացիր եւ հնազանդվիր կայսերական նշանին<sup>21</sup>:

984 (1576) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 12**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱՅԻՆ**

Մետաքսագործների վերակացուն խնդրել էր նոր հավաքված աճեմի տղաներից մի քանիսին տրամադրել իրեն:

Արդ, հրամայում եմ. նոր ժամանած տղաներից 20 հոգի, որոնք հարմար կլինեն մետաքսագործության համար, տրամադրիր վերոհիշյալ վերակացուին:<sup>22</sup>

984 (1576) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 13**

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԱՆԱՏՈՒԿԱՅԻ ԲԵՅԼԵՐԲԵՅԻՆ**

Դեւշիրմեի ենթարկված Յակուբ<sup>23</sup>, Մուստաֆա եւ Օսման

անուններով տղաներին Կալենդեր<sup>24</sup> անունով մեկը կարողացել է սիրաշահել եւ իր տրամադրության տակ վերցնել: Այնուհետեւ, երկուսին վաճառելուց հետո ենթարկվել է կալանքի: Սակայն Ստամբուլ տեղափոխելու ճանապարհին, ընկերները կարողացել են փախցնել նրան:

Արդ, հրամայում եմ. աշխատեք հայտնաբերել նրան եւ ձերբակալել՝ որ կազայի մեջ էլ գտնվելիս լինի: Աճեմի տղաներին վաճառելը հաստատեք Թոփրաքի կադիի միջոցով եւ սիջիլ կազմեք: Այնուհետեւ այդ սիջիլի պատճենով ուղարկեք Ստամբուլ<sup>25</sup>:

989 (1581) թ.

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 14**

##### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ԱՂԱՅԻՆ**

Այն աճեմի տղաները, որոնք բալթաշիի<sup>26</sup> եւ խոհարարի ծառայության մեջ գտնվելով, աստժո օգնությամբ հանգցրել էին Սարայի Ամիրե-ի Աթիկի<sup>27</sup> հրդեհը, կարգադրել էի նրանցից 39 հոգու բերել ենիչերիական գորամաս:

Արդ, հրամայում եմ իմ բարձր ֆերմանով. հիշյալ պալատի բալթաշիության եւ խոհարարության ծառայության մեջ գտնվող աճեմի տղաներից, ընդհանուր թվով 60 հոգի, ըստ գոյություն ունեցող կարգի, բերել ենիչերիական գորամաս<sup>28</sup>:

991 (1583) թ.

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 15**

##### **ԵՆԻՉԵՐԻ ԱՂԱՅԻ ԿՈՂՄԻՅ ԱՌԱՆՉԻՆ ԿԱԳԻՆԵՐԻՆ**

**ՌԻՂՂՎԱԾ 1031 (1621) ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՂ ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ**

Յնուց ի վեր, Օսմանյան կայսրության մեջ բնակվող ռեայայից ենիչերիության համար տղա հավաքելը օրենք է եղել: Այդ հին սովորության համաձայն, երբ դեւչիրմեի համար կայսերական հրավան է արձակվում, ձեր իշխանության տակ գտնվող ռեայայից ենիչերիության համար հարմար տղաներ հավաքելով, ուղարկելու եք Ստամբուլ:



Այս կապակցությամբ, ենիչերիների օջախի վաստակաշատ եւ ավագագույն աղաներից Թուրնաջի բաշի մեծահամբավ անձը..., պաշտոնի նշանակվելով, սույն գրությամբ ուղարկվում է ձեզ մոտ:

Տեղ հասնելուց հետո, յուրաքանչյուր կադիության գյուղում, կասաբայում, թիմարներում եւ չիֆթլիքներում գտնվող ռեայային հայտնի լինի, որ արու զավակ ունեցող ընտանիքները, առանց բացառության, պարտադիր կերպով հայր ու որդի ներկայանալու են հիշյալի մոտ: Դիշյալը, անմաք ստուգելու, ընտրելու է տասնհինգ-քսան տարեկան առողջ տղաներ եւ ցուցակագրելու է դաֆթարում: Այնուհետեւ արձանագրվելու է տվյալ տղայի հոր, մոր, գյուղի, սիփահիի անունները եւ տղայի կազմվածքի վերաբերյալ տվյալները: Այնպես, որ տղային կորցնելու դեպքում, դաֆթարին նայելով, հնարավոր լինի իմանալ կորածի ով եւ որտեղից լինելը, որպեսզի հնարավոր լինի գտնել նրան եւ ետ վերադարձնել: Տվյալ վայրից տղա հավաքելու ընթացքում չլինի այնպես, որ դրսից որեւէ մեկը ընդգրկվի, կամ այլ խարդախություն կատարվի: Ենիչերիների գորախմբի համար հավաքված տղաների թիվը հենց որ հասնի հարյուրի կամ հարյուր հիսունի, հիշյալ որեւէ մեկի առաջնորդությամբ տղաներին ուղարկվելու է Ստամբուլ, ուղիղ ենիչերիների օջախը: Ճանապարհին եւ իջեւանատներում անհրաժեշտ է ուշադիր լինել, որպեսզի որեւէ մեկին կորցնելու հնարավորություն չստեղծվի: Յուրաքանչյուր խմբի համար կազմվելու է երկու դաֆթար, մեկը մնալու է վերոհիշյալի մոտ, մյուսը հանձնվելու է առաջնորդին, որպեսզի խմբի հետ բերի Ստամբուլ: Դետագայում այդ երկու դաֆթարները համեմատվելու են իրար հետ: Սիւնույն ժամանակ, խմբի առաջնորդը ոչ մեկից ոչ մի ակչե կամ դուրուշ չվերցնելով, առաջնորդելու է տղաներին ուղիղ ճանապարհով դեպի Ստամբուլ:

Ճանապարհը շփոթելու դեպքում երկրորդ անգամ միեւնույն գյուղում չպետք է իջեւանել, որպեսզի տվյալ վայրի բնակչությունը դեւշիրմեի ենթարկված տղաներին հաց չտա կամ պատսպարվելու նպատակով տուն չտանի:

Եվ այդ վիլայեթի կադիները, սուբաշիները, վոյեվոդաները, վակֆային մյուսթեվեխները, թիմարատերերը, զայիմները եւ թահսիլտարները որեւէ առիթով միջամտություն չկատարեն դեւշիրմեին եւ գործեն վերոհիշյալ աղայի ցուցումով: Այս գործում պատասխանատու անձը նա է: Թող ոչ ոք միջամտություն չկատարի եւ չհամարձակվի որեւէ մեկի տղային տանը թողնել, թաքցնել կամ փախչելու առիթ տալ: Թող լավ իմանան թիմարում, զեամեթում, գյուղում, չիֆթլիքում կամ տանը, եթե տղա թաքցնեն եւ վերոհիշ-

յալ աղային ցույց չտան, կամ խարդախությամբ դրսից տղա խցկեն, ով ուզում է լինի, գիջում չի լինելու եւ պատժվելու է փաղիշահի հրամանով: Այս խնդրում վերոհիշյալ աղայի բողոքը հաշվի է առնվելու: Այնպես որ, թող գործեն ինչպես որ կարգն է: Վիլայեթի կադին, վոյեվոդաները, սուբաշիները եւ զանազան մարդիկ երբեմն մեկ կամ մի քանի գյուղեր իրենց հովանավորության տակ վերցնելով, դեւչիրմեից դուրս են պահել: Թող իմանան, որ նման խնդրում փաղիշահի համաձայնությունը չի եղել եւ այսուհետեւ թող ոչ մեկը սրա-նրա խնդրանքով տղաներին պահ չտա: Հետագայում նման արարքների բացահայտման դեպքում հանցավորը պատիժ է կրելու: Որոշ գյուղերի մարդիկ, եթե առարկություն անեն, ասելով, որ իրենք հանքային եւ վակուֆային գյուղերի ռեայաներից են, որ թույլտվություն ունեն թեքալիֆ-ի օրֆիեից, ավարիզ-ի դիվանիեից եւ դեւչիրմեից զերծ մնալու մասին, ապա նման արտոնագրերը իրենց ձեռքից վերցնելով, անհրաժեշտ է ծրարել եւ ուղարկել Ստամբուլ<sup>29</sup>: Տղաներին պետք է հավաքագրել առանց բացառության եւ ըստ գոյություն ունեցող կարգի: Եվ դու, որ վերոհիշյալ աղան ես, այս հարցում երբեք չչեղվես ճանապարհից եւ ոչ մեկից ոչ մի դուրուշ չառնելով, ամենայն ուղղամտությամբ ծառայես փաղիշահին եւ միշտ խոհեմաբար ենթարկվես շարիաթին<sup>30</sup>:

Մուհարրեմ 1031 (1621 թ. հունվար)

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 16

Կոջանլիի, Բալուի, Կաստամոնի, Չորումի, Սամսունի, Սինոբի, Ամասիայի, Մալաթիայի, Կարահիսարի, Շարքիի, Արաբկիրի, ...<sup>31</sup>, Չեմիշկեզեթի, ..., ... եւ Ջիզրեի սանջակներում, Կամախի եւ Բայբուրդի ..... վիլայեթներում գտնվող կադիներին թող հայտնի լինի: Ենիչերիների զորախմբի փառապանծ Մուստաֆա աղան իմ երջանկության սեմին<sup>32</sup> նամակ էր հղել, հայտնելով, որ հնուց ի վեր իմ Օսմանյան կայսրության մեջ զիմնի ռեայայից ենիչերիների զորախմբի համար տղա վերցնելը ընդունված կարգ է: Այս կապակցությամբ նա խնդրել էր իմ բարձրագույն հրամանի արձակումը, որպեսզի ենիչերիական օջախում մեծ վաստակ ունեցող սպաներից բաշդեւեջի Մեհմեդը (թող նրա փառքն ու պատիվը բազմապատկվի) նշանակվի տղաների հավաքագրման պաշտոնին:

Երբ հիշյալ ծառան նշված կադիությունները հասնի եւ հատուկ

օր նշանակի, ապա բոլոր գյուղերից եւ քաղաքներից, խասսերից եւ թիմարներից, վակուֆներից եւ մյուլքերից, թող ռեայաները, առանց բացառության, իրենց որդիների հետ միասին գան ներկայանան իմ հիշյալ ծառային: Իմ ծառան, անծամբ ստուգուն կատարելուց հետո, բազմազավակ անհավատների ընտանիքներից ենիչերիության համար թող ընտրի 15-20 տարեկան տղաներին: Այն ընտանիքները, որոնք շատ արու զավակներ չունեն, նրանցից հավաքագրում թող չկատարի, իսկ շատ տղաներ ունեցող ընտանիքներից մեկին վերցնելով, մնացածներին ետ ուղարկի իրենց հոր մոտ: Թող անիրավություն եւ դաժան վերաբերմունք տեղի չունենա եւ իմ հրամանի համաձայն, մեկ տղա զավակ գրանցելուց հետո փոփոխություն չկատարի: Անհրաժեշտ է դեւչիրմեի ենթարկված տղայի անունը, հոր անունը, գյուղի եւ սիփահիի անունները գրանցել դաֆթարի մեջ եւ միեւնույն ժամանակ մանրամասն նշում կատարել նրա կազմվածքի մասին: Որեւէ մեկին կորցնելու դեպքում, դաֆթարի տվյալներով պետք է հայտնաբերել նրա ով եւ որ գյուղից լինելը: Հայտնաբերելուց հետո վերադարձնել իր տեղը: Թող խաբեությունից եւ նենգությունից հեռու մնան եւ միմիայն անհավատ ռեայայի զավակներից հավաքագրում կատարեն:

Ենիչերիների գորախմբի համար տղաներ հավաքելու ընթացքում, երբ նրանց թիվը հարյուրի կամ հարյուր հիսունի հասնի, անհրաժեշտ է նրանց հանձնել վստահելի առաջնորդի տրամադրությանը եւ ուղարկել Ստամբուլ, Ենիչերիների աղայի մոտ: Ճանապարհին պետք է ուշադիր լինել, որպեսզի ոչ մեկին հնարավորություն չտրվի փախչելու կամ կորսվելու:

Ենիչերիների գորախմբի համար տղաներ հավաքագրող անձնավորությունը պետք է երկու դավթար կազմի: Այդ դավթարներից մեկը պահի իր մոտ, իսկ մյուսը՝ հանձնի տղաներին տանող առաջնորդին: Թող հիշյալ առաջնորդը տղաներին այդ դավթարի հիման վրա հանձնի ենիչերիների աղային: Հետագայում, այդ երկու դաֆթարները իրար հետ համեմատելով, պարզվելու է, որ տղաների մեջ փոփոխություն չի կատարվել: Միեւնույն ժամանակ հրամայում եմ՝ տղաներին Ստամբուլ տանող անձնավորությունը ճանապարհին զվարճություններով չտարվի եւ ոչ մեկից ոչ մի ակչե կամ այլ մանրուք չվերցնի եւ առանց փորձանքի հանդիպելու, աշխատի ուղիղ ճանապարհով հասնել Ստամբուլ: Ճանապարհին թող ուշադիր լինի եւ չչփոթի իջեւանները եւ միեւնույն գյուղում երկու անգամ կանգ չառնի, որպեսզի գյուղացիները տղաներին հաց տալով եւ իրենց տները հրավիրելով՝ դժվարություններ չհարուցեն: Եվ այդ



տեղի կադիները եւ սուբաշինները, փաշաներն ու վոյեվոդաները, վակուֆների կառավարիչները, թիմարատերերը թող ենիչերիների գորախմբի տղաների հավաքագրման գործում միջամտություն կամ դժվարություն չհարուցեն: Հիշյալ ծառաս անձամբ թող հավաքագրում կատարի եւ առաջնորդների հետ ուղարկի Ստամբուլ: Այնպես որ, կադիները, սուբաշինները եւ սիփահիները ինչ ուզում են ասեն, իմ ծառան ինչպես հարմար գտնի, այնպես էլ թող գործեն եւ նրա խոսքից դուրս չգան: Որեւէ հարց առաջանալու դեպքում, թող իրեն դիմեն: Երբեք չփորձեն խաբեությամբ որեւէ մեկի տղային տանը թողնել կամ, մի այլ տեղ փախցնելով թաքցնել: Հիշյալ ծառաս, նրա ձեռքի տակ գտնվող մարդիկ կամ այս գործին մասնակցություն ունեցողները չփորձեն որեւէ մեկից ակչե կամ այլ մանրուք վերցնել: Ոչ ոք չհամարձակվի իմ հրամանին հակառակ գործունեություն ունենալ: Ինչպես իմ հրովարտակուն հրամայված է, թող այդպես էլ գործեն: Այն անձնավորությունը, որը կփորձի իր թիմարում, գյուղում կամ տանը հիշյալ անձնավորությանը չներկայացնելով, որեւէ տղա թաքցնել, կամ խաբեությամբ դրսից լեւենդ ընդգրկել եւ կամ այլ թերացումներ ունենալ, ապա այդպիսիները անհապաղ ենթարկվելու են պատժի: Թող լավ իմանան, որ այս հարցում տեղական իշխանությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն եւ ձեռք առնեն անհրաժեշտ միջոցներ: Իսկ հավաքագրման ընթացքում պետք է խիստ զգուշություն հանդես բերել, որպեսզի տղայի անվան, նրա արտաքին կազմի եւ բնորոշ գծերի մասին սխալ թույլ չտրվի:

Եղել է այնպես, որ հավաքագրման ընթացքում վեզիրները, կադիները, սուբաշինները, ենիմները եւ այլ մարդիկ ինչ-որ մեկ-երկու գյուղ, իրենց հովանավորության տակ վերցնելով, դեւշիրմեից զերծ են պահել: Թող ոչ մեկի խնդրանքով կամ ցանկությանմբ նշանակված գյուղում հազաքագրումը չհետաձգվի եւ գործադրվի ըստ հրամանի: Եվ եթե ստուգումից պարզվի, որ որեւէ գյուղում ..., ապա հանցավորները պատժի են ենթարկվելու ըստ արժանվույն:

Մի շարք գյուղերի ռեայաները հակաճառելիս են եղել, որ իբր իրենք վակֆային եւ հանքափորի աշխատողներ լինելով, հրամանագիր ունեն մանկաժողովից, ավարիզից եւ թեքալիֆի հարկերից ազատ մնալու մասին: Այս առթիվ հրամայում են, եթե մնան գյուղերի բնակիչները թեքալիֆ-ի օրֆիեից եւ ...-ից ցանկանում են ազատ մնալ եւ ենիչերիների գորախմբի համար տղա չհատկացնել, ապա մնալ են մարդկանց պահանջներին իմ ծառաները թող ուշադրություն չդարձնեն: Թող կադիի գիտությամբ նրանց ձեռքից այդ վճիռները

վերցնեն եւ կնքելուց հետո ուղարկեն Ստամբուլ եւ այլոց նման, նրանց տղաներին էլ վերցնեն ծառայության: Վերջապես, գործեք վերոհիշյալ աղաների կողմից հաստատաված եւ կնքված նամակների հիման վրա:

Այսպես իմացեք եւ ենթարկվեք իմ բարձր հրամանին<sup>33</sup>:

Սաֆեր 1032 (դեկտեմբեր 1622 թ.)

## ՇԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս հրովարտակի պատճենը գտնվում է Անկարայի համալսարանի գրադարանում՝ 2753 համարի տակ (տես I. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları, c. I, Ankara, 1943, s. 92)։

2. Իրականում, մանկաժողովի ընթացքում թույլ են տրվել բազմաթիվ անօրինականություններ եւ չարաշահումներ: Մանկաժողովի գործով զգալիորդ պաշտոնյաները մեծ կաշառքներ են կորզել տղաներին փոփոխելու եւ այլ խարդախությունների համար: Նույնիսկ եղել են դեպքեր, երբ մանկաժողովի պատրվակով կեղծ հրովարտակներ են կազմվել առանձին պաշտոնյաների կողմից: Տես Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ., էջ 15: Ք. Չելեբիին եւս հաղորդում է, որ օսմանյան իշխանավորները ժամանակ առ ժամանակ ստիպված են եղել պատժելու չարաշահումներ գործադրած պաշտոնյաներին: Օր., նա հիշատակում է Թուրնաջի բաշի Դերվիշ փաշային, որ մահվան էր դատապարտվել դեւշիրմեի ընթացքում կատարած չարաշահումների համար:

3. Իտալերեն levantino բառի աղավաղված ձեւը, նշանակում է արեւելյան, արեւելքից: Վենետիկյան բանակում ռոճիկով ծառայող թեթեւաշարժ զինվոր: Լեւենդ տերմինը Օսմանյան կայսրությունում սկսվել է օգտագործվել 16-րդ դարում: Կայսրությունում լեւենդ են անվանել պահակությանը զբաղվող հեծյալ զինվորներին: Նրանք ծառայությունից հետո Փոքր Ասիայի զանազան շրջաններում զբաղվել են ավազակությամբ: M. Sertoğlu, Resimli Osmanlı tarihi ansiklopedisi, İstanbul, 1958, s. 188.

4. Հավատարմոսական տղաներին հազցնում էին կարմիր արա: 5. Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ. Գ. 1, էջ 126: Հրամանագիրը տրված է սուլթան Սուլեյման I-ի կողմից:

6. Նույն տեղում, էջ 126: Հրամանագիրը տրված է սուլթան Սուլեյման I-ի կողմից:

7. Նույն տեղում, էջ 116: Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից:

8. Նույն տեղում, էջ 119: Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից:

9. Սամուռնջու բաշի, Սեկսուռնջու բաշի եւ կոչվել ենիչերիների օջախի 71-րդ զորախմբի հրամանատարը: Սեհմեդ II-ի ժամանակ նրանք զբաղվել են որսորդական շների խնամքով: 16-րդ դարից ընդգրկվել են բոստանջի-



ների օջախը:

10. Կարամանիայի վիլայեթի կենտրոնն էր Կոնիան, սանջակները՝ Կոնիան, Նիդեմ, Ակսարայը, Բեյշեհիրը, Կըրշեհիրը, Կայսերին, Ակշեհիրը:

11. Ջուլկադերիեի վիլայեթի կենտրոնն էր Մարաշը, սանջակները՝ Մալաթիան, Այնթաբը, Կարս-ի Ջուլկադերիեն, Սեմադը:

12. Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից: Տես Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ. Հ. 1, էջ 103-104:

13. Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից: (Նույն տեղում, էջ 105):

14. Միմար Կոջա Սինան (մեռ. 1588 թ.): 16-րդ դարում հայտնի ճարտարապետ: Նա Կեսարիայի դելչիրմեից հավաքագրված հայ երեխաներից է եղել: Այս հաստատվում է Թուրքիայի մինիստրների խորհրդի արխիվում պահվող մի վավերագրից: Muhimme defterleri serisi, N 123, s. 240, Pars Tuğlaci, Osmanli mimarliginda batilasma donemi ve Balyan ailesi, Istanbul, 1981, s. 1.

15. Նկատի ունի Սինանի կառուցած Սելիմին մզկիթը:

16. Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից (տես Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ. Հ. 1, էջ 134):

17. Գտնվում է Դիարբեքիի հյուսիս-արևմտյան մասում:

18. Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից (տես Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ. Հ. 1, էջ 105):

19. Թորթա օղլանը կամ անեմի օղլանը: Կազմակերպվել է սուլթան Մուրադ I-ի (1360-1389թթ.) օրոք՝ Գալլիպոլիում: Կ.Պոլիսը գրավելուց հետո, ստեղծվել է Կ.Պոլսի «Աճեմիների օջախը» եւ Գալլիպոլիի միավորումը սկսել է երկրորդական նշանակություն ունենալ: Նոր միավորման տղաներին անվանել են նաեւ թորթա օղլանը:

20. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ I-ի (1574-1595) կողմից (տես Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ. Հ. 1, էջ 134):

21. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ III-ի կողմից (տես նույն տեղում, էջ 124):

22. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ III-ի կողմից (տես նույն տեղում, էջ 125):

23. Փոխվում էին դելչիրմեի ենթարկված տղաների անունները: Այստեղ Հակոբը հավանաբար դարձել է Յակոբ:

24. Ըստ երեսույթին, խոսքը վերաբերում է հետագայում ջելալիների ապստամբության ղեկավարներից մեկի Կալեմոդեր օղլուին ( տես Մ. Ջուլայան, Ջալալիների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 178-182):

25. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ III-ի կողմից (տես Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ. Հ. 1, էջ 128):

26. Նշանակում է փայտահատ: Բաթթաջը էին անվանում սուլթանական պալատի արտաքին մասի գործերով զբաղվող անձանց: Սուլթան Մուրադ II-ը (1421-1454) արշավանքների ժամանակ բաթթաջիներին օգտագործել

է անտառներում եւ լեռներում ճանապարհների պատրաստման, վրաններ խփելու, ծանրոցներ տեղափոխելու աշխատանքներում: Կ.Պոլսի գրավումից հետո, բալթաքիներին է հանձնարարվել պալատների եւ բարձրաստիճան պաշտոնյաների պաշտպանության գործը:

27. Սարայ-ի ամիրե-ի աթիկ կամ էսկի սարայ (Հին պալատ): Կառուցել է Մեհմեդ II-ը: Այն եղել է Ստամբուլի համալսարանի շենքի տեղում:

28. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ III-ի կողմից (տե՛ս Ի. Ուզունչարշըւը, նշվ. աշխ. Գ. 1, էջ 135):

29. Նույն տեղում, էջ 98-99: 1558 թ. Ենիբազարի շրջանի հանքավոր ռեյաներն ունեցել են արտոնագրեր՝ դեւչիրմեից զերծ մնալու համար: Սուլթան Սուլեյման I-ը հրամայել է վերցնել նրանց ձեռքից այդ արտոնագրերը, պարտադրել վճարել բոլոր հարկերը եւ իրենց տղաներին տրամադրել դեւչիրմեին:

30. Նույն տեղում, էջ 98-100:

31. Այս եւ հաջորդ բացթողումները հնարավոր չի եղել բնագրից վերծանել:

32. Սուլթանները իրենց գահանիստ պալատը անվանել են Բար-ի Սաադեթ, Դեր Սաադեթ (Երջանկության Դուռ):

33. Հրովարտակը տրված է սուլթան Մուստաֆա I-ի կողմից (1617-1623):

Այն հայտնաբերել է Հասսան Ֆեհմի Թուրգալը Սվազի շարիաթական դատարանի տոմարների միջից: Պատճենը, համառոտակի առաջաբանով, հրատարակվել է Կոնիայի հանդեսում (1938 թ. փետրվար եւ մարտ ամիսների 16-18 համարներում): Հրատարակության մեջ կան բացթողումներ, ըստ երեւույթին հրովարտակի վատ պահպանման եւ առանձին բառերի անընթեռնելիության հետեւանքով ( Ի. Ուզունչարշըւը, նշվ. աշխ. Գ. 2, էջ 94):

### III

## ԲԵՐԱԹՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

#### *Սուլթան Մեհմեդ II-ի թուղթան<sup>1</sup>*

Մահմեդական կադիներից լավագույն, միաստվածների հովանավորներից առաջնագույն, հավատքի եւ բարեպաշտության աղբյուր, առաքյալների եւ մարգարեների իմաստության ժառանգորդ, բոլոր արարածների արդարամտության մարմնացում, արարչի հոգատարությունը տեսապես վայելող ով մեվլանա, դու, որ մեծն քաղաքի՝ Կ.Պոլսի կադին ես, - թող նրա առաքինությունը հարատեւ լինի, - իմ այս բարձր հրամանը տեղ հասնելուն պես, հայտնի լինի, որ Կ.Պոլսի Սուլու մանաստրի<sup>2</sup> հայոց առաջնորդ Գրիգորը սրանից առաջ, իմ բարձր սեմին ներկայանալով, հայտնել էր, որ հնուց ի վեր հիշյալ վանքին պատկանող քայքայված սենյակներում եւ տեղերում սկսել են մուտք գործել ակկերմանցի<sup>3</sup> ինչ-որ խմբեր<sup>4</sup>: Այս կապակցությամբ նրան տրված է եղել ջեմազի էլ-էվվել (932) թվարկությունը կրող կայսերական հրամանագիր: Այժմ նա խնդրում է վերանորոգել հրամանագիրը:

Արդ, հրամայում եմ. Անհրաժեշտ ստուգումը կատարես, ու եթե վերոհիշյալ հրամանագրից հետո, հակառակ իմաստով հրամանագիր չի տրվել, ապա արգելիք եւ թույլ չտաս, որ Ակկերմանից եկած խմբերը անօրինաբար բնակություն հաստատեն հնուց ի վեր հիշյալ վանքին պատկանող խարխուլ տներում եւ տեղերում: Նկատի ունեցիր, որ ըստ օրենքի, այդ վայրերը ենթակա չեն վաճառքի: Ուստի, արգելիք եւ թույլ մի տուր, որպեսզի ապօրինաբար մուտք գործեն այդ վայրերը:

Այդպես իմացիր եւ հավատ ընծայիր իմ նվիրական նշանիս: Գրված է 13 ռեբի ուլ-էվվել (976) թ. ի քաղաք Կ.Պոլիս:

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 2

### ԲԵՐԱԹ՞

Կ.Պոլսի եւ հայ համայնքի հոգեւոր առաջնորդ Յակոբը՞, 24 տարիների ընթացքում, իմ կողմից շնորհված կայսերական բարձր բերաթով, հովվութիւն է կատարել պատրիարքարանում: Պատրիարք Յակոբը իր հոգեւոր ծառայության մեջ եղել է հավատարիմ ու ազնիվ: Միայն այս վերջերս ծերության պատճառով նրա առողջութիւնը վատթարացել է, եւ այլեւս ի վիճակի չէ ղեկավարելու պատրիարքարանի ընդհանուր գործերը: Ջարգացած եւ փորձված մի հոգեւորականի պատրիարք նշանակելու անհրաժեշտութիւնից ելնելով, հայ ռեայայի կրօնավորները, աշխարհիկ առաջնորդները եւ ավագանին, պատրիարքարանի աթոռին հարմար թեկնածու են առաջադրել Յակոբ պատրիարքի նախկին սան, բավականաչափ փորձ ու զարգացում ունեցող եւ իր հայրենակիցների մոտ ժողովրդականութիւնը վայելող, երկար ժամանակվանից ի վեր Երուսաղեմի վանքի հոգեւոր առաջնորդը հանդիսացող Գրիգորին (Աստված նրան թող շնորհի բախտավոր վախճան):

Իմ կայսերական բարձր հրամանով, մինչեւ իր կյանքի վերջը կայսրությանս աղոթող լինելով, թող ցանկացած վայրում բնակվի եւ ոչ ոք արգելք չհանդիսանա նրան: Յնուց եկած սովորության համաձայն, եւ եպիսկոպոսների նախկին մուկաթաանների արձանագրութիւնների հիման վրա, Կ.Պոլսի, Ռումելիի եւ Անատոլիայի հայ համայնքի նորընտիր պատրիարքը պետական գանձարանին հատկացրել է 100 000 ակչե փեշքեշ եւ պարտավորվել, որ յուրաքանչյուր տարի որպէս մուկաթաա վճարելու է 100 000 ակչե գումար: Այսպէս էր վարվել նաեւ հոգեւորական Յակոբը, երբ ստանձնել էր պատրիարքութիւնը Գեւորգ անունով հոգեւորականից եւ արժանացել կայսերական բարձր բերաթի: Ավանդական այդ կարգով, նորընտիր Գրիգոր պատրիարքը 25 զուլգաղե 1177 թ. (26 մայիս 1764) պետական գանձարանին հատկացրեց նշանակված 100 000 ակչե փեշքեշը, եւ ես շնորհում եմ նրան սույն կայսերական բարձր բերաթը եւ հրամայում, որ Կ.Պոլսի փերաքենդեի, Ռումելիի եւ Անատոլիայի հայ համայնքի առաջնորդները, քահանաները եւ նրանց ենթակա վայրերի բոլոր հայերը հիշյալ հոգեւորական Գրիգորին ճանաչեն որպէս իրենց պատրիարքը:

Յնուց ի վեր գոյություն ունեցող կարգով եւ կանոնի համաձայն, պատրիարքութեան ենթակա վայրերի առաջնորդները, քահանաները



րը եւ հայ համայնքի մեծն ու փոքրը, հիշյալին պատրիարք ճանաչելով, իրենց հոգեւոր գործերով դիմեն նրան եւ չչեղվեն նրա ցուցմունքներից:

Հիշյալ պատրիարքը իր պատրիարքութեան ենթակա շրջանների մեջ, սովորական համաձայն, եթե որեւէ առաջնորդի, վարդապետի կամ քահանայի նշանակի կամ հեռացնի, կողմնակի ոչ մեկը չմիջամտի եւ արգելք չհանդիսանա: Առանց պատրիարքի կնքյալ կարգադրության, որեւէ մեկը առաջնորդական պաշտոնի չնշանակվի: Վակֆերին վերաբերող հարցերը հարթվելու են պատրիարքի իրավասութեամբ: Առաջնորդները, վարդապետները, քահանաները եւ մայրապետները պատրիարքին պատկանող մեթուքները հավաքելու ընթացքում, բեյթումալի ու քասսամի պաշտոնյաները չպետք է հին սովորությունը զանց առնելով, միջամտություն կատարեն: Յնուց ի վեր հայերին պատկանող եկեղեցիների, վանքերի եւ ուխտատեղիների մեջ ծեսեր կատարելու ընթացքում կողմնակի միջամտություն չկատարվի: Ֆեթվա-ի շերիֆով կամ կայսերական բարձր հրամանագրով եկեղեցիները կամ վանքերը նորոգելիս, պետական պաշտոնյաների կամ կողմնակի անձանց կողմից արգելք չհարուցվի<sup>6</sup>: Առանց պատրիարքի արտոնության, որեւէ քահանա, անտեսելով գոյություն ունեցող սովորությունները, պսակադրություն չկատարի: Եթե հայ կինը, լքելով ամուսնուն, հեռանա, կամ տղամարդը, թողնելով կնոջը, երկրորդ անգամ ամուսնանա մեկ ուրիշի հետ, պատրիարքից եւ նրա ներկայացուցիչներից բացի, ոչ մեկը չմիջամտի: Առաջնորդները, քահանաները եւ կամ որեւէ հայ, եթե իրենց մահից առաջ ցանկանան ինչ որ բան կտակել եկեղեցիներին, աղքատներին կամ պատրիարքին, թող վկաների ներկայությամբ, կրոնական օրինականությամբ ընդունելի համարվի: Պատրիարքը կարող է մագերթ խուզել տալով կամ պաշտոնից հեռացնելով, պատժի ենթարկել կրոնական ծիսակատարությունները խախտող առաջնորդներին եւ քահանաներին: Այս հարցում կողմնակի միջամտություն չլինի:

Վաղեմի սովորության համաձայն, հիշյալ հայ Գրիգոր պատրիարքը (թող Աստված նրան շնորհի բախտավոր վախճան), պետք է հոգ տանի եկեղեցապատկան այգիներին, պարտեզներին, ագարակներին, մարգագետիններին, արտերին, ջաղացներին, տներին, վանքերին, խանութներին, տոնավաճառների պտղատու ծառերին, կահ-կարասիներին եւ անասուններին: Թող կողմնակի միջամտություն չլինի, եթե հիշյալ պատրիարքը, իրեն վաղեմի սովորության համաձայն, պատժի ենթարկի այն քահանաներին, որոնք անձ-



նական շահույթ ձեռք բերելու նպատակով յուրացնեն իրենց տնօրինության տակ գտնվող վանքերի եւ եկեղեցիների հասույթը: Եվ թող այնպես չլինի, որ ունեվոր անձիք, միջամտելով, պահանջեն, որ այսինչ եկեղեցին հանձնվի այսինչ քահանայի տրամադրությանը, կամ այսինչ կինը ամուսնանա այսինչ մարդու հետ: Իմ կայսերական բարձր ֆերմանը առնելով՝ պատրիարքը իր տնօրինությանը հաշվեհարդար տեսնի այն հայ զինմիների հետ, որոնք եկեղեցի եւ վանք չունենալով, շրջում են թաղից թաղ եւ գրգռում հայ ռեայաներին: Պատրիարքը ճանապարհորդելիս, պաշտոնական անձիք արգելք չհանդիսանան նրան տանող ձիերին, բարապաններին եւ հետեւող անձնակազմին, ինչպես նաեւ նրանց տարազին եւ հանդերձանքին: Պատրիարքի անձին հատկացված հասույթը եւ որպես նվիրատվություն տրվող շիրան, յուղը, մեղրը եւ այլ ապրանքներն ու մթերքները, պատրիարքարան տեղափոխելու ընթացքում, նավահանգիստների եւ մաքսատների տեսուչները թող արգելք չհանդիսանան: Եթե շարիաթական օրենքով անհրաժեշտություն լինի որեւէ քահանայի կալանքի վերցնելու, ապա այն կատարվելու է հիշյալ պատրիարքի իրավասությանը: Որեւէ հայ զինմի չի կարող բռնի դավանափոխ լինել, առանց համաձայնության: Նշանակված տարեկան 140 000 ակչե գումարը պետական գանձարանին հատկացնելուց հետո, պատրիարքը պարտավոր չէ այլ ծախսեր վճարելու: Կրոնական օրինազանցների մահից հետո կադիները, նայիրները, ոստիկանները եւ այլ պաշտոնական անձիք չպետք է ճնշում գործադրեն քահանաների վրա՝ նման մարդկանց դիակը վերցնելու հարցով:

Պատրիարքը, իր քափուքեհիան եւ իր հետեւորդներից 15 մարդ զերծ են մնալու ջիզիեի, ավարիզի եւ թեքալիֆի տուրքերից: Իմ կայսրության մեջ եկեղեցիներն ու վանքերը տնօրինող քահանաների ու վարդապետների հաշիվների ստուգումը կատարվելու է միայն պատրիարքի իրավասությամբ՝ նրա ներկայացուցիչների կողմից: Որեւէ փաշա, մյուսթեսելիմ, կադի, վոյեվոդա կամ այլ պետական պաշտոնյա իրավասու չեն վերցնել հայ լուսավորչական ռեայաներին պատկանող եկեղեցիներն ու վանքերը եւ հանձնել այլ դավանանքի պատկանող մարդկանց, այդ թվում կաթոլիկ կոչված խռովարարներին: Օտար դավանանքի պատկանող եւ կաթոլիկության հարող անձանց կողմից կատարված հանցանքի համար իսկական հայ լուսավորչական ռեայաներին նեղություն չպետք է պատճառել: Հանցանքի դեպքում, նրանք պատժվելու են իրենց դավանանքի պահանջների համաձայն՝ հայոց պատրիարքի իրա-

վաստությամբ եւ կարգադրությամբ: Օտար դավանանքի պատկանող մարդկանց եւ կաթոլիկ խռովարարների կողմից կատարված հանցանքի համար սահմանված տուգանքները գանձելու ընթացքում, քաղաքների եւ գյուղերի մեջ գտնվող հայ լուսավորչական եկեղեցիների եւ վանքերի գույքերին ոտնաձգություններ չլինեն: Օրինազանցության դեպքում, գոյություն ունեցող կարգի համաձայն, թող խլված գույքը վերադարձվի իր տիրոջը:

Պատրիարքը իրավասու է չթույլատրելու եւ պատժելու այն անձանց, որոնք հակառակ իրենց վաղեմի սովորության, կամուսնալուծվեն կամ կփորձեն կին ունենալով հանդերձ, երկրորդ անգամ ամուսնանալ: Ոչ ոք արգելք չհանդիսանա պատրիարքի ձեռքի գավազանին: Մուքաթաա հավաքելու համար շրջագայող վարդապետների գրաստին եւ անձնական իրերին ոտնաձգություններ չլինեն պետական պաշտոնյաների կողմից: Միեւնույն ժամանակ, եկեղեցապատկան գույքերից նավահանգիստներում եւ մաքսատներում տուրք չգանձվի: Շարիաթի հետ առնչվող դատերը լսվելու են ուղղակի կայսերական դիվանում եւ ոչ ոք չփորձի սույն բերաթում նշված պայմաններին հակառակ գործել: Թող ուղղությունից չջեղվեն եւ իլու հնազանդ ենթարկվեն կայսերական սույն բարձր ֆերմանին:

3 գիլիիջե 1177 (3 հունիս 1764) թ.

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 3**

## **ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՌԻՂՂՎԱԾ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՉՐ ՀՐՈՎԱՐՄԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ <sup>10</sup>**

Յրաման հայոց պատրիարքին (թող Աստված նրան շնորհի բախտավոր վախճան):

Իմ Օսմանյան անասան կայսրության հարկատու հայ ռեայաներից ոմանք հանդգնել են շեղվել իրենց վաղեմի սովորություններից եւ կարգ ու կանոնից<sup>11</sup>: Թեւ այդպիսիներին զսպելու համար ժամանակ առ ժամանակ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ, բայց չափազանց շատ զբաղվածության հետեւանքով հնարավոր չի եղել հարկ եղածի պես ջանք թափել այդ հարցը կարգավորելու խնդրում: Այդպիսով, թե՛ Կ.Պոլսում եւ թե՛ Օսմանյան կայսրության զանազան շրջաններում սկսել է աստիճանաբար ստվարանալ այդ մարդկանց թիվը: Սրանից հետո, եթե անուշադրության մատնվի

այդ խնդիրը, ապա անկասկած խանգարվելու է ռեայայի անդորրը: Միանգամայն բացահայտված է, որ խռովության հանդգնություն ունեցողները ԱՆկարայի հայ ռեայաներն են, որոնք որոշ ժամանակից ի վեր, բնակություն հաստատելով Կ.Պոլսում, զբաղվել են սարաֆությամբ, էսնաֆությամբ եւ առետրով: Ռեայայի անդորրը վերականգնելու նպատակով ԱՆկարայի այդ հայերին ընտանիքներով, խումբ-խումբ արտաքսեցին իրենց նախկին վիլայեթները, պայմանով, որ այսուհետեւ ուղք չդնեն Կ.Պոլիս: Կ.Պոլսից հեռացվեցին նաեւ այն անձիք, որոնք իրենց խռովարարական վարմունքով կարող էին վնաս հասցնել մյուսներին: Կ.Պոլսից Միջերկրականի ծովափնյա շրջանները արտաքսվեցին նաեւ պառակտման բուն պատճառ հանդիսացող խռովարար հայ կրոնավորները:

Գավառից եկած «մայրապետ» անունով հայտնի կանայք, որոնք ամեն կերպ ձգտել են մոլորեցնել Կ.Պոլսի կանանց, վերադարձվելու են իրենց նախկին բնակավայրերը, իսկ տեղացի «մայրապետները» արտաքսվելու են Բանդրմա<sup>12</sup> եւ Միհալիճ<sup>13</sup>: Փերայում, Գալաթայում եւ Բոսֆորի ծովափնյա շրջաններում բնակվող այն էսնաֆները, որոնք կիրաժարվեն իրենց նախկին մտայնությունից եւ ընդունելի կհամարվեն ազգի կողմից, վերաբնակեցվելու են Կ.Պոլսի Քունքափու, Սամաթիա եւ Խասքոյ հայ ռեայայի թաղամասերում:

Իմ կայսերական բարձր հրամանով պաշտոնի նշանակված հայ առաջնորդները անհրաժեշտ է հայտնաբերեն գավառներում եւ զանազան վայրերում ապրող նման խռովորար վարդապետներին եւ ուղարկեն Միջերկրականի ծովափնյա հարմար շրջանները: Իմ կայսերական հրամանի համաձայն, գավառներում ապրող խռովարար վարդապետներին դեպի Միջերկրական ծովի կողմերը արտաքսելու հարցը արժանի է գովեստի, եւ այդ մասին իմ ջանախնդիր սադրազամի կողմից նախապես գրվել եւ ծանուցվել է վալիներին եւ մութասարիֆներին: Այնպես որ, հրամանները գործադրելու խնդրում անհրաժեշտ է լինել ուշադիր եւ հետևողական: Հավանական է, որ հիշյալ վարդապետներից ոմանք ծայտվեն եւ քաջուն գործունեություն ծավալեն: Նմաններին անհրաժեշտ է փնտրել, բացահայտել եւ արտաքսել քաղաքից: Իր հերթին, պատրիարքությունը պետք է ստուգի եւ քննի Օսմանյան կայսրությունում գտնվող բոլոր հայ եկեղեցականների նկարագիրն ու գործունեությունը: Ձեր կողմից տրված եւ կնքված վկայագիր չունեցող խռովարար կրոնավորների մասին անհրաժեշտ է շտապ տեղեկացնել տվյալ թաղի ոստիկանապետին եւ դատավորին, որպեսզի նմանները

անմիջապես ձերբակալվեն եւ արտաքսվեն Միջերկրականի ծովափնյա շրջանները: Այս հարցում պետք է լինել խիստ ուշադիր:

Դու եւս գործիր իմ կայսերական հրամանի համաձայն, մանրամասն հայտնիր եւ բացատրիր ազգիդ եւ նրանց ում հարկն է, որ այդպիսի խռովարար կրոնավորներին թաքցնող եւ հովանավորող անձիք պատժվելու են, որպեսզի օրինակ հանդիսանան ուրիշներին:

Այսուհետեւ անհրաժեշտ է հիշյալ ազգը ինչպես հարկն է գտել ու մաքրել նման խռովարարներից, որպեսզի այդ ազգի մեջ ընդունված կարգ ու կանոնին հակառակ եւ իրենց սովորություններին անհարիր պայմաններ չստեղծվեն: Իմ կայսերական հրամանի համաձայն, անհրաժեշտ է ջանք ու եռանդ գործադրել, որպեսզի օսմանյան իմ հիւր հնազանդ աշխատող ռեայայի հանդեպ որեւէ ոտնձգություն եւ խառնակչություն տեղի չունենա: Չանցառուներին զգուշացնել եւ պատասխանատվության կանչելով՝ պատժի ենթարկել: Սույն վսեմ հրամանները հաստատվում են վերելում, իմ կայսերական մեծագոր ինքնագրով զարդարված եւ իմ հատուկ պատվերով ու հոգատարությամբ արձակված կայսերական սրբազնագույն հրովարտակով:

Թող որ իմ այս նվիրական հրամանը պահ տրվի պատրիարքարանում, իսկ նրա առանձին պատճենները ուղարկվեն օսմանյան երկրի այն վայրերը, որտեղ կան հայ ռեայաներ ու առաջնորդարաններ, որպեսզի այս հրամանի վեհիմաստ բովանդակությունը այսուհետեւ Աստծո կամքով նրանց համար ծառայի որպես ուղեցույց կանոն: Քո կողմից էլ այս խնդիրը ամենայն մանրամասնությամբ թող գրվի ու ծանուցվի, եւ այն տառացիորեն գործադրվի ամենուրեք: Վերելում նշվածի համաձայն, անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները եւ լինել ջանադիր, որպեսզի այդ խռովարար վարդապետները այսուհետեւ որեւէ անօրինական գործունեություն չծավալեն: Նրանք, ովքեր կհանդգնեն հովանավորել այդպիսի խռովարարներին, անհրաժեշտ է շտապ տեղեկացնել կառավարությանը, որպեսզի ձեռք առնվեն անհրաժեշտ միջոցներ նրանց պատժելու հարցում: Դու եւս այս խնդրում եղիր ուշադիր եւ խիստ, որպեսզի խռովության հետ կապ չունեցող անձիք թյուրիմացաբար որեւէ զրկանքի չենթարկվեն:

Վերջապես, իմ կայսերական պատվիրանները կատարելու խնդրում որեւէ ներողամտություն հանդես չբերես, որպեսզի հետագայում վտանգավոր իրավիճակ չստեղծվի:

Վարվիր նշվածի համաձայն եւ խիստ զգուշացիր հակառակը



գործելուց<sup>14</sup>:

Գրված է 1243 շաբան ամսի վերջերին (փետրվար, 1828 թ.):

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 4**

##### ***ՄԵՇ ՎԵՉԻՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ***

##### **Շարիաթի ծառա Միհալիճի նախք էֆենդիին ողջուն**

Սրանից առաջ Կ.Պոլսի հայոց պատրիարքի գրավոր հանձնարարականով հայազգի մայրապետ կոչվող 11 կանայք աքսորվել էին Միհալիճ, իսկ 30-ը՝ Բանդրմա: Ներկայումս, հատուկ ներումով հիշյալները արդարացվել են: Միհալիճ աքսորված վերոհիշյալ 11 կանանց անցագրով ուղարկիր Կ.Պոլիս<sup>15</sup>:

Այս կապակցությամբ եղիր ուշադիր: Պատիժ կրող այլ անձանց հետ շփոթություն չլինելու համար ուղարկված է առանձին նամակ:

Տա Աստված, որ ուշադիր լինեք եւ գործեք ըստ այս նամակի բովանդակության: Այսքանը<sup>16</sup>:

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 5**

##### ***ՔԻՐՍՄԱՐ<sup>17</sup> ՄԵՃԱԿԱՐԳ ՆԱՅԻՔԻՆ ԵՎ ՍՅՈՒԹԵՎԵԼԻՆՆԵՐԻՆ***

Իմ բարձր կնիքը կրող կայսերական հրամանը հասնելուն պես, հայտնի լինի, որ ազգությամբ հայ դերձակ Մինասը, որի բնակության վայրն էր եղել Փերան, Դյորդյուլի սկզբում գտնվող ծկնորսների շրջանը, ինչպես նաեւ դերձակ Յովսեփը, որի բնակության վայրն էր եղել Օրթաքյոյը, իրենց խռովարարական վարմունքի համար սրանից առաջ իմ բարձր հրամանով աքսորվել էին Քիրմաս: Այժմ չունենուր դասին պատկանող հիշյալ անձինք, զղջալով իրենց կատարած սխալը, ներում են հայցել իմ կայսերական սեմից, խոստանալով այսուհետեւ չչեղվել օրինականությունից: Նկատի առնելով հիշյալների խնդրանքը, իմ կայսերական բարձր հրամանով ներում են շնորհում նրանց:

Դու, որ տվյալ վայրի նայիբն ես, երբ հայտնի լինի քեզ նրանց ներման մասին տրված իմ բարձր ֆերմանը, աշխատիր ըստ այդ հրամանի ազատ արձակել նրանց եւ վերադարձնել իրենց տեղերը:

Այդպես իմացիր եւ գործիր ըստ բարձր հրամանի<sup>18</sup>:

Չեմագի ուլ-էվվել 1245 (հոկտեմբեր 1829) թ.



## ՎԱՎԵՐԱԳԻՐ 6

### ԲԵՐԱԹ<sup>19</sup>

#### Միշտ հաղթական Օսմանյան կայսրություն

Իմ անծայրածիր սուլթանության հարկատու ռեայաներից կաթոլիկները, իրենց հոգեւոր եպիսկոպոսը չունենալով, հնուց ի վեր գտնվել են հայ եւ հույն պատրիարքարանների հովանավորության ներքո: Մինչդեռ հայ կաթոլիկների սովորություններն ու ծիսակատարությունները չեն համապատասխանել հայ եւ հույն եկեղեցիների կարգ ու կանոնին: Նրանք ստիպված հաճախել են օտարազգի կաթոլիկ եկեղեցիները եւ պսակադրությունն ու այլ ծիսակատարությունները կատարել այնտեղ: Այս հանգամանքը առիթ է տվել մեծ դժվարությունների: Նկատի ունենալով, որ հայ կաթոլիկները հնուց ի վեր հանդիսացել են իմ տերության հպատակ ռեայաները, ուստի նման դժվարություններից դուրս բերելու, օտարազգի եկեղեցիներ չհաճախելու եւ իրենց հատկացված եկեղեցիների մեջ հանգիստ ու խաղաղ ծիսակատարություններ կատարելու համար, 1246 թ. ռեջեբ ամսի 21-ին (5 հունվար 1831), իրենց հավանությամբ Մանվելի ռոդի (Մանվելյան) Հակոբ հոգեւորականին (թող Աստված նրան շնորհի բախտավոր վախճան) կայսերական բարձր ֆերմանով եպիսկոպոս նշանակեցինք Կ.Պոլսի, ինչպես նաեւ ամբողջ Օսմանյան կայսրության մեջ գտնվող կաթոլիկադավան հայերի վրա: Այն պայմանով, որ նա կանխիկ 150 000 ակչե նվիրատվություն անի կայսերական գանձարանին, ինչպես նաեւ 30 յուք, 38 000 ակչե տարեկան հարկ վճարի:

Կայսերական սուլյն բարձր հրովարտակով հրամայում են նաեւ կաթոլիկադավան մեծն ու փոքրը ճանաչեն հիշյալ Հակոբ հոգեւորականին որպես իրենց եպիսկոպոս առաջնորդը եւ իրենց սովորություններն ու ծիսակատարությունները կատարելու հարցում լինեն հլու հնազանդ: Միեւնույն ժամանակ հոգեւորականների նշանակման եւ պաշտոնից հեռացնելու հարցում ոչ ոք դրսից չմիջամտի: Իրենց դավանանքի եւ սովորության չհամապատասխանող պսակադրությունները, առանց հիշյալ եպիսկոպոսի թույլտվության, որեւէ այլ հոգեւորական իրավասու չէ կատարելու: Որեւէ մեկի կինը, եթե հեռանա իր ամուսնուց կամ, եթե մի տղամարդ ցանկանա թողնել իր կնոջը՝ երկրորդի հետ ամուսնանալու համար, ապա հիշյալ եպիսկոպոսից կամ նրա փոխանորդից բացի՝ ոչ ոք չմիջամտի: Պսակադրության, ապահարզանի կամ առաջ եկած այլ վեճերի

ընթացքում դատաստան տեսնելու, հաշտեցման կամ եկեղեցիներում երդում տալու ժամանակ կողմնակի ոչ ոք չմիջամտի: Պետական պաշտոնյաները կամ կողմնակի անձիք չպետք է միջամտեն կամ արգելք հանդիսանան, եթե հիշյալ եպիսկոպոսը տարեկան տուրքի համար օգտագործի անժառանգ մեռնող վարդապետների եւ մայրապետների ունեցվածքը: Իրենց սովորության համաձայն, եթե հիշյալ դավանանքին պատկանող վարդապետները, մայրապետները կամ որեւէ այլ մեկը կտակ թողնի աղքատներին կամ եկեղեցուն, թող ընդունելի համարվի եւ օրինականացվի: Հիշյալ եպիսկոպոսի կողմից նշանակված վարդապետներին իրենց թաղերի եկամուտները հավաքելու ընթացքում թող կողմնակի ոչ ոք արգելք կամ դժվարություն չհարուցի: Եպիսկոպոսի գավազանին, ձիուն եւ իրեն հետեւող կրոնական թափօրին եւ նրանց կրած արտահագուստին ոչ ոք արգելք չհանդիսանա:

Միեւնույն ժամանակ, իրենց այգիների հասույթները կամ հասույթներից ստացված մեղրն ու շիրան, յուղը եւ այլ ապրանքները եպիսկոպոսի ապարանքը տանելու ընթացքում ոչ ոք չմիջամտի: Եպիսկոպոսի մոտ ծառայության մեջ գտնվող 10 անձիք գերծ են մնալու ջիգեսի, ավարիզ եւ թեքալիֆ-ի օրֆին հարկերը վճարելուց: Իսկ որոշ անառակ մարդկանց հետ առնչվող վեճերը հարթվելու են եպիսկոպոսի ընդունարանում եւ ոչ թե մի այլ տեղ: Ժամանակավոր օգտագործման համար աղքատներին հանձնված եկեղեցապատկան այգիներն ու պարտեզները եւ այլ ապրանքները, եպիսկոպոսի հայեցողությամբ պետք է ետ վերադարձվեն եկեղեցուն:

Եպիսկոպոսը իրավասու է պատժելու թաղից թաղ շրջագայող խռովարար վարդապետներին: Հայ, հույն պատրիարքները եւ այլ կողմնակի անձիք ոչ մի պատրվակով իրավունք չունեն խառնվելու հիշյալ եպիսկոպոսի գործերին:

Այսպես իմացեք եւ ենթարկվեք բարձր հրամանին:<sup>20</sup>

Գրված է ռեջեբ ամսին, 1246 (հունվար 1831) թ.:

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 7

### ԲԵՐԱԹ<sup>21</sup>

Կայսերական սրբազնագույն հրովարտակի իմաստն այս է  
Սույն բարձր բերաթը շնորհվում է քրիստոնյա ազգից Ստեփանն<sup>22</sup> անունով հոգեւորականին (թող Աստված նրան շնորհի բախ-

տավոր վախճան):

4. Պոլսի եւ հայ համայնքի պատրիարք Կարապետը<sup>23</sup> իմ կայսերական դիվանին գրավոր դիմել էր, որ ֆիզիկապես տկարանալով, այսուհետեւ ի վիճակի չէ ղեկավարելու պատրիարքության գործերը: Նրա խնդրանքը հավանության արժանացավ կայսերական դիվանում, եւ հրամայվեց, որ նրա փոխարեն ընտրվի մեկ ուրիշը: Այս կապակցութեամբ հայ համայնքի ներկայացուցիչները ժողով գումարելով, վերոհիշյալ Ստեփան հոգեւորականին ընտրել են պատրիարք եւ հաստատման համար դիմել կայսերական դիվանին: Իմ բարձր սուլթանությունը հիշյալին պատրիարք նշանակեց այն պայմանով, որ նա կայսերական գանձարանին վճարի հնուց ի վեր նշանակված նվիրատվությունը: Հայտնի է, որ հնուց եկած սովորության համաձայն եւ եպիսկոպոսների մուկաթաների արձանագրություններով 4. Պոլսի, Անատոլիայի եւ Ռումելիի շրջանների հայ համայնքի 000 մախկին պատրիարքը պետական գանձարանին էր վճարել 100 000 ալէն փեշքեշ, իսկ այնուհետեւ որպէս մուկաթաա՝ 13 յուր 52 389 ալէն գումար: Այդպէս էր վարվել Կարապետ պատրիարքը եւ արժանացել կայսերական բարձր բերաթին: Ավանդական այս կարգով նորընտիր Ստեփան պատրիարքին, որը 28 ռեբի ուլ-ահիր 1247 (6 հոկտեմբեր 1831) թ. պետական գանձարան է մուծել նշանակված 100 000 ալէն փեշքեշը, շնորհում են նրան սուլն կայսերական բարձր բերաթը եւ հրամայում. Ստամբուլի եւ շրջակայքի, Ռումելիի եւ Անատոլիայի հայ համայնքի առաջնորդներն ու քահանաները, մեծն ու փոքրը հիշյալ Ստեփան հոգեւորականին պատրիարք ճանաչելով, իրենց հոգեւոր գործերով դիմեն նրան եւ չչեղվեն նրա ցուցմունքներից: Հիշյալ պատրիարքին, իր պատրիարքության ենթակա շրջաններում, իրենց սովորության համաձայն, առաջնորդների, վարդապետների եւ քահանաների նշանակման կամ հեռացման խնդրում կողմնակի ոչ մեկը թող չմիջամտի եւ արգելք չհանդիսանա: Առանց պատրիարքի կնքյալ կարգադրության, թող որեւէ մեկը չկոչվի առաջնորդական պաշտոնին: Վակֆերին վերաբերող հարցերը հարթվելու են պատրիարքի իրավասութեամբ: Առաջնորդները, վարդապետները, քահանաները եւ մայրապետները, պատրիարքին պատկանող մեթրուքաները հավաքելու ընթացքում, բեյթուլմալի ու քասսամի պաշտոնյաները չպետք է հին սովորությունը գանց առնելով, միջամտություն կատարեն: Հնուց ի վեր իրենց պատկանող եկեղեցիներում, վանքերում ու ուխտատեղիներում ծեսերը կատարելու ընթացքում թող կողմնակի միջամտություն չկատարվի: Առանց պատրիարքի արտոնութե-

յան որեւէ քահանա, զանց առնելով գոյություն ունեցող սովորույթ-  
յունները, պսակադրություն չկատարի: Պատրիարքից եւ նրա ներ-  
կայացուցիչներից բացի, ուրիշ որեւէ մեկը չմիջամտի, եթե հայ կի-  
նը լքի իր ամուսնուն եւ հեռանա, կամ տղամարդը ցանկանա թող-  
նել իր կնոջը եւ երկրորդ անգամ ամուսնանալ մեկ ուրիշի հետ:  
Առաջնորդները, քահանաները եւ կամ որեւէ հայ, եթե մահվանից  
առաջ ցանկանա ինչ որ բան կտակել եկեղեցիներին, աղքատնե-  
րին եւ կամ պատրիարքին, վկաների հավաստությամբ եւ կրոնա-  
կան օրինականությամբ թող ընդունելի համարվի: Այն առաջնորդ-  
ները կամ քահանաները, որոնք կխախտեն իրենց կրոնական ծի-  
սակատարությունները, եւ պատրիարքը պատժի կենթարկի  
նրանց՝ մազերը խուզելով կամ պաշտոնագրկելով, թող ոչ ոք կողմ-  
նակի չմիջամտի: Հնուց ի վեր սովորության համաձայն, հիշյալ  
Ստեփան պատրիարքը պետք է հոգ տանի եկեղեցապատկան այ-  
գիների, պարտեզների, ագարակների, մարգագետինների, արտե-  
րի, ջաղացքների, տների, վանքերի, խանութների, տոնավաճառնե-  
րի, կտղատու ծառերի, կահկարասիների եւ արջարների համար:  
Թող կողմնակի միջամտություն չլինի, եթե հիշյալ պատրիարքը,  
իրենց վաղեմի սովորության համաձայն պատժի ենթարկի այն քա-  
հանաներին, որոնք անձնական շահույթ ձեռք բերելու նպատակով  
յուրացնեն իրենց տնօրինության տակ գտնվող վանքերի եւ եկեղե-  
ցիների հասույթը: Եվ թող այնպես չլինի, որ ունեւոր անձիք միջամ-  
տություն անեն եւ պահանջեն, որպեսզի այսինչ եկեղեցին տրվի  
այնինչ քահանային կամ այնինչ կինը ամուսնանա այսինչ մարդու  
հետ: Իմ կայսերական բարձր ֆերմանը առնելով, պատրիարքը իր  
տնօրինությամբ հաշվեհարդար տեսնի այն հայերի հետ, որոնք,  
եկեղեցի եւ վանք ունենալով, շրջում են թաղից թաղ եւ գրգռում  
հայ ռեայաներին: Պատրիարքի ճանփորդելու ընթացքում պաշտո-  
նական անձիք արգելք չհանդիսանան նրան տանող ձիերին, բա-  
րապաններին եւ հետևող անձնակազմին, ինչպես նաեւ նրանց  
տարազին եւ հանդերձանքին: Պատրիարքի անձին հատկացված  
հասույթը եւ որպես նվիրատվություն տրվող շիրան, յուղը, մեղրը  
եւ այլ ապրանքներն ու մթերքները պատրիարքարան տեղափոխե-  
լու ընթացքում նավահանգիստների եւ մաքսատների տեսուչները  
թող արգելք չհանդիսանան: Եթե շարիաթական օրենքով անհրա-  
ժեշտություն լինի որեւէ քահանայի կալանք վերցնելու, ապա այն  
կատարվելու է հիշյալ պատրիարքի իրավասությամբ: Պատրիար-  
քը պարտավոր չէ այլ ծախսեր վճարելու, եթե տարեկան նշանակ-  
ված գումարը արդեն հատկացրել է պետական գանձարանին:



Պատրիարքի կողմից նշանակված հոգեւորականները, թաղից թաղ պտտելով, պատրիարքության պատկանող մեթրուքաները հավաքելու ընթացքում պետական պաշտոնյաների կողմից միջամտություն չպետք է կատարվի: Կրոնական օրինազանցների մահից հետո կադիները, նայիբները, ոստիկանները եւ այլ պաշտոնական անձիք չպետք է ճնշում գործադրեն քահանաների վրա, նման մարդկանց դիակը վերցնելու հարցում: Թող որ հիշյալ պատրիարքը գործի համաձայն այս բերաթի եւ կողմնակի ոչ մի միջամտություն չլինի պատրիարքությունը մի այլ տեղ փոխադրելու խնդրում: Հիշյալ Ստեփան պատրիարքը, իր քափուքեհյան եւ իր հետեւորդներից՝ 15 անձիք զերծ են մնալու ջիզիեի, ավարիզի եւ թեքալիֆի տուրքերից: Իմ կայսրության մեջ եկեղեցիներն ու վանքերը տնօրինող քահանաների եւ վարդապետների հաշիվների ստուգումը կատարվելու է միայն պատրիարքի իրավասությամբ եւ նրա ներկայացուցիչների կողմից: Որեւէ փաշա, մյութեսելիմ, կադի, վոյեվոդա կամ այլ պետական պաշտոնյա իրավասու չէ վերցնել հայ ռեայաներին պատկանող եկեղեցիներն ու վանքերը եւ հանձնել այլ դավանանքի պատկանող մարդկանց: Եկեղեցիների եւ վանքերի գույքը անձեռնմխելի է եւ ենթակա չէ գրավադրության: Ինչ որ ձեւով եթե վերցված էլ լինի, ապա օրինավոր պետք է իր տեղը վերադարձվի: Պատրիարքը իրավասու է չթույլատրելու եւ պատժելու այն անձանց, որոնք հակառակ իրենց վաղեմի սովորության, կամուսնալուծվեն եւ կամ կփորձեն կին ունենալով հանդերձ երկրորդ անգամ ամուսնանալ: Ոչ ոք արգելք չհանդիսանա պատրիարքի ձեռքի գավազանին: Մուկաթաա հավաքելու համար շրջագայող վարդապետների գրաստին եւ անձնական իրերին ոտնձգություններ չլինեն պետական պաշտոնյաների կողմից: Միեւնույն ժամանակ եկեղեցական գույքերից նավահանգիստներում եւ մաքսատներում տուրք չգանձվի: Շարիաթի հետ առնչվող դատերը լսվելու են կայսերական դիվանում եւ ոչ ոք չփորձի հակառակ գործել սույն բերաթում նշված պայմաններին:

Թող ուղղությունից չշեղվեն եւ իլու հնազանդ ենթարկվեն կայսերական սույն բարձր ֆերմանին:<sup>25</sup>

Գրված է 1247 թ. քեմազի ուլ-ավվալ ամսի 9-ին (16 հոկտեմբեր 1831 թ.):



## ՎԱՎԵՐԱԳԻՐ 8

### ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՍՈՒՆ ԷՖԵՆԴԻՆ ՇՆՈՐՀՎԱԾ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ<sup>26</sup>

Կայսերական հրամանագրի իմաստն այս է

Անդոն-Պետրոս Յասուն էֆենդիին տրված իմ նախկին կայսերական ֆերմանը հաստատում էր Կ.Պոլսում գտնվող հայ կաթոլիկական պատրիարքարանի եւ Կիլիկիայի կաթողիկոսարանի միացումը:

Այժմ, առաջ եկած տարածայնությունների հետեւանքով, այդ ֆերմանը հայտարարվում է չեղյալ: Նկատի ունենալով, որ հիշյալ Յասուն էֆենդիին հանդես է բերել հաստատական հավատարմություն ու նվիրվածություն իմ կայսրության հանդես եւ պատրաստականություն ցուցաբերել վերոհիշյալ տարածայնությունները հարթելու համար, ինչպես նաեւ հարգելով եպիսկոպոսների, արքեպիսկոպոսների եւ ազգի ներկայացուցիչների այն խնդրանքը, որ նա շարունակի իր ծառայությունը իր պաշտոնում, իմ կայսերական հրամանագիրը հայտարարում է հետեւյալը:

Պատրիարքարանին, եկեղեցիներին, վանքերին կնամ այլ բարեգործական հաստատություններին պատկանող ստացվածքների տնօրինումը կատարվելու է իմ կայսրության մեջ գործող օրենքների եւ կանոնների հիման վրա:

Ազգային հիվանդանոցները, որբանոցները, վանքերը, դպրոցները եւ նման այլ հաստատությունները, որոնք կառուցվելու են առաջիկայում, պետք է կողմնակի միջամտության չենթարկվեն, եթե դրանց կառուցումը չի հակասում կայսրությունում գործող օրենքներին: Հիշյալ համայնքների եւ այլ հոգեւորականների ընտրությունն ու նշանակումը կատարվելու են նախկին կանոնադրության հիման վրա: Իսկ նրանց պաշտոնավարությունը ուժի մեջ է մտնելու իմ կայսերական դիվանի հաստատումից հետո: Բացի դրանից, Կ.Պոլսի պատրիարքարանի եւ Կիլիկիայի կաթողիկոսարանի աթոռը, եթե թափուր մնա, ապա նախկին սովորության համաձայն, իմ հպատակը հանդիսացող հարմար մի եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս ընտրվելու է տվյալ պաշտոնին, որը եւ ուժի մեջ է մտնելու Բարձրագույն Դռան հաստատումից հետո: Մի խոսքով, հիշյալ համայնքի բոլոր գործերը կառավարվելու են համաձայն կանոնադրության եւ օտարերկրացիներից ոչ մեկը իրավունք չի ունենալու միջամտելու այն գործերին, որոնք արդեն կարգավոր-

վել են պատրիարքարանի եւ Բարձրագույն Դռան միջեւ:

Այսպիսով, իմ կայսրությունում եւ Կ.Պոլսում գտնվող հայ կաթողիկ պատրիարքարանը եւ Կիլիկիայի կաթողիկոսությունը, կրկին հավանություն տալով հիշյալ Չասուն Էֆենդիի պաշտոնավարությանը, ես շնորհեցի սույն բարձր հրովարտակը եւ հրամայեցի, որպեսզի հիշյալը կրկին զբաղեցնի հայ կաթողիկ պատրիարքարանի եւ Կիլիկիայի կաթողիկոսարանի աթոռը: Եվ քանի նա չխախտի տվյալ համայնքի հոգեւոր կաթողիկ կանոնները, զանց չառնի վերոհիշյալ պայմանները, չխախտի իմ կայսրության օրենսդրությունը եւ իր ցանկութեամբ չհեռանա իր պաշտոնից, թող մնա այդ պաշտոնում մինչեւ իր կյանքի վերջը: Եվ բոլոր թեմական առաջնորդները, եպիսկոպոսները, քահանաները, վարդապետները եւ կաթողիկ համայնքի մեծերն ու փոքրերը, որոնք ենթարկվում են պատրիարքարանին եւ կաթողիկոսարանին, պետք է նկատի ունենան, որ հիշյալ Չասուն Էֆենդին հանդիսանում է իրենց պատրիարքը եւ կաթողիկոսը: Պատրիարքարանի հետ կապված բոլոր գործերում բոլորը պետք է դիմեն նրան եւ ենթարկվեն նրա կարգադրություններին: Եթե հիշյալ Չասուն Էֆենդին օրենքի հիման վրա իր պատրիարքությանը եւ կաթողիկոսությանը ենթակա թեմական առաջնորդներին, քահանաներին եւ այլ հոգեւորականներին նշանակի կամ հեռացնի պաշտոնից, կողմնակի ոչ մեկը իրավունք չունի միջամտելու: Թեմական առաջնորդներից որեւէ մեկին հարկադրաբար փոխելու անհրաժեշտության դեպքում, հիշյալ պատրիարքը ներկայացնում է թաքրիք, որի հիման վրա հետեւում է իմ բարձր հրովարտակը: Եթե վալին, մութասարիֆը կամ կադին եպիսկոպոսների եւ թեմական առաջնորդների չարաշահումների համար հարց ներկայացնեն նրանց պաշտոնից հեռացնելու մասին, ապա այն չի կարող գործադրվել առանց պատրիարքի իրավասության: Իսկ եթե առանց գործի հետաքննման ինչ որ ձեւով իրաման արծակվի, ապա այն չի կարող օրինական համարվել:

Թող ոչ ոք արգելք չհանդիսանա, եթե եպիսկոպոսներից կամ թեմական առաջնորդներից մեկը, իր տեղը փոխանորդ նշանակելով որեւէ հոգեւորականի, գործով մեկնի Կ. Պոլիս: Եպիսկոպոսները եւ մյուս հոգեւորականները իրենց բնակավայրերում, եկեղեցիներում, վաճառներում եւ ուխտավայրերում կարող են ազատորեն գործադրել իրենց սովորությունները՝ գտնվելով Կ. Պոլսում եւ նրա արվարձաններում: Նրանց իրավունք է տրվում իրենց սովորություններով թաղելու իսկույցյալներին եւ ոչ մեկը իրավունք չունի ինչ որ պատրվակով արգելք հանդիսանալ կամ միջամտել նրանց

սովորություններին: Պատրիարքի կողմից վավերացված բոլոր քաջբիրները համարվում են օրինակամ:

Թող ոչ ոք, առանց իմ բարձր հրամանի, չհանդգնի խուզարկել հիշյալ համայնքի ունեցվածքը, վանքը և արգելք հանդիսանա դրանց վերանորոգման գործին, քանի որ դրա թույլտվությունը տրված է նրանց վաղուց ի վեր: Ոչ ոքի չի թույլատրվում ինչ որ գրութայամբ հին եկեղեցիները հանձնել ուրիշին:

Ոչ ոք այլ դավանանքի օգտին չհափշտակի եկեղեցու և վանքի ունեցվածքը կամ ներկայացնի դրանք որպես գրավադրություն: Այն գույքը, որը ինչ որ ձեռով յուրացվել է, պետք է օրենքի հիման վրա ետ վերադարձվի: Պսակադրությունը կամ ամուսնալուծությունը գործադրվում է հիշյալ պատրիարքի թույլատրությամբ կամ նրա կողմից նշանակված ներկայացուցիչների կողմից և կողմնակի անձը իրավունք չունի արգելք հանդիսանալու: Եթե քահանաները կամ նրանց փոխանորդները, առանց հիշյալ պատրիարքի կամ թեմական առաջնորդի գիտության կամ թույլտվության, Կ.Պոլսում կամ արվարձաններում պսակադրություն կատարեն հակառակ գոյություն ունեցող սովորությունների, ապա նման հոգեւորականներին պատժելու դեպքում թող կողմնակի ոչ մեկը արգելք չհանդիսանա: Պսակադրության, ամուսնալուծության եւ այլ պարագաներում, երբ տարածայնություն է առաջանում երկու քրիստոնյաների միջեւ, ապա այն հարթվելու է հիշյալ պատրիարքի և նրա տեղակալի իրավասությամբ: Եվ թող կադին, նայիբը խոչընդոտ չհարուցեն և չմիջամտեն, եթե հանցավորները հաշտվեն և երդվեն իրենց եցեղեցիներում՝ իրենց սովորությունների համաձայն: Տվյալ համայնքի ներսում արգելվում է ամուսնալուծությունը և կին ունենալով՝ երկրորդ կին բերելը, քանի որ այն հակասում է նրանց սովորություններին: Նրանք, ովքեր կխախտեն իրենց սովորությունները, կենթարկվեն համապատասխան պատժի: Այն անձնավորությունները, որոնք ամուսնանում են հակառակ իրենց սովորություններին, իրավունք չունեն հաճախելու եկեղեցի: Նման մարդկանց մահվան դեպքում կադին, նայիբը եւ այլ երեսելի անձիք չպետք է առաջարկեն կամ ստիպեն, որ հանգուցյալի թաղումը կատարվի քահանայի կողմից: Թեմական առաջնորդները, եպիսկոպոսները, քահանաները, վարդապետները եւ մյուս հոգեւորականները, որոնք իրենց կենդանության օրոք իրենց սովորություններով դրամ կամ զանազան ապրանքներ են կտակում եկեղեցուն, դպրոցին, որբանոցին կամ պատրիարքին, կաթողիկոսին, ապա այդ բոլորը համարվելու են ընդունելի: Սակայն կտակողի մահվան դեպ-



քում, եթե նրա ժառանգները յուրացնում կամ հակառակում են, ապա տվյալ պարագան հարթվում է կրոնական օրենքներով, կաթոլիկ վկաների ներկայությամբ եւ ժառանգներից վերցնելով կտակած ապրանքը, հանձնվում է օրինավոր ժառանգին: Թող պետական գանձարանի ներկայացուցիչները, այդ թվում՝ մյութվելիները, կասսամները, մուհասսիլները եւ ուրիշներ միջամտություն չկատարեն, եթե հիշյալ պատրիարքը կամ նրա ներկայացուցիչները տեր կանգնեն անժառանգ կտակավորների դրամին, ունեցվածքին, բեռնատար գրաստին եւ այլ ապրանքներին: Թող կողմնակի ոչ ոք խոչընդոտ չհարուցի, եթե հիշյալ պատրիարքը, պատժի ենթարկելով, մորուքը խուզելով, կրոնական գործերից հեռացնում է իրենց սովորություններին հակառակ գործող կաթոլիկ թեմերի առաջնորդներին, քահանաներին: Պատրիարքը կարող է եկեղեցին հանձնել մի այլ հարմար քահանայի:

Եթե պատրիարքը, թեմական առաջնորդները, տեղակալները եւ համայնքի անդամները դատական գործ ունենան՝ կապված շարիաթական օրենքի հետ, ապա դրանք լսվելու են տվյալ վայրի դատարաններում:

Եթե իրավունքի եւ ժառանգության հարցերով կաթոլիկ համայնքի երկու անձանց միջեւ տարածայնություն առաջանա, ապա թող այն հարթվի արդարությամբ, եթե երկու կողմերը, համաձայնության գալով, դիմել են պատրիարքարանին: Թող առաջվա նման պատրիարքարանի եկանուտը եւ ծախսերը մնան անձեռնմխելի, իսկ կաթոլիկ համայնքը թող վճարի վաղուց ի վեր նշանակված պետական հարկը, ինչպես նաեւ իրենց կրոնական նվիրատվությունը:

Եթե եկեղեցու եւ վանքի ներկայացուցիչները յուրացնում են պատրիարքարանի կամ պետության հարկերը, ապա նմանները պատժվում են առանց կողմնակի միջամտության:

Թեմական առաջնորդները եւ մյուս կրոնավորները, ինչպես նաեւ յուրաքանչյուր վայրի կադիները, նայիքները պարտավոր են օժանդակելու պատրիարքարանի հարկերի գանձման գործին, որը կատարվում է իմ բարձր ֆերմանի եւ պատրիարքի հատուկ գրության հիման վրա:

Պատրիարքին, թեմական առաջնորդներին, եպիսկոպոսներին պատկանող այգիների բերքը տեղափոխելու ընթացքում, կամ յուրի, մեղրի, շիրայի եւ նվիրատվությանը վերաբերող այլ ապրանքների փոխադրության ընթացքում, թող մաքսատան աշխատողները վարվեն նախկին սովորության համաձայն եւ հարկեր չգանձեն:

Եթե կաթոլիկ համայնքի կրոնավորներից մեկը մեղադրվի

քրեական հանցագործության մեջ, ապա նա կալանքի է վերցվում եւ ենթարկվում է դատական քննության: Իսկ եթե մեղադրանքը հաստատվի, ապա նա պատրիարքի կողմից հեռացվում է կրոնականների շարքերից եւ բանտարկվում է պետական քրեական օրենսգրքի համաձայն:

Թող պատրիարքի, թեմական առաջնորդների, նրանց տեղակալների գտնված վայրերում եկած զինվորականները կամ մյուս պետական գործիչները որեւէ վիրավորանք չհասցնեն եւ արգելք չհանդիսանան նրանց կրած տարազին կամ ձեռքի գավազանին:

Եկեղեցիներին եւ վանքերին պատկանող ամբողջ ունեցվածքը, այդ թվում պարտեզները, այգիները, դաշտերը, մարգագետինները, անասունները, աղացները եւ այլ ձեռնարկությունները, որտեղ մոմեր են պատրաստում, պտղատու եւ ոչ պտղատու ծառերը, վակուֆային տները եւ խանութները անձեռնմխելի են:

Երեւելի անձերից ոչ մեկը իրավունք չունի ստիպելու պատրիարքին, որ նա որեւէ թեմական առաջնորդի կամ քահանայի տեղափոխի մի վայրից՝ մյուսը:

Հիշյալ պատրիարքարանը պետք է հարգի եւ գործադրի վերոհիշյալ պայմանների հիմնական կետերը: Եվ ոչ ոք իրավունք չունի որեւէ ձեռով խանգարելու կամ միջամտելու պատրիարքարանի եւ կաթողիկոսարանի գործերին<sup>27</sup>:

9 ռեբի ուլ-ահիր 1296 (3 ապրիլ 1839) թ.:

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 9**

### **ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՈՉՄԱՀՄԵԳԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՏՐՎԱԾ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ <sup>28</sup>**

Օսմանյան կայսրությունում բնակվող եւ մահմեդական շարիաքի եւ սուլթանի արդարության հովանավորությունը վայելող բոլոր ռեայաները ապրում են բարեկեցիկ կյանքով: Սուլթանությունը, ստանձնելով ցիրուցան եղած խեղճ ռեայաների պաշտպանություն ու հովանավորությունը, հոգ է տանում նրանց հանգիստն ու անդորրությունն ապահովելու խնդրում:

Պատրիարքը, մետրոպոլիտները եւ թեմերը, տեղ դառնալով բարձր բերաթին, ռեայաներից առավել պարտավոր են հավատարիմ ծառայել պետությանը: Պատրիարքարանի տվյալներով, Ռու-



մելի եւ Անատոլիա ուղարկված մետրոպոլիտները եւ թեմերի առաջնորդները իրենց նշանակված շրջաններում ամեն կերպ ջանք են թափում ռեայայի ապահովության եւ իրենց օրհնանքն են տալիս սուլթանության հարատեւության համար: Մինչնույն ժամանակ պատրիարքությանը պատվիրված է, որ մետրոպոլիտները եւ թեմերը իրենց խորհուրդներով զգուշացնեն ռեայաներին, որպեսզի սխալ արարքներ չգործեն:

Սույն կայսերական հրովարտակով նորին մեծությունն փաղիշա-հը ավետում է, որ ինքը արդարամիտ է ռեայայայի նկատմամբ եւ ամեն կերպ կարեկցում է նրանց բարեկեցությանը:

Գալաթայում եւ Փերայում գտնվող եւ կաթոլիկ համայնքին պատկանող վայրերը առաջվա նման պատկանելու են նրանց: Բոս-Ֆորում գտնվող թաղերի մասին նրանց խնդրանքը մերժվում է եւ այդ առթիվ գրավոր որոշում տալու համար պաշտոնակատար են նշանակվում շինարարության կառավարիչ Խալիմ էֆենդին եւ մաքսատան պետ Սալիհ բեյը:<sup>29</sup>

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 10**

**ՀԱՅ ՊԱՏՐԻԱՔ ԱՐՇԱՐՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԷՖԵՆԴԻԻ<sup>30</sup>**  
**ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ԲԱՐՉՐ ԲԵՐԱ-**  
**ԹԸ<sup>31</sup>**

4. Պոլսի, ինչպես նաեւ հայ հպատակների պատրիարքության թափուր աթոռի համար հայ ազգի երեւելիներից ձեռնհաս անձիք պատրիարքության ժողով գումարելով, ըստ կանոնադրության<sup>32</sup>, պատրիարք են առաջադրել նախկին պատրիարքի տեղակալ Արշարունի Յովհաննես էֆենդիին: Հիշյալ պաշտոնավարության հաստատման խնդրագիրը արդարադատության եւ կրոնական գործերի նախարարությունից առաքվել է բարձրագույն դուռ եւ, քննարկման առարկա դառնալով իմ մինիստրների բարձր խորհուրդում, որոշվել է հաստատել նրան տվյալ պաշտոնում, նկատի ունենալով նրա համար թեկնածությունն ու լավ նկարագիրը: Այնուհետեւ տեղեկագիրը ուղարկվել է իմ վսեմ վեհապետության հաստատմանը, եւ 1329թ.(1911) նվիրական զիլհիջե ամսի28-ին(դեկտեմբերի20) տրվել է իմ բարձր հրամանագիրը՝ հիշյալին պատրիարքի պաշտոնում հաստատելու մասին: Հնուց եկած սովորության համաձայն,

արքայական կնիքով զարդարված այս բարձր բերաթը տալով, հրամայում եմ, որ հիշյալ Արշարունի Դովհաննես էֆենդին, դառնալով Կ. Պոլսի, Անատոլիայի եւ Ռումելիի հայ հպատակների պատրիարք, մնա այդ պաշտոնում եւ մինչեւ որ իր ժողովրդի կրոնական օրենքների նկատմամբ հակառակ գործունեություն չունենա, կանոնադրության նկատմամբ օրինազանցություն չանի եւ Օսմանյան պետության դեմ անհավատարմություն չցուցաբերի եւ մինչեւ որ անձամբ հրաժարական չտա, ցմահ չհեռացվի պաշտոնից: Նշված որեւէ կետի հիման վրա, եթե պաշտոնից հեռացնելու անհրաժեշտություն զգացվի, թող այն գործադրվի կանոնադրության մեջ նշված պայմանի համաձայն: Պատրիարքության ենթակա տարբեր վայրերի թեմերը, քահանաները եւ ընդհանրապես հայ ազգը, հիշյալին իրենց վրա պատրիարք ճանաչելով, պետք է լսեն եւ հնազանդվեն նրան եւ պատրիարքության հետ առնչող բոլոր գործերով դիմեն նրան: Պատրիարքությանը ենթակա թեմերին. քահանաներին եւ ընդհանրապես կղերականներին, եթե հիշյալ պատրիարքը իրենց սովորությունների համաձայն պաշտոնագրով է անում կամ նշանակում է նոր պաշտոնի, ապա թող կողմնակի որեւէ մեկը միջամտություն չանի: Որեւէ թեմի փոփոխումը կատարվելու է հիշյալ պատրիարքի եւ ազգային ժողովի կողմից ընդունված որոշման եւ նրանց կողմից կնքված ծանուցագրի հիման վրա, որը եւ հաստատվելու է իմ բարձր բերաթով: Եթե փաշաները, կադիները, նայիբները զանգատվեն թեմերի եւ Եպիսկոպոսների սխալ արարքներից եւ ծանուցեն նրանց հեռացման մասին, ապա այդպիսի հարցը չի քննվելու՝ մինչեւ որ պատրիարքը իրազեկ չդառնա գործի էությանը: Որեւէ մեկը, եթե ինչ որ ծանապարհով եւ նոր ու հին տարեթվերով բարձր բերաթ ձեռք բերի, ապա այն զուրկ է լինելու լիիրավ ուժ ունենալուց: Եպիսկոպոսներից կամ առաջնորդներից որեւէ մեկը, եթե կարելու եւ շտապ գործով մեկնում է Կ. Պոլիս, կարող է անարգել իր տեղը նշանակել որպես փոխանորդ՝ որեւէ կրոնավորի: Պատրիարքը, առաջնորդները եւ մյուս կրոնավորները ազատ կարող են գործադրել իրենց հզեւոր ծիսակատարությունները թե՛ իրենց բնակավայրերում եւ թե՛ եկեղեցիներում, վանքերում եւ Կ. Պոլսի շրջակայքում՝ գտնվող ուխտատեղիներում, որոնք հնուց ի վեր գտնվում են նրանց տրամադրության տակ: Նրանք ազատ են նաեւ իրենց մեռելները իրենց սովորության համաձայն վերցնելու եւ ընդհանրապես, իրենց ծիսակատարությունները անարգել կատարելու: Պատրիարքի եւ ազգային ժողովի կնիքներով կնքված թաքրիրները օրինավոր են համարվելու եւ

իրենց սովորությունների հետ առնչվող բոլոր խնդրագրերին ընթացք է տրվելու: Հիշյալ ազգին պատկանող եկեղեցիներում ու վանքերում, առանց իմ վսեմ հրամանի, ոչ ոք իրավունք չունի խուզարկություն կատարելու: Գնուց ի վեր կատարվող վերանորոգումներին չպետք է արգելք հանդիսանալ: Արգելվում է եկեղեցիների եւ վանքերի գույքի հափշտակումը կամ որպես գրավ առնել-տալը: Եթե ինչ որ ձեռով գույքը վերցվել է, ապա թող այն օրինավոր կերպով ետ վերադարձվի: Հիշյալ ազգից որեւէ մեկը իրենց սովորությունների համաձայն, եթե պսակադրություն կամ ապահարգան է կատարում, ապա թող այն գործադրվի պատրիարքի կամ նրա կողմից նշանակված ներկայացուցիչների իրավասությամբ, առանց կողմնակի միջամտության: Առանց պատրիարքի, առաջնորդների եւ տեղապահների թույլտվության, քահանաները կամ նրանց փոխանորդները, եթե իրենց սովորություններին հակառակ պսակադրություն կատարեն, լինի Կ.Պոլսում կամ գավառներում, ապա պատժակաս միջոցներ ձեռնարկելու դեպքում, թող կողմնակի միջամտություն չկատարվի: Պսակադրության, ապահարգանի եւ կենցաղային այլ հարցերում երկու քրիստոնյաների միջեւ առաջացած տարածայնությունները պետք է հարթվեն պատրիարքի կամ նրա ներկայացուցիչների կողմից՝ իրենց սովորություններով եւ եկեղեցիներում երդում տալով: Եվ նման դեպքերում կադիները, նայիրները չպետք է միջամտեն եւ արգելք հանդիսանան: Իրենց սովորության համաձայն, պատշաճ չէ կնոջից բաժանվելը կամ կին ունենալով հանդերձ՝ երկրորդ կինը վերցնելը, կամ կնոջ մահից հետո երեք անգամից ավելի ամուսնանալը: Նման մարդկանց թույլատվություն չի տրվում, իսկ օրինազանցները պատժվում են: Այս սովորությունների հակառակորդները չպետք է եկեղեցի հաճախեն: Նման օրինազանցների մահից հետո կադիները, նայիրները եւ ոստիկանության ներկայացուցիչները չպետք է ճնշում գործադրեն քահանաների վրա այդ մարդկանց դիակը վերցնելու հարցում: Առաջնորդները, եպիսկոպոսները, քահանաները եւ մյուս կրոնավորները, եթե իրենց մահից առաջ, իրենց սովորություններով, իրենց ունեցվածքի մեկ երրորդը կամ ինչ որ կտակ են թողել եկեղեցիներին, աղքատներին, պատրիարքությանը, ապա այն ընդունվելու է պատշաճորեն եւ հանձնվելու է հասցեատիրոջը՝ հայ վկաների ներկայությամբ: Ամժառանգ մահացած առաջնորդների, քահանաների, «մայրապետ» կոչվող կին հոգեւորականների դրամը, գույքը, անասունները եւ ընդհանրապես ամբողջ ունեցվածքը, եթե յուրացվում է պատրիարքության կողմից, ապա կայսերական գան-

ծարանը, կասսամները, մյուսեւելիները, մուհասիւները եւ մյուս պաշտոնյաները չպետք է միջամտութիւն կատարեն: Իսկ ժառանգորդ ունեցողների դրամը եւ այլ ունեցվածքը պատրիարքի եւ նրա ներկայացուցիչների իրավասութայամբ պետք է հանձնել ժառանգորդին: Այն առաջնորդները եւ քահանաները, որոնք կգործեն իրենց սովորութիւններին հակառակ, պատրիարքը իրավասու է պատժելու: Նրանց մորուքները խուզելու եւ հոգեւորականութայան պաշտոնից հեռացնելու եւ թափուր տեղի համար նոր քահանաներ նշանակելու ժամանակ կողմնակի միջամտութիւն չպետք է լինի: Պատրիարքութայան իրավասութայան տակ գտնվող եկեղեցիները, վանքերը եւ նրանց վակուֆները հանդիսացող ունեցվածքն ու անասունները կառավարվելու են հնուց ի վեր գոյութիւն ունեցող կարգով եւ առանց կողմնակի միջամտութայան: Հայ ազգի համար հնուց ի վեր նշանակված պետական տուրքերը, պատրիարքութայան հարկերը, հանգանակված դրամները, պատրիարքութայան եկամուտները, առաջվա նման պետք է գանձվեն եւ վճարվեն առանց որեւէ տարածայնութայան: Եկեղեցիների եւ վանքերի տեղապահները, եթէ պետական եւ պատրիարքութայան հարկերից չարաշահումներ անեն, ապա ստուգելուց հետո պատժելու դէպքում ոչ ոք արգելք չի հանդիսանա: Պետութայան եւ պատրիարքութայան համար գանձվող հարկերի համար պետք է տրվի իմ բարձր հրամանը եւ նրա կողմից էլ հատուկ գրութայամբ անձեր նշանակվեն, որպետզի կադիները եւ նայիրները շարիաթի հիման վրա գանձման գործում աջակցութիւն ցուցաբերեն: Հիշյալ պատրիարքին պատկանող այգիների բերքը եւ քրիստոնյաների ողորմութայան անվան տակ՝ յուղը, մեղրը, շիրան եւ այլ մթերքներն ու ապրանքները, պատրիարքարան տեղափոխելու ընթացքում, նավահանգիստների եւ մաքսատների տեսուչները չպետք է նախկին սովորութիւններին հակառակ վարվեն: Նավահանգիստներում, մաքսատներում թող մաքս չգանձվի նաեւ պատրիարքին, առաջնորդներին եւ եպիսկոպոսներին, ինչպետ նաեւ եկեղեցիներին պատկանող ապրանքներից: Անհրաժեշտութայան դէպքում պատրիարքը իրավասու է օրինական հիմունքներով հայ քահանաներից որեւէ մեկին բանտարկելու: Եպիսկոպոսների եւ այլ անձանց չարաշահումների հետ առնչվող դատերը, եթէ Կ.Պոլիս հասնեն, ապա դրանք քննվելու են օրենքի հիման վրա: Պատրիարքարանին վերաբերող բոլոր գործերը կատարվելու են հնուց ի վեր գոյութիւն ունեցող պայմաններով՝ առանց կողմնակի միջամտութայան:

Գրված է 28 զիլիիջե 1329 (20 դեկտեմբերի 1911) թ.:



## ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հրովարտակի բնագիրը գերմաներեն հրատարակել է արեւելագետ Ֆրանց Բաքինգերը՝ 1956 թ. (Ein Besitzzeit um Sulu Manastir unter Mehmed II (1473) Beitrag zur Frühgeschichte des armenischen Patriarchats von Konstantinopel. "Charisteria Orientalia", Praha, 1956, s. 29-37). Հայերեն թարգմանությունը լույս է տեսել 1957 թ. «Շողակաթի» մեջ (տես «Սեփականութեան վեճը Սուլու Մանաստրի շուրջ Մեհմեդ Բ-ի օրոք», 1473, թարգմանությունը դոկտ. Գ. Զըրրզեան, «Շողակաթ» 1957, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 337-341, դեկտեմբեր, էջ 367-369: Թարգմանության մեջ կան որոշ անճշտություններ եւ շեղումներ: Արեւմտահայերեն առավել հաջող թարգմանություն է կատարել Յ. Սիրունին (տես Պոլիս եւ իր դերը, Պէրյուք 1965, էջ 243): Գերմաներեն հրատարակությունից երկու տարի հետո, (2 մայիս 1958) թվարկությունը կրող նամակով Ֆրանց Բաքինգերը հայտնել է, որ ֆերմանի ճակատին դրոշմված թուղրան պատկանում է ոչ թե սուլթան Մեհմեդ II-ին, այլ՝ սուլթան Սելիմ II-ին (1566-1574) (տես Յ. Պրյակերան, Օսմանեան քանի մը վաւերագիր Իսթամպուլի հայոց եկեղեցիներն ունանց մասին, «Հանդես Ամսօրեայ», 1961, 10-12, էջ 723): Այս տեղեկության հիման վրա Յ. Բերբերյանը հրավիրում է թուրք մասնագետների ուշադրությանը, որոնք ստուգումից հետո եզրակացնում են, որ հրովարտակի առաջին թվականը պետք է լինի ջեմազի էլ-էվլել 932 թ. (փետրվար 1526), իսկ երկրորդ թվականը՝ 13 ռեբի ուլ-էվլել 976 թ. (14 օգոստոս 1570): Մեր կարծիքով, հրովարտակի տարեթվերի ճշտման հարցում գոյություն ունի բյուրիմացություն: Հայտնի է, որ այս հրովարտակում նշված Գրիգոր եպիսկոպոսը բազմել է Կ.Պոլսի պատրիարքության աթոռին 1536-1537 թթ., հանդիսանալով հինգերորդ հայոց պատրիարքը Կ.Պոլսում: Մասնագետների եզրակացրած առաջին, այսինքն հիջրայի 932 թ. (1526) համընկնում է Գրիգոր եպիսկոպոսի պատրիարքության տարեթվի հետ: Նկատի պետք է ունենալ նաեւ, որ հրովարտակում հայց ներկայացնողը միեւնույն անձն է, մինչդեռ հրովարտակի շարադման տարեթիվը՝ հիջրայի 976 (1570) թ., չի կարող ճիշտ համարվել, քանի որ տվյալ ժամանակ Կ.Պոլսի հայոց պատրիարքն է եղել Հակոբ եպիսկոպոսը, որը 1563 թ. հաջորդել է Տիրատուր Սսեցուն ( Յ. Սիրունի, նշվ. աշխ., էջ 244): Այստեղից կարելի է եզրակացնել, որ հրովարտակը տրված է սուլթան Սուլեյման I-ի (1520-1566) կողմից եւ ոչ թե սուլթան Սելիմ II-ի (1566-1574) կողմից:

2. Նկատի ունի Կ.Պոլսի Սամաթիա թաղամասում գտնվող հայկական Ա.Գեւորգ եկեղեցին: Թուրքերն այն անվանել են Սուլու Մանաստր (ջրոտ վանք), նկատի ունենալով եկեղեցու ներսում հոսող բուժիչ ջուրը: Սուլթան Մեհմեդ II-ը Կ.Պոլսը գրավելուց հետո, Սամաթիայի շրջանում բնակեցրել է բավականին թվով հայեր եւ մինչեւ այդ հույներին պատկանող այս եկեղեցին տրամադրել է նրանց: Մինչեւ 1641 թ. Ա.Գեւորգը եղել է Կ.Պոլսի հայ պատրիարքության արքամանիստ եկեղեցին: 17-18-րդ դդ. եկեղեցին մի քանի անգամ ենթարկվել է հրդեհի: Վերանորոգվելու ընթացքում այն ընդար-



ծավել է հարակից շինություններով: Կից կառուցվել են Ա.Աստվածածին եւ Ս.Երրորդություն եկեղեցիները (տե՛ս Ե. Զյոնուրճյան, նշվ. աշխ., էջ 80, Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 31):

3. Դնեստրյան Բելգորոդի նախկին անունը, գտնվում է Օդեսսայից հարավ-արեւմուտք:

4. Բնագրում՝ թալֆե (talife), որը նշանակում է «մարդկանց խումբ», «ամբոխ», «ցեղ»: Խոսքը Ակկերմանից եկած հայ գաղթականների մասին է: Այս մասին Դ. Սիրունիի նշել է, որ «Աքքերմանեն եկող հայ գաղթականներն իրապես անհանգիստ կընէին պատրիարքարանը այդ օրերուն, փորձելով գալ տեղավորվիլ անոր հողերուն վրա» (տե՛ս Դ. Սիրունի, նշվ. աշխ., էջ 243):

5. Բերաթը տրված է սուլթան Մուստաֆա III-ի (1757-1774 թթ.) կողմից: Բնագրի պատճենը տե՛ս Ա. Պէրպէրեան, հայոց պատմութիւն, Կ.Պոլիս, 1871, էջ 227-233:

6. Նկատի ունի Կ.Պոլսի հայոց պատրիարք Դակոբ Նայյանին (1741-1749 թթ.) եւ (1752-1764):

7. Նկատի ունի Կ.Պոլսի հայոց պատրիարք Գրիգոր Պասմաճյանին (1764-1773):

8. Իրականում, եկեղեցիների կամ վանքերի վերանորոգման համար կառավարությունից թույլտվություն ձեռք բերելուց հետո էլ, տեղի մուլե-ռանց մահմեդական բնակչությունը որեւէ պատրվակ գտնելով, խանգարում կամ քանդում էր վերանորոգված մասերը:

9. Նկատի ունի հայ կաթոլիկներին, որոնք տվյալ ժամանակ ինքնուրույն եկեղեցի չունէին:

10. Դրովարտակը տրված է սուլթան Մահմուդ II-ի (1808-1839) կողմից՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք Կարապետ Պալատեցուն (1823-1831 թթ.):

11. Խոսքը կաթոլիկություն ընդունած հայերի մասին է:

12. Քաղաք Մարմարայի ափին:

13. Գտնվում է Անկարայի արեւմտյան մասում:

14. Բնագրի պատճենը տե՛ս Ahmet Lutfi, Tarih-i Lutfi, c. I, Istanbul, 1873, s. 385-387.

15. Դայանի է, որ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կնքվեց Աորիանապոլսի հաշտության պայմանագիրը (սեպտեմբերի 14): Պայմանագրի վերջին՝ 12-րդ հոդվածում նշված էր, որ կաթոլիկ հայերն ազատ են լինելու իրենց կրոնը դավանելու հարցում: Տվյալ պայմանագրի կնքումից հետո Ֆրանսիայի եւ Անգլիայի դեսպանների պահանջով սուլթան Մահմուդ IV-ը ներում շնորհեց մինչ այդ աքսորված կաթոլիկ հայերին: Դեսպանները պահանջեցին նաեւ, որ կաթոլիկ հայերը լինեն անկախ հայ լուսավորչական եկեղեցուց, ունենան իրենց պատրիարքն ու եկեղեցին: 1831 թ. կաթոլիկ հայերը Բարձրագույն Դռան կարգադրությամբ կազմեցին առանձին հայ կաթոլիկական համայնք (տե՛ս Վավերագիր 6):

16. Բնագրի պատճենը տե՛ս Ա. Բերբերյան, նշվ. աշխ., էջ 214:

17. Հունարեն Քրեմաստիե, քաղաք Բանդրմայի մոտ:
18. Բնագրի պատճենը տես Ա. Բերբերյան, նշվ. աշխ., էջ 214:
19. Բերաթը տրված է սուլթան Մահմուդ II-ի (1808-1839 թթ.) կողմից:
20. Բնագրի պատճենը տես Ա. Բերբերյան, նշվ. աշխ., էջ 28:
21. Բերաթը տրված է սուլթան Մահմուդ II-ի կողմից:
22. Նկատի ունի Կ.Պոլսի հայ պատրիարք Ստեփանոս Աղավնուն (1831-1839) եւ (1840-1841 թթ.):
23. Կարապետ Պալատեցի (1823-1831 թթ.):
24. Նկատի ունի հայ կաթոլիկներին:
25. Բնագրի պատճենը տես Ա. Բերբերյան, նշվ. աշխ., էջ 222:
26. Բերաթը տրված է սուլթան Մահմուդ II-ի կողմից:
27. Բնագրի պատճենը տես Düstür, Tertip-i evvel, c. 4, Dersaadet, 1296, s. 793-796.
28. Հրովարտակը տրված է սուլթան Աբդուլ Ազիզի կողմից (1861-1876 թթ.):
29. Բնագրի պատճենը տես Ahmet Lutfi, Tarih-i Lutfi c. 3, Istanbul, 1292, s. 163-164. Սինեդ Լյութֆին իր տարեգրության երրորդ հատորում ընդգրկել է սուլթան Աբդուլ Ազիզի իշխանության ժամանակաշրջանի նյութերը: Ըստ երեւույթին, այս հրովարտակի խորագիրը տրված է Սինեդ Լյութֆիի կողմից, քանի որ այն չի համապատասխանում տվյալ հրովարտակի բովանդակության հետ:
30. Հովհաննես Արշարունի (1910-1913 թթ.) Կ.Պոլսի հայոց պատրիարք:
31. Բերաթը տրված է սուլթան Մեհմեդ Ռեշադ II-ի (1909-1918 թթ.) կողմից:
32. Նկատի ունի 1863 թ. մարտի 17-ին Բարձրագույն Դռան կողմից հաստատված «հայ ազգի կանոնադրությունը» (Nizamname-i millet-i Ermanian):

**4. ՊՈԼՍԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԵՎ ՈՒԽՏԱՏԵՂԻՆԵՐԻ  
ՔԱՆԳՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ  
ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՒ  
ԿՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ**

**ՎԱՎԵՒ ԱԳԻՐ 1**

**ՍԱՀՄԱՆԳ ՓԱՇՏՅՈՒ ԽԱՆԻ ՄԵՉ ՍԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻ՝  
ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՅ ԳԱՆԳԱՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝**

Յրամանագիր 4. Պոլսի կաղիին <sup>2</sup>

4. Պոլսի Այա Սոֆիայի վակֆերից՝ Մահմուդ փաշայի խանութ իջեւանող առեւտրականները խնդրագիր են ներկայացրել, ուր հայտնում են, որ տվյալ խանի մի շարք խուցերի մեջ անհավատ մուշտակավաճառներ բնակվելով, խանի դարպասի երկու կողմերում փայտից եւ գերանից տնակներ եւ խանութներ են կառուցել եւ գիշեր-ցերեկ օջախների շուրջ հավաքվելով, շատախոսում են եւ նույնիսկ տվյալ խանի մզկիթի մեջ մահմեդականներ գտնվելու ընթացքում՝ բարձրաձայն խոսում:

Յիշյալ խանութները կառուցվելու ընթացքում, դուք, Իբրահիմ չավուշի հետ վրա հասնելով, նկատել եք այդ բոլորը եւ կարգադրել քանդել եւ վերացնել փայտե տնակները: Դրանից հետո, երբ մյուսվելին եւ անհավատները չեն կարողացել մի ընդհանուր համաձայնության գալ, դուք անձամբ Բեքիրի հետ եղել եք տվյալ վայրում եւ վճիռ կայացրել քանդելու դրանք, նկատի ունենալով, որ այդ բոլորը վնասաբեր են վակուֆի եւ մահմեդականների շահերին: Այնուհանդերձ, անհավատները տվյալ տնակներում իրենց անձնական իրերը գտնվելու պատրվակով, կողպել են եւ չքացել մեջտեղից:

Արդ, հրամայում եմ՝ անձամբ լինես տվյալ վայրում եւ քանդել տաս այդ փայտե տները: Միեւնույն ժամանակ, խանից հեռացրու անհավատներին եւ նրանց տեղում տեղավորիր մահմեդականներին: Իմացիր, հակառակ իմ հրամանին ոչ մեկին թույլ չտաս գործ անել: Եվ հետագայում էլ գործիր ըստ իմ այս հրամանի բովանդակ-

**ՎԱՎԵՐԱԳԻՐ 2**

**ՈՉ-ՍԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՍՏՐՈՒԿՆԵՐԻ  
ՅՈՒՅԱԿԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Յրամանագիր Կ.Պոլսի կադիին.

Մենք ականջալուր եղանք, որ ներկայունս Կ.Պոլսի հրեաների, անհավատների եւ քրիստոնյաների մոտ գերեվարված ստրուկներ եւ ստրկուհիներ կան: Այս կապակցությամբ, կարգադրվել էր ստուգում կատարել եւ նրանց ընդհանուր թիվը որոշելով՝ դաֆթար կազմել:<sup>4</sup>

Արդ, հրամայում են. Կ.Պոլսի սուբաշի Մեհմեդը տեղ հասնելուն պես, այս գործին անձամբ ուշադիր լինես եւ արդարացի ստուգում կատարես: Կ.Պոլսի հրեաների եւ այլ քրիստոնյաների մոտ քանի ստրուկ, ստրկուհի որ գտնվի, ընդարձակ մի դաֆթար կազմիր, նշելով ստրկատիրոջ անունն ու գնման տարեթիվը եւ ներկայացրու իմ կայսերական սեմին: Միայն թե ստուգումը թող կատարվի արդարացի, առանց որեւէ մեկին հովանավորելու եւ կամ թաքցնելու: Այդ գործին նշանակված սուբաշիները թող զգոն լինեն եւ ոչ մեկից կաշառք չվերցնեն: Յետագայում բացահայտվելու դեպքում ներողամտություն չի ցուցաբերվելու:

Թույլ չտաս նաեւ, որ բացահայտորեն դեպի քաղաք գինի բերեն: Վերոհիշյալ հանձնարարականի համար ուշադիր եղիր՝ ինչպես հարկն է:

Որեւէ հրեայի կամ անհավատի մոտ գերի հայտնաբերելու դեպքում նույն ծեւով նշիր ստրկատիրոջ անունն ու ապրած թաղամասը, ընդարձակ դաֆթար կազմիր եւ կնքելով՝ ուղարկիր (էջ 43):

25 սաֆեր 967 թ. (26 նոյեմբերի 1559):

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 3

## ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՍՏՐՈՒԿՆԵՐԸ ՎԵՐՅՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱ- ՍԻՆ

### Յրամանագիր 4.Պոլսի կաղիին.

Իմ բարձր հրամանի համաձայն, ստուգվել է բացահայտվել է, որ 4.Պոլսում բնակվող հրեաների եւ քրիստոնյաների մոտ գտնվում են 32 գերիներ եւ 51 զառամյալ պառավներ: Այս մասին վավերացված դաֆթարը ուղարկել ես իմ կայսերական սեմին:

Արդ, հրամայում եմ, որ այսուհետեւ հրեաների եւ քրիստոնյաների մոտ գերիները ծառայություն չպետք է անեն, ազատ արձակված գերիները հանձնվելու են մահմեդականներին, իսկ գերի համարվողները վաճառվելու են նույնպես մահմեդականներին: Այս գործում անձամբ ուշադիր եղիր: Դաֆթարում գրանցված կամ չգրանցված գերիները եւ մուքակները<sup>5</sup> հայտնաբերելով, իմ հրամանի համաձայն հանձնիր այն մահմեդականներին, որոնք ծառայի կարիք ունեն եւ ընդունված կարգով վաճառված գերիների արժեքագումարը հանձնիր իրենց նախկին տերերին:

Յրեաներին եւ քրիստոնյաներին զուլաջրու, որ իրենց մոտ գերի կամ մուքակ ծառայության չվերցնեն: Իմացիր, որ այս կարգադրությունից հետո, որեւէ մեկի մոտ գերի կամ մուքակ հայտնաբերելու դեպքում, ներողամտություն չի ցուցաբերվելու եւ ենթակա է լինելու ծանր պատժի:

Այս մասին թող լավ իմանան եւ հետո չասեն, թե «Չէինք լսել, չէինք իմացել»:

Եվ դու էլ տեսապես ուշադիր եղիր եւ մի հապաղիր իմ բարձր ֆերմանը իրագործելու խնդրում: Իմացիր, որ մեկի մոտ, եթե գերի կամ մուքակ հայտնաբերվի, առանց պատճառաբանության, պատասխանատվությունը քո վրա է ընկնելու, իսկ եթե մի քանիսի մոտ արտոնագրեր հայտնաբերվեն, ապա բոլորի ձեռքից հավաքիր եւ հանձնիր իմ կայսերական սեմին:

Իմ այս կայսերական հրամանի պատճենը արձանագրել տուր մայր մատյանի մեջ եւ գործիր հմտորեն: Թող այսուհետեւ գործեն իմ բարձր հրամանի համաձայն եւ չշեղվեն նրանից (էջ 43-44):

2 ջեմազի էլ-էվվել 967 (30 հունվար 1560 թ.)



## ՎԱՎԵՐԱԳԻՐ 4

### ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔԱՆԴ- ՄԱՆ ՄԱՍԻՆ

Յրամանագիր Կ.Պոլսի կաղիին եւ գլխավոր ճարտարապետին.

Սրանից առաջ Անատոլուի կազասկեր մեկանա Սինանը, թող նրա առաքինությունը հարատեւ լինի, իմ կայսերական սեմին մա՛մակ էր հղել:

Սեվլանա Շեմսեղդին, դու, որ հանդիսանում ես Կ.Պոլսի կաղին, նույնպես դիմել էիր իմ կայսերական արդարությանը եւ տեղեկացրել, որ Կ.Պոլսի Սեյիդ Օմեր<sup>6</sup> թաղամասի այանները, շարիաթական դատարան գնալով, բողոքել են, ասելով, որ տվյալ թաղամասում գտնվող մզկիթի<sup>7</sup> մոտակայքում գոյություն ունի ոչ հեռու անցյալում կառուցված մի եկեղեցի<sup>8</sup> եւ հայտնել այն քանդելու անհրաժեշտության մասին, քանի որ եկեղեցին մահմեդականների ներկայությամբ ենթարկվել է մանրակրկիտ ստուգման:

Չայտնում ես նաեւ, որ մահմեդական կրոնը ընդունած չորս տարեց մարդիկ, վկայություն տալով, ասել են, որ տվյալ եկեղեցին նոր է եւ եզրակացրել են, որ այն կառուցված է մոտ 60 տարի առաջ եւ հետագայում կատարված են որոշ փոփոխություններ: Ինչպես նշված է, նրանց վկայությունն ընդունվել է եւ կազմվել ընդարձակ, մանրամասն արձանագրություն այնպիսի որոշումով, որ շարիաթի հիման վրա այդ եկեղեցին քանդվի:

Միեւնույն ժամանակ այս հարցի կապակցությամբ անհավատները խնդրագիր են ներկայացրել իմ կայսերական սեմին, ուր ասված է. «Չանգուցյալ սուլթան Մեհմեդ խանը<sup>9</sup>, թող Աստված որորմի նրա հոգուն, այլ տեղերից մեզ խղճուկներիս վերաբնակեցնելով, հատկացրեց մի թաղամաս եւ մի եկեղեցի եւ այդ առթիվ շնորհեց մի կայսերական հրովարտակ: Այդ ժամանակվանից ի վեր ապրում ենք տվյալ թաղամասում եւ օրինական կերպով հաճախում եկեղեցի: Նույնիսկ սուլթան Սելիմ խանի<sup>10</sup> ժամանակ, թող Աստված որորմի նրա հոգուն, Կ.Պոլսի եկեղեցիները ստուգման ենթարկվեցին, եւ շատերը քանդվեցին: Մեր այս եկեղեցին հնուց ի վեր գոյություն ունենալու պատճառով փլման չենթարկվեց, եւ նույնիսկ հիշյալ եկեղեցու ճարտարապետը մեծ թվով անհավատների եւ մահմեդականների ներկայությամբ, մանրամասն ստուգում կատարելուց հետո, մեզ արտոնագիր տվեց»:

Կայսերական ճարտարապետներից՝ Խայրեղդին անունով մի

տարեց մարդ, բազմաթիվ մահմեդականների եւ անհավատների ներկայությամբ երկու անգամ մանրակրկիտ ստուգում է կատարել, որոշելու համար եկեղեցու նոր կամ վաղեմի լինելը եւ եկել է այն եզրակացության, որ տվյալ եկեղեցին գտնվելիս է եղել մի զիմմիի բակում: Նրա երեք պատերը կառուցվել են Կ.Պոլիսը նվաճելուց հետո, իսկ մյուս պատի մասին դժվար է եղել անմիջապես եզրակացություն անել: Այն պատը, որի վրա տեղավորված է եղել խորանը, ստուգվել է մանրակրկիտ: Պատը քերելուց հետո, ուշադիր զննելով, նկատել են, որ այն էլ հին չէ: Եկեղեցին այնքանով է հին, որ Կ.Պոլիսը նվաճելու ընթացքում այն գոյություն է ունեցել եւ նվաճելուց հետո էլ շնորհվել է նրանց: Տվյալ ժամանակ, եթե քանդման չի ենթարկվել, ապա, ըստ ընդունված կարգի, նրանց ձեռքին պետք է արտոնագիր լիներ: Այսպիսով, հետեւյալ հարցումն է եղել զիմմիներից. «Տվյալ ժամանակ, եթե ընդունված կարգով շնորհվել է ձեզ, ուրեմն ձեր ձեռքին վկայագիր կամ բարձր ֆերման պետք է լինի: Ունե՞ք արդյոք այդ թույլտվությունը»: Նրանք ցույց են տվել կայսերական ֆերման՝ շնորհված Կ.Պոլիսը գրավելուց չորս տարի հետո եւ կնքված՝ հանգուցյալ սուլթան Ահմեդ խանի թուղարյով: Տվյալ հրամանագրում ասված է եղել այսպես. «Էդիրնեցի Աթմաջային: Կ.Պոլսում գտնվող եւ Բաբա Ֆլորիի<sup>11</sup> Չարդախը անունով հայտնի մարդուն վակֆ է հատկացվել Կարաջայի<sup>12</sup> հիսար Էրիի կողմից: Այն առանց մարմարի<sup>13</sup> մի խախտու եկեղեցի է: Սուբաշի Չաքըր բեյի կողմից տրված թեզբերեի հիման վրա, նպատակահարմար եղավ որպես մյուլք հանձնել նրան: Այս օրվանից թող այն նրա տրամադրության տակ լինի: Եթե ցանկանա, թող այն նրա տրամադրության տակ լինի: Եթե ցանկանա, թող վաճառի, նվիրատվություն անի, կամ էլ հանձնի որպես վակֆ: Մի խուսքով, որպես մյուլք ինչպես ցանկանա, թող այնպես էլ վարվի»:

Եթե այդպես է գրված այդ հրամանագրում, ապա նշված չէ, որ հիշյալ Աթմաջան զիմմի է: Եթե զիմմի էլ եղած լինի, ապա տվյալ ժամանակվա ընդունված կարգով չի նշված, որ այն հատկացվել է նրանց օգտագործելու որպես եկեղեցի: Այնտեղ չի արձանագրված նաեւ, որ տվյալ եկեղեցին թեմլիկ է: Այս հրամանագրից բացի, իսալի անունով մեկի կնիքով կնքված մի օրինակոր թեզբիրե են ցույց տվել, ուր նշված է եղել, որ Ալթը Մերմերի մոտակայքում (بشو قلو)<sup>14</sup> անունով քահանայի տրամադրության տակ գտնվող հին եկեղեցին օգտագործելու համար հանձնվել է նրանց: Այդ ժամանակվանից ի վեր անցել է 66 տարի: Բացահայտված է, որ այն կառուցված է եղել ավելի ուշ շրջանում եւ քանի որ նրանց ձեռքին չկա հիմնավոր փաստարկ եկեղեցու հնության մասին, հրամայում են քանդել այն:

Իմ կայսերական բարձր հրամանս տեղ հասնելուն պես, անձամբ կզնաս տվյալ վայրը եւ հիմնահատակ քանդել կտաս եկեղեցին եւ այնուհետեւ գրավոր կտեղեկացնես արդյունքի մասին (էջ 45):

24 ռեբի ուլ-էվվել 972 (30 հոկտեմբեր 1564 թ.):

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 5**

### **ՍՈՒՆՈՒ ՄԱՆԱՍՐՈՒՄ<sup>16</sup> ՀԱՅ ԿՐՈՆԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂ- ՄԻՅ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

#### Յրամանագիր 4.Պոլսի կաղիին.

Ներկայիս Գալաթայի<sup>16</sup> կաղին նամակ է հղել իմ կայսերական բարձր սեմին, հաղորդելով, որ 4.Պոլսի Սուլու Մանաստրի շրջանում գտնվող Ահի Չելեբի մզկիթի<sup>17</sup> հավատացյալները միահամուռ կերպով պահանջել են, որսլեզգի քանդման ենթարկվի նույն Սուլու Մանաստրի հայկական եկեղեցուն կից նոր կառուցված հոգելոր շինությունը<sup>18</sup>: Յրամայվեց տեղում քննել այս հարցը եւ կայացնել անհրաժեշտ որոշում:

Պարզվել է, որ տվյալ եկեղեցու քահանաներն իրենց տներին կից կառուցել են մի նոր շինություն եւս: Այս կապակցությամբ, հիշյալ թաղի իմամ Չաջի Բայրամը, Իսա Իբն Աբդի Էլմուզինը, Մեհմեդ Իբն Աբդուլլահի տսիփահին, Մեհմեդ Իբն Ռամազան տսիփահին, Իդրիս Իբն Յուսուֆ տսիփահին, Ալի Իբն Աբդուլլահ տսուլոքը, Իսկենդեր Իբն Աբդուլլահ ենիչերին, Աբի Իբն Աբդուլլահը, Սուլեյման Իբն Մուրադը, Ալի Իբն Աբդուլլահ Էլքայեմը, Մահմուդ Իբն Աբդուլլահը, Սուլեյման Իբն Մուրադը, Մուրադ Իբն Աբդուլլահը, Մեհմեդ Իբն Աբդուլլահը, Իսա Ղեղե Իբն Մուսան եւ այլ բազմաթիվ մահմեդական հավատացյալներ, հավաքվելով, պահանջել են քանդել այդ նորակառույց շինությունը, պատճառաբանելով, որ նշված տան մեջ անհավատները գինի խմելով, ծնծղա նվագելով, բարձրածայն խոսելով, խանգարում են իրենց նամազին եւ սուրբ դուրանի ընթերցմանը:

Արդ, հրամայում եմ. իմ բարձր հրամանագիրն առնելուդ պես, քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող նշված շինությունը: Միեւնույն ժամանակ, թույլ չտաս իրենց հնագույն եկեղեցիներում ծնծղա նվագելու, բարձր ծայնով երգելու եւ գինի խմելու: Պետք եղածի պես զգուշացրու հիշյալ վանքի քահանաներին, որ այսուհետեւ շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ, եթե որեւէ շինություն կառուցեն, նույնպես ենթարկվելու է քանդման:



Լավ իմացիր, իմ բարձր հրամանին եւ շարիաթին հակառակ ոչ մեկին թույլ չտաս նման գործ անելու (էջ 46):  
Գրված է 3 զիլկադե 972 թ. (2 հունիս 1565 թ.):

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 6**

### **ՄՉԿԻԹՆԵՐԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ ՉՔՆԱԿԵՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

#### Յրամանագիր Այա Սոֆիայի վակֆերի կառավարիչ Ահմեդին.

Գալաթայի ներկայիս կադին նամակ է հղել, տեղեկացնելով, որ Գալաթայի մեջ գտնվող սրբազան մեծ մզկիթի հյուսիսային կողմին կից, Այա Սոֆիայի վակֆերին պատկանող մի շարք տներ, հակառակ իրենց քարուքանդ վիճակին, օգտագործվում են: Հայտնում է նաեւ, որ հիշյալ տների մի քանիսի վաճառումը եւ մնացածների մուկաթաայի վերածելը առավել եկամտաբեր կլիներ վակֆի համար: Այս առաջարկությունից հետո, մահմեդական համայնքից համապատասխան մասնագետներ եւ վակֆային գործերին քաջատեղյակ մարդիկ, ստուգման ենթարկելով այդ տները, պարզել են, որ դրանք, իրոք, խարխուլ լինելով հանդերձ, օգտագործվում են:

Հիշյալ տներում առ այսօր տեղավորվել եւ բնակություն են հաստատել անհավատները: Մինչդեռ, սրբազան այս մզկիթի մոտակայքում անհավատների գտնվելը նպատակահարմար չլինելով, նրանք տեղահանվել եւ բնակեցվել են Թերսիանե-ի Ամիրեի<sup>19</sup> մոտ գտնվող գերիների բնակավայրում: Սրբազան մզկիթին կից գտնվող հիշյալ լքյալ տները, խարխուլ վիճակում գտնվելով, այսուհետեւ պիտանի չեն օգտագործման համար:

Բացի դա, մի շարք անձինք այդ խարխուլ տների մի մասը 1000 ֆլորիով գնելու ցանկություն են հայտնել եւ տվյալ վայրն էլ (երկարությունը 180, լայնությունը 70 կանգուն) նույնպես 1000-ով վակֆի համար մուկաթաայով վերցնելը առավել օգտակար եւ նպատակահարմար են համարվել: Այսպիսով հիշյալ խարխուլ տները վաճառքի ենթարկելու եւ տեղերն էլ մուկաթաայի տալու համար անհրաժեշտ է եղել իմ բարձր վճիռը:

Արդ, հրամայում են. տվյալ գործին իրավասու շարիաթական մարդկանց գիտությամբ հիշյալ տների մի մասը վաճառես, իսկ տեղերն էլ հանձնես մուկաթաայով (էջ 86):

8 ռեբի ու-էվվել 973 (2 հոկտեմբեր 1565 թ.):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 7

### **ՈՒՍԿՅՈՒՏԱՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂ ԵՐԻ ԽԱՂՈՂԻՅ ԳԻՆԻ ՉՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

#### Յրաման Ուսկյուտարի կաղիին

Նամակով հայտնել ես, որ սրանից առաջ իմ բարձր հրամանն է եղել գյուղերում հասնող խաղողը կաթսաներում ճզմելու եւ թթու կամ պակմազ պատրաստելու մասին: Հայտնել ես նաեւ, որ ներկայումս, հակառակ իմ բարձր հրամանին, Մալթեփե, Կարթալ, Դարջա գյուղերի բնակչությունը, իրենց այգիներում հասնող խաղողը, փոխանակ թթու եւ պակմազ պատրաստելու, տակառների մեջ ճզմելով շիրալի են վերածում:

Արդ, նախապես տրված իմ բարձր վճիռը կրկին ուժի մեջ դնելով, հրամայում եմ անձամբ գնաս նրանց մոտ եւ ստուգես: Եթե հիշյալ գյուղերի բնակչությունը խաղողը, ճզմելով, շիրալի է վերածում, ապա, տակառների մեջ աղ լցնելով, քացախի վերածի եւ նրանց էլ ծեծելով պատժիր: Այնպես որ այսուհետեւ հակառակ իմ հրամանի գործ անել չտաս (էջ 86):

12 ռեբի ուլ-էվվել 973 (5 հոկտեմբեր 1565 թ.)

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 8

### **ՊԱԼԱԹԻ <sup>20</sup> ԳԱՐՊԱՄԻՅ ԴՈՒՐՍ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԿԱ- ՌՈՒՅՎԱԾ ԵԿԵՂԵՅԻՆ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

#### Յրամանագիր Կ.Պուսի կաղիին

Անհավատ ձկնորսները խնդրագիր էին ներկայացրել կայսերական սեմին, որ իմ բարձր հրամանի համաձայն, Պալաթի դարպասից դուրս կառուցված եկեղեցին կողպեքի տակ է առնվել, եւ ծիսակատարություններն էլ արգելվել են:

Հիշյալ եկեղեցու առաջին հարկը նախապես տուն է եղել, եւ հետագայում անհավատները դրա վրա եկեղեցի են կառուցել: Երբ տեղեկացվեց, որ այս նոր կառույցը իր բարձրությամբ գերազանցում է այնտեղ գտնվող տներին, հրամայել էի քանդել եւ հավասարեցնել մյուս տների հետ:

Այս հարցի համար կայսերական մյութեֆերրիկաներից Սեկրան Ալիին վերակացու նշանակելով, հրամայեցի, որպեսզի հիշյալը, առանց հապաղելու, մեկնի տվյալ վայրը եւ քանդել տա ապօրինի



կառուցված բոլոր տները: «Իմացիր, իմ հրամանին հակառակ ոչ մեկին թույլ չտաս շինարարական գործ անել: Խստագույն կերպով պատվիրիր անհավատներին, որպեսզի հիշյալ տան մեջ այսուհետեւ չհավաքվեն եւ իրենց սովորությունների համաձայն ծիսակատարություններ չանեն: Միեւնույն ժամանակ զգուշացրու շրջապատի մահմեդականներին, որ աչալուրջ լինեն: Մի խոսքով, չլինի այնպես, որ մահմեդականները զան եւ լուր տան, որ հիշյալ տան մեջ անհավատներ են հավաքվում, կամ քանդվածը վերականգնելու փորձեր են կատարում:

Այս մասին թող լավ իմանան: Ոչ մեկին թույլ չտաս, որ իմ հրամանին եւ շարիաթի սկզբունքներին հակառակ գործ անեն»: Հրամանագիրը տրվեց աղային (էջ 44):

8 ռեբի ուլ-էվվել 973 (3 նոյեմբեր 1565 թ.):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 9

### *ՈՉ-ՄԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱՋԻ ՏԵՄԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

#### Հրամանագիր Կ.Պուսի կադիին<sup>21</sup>

Սրանից առաջ իմ կայսերական հրամանը եղավ, որ հրեաները, քրիստոնյաները եւ այլ անհավատներ բարձր տեսակի պատրաստի հագուստներ չհագնեն: Արգելող հրամանից հետո, հրեաներից մի քանիսը, դիմելով իմ կայսերական սեմին, խնդրել էին, որ տարազի հարցում պահպանվեն անցյալի սովորությունները: Դրանից հետո այս հարցի մասին եղավ իմ հատուկ հրամանը: Այսուհետեւ հրեաների եւ այլ անհավատների ֆերաջեները լինելու են սեւ չուխաներից, թեմկաները ոչ թե կերպասից, այլ աստառացու կտորից, գլխի փաթեթները կեն վարդագույն եւ կեն կարմիր թող լինի եւ արժեքն էլ 30-40 դուրուշից ոչ ավելի: Մաշիկները պետք է լինեն սեւ գույնի, հասարակ եւ արանց աստառի: Այլ գույնի չլինի: Միմիայն եզրերը թող սեւ մեշիմից լինի, այն էլ ոչ սաֆյանից: Կանայք չպետք է ֆերաջե հագնեն: Իրենց հին սովորության համաձայն թող ֆահիր հագնեն եւ Բրուսայի բուֆնու, իսկ չաքշիրները թող երկնագույն լինեն, այլ ոչ թե սեւ: Կանայք չպետք է մաշիկ հագնեն, այլ հին սովորության համաձայն՝ կոշիկ եւ շիրվանի: Մահմեդական կանանց մման լայն օձիքներ եւ թասակներ չկրեն: Հայերը եւս հրեաների մման թող հագնեն: Միայն թե գլխներին կարմրավուն փաթեթ կպեն, այն էլ ոչ շատ արժեք ունեցող: Հայ կանայք եւս ֆերաջե չեն

հազմելու: Ֆերաջեի փոխարեն թող ֆահիր հազմեն, իսկ ոտքերին էլ՝ բաթիկներ, ներսից՝ սեւ գույնի բուրսայի քուրճու, ոտքերին՝ կապույտ չաքչիր, մեշինե հողաթափ եւ շիրվանի մաշիկներ: Հրեաները եւ այլ անհավատները երիզավոր աստառով սեւ ֆերաջեներ թող հազմեն: Ներսից հազած դուաման թող սեւ գույնի լինի, այն էլ բուրսայի քուրճուից: Թող հարթ եւ արդուկված չլինի, այլ պարզ եւ հասարակ: Ֆահիր հազմելու դեպքում միայն սեւ գույնի լինի: Փաթթոցները, երիզները, ոտնամանները պետք է վերելում նշվածի պես լինեն:

Սեւամորթ անհավատները նույնպես հազմելու են վերը նշվածի պես եւ փաթաթվելու են կյոքի մեջ՝ նույնպես ոչ շատ արժեք ունեցող: Ներսից եւ դրսից թող իշքերլատ չհազմեն, այլ՝ Ֆերիե եւ Սալոնիկի չուխա: Իսկ ոտքերին՝ երկու ականջակալներով, վրան էլ աստառից հողաթափ թող հազմեն:

Արդ, հրամայում են, բարձր հրամանս տեղ հասնելուն պես, բուլորին հավաքես մի տեղ եւ անհրաժեշտ բացատրությունը եւ հրահանգը տաս, որպեսզի հիշյալ համայնքների տարազները ըստ վերը նշվածի պես լինեն եւ զգուշացնես, որ բարձր արժեք ունեցող հագուստներից խուսափես: Այս խնդիրը հրահանգված է նաեւ մուխթեսիբին, հետեւաբար հետեւիր, որ իմ բարձր հրամանին հակառակ չգործես: Անհրաժեշտության դեպքում հայտնիր օրինականացների անունները<sup>22</sup> (էջ 47):

7 սաֆեր 976 (1 օգոստոս 1568 թ.):

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 10**

### **Կ. ՊՈԼՍՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՈՉ ՄԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԶԻ ՄԱՍԻՆ**

#### Հրամանագիր Կ. Պոլսի կադիին

Իմ կայսերական սեմին նամակ էին հղել, հաղորդելով, որ Կ. Պոլսում բնակվող անհավատները, այդ թվում՝ հրեա եւ քրիստոնյա տղամարդիկ եւ կանայք, սկսել են հազմել երիզավոր բարձր տեսակի մահուդե հագուստներ եւ վրայից էլ՝ սփահիկների եւ այլոց նման, բարակ բատիստե գործվածքներ, ատլասից եւ զանազան գործվածքներից խալաթներ, գույնզգույն չաքչիրներ, ինչպես նաեւ, մահմեդականների նման՝ մաշիկներ եւ հողաթափեր: Այս հանգամանքը շատ է բարձրացրել գործվածքների, մահուդե կեր-

պասների եւ կոշկեղենի գինը: Մի խոսքով, հայտնել էիր, որ այսուհետեւ անհավատները չկրեն մահմեդականներին նմանվող հագուստներ:

Արդ, գրված եւ ուղարկված է անհավատների արտահագուստին վերաբերող իմ կայսերական ընդարձակ հրամանագիրը:

Սույնը եւ նախկին հրամանագիրը տեղ հասնելուն պես, գործիր ըստ կայսերական կարգադրության: Այսուհետեւ, անհավատների կանանց, լինի հրեա կամ քրիստոնյա, ինչպես մանրամասն նշված է նախապես ուղարկված հրամանագրում, թույլ չտաս հագնելու բարձրորակ հագուստներ:

Ոչ ոք չհամարձակվի գործելու հակառակ իմ հրամանագրի: (էջ 47)

Գրված է 21 սաֆեր 976 (15 օգոստոս 1568 թ.)

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 11**

### **Կ. ՊՈԼՍԻ ԳԻՆԵՏՆԵՐԸ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

#### Յրամանագիր Կ.Պոլսի եւ Գալաթայի կաղիին

Սրանից առաջ, բազմիցս բարձր հրամաններ էր տրված՝ վերացնելու համար Կ.Պոլսի եւ Գալաթայի այն սրճարաններն ու գինետները, որտեղ թաթարական բուզա<sup>23</sup> էր վաճառվում:

Ներկայումս մենք ականջալուր եղանք, որ հիշյալ գինետներում եւ սրճարաններում, նախկին սովորության համաձայն, թաթարական բուզա վաճառելով, անառակություններ են տեղի ունենում:

Արդ, իմ նախկին բարձր վճիռը կրկին ուժի մեջ դնելով, հրամայում եմ Կ Պոլսի եւ Գալաթայի սրճարանները եւ գինետները փակեք, իսկ գինու առկայության դեպքում, աղ լցնելով՝ վերածեք քացախի: Այս խնդրում եղեք կատարյալ աջալուրջ, որպեսզի ոչ մեկը չհանդգնի գործել հակառակ իմ բարձր հրամանի: Անհնազանդների անումները գրեք եւ հայտնեք: Իմ այս բարձր հրամանի գործադրման խնդրում տեսապես եղեք աջալուրջ: (էջ 141)

26 զիլկադե 975 (23 դեկտեմբեր 1563 թ.)

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 12

### ՓՈՂՈՅՈՒՄՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՏԻԿՈՎ ԳԻՆԻ ԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### Յրամանագիր Գալաթայի կաղիին

Իմ կայսերական սեմին նամակ ես հղել, այն մասին, որ Գալաթայի այանները, դիմելով շարիաթական դատարանին, հայտնել են, որ մի շարք գյուղերից եկած անհավատներ Գալաթայի նավահանգստում գինի բերող նավերից, գինին փոխանակ տակառներով պահեստ տեղափոխելու, կրում են տիկերով եւ քաղաքի մեջ անցուղարծի ընթացքում քսվում մահմեդականներին<sup>26</sup>:

Յայտնում ես նաեւ, որ սրանից առաջ շարիաթական դատարանը, անդրադառնալով այս հարցին, մուֆթին ֆեթվա է արձակել, ուր խստագույն կերպով հանդիմանել էր անհավատներին, որ տիկով գինի կրելու դեպքում կպատժվեն եւ կենթարկվեն երկարաժամկետ բանտարկության: Այսուհանդերձ որոշ մարդիկ, համառությամբ ցուցաբերելով, դարձյալ գինին տիկով են կրում: Այս կապակցությամբ խնդրել էիր իմ բարձր հրամանը:

Արդ, հրամայում եմ, շարիաթի սկզբունքներին հակառակ ոչ մեկին թույլ չտաս տիկով գինի կրելու (եջ 48):

Գրված է զիլիիջե ամսի 979 (ապրիլ 1572 թ.):

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 13

### ԷՅՈՒՊ ՍՈՒԼՔԱՆԻ<sup>25</sup> ՍԵՐՈՒՅՔ ՎԱՃԱՌՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ ԿԱՆԱՆՅ ՍՈՒՏՔԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅԳ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ ՏԵՂ ՉՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

#### Յրամանագիր Էյուպի կաղիին

Սրանից առաջ նամակ էիր հղել, տեղեկացնելով, որ մեծ մզկիթի թաղամասում նոր կառուցված սրբազան մեդրեսեի մոտ գտնվող խանութներում, փռերում եւ այգիների մեջ տեղավորված անհավատները սրինգի ծայնով, հորոսի<sup>26</sup> աղմուկով եւ այլ անառակություններով խանգարում են թաղի անդորրը եւ հատկապես սրբազան էզանի<sup>27</sup> ունկնդրելուն: Բացի դա, հայտնել էիր, որ մահմեդականների տված տեղեկության համաձայն, մի շարք կանայք<sup>28</sup> սերուցք ուտելու պատրվակով մուտք են գործում այդ խանութներ



րը, նստում եւ հակառակ շարիաթի վարմունք ցուցաբերում:

Հիմա շարիաթին հակառակ այս երեւույթը, առանց ուշացնելու, անհրաժեշտ է արգելել եւ վերջ տալ:

Արդ, հրամայում եմ, տվյալ խնդրին պետք է եղածի պես ուշադիր լինես եւ այսուհետեւ սերուցք վաճառող խանութներում եւ այգիներում թույլ չտաս, որ անհավատները տեղավորվեն: Բոլորին դուրս հանիր եւ նրանց փոխարեն տեղավորիր մահմեդականներին: Խանութպաններին խստորեն կարգադրիր եւ արգելիր, որ այսուհետեւ կանայք սերուցք ուտելու պատրվակով մուտք չգործեն խանութները: Իսկ այս կարգադրությունից հետո, եթե իզական սեռից որեւէ մեկը խանութպանի թույլտվությամբ խանութ մտնի, ապա խանութի տիրոջը ենթարկիր խիստ պատժի: Եվ իմ բարձր հրամանի կատարման խնդրում եղիր աջալուրջ եւ ուշադիր: Անհրաժեշտ է այս գործը<sup>29</sup> կատարել գաղտնորեն: Իմացիր, իմ բարձր հրամանի համաձայն, եթե չարգելես եւ չվերացնես այդ բոլորը, ապա քո հանդեպ եւս ներողամտություն չի ցուցաբերվելու եւ դու եւս կենթարկվես կշտամբանքի: Լավ իմացիր, անհապաղ գործի անցիր եւ եղիր ուշադիր (էջ 40-41):

23 մուհարրեմ 981 (27 մայիս 1573 թ.):

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 14**

#### ***ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ Կ.ՊՈԼԻՍ ԳԻՆԻ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

#### **Հրամանագիր Կ.Պոլսի կադիին**

Սրանից առաջ գինուց հարկ գանձելը վերացվել էր, քանի որ արգելված էր քաղաքներում անհավատների կողմից գինու ներմուծումը: Այսուհանդերձ, որոշ անհավատներ, առանց հարկ վճարելու, սկսել են կրկին անօրինական ճանապարհով գինի ներմուծել: Այդ առթիվ հատուկ ֆեթվա է արձակվել, նկատի ունենալով, որ այդ գործարքը վնաս է պատճառում պետական գանձարանին:

Գեռես էբուսուուդ մյուֆթիի ժամանակ տրված բարձր ֆեթվայում մատնանշված է եղել, որ քրիստոնյաների միջեւ գինու վաճառքը կատարվելու է աննկատ, իսկ գինու հարկը գանձվելու էր հատուկ նշանակված եմինի կողմից, որ գինմիներից բերած գինուց՝ կես, իսկ հարբիներից՝ լրիվ տասնորդի հարկ գանձվի: Միայն օրինական չէր կարող համարվել ուրբաթ օրվա նամազի ժամանակ քաղաք գինի ներմուծելը: Անօրինական էր նաեւ գաղտնի գինի բե-



րելով, իրար միջեւ կամ որեւէ մահմեդականին գինի վաճառելը: Այս առթիվ տրված էր նաեւ իմ կայսերական բարձր հրամանագիրը:

Այնուհանդերձ, պարզվում է, որ Կ.Պոլսի հրեաները եւ քրիստոնյա համայնքները, հակառակ այդ բարձր ֆեթվային եւ իմ կայսերական հրամանին, տակառներով եւ տիկերով գինի եւ օղի բերելով, հարսանիք են անում եւ իրենց հավաքույթներում նվագում:

Արդ, հրամայում եմ. իմ հրամանը տեղ հասնելուն պես, հրեաներին, քրիստոնյա համայնքներին եւ նրանց ներկայացուցիչներին, ինչպես որ պետք է, զգուշացնես, որ դեպի քաղաք բացահայտորեն տակառներով ու տիկերով գինի եւ օղի չբերեն եւ գիշերվա ընթացքում, գաղտնի կերպով բերած գինին չհամարձակվեն մահմեդականին վաճառել: Իրար միջեւ վաճառք կատարելու ընթացքում, թող գաղտնի կատարեն եւ այնպես չանեն, որ իրենց տները գինետան տեսք ընդունի: Թույլ չտաս, որ բացահայտորեն գինի եւ օղի վաճառեն եւ հարսանիքներում եւ այլ հավաքույթներում նվագի կամ բարձր ծայն լսվի: Այնպես որ, ոչ ոք չհամարձակվի շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ գործունեություն ունենալ: Նրանք, որոնք հակառակ կվարվեն, արգելիք եւ կալանքի տակ վերցնելով, անունով եւ արտաքին բնութագրությամբ տեղեկացրու իմ կայսերական սեմին: Եվ տվյալ անձի վերաբերյալ ինչպիսի հրաման էլ որ արձակեմ, այդպես էլ կատարի (էջ 48):

Գրված է 23 ռեջեբ 981 (18 նոյեմբեր 1573 թ.):

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 15**

### ***ՊԱՇՏՈՆԱՆԿ ԵՂԱԾ Կ.ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ ԱՅՆՈՐՈՋ<sup>30</sup> ԱՔՍՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

#### **Յրամանագիր Ուսկյուտարի կադիին**

Ներկայիս Կ.Պոլսի անհավատների պատրիարք Երեմիան<sup>31</sup> իմ կայսերական բարձր սեմին խնդրագիր է հղել: Նա հայտնում է, որ Կ.Պոլսի նախկին պատրիարք եւ այժմ իմ հրամանով պաշտոնազուրկ եղած Մետրոֆան անունով հոգեւորականը, բնակություն հաստատելով Ուսկյուտարում, իր քմահաճ վերաբերմունքով խռովություն է առաջացնում մետրոպոլիտների եւ եպիսկոպոսների շրջանում, արգելքներ ստեղծում պետական խարաջը գանձելու խնդրում եւ այս ձեւով ուշացնում է պատության հատկացվող հարկը:

Հնուց ի վեր, իրենց սովորության համաձայն, պաշտոնանկ հո-

գետորականները ուղարկվում էին Այնորոզի վանքը: Արդ, հրամայում են, որ հիշյալ Մետրոֆանը, իրենց սովորության համաձայն, ուղարկվի Այնորոզ: Իմ հրամանագիրը տեղ հասնելուն պես, առանց հապաղելու, հիշյալը որտեղ որ լինի, բերել տուր եւ իմ չավուշի հետ ուղարկիր Այնորոզ եւ իրենց սովորության համաձայն, նախկինում պաշտոնանկ եղած պատրիարքների նման թող բնակություն հաստատի այնտեղ: Համառություն կամ դիմադրություն ցուցաբերելու դեպքում գրիր եւ հայտնիր (էջ 49):

16 զիլիփջե 981 (8 ապրիլ 1574 թ.):

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 16**

***ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՄԱՀՄԵԳԱԿԱՆ ԹԱՂԱՄԱ-  
ՍԵՐՈՒՄ ԳԻՆԵՏՆԵՐ ՉՐԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***<sup>32</sup>

Յրամանագիր Գալաթայի եւ Հասլարի<sup>33</sup> կաղիին

Գալաթայից դուրս գտնվող մահմեդական թաղամասերում գինետուն բացելով, քրիստոնյաները անհանգստացնում եւ մեղքի տակ են գցում մահմեդականներին:

Արդ, հրամայում են. հրամանս տեղ հասնելուն պես, այն թաղամասերում, ուր հնուց ի վեր քրիստոնյաներ են ապրում, թող գինետներ չլինեն: Վերացրու նաեւ մահմեդական թաղամասերում բացված գինետները: Շարիաթին եւ իմ հրամանին հակառակ ոչ մի գործ անել չտաս: Ինչ որ ձեռով անցյալում թույլտվություն ստացած կամ ներկայումս կառուցված գինետները վերացնել տուր նրանց թաղամասից (էջ 50):

2 ռեջեբ 983 (7 հոկտեմբեր 1575 թ.):

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 17**

***ՈՉ-ՄԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻՆ ԳԵՐԻ ՉՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Յրամանագիր Կ.Պոլսի կաղիին

Պարզվում է, որ գերիների վաճառքով զբաղվողները հրեաներին եւ քրիստոնյաներին գերի են վաճառում: Վաճառված գերիների մի մասը եղել է մահմեդական, մի մասն էլ պատրաստ է եղել մահմեդականություն ընդունելու: Ձեռք բերած գերիներին, հրեա եւ քրիստոնյա դարձնելով, նրանք գործել են շարիաթի օրենքներին

հակառակ:

Արդ, հրամայում են: Հրամանս տեղ հասնելուն պես, խստորեն պատվիրես եւ արգելես գերիների վաճառքով զբաղվողներին, որ այսուհետեւ հրեաներին եւ քրիստոնյաներին գերի չվաճառեն, բոլոր գերիներին՝ տարիքով, թե երիտասարդ, վաճառելու են մահմեդականներին, եւ ոչ մեկը չհամարձակվի հակառակ իմ հրամանին վարվելու: Ձգուշացվելուց հետո, եթե որեւէ մեկը համարձակվի վաճառք կատարել, ապա առնողն էլ, ծախողն էլ ենթակա են կալանքի եւ աքսորման: Վարվիր այս ձեւով եւ արգելիր: Նույնիսկ շտապ կերպով կարգադրիր, որպեսզի հրեաների եւ քրիստոնյաների մոտ գտնվող գերիներին հետ վաճառեն մահմեդականներին: Ոչ մեկին թույլ չտաս, որպեսզի իմ բարձր հրամանին հակառակ գործեն: Հրեաներին եւ քրիստոնյաներին խստագույն պատվիրիր, որ այսուհետեւ գերու վաճառքով չզբաղվեն (էջ 50):

27 ռամազան 983 (30 դեկտեմբեր 1575 թ.):

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 18**

### ***ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՏԱՐԱԶՈՎ ՄԱՀՄԵԴԱ-ԿԱՆԻ ՉՆՄԱՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

#### Հրամանագիր Կ.Պոլսի կադիին

Հաղորդվում է, որ Կ.Պոլսում բնակվող հրեաների եւ քրիստոնյաների հազուստները, դյուլբենտները եւ ոտնամանները չեն նմանվում իրենց նախկին տարազին: Պարզվում է, որ նրանք հագնում են պատրաստի հազուստներ, շքեղ տեսքով փաթաթվում են բարակ ներկված դյուլբենտների մեջ, մի մեսը կրում է սպիտակ, իսկ մի մասն էլ կարմիր մաշիկներ: Այսպիսով նրանք իրենց արտաքին տեսքով եւ շարժումներով նմանվում են մահմեդականներին:

Այս բոլորը նախապես էլ արգելված էր իմ բարձր ֆերմանով: Վերը նշվածի պես հագնվելու, դյուլբենտների մեջ փաթաթվելու եւ նման մաշիկներ կրելու մասին երբեւէ իմ վսեմ կարգադրությունը չի եղել:

Արդ, այս բոլորը արգելելով, հրամայում են: Իմ հրամանը տեղ հասնելուն պես, առանց հետաձգելու, այս խնդրին անձամբ հետեւես եւ շուտափույթ կերպով զգուշացնես եւ անհրաժեշտ կարգադրությունը կատարես, որպեսզի այսուհետեւ հրեաների եւ քրիստոնյաների հագած չուխաները, իշքարլատները, խալաթները

պատրաստված չլինեն ատլասից, կամկայից եւ այլ մետաքսե գործվածքներից: Ֆերաջեները չպետք է, որ մետաքսից լինեն, այլ՝ աստառացու կտորից: Դյուլբենտը բարակ եւ նուրբ տեսակի չի լինելու, եւ իրենց գլխի փաթոցներն էլ ոչ այնքան շքեղ: Մի խոսքով, չպետք է, որ իրենց արտաքինով եւ շարժուններով նմանվեն մահմեդականներին: Ինչ որ հնուց ի վեր սովորություն են ունեցել հագնելու, թող այդպես էլ հագնեն: Թող մահմեդականի տարազի ձեւը չունենան: Թույլ չտաս, որ հակառակ իմ բարձր հրամանի տարազ կրեն: Նրանք, ովքեր չեն հնազանդվի եւ հակառակ իմ բարձր հրամանի կվարվեն, ենթարկվելու են պատժի: Անհնազանդներին կալանքի տակ առնելով՝ կբանտարկես եւ կտեղեկացնես: (էջ 50)

20 ջեմազի ուլ-սհիր 985 (սեպտեմբեր 1577 թ.)

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 19**

#### **ԿՊՈԼՍՈՒՄ ՀՐԵԱՆԵՐԻ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԳԼԽԱՐԿ ԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

##### Յրամանագիր ԿՊոլսի կադիին

Յանգուցյալ եւ ողորմած իմ պապի՝ սուլթան Մեհմեդ խանի<sup>24</sup> (թող Աստված ողորմի նրա հոգուն) ժամանակ, իրեաները իրենց գլխներին կրում էին կարմիր գլխարկ, իսկ ոտքերին՝ սեւ մաշիկներ եւ երկարաճիտ կոշիկներ: Արտահագուստը պատրաստված էր լինում աստառացու կտորից: Քրիստոնյա համայնքները սեւ գլխարկ էին կրում:

Այժմ հրամայում եմ, որ հիշյալ (հրեաների) համայնքը դյուլբենդի մեջ չփաթաթվի: Նախկին սովորության համաձայն, թող կարմիր գլխարկ կրեն, մաշիկները եւ երկարաճիտ կոշիկները սեւ լինեն, իսկ արտահագուստը՝ աստառացու կտորից: Քրիստոնյաները նույնպես թող դյուլբենդի մեջ չփաթաթվեն եւ գլխներին սեւ գլխարկ կրեն:

Յրամանագիրս տեղ հասնելուն պես, հետեւիդ այս խնդրին եւ իմ բարձր ֆերմանի համաձայն, Բաղեստանում, թաղերի մեջ կամ մարդկանց/ հավաքատեղիներում հայտարարիր եւ խստագույն կերպով պատվիրիր, որ այսուհետեւ իմ բարձր հրամանի համաձայն, իրեաները կարմիր գլխարկ կրեն, ոտքերին սեւ մաշիկներ եւ երկարաճիտ կոշիկներ հագնեն, իսկ արտահագուստն էլ աստառացու կտորից լինի: Քրիստոնյա համայնքները եւս, վերը նշվածի



համաձայն, դյուլբենդի մեջ չփաթաթվեն: Թող սեւ գլխարկ կրեն: Եղիր ջանադիր իմ այս բարձր ֆերմանի գործադրության համար:

Այս հարցի կատարման համար իմ կայսերական հրամանով վերակացու է նշանակված ենիչերիների աղա Իբրահիմը: Հիշյալի հետ խորհրդակցելով՝ եղեք ջանադիր եւ կատարե՛ք իմ բարձր հրամանը: (էջ 51)

23 ռեբի ուլ-էվվել 988 (7 մայիս 1580 թ.)

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 20**

### ***ԷՅՈՒՊ ՍՈՒԼԹԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ ՉՔՆԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

#### Հրամանագիր Հայսարի կադիին

Արդեն քանիերորդ անգամ է, որ կայսերական հրամանագիր է ուղարկվում, որ Էբա-ի ուլ Էնսարիի սուրբ դամբարանի շրջակայքում հացավաճառներ, կարկանդակավաճառներ, մածնավաճառներ, գործավորներ եւ զանազան աշխատանքով զբաղվող անհավատներ չտեղավորվեն եւ բնակություն չհաստատեն: Այսուհանդերձ, մենք ականջալուր եղանք, որ հակառակ մեր բարձր հրամանի, դամբարանի շրջակայքում մեծ թվով անհավատներ բնակություն են հաստատել եւ բացահայտորեն նվագելով, զինի խմելով, տուրուղմբոց են սարքում:

Այս կապակցությամբ, շուկային վերաբերող իմ բարձր հրամանը առաջվա պես ուժի մեջ է: Միեւնույն ժամանակ հրամայում են: Իմ հրամանը տեղ հասնելուն պես, այս խնդրին անձամբ հետեւես եւ նշված սուրբ դամբարանի շրջակայքում գտնվող շուկայի մարդկանց հավաքելով, խստագույնս պատվիրես, որ այսուհետեւ որեւէ զինմի, հակառակ իմ բարձր հրամանի, բնակություն չհաստատի տվյալ վայրում: Բոլոր բնակիչներն անխտիր պետք է մահմեդականներ լինեն: Ոչ մեկը չհամարձակվի հիշյալ սուրբ դամբարանի շրջակայքում նվագելու եւ զինի խմելու: Եթե հանկարծ լսվի, որ հիշյալ դամբարանի շրջակայքում անհավատներից որեւէ զինմի բնակվի եւ բացահայտորեն զինի խմելով, նվագելով, անվայել վարմունք ցուցաբերի, ապա բոլոր պատասխանատվությունը ընկնում է ձեր վրա: Անհնազանդները ենթակա են քստորման: Դրա համար էլ ուշադիր եղիր եւ խստագույնս կերպով հրահանգ տուր:

Գրված է ռամազան ամսին, 989 (սեպտեմբեր 1581 թ.)



## ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սովորաբար սուլթանական հրովարտակների ճակատին դրվում է սուլթանի թուղրան: Այս եւ հաջորդ վավերագրերի վերնագրերը Ահմեդ Ռեֆիկինն է:

2. Այս եւ հաջորդ՝ 2-8 հրամանագրերը տրված են սուլթան Սուլեյման I-ի (1520-1566) կողմից:

3. Բնագրի պատճենը տես՝ Ahmet Refik, On altıncı asırda İstanbul hayatı, ikinci basım, İstanbul, 1935, s. 137.

Այսուհետեւ հրովարտակների վերջում ցույց է տրված թուրքերեն բնագրի հրատարակության շքը:

4. Գերիների վաճառքը կայսրությունում վերացվել է 18-րդ դարում: Թուրք տարեգիր Ահմեդ Լյուքֆին 1846 թ. դեպքերը շարադրելիս նշում է, որ «Նորին վսեմություն սուլթան Աբդուլ Մեջիդի Ֆերմանով գերիների շուկան վերացվեց» (Ahmet Lutfi, c. 8, s. 134.)

5. Ազատագրված ստրուկ:

6. Թաղամասը գտնվում է Սամաթիայի Ալքը Մերմեր կոչվող վայրում:

7. Նկատի ունի Դավութ փաշայի մզկիթը: Այն կառուցել է մեծ վեզիր Դավութ փաշան 1483 թ. (P. G. Incicyan, XVIII asırda İstanbul, tercume ve tahşiyе eden H. D. Andreasyan, 1956, s. 41).

8. Ալքը Մերմեր վայրում 16-րդ դարում հույները ունեցել են 3 եկեղեցի՝ Յորիոպիկոս, Խրիստոս, Այոս Գեորգիոս (տես Ե. Չ. Զյոմուրճյան, նշվ. աշխ. էջ 79): Թե ո՞ր եկեղեցու մասին է խոսքը, դժվար է պարզել:

9. Սուլթան Մեհմեդ II (1451-1481):

10. Սուլթան Սելիմ I (1512-1520):

11. Ֆլորիա անունը պետք է կապված լինի Ալքը Մերմերում գտնվող «Ֆլորիա» պարտեզի հետ: Ե. Զյոմուրճյանի գրքում գրված է այս մասին հետեւյալը. «Երեք տարի առաջ բոստանջի բաշին (արքունի պահակների պետը) հարձակվեց Ֆլորիա պարտեզի վրա, ծեծի եւ դրամական տույժի ենթարկեց հավաքված մարդկանց եւ հունական եկեղեցին էլ քանդեց» (տես Ե. Չ. Զյոմուրճյան, նշվ. աշխ., էջ 57):

12. Կ.Պոլսի շրջակա գյուղերից:

13. Նկատի ունի խորանը:

14. Ահմեդ Ռեֆիկը կարդացել է Բաշուկլոզ: Եթե ش (շ) ն ընթերցենք س (ս), կստացվի հունարեն Բասիկլոզ ազգանունը:

Կարծում ենք կա նաեւ բ-ի եւ վ-ի շփոթություն, որովհետեւ ավելի հավանական է, որ այն լինի շատ տարածված Վասիլյոզ անունը:

15. Տես էջ 257 ծնթ .2:

16. Ոսկեղջյուրի արեւելյան ափին, Սարայ Բուրնուի դիմաց գտնվող Կ.Պոլսի շրջանը: Այն ժամանակ շրջապատված էր պարսպով եւ կառավարվում էր առանձին կադիի կողմից: Հայերը այստեղ ունեին Ս. Լուսավորիչ եկեղեցին՝ կառուցված 1436 թ.:

17. Գտնվում է Կ.Պոլսի Սամաթիա թաղամասի Օդուն Կափուի մոտա-

կայքում: Այն կառուցել է սուլթան Սուլեյման I-ի արքունի բժիշկ Ահի Ահմեդը:

18. Բնագրում keşişhane (քահանայատուն):

19. Նավաշինարան, Ոսկեղջյուրի արեւելյան ափին, Այնալը Կավաք կոչված շրջանում, կառուցվել է Մեհմեդ II-ի օրոք:

20. Կ.Պոլսի դարպասներից մեկը՝ Ոսկեղջյուրին մայրոջ: Այստեղ հույները ունեցել են անգործության մատնված մի հին եկեղեցի: Երբ 1627 թ. սուլթան Մուրադ IV-ի (1623-1640 թթ.) հրամանով էդիրնեի դարպասի մոտ գտնվող հայկական Ա.Նիկողոս եկեղեցին վերափոխվեց մզկիթի, այս հին եկեղեցին հանձնվեց հայերին: 1628 թ. հայերը այն վերակառուցեցին եւ անվանեցին Ա.Յրեշտակապետ: Ըստ Ե. Քյոմուրճյանի, հայերն այստեղ կենտրոնացած համայնք չեն ունեցել, ապրել են ցրված (Ե. Քյոմուրճյան, նշվ. աշխ., էջ 20-21):

21. Այս եւ հաջորդ 10-15 հրամանագրերը տրված են սուլթան Սելիմ II-ի (1566-1574 թթ.) կողմից:

22. Ազգային տարագի հարցում հետագայում եւս սահմանափակումներ են եղել: Չիջրայի 1171 (1751) թ. դեպքերը շարադրելիս պատմագիր Վասըֆը գրում է. «Ստամբուլում ապրող հույն, հայ եւ հրեա համայնքները իրենց հազուստներով խախտել են շարիաթի սկզբունքները: Այս պատճառով հույն, հայ պատրիարքները եւ հրեաների խախտած բաշիմ հրավիրվեցին Չավուշ բաշի աղայի պաշտոնատեղին, եւ նրանց հայտնվեց առաջվա նման հազուստները կարգի բերելու մասին տրված փաղիշահական բարձր հրամանը: Միաժամանակ հայտնվեց, որ այդ կարգի օրինազանցությունը ենթակա է խիստ պատժի (տես Թուրքական աղբյուրներ, հատ. 1, էջ 215)»:

23. Թեթե ոգելից խմիչք:

24. Սահմեդական կրոնը արգելում է զինու օգտագործումը: Այդ պատճառով Կ.Պոլսի զինետները գտնվել են ոչ-մահմեդականների թաղամասերում, հատկապես Գալաթիա թաղամասում:

25. Կ.Պոլսի թաղամասերից, Պալաթի մոտ, բնակեցված էր մեծ մասամբ թուրքերով, եղել են եւ հայեր: Էյուպ Էնսարին եղել է Մուհամմեդ Մարգարեի գորահրամանատարներից մեկը: 673 թ. արաբների կողմից Կ.Պոլսից շրջապատելու ժամանակ մահացել եւ թաղվել է այդ վայրում: Սուլթան Մեհմեդ II-ը հայտնաբերել է նրա գերեզմանը եւ վրան կառուցել մզկիթ-դամբարան:

26. Քարե ջաղացքների համալիրին տրված անվանումը:

27. Սահմեդականներին ճամազի հրավիրող աղոթք, կարդում է մյուեզ-զինը մինարեից:

28. Տեքստում օգտագործված է թուրքերեն namahrem տերմինը, այսինքն՝ որեւէ կնոջ կամ չափահաս աղջկա ամուսնական կապը հեռավոր ազգականի հետ կարող էր ներելի համարվել:

29. Տեքստում գրված է husus (գործ, պարագա) բառը: Ահմեդ Ռեֆիկը ենթադրել է, որ այն պետք է լինի bu mektub (այս նամակը):

30. Հունարեն նշանակում է Սուրբ լեռ: Այնորոզի վանքը գտնվում է Հունաստանում, Սալոնիկի հարավային մասում՝ թերակղզու վրա:
31. Նկատի ունի հույների պատրիարքին:
32. Այս եւ հաջորդ՝ 17-20 հրամանագրերը տրված են սուլթան Սուրադ III-ի (1574-1595 թթ.) կողմից:
33. Կ.Պոլսի եվրոպական մասում, Պալաթի դիմաց հույներով եւ հայերով բնակեցված թաղամաս:
34. Սուլթան Մեհմեդ II (1451-1481 թթ.):

## ՉԱՆԱՉԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

#### ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՎԱՆԻ ԲԵՅԼԵՐԲԵՅԻՆՆԵՐՆԵՐ

Սրանից առաջ, կայսերական պալատի թնդանոթածիզներից՝ Մուստաֆան, ուղարկված էր Վանի երկաթահանք՝ 1130 զարբզան ռուբլեր ծուլելու համար: Այս առթիվ, իմ կայսերական դռանը նամակ ուղարկելով, հայտնել եմ, որ ծնեովա ցուրտ եղանակի պատճառով հնարավոր չէ ռուբլեր ծուլել:

Այժմ ռուբլի խիստ կարիք ունենք: Վերոհիշյալ թնդանոթածիզ Մուստաֆային կրկին ուղարկելով այդ կողմերը, հրամայում եմ. նրա տեղ հասնելուն պես, առանց հապաղելու, ջանք թափիր եւ իմ կայսերական բարձր հրամանը կատարիր եւ Մուստաֆայի համար ռուբլեր ծուլելով, ետ ուղարկիր<sup>2</sup>:

Մուհարրեմ 986 (հոկտեմբեր 1578 )թ.:

### ՎԱՎԵՐԱԳԻՐ 2

#### ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՌՈՒՄԻ (ՍԵՎԱՉԻ) ԲԵՅԼԵՐԲԵՅԻՆՆԵՐՆԵՐ

Գյումիշի<sup>4</sup> կադի Մեվլանա Սաֆինն Գամակ էր ուղարկել, հայտնելով, որ Էրնայի սիփահիների 48-րդ գումարտակում<sup>5</sup> օրական 20 ակչե ստացող Դելի Ռիդվան եւ Ինջե Ահմեդ անունով սիփահիները չափից դուրս չարագործություններ են անում եւ զնացող-եկող մարդկանց առաջը կտրելով, սպանում են եւ կողոպտում: Կողոպտում են նաեւ ռեայայի տավարն ու ունեցած-չունեցածը եւ բռնություն գործադրում նրանց ընտանիքների անդամների նկատմամբ: Այդ չարագործներին աջակցող Քյոր Մեհմեդ եւ Աբդի անունով ավազակները կացինով շարդել են կադիների առաջնորդներից Մեվլանա Իսայի տան դուռը, մտել ներս, կացնահարել նրան եւ բռնություն գործադրել ընտանիքի անդամների նկատմամբ: Այնուհետեւ դեպքի վայրն են հասել մահմեդականները եւ մի կերպ ազատել նրանց: Այնուհանդերձ, հնարավոր չի եղել բռնել վերոհիշյալներից, քանի որ իրենց տրամադրության տակ եղել են բավականաչափ թվով ավազակներ: Գրված է նաեւ, որ օրը ցերեկով կատա ու



ված չարագործությանն ու բռնություններին չափ ու սահման չկա, ուստի տեղի մահմեդական աղաները խնդրել են սրանց նկատմամբ արդար դատաստան տեսնել եւ կամ հեռացնել տվյալ վայրից:

Այժմ հրամայում են, երբ տեղ հասնես, հիշյալներին ձերբակալես եւ եթե աղաների գրած նամակի հիման վրա մանրամասն բացահայտվի նրանց գործադրած չարագործություններն ու բռնությունները, ապա տվյալ վայրի բյուլուքի քեդիսուդայի միջոցով, չարիաթի հիման վրա արդար դատաստան տեսնես եւ պատժես նրանց<sup>6</sup>:

1018 (1608) թ.:

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 3**

#### **ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ**

##### **17-ԲԳ ԳԱՐՈՒՄ<sup>7</sup>**

Երզրունի էյալեթ - Սանջակները՝ Երզրուն, Կարահիսար-ի Շարքի, Կըղի, Խնուս, Վերին Բասեն, Մանազկերտ, Թեքման, Կուզիջան, Իսփիր, Թորթում, Ստորին Բասեն, Մամրվա: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 1 214 000, իսկ միրլիվաներինը՝ 100 հազարից մինչեւ 320 հազար ակչե էր: Էյալեթում կար 120 զեամեթ, 5 195 թիմար: Չինվորական ուժը ջբեբլուներով միասին 7 800 հեծելազորից էր կազմված:

Վանի էյալեթ - Սանջակները՝ Վան, Ադիլջեվազ, Էրճիշ (Արճեշ), Մուշ, Բարկիր (Բերկրի), Կարկար, Քեսանի, Իսաբերդ, Աղաքես, Էքրադ, Բենի-Կոթուր, Բայազետի բերդ, Բերդա, Օվաջըք: Բեյլերբեյի տարեկան եկամուտը կազմում էր 1 միլիոն 32 հազար, միրլիվաններինը՝ 200 հազարից մինչեւ 420 հազար ակչե խասսերից: Այս էյալեթում կար 199 զեամեթ եւ 916 թիմար:

Դիարբեքիրի էյալեթ - Փաշայի սանջակը՝ Ամիդ, այսինքն Դիարբեքիրն էր: Սանջակները՝ Խարփուտ (Խարբերդ), Էրզանի (Արդնի), Սիվրիք, Նեսիբին, Յիանիքեֆ, Չմշկեք (Չմշկածաղ), Սիիրդ, Մեֆարկին (Մուֆարդին), Ակչակալա, Սենջար, Խաբուր, Սեֆման, Կոլբե, Մեիրան, Թերջիլ, Օթաք, Փերնեք, Չապակջուր, Չերմիկ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը կազմում էր 1 միլիոն 200 հազար, միրլիվաներինը՝ 100 հազար ակչեից մինչեւ 500 հազար ակչե: Այս սանջակներից 8-ը գտնվում էին քուրդ բեյերի իշխա-



նության ներքո՝ «յուրդուքի եւ օջաքլըքի» կարգով: Բացի այդ, կային նաեւ 400-ից ավելի քուրդ աշիրեթների բեյեր, որոնք միրլիվայի բեյերի նման թուղի (դրոշակի) տեր չէին, այլ պարզապես զեամենթի տերեր էին համարվում:

Կարսի էյալեթ - Սանջակները՝ Կարս, Խոջեվան, Ջարիշատ, Քեջվան, Կաղըզման, Շորագյալի հետ: Բեյլերբեյիի տարեկան եկամուտը՝ 820 հազար, միրլիվաներինը՝ 200 հազարից մինչեւ 400 հազար ակչե էր: էյալեթում կար 1 200 թիմար եւ զեամենթ:

Չըլդըրի էյալեթ - Սանջակները՝ Չըլդըր, Օլթի, Խերդուշ (Խերթվիս), Արդանուշ, Արդահան, Յաջրեթ, Փոցխով, Մախսեւ, Աջարա, Փենեթ, Բերդքերեթ (Բերդագրակ), Լիվանե, Նըսֆի-Լիվանե, Շավշատ: Բեյլերբեյիի տարեկան եկամուտը՝ 925 հազար, միրլիվաներինը՝ 200 հազար ակչեից մինչեւ 600 հազար ակչե էր: Բերդքերեթը, Լիվանեն, Նըսֆի-Լիվանեն եւ Շավշատը կառավարում էին իբրեւ «յուրթուք եւ օջաքլըք»: էյալեթում կար 97 զեամենթ եւ 559 թիմար: Ձինվորական ուժը ջեբելունների հետ միասին հասնում էր 1 800 հեծելազորի:

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 4**

### **ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՍՐԻ-ՇԻՐԻՆՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ \***

14 մուհարրեմ 1049 (18 մայիս 1639 թ.)

Ձեսսանը, Բեդրեն, Միդելչինը, Դերթենզը, Դերնեն մինչեւ Սերմիլ կոչված վայրը սահման համարելով, մեր կայսերական կողմին պիտի պատկանեն: Միդելչինի եւ Դերթենզի միջեւ գտնվող դաշտերը, Ջաֆա շիրթի Ձիա-եղ-դին եւ Յարունի կոչվող ցեղերը, Կըզըլջա բերդը իր շրջակայքով, Ձենջիր բերդի արեւմտյան մասում գտնվող գյուղերը, Շեիրի-Չորի մոտ Ջալիմ բերդի մոտակայքում գտնվող լեռները, ինչպես նաեւ այս բերդից մինչեւ Շեիրի-Չորի կիրճը ձգվող տարածությունները նույնպես մեր կայսերական կողմին պիտի պատկանեն:

Բացի սրանից, Ախալցխայի, Կարսի, Վանի, Շեիրի-Չորի, Բաղդադի եւ Բասրայի շրջակայքում գտնվող բերդերն ու տարածությունները, հողերն ու կալվածքները, լեռներն ու բլուրները, դուրս

գալով շահի տիրապետությունից, անցնելու են մեր կողմը: Թող մյուս կողմի միջամտման կամ հարձակման ենթակա չլինեն:

Միեւնույն ժամանակ, Միդելչիմի եւ Դերթենգի միջեւ գտնվող լեռները, Փիրեն, Չերդուդին, որը կոչվում է նաեւ Դերդուբադ, Չենջիր բերդի արեւելյան մասում գտնվող բերդերը, անտառները, գյուղերը, իրենց ցանքսերով եւ մարդկանցով մեկտեղ, կտրվելու են շահի տիրապետությունից եւ անցնելու են մեր կողմը: Այս տարածություններից ստացված եկամուտները պատկանելու են Սուլթանին: Իսկ լեռան բարձունքում գտնվող Չենջիր բերդը, Վանի շրջակայքում գտնվող Կոթուրը, Մակուն, ինչպես նաեւ Կարսի ուղղությունում գտնվող Մաղազիրադ բերդը թող կողմերի համաձայնությամբ քանդման ենթարկվի, եւ այդպես էլ թող ավարտվի այս գործը:

## ՎԱՎԵՐԱԳԻՐ 5

Իմ տիրակալ, Չեր ռեայաները՝ ստրուկները, շատ աղքատ են եւ գյուղերից ցիր ու ցան լինելով, փախել են այս ու այն կողմ: Այս մոտ ժամանակներս, եթե պատերազմ լինի, ապա շատ դժվարությունների առաջ եք կանգնելու: Նույնիսկ, եթե 3-4 տարի պատերազմ տեղի չունենա, ռեայան չի կարող իրեն գտնել, իսկ եթե գտնի էլ, չի կարող այդ բոլոր դժվարությունները տանել...<sup>9</sup>:

Իմ տիրակալ, Չեզ համար շատ կարեւորություն ունեցող ռեայայի վրայից անհրաժեշտ է հանել անտեղի հավաքվող հարկերը եւ միեւնույն ժամանակ հրաման արձակել Օսմանյան կայսրությունում հաշվառում անցկացնելու մասին: Բեյլերբեյներին կայսերական հանձնարարական տվեք, որպեսզի այսուհետեւ ռեայայից չգանձվի կաֆթան բահայի, սելամիեյի եւ նալ բահայի հարկերը<sup>10</sup>, քանի որ ռեայայի վիճակը առանց այն էլ շատ ծանր է:

Չեր վեզիր ստրուկին բարձր կարգադրություն արեք, որպեսզի ամբողջ Օսմանյան կայսրությունում անհրաժեշտ հաշվառում անցկացնելու համար խելահաս եւ ազնիվ մարդիկ ուղարկի: Թող անուշադրության չմատնի այս հարցը եւ ջանք թափի, որպեսզի ռեայան ազատվի զուլումից:

Իմ հզոր տիրակալ, դրամի հարցին եւս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել: Դրամը չափազանց արժեքազրկվել է: Այդ պատճառով ամբողջ ժողովուրդը տագնապալի վիճակ է ապրում: Իմացեք, որ աղքատության մեջ են թե՛ ռեայան եւ թե՛ Չեր ծառաները:

Դրամի արժեքը բարձր լինելու դեպքում, առավել հնչուն կդառնան նաեւ փաղիչահիների անուները: Իմ տիրակալի ցանկությունը կիրականանա, երբ բարելավվի դրամի վիճակը: Ուստի, բարձր հրաման արձակեք. որպեսզի ականջի հետեւ չզգեն եւ ջանք թափեն դրամի արժեքը բարձրացնելու խնդրում:

Ձեր պայծառափալությունը պետք է անուճով եւ ինքնությամբ տեղյակ լինի բոլոր բեյլերբեյիներին եւ սանջակբեյիներին: Անհրաժեշտ է, որ տեղեկություն ունենանք նաեւ, թե ով կառավարելու լավ ունակություն ունի եւ կամ ով է զբաղվում շարաշահությամբ եւ տվյալ անձի կարողության համաձայն էլ նշանակեք պաշտոնի:

Իմ հզոր տիրակալ, այն բանից հետո, երբ բոլոր կողմերով ծանոթ լինեք Ձեր ստրուկներին, ապա բոլոր հարցերն էլ հեշտությամբ կլուծվեն: Ամբողջ երկիրն էլ խաղաղ կլինի:

Կ.Պոլսի կադին գնացուցակ է նշանակում ամբողջ քաղաքի արեստրականների, խանութպանների համար: Իսկ գները իջեցրած վաճառք կատարողների վճեղին փայտե քիլե անցկացնելով, ծեօի է ենթարկում: Ամբողջ քաղաքի գործերը նա է կառավարում:

Ձեր վեզիր ստրուկին ժամանակ առ ժամանակ կարգադրեք, որպեսզի Կ.Պոլսի կադը էֆենդիին հանձնարարի ճիշտ կատարելու առեստրականներին նշանակվող գնացուցակը: Անհրաժեշտ է, որ նա հաճախակի զբոսնի քաղաքում, հակառակ դեպքում, թող իմանա, որ նա կզգուշացվի կայսերական բարձր հրամանով:

Իմ հզոր տիրակալ, քաղաքում զբոսնելու ընթացքում, երբ շղթայակապ մարդիկ ընկնեն ձեր ոտքերը, պաղատանքով ասելով՝ «Թագավորը ասարած կենա, գերի ենք ընկել, անտուություն ենք խնդրում», մի քանի ոսկի տալով քեթխուդային, աճախապես հրամայեցեք, որ այդ խեղճերին հանձնի: Այդքան էլ բավական է:

Իմ հզոր տիրակալ, եթե մի կին դիմում ներկայացնի, կարգադրեցեք քեթխուդային, որ կնոջը իր դիմումով շտապ ներկայացնի վեզիրին: Թող նրա բողոքը լսվի, եւ արդարությունը բացահայտելու համար կարգադրություն կատարվի քեթխուդային:

Ոչ մեկի պաշտոնը, ամարդարացիորեն մեկից վերցնելով, մեկ ուրիշին մի տվեք: Եղեք ուղղամիտ եւ բացահայտեք տեղի ունեցած հանցագործությունը: Թող Ձեր հասցեին ոչ մի ավելորդ խոսակցություններ չլինեն: Եղեք արդարամիտ, որ երկու աշխարհներում էլ պարզերես դուրս գաք: Օգտավետ գործերը մի հետաձգեք: Նենգ եւ խորամանկ մարդկանցից հեռու մնացեք: Ռեայայի հարցերը կամաց-կամաց աշխատեք լուծել: Նրանց բողոքների հանդեպ բարյացակամ եւ արդարացի վճիռ տվեք:

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 6**

### **ՀԱՐՉԱԿՈՒՄՄԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՎԱՆՔԻ ՎՐԱ**

1720 թ. հոկտեմբերին, Թոքաթում Քառասուն" եկեղեցին ընդարձակելու համար, երբ կառավարությունից թույլտվություն է ձեռք բերվում, Թոքաթի մահմեդական բնակչությունը, գազազելով, շեվվալ (հոկտեմբեր) ամսի 22-ին, կիրակի օրը, եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ, աղմուկ, աղաղակ բարձրացնելով, հարձակվում է, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում<sup>12</sup>:

Մուհարրեմ 1136 (հոկտեմբեր 1723) թ.:

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 7**

### **ԷՐԶՐՈՒՄԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԻ ՕՂԼՈՒ ՄԱՆՈՒԿ**

Օսմանյան պետության բարձր պաշտոնատներում իր մատուցած ծառայություններով համբավ ձեռք բերած, սարաֆների դասակարգին պատկանող հիշյալ անձնավորությունը հիվանդ եւ ծեր լինելու պատճառով, սույն թեզքերեն տրվեց:

Մահմեդականի ձի նստելու կերպին չնմանվելու պատճառով, թող ոչ ոք արգելք չհանդիսանա նրա ձի հեծնելուն<sup>13</sup>:

Գրված է 19 ջեմազի ուլ-էվվել 1221 (4 օգոստոս 1806) թ.:

## **ՎԱՎԵՐԱԳԻՐ 8**

### **ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԳԱՆՉՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՃ ՎԵՉԻՐԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Մահմեդական զինակոչիկների ամենամյա զորակոչումը կատարվում է վիճակ զցելով (Kura ile), եւ զինվորական ծառայության է վերցվում միայն մեկը՝ 180-ից<sup>14</sup>:

Քրիստոնյաները եւ Օսմանյան կայսրության մյուս ոչ-մահմեդական հպատակները զինվորական ծառայության փոխարեն հարկվում են 5 000 դուրուշով, եւ վճարումը կատարվում է վերոհիշյալ բաժանման հիման վրա, այսինքն 180-ի հարաբերությամբ: Այսուհանդերձ, քանի որ ներկայացվող բողոքներում նշվել էր, որ մի շարք տեղերում զինվորական հարկը բաշխվում եւ գանձվում է



ճանել անաշխատունակ եւ աշխատավարձ չունեցող անձերից, ուստի անհրաժեշտություն զգացվեց այս հարցը լուծել հետեւյալ հարմար ձեւով:

1292 թ. զուլկադե ամսին (նոյեմբեր 1875) հրապարակված կայսերական հրովարտակի մի տեղում ասվում է, որ ոչ-մահմեդական հպատակներին վերաբերող զինվորական հարկը չի տարածվելու մինչեւ 20 տարեկան եւ 40 տարին անցած մարդկանց վրա, իսկ հիվանդների եւ անաշխատունակների անունները ընդհանրապես չեն ընդգրկվելու զինակոչիկների ցուցակում: Հրովարտակում նշված էր նաեւ այն մասին, որ վերոհիշյալ որոշման ընթացքում սահմանված զինակոչիկների քանակը չպետք է խախտվի, իսկ զինակոչիկների թվի շատացման դեպքում, եկամուտը պետք է մուտք գործի պետական գանձարան:

Այսուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ, երբ զինակոչիկի տարիքը սկսվեց համարվել 20-ից մինչեւ 40 տարեկան, զինվորական հարկատվությունը խիստ կրճատվեց եւ միեւնույն ժամանակ վատթարացավ հարկադիր զորակոչիկների վիճակը: Այս կապակցությամբ ոչ-մահմեդական հպատակներից, ինչպես նաեւ համայնքների հոգեւոր ղեկավարներից ներկայացվեցին բողոքներ, որոնցում նշվում էր տվյալ հրամանի կիրառման անհնարության եւ դժվարությունների մասին:

Այս կապակցությամբ, վերոհիշյալ հոգեւոր ղեկավարները, որպեսզի թեթեւացնեն հարկադիր զինպարտների վիճակը եւ մյուս կողմից, չնվազեցնեն պետական գանձարանի եկամուտը, ուղարկել են մի զեկուցագիր, ուր նշվում է, որ զինվորական հարկները պետք է բաշխվեն եւ գանձվեն բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, բացառությամբ հոգեւորականների, հիվանդների, անաշխատունակ անձանց եւ այն անձնավորությունների, որոնք դեռ չեն բուրել 15 տարին եւ նրանցից, որոնք 75-ից բարձր տարիք ունեն:

Տվյալ հարցը քննարկվեց նաեւ նախարարների հատուկ խորհրդում, որը եւ նպատակահարմար գտավ գործադրել այս առաջարկը այն իմասով, որ այն կարող է թեթեւացնել զինապարտների վիճակը:

Այսպիսով, ընդունված որոշման համաձայն, զինվորական տուրքը նախկինի պես բաշխվելու է մահմեդական զինապարտներին վերաբերող եւ գործող կանոնադրության համաձայն, այսինքն՝ արական սեռից ծառայության է վերցվում 180-ից՝ մեկը: Իսկ ոչ-մահմեդական հպատակները ծառայության փոխարեն հարկատու են 5 000 դուրուշ:



Ձինվորական հարկը գանձելու ընթացքում բոլոր ոչ-մահմեդական համայնքները պետք է հետեւեն այս կարգ ու կանոնին եւ զինվորական հարկը բաշխելու ընթացքում հաշվի առնեն տվյալ անձնավորության առողջությունը եւ նյութական կեցությունը, այնպես, որ 180 զինապարտների միջեւ չպետք է գտնվեն 15 տարին չլրացած եւ 75-ը անց անձնավորություններ, ինչպես նաեւ կղերականներ, հիվանդներ եւ անաշխատունակ անձինք: Այս որոշումը վավերացվեց նաեւ նորին մեծություն փաղիշահի հրամանագրով եւ հաղորդվեց բոլոր վիլայեթների կառավարիչներին, համայնքների առաջնորդներին, ինչպես նաեւ պետական գանձարանի վարչությանը, որպեսզի նրանք եւս օժանդակեն դրա գործադրմանը<sup>15</sup>:

Տրված է 16 քենագի էլ ահրի 1293 (9 հուլիս 1876) թ.:

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 9**

**ՈՉ-ՄԱՀՄԵԴԱՎԵՐ ՀՊԱՏԱԿՆԵՐԻՅ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԿ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԵԾ ՎԵՁԻՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.**

Ձինվորական հարկի գանձումը, որը նշանակված է ոչ-մահմեդական բնակչության համար, չի կատարվում անհրաժեշտ պայմաններով, որի համար էլ զինակոչիկների մեծ մասը դուրս է մնում հաշվառումից: Այս առթիվ ֆինանսների նախարարությունը, որպեսզի ապահովի զինվորական հարկի գանձումը, նախաձեռնեց անհրաժեշտ միջոցառումներ: Տվյալ հարցը քննարկվեց նաեւ նախարարների հատուկ խորհրդում:

Ձեռնարկված միջոցառումները հետեւյալներն են: Մահմեդականները զինապարտ են համարվում 20-ից մինչեւ 40 տարեկան, իսկ 20-ից մինչեւ 40 տարեկան ոչ-մահմեդականները զինվորական ծառայության փոխարեն հարկատու են լինելու 5 000 ղուրուշով, որը բաժանվելու է գանձվելու է 180-ից՝ մեկը հաշվարկով: Ոչ-մահմեդականներից այս գումարի գանձումը այսուհետեւ կատարվելու է պետական հարկահավաքների կողմից: Եթե վերակազմված զինվորական ծառայությունը բոլոր հպատակների վրա տարածվեր հավասարապես, ապա հասկանալի է, որ անհրաժեշտություն չէր զգացվի զինվորական հարկ գանձելու ոչ-մահմեդական բնակ-

չությունից: Այսուհանդերձ, ֆինանսական դժվարությունից ելնելով, մինչեւ վերոհիշյալ որոշումը ուժի մեջ մտնելը, անհրաժեշտություն է զգացվում զինվորական հարկ գանձելու հաշվարկից դուրս մնացած զինապարտներից: Ի միջի այլոց, մի ժամանակ զինվորական մման ծառայության դեպքում (այսինքն 20-ից մինչեւ 40 տարեկան) զինվորական հարկի գանձումը խիստ նվազեց, որը եւ դժվարության տեղիք տվեց: Այս կապակցությամբ հոգեւոր համայնքների առաջնորդների հավանությամբ, առաջարկվեց զինվորական ծառայության հարկատվությունը բաժանել մահմեդական զինապարտների կարգ ու կանոնով, այսինքն՝ արական սեռի 180-ից՝ մեկը հաշվով: Իսկ ոչ-մահմեդական հպատակները ծառայության փոխարեն հարկատու են 5 000 ղուրուշով: Ինչ վերաբերում էր զինվորական հարկին, ապա այն գանձվում էր բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, բացառությամբ հոգեւորականներից, հիվանդներից, աղքատներից եւ այն մարդկանցից, որոնք չէին հասել 15 տարեկան հասակին, կամ անցել էին 75-ը: Հոգեւոր համայնքների առաջնորդները զինվորական հարկի բաժանման եւ նշանակման ժամանակ պետք է հաշվի առնեին զինապարտի նյութական վիճակը:

Ձինապարտության այդ ձեւը հավանության էր արժանացել նախարարների խորհրդում եւ այնուհետեւ վավերացվել բարձր ֆերմանով, որը եւ հանձնվել էր պաշտոնական անձանց, համայնքի ղեկավարներին, որպեսզի նրանք օժանդակեին այն գործադրելու համար:

Այժմ, եթե վերոհիշյալ ձեւը նորից տարածվի զինապարտների վրա (այսինքն 20-ից 40 տարեկանների վրա), ապա այդ կնշանակեր կրկին վերադառնալ այդ որոշմանը, որը մի անգամ արդեն փորձով հաստատվել է: Այսպիսով, նկատի ունենալով, որ այժմյան գործող կարգը արդեն հավանության է արժանացել ոչ-մահմեդական առաջնորդների կողմից, ուստի այն մնում է ուժի մեջ եւ այսօր:

Բայց եւ այնպես, զինվորական հարկի բաշխման եւ գանձման ընթացքում համայնքների ղեկավարների շրջանում առաջ էին եկել մի շարք չարաշահումներ: Այսուհետեւ այդ չարաշահումները կանխելու համար անհրաժեշտ է կիրառել հետեւյալը: Ձինվորական հարկի բաշխումը եւ գանձումը կրկին կատարվելու է համայնքների կողմից, սակայն բաշխման ցուցակների գումարը չպետք է անցնի պետության կողմից նշանակված գումարը: Բացի դրանից, տվյալ ցուցակի մի պատճենը ցուցադրվելու է գյուղերում, թաղամասերում, եկեղեցիներում կամ այլ հարմար վայրերում, որպեսզի

գյուղացիները եւ քաղաքի բնակիչները ծանոթանան դրա բովանդակությամբ: Ցուցակներում նշված զինապարտներից բացի, ոչ մեկից հարկ չի գանձվելու: Եթե ցուցակում նշված զինապարտներից մեկը հրաժարվի իրեն բաժին ընկած գումարը վճարելուց, ապա համայնքի ղեկավարները դիմելու են պետական հարկահավաքներին, որոնք գանձելու են հարկը գործող ընդհանուր օրենքի հիման վրա:

Այս կանոնը տարածվում է նաեւ այն զինապարտների վրա, որոնք հաշվարկից դուրս են մնացել: Այս որոշումը հավանության է արժանացել նախարարների խորհրդում եւ վավերացվել նորին մեծությոն փաղիշահի հրամանագրով, իսկ նրա պայմանները հաղորդվելու են արդարադատության նախարարությանը եւ պետական գանձարանին, որպեսզի օժանդակեն դրա գործադրմանը<sup>16</sup>:

27 սաֆեր 1297 (9 հունվար 1879) թ.:

#### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 10**

#### ***ՈՉ-ՄԱՀՄԵԳԱԿԱՆ ՁԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱ- ՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ***

Օսմանյան ոչ-մահմեդական հպատակներից գանձվող զինվորական հարկը (bedel-i askeri) 1325 (1908) թ. վերացվել է: Այսուհանդերձ, ոչ-մահմեդականներից եւ Կ.Պոլսում, Բիլադի Սալիսայում<sup>17</sup> եւ այլ տեղերում մինչեւ օրս գրանցված զինվորական ծառայության տարիքի անձանց վիճակահանությունը (այսինքն 20-ից մինչեւ 40) կատարվելու է 1325 թ. մինչեւ օրս գործածության մեջ գտնվող կանոնի հիման վրա:

Ոչ- մահմեդական զինակոչիկների բժշկական քննությունը եւ վիճակահանությունը կատարելու համար, կանոնադրության հիման վրա կազմված հանձնաժողովներում, ներկա պիտի գտնվեն նաեւ թաղերի վերակացուները եւ հոգեւորականները:

Ձինվորական ծառայությունից ազատվելու են՝ պաշտոնանկ եղած եւ պաշտոնում գտնվող պատրիարքները, կաթողիկոսները, խախամբաշին, մետրոպոլիտը, եպիսկոպոսները, արխիմանդրիտը, վարդապետները, գլխավոր խախամները, վանքերի ղուլմիտոսները, վանահայրերը, կրոնական ծառայության մեջ գտնվող քահանաները, դիակոսները, խախամները, վանքերում ծառայություն կատարող հոգեւորականները: Բացառություն են կազմում

նաեւ կրոնական եւ խախտման դպրոցների աշակերտները, վանքերում կրոնական դասավանդությամբ զբաղվողները, ինչպես նաեւ բարձրագույն դպրոցների աշակերտները, գյուղերի եւ կասաբաների տարրական դպրոցների առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի ուսուցիչները:

Սույն կանոնադրությունը հաստատված է ռազմական, ներքին եւ ֆինանսների նախարարությունների կողմից<sup>18</sup>:

20 ռեջեբ 1327 (6 հունիս 1909) թ.:

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 11**

#### **ՅԸԼԳԸԶԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

Արգելված է պատմության եւ աշխարհագրության վերաբերյալ «Հայաստան» եւ նման այլ անունների հիշատակումը<sup>19</sup>:

Կայսերական գլխավոր քարտուղար Թահսին:

### **ՎԱՎԵՐԱԳԻՐ 12**

#### **ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ ՄԱՐԱՇԻ ՍԱՆՉԱԿԻ ՆԵՐՍՈՒՄ ԶԵՅԹՈՒՆ ԿԱԶԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆԼԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**<sup>20</sup>

Մարաշի սանջակի ներսում «Ջեյթուն» կազայի անունը պատշաճ է համարվել «Սուլեյմանլը» վերանվանելու: Կայսերական այս հրամանի գործադրությունը հրամայված է ներքին գործերի նախարարությանը<sup>21</sup>:

Սուլթան Մեհմեդ Ռեշադ 17 ռեջեբ 1333 (8 հունիս 1915) թ.:

### **ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հրամանագիրը տրված է Սուրադ III-ի (1574-1595 թթ.) կողմից:
2. Բնագրի պատճենը տե՛ս I. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları, c. II, Ankara, 1944, s. 88.
3. Հրամանագիրը տրված է սուլթան Սիմեդ I-ի (1603-1617 թթ.) կողմից: Այն տրված է 16-17-րդ դարերում Օսմանյան կայսրությունում ծավալ-



ված ջալալիական շարժման առթիվ:

4. Գտնվում է Ամասիայից հյուսիս-արեւմուտք:

5. Դեռնելագորայից գումարտակ ենդիչերիական զորախմբում:

6. Բնագրի պատճենը տե՛ս Ի. Ուզունչարշըլը, նշվ. աշխ., էջ 88:

7. Այս վերնագիրը տրված է մեր կողմից պայմանակաճորդին: 17-րդ դարում Օսմանյան կայսրության ամբողջ տարածքը բաժանված էր առանձին նահանգների (էյալեթ կամ վիլայեթ): Վիլայեթը իր հեթքին բաժանվում էր սահմանների կամ լիվաների: Իսկ լիվաները բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների, որոնք կոչվում էին կազաներ: Իսկ կազաներն էլ բաժանվում էին նահիեների: Վիլայեթները կառավարվում էին սուլթանի կողմից նշանակված բեյլերբեյիների կամ միրմիրանների կողմից: Վիլայեթի կառավարիչն ուներ նաեւ փաշայի տիտղոս եւ հաճախ վիլայեթին տրվել է նաեւ փաշայություն անվանումը: Օսմանյան կայսրության վարչաքաղաքական բաժանումը որոշ տարբերությամբ տրվում է 16-17-րդ դարերի մի շարք թուրքական աղբյուրներում. տե՛ս Feridun bey, Münşeat ul-selatin, Istanbul, c. 2, s. 200 (արաբատառ):

Տե՛ս նաեւ Աննա Տվերիտինովա, Օսմանյան կայսրության ազրարային կառուցվածքը 15-16-րդ դդ.:

Մենք այստեղ առավել նպատակահարմար գտանք այն բերել 17-րդ դարի թուրք պատմագիր Այնը Ալիի գրքից, քանի որ այն առավել հավաստի է, ամբողջական եւ վերցված է պետական պաշտոնական ցուցակից: Նշենք նաեւ, որ Այնը Ալին հանդիսացել է Օսմանյան կայսրության արքունական դեֆթերխանեի պետը (տե՛ս Aynı Ali, Kavanin-i Ali Osman der hulasa-i mozamin-i defter-i divan, Istanbul, 1280, s. 7). Դարկ է նշել, որ 17-րդ դարի թուրք պատմագիր Քյաթիր Չելեբին իր «Ճիհան նյումա» աշխատության մեջ (զլ. 41) խոսում է Արմենիա երկրի մասին: Թուրք գիտնականը տվել է իր եզրակացությունները Դայաստանի սահմանների եւ 17-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ ընկած նրա տարածքի վարչական բաժանման մասին (տե՛ս Ա.Ֆ. Փափազյան, «Պատմական Դայաստանը Քյաթիր Չելեբիի «Ճիհան նյումա»-ում», Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հատ. 5, Երեւան, 1970, էջ 425-449): Անշուշտ, այս վարչական բաժանումը հետագայում ենթարկվել է հարստեւ փոփոխությունների, որը պայմանավորված է եղել թուրքերի նոր նվաճումներով եւ դրանից բխող տնտեսական եւ քաղաքական շահերով (տե՛ս Մ. Ջուլալյան, Արեւմտյան Դայաստանը..., էջ 117): Այն վիլայեթներում, ուր ազգային փոքրամասնությունները մեծամասնություն էին կազմում, թուրքական իշխանությունները ձգտում էին տրոհել կամ միացնել այնպիսի շրջանների հետ, որտեղ ապրում էին քրդեր եւ թուրքեր: Այս նպատակի համար հայկական նահանգներում վերաբնակեցնում էին նաեւ եվրոպական մասից եկած գաղթական թուրքերին:

8. 1635 թ. գարնանը սուլթան Մուրադ IV-ը հսկայական բանակի զլուխն անցած, եկավ պաշարեց Երեւանի բերդը: Թահմազ Կուլի խանը մեկ շաբաթվա դիմադրությունից հետո բերդը հանձնեց թուրքերին: Այնու-



հետև, Մուրադ IV-ը Մարանդի վրայով շարժվեց Թավրիզ: 1637-1638 թթ. թուրքերը առաջացան դեպի Միջագետքի խորքերը եւ գրավեցին Բաղդադն ու Բասրան: Այս պատերազմական գործողություններից հետո Իրանի եւ կայսրության միջեւ կնքվեց վերոհիշյալ հաշտության պայմանագիրը Կասրի Շիրհնում: Այս պայմանագրով Արեւմտյան Հայաստանը անցավ Կայսրության տիրապետության տակ, իսկ Արեւմտյան Հայաստանը՝ Արարատյան նահանգով մնաց Իրանին: Սահմանային այս բաժանումը գրեթե անփոփոխ պահպանվեց մինչեւ 1828 թ., այսինքն մինչեւ Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

9. Օսմաներեն շարադրված այս անանուն ուղերձը Լեյդենի համալսարանի գրադարանից 1968 թ. հայտնաբերել է Սուհեյլ Ունվերը եւ հրատարակել թուրքական պատմության ընկերության «Տեղեկագրում» (տե՛ս Belleten, 1969, N 129, s. 24-34). Այն ուղղված է սուլթան Մուստաֆա II-ին (1695-1703 թթ.): Տվյալ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունը գտնվում էր ներքին եւ արտաքին մեծ դժվարությունների մեջ: Այդ տեսակետից այս ուղերձը կարելի է համարել կարեւոր փաստաթուղթ 17-րդ դարի վերջում տեղի ունեցած դեպքերի մասին: Այն պատկերացում է տալիս ենիչերիական զորքի դրության, պետական պաշտոնյաների չարաշահումների, դրամի արժեքագրվման եւ գյուղացու ծանր վիճակի մասին: Քաղվածաբար բերել ենք այդ հատվածները, ուր խոսվում է ռեայայի մասին:

10. Անօրինական գաճմվող հարկեր:

11. Խոսքը Թոքաթի հայոց Քառասուն Մանկանց եկեղեցու մասին է: Այս իրադարձությունը արձանագրված է նաեւ «Պատկերահանի ավետարան» կոչված հայերեն ձեռագրի հիշատակարանում. «Ֆերման բերին զսուրբ Քառասնից եկեղեցին նորոգելու, առին հրաման եւ նորոգեցին ոչ թամամիլն (ավարտվել) ժողովեցան թուխաթու այլագզին ամենայն, գրոհ տուեալ հասին ի սուրբ Քառասունքն եւ քակեցին» (տե՛ս Մանր մատենագիրք, գիրք Ժ, ԺԵ-ԺԹ դար, հրատ. Գիտ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 378):

12. H. T. Çinlioğlu, Osmanlılar Zamanında Tokat, Tokat, 1950, "2-cı kısım, s. 34.

13. Այս թեզքերեն տրված է եղել կարնեցի երեսելի սարաֆ Մահտեսի Մանուկ Աստվածատրյանին (Ալլահվերդի Ամիրա): Թեզքերեի բնագիրը հրատարակել է Մ. Հնասերը (տե՛ս Կորսուելու ենթակայ վաւերաթուղթեր, Բազմավեպ 1934, թիվ 1, էջ 31):

14. Տվյալ շրջանում զինվորական ծառայության զորակոչը կատարվում էր հետեւյալ կերպով: Յուրաքանչյուր տարի վիճակահանություն էր կատարվում նույն տարում ծնված մահմեդական 180 զորակոչիկների միջեւ եւ ծառայությանը էր վերցվում մեկը, մյուսների վիճակահանությունը հետաձգվում էր հաջորդ տարի: Ոչ-մահմեդականներն էլ նույն հարաբերությամբ պետք է վճարեին 5 000 զուրուշ: Հարկ է նշել, որ բեղել-ի ասկերիեի գանձման եղանակը հարափոփոխ է եղել 19-րդ դարում:

15. Düstür, tertip-i sani, c. 4, s. 407-708.

16. Düstür, Tertip-i sani, c. 7, s. 615.

17. ԿՊուլսի երեք թաղամասերի (Էյուպ, Գալաթա եւ Ուսկյուտար) միատեղ անվանումը:

18. Düstür, Tertip-i sani, c.1, s. 42.

19. Արդուլ Չամիդ II-ի ժամանակ տրված այս հրահանգը ուղղված էր մանուկի գրաքննչական վարչությանը: Այն բաղկացած էր 9 հոդվածներից: 7-րդ հոդվածը վերաբերում էր Չայաստանին: Օսման Նուրին նշում է, որ այս հոդվածի հիման վրա գրաքննիչները խոսակցական լեզվից հանել էին նաեւ հետեւյալ բառերը՝ «հեղափոխություն», «ազատություն», «ազգային իրավունք», «հավասարություն», «հայրենիք», «ազգ», «պառլամենտ» եւ այլն: (տե՛ս Osman Nuri, Abdul Hamid sani ve devr-i sultanati, Istanbul, 1327, s. 582-583). (արաբատառ)

20. Չայտնի է, որ Ձեյթունը հայ ազատագրական պայքարի փառավոր ուղի է անցել: Չայ ժողովրդի հերոսական ինքնապաշտպանության դրվագներից է նաեւ թուրք զավթիչների դեմ ցուցաբերած Մուսա լեռան քառասուն օրվա հերոսամարտը: Այդ է պատճառը, որ հետագայում նույն բախտին արժանացան նաեւ Մուսա լեռը, դառնալով Օսման դաղը (նշանակում է Չարդի լեռ):

21. . Düstür, tertip-i sani, c. 7, s. 615.

**ՀԱՎԵԼՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԸ ԶԱԲԱՐԻԱՅ ԱՍՏՈՒԾԱԲԱՆ ՎԱՐՂԱՊԵՏԻ՝

ՊԱՏՐԻԱՐԸՈՒԹԵԱՆ ԽԱՍՏԻ ՇԵՐԻՖԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ  
ՕՐԻՆԱԿ Է՝

Ի Հայոց Կոստանդնուպօլսոյ զայս շնորհաւոր ֆերմանի իմոյ զմեծաւորի ազգի քրիստոնէի Զաքարիայ անուն վարդապետն (որ լրասցի զվերջն բարեալ): Ի շնորհաւոր հեծելոյն իմոյ՝ մատնահարեալ արզուհալ մատոյց, որ ի վերոգրեալ Կոստանդնուպօլսոյ եւ ցրուեալ յՈւռումէլի եւ Անատօլի եւ թապի եղեալ Հայոց նախընթաց պատրիարք Գրիգոր՝ վարդապետն. վասն ակնկալութեան իւրմէ ի Կոստանդնուպօլիս եւ կողմս սորա բնակեալ վեց ժողով՝ անուանեալ հայոց վարդապետ եւ քահանայք եւ ժողովրդապետք, եւ ծեր բայա աղքատքն՝ մահգերնէրովն ծանուցմամբ խնդիրք առնելոյն աղագաւ ի վերոգրեալ պատրիարքութիւնն իւրեան խնդիր եւ շնորհս եղեւ, բայց մինչեւ ցայժմ ի ձեռս նորա բարձրագօրծ ֆերմանս չէ տրվելոյն աղագաւ ի ձեռն նախընթաց Գրիգոր վարդապետի տուեալ պերաթէն տէրքէնար: Այսինքն յայտնի եղեւ եւ այն պատնառ եւ կանոնի վերայ, զմիրի նուէրն յարքունի խազնան իմոյ տալոյն յետ ի կողմանէ շնորհաւոր հեծելութեան իմմէ գառաջի կանոն եւ պայմանի վերայ ի ձեռս նորա բաց եւ յայտնի եւ բարձրագործ պերաթն իմ տրուելոյ եւ շնորհաւոր օրտուն իմ ծանուցանելոյ համար խնդիրք անելոյն աղագաւ ի Կոստանդնուպօլսոյ եւ ցուեալ յՈւռումէլի եւ Անատօլի եւ թապի եղեալ Հայոց ազգի պատրիարքութիւնն ի ժամանակի դարձուցանելոյն, ձՌ (100 000) ստակ միրի՝ նուէրն յարքունի խազնան իմ տալոյ վերայ եւ տարեգլուխ ձՆԻ (140 000) ստակ միրի մախթուլի ի վախճանմանց Յակօբ վարդապետէ՝ ի բուխն ձՀԷ (1177) զլիկիճնի ԻԵ (25)՝, յօրն ի Գրիգոր վարդապետի՝ յաւիտեանական դարձուցի եւ ի վերայ պերաթին շնորհաւոր գիրս արքունի քաշեցի, որ այժմ ի վերոգրեալ պատրիարք Գրիգոր վարդապետի վերայ լինիլն ծնեցեալ բարձրագոյն ֆերմանի իմոյ կերպիւն

Ի ձեռս նորա եղեալ հին պերաթեն կերպաւորեցելա լինելոյն աղագաւ, ի վերայ խնդրանաց իւրեան պատրիարքութիւնն ի վերոգրեալ վարդապետին դարձաւ, եւ ի կողմանէ շնորհաւոր հեծելութենէ իմմէ շուրութով պերաթն եւ շնորհաւոր օրտուն իմոյ ծանուցանելոյ համար, բարձրագործ ֆերման ծնելոյն աղագաւ կանոն եղեալ զընծային համար, պիտոյ եղեալ վերոգրեալ ճՌ (100 000) զըստակն արքունի խազանս իմոյ տալոյ համար շնորհաւոր րուզնամէի սուրբէն տրուելոյն աղագաւ ծնեցեալ ֆերմանի իմոյ կերպիւն ի վերոգրեալ պատրիարքին դարձաւ եւ ի թուին ՌՃՀԸ (1178) սէֆերի ԺԶ (16)-ին՝ զայս բարձրագործ պերաթս իմ տուի եւ հրամայեցի, որ ի վերոգրեալ Զաքարիայ անուն վարդապետն (որոյ լրացի զվերջն բարեաւ) երթայ ի վերոգրեալ Կոստանդնուպօլսոյ եւ ցրուեալ Ուրումէլոյ եւ Անատօլու եւ թապի եղեալ տեղորայքն բնակեալ յառաջնորդաց եւ քահանայից եւ այլ Հայոց ժողովրդոց վերայ հնուց եղեալ կանոն եւ զօրինացն իւրեանց վերայ պատրիարք լիցի եւ ի միջի պատրիարքութեանն եղեալ տեղոց՝ զառաջնորդք եւ քահանայք եւ այլ Հայոց ժողովրդոց մեծք եւ փոքունք ի վերոգրեալ Զաքարիայ վարդապետն ի վերայ իւրեանց պատրիարք գիտեանն եւ պատրիարքական զօրինօք ընկած բաներնին ի նա դարձուցանեն եւ ծանուցանեն եւ յուղիղ խօսակցութենէն նորա բան չանեն եւ ի պատրիարքութեանն նորա թապի եղեալ առաջնորդք եւ սեւագլուխք<sup>10</sup> եւ քահանայքն ի վերոգրեալ պատրիարքն ի վերայ զօրիանց իւրեանց հանելոյ եւ նստուցանելոյ որ լինի, յայլմէ մարդ միջամուխ չի լինին եւ չի խառնուին: Եվ պատրիարքին մինչեւ մատնահարեալ արզն որ չի լինի դատաւորի արզով եւ արզուհալով, մէկին առաջնորդութիւն չի տրուի եւ այլ վակֆական եղեալ բաներնին պատրիարքին գիտութեամբն լիցի, յայլմէ մարդ միջամուխ չի լիցի եւ մեռնող քահանայից եւ կարգաւորաց եւ յառաջնորդաց եւ սեւագլխաց եւ մայրապետ անուանեալ կարգաւոր կանանց ի վերայ կանոնի իւրեանց պատրիարքին եկած գմացուածքն ի վերոգրեալ պատրիարքն եւ կամ ի կողմանէ նորա եղեալ վերիլներն միրիի համար բռնելոյ եւ առնելոյ, որ լինին, զառաջի կանոնէ դուրս պէյքիմալ եւ դասամի մարդիքն միջամուխ չի լինին եւ յառաջմէ բռնած եւ դարձու-



ցած յեկեղեցեաց եւ վանքից եւ ուխտատեղեաց եւ իւրեանց քապի եղեալ յառաջմէ սովորութիւն եղած եւ մինչեւ ցայժմ մնացեալ գօրեւնքին կատարելոյն եւ սահմանացն իւրեանց եւ մեծապատիւ ֆէթ-վայի եւ յատուկ բարձրագործ ֆէրմանի եւ եկեղեցեաց եւ վանքերոց եւ տալոյ եկած ֆէրմաններաց ի կողմանէ գաւառապետէ եւ յայլմէ: անպատեհաւ միջամուխ եւ ձեռնամուխ չի լինին, եւ պատրիարքին գիտութիւնն եւ հրամանն չեղած յօրինէ դուրս երբեմն գիւղօրէից քահանայքն պսակի արժան չեղած հայուն պսակ չանեն: Եւ մէկ Հայոց կինն յիւր այրէն փախչի եւ մէկ հայ մի կին թողելոյ եւ կամ թէ առնելոյ որ լինի, ի միջի նոցա պատրիարքէն եւ կամ թէ վէքիլներէն ուրիշ մարդ չի մտանէ եւ չի խառնուի եւ, մեռնօղ հայ առաջնորդք եւ քահանայք եւ այլ Հայոց ժողովուրդն ի վերայ օրինաց իւրեանց եկեղեցւոյ աղքատաց եւ պատրիարքին յոր ինչ կտակ որ անեն, ընդունակ լիցին եւ հայ վկայութիւն շէրով մտիկ անեն, եւ ի դուրս օրինաց իւրեանց շարժօղ հայոց առաջնորդք եւ քահանայք եւ կարգաւորքն ի վերոգրեալ պատրիարքն ի վերայ օրինաց իւրեանց ուսուցանէ եւ զմագերն վարսաւիրէ, զիւրեանք ի քահանայութենէ եւ ի սեւազ լիութենէ հանէ եւ զեկեղեցիքն այլոց տալոյ որ լինի, միջամուխ չի լինին: Եւ ի պատրիարքութեանն քատի տեղոց ի վերայ հին օրինաց իւրեանց յեկեղեցական եղեալ զայդի եւ պախնայ եւ չիֆթլիկ եւ չայիր եւ արտեր եւ չաղարջք եւ աչագմայ եւ բանայիր եւ վանքեր եւ տներ եւ խանութներ եւ պտղաբեր եւ անպտուղ ծառք եւ այլ սոցնպէս եկեղեցւոյ վախֆ եղեալ իրք եւ տավարներն առաջի կանոնի վերայ զայս բարձրագործ պերաթովս հայոց պատրիարք եղեալ Ջաքարիայ անուն վարդապետի կողմանէ բռնել եւ զապթ անել տուի, յայլմէ միջամուխ չի լինին: Եւ եկեղեցեաց եւ վանքերուց փոխանորդ լիցի եւ պատրիարքութեան ընկած իրաւունքն ուսօղ եւ կլանօղ քահանայից եւ կարգաւորաց պատրիարքին հիսապնին որ տեսանէ, գառաջի կանոնէ դուրս յայսմէ միջամուխ չի լինի: Եւ երբեմն մեծամեծ մարդիկ, զայս քահանայն հանէ եւ զեկեղեցիկն նորա այս քահանային տուր տէյի եւ կամ թէ զայս հայու կինն այս հայուն պսակ արէ տէյի, դուրս օրինաց իւրեանց գօր եւ իննիթմիշ չանեն ի հայոց ազգէ ոմանք, զեկեղեցի



եւ վանք չունենալուն աղագաւ ի տեղէ ի տեղ շրջագայելով, ուղիղ հայ րայեաներուն օրինաց իւրեանց դուրս չարութիւն անօղ չարերն պատրիարքին գիտութեամբն եւ բարձրագործ ֆէրմանիւ ամով բռնեն եւ հախերնուն պիտոյ եղածն կատարեն: Եւ պատրիարքին անցած եւ դարձած տեղուանքն հանդերձ եւ կերպարանք փոխելոյ որ լինի, կողմանէ գաւառապետէ եւ բռնաւորէ անպատեհառ միջամուխ չի լինին: Եւ պատրիարքն իւր օգուտ եւ շահին համար հասըլ եղած այգուց մահսուլն եւ ողորմութեանն անուան հայոց ազգէն տալոյ եկած շիրէ եւ մեղր եւ իւղ եւ ալ իրքն ի տուն իւր վերցնելու եւ տանելու որ լինի, խկելէտք եւ դրոուիքըն եղեալ բռնաւորէ եւ եասախնոցմէ մէկ մարդ մի դուրս ի կանոնէ իննիթմիշ չանեն եւ դատաւորի հրամանաւ վայր դնելու պետք եղած հայոց քահանայք եւ կարգաւորքն պատրիարքին գիտութեամբն վար դրուի եւ մէկ հայուն իւր կամքն չեղած գօտով տանիկ չանեն եւ պատրիարքին կամքն չեղած մեք քեզի գօտով եասախնի կկանք տէչի եւ ալ միհանայիւ դրանս ծառայից կողմանէ ինֆիթմիշ չի լինի: Եւ տարեգլուխ արքունի խագնա իմոյ քանի որ թեսլիմանէ պատրիարքութիւնն վերոգրեալ պատեհառ եւ կանոնի վերայ դարձուցանող լինի եւ յաւիտենական գապք անէ եւ ի դարձուցանելոյն նորա ի կողմանէ յայմէ մէկ մարդ մի յետ չի լինի: Եւ պատրիարքի կողմանէ ողորմութիւնք հաւաքելոյ համար ուղարկած վարդապետաց անցած եւ դարձած տեղորէից գաւառապետաց եւ բղնաւորաց կողմանէ միջամուխ չի լինին: Եւ ի դուրս օրիանց իւրեանց պսակ եղեալ լինելոյ աղագաւ, այնպիսիքն մեռած ժամանակն, դատաւորք եւ նայիպք եւ ալ գապիտներն դուք վերուցէք տէչի քահանայից չօռ եւ եզիէթ-անել չի տրուի: Եւ պատրիարքն քանի որ պերաթի կանոնի վերայ շարժումն առնէ, չպատրիարքութիւնն բնաւ ուրիշ չի տրուելու վերայ ի տեղն իսպտ եւ յայինելոյ լինելոյ աղագաւ բարձրագործ պերաթիս կանոնէն դուրս յայմէ միջամուխ եւ ձեռնադրութիւնն չանեն տէչի ի մէջ շուրութի նօրա գրեալ եւ յայտնեալ է: Եւ ի վերոգրեալ Ջաքարիայ վարդապետն (որոյ լրացի գվերջն բարեաւ) ի համեմատ ի իւրոյ նման ինքն եւ դրան քեահիեայիւն միատեղ տասն եւ հինգ մարդկանց խարան եւ ավարիզ եւ կանոն

եղեալ քէքլիֆ չի ուզվի, եւ ի գապթս եղեալ քաղաքաց մէջն եղեալ յեկեղեցեաց եւ վանքերուց մէջն բնակեալ քահանայից եւ սեւագլխից քէֆթիշ, աշխնքն քննութիւն եւ նիսապնինն պատրիարքին եւ վերքիլներուն գիտութեամբն տեսնուի: Եւ հնուց հայոց յատուկ եկեղեցիքն եւ վանքերն վաշայ եւ միւսէլիմ եւ վոյվօտայ եւ դատաւորի արգով եւ մուրասալալովն ուղիղ հայ ըայաներուն ձեռացն չի առնուի, ուրիշ օրինաց վերայ եղեալ կաթօլիկ անուանեալ չարագործաց չի տրուի եւ օրինաց վերայ եղեալ կաթօլիկութեանն նախատանօք, նախատեցեալ չարագործաց ներիմեներուն համար՝ ուղիղ հայ ըայաներից նեղութիւնն չի տրուի եւ իննիքմիշ չանեն: Հայոց պատրիարքի գիտութեամբ եւ ծանուցմամբ հախերնուն պիտոյ եկածն ի վերայ օրինաց իւրեանց կատարեսցեն, եւ այնպիսի չարագործաց ներիմեներուն համար եղեալ բազում պարտուցն համար ի քաղաք եւ դասապայք եւ գիւղօրայքն եղեալ եկեղեցեաց եւ վանքերուց իրքերուն ձեռնադրութիւնն չի անեն: Եւ թէհին ըլլալու համար առնել եւ բռնել չի տրուի, եւ մէկ կերպիւ առնուած կանէ, դատաւորի գիտութեամբն յետ դարձուցանեն եւ ի տեղորայքն տրուի: Եւ ի վերայ հին օրիանց իւրեանց մէկ հայ կին թողուլ եւ ի վերայ կնոջ կին առնուլ, առաւել օրիանաց իւրեանց հրաման չի տրուի, ուսուցանեն եւ գալանջս նոցա օլըրեն: Եւ ի յեռս պատրիարքի եղեալ գաւազանին միջամուխ չի լինին եւ չմիտի մախթուն հաւաքելոյ համար անցօղ եւ դարձօղ սեւագլխից անցած եւ դարձած տեղօրեից դիւր պատնառիւ անցանելոյ համար ի վերայ նոցա եղեալ սիւահ, որ է գէնք, եւ տավարներուն ի կողմանէ գալառապետէ եւ գայլք միջամուխ չի լինին, եւ իւրեանց յատուկ եկեղեցական իրքերեն դուռիքն եւ իսկէլէներն կէօմրիկ եւ պան չուզուի եւ երբեմն էշրաներաց աշխնքն անպիտանաց յայտնի եղած տաւաներն ուրիշ տեղորայք մտիկ չանեն շնորհաւոր յատեանն իմ տեսանելոյ վերայ ի շնորհաւոր շեմոյս հեվալէ անելոյ համար ի համեմատի իւրոյ շուրութն ի պերաքի նորա մատուցանելոյ համար՝ արգուհալով խնդրելոյն աղագաւ զհամեմատ նորա եղեալ Կոստանդնուպօլսոյ եւ Օխրիոյ պատրիարքութեանն պերաքին շուրութն տեսայ, որ Կոստանդնուպօլսոյ եւ Օխրիոյ պատրիարքներն եւ խզմեթս նոցա

եղեալ դրան քեահիաշովն տասն եւ հինգ մարդերքն խա-  
րան եւ ավարիզ եւ կանոն եղեալ քէքլիֆ չի ուզվի, եւ դա-  
տաւորական պիտոյ եկած տավանին շնորհաւոր յատեանս  
իմոյ մտիկ տէյի ի պերաթնեբուն շուրուքն գրեալ լինիլն  
յայտնի լինելոյն աղագաւ, արգուհայն եւ տերքէնարն ի  
համեմատի նորա պերաթի շուրուքի մեջն մատուցանելոյ  
համար, նախ ծնեալ շնորհաւոր ֆերմանի իմոյ կերպիւն ի  
մէջ շուրուքին մտանելոյ աղագաւ ի Կոստանդնուպօլսոյ  
եւ թապի եղեալ հայոր պատրիարք Ջաքարիայ վարդա-  
պետն, որոյ լրացցի զվերջն բարեաւ, ինքն եւ դրան քեա-  
հիացիւն միատեղ տասն եւ հինգ մարդկանէ, խարան եւ  
աւարիզ եւ այլ քէքլիֆ չի ուզվի, եւ դատաւորական պիտոյ  
եղած տա անին շնորհաւոր յատեանս իմոյ տեսանելոյ  
պատնառի վերայ ի մեջ պերաթին մտեալ մէկ կերպիւ յետ  
բնօղ եւ յետ անօղ եւ յետ թողօղ չի լինին եւ ընաւ միջա-  
մուխ եւ դիմադարձութիւն չանեն, այնպէս գիտացցեն եւ ի  
շնորհաւոր նշանի իմոյ դիմանան, այսինքն համբերու-  
թիւն արացցեն:

ՕՐԻՆԱԿՆ ՖԷՐՄԱՆԻ ՂԱԼԱԹԻԱՅՈՒ ՎՕՅՎՕՏԱ-  
ՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԻԻ՝

Գերապատիւ հզօր զօրութեամբ արքայական դրանս  
հաւատարիմ ցուցեալ վօյվօտայիս, որ հաստատեալդ ես ի  
կողմն Ղալաթիայու, ի մօտիլ ի մերձիլ մեծի հրամանիս  
զեկ լիցի, Իսքամպօլ եւ գումարեալ ժողովրդոցն հայոց  
վերակարգեալ պատրիարք Ջաքարիայ անուն եպիսկոպոս  
գերապանձ տերութեան ինքնակալ իշխանութեանս մերոյ  
կնքեալ նշանին ծիր աղերսանաց առաքեալ էր առ մեծու-  
թիւնս մեր, որ զմիտ բանիցն բարձեալ էր այս ինչ, զի ի մե-  
ծի քաղաքիս իմոյ բնակեալք ազգն հայոց գտանին ոմանք  
հետտեալք ի հաւատոց, որոյ յատկական անունն կաթօլիկ  
ձայնեալ, եւ օր ըստ օրէ հաւատովն այնու զբազում ան-  
ձինս որսացեալ նոյացեալ գտան, զի մեծք եւ փոքունք,  
յայտնի եւ անյայտ եւ մուտս առնեն յեկեղեցիս ֆրանկ-  
կաց<sup>12</sup> եւ ի տունս իւրեանց զփաթերայս տանելով զկարգ ե-  
ւ զկանոն ֆրանկաց բացարձակ կատարելով գտուն տեղի  
եկեղեցւոյ արնելոյ գայս ապա կարգ ու անօրէն գնացս ի

լուր քագաւորութեանս հասանելով, որք անկասկած մնա-  
լով սարսափելի պատժոյն արքայականի, գայնպիսի ան-  
ձինս կարողիկս՝ կայունս ի նոցին հաւատս ըմբռնեալ չա-  
րաչար պատժօք յանձնեցեն յարքունական նաւս եւ ի  
քիս ծառայութեամբ կեալ ի նոսին որպէս գերի ըմբռնեալ  
ի թշնամոյ քանգի մեծի տէրութեանս ի գլխահարկսն  
հաւատարիմ ենթարկեալ ազգն հայոց ներ որոց այս կոխ  
եւ վեճն գօրանալով, վասն սիրոյ հաւատոյն կուեցան լինի-  
լ ազատս եւ գայնպիսի հետտեալս ոչ գտանիլ ի միջի իւ-  
րեանց վասն այնորիկ ազգին հայոց բաժանեալքն ի հաւա-  
տոց մեծ եւ փոքր, որ ի Ղալաթիայ ի Փրանկ եկեղեցիս եւ  
չիք կարգաւորք եւ վարդապետք ի տունս հայոց տուն մտա-  
նելով եւ զմիտս հաւատոց այլափոխելով գայնպիսի ան-  
ձինս արգելեալ ի մտանելոյ Ղալաթիայու վօյվօտային  
հրամանաւն կապանօք ըմբռնեալք եւ ի տեղիս եւ ի տունս  
ժամանակագրութիւնն Ֆրանկաց մի լիցին համարձակ ի  
կատարել եւ կանայք ոմանք գոլով մանկամարդք եւ  
առանց առն չիք կարգաւորք նոցին մտանել ի տունս ալն-  
պիսեաց առ ի ծածուկ կատարել զծէսն Ֆրանկաց մինչ ազ-  
ղեսցեն եւ գտեղս նշանաւ ցուցցեն, այնք եղեալ մահալլե-  
յի իմամի գիտութեամբն՝ եւնիչէրի աղասի եւ վօյվօտայի  
հրամանօք եւ բունն գօրութեամբ կալեալ եւ կապեալ ի  
Թէրսխանէն մեծի տէրութեանս յանձնեցեն եւ փոխանակ  
սպանելոյ ի քի եւ յարքունական չէքտիրէն յղեսցեն եւ  
մինչեւ հայոց պատրիարքին կնքեալ նշանաւ արգուհալն  
չի լինի, գայնպիսի նենգաւոր անձինս ի քիրէկէն եւ ի յար-  
քայական պատժոյն մի գերծեալ ապրեցունցանել կարողաս-  
ջիք, այլ մնալով կացցեն ի պատիժս կանանց ոմանց գկնի  
խրատելոյն եւ յորդորելոյն մինչ ոչ գայցեն ի յուղղութիւն  
գայնպիսի կանայսն արգելցեն ի բանտ, որք ստարան պատ-  
մութեամբն իւրեանց պատրեն զպարգամիտս նաեւ յառաջ  
քան գայս բարձրագոյն հրամանիս մերոյ հասն լինիլն  
ազգն հայոց տակաւին ոչ երբ եւ եկս ունենալով յեկեղե-  
ցիս Ֆրանկաց եւ ոչ այսքան համարձակութիւնս դեռեւս  
ստացեալք յայնմ ժամանակի ի նախնի արքայից հրաման  
եղեալ է զինչս եւ գտացուածս չարափառաց ի յարունիս  
կալնուլ զինքն տալ ի ծառայութիւն Թէրսխանային որ  
եղեալ է այն ի մերում բուի հարիւր հիսուն իմալիւ<sup>13</sup> վն-



ոեցեալ: Եւ ոմանք չար անձինք երեւեալք, որք թռչուն գառ եւ գտունս իւրեանց եւ հետեւին նենգաւորական եւ խարեական արարմանց եւ զմիմիեանս մատնելով եւ սուտ տաւալից ձեռնարկելով եւ ոմանք եւս չար իմաստք տալանիներաց փոխանորդ լինելով եւ կամ բռնութեամբ սուտ վկայս կացուցանելով բազում եւ շատ մարդկանց ըստ ից իմոց գտունս ավերեալ են յորոց չարութեանց եւ խարեական արարմանց, անհանգիստ կելով ըստ ից իմ, բողոք բարձին ի դրունս արքայի: Այլ եւ ոմանք եւս զձեւ հանդերձին փոխելով եւ զինքն այլատարագ անձն որ երեւեցուցեալ գաղտագողի նանայարհով մտանեն ի յեկեղեցիս ֆրանկաց, մինչ այնպիսիսն տեսանեն եւ տեսանէք իմանան եւ իմանայք ընդ վերագրեալ հրամանիս պատժելով անարգեսչիք եւ զանպիտան որ համարեսչիք, զի եւ այլքն տեսցեն երկիցեն եւ զինքեանս ուղղիցեն եւ եեցիչերի աղային իմոյ հրամանաւն եւ ի կողմանէն մարդ լինելով յղեսցեն զբմբռնեալ կաթօլիկսն ի քերսխանէն, զի կատարելով զծառայութեան գործն թագաւորութեանս խրատելով խրատիցի եւ պատուհասիք թերեւս զգուշացի ի չար աղանդոյն: Քանզի ի հարիւր յօթանասուն եւ չորս թուոջն<sup>14</sup> երեք կերպ մեծասաստ եւ արդիւնաւոր բանիք հրաման ելեալ էր ի յինքնակալ տերութենէ: Վասն այս չարագործ եւ այլածեւ կաթօլիկ անձանց վկայալ են մեծագօր տերութիւնն օսմանցւոց գոյ սորա խարեբայք չարի եւ հակառակ թշնամիք անձինք նենգաւորք, ուստի եւ խղնալի ըստ իցն իմ հաւատարիմք, անհանգիստ մնալով ի ձեռն սոցա, որք միշտ գայրակղութեամբն եւ չարութեամբն իւրեանց զուղիղ կանոնն հայոց ըստ իցն իմոյ արգիլեն եւ ի ստոր արկանեն, վասն այսր պատճառի ողորմելով մեր ի վերայ ըստ իցն զի մի լիցին ոտնակոխ այնպիսի չարագործաց նոր ի նորոյ հանի զբարձրագոյն եւ զմեծասաստ հրաման աղերսանօք հայոց պատրիարքին կնքեալ արգիւն: Որ մեծապէս հայցեալ էր ի տերութենէս մերմէ, շնորհել ինքեան եւ ազգին իւրոյ զողորմութիւն ինչ այնպիսի որ զչարագործսն զայնոսիկ արքունական հրամանաւ պատժիցեն եւ մեք հրամայեցաք պատժել զայնպիսին մանաւանդ որ ի կողմանէ պատրիարքին ազղեսցեն զայնպիսի չար մարդիկս եւ նշանեսցեն զի պատժելով պատժիցի եւ սրտի մտօք



անարգեացեն: Եւ հաստատեալ եղեալ կանոնս իմ առ ի գօրութիւն ունելոյ եւ բացարձակ ի գործ անելոյ քարտուղարին իմոյ եւ արքայական դիւանին (րէյիս էլ քիթապիլամովն եէքմիշ պէշ սէնէսի<sup>15</sup>, այսինքն տարւոյ անցնելոյ): Աստուածապարգեւ եղբայրն իմ հանգուցեալ եւ լուսաւորեալ սուլթան Մուստաֆայ արքայն<sup>16</sup> (որոյ գհոգին տէր պայծառացուցէ) յոյժ սաստկութեամբ եւ կարի յանդիմանութեամբ վնեալ էր ի բաց բռնալ զչարագործսն զայնոսիկ: Բայց արդ յաջողմամբն բարձրելոյն մինչ հասաք ի ծայրագոյն զագաթ թագաւորութեանս մերոյ պարտ էր եւ մէյ զառաջնոց զհրամայեցեալսն եւ մեք եւս հրամայեալ եւ նորոգ հաստատել մինչ հայցուածք ազգի եւ թայայի էր ի կանոն ուղղութեան: Վասն որոյ ի թուոյս նարդենւոյ հրամայեցի եւ հրամայեմ զայնպիսի կաթօլիկս չար անձինս եւ հակառակս թայային մերոյ պատժել անարգել եւ վասն բարեկամութեան եւ սիրոյ մեծամեծքն իմ մի աղանիցեն եւ մի ակն առնուցուն եւ այնպիսի (մուֆսիտ) այս է պիղծ եւ չար մարդկանց ինչքն յարքունիս ինքն արկցի եւ թիւ վասնորոյն դուք որ մեծամեծք էք թագաւորութեանս իմոյ եւ հաւատարիմք դրանն իմ՝ Վոյվօտայ եւ եէնիչէր աղայի պարտիք լաւապէս եւ սրտի մտօք ըստ իմոյ հրամանի զայնպիսի կաթօլիկ չիք միւֆսիտներն այսինքն պիղծք անարգել, թշնամանել եւ զթիւրեալ հարձուածական կռապաշտական հաւատան նոցին չթողուլ կատարել եւ ծածկապէս երթ եւ եկքն յեկեղեցիս լատինականաց յազգեն հայոց լաւապէս քննիցէք, զննիցէք, եւ որոնիցէք պատրիարքին հայոց ձեռամբ եւ կացուցեալ մարդովն կայեալ ըմբռնեալ եւ ի պատիժս հասուցեալ, իրբեւ զթշնամի նշանեջիք զայնպիսին, զի եւ այլոց խրատ եւ օրինակ լիցի եւ տեսեալ զնոսս ի պատիժս ուղղիցեն զթիւր կարծիսն իւրեանց եւ ըմբռնեցելոց զինչս ի գանձարան արքայիս յանձնեցին եւ զինքն մերկացուցեալ ի թի ծառայութեան թագաւորութեանս յղեցան եւ այս իմոյ հգօր եւ բարձր հրամանիս ի վեր քան զչափն հնազանդեալ կատարել փութասջիք եւ բան մի ինչ մի պակասեցուցանել եւ կամ աշտոն զի յետոյ վնաս մեծ առ մեծամեծսդ պատահի ուստի ի հաստատիլ եւ ի նորոգիլ մեծի հրամանիս իմոյ հրամայեմ բարձր հգօր եւ սուրբ իշխանութեամբս ի հասանիլ ֆերմանիս իմոյ առ

ծեզ ըստ այսմ գրելութեան հրամանի եւ արքայական վե-  
ռոյս, որպէս եւ գրեցաւ եւ հրամայեցաւ, զնոյնս անյապաղ  
կատարել եւ միով զպատուիրանաւ իմով ոչ անցանել այլ ի  
լրումն եւ ի գլուխ բերել եւ սրբոյ դրօշակի թագաւորու-  
թեանս ծառայօրէն հպատակ կեալ:

Ի ՂԱԼԱԹԻԱՅ ՆՍՏԵԱԼ ԴԵՍՊԱՆԱՑ ՖԵՐՄԱՆԻ ՀԱՅ-  
ԿԱԿԱՆՆ Է

Ի գալ հասանիլ բարձրագոյն հրամանիս յմոյ առ սի-  
րագնեայդ իմ յարգելի մօլլայիդ Ղալաթիայոյ եւ վօյվօ-  
տայի նորին Իսթամպօլ եւ գումարեալ ժողովրդոցն վերա-  
կացու պատրիարք Զաքարիա եպիսկոպոս կնքեալ նշանաւ  
իւրով արգունհալիւ գիր աղերսանաց մատուցեալ էր առ վե-  
հապանձ տէրութիւնս մեր գօրոյ զմիտն ասութեան էր այս-  
պէս: Զի ի մէջ հայոց գայթակղական վրդովմունք գոլով ե-  
ւ ի բնէ հռչակեցեալ հերձուածողոս թիւնն սերմանեալ առ ի  
քաղահան առնել եւ ի յարմատոյն քանդել ազդումն արա-  
րի գերապատիլ բոյեշխ փոխանորդին իմոյ, զի որ երբ եւ  
եկս առնեն յեկեղեցիս ֆրանկաց միւֆասիտներն եւ չար  
հերձուածողքն զել եւ զմուտ նոցին խափանել, պատուհա-  
սիւք պատժել ըստ բարձրագունի եւ գօրեղ հրամանիս  
իմոյ թագաւորութեան նաեւ Ստամպօլ Ղալաթիայ եւ մեր-  
ձակայ տեղեաց նոցին բնակեալք չիք կարգաւորք եւ իշ-  
խանք առ ի ապահովս կեալ մատնեն եւ նշանաւ ցուցեալ  
փաթերայից իւրեանց եւ էլչոցն ապաստան անկեալք ամ-  
բաստանեն զնշմարիտ իսկական ազգն հայոց, թե այս ինչ  
անձն եւ իշխան արգելու զմեզ եւ ոչ թողու բացարձակ գօ-  
րէնս ֆրանկաց կատարել եւ յեկեղեցիս նոցա մտանել,  
վասն որոյ օգնեցէք մեզ ո՞վ էլչիք: Եւ այսու նենգապա-  
տիր խորհրդեամբ միշտ կամին մաքառիլ ընդ հայոց եւ  
հաստատեն ի մէջ իւրեանց զոմանս իսկական հայս եւ գո-  
մանս կաթօլիկս չարս առ ի վրեժխնդրութիւն ընդ ըայային  
իմոյ եւ լինի զի ի բարեկամաց իւրեանց տանիկ եւ կամ այլ  
ազգ քրիստոնեայ եւ ի կանանց եւս կացուցենն զվկայս  
սուտս եւ բազմաւ հաստատուն իրականութեամբ իֆթիրայ  
եւ ստաբան առարկութեամբ առաջի մեծի դատարանի եւ  
ուղիղ շէրաթին մերոյ հաւատացեալ (ի վրեժ) ի պատիժ եւ

ի յաքսորս փութան էլչի կոչեցեալ մեծաւորաւն արգ առնել կամին, որոյ արգիւն եւ մեծամեծք տէրութեանս իմոյ իլամ արարեալ եւ ըստ օրինակի իլամին ֆէրման հանեալ զպատժելիսն պատժել եւ զաքսորելին աքսորել ըստ որում վկայութեամբն իւրեանց եւ որոգայթ չար խաբէութեամբ խաբեն նաեւ զմեծամեծս իմ եւ թիւրեն զկանոնն ուղղութեան մերոյ սրբոյ վասն այսր եթէ իլամն եւ ֆէրմանն որ որոգայթի եւ չար հնարիւք իցէ մի լիցի հանելի եւ ընդունելի ալ ընդ խաբէական բանիւ իւրեանց արտահանեալ ֆէրմանն եւ ընդ որում մաքառեալ իցեն՝ այս է բուն ազգաւ հայ ըայային իմոյ թշնամանեալն եւ թշնամանօղն ի միասին առաջի կացեալ մեծի խորհրդեան դատաստանի իմոյ յայգոյ եւ փառաւոր չավուշ պաշիի գիտութեամբն եւ մեծի բղեշխիս փոխանորդի իմոյ վերահասու նանաչմամբ ըստ արդար եւ ճմարիտ ուղղիղ կանոնին մերոյ մինչեւ ոչ դատիցին եւ դատաստանն արդարութեամբ լեալ ոչ վնահատիցին արարեալ իլամն եւ ֆէրմանն ոչ է ընդունելի եւ անկանոն համարեսցի: Իսկ եւ ի բնէ հրամայեցեալ ի մեծի տէրութեան օսմանցւոց կերպի եւ օրինակին պարտի ի գործ ածիլ ըստ այնն: Վասն այն չարագործ եւ միւֆսիթ նենգաւորաց ազատ մնալոյ ըայայքն իմ: Առաջին պատրիարքն հայոց արգուհալ էր տուեալ եւ հայցեալ ի մեծէ կայսերութենէ շնորհել զայսպիսի ֆէրման, որ օրինօք ֆրանկաց գոլով եւ ձեւակերպութեամբ հայոց շրջելով եւ գլուխ առաջնորդ լինելով: Գրիգոր ոմն խաբէական եւ որոգայթ խօսիւք դարձուցեալ է զբազում ըայացս իմ ի կողմն ֆրանկաց, ուստի եթէ հրարիւք վկայութեամբ ազգին իմոյ տանկաց եւ այլոց անձանց ըայայիցն արանց եւ կանանց թէ ի Ղալաթիայու եւ թէ ի Ստամպոլու եւ յայլոց տեղեաց որք գան ի դատարանն թագաւորութեանս իմոյ եթէ վասն առնելեաց իցէ եթէ այլ ինչ ամբաստանութիւնք իցեն, որք զկողմն ըայային հայոց ազգին ստոր անկեալ ոչնչացուցանել կամին եւ էլչիյին արգիւն եւ արգուհալիւն եւ կամ այլածեւ փոխարկեալ բանիւ իլամք եւ վնիոք իցեն, որ գրեալ է ի յիլամոջ, թէ այս ինչ անձն ի յաքսորս եւ ի թէրախանէ վնոեցաւ զնալ եւ ֆէրմանն եւս եթէ իցէ հաստատեալ եւ գրեցեալ արգիւն էքչոց՝ մի լիցի ընդունելի եւ անկանոն երեւեալ զհրամայեցեալսն ի ֆէրմանին, մի իշ-



խեսցէ որ ի գլուխ բերել այլ ձեռամբ Ղալաթիայու վոյվո-  
տային: Նոյն ֆէրմանն եւ իլամն, որ արգիւ էլչոցն է եւ  
խաբեական հնարիւք իցէ հրամայեցեալքն եկեսցեն ի յա-  
տեան ուղղութեան առաջի յարգոյ չափուշ պաշուն եւ գի-  
տութեամբն նորին ելցեն ի դատաստան նշմարիտ կանոնի  
սահապ դէվլէք վէգիրին իմոյ եւ մինչ իրին նշմարտու-  
թեան եւ որպիսութեան անցիցն ոչ տեղեկացի եւ յարսոր  
եւ ի բանտ եւ յայլ պատիժ ինչ մի անցէ ի վերայ ըստայիս  
իմոյ եւ մի խոշտանգեսցին: Էթուին հարիւր քառասուն ե-  
ւ մէկն<sup>17</sup> ընձեռեալ էին այս ֆէրմանս գթութեան, մեծագոր  
տէրութիւնք օսմանցւոց, որոց հրամանաց եւ մեք ալ ձեռն  
բերել կամեցաք, որպէս եւ ի թուին հազար հարիւր յիսուն  
եւ ութն<sup>18</sup> գերապանձ նախնի արքայն հարքն մեր սուրբ  
հրամանն իւրանց շնորհեալ էին ազգին հայոց վասն այսր  
եւ մեք մինչ հասեալ ի ծայրագոյն գագաթ թագաւորու-  
թեանս իմոյ եւ բարձր հզօր տէրութեանս մեր լուսազար-  
դեալ երեւեցաւ ըստ առաջնոյ մեծի հրամանի ինքնակալ  
տէրութեան մերոյ եւ ի նոյն միտս եւ մեք հրամայեցաք նո-  
րոգ հաստատել մինչ թախանձանօք խնդրեցին: Եւ ես ար-  
քայս հզօր խնդրեցի ի պահպանեալ մատենագրացն եւ  
հարցն ի մոց կանոնագրութեանցն, եթէ լեալ իցէ ի նոսա  
այսպիսի ինչ հրաման արասցուք եւ մեք, որ եւ ահա գտաւ  
ի դիւան մատենին՝ գոյ եւ լինիլ հրաման այնպիսի, վասն  
որոյ բարձր եւ սուրբ հրամանաւ թագաւորութեանս իմոյ  
հրամայեցի (որպէս եւ ի բնէ լեալ է) հարիւր յիսուն եւ ինն  
թուականքն<sup>19</sup> եւ այսր՝ այս հրաման միշտ արձարծեալ է ի  
տէրութիւնս մեր, նոյն գունակ եւ ըստ տուչութեան հինի  
սուրբ հրամանաց ընծայեցի եւ այս սուրբ հրամանս մեր  
յազգն հայոց, զի որք ընդ նոսա թշնամութեամբ եւ հակա-  
ռակութեամբ վարին եւ որոգայթիւ կամին վտանգ հասու-  
ցանել խեղճ ըստային՝ այնպիսեաց գոյք եւ ինչք եւ ստա-  
ցուածք ի յարքունիս լիցի եւ պատժեսցի ծառայութեամբ  
թէրսխանէիս իմոյ:

Արդ, որպէս առաջին մեծապատիւ արքայիքն հրամա-  
յեալ են եւ զշնորհ գթութեան ցուցեալ ըստային, զնոյն եւ  
մեք կրկին հաստատեմք եւ վերանորոգեմք, զի եթէ նեն-  
գաւորութեամբ եւ չար խորհրդով միւնֆսիքներն կամիցին  
կաղացուցանել զհայ ազգն եւ բամբասանս ինչ եւ չար

անունս համբաւել երէ վկայութեամբ իմոյ ազգին, այսինքն տանկաց արանց եւ կանանց իցէ եւ կամ թէ էլչիներուն մարիֆէթովն արգուհային եւ այլ ինչ աղերսանաց շնորհիւ երէ իլամ երէ հիւնէթ երէ Ֆերման որք նախանձու եւ սուտ վկայութեամբ իցէ լինեցեալ մի լիցի ի կատարելութեան, այլ անհաստատ երեւեալ առաջի մեծի փոխանորդին իմոյ, մինչեւ ոչ ուղղապէս քննիցի, մի որ իշխեսցէ զրայայն իմ բնական՝ արտօրել եւ կամ ի թերսխանէն յղել եւ արգ եւ խնդիր էլչոցն, որ վասն րայայիս է ոչ կատարեսցի ի հրամանս թագաւորութեան եւ մի լիցի ընդունելի խնդրուածք նոցին: Յաղագս որոյ հասեալ եւ շնորհեալ հրամանիս ամենեքեանդ յունկն մերձեցուցեալ հնազանդեսչիք եւ ըստ ամենայն գրեցեալ պատուիրանացս մի որ պակասեցուցեանել իշխեսցէ, այլ բոլորն ըստ իւրում կանոնի վճարեսչիք եւ սրբոյ դրօշակի թագաւորութեանս ծառայօրէն հպատակ լեալ հնազանդ լերուք:

ՍԱ. Է. ԵՆՆԻՉԷՐ ԱՂԱՍՈՒՆ ՖԷՐՄԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԹԱՐԳՄԱՆՅՅԵԱԼՆ

Բարձր եւ հզօր հրամանաւս յայտ լիցի Ստամպօլ եւ ի նմին գումարեալ ազգն հայոց եւ նոցին պատրիարք Զարբիայ ըստիպ առ զերապատիւ ատեան մեծ թագաւորութեան կնքեալ նշանաւ իւրով զիր աղերսանաց էր մատուցեալ, որ ի յարբայանիստ քաղաքս բնակիչք ազգն հայոց՝ ենթարկեալ ըստ իմ մեր ի մէջ իւրեանց ծածուկ այլ իմն հաւատ արժարժեալ եւ յայն ժամանակս հաւատոյն իւրեանց բնականի յարգումն եւ մեծարանս ոչ ընծայելով; այլ պակասց եւ մեռելաբաղ կանոնաց՝ միայն եւ եթ տան պատիւս, այսր աղագաւ արգելուլ եւ հերքել զգորսն գայնպիսիս եւ հրամայեմք այնպիսեացն ոչ կատարել զկանոնս ի վերայ չառափառաց եւ ոմանք եւս բռնանան յուզեալք ի նախանձու՝ բարձք զմեռեալսն մեր եւ թաղեցէք ըստ օրինին հայոց ի բնէ անտի այս վէն գոլով հրատարակեալ ի յինքեանս տերութիւնն մեր առ ի բառնալ եւ ի բաց վանել յառաջագոյն տուեալ են զֆերմանս գուք շարժելով ըստ յին: Իսկ այժմ ի բարձրանալն մեր ի ծայրագոյն գահ թագաւորութեան հարկաւորեցաւ նորոգ հաստատել զհրամա-



յեցեալ ֆէրմանսն, որք ի բնէ ընձեռեալք իցէն ի մեր տէրութենէ: Վասնորոյ եւ մեք ըստ հին կերպի հրամայեցեալ պատուիրանացն հրամայեցաք վերստին նորոգել զֆէրմանս, որպէս եւ խնդրելով էր հին պատրիարքն հայոց Յակոբ բահրայն<sup>20</sup> ի վեհափառ տէրութենէ: արքայիցն օսմանցւոց, զի ունէր գմիտ խնդրոյն այսպէս. որ ի մեծ արքայանիստ շինիս բնակիչք ըստայն մեր հայք կոչեցեալք ի հերուն հետէ եւ ի վաղ ժամանակաց ծառայեալ եւ յունկա մմեհից հռչակեալ, ֆիրէնկ կաթօլիկաց տարածայնութիւնն ընդ հայոց եւ ըստ ամենայն ջանողական հնարից նիգամ եւ կանոն տիրեցեալ է: Քանզի խղնալի եւ աղքատակեաց ըստայն առ ի հանգիստ մնալ ի չարափառացն վնասուց, որք կանոնիւ ալ եւ հաւատովն ալ իմն հաւատոց ծառայեն եւ արդար թագաւորութիւնս մեր պարտ էր պատժել զնոս, զի այնպիսի շարքն ծայտնալ եւ այլածել շրջին եւ գորոգայթս զորս լարեն վասն ըստայն իմոյ ոչ բերեն ի ցոյց եւ զբնական հայոց կանոնսն եւս ոչ ընդունին եւ զհաւատսն ոչ պահեն: Այսպիսեաց թիրեալ մնացելոց անձանց չարափառաց ոմանց զհարսանիսն հայոց պսակաւ եւ օրինօք արարեալ են եւ սատակեալ մեռելոց նոցին գմարմինսն յեկեղեցին հայոց տանել սովորեցուցեալ են, զի են կարօտք կանոնաց այսպիսեաց կատարելոյ: Բայց ըստ բնական կանոնի հայոց զայնպիսի չարափառսն յեկեղեցի մուծանել եւ զպսակսն կատարել է մեծ դժուարութիւն կանոնի հայոց եւ մեղք համարեցեալ վասնորոյ զայնպիսի հետեալսն արժանի գոլով պատժոյ, առ ի արգելուլ յայնպիսի չարութեանց հարկաւ եւ պիտանի գործ գոլ ըստայն, որպէս պարտականութիւն: Յաղագս այսորիկ, ուր ուրուք հաւատն ծածկապէս գոլ եւ այլոց ազգաց կրօնիւք վարժելոց եւ ազգին հայոց կանոնացն եւ դաւանութեանցն պատիւ ոչ տալով, այնպիսի չարափառաց աղջիկ տալ եւ առնուլ եւ հայոց պսակաւ ոչ պսակել զոք եւ սատակեալ մեռելոց զդիսն եթէ հարկաւորիցի եւս յեկեղեցիս հայոց ոչ տանել եւ զհամարձակութիւն նոցին ի բաց վանել, զի որով մի ներհակութիւն լիցի կանոնին հայոց բնականի եւ սատակեալ մեռելոց չարափառացն եթէ քահանայ հայոց կամիցին եւ կամ թէ բունութեամբ չարափառքն ստիպեալ, թէ դուք բարձէք եւ թաղեցէք զմեռեալսն մեր,

որպէս յառաջն սովորութիւն ունէիք բառնալոյ եւ քաղելոյ  
այնպիսիքն հերքեցի՛ն բարձր հրամանաւ եւ մի իշխեսցեն  
գայապիսի գործս ի գլուխ բերել վասն զի ի պատճառս այն-  
պիսի չարափառաց հերքելոյ պատժելոյ եւ իսպառ լքանե-  
լոյ սուրբ եւ բարձր արքայից մերոց վճռեալ հաստատեցաւ  
զի որպէս ի բնուստ կանոնն հայոց իցէ ներհակ ոք մի երե-  
ւեսցի: Որպէս ի թուին հազար հարիւր յիսուն եւ ութն<sup>21</sup>  
զիլհիհնէ ամսոյ հնգին բարձրապանձ հրամանն տէրու-  
թեան օսմանցւոց, յոր շնորհեալ են յազգին հայոց հնեալ ի  
մատենագրէն փիսկոպոսի կոչեցելոյ, յորում աւանդեալ  
գոյր թէ ի կայսերանիստ քաղաքիս մեծի բնակիչք թայայն  
հայոցի էր որոց արձածեալ նիւթն չարափառ ֆրանկաց օր  
ըստ օրէ յաւելեցնեայր, զի արք եւ կանայք թէ ի ծածուկ եւ  
թէ հնարիւք ինչ յեկեղեցիս ֆրանկաց ել եւ մուտ առնեն ե-  
ւ ի տունս իւրեանց ֆրանկ փաթերայս տանելով զկարգ եւ  
զձես ֆրանկաց յեկեղեցւոյն կատարել տալով ստացան  
զհամարձակութիւն: Առ ի արգելել բազմիցս հաստատե-  
ցաւ հրաման տէրութեան սակայն հակառակքն օրինին հա-  
յոց եւ լրութեամբ քամահօղք յովանց անձանց չարափա-  
ռաց, թէ ի Ստամպոլ եւ շրջակայիցն նորին ըմբոցեալ կա-  
լեալ ածին ի վեհափայլ ատեան բղէշխին իմոյ եւ ի դատել  
զնոս պատասխանի արարեալ են իմոյ փոխանորդի թէ  
մեք ազգին հայոց եւ կրօնից նոցին չեմք հետեւօղք եւ  
հնազանդք յորոց պատասխանատրութեանցն իսկապէս  
ծանուցաւ տէրութեանս լինին նոցա այլակրօն եւ հետ-  
տեալ, զի խոտովանութիւն նոցա յայլ հաւատս երեւեցաւ,  
որ որովք ցուցան ներհակք, խռովարարք եւ թշնամիք ինք-  
նեամբք ինքնեաց լեալք դատապարտիչք: Արդ յետ այսո-  
րիկ գունկն նոցա կշտամբանօք եթէ ոչ ոլորիցի եւ բարձր  
թողնի ի կամս թողանիցի նոքա որք ահիւ եւ ծածկապէս  
զանխուլ ի մարդկանէ երթ եւ եկս առնեն յեկեղեցիս այ-  
լազգեաց յայնժամ համարձակեալք եւ բացարձակապէս  
զկանոնս իւրեանց կատարեն եւ լինին յայտնի ֆրանկք եւ  
լսօղք թայայնք գայթակղին եւ վնասին, ուստի յայսցանէ  
վնասուց եւ որոգայթից չարափառաց ապատելոյ եւ փրկե-  
լոյ եւ ապահովս կելոյ: Հրաման իմն մեծասաստ խնդրեալ  
ի բնուստ Յակօբ պատրիարքն իւրով կնքեալ արգունհալիւ,  
որպէս թէ ի մեծի քաղաքիս եղեալ հայոց ազգն յորոց ի նո-

ցանկ անձինք ոմանք ֆրանկաց յեկեղեցիսն գնալով եւ ի տունս գվաթերայս բերելով զօրէնս եւ զկանոնս նոցին առ ձեռն պատրաստեալ վարին անհոգաբար: Վասնորոյ այնպիսի կանոնաց հետեւեալ չարափառաց ստացուածքն ինչքն եւ ապրանքն եթէ ի հաւատս ֆրանկաց իցեն հաստատեալք ի գանձարան թագաւորութեանս կալցեն եւ զտէր ստացուածոցն ի բի եւ ի թէրսխանէն իմ յղեսցեն ապա յետ այնորիկ արգուհալիւ եւ հայցուածովք ի տանջանաց եւ ի քիւրէկէն իբր հոգս քաշելով մի լիցին իշխօղք ազատութեանցն այլ կելով կացցեն ի հրամայեալ տանջանս, ըստ այսմ պատճառի Ստամպոլ եւ Ղալաթիս եւ Անատոլի կողմանսն այս բարձր հրաման տէրութեան նոր ի նորոյ հաստատեալ եւ յայնս վայրս առաքեալ զգուշացուցեալ են: Եւ այսմ տարածանութեան եւ խոռվարկու չարափառութեան բուն արմատքն են յերեսուն եւ հինգ հոգիք չիք վարդապետք որոց շատք մեծամեծքն ի Ղալաթիայ գաղտակեաց ամբիակեալք թագնաբար կեան եւ շրջին, մտանելով ի տունս արանց եւ կանանց շրջելով զհաւատս նոցին ի չարափառութիւնս իւրեանց առ ի մերժել զչարութիւնս նոցա պարտ էր կացուցման բարձր հրամանի տէրութեան մերոյ վասնորոյ երկացեալք ի հրամանաց մերոց սաստկութեանց եւ փոքրինչ պատրիարքեն հայոց խուսափեալք թագուցանեն զերեսս իւրեանց եւ եթէ կամիցին ի տուն ինչ հավատարմանց գնալ որ ի Ստամպոլ եւ Ղալաթիայ իցեն բնակեալք նոցին բարեկամք հնարեն այս ինչ զի մի ըմբռնիցին, ոմանք ի ձեւ բժշկի եւ ոմանք ի կերպարանս հայոց վարդապետի անհոգաբար ել ու մուտս առնեն ընդ որս եւ հանին եւ իբրեւ տեղի ինչ գտեալ ընդ որդիս իւրեանց ժողովս առնեն գումարեն զարս եւ զկանայս եւ որպէս զեկեղեցի գտեղին գայն առնեն եւ կամ թէ խաբէութեամբ յոմանս տեղիս զեկեղեցին հայոց բռնութեամբ առեալ իւրացուցանեն եւ զձեւ եւ զկանոն ֆրանկաց անտանօր կատարեն եւ առ ի հաստատ պահելոյ զչար խորհուրդս նենգութեամբ վարին ընդ րայային եւ գոր ինչ տուգանք եւ կամ այլ ինչ ծախոս եւ փող ստակ մասրաֆ լեալ իցէ վասն կոռուոյն եւ խառնակութեան իւրեանց բռնութեամբ կամին պահանջել ի րայայից: Այսպիսի զչարիս նիւթողաց անպակաս պարտի լինիլ վրէժխնդրութիւն: Նաեւ յայնպիսի

չարափառացն եթէ որբ գայցէ յուղղութիւն ի բնական կանոնս հայոց պատրիարքն եւ կամ վարդապետք վասն ուղիղ հնազանդութեան կանոնին հայոց որպէս հայք եւ որդիք հայոց են սոքա վերստին ուղղեալքս յայնժամ հանեալ լիցի վկայութիւն առաջի տէրութեան մերոյ. զի իսկական եւ բուն հայքն բացարձակք են հրամանաւ մերով ի կատարելն զօրէնս իւրեանց եւ նոցին բնական օրինաց կատարելոց եւ հաւատոյն պահելոյ փառայ եւ մօլլայ եւ նայիպ եւ այլք մեծամեծք ոչ պարտի ձեռնամուխս լինիլ եւ արգիւնոցին ոչ է կանոն արձակելոյ զկապեալսն ի տանջանացն ալլ պատրիարքին եւ նոցին եպիսկոպոսացն ազդմամբ եւ զեկուցմամբն հանել ի կապանացն գթութիւնս ցուցանեալ ի բնէ ի տէրութիւնս մեր վնոեալ կանոն կայ հաստատեալ:

Եւ եղեալ է զի եկեղեցիք հայոց յատկապէս եւ որոգայքիւ իմն վինակ անկեալք են չարափառաց վասն որոյ առ ձեռն եղեալ յեկեղեցիս հայոց կատարեն չարքն զկանոնս հաւատոյն ֆրանկաց ի վերայ այսր պատնառի գայնպիսի անձինս չարափառս հարկ իսկ եղեւ պատժել եւ պատուհասիւք մեծաւ թշնամանել եւ զայնս եկեղեցիս որք բնական ֆերմանիւ մերով տուեալ է ազգին հայոց կրկին ըստ արդար իրաւանց յանձնել զեկեղեցիս ազգին հայոց թայային մերոյ: Իսկ եւ չարափառք ոմանք եւ նենգաւորք սուտ վարդապետք հայոց ձեւանալով ընդ մանկամարդ կանանց զօրէնս ֆրանկաց կատարեն եւ արգելեալք ի տունս նոցա աւուրոք բազմօք, հակառակ եւ թիւր օրինօք շարժին եւ զօրօնս ֆրանկաց ի վեր քան զչափն պատուօղք լինին եւ համարձակապէս մտանեն եւ ելանեն ոչ ինչ զանգիտեալ յումբք: վասնորոյ հարկ եղեւ պատժել զայնպիսի չարագոյնս գատակեալ մեռելոց զդիսն քահանայիւ հայոց ոչ բաղել: Ուստի մի եւ մի իւրիք գլխացաւանք լիցին այնպիսիքն թայային մերոյ զի ազգն հայոց ի խնամս տէրութեան մերոյ ենթարկեալ է Ստամպոլ եւ Կալաթիայ եւ ի շրջակայսն նոցին, վեց ժողովք հասարակութեանց վնոեալ մեկնի ի գիրս մեր ազգին հայոց վարդապետք եւ քահանայք եւ ի իշխանք ժողովրդոց եւ միախամուռ ձերակոյտք թայային: Որոց պաղատանաց արգիւն եւ խնդրեալ հայցուածոց բանիցն գուր շարժեցաք ի վերայ բնական մեծի տէրու-



բեանս իմոյ ի գլխահարկս ծառայութեանց հաւատարիմ հայասեռ տոհմին, որ յայսպիսի վնասատու բշնամեացն ի վրկելն եւ ազատելն ողորմութիւն վարկանի արդար վնոռոյն մերոյ: Զկնի աշտորիկ հայոց ազգին արք եւ կանայք ի Ղալաբիա եղեալ եկեղեցին Ֆրանկաց գնալ եւ մտանելն եւ կամ չարափառաց չիք կարգաւորաց ի տանս հայոց մի մտանելն եւ այլք այսպիսիք ոչ եւս յաւելցին առնել ըստ առաջին գնացիցն: Իսկ որք ոչ են հպատակք այսմ հրամանի Ղալաբիայ վոյվոտայի մեծութեան շնորհիւ կալեալ եւ յեկեղեցական կարգէ Ֆրանկաց մի ուրեք ի կողմանս րայային ժողովեցին կամ առանց առն եղելոց մանկամարդ կանանց ի տունս այնպիսեաց մի երբեք իշխեալ ի մտանելն եւ մի կալ մնալ որպէս արգելեալ ի նմին տուն եքէ ի Ստամպոլ եւ եքէ ի Ղալաբիա, ուր ուրեք գիտացցեն եւ գննեալ ծանիցեն, քէ ի տաննուրուք իցեն այնպիսի միւֆսիտներ տանուտէլամբ հանդերձ վերահաս գիտութեամբ պատրիարքին եւ միհալլէ իմամիյի նանաչողութեամբ եւ եէնիչէրի աղասիյի եւ Ղալաբիոյ վոյվոտայի բուն իշխանութեամբ կալեալ եւ կապեալ յղեցցեն ի քերսխանէն մեծամիրային իմոյ եւ ի ձեռս ազգին հայոց շնորհեալ սուրբ եւ գերամաքուր ֆէթվայն որ է ուղիղ վնիռն մեր եւ ըստ օրինի կանոնադրութեան սպանանելոյ փոխանակ զայնպիսի միւֆսիտներն ի քիւրեկ եւ ի չէքտիրէն արքունական երթեալ ծառայեցցեն եւ պատրիարքին հայոց մինչեւ կնքեալ նշանն արգուհալին ոչ տրիցի ի յատեան մեծի տէրութեան մի որ իշխեացէ ազատել զոր ի ծառայութեան քերսխանային եւ կանանց եւ ի վեր քան զչափն քէնպիք եւ պատուիրանացն զկնի եքէ դարձեալ երբ եւ եկն առնիցեն յեկեղեցիս օտարաց ի քանտ արքունական դնիցեն պատժելով ըստ արժանեացն: Այլ ի բնէ անտի շնորհեցեալ հրամանագիրք եւ ֆերմանք ի բուն օրինակէն յատուկ արտաքս բերեալ ծրագրութեամբ որ նշմարտապէս որքան րայայն մեր ի հաւատս Ֆրանկաց հատեալ եւ միտեալ իցէ եւ յեկեղեցիս նոցա ծանօթացեալ եւ ընտելացեալ իցէ բազում վնաս եւ ներհակ գործս րայային դիպեալ ուստի առ ի արգելուլ եւ զրկել զնոսա յանձնիշխանական կամացն առաջին գլխաւոր դպրապետաց իլ հաջի Մուստաֆայն կոչեցեալ ծառայոց ազմամբ իսլամին յաղագս աշտորիկ ըստ բնաւան



շնորհեալ սուրբ հրամանին եւ դպրապետին մերոյ՝ կանոնեալ ազդեալ իլամին մտաց եւ չափաւորեալ կանոնիցն հրամայեցի եւ ես լրումն բերել զհրամանս եւ զպատուերս արքայական, որ ի բուխ հագար հարլուր եւ ինն<sup>22</sup> հաշուին մերոյ եւ հասարակիլն ամսոյն մուհարեմի պարգեւեալ տուեալ Ֆերմանքն ի մեծի տէրութեանս հրամայեցաւ զբուն օրինակն ի մատենագիրս կանոնացն տեսանել եւ անտի օրինակել զկերպ հրամանագրութեանս մերոյ:

Արդ այժմ ի յիսուն եւ ինն<sup>23</sup> բուականին տուեալ եւ ընձեռնեալ սուրբ հրամանաց օրինակին, որ այնպիսի չարափառաց եւ հեստեալ միւֆսիտներաց ինչքն եւ ապարանքն ի գանձարան թագաւորութեան ժողովեսցի տէրքէնարի օրինակին եւ գրելութեանն ի գործ եկեալ կատարեսցի բարձր եւ հզօր հրամանս հաստատել վճեցի եւ հրամայեցի, զի ուր ուրքք եւ հասցէ մեծապանձ հրամանս թագաւորութեանց մերոց վեհափառութեան որպէս եւ կանոնեալ վճեալ եմ ըստ ամենայն կերպին ի գլուխ բերել հարկաւորիւք եւ դարձեալ վերոգրեալ իրականութեանցն եւ յատկապէս իւրաքանչիւր պատուիրանագրութեանց բարձր հրամանաւ հրամայեցի, զի եւ դուք ի կատարելն կանխեսջիք եւ ներհակքս եւ կամ ընդ դիմակայ մի ոք գտանիցի: Այսպէս ծաներուք եւ սրբոյ դրօշակի թագաւորութեանս հնազանդ գտեալք հաւատարիմ մնասջիք:

ԵԿԵՂԵՑԵԱՑ ԹԷՑԹԻՇ ՉԱՌՆԵԼՈՅ ՖԷՐՄԱՆԻ ՀԱՅ-  
ԿԱԿԱՆՆ Է

Ի մեծայարգ տէրութեան մեծաբաղդ զօրավիգ հրամանաց յայտ լիցի, զի ի բուին 1187, զիլքատէ ամսոյն 8-ին<sup>24</sup> վեհապանձ արտ եւ բաղդիւ ծայրագոյն օսմանցւոց տէրութիւն, սկիզբն ելման յաստիեան ծայրագոյն ի վեհափառ տէրութիւնս իմ մինչ վերահաստատեցաւ արարի հրաման, զի բոլոր եւ համանգամայն Ֆերմանք եւ հրամանագիրքք առ նախնեօք մեծագօր արքայից, կրկին եւ վերստին նորոգեցի եւ հաստատեցի ընս որս եւ հրամայեցաւ ի տէրութենէ նորոգիլ եւ Ֆերմանքն մեծի Պօլսույս եւ ենթարկեալ իշխանութեան մերոյ հայոց ազգին, որ յառաջ քան ի ժամանակս արքայից անցելոց զարգուհալն տըւեալ

են ձեռամբ պատրիարքին իւրեանց ի ձեռս որոյ պարզեւեալ հրամանագիր ֆէրմանքն մեծագօր նախնի արքայիցն մեր եւս տեսեալ գկերպ գձեւ բարձրագունեղ հրամանին ի նոյն միտել ի նոյն շաւիղ հրամանագրին, որք անյաղթելի տօրութիւն օսմանցւոց թագաւորքն ընձեռնեալ են ազգին հայոց վասն եկեղեցեաց սուրբ հրամանաւ արքային եւ ուղիղ կանոնիւ մերոցս օրինի պատահեալ կիսաշինութեանցն եւ աւերեալ տեղեացն նորոգութեանցն մի որք ներհակ երեւեսցի եւ վասն բաղձանացն կաշառակեր լինելոյ կարգաւորքն փափագին, միանգամ քէշֆ եղեալն կրկին քէշֆ առնել զայնպիսի ներհակօղսն հերքեմք մի լիցի ձեռնամուխ յետ այսց գրեցելոց յայտնի է այս եւս, զի նախկին մեծայարգ նախնի արքայքն ի ծայրագոյն եւ անսպառելի տէրութենէ շնորհեալ են զհրաման գթութեան եւ անվրդով կելոյ ենթարկեալ ազգին հայոց, որք կան բնակեալք Անատօլի եւ Ուրումէլի զնոյն զշնոր գթութեան եւ մեր ծաւալեալ կամեցաք յամենեայն ի շնորհամուտ վիճակի գերագահ թագաւորութեանս իմոյ, յորտ պատճառաւ նորել եւ կրկնակի հաստատիլ այնք հրամանագիրք մերոյ բարձր հրամանաւ: Իսկ ի տեղիս եւ ի գաւառս ոմանս հակառակորդ երեւեալ, նեղեն եւ վշտացուցեալ տառապեցուցանեն զբայայս մեր խղճալի եւ զվարդապետս եւ զքահանայս ազգին հայոց բոնութեամբ տուգանեն եւ աւելի հարկս պահանջեն: Յաղագս որոյ հանդարտ եւ անվրդով կելոյ եւ զգործ իւրեանց ազատօրեն կատարելոյ հրամայեցաւ ի մերոյ տէրութենէ որոնել եւ յուզել ի մատեանս դիւանին եւ ի կանոնական գրեանս դատարանին եւ գտալ ի փխկօպոս կանոնին, որ հրամայեցեալ է ի հաստատութեան պահել զբայայն խղճալի ուստի հրամայեցաք վերստին նոյն կանոնիւ ըստ առաջնոց հրամայեցելոցն հանել գուղիղ կանոնս ինչ եւ սփռել յամենայն կողմանս, զի ի խաղաղութեան մնացեան եւ զխղճալի բայայն մեր բնաւ վշտանկեցեան, զի այնպիսիքն են հակառակք բարձրագոյն տէրութեանս: Եւ մինչ կրկնակի գլուխ բարձին արքանօրէնք եւ զշաւիղս ուղղութեան կորուսին, մեծաւ թախանձանօք հայցեցին ի բարձագոյն տէրութենէ մերմէ հայիլ ի հին դիւանագիրս արքունեաց եւ հայեցուցեալ տեսակ գիրս կանոնին, զի պատրիարքն հայոց Յօհաննէս վարդապետն<sup>25</sup> յառաջագոյն

տուեալ է զարգն իւր բարձրագոյն տէրութեան նախնի վեհափառ արքայից, զի ուր ուրեք քաղաքք, դասապայք եւ յայնս քաղաքս եւ զիւղորայս ի բնէ յարբունուստ ընձենեալ տեղիք եկեղեցեաց, որ ի վերայ հայոց Ֆէրմանիւ է արեցեալ եւ ի բազմաց ամաց հետէ շինութիւն որմոցն եւ առաստաղիցն եթէ աւերեալ եւ քայքայեալ իցէ եւ պիտոյացի վերստին շինութեան որմունք եւ այլ տեղիքն հրամանաւ արքային ըստ գրելեութեան երկուց հրամանաց Ֆէրվային եւ տանիկք մեծամեծք, գնացեալ աջօք իւրեանց տեսցեն եւ քայքայեցեալ աւերեալ տեղացն վերահասու լիցին, երկայնութիւն եւ լայնութիւնն այնը եկեղեցւոյն ըստ բնականի շինութիւնն ոչ աւելի եւ ոչ պակաս գնեցիցեն, տեսցեն եւ վկայեսցեն եւ ի գիրս աւանդեսցեն հեօնէթիւ, ապա ետ այնը հրամայեցեալ է գաւերեալ տեղիսն նորոգել եւ շինել ոչ աւելի եւ ոչ պակաս մի լիցին ձեռնամուխ րայայքն, զի մի հետո վնասիցին: Ապա գկնի այսպիսի հեօնէթիւ եւ Ֆէրմանին շինեցեալ եկեղեցեացն նորոգութեանն կրկին հրամայեցեալ է քէշֆ առնել, վասն երկուց պատճառաց. նախ՝ զի մի համարձակեցին րայայքն եւ աւելի ինչ շինութիւնս եւ զաղտագողի տեղիք շինեսցեն յեկեղեցիցեն զրայայս, թէ գկնի նորոգելոյն կրկին քէշֆ լինիլ հարկաւոր էր եւ ոչ արարին, առ ի ազատ մնալոյ յայսպիսեացն վնասատու անձանց կրկին եւ ուղիղ քէշֆ լինիլ պարտի: Այլեւ յոմանս քաղաքս եւ գյուղս եւ յայս նահանգ՝ ոչ գլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու կամ վասն կաշառս առնելոյ եւ կամ վնասս հասուցանելոյ մաքառին ընդ խղնալի հայոց ազգին եւ երդեալ առ մօլլայն առ վօյվօտայն եւ առ մեծամեծ անձինս բողոք բառնալով դրդեն գնոսա ի բարկութիւն, զի կամ տուգանօք վնաս հասուցեն եւ կամ գնորոգեցեալ տեղիսն քայքայեսցեն մեծամեծքն տէրութեան իմոյ հավատեցեալ նոցին նախանձախնդիր խօսից զօրացուցանեն զբարկութիւնս իւրեանց եւ լինին վրեժխնդրիք խղնալի րեայային, զի կրկին տուգանք եւ փող առցեն եւ զճարաս ագահութեանցն յագեցուցեն եւ եթէ ոչ տայք գտուգանս ստեն րայային ի բանտ եւ ի տանջանս մատնեմք զձեզ, որով երկուցեալ վշտակցուցանեն զազգն հայոց եւ նոքա ոչ կարացեալ տանի գայսպիսի նեղութիւնն, թողուն գտե-



դիս եւ գտուն եւ փախչին անտի, լինելով ցիր ու ցան, ոմանք եւս ի բանտ արգելեալք եւ խոշտանգեալք աս վկայութեամբ գրաւեն զկեանս իւրեանց: Նախ ոմանք զատիք եւ մօլլաշք, որք նորոգ ունին զիշխանութիւնս եւ կամին հարստանալ ընչիւք եւ տուգանօք խղնալի բայային եւ պատճառաւ քէշֆին նորա եւս նեղացուցանեն զբայայս եւ գտեալ ալ եւ ալ պատճառս առիքս, մինչեւ զարհուրեցուցանել զնոսա եւ մահ սպառման բայայից եւ մեծք հգօր հրամանիս իմոյ եւ ուղիղ կանոնին սրբոյ եւ եւս ապստամբք ինքնակալ իշխանութեանս մերոյ, որոնց վնասակար անձանց բազմիցս հրամայեցաւ զինքեանս ուղղել եւ արքայական պատժոյն պարանոցս իւրեանց զբրժուցանել եւ խղնալի ազգի հայոց մի կշտամբել եւ մի վնասել, զի այն չէ օրէն արդար թագաւորութեանս մերոյ: Իսկ եւ բուն Ֆէրմանիս իմոյ օրինակն ի դատարանիս մեծի՝ կնքեալ եւ գրեցուցեալ ըստ ուղիղ կանոնի հրամանի իմոյ այսր եւ անդր քաղաքս եւ զիւզս եւ յաւ տեղիս սփռեալ առաքել հրամայեցաք, որոց միջի բնակիչք եւ չարագուն անձինք բարյաջեն, թէ այս չէ Ֆէրման արքայի, ալ օրինակն է եւ կամ գաղտագողի առեցեալ Ֆէրմանք եւս եւ կամ Ֆէրմանի տարւոյ թուականն անցեալ է այսքան ժամանակիք եւ դուք այժմ որպէս նորոգել իշխէք եւ ոմանք եւս պատճառեն այս ինչ, թէ այս Ֆէրմանի մեջն հիշատակյալ անունքն են միայն Ստամպօլ, Ղալաթիա եւ Անատօլու եւ Ուրումէլի քաղաքաց հատկապէս զանուանսն չէ յիշեցեալ, վասնորոյ եւ ոչ է ընդունելի: Այս արագաւ արգ պիտոյ է վասն ձեր եւ բողոք բառնալ ի դուռն արքայից մեծի եւ այսու առթիւ ձծեն եւ նեղեն զբայայս իմ, ոչ ալ ինչ, եթե ոչ վասն չար կաշառակերութեան եւ ազահութեան իւրեանց: Եւ ինքնակալ տերութիւնս մեր տեսեալ եւ ոլորմութիւնս շնորհեալ տուաք զՖէրմանն ազգին հայոց մնալ ապահովս եւ խաղաղութեամբ կեալ եւ զոր ինչ գրեալն է եւ կնքեալ մեծի դատաստանի իմոյ նշանաւն նոյն իսկականն պարտիք իմանալ եւ զլուխ խոնարհեցուցանել բարձր հրամանիս մերոյ: Եւ այս ով միայն ի ներկայ թագաւորութեանս իմոյ եղև եւ կամ նոր ինչ հրաման հաստատեցի. այլ զոր օրինակ գերապատիւ ի տեր Աստուած գնացեալ հայն իմ վեհափառ սուլթան Ահմետն<sup>26</sup> ի յելն ծայրագոյն աստիճանի իրոյ բա-

գաւորութեանն շնորհեալ էր գայս ողորմութիւնս ի նորոգել զեկեղեցիսն հայոց, որպէս տեսաք մէկ բեռն ու քառասուն հազար ստակն յամ յամէ յանձնեն զմութաքայն յարքունիս, որ ի ժամանակի յայնմիկ պատրիարքն հայոց Յօհաննէս վարդապետն է եղեալ եւ ի ձեռս որոյ պարգեւեալ էր զկերպ ֆերմանիս մերոյ, որ իբր նորոգել զեկեղեցիս եւ զքայքայեալ տեղիսն շինել հրամայեցեալ էր եւ ներհակիլ ումեք չէր եղեալ հրաման եւ բացարձակ կատարել կանոն ի բեանց եւ ձեար եւ կանոնի: Չայս բարձրագոյն հրամանս տեսեալ մեր ի գիրսն արքունականաց, զն նախնի բարձրապատիւ տէրութեանն օսմանցոց միշտ հոգալով զխղճալի ազգն հայոց, թէ վասն աւերեալ եւ քայքայեալ տեղեացն նոցին եկեղեցւոյ եւ թէ ազատօրէն եւ բացարձակ կատարելոյ զօրէնս իւրեանց եւ թէ այլ ինչ գբութեան օրինակք եւ ցոյցք ուեալք են ըստ յայից ի նոյն շաւիղ հարկէ եւ ինքնակալ տէրութեանս իմոյ հետեւելի եւ կանոնացն նոցին եւ ինձ հանոյ լինիլ:

Որ ի բուականութեան մերոյ Ռ-Խ (1040) եւ է (7) ամին, ըկալիլ էվ վել ամսոյ ԺԳ (13)-ին<sup>25</sup> տրեցեալ է այս հրամանս ի մեծ տէրութենէ օսմանցւոց, որպէս եւ կրկին հրամայեցեալ է ինքնակալ արքայն եւ հօր եղբայրս իմ սուլթան Օսմանն<sup>28</sup> եւ նա եւս ի սոյն եւ ի նոյն միտ եւ հրաման արձանագրեալ է ի յարքունական մատենին, որ վասն ազգին հայոց եկեղեցեաց շինութեան քայքայեցեալ տեղեացն: Նաեւ հրամանս այս եւ կերպ գբութեանց կալաւ եւ ի ձեռն եբեր հանգուցեալ մեծապատիւ եղբայրն իմ սուլթան Մուստաֆայն<sup>29</sup>, որ գայսպիսի հրամանս կրկին վայելչացուցեալ նորոգ հրամանագիրս եհան, որոյ ժամանակի էր պատրիարքն հայոց Յակոբ վարդապետն եւ նորին աղերսական արգիւն զնոյն ֆերմանսն նորոգեալ հաստատեցաւ, եւ եղեալ է այս ի թուին մերոյ 1171, ըբբիլ ախր ամսոյն ԺԸ (18)-ին<sup>30</sup>: Վասնորոյ ըստ կարգի ինքնակալութեան եւ հաշորդ տէրութեան մինչ ժամանեաց վեհապետն եւ ծայրագոյն ինքնակալ տէրութիւնն եւ նստայ ի յաթոտ տէրութեան եւ կալայ հզօր զօրութեամբ զիշխանութիւնս հայրենական, հարկ վարկայ եւ պատշան երեւցուցի տէրութեանս իմոյ, զի եւ ես ի բարի հանապարհ մեծագոր նախնի արքայից հետեւիցիմ եւ նորոգեցի եւ հաստատեցի ըստ առաջնոց



կերպից, որ ահա այժմ ի ներկայութեան ինքնակալութեանս մեծի տէրութեանս իմոյ է պատրիարքն հայոց Զաքարիա վարդապետն եւ որոյ կնքեալ մատանեաւ եւ արգիւն յունկն մերձեցուցի եւ յուայ աղաղանացն զի ի մատենի գանձարանիս իմոյ ամիրայիս փխկոպօս ժողովածու նշանաւոր գրութեանցն վեր առեալ որպէս եւ վայելն է ինքնակալ տէրութեանս իմոյ զողորմութիւնս շնորհել եւ ըստ հրամանի առաջնոց մեծի արքայից, հրամայեմ մեծագոր արքայու զի զհրամայեցեալ պատուերն եւ հատկապէս եկեղեցեաց աւերելոց եւ քայքայելոց զշինութիւնս մի արգելուլ եւ գարքայական մեծասաստ հրամանս իմ կատարել եւ սրբոյ դրոշակի բազաւորութեանս ծառայօրեն հնազանդիլ:

### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զաքարիա պատրիարք Կաղզվանցի (1773-1781 թթ.):

2. Հավելվածի այս եւ հաջորդ ֆերմանները զրաբար թարգմանել է 18-րդ դարի պատմագիր Պողոս Կաղզվանցին (տես Գիւտ Աղանյանց, Սանր մատնագիրք. գ. Ժ, էջ 219-256): Վավերագրերը արժեքավորվում են այն տեսակետից, որ այսօր հրապարակում չկան դրանց թուրքերեն բնագրերը:

Վավերագրերում կան մեծ թվով թուրքերեն բառեր եւ պատմական տերմիններ, որոնց բացատրությունը տվել ենք վերջում բերված թուրքերեն-հայերեն բառարանում:

3. Այս եւ հաջորդ հրովարտակները տրված են սուլթան Աբդուլ Համիդ I-ի (1774-1789 թթ.) կողմից:

4. Կ.Պոլսի հայոց պատրիարք Գրիգոր Պասամյանը (1764-1773 թթ.):

5. 15-18-րդ դդ. Կ.Պոլսի հայ համայնքը թուրքական պաշտոնական գրություններում անվանվում է «Ալթը ջեմաաթ» (վեց ժողովական): Պոլսի հայկական վեց թաղամասերի կողմից էր ընտրվում հայոց պատրիարքը եւ այնուհետեւ հաստատվում էր սուլթանական հատուկ ֆերմանով: Կ.Պոլսի վեց թաղերը հիշատակվում են դեռեւս սուլթան Մեհմեդ II-ի կողմից կառուցված մզկիթների վակուֆագրերում: Դրանք են 1) Էրմենի բազմենո մահալլեսի, 2) Էրմենի Էրմենքջի Անդրեա մահալլեսի, 3) Էրմենի Հաջիֆեթ մահալլեսի, 4) Էրմենի Շադիթեյ մահալլեսի, 5) Էրմենի Ֆեմավեջ մահալլեսի, 6) Էրմենյան մահալլեսի:

6. Նկատի ունի թուրքական ակչե դրամական միավորը:

7. Հակոբ Նայյան Կ.Պոլսի հայոց պատրիարք 1741-1749, 1752-1764 թթ.:

8. 1764 թ. մայիսի 26:

9. 1764 թ. օգոստոսի 13:

10. Նկատի ունի վեղարը:

11. Այս եւ հաջորդ երկու հրովարտականները վերաբերում են կաթոլիկների գործունեության սահմանափակմանը: Փաստերը վկայում են, որ օսմանյան նախկին սուլթանների ժամանակ այս հարցի շուրջ եղել են այլ հրովարտականներ եւս: Մ. Օրմանյանը, Մ. Չամչյանը, Ժ. Համմերը խոսում են կաթոլիկների հալածանքներին վերաբերող սուլթանական ֆերմանների մասին, որոնց բնագրերը չեն պահպանվել: Այսպիսի մի հրովարտակ է ստանում հայոց պատրիարքը 1720 թ. սուլթանից, որը թուլատրում էր կայսրության ամբողջ տարածքում պատժի ենթարկել հայ կաթոլիկներին (տե՛ս Մ. Չուլալյան, Արեւմտյան Հայաստանը, էջ 88):

12. Կաթոլիկ հավատքին հետեւող: Թուրքերը կաթոլիկ դավանանք ունեցող եվրոպական երկրներին անվանում էին ֆրանկների երկիր:

13. Համապատասխանում է փրկչական 1737 թ.:

14. Համապատասխանում է փրկչական 1760 թ.:

15. Համապատասխանում է փրկչական 1761 թ.:

16. Սուլթան Մուստաֆա III (1757-1774 թթ.):

17. Համապատասխանում է փրկչական 1729 թ.:

18. Համապատասխանում է փրկչական 1745 թ.:

19. Համապատասխանում է փրկչական 1746 թ.:

20. Տե՛ս ծնթ. 7:

21. Համապատասխանում է փրկչական 1745 թ.:

22. Տե՛ս ծնթ. 19:

23. Տե՛ս ծնթ. 19:

24. Համապատասխանում է փրկչական 1774 թ. հունվարի 21-ին:

25. Կ.Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտ (1715-1741 թթ.):

26. Սուլթան Ահմեդ III (1703-1730 թթ.):

27. Համապատասխանում է փրկչական 1635 թ. օգոստոսի 17-ին:

28. Սուլթան Օսման III (1754-1757 թթ.):

29. Տե՛ս ծնթ. 16:

30. Համապատասխանում է 1757 թ. դեկտեմբերի 30-ին:

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

### ԹՈՒՐ-ՔԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ (հասկնլվածի քարգմանությունների համար)

ԱՐԶ ( arz )	առաջարկ, խնդրանք, խնդրագիր
ԱՐԶՈՒՀԱԼ ( arzuhal )	խնդրագիր
ԱՅԱԶՄԱ ( ayazma )	ուխտատեղի
ԲԱՆԱՅԻՐ ( panayir )	տոնավաճառ
ԴԷՎԼԵԹ ( devlet )	պետություն
ԵԱՍԱԽԵԻ ( yaskci )	պահակ, մաքսատան պաշտոնյա
ԶԱՊԹ ( zaptetmek )	տիրել
ԶԱՊԻԹ ( zabit )	սպա
ԷԶԻՅԵԹ ( eziyet etmek )	նեղություն
ԷՀՅԱՆ ( ihsan etmek )	շնորհ, շնորհել
ԷԼՉԻ ( elci )	դեսպան
ԹԱՊԻ ( tabi )	հպատակ
ԹԵՍԼԻՄ ( teslim )	հանձնում, տալ
ԹԵՖԹԻՇ ( teftis etmek )	ստուգում, քննություն, հետախուզում
ԹԵՐՍԽԱՆԵ ( tersane )	նավաշինարան
ԹԵՄԴԻՀ ( tembih etmek )	կարգադրել, հանձնարարել
ԻԼԱՄ ( ilam )	վճիռ
ԻՍԿԷԼԵ ( iskele )	նավահանգիստ, նավամատույց
ԻՆՇԻԹՄԻՇ ( incitmic )	նեղացնել, վշտացնել, նեղություն տալ
ԻՖԹԻՐԱ ( iftira )	զրպարտություն
ԿԱՅԻՏ ( kayit )	նշել, ընդգծել, ուշադրություն հրավիրել
ԿՉՄԵԹ ( hismet )	ծառայություն
ԿԵՄՐԻԿ ( gümrük )	մաքս, մաքսատուն
ՀԱՍԼ ( hasil olmak )	ստեղծվել, առաջանալ
ՀԵՎԱԼԵ ( havale )	հանձնարարություն
ՀԵՕԵԹ ( hüccet )	վկայագիր
ՄԱԽԹՈՒ	Տես տերմինների բառարան՝ ՄՈՒՔԱԹԱԼ:
ՄԱՍՐԱՖ ( masraf )	ծախս
ՄԱՀԶԵՐ ( mahzer )	հանրագիր
ՄԱՀՍՈՒԼ ( mahsul )	բերք
ՄԱՐԻՖԵՏ ( marifet )	ճարպիկ, հնարամտություն, շնորհ
ՄԻՐԻ ( miri )	պետական
ՄԻՀԱԼԼԵ ( mahale )	թաղամաս, շրջան
ՄԻՀԱՆԵ ( mahane )	պատրվակ
ՄՈՒՐԱՍԱԼԱ ( mürasele )	ներկայացուցիչ, պաշտոնյա
ՄՈՒՖՍԻՏ ( müfsid )	խռովարար
ՆԻԶԱՄ ( nizam )	կարգ, կանոն, կանոնադրություն

ՇԵՐ	Տես տերմինների բառարան՝ ՇԱՐԻԱԹ:
ՇՈՒՐՈՒԹ (ՇԱՐԹ) (sart)	պայման
ՐԱՅԻՔ ( rahip )	հոգեւորական
ՐԵՅԻՆ ( rehin )	զրավական
ՐՈՒՋՆԱՄԵ-Ի ՍՈՒՐԵԹ ( ruzname-i suret )	ստացականի պատճենը
ՃԵՐԻՄԵ ( cerime )	տուգանք
ՉԱՅԸՐ ( çayir )	մարգագետին
ՉԵՔՏԻՐ ( çekdire )	թիարան
ՉԻՖԹԼԻԿ ( çiftlik )	ագարակ, կալված
ՕՐԴՈՒ ( ordu )	բանակ
ՎԵՔԻԼ (s vekil )	պաշտոնյա, ներկայացուցիչ, փոխանորդ
ՏԱՄԱ ( dava )	դատ
ՏԱՄԱՃԸ ( davaci )	հայցվոր
ՏԵՐՔԵՆԱՐ ( derkenar)	խնդրագիր
ՔԻԻՐԵԿ ( kürek )	աքսորավայր
ՍԱՅԱՊ ( sahab )	տեր
ՓԱԹԵՐ ( pater )	հայր, հոգեւոր հայր, հոգեւորական, տեր



## ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ԱԲԱ - կոշտ բրոյա կտորից վերարկու

ԱԴԵԹԻ ԱՂՆԵՄ - Սանր եղջերավոր կենդանիների համար գանձվող հարկերից մեկի անունն է: Կանոնադրման ներքին համաձայն, երկու ոչխարի համար որպես աղեթի-աղցնեմ տարեկան գանձվել է մեկ ակչե:

ԱԿՉԵ - Թուրքական մանր արծաթյա դրամ: Չատվել է Օրհան բեյի (1326-1359) օրոք, Բուրսայում, 1328 թ.: 1687 թ. ակչեն փոխարինվեց ղուրուշով:

ԱՂԸԼԻ ՉԱՐԿ - Ոչխարի դիմաց վերցվող հարկ: Երեք հարյուր ոչխարի դիմաց տարեկան գանձվում էր հինգ ակչե:

ԱՍՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԿ - Տեղական ավատատիրոջը տրվող ամուսնության հարկ: Աղջիկները տալիս էին 60 ակչե, այրի կամայք՝ 30:

ԱՍՈՒՐԻՈՒԹՅԱՆ ՉԱՐԿ - ամուրի տղամարդկանցից գանձվող հարկ, որը հավասար է եղել մուտավորապես 6 ակչեի

ԱՅԱՆ - Այան էին կոչվում ենիչերիների եւ պահեստային զորքերի հրամանատարները, պետական եւ հոգեւորական բարձրաստիճան պաշտոնյաները: Այան էին անվանվում նաեւ մեծահարուստները, օր.՝ այան-ի բելդե (քաղաքի այան), այան-ի մահալլե (քաղամասի այան), այան-ի հանեղան (զերդաստանի այան):

ԱՄՍԱՆԼԻԱ - Չունարեն նշանակում է արեւելք: Բյուզանդական կայսրության Փոքրասիական տիրույթներից տրված անունը, որը հետագայում թուրքերի կողմից իմաստափոխվել է:

ԱՏԵՄԻ ՕՂԱՆ - Բառացի նշանակում է անփորձ պատանի: Այսպես էին անվանվում թուրքերի կողմից հավաքված քրիստոնյա երեխաները:

ԱՏԵՄԻ ՕՉԱՂԸ - Անփորձների զորախումբ, որտեղ դաստիարակվում էին թուրքերի կողմից բռնի հավաքված կամ զերեվարված քրիստոնյա պատանիները: Այնուհետեւ նրանք համալրվում էին կանոնավոր բանակի շարքերը:

ԱՐՈՏԻ ՉԱՐԿ (Ռեսմի օբլաք) - Օբլաք նշանակում է արոտ, արոտավայր: Ռեսմի օբլաք կամ օբլաքիե արոտի օգտագործման համար գանձված հարկի անունն է:

ԱՎԱՐԻՉ ( ԱՎԱՐԻՉ-Ի ԴԻՎԱՆԻԵ ) -- պատերազմի ժամանակ գանձվող հարկ

ԱՎԱՐԻՉԱՎԱ - եկամտի լրացուցիչ աղբյուրներ ձեռք բերելու համար թուրք ավատատերերը տուգանում էին գյուղացիներին: Բաղիհավան ավատատերի օգտին գանձվող տուգանքների եւ հարկի ընդհանուր անունն է:

ԱՎԹԱՆ - Թուրքիայում եւ արեւելյան որոշ երկրներում գործածության մեջ եղող ծանրության չափ, որը հավասար է 6 օրքայի (7680 գրամի): Տարբեր երկրներում հաճախ տարբեր կշիռ է ունեցել:

ԲԵՐԱԹ - Չրովարտակ, արքունի մուրհակ, որը հաստատում էր հարկերից եւ այլ պարտավորություններից ազատված լինելը: Որեւէ արտոճություն եւ աս-

տիճան հաստատող հրամանագիր:

ԲԱՅՐԱ - Բառացի նշանակում է բաժին, մաս: Այսպես էր կոչվում ավատատիրոջը տրվող հարկը: Կարող էր լինել բնամթերքի 1/10-ից մինչև 1/3-ը:

ԲԱՅՐԱՍՏԵՔ - մուսուլմանական տոներին գյուղացիներից գանձվող հարկ

ԲԱՇՇԵՎԵՋԻ - Բառացի՝ գլխավոր ուղտապան, ենիչերիական բանակում հատուկ դասակ, որի պարտականությունն էր բեռնել և փոխադրել բանակի ռազմամթերքը և պարենամթերքը: Ուղտապանների դասակի հրամանատարը կոչվում էր բաշդեվեջի:

ԲԱՏ - հարկատեսակ

ԲԱՋԻ ԴԱՄՐԱ - Դրոշմահարկ, վաճառվող ամեն տեսակի ապրանքների դիմաց գանձվող հարկ: Տարանցիկ ապրանքների համար Թուրքիայում գանձվում էր մալսահարկը՝ բաջ-ի բուզուրգ (մեծ բաջ):

ԲԵԴԵԼ-Ի ԱՍԿԵՐԻԿ - մինչև 1903 թ. Օսմանյան կայսրության մեջ ոչ-մահ-մեղականների զինվորական ծառայության փոխարեն գանձվող տուրք

ԲԵՅՅՈՒԼ ԱՍԼ - գանձատուն, անժառանգ մահացողների կալվածքներն ու ինչքերը տնօրինող կարչություն

ԲԵՅԼԵՐԲԵՅԻ - վեզիրներից և միրիմիրաններից հետո քաղաքացիական բարձր աստիճանի պաշտոնյա

ԲՅՈԼՈՒՔ - վաշտ, հեծելավաշտ

ԲԵՆՆԱՔ - Ավատատիրոջը վճարվող հարկերից մեկը: Կար երկու տեսակի բեննաք՝ էքինլու բեննաք և ջաբա բեննաք: Էքինլու բեննաքի հարկ էին վճարում ամուսնացած ռեայաները, որոնք ունեին կես չիֆթից պակաս հողակտոր, իսկ ջաբա բեննաքի կամ Կարա բեննաքի հարկ էին վճարում այն գյուղացիները, որոնք չունեին ինքնուրույն մշակվող հողակտոր:

ԲՈՋ ԲԱՅՐԱ - Չիֆթը մշակելու դեպքում բահրայի խանգարման համար պահանջվող տույժը: Բոզ նշանակում է գորշ, այսինքն չմշակված հող:

ԲՈՍՏԱՆՋԻ ԲԱՇԻ - կայսերական պարտեզի պահպան, քաղաքի կարգ ու կանոնին հսկող պաշտոնյա

ԳԵՐԴԵԿ - ամուսնական հարկ

ԴԱՆԻՇԱՆԵՆ - կադիի մոտ ուսում ստացող աշակերտ

ԴԱՅԹԱՐ - Գրանցման մատյան, դաֆթար-ի խական՝ կայսերական մատյան: Այս մատյաններում գրանցվում էին կայսրության մեջ հարկ վճարող բնակչության քիվը, զինվորների քանակը, տարեկան եկամուտի և բերքի քանակը, բոլոր արհեստներն ու ծառայությունները:

ԴԵՆՆՈՒՄ , Դողային տարածության չափ: Քառասուն քայլաչափ երկարությամբ և լայնությամբ հողատարածությունը հավասար էր մեկ դեռնումի:

ԴԵՇՏԲԱՆԻ - Դաշտերի պատրաստության համար հարկ: Այս հարկը որպես տույժ պետք է գանձվեր այն ժամանակ, երբ գյուղացու անասունը մտներ մի որբեւ ցանք ու վնաս պատճառեր: Կենդանու տիրոջը, որպես պատիժ, գավազանի հինգ հարված էին տալիս և նրանից գանձում էին հինգ ակչե: Չետագայում դեշտիբանի տույժը դարձել է դաշտերի պահպանության համար գանձվող հարկ:

ԴԵՐԵԲԵՅ - Գովտապետ: 16-րդ դարից սկսած Թուրքիայում մի շարք պետական ծառայողներ մեծ ազդեցություն եւ իշխանություն ձեռք բերելով, դարձել էին իրենց տրամադրության տակ գտնվող շրջանների միանձյա առաջնորդը:

ԴԵՎՇԻՐՄԵ - Մանկահավաք: 15-16-րդ դարերում Օսմանյան կայսրության մեջ հպատակ քրիստոնյա երեխաներին բռնի հավաքելով, վարժեցնում էին զինվորական ծառայության եւ նրանցով համալրում ենիչերիական բանակը:

ԴԵՖԹԵՐ - տես ԴԱՖԹԱՐ

ԴԻՎԱՆ - բարձրագույն ատյան, մեծ ժողով

ԴԻՎԱՆՋԵՐ - պետության օգտին զանձվող հարկ

ԴՅՈՒՍՏՈՒՐ - Օրենքների ժողովածու: Կայսրությունում պետական օրենքներ սկսել են հրատարակվել 1863 թ. «դյուստուր» խորագրի տակ:

ԴՈՒՍՄԱ - Դոլամաք (փաթաթել) բառից: Արտահագուստ: Այդպես է կոչվել, որովհետեւ փեշի ծայրերը փաթաթվելով, մտցվել է մեջքի մեջ: Գազուստի վերին մասը մինչեւ գոտկատեղը կոճկվել է: Գազուստի քեները եղել են լայն, բազուկների մոտ՝ նեղ:

ԵՆԻՉԵՐԻ - Բառացի «նոր զորք»: Օսմանյան կայսրության կանոնավոր հետեակային զորք: Ստեղծվել է 1361 թ. սուլթան Սուլթաղ I-ի ժամանակ:

ԶԱՅԻՄ - տես ԶԵԱՄԵԹ

ԶԱՐԲԱԶԱՆ - մի տեսակ թնդանոթ բերդեր ռմբակոծելու համար

ԶԵԱՄԵԹ - Գողային տիրույթ, որի տարեկան եկամուտը 20 000-ից հասնում էր 100 000 ակչե: Ձեամեթի հողատիրոջը անվանում էին գայիմ:

ՉԻՄՄԻ - այսպես էին անվանում Օսմանյան կայսրության մեջ ոչ-մահմեդական հպատակը

ԵՄԻՆ - Օսմանյան կայսրության մեջ բարձրաստիճան պաշտոնյաներին տրվող տիտղոս: Եմին էին կոչվում նաեւ այն պետական պաշտոնյաները, որոնք ուղարկվում էին նահանգները՝ հողի հաշվառում եւ մարդահամար անցկացնելու համար:

ԷՅԱԼԵԹ - Նահանգ, երկրամաս: Օսմանյան կայսրությունում վարչական միավոր: Ավելի ուշ, էյալեթի փոխարեն սկսեց օգտագործվել նաեւ վիլայեթ տերմինը:

ԷՄՆԱՖ - Արիեստավորների, խանութպանների արիեստացվական հատուկ խմբեր: Եսնաֆի գործերը վարում էր քեդիսուդան, որը կապ էր պահպանում կառավարության հետ եւ հավաքում հարկերը:

ԸՐԳԱՂԻԵ - Գունաբեն՝ երկաթե, շինարարության վրա աշխատող բանվոր: Ըրգաղիե էր կոչվում ավատատիրոջ օգտին տարեկան որոշ օրեր պարտադիր աշխատանքի (կոտ) փոխարեն զանձվող հարկը:

**ԹԱՅԱԻԼԴԱՐ** - գավառներում պետական հարկեր գրանցող եւ հավաքող պաշտոնյա

**ԹԱՓՈՒ** - հողաբաժին պահելու իրավունք, հողային տուրք, որը վճարվում էր ավատատիրոջ հողաբաժին ստանալիս

**ԹԱՔՐԻՐ** - զեկուցագիր, կրոնական համայնքի առաջնորդների կողմից Բարձրագույն Դռանը ուղղված գրություն

**ԹԵՁԵԻՐԵ** - Պաշտոնական գրություն: Գրագրությամբ զբաղվող պաշտոնյան կոչվում էր թեզքիթեջի:

**ԹԵՄԿԱ** - հագուստի տեսակ

**ԹԵՄԼԻԿ** - նվիրատվություն սեփականատիրական իրավունքով

**ԹԵՆԿԵ** - մոնղոլների տիրապետության շրջանում օգտագործվող արծաթյա մանրադրամ

**ԹԵՔԱԼԻՖ-Ի ՕՐՖԻՅԵ** - Շարիաթի սկզբունքներով կամ պետական օրենքներով նշանակված հարկեր: Թուրքիայում բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական խմբի՝ շարիաթական հարկեր (rusum-ի şeriye) եւ սովորության հարկեր (rusum-ի örfiye, tekelif-ի örfiye):

Շարիաթական հարկերի մեջ մտնում էին աշարը, խարաջը, զեքաթը եւ սրանց վրա հիմնված բազմատեսակ այլ հարկեր: Սովորության հարկերը նշանակվում էին սուլթանների հատուկ հրամաններով, երկրի բացառիկ կարիքների համար, հատկապես՝ պատերազմների ժամանակ:

**ԹԻՄԱՐ** - Օսմանյան կայսրության մեջ ռազմա-ավատատիրական հողային տիրույթ: Տարեկան եկամուտը կազմում էր մինչեւ 20 000 ակչե: Թիմարը տրվում էր սիվահուն, որը պարտավոր էր պատերազմի ժամանակ տրամադրել որոշ թվով զինվորներ:

**ԹԻՄՈՒՐՁԵԻ ՅԱՐԿ** - Գարնան սկզբներին գանձվող հարկերից: Ըստ էրգանիի լիվայի դաֆթարի, յուրաքանչյուր տնից գանձվել է մեկ թենկա, որը հավասար է եղել երկու օսմանյան ակչեի:

**ԹՈՒՂ** - Փաշաների իշխանության աստիճանը նշող ուսադիր, որը պատրաստվում էր ծիու պոչի մագերից: Փաշաները լինում էին մեկ, երկու եւ երեք թուղանի:

**ԹՈՒՂՐԱ** - հրովարտակների սկզբում դրվող սուլթանի անունը, հայրանունը բովանդակող մոնոգրամ

**ԹՈՒՐՆԱՋԻ** - Ենիչերիական բանակի բարձրաստիճան զինվորական կոչում: Չորախումբ ենիչերիական բանակում, ստեղծվել է սուլթան Բայազետ I-ի օրոք: Թուրնաջիները մասնակցում էին սուլթանական որսորդությանը: Յետագայում այսպես էին կոչվում նաեւ Անատոլիա եւ Ռումելի մեկնող եւ քրիստոնյաների որդիներին հավաքագրող պաշտոնյաները:

**ԻԼԹԻՉԱՄ** - Եկամտի մի քանի տեսակները կամ ամբողջ եկամուտը կապալով տալու կարգը կոչվում էր իլթիզամ, իլթիզամ վերցնող կապալառուն կոչվում էր մյուլթեզին:

ԻՄԱՍ - մահմեդական հոգեւոր առաջնորդ  
ԻՇՔԱՐԼՍՏ - Իտալերեն skarlato բառից: Կարմրագույն վեներտիկյան չու-  
խա:

ԻՄՊԵՆՁ - գլխահարկի տեսակ: Գանձվում էր քրիստոնյաներից, հավա-  
սար է եղել 25 ակչեի: Չաստատվել է սուլթան Մուրադ I-ի (1360-1389 թթ.) օրոք  
եւ վերացվել է 18-րդ դարում:

ԼԱՂԸՄՁԻ - բերդեր եւ ամրություններ պայթեցնելու համար ստորգետնյա  
անցք փորող աշխատավոր

ԼԵՎԵՆԴ - իտալերեն levantino բառից: Ռոճկավոր ցամաքային եւ ծովային  
թեթեւաշարժ զինվոր:

ԼԻՎԱ - տես ՍԱՆՏԱԿ

ԽԱՆ - Վեհապետներին, սուլթաններին տրված տիտղոս: Իջեւանատուն

ԽԱՍՍ - Օսմանյան կայսրությունում ռազմա-ֆեոդալական հողատիրույթ:  
Խասսը հատկացվում էր վեզիրներին, բարձրաստիճան պաշտոնյաներին եւ  
սուլթանների ընտանիքի անդամներին: Խասսի եկամուտը տարեկան կազմում  
էր 100 000 ակչե եւ ավելի: Խասսի տեղը իր եկամտի յուրաքանչյուր 5 000 ակ-  
չեի դիմաց պարտավոր էր ցեբելու կոչված հեծյալ զինվոր տալ, հոգավով նրա  
ծախսերը:

ԽԱՐԱՃ - Ընհանրապես ոչ-մահմեդական բնակչությունից գանձվող հար-  
կեր: Լինում էր երկու տեսակ. մեկը անհատից գանձվող գլխահարկն էր՝ խա-  
րաջ-ի ռուուս (haras-i rusus) կամ ցիզիե (cizye), մյուսը հողային հարկն էր, որը  
կոչվում էր խարաջ-ի արազի (harac-i arazi): Մահմեդականությունը ընդունելուց  
հետո հարկատուն ազատվում էր գլխահարկից եւ վճարում էր միայն հողային  
հարկը:

ՇԽԻ ՉԱՐԿ - յուրաքանչյուր տնտեսությունից գանձվող հարկ

ԿԱԴԸ - շարիաթական դատավոր, Կազա կոչվող վարչադատական շրջա-  
նի գլխավոր դատավոր

ԿԱԶԱ - վարչական միավոր, որը մտնում էր սանջակի մեջ

ԿԱԶԱՍՔԵՐ - շեյխ ուլ իսլամից հետո բարձրաստիճան կրոնավոր

ԿԱՄՎԱ - մետաքսե գունավոր գործվածք

ԿԱՆԹԱՐ - կշռի չափ, Ստամբուլի կանթարը հավասար էր 44 օրջայի, մո-  
տավորապես 56 կգ

ԿԱՐԱՄԱԼ - եղջերավոր անասուն

ԿԱՐԱ ՍԱԼԳՈՒՆ - Արղնի (Էրզանիի) շրջանի գյուղերից մեկի վճարած մե-  
ծագումնար հարկերից է: Միանվագ տարեկան 4 000 ակչեի չափով:

ԿԱՓԱՆ կամ ՂԱՓԱՆ - Շուկաներում մեծաքանակ ապրանքներ կշռելու  
համար հատուկ մեծ կշեռք: Այդ կշեռքի օգտագործման համար գանձվող հար-  
կը կոչվում էր Կափանի հարկ:



ԿԱՍԱԲԱ - գյուղաքաղաք, ավան

ԿԱԲԸՋԸ ԲԱՇԸ - արքունի պահապանների գլխավորը

ԿԱՖԹԱՆ - արտահագուստի տեսակ

ԿԵԲԵ, ԿԵԲԵՆԵՔ - կոշտ թաղիքից պատրաստված յակինջի

ԿԸՁԸԼԲԱՇԻ - Բառացի՝ կարմրագլուխ: Այսպես էին կոչվում Փոքր Ասիայի, Սիրիայի, Ադրպատականի թուրքալեզու ցեղերը, որոնք իրենց գլխարկի վրա կրում էին 12 կարմիր շերտակտորներ, ի պատիվ 12 շիա իմամների: Իրանում Սեֆյան հարստության գլխավոր զինվորական ուժը կըզըբաշներն էին:

ԿՈՖՁԹ - պակմազից եւ ընկույզից պատրաստված սուջուկ եւ քեստիլ

ՅԱԹԻԲ - մզկիթում խոսքեք (ուրբաք օրվա աղոթք) կարդացող կրոնավոր

ՅԱԹԹ-Ը ՇԵՐԻՖ - կայսերական հրովարտակ

ՅԱԶՋ, ՅԱՅԻ - լուսնային 12-րդ ամսում (զիլհիջջե), մեծ հանդիսավորությամբ ղեպի նվիրական Քաաբե կատարվող ուխտագնացությունը հաջջ էր կոչվում, իսկ ուխտավորը՝ հաջի:

ՅԱՐԲԻ - օտարահպատակ քրիստոնյա

ՅԻՍԱՐ ԵՐԻ - Բերդապահ զինվորներ: Նրանց հրամանատարը կոչվում էր դիզդար:

ՅՅՈՒՋՅԵԹ - շարիաթական դատարանի կողմից տրված պաշտոնական գրություն, որը հաստատում էր սեփականության իրավունքը

ՅՈՒՍՈՒՍ - Բերքի մեկ հինգերորդ մասը, որը տրվում էր ավատատիրոջը: Այս հարկը զանձվում էր ոչ-մահմեդականներից:

ՄԱԿԹՈՒ - Այսպես էին կոչվում այն հարկերը, որոնք յուրաքանչյուր տարի, առանց հաշվի առնելու բերքի քանակն ու պայմանները, նախապես որոշված հատուկ գումարով զանձվում էին պետության կամ հողատերի օգտին

ՄԱԼԻՔԱՆԵ - 1. ժառանգական ավատ: Այսպես էին կոչվում բարձրաստիճան պաշտոնյաներին, սպաներին, ավագանիներին սեփականության իրավունքով տրված հողը, չիֆթլիքը եւ այլ եկամտաբեր կալվածները: 2. Ավատատիրոջը (մալիքին) վճարվող հողային հարկ:

ՄԵՂՐԵ - Գինու եւ այլ ալկոհոլային խմիչքների համար օգտագործվող չափ: Մեկ մեղրեն կշռում էր 14-15 օքքա, մոտավորապես՝ 18-20 լիտր:

ՄԵԹՐՈՒՔԵ - (եմվալ-ի մեթրուքե emval-i metruke) տիրոջ կողմից թողնված ապրանքներ (լքյալ գույքեր)

ՄԵՋԼԻՍ - պետական գործերի քննության եւ որոշման համար գումարված ժողով

ՄԵՋԼԻՍ-Ի ՄԵԲՈՒՍԱՆ - պատգամավորների ժողով, պառլամենտ  
ՄԵՆՁԻԼ - 1. Իջեւան, պանդոկ, տուն: 2. մեկ ժամվա ճանապարհ  
ՄԵՎԼԱՆԱ - մահմեդական բարձրաստիճան կրոնավորին տրվող մակդիր  
ՄԻՐԼԻՎԱ - զորամասի հրամանատար

ՄՅՈՒԲԱՇԻՐ - դատական կատարածու, կառավարության հրամանները պատկանյալին հայտնող եւ կատարող պաշտոնյա

ՄՅՈՒՂ - կշռի չափ. բաթմանի մեկ այլ տեսակ, ըստ տեղի, ունեցել է տար-

բեր ծանրություն՝ 20 քիլեից մինչև 8 քիլե (քիլե՝ հավասար է եղել 25 կգ.)

ՄՅՈՒԴԵՐՐԻՄ - դասատու մեղրեսներում

ՄՅՈՒԹԵՖԵՐՐԻԿԱԿ - մահմեդական բարձրաստիճան կրոնավոր, որը իրավասու էր վճիռ կայացնել կրոնական հարցերում

ՄՅՈՒԹԵՍԵԼԼԻՄ - Բառացի նշանակում է «հանձն առած», «ստանձնած»: Սանջակի կառավարիչը, որը պաշտոնը ստանում էր կապալային ձեւով: Մյուսթեսլիխ էր կոչվում նաեւ հարկեր հավաքող պաշտոնյան:

ՄՅՈՒԼԷ - Սուլթանի կողմից նվիրատված անշարժ կալվածք: Մյուլքատերը ուներ այդ կալվածքի նկատմամբ ժառանգականության, նվիրատվության եւ վաճառելու իրավունք:

ՄՅՈՒՋԵՐՐԵԴ - տես ԱՄՈՒՐԻՈՒԹՅԱՆ ՉԱՐԿ

ՄՅՈՒՍԵԼԼԻՄ - որոշ հարկերից եւ պարտավորություններից ազատված անձ

ՄՅՈՒՍԵԼԼԻՄՆԱՄԵ - հարկ վճարելու արտոնագիր  
ՄՅՈՒՍԵԼԼԵՄ - Դեծելագորային: Խաղաղ ժամանակ զբաղվում էին գյուղատնտեսությամբ:

ՄՅՈՒԹԵՇԵՐԻ - շարիաթական օրենքներից գիտակ անձնավորություն  
ՄՅՈՒԹԵԿԵԼԼԻ - վակֆի կառավարիչը, իրավունք ուներ տնօրինել վակֆի եկամուտները

ՄՅՈՒՖԹԻ - մահմեդական կրոնական աստիճանավոր, կրոնապետ, շարիաթական սկզբունքներից համաձայն ֆեթվա տվող անձ

ՄՈՒԹԱՍԱՐՐԸՖ - Սանջակի կառավարիչ, ուներ քաղաքացիական եւ զինվորական իշխանություն: Մութասարիֆի աստիճան էին ունենում նաեւ վիլայեթի կառավարիչները:

ՄՈՒՂԱՖԻՉ - պարետ, բերդակալ, կառավարիչ

ՄՈՒՂԹԵՍԻՔ - քաղաք ներմուծվող եւ վաճառվող ապրանքներից տուրք գանձող, քաղաքի կարգ ու կանոնին հետեւող պաշտոնյա

ՄՈՒԿԱԹԱՍ - կրոնապատկան այգիներից եւ պարտեզներից գանձվող տասանորդ

ՄՈՒՐԹԱՍ - թուրքերեն (murtet) - հավատուրաց

ՅԱՅԱԲԱՇԻ - ենիչերիական հետեւակային զորամասի հրամանատար  
ՅՈՒՅՈՒՔ - Թուրքերեն (yurumek) քայլել բառից: Այսպես էին կոչվում թուրքմենական եւ քրդական ծագում ունեցող այն ցեղերը, որոնք թուրքական կյանք էին վարում: Նրանք կատարում էին նաեւ սահմանամերձ շրջաններում պահնորդային ծառայություններ, որի համար ազատվում էին որոշ հարկերից:

ՅՈՒՔ - դրամական գումար, հավասար էր 100 000 ալչեի

ՅՈՒՐԹԼԻՔ եւ ՕՉԱՔԼԸՔ - Սահմանամերձ գոտիներում հողերը ավատատերերին էին հատկացվում յուրթլուք կամ օչաքլըք անվան տակ: Նրանք պարտավոր էին պաշտպանել պետական սահմանները եւ պատերազմի ժամանակ ծառայել բանակում: Ավատատերը մահանալու դեպքում, հողը ժառանգաբար անցնում էր որդիներին:

ՆԱՅԻԵ - վարչական միավոր, որի կառավարիչը կոչվում էր կայմակա՛մ  
ՆԱՅԻԲ - Շարիաթական դատարանի դատավոր: Նայիբ էր կոչվում նաեւ  
կազասբերի փոխանորդը:

ՆԱՅԻՐԶԵԲ - Նայիբի համար գանձվող հարկ: Յուրաքանչյուր տնից գանձ-  
վել է մեկ թե՛նկա, որը հավասար է եղել օսմանյան երկու ակչեի:

ՆԱՄԱՉ - մահմեդական կրոնական աղոթք

ՆԱՐԻՆ - ապրանքների եւ մթերքների վրա նշանակված սակագին

ՆԵՎՐՈՒՉ - Նոր օր, Նոր տարի: Հին իրանական տոմարով տարեգլուխ եւ  
գարնան սկիզբը համարվող մարտ ամսվա 9-րդ օրը:

ՆԻՇԱՆՁԻ - արքունական գրասենյակի գրագիր, որը պատրաստում էր  
սուլթանի հրովարտակներն ու գրությունները

ՇԱՐԻԱԹ - իսլամի կրոնական եւ իրավական կարգերին վերաբերող նվի-  
րական կանոնները

ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ - Օսմանյան կայսրության մեջ շարիաթական գործերին  
հսկող մահմեդական առաջնորդ, որը պետության մեջ մեծ վեզիրից հետո ամե-  
նաբարձր պաշտոնյան էր

ՇԻՐԱ - խաղողի հյուսք, խաղողի տուրք

ՇԻՐԵՁԻԼԻԲ - գինուց գանձվող հարկ

ՉԱՎՈՒՇ - Դիվանում եւ արքունիքում ծառայող կրտսեր սպա: ՉԱՎՈՒՇ ԲԱ-  
ՇՇ՝ չավուշների պետ:

ՉԱԲՇԻՐ - Շավվարի տեսակ: Կանանց չաքշիրները զարդարված էին լի-  
նում սըրմայի (արծաթյա կամ ոսկյա) թելերով:

ՉԻՖԹ ( ՉԻՖԹԼԻԲ) - Օսմանյան կայսրության մեջ մշակվող հողային տա-  
րածություն, որը հավասար էր 70-80 դեոնումի, ըստ հողի որակի, այն կարող էր  
հասնել 120-150 դեոնումի:

ՉԻՖԹ ԲՈՉԱՆԻ ՀԱՐԿ - համապատասխան չավով հարկ, որը պարտա-  
վոր էր վճարել գյուղացին՝ առանց հիմնական պատճառի հողը չմշակելու դեպ-  
քում

ՉԱԲԱ - Հարկ, հարկերի գանձում: Թուրքական կանոննամեններում ջաբա,  
ջաբա բեննաք է կոչվել ինքնուրույն մշակելու հողակտոր չունեցող գյուղացու  
ամուրի որդին:

ՉԻԲԱՅԵԹ - վակֆի բոլոր տեսակի եկամուտների գանձումը

ՉԻՁԻԵ - Գլխահարկ: Ոչ-մահմեդականներից գանձվող հարկ (տես ս խԱ-  
ՐԱՉ):

ՈԱՅԱԹ - Մինչեւ 17-րդ դար գործածվում էր հարկատու, հողագործ գյու-  
ղացիության իմաստով: 17-րդ դարի կեսերից թուրքերը ռեայա էին անվանում  
ոչ-մահմեդական հպատակներին:

ՈԱՅԱԹԻ ՀԱՐԿ - բեննաքի հարկի մի այլ անվանումը (տես ս ԲԵՆՆԱԹ)

ՈԱՍԱԶԱՆ - Արաբական լուսնային տարվա 9-րդ ամիսը: Այս ամսին մահ-մեղականները պաս են պահում:

ՌԵԻՍ ՈՒԼ ՔՈՒԹԹԱԲ - 16-17-րդ դդ. Օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստրի պարտականությունները կատարող անձը

ՌՈՒՄԵԼԻ - Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթներին տրվող անունը

ՍԱԴՐԱԶԱՍ, ՎԵԶԻՐ-Ի ԱԶԱՍ - վեզիրների, վեջիլների պետը, որը համարվում էր սուլթանի տեղակալը

ՍԱԼԱՐ, ՍԱԼԱՐԻԵ - գյուղացու տարեկան բերքի մի մասը, որը գանձվում էր պետական պաշտոնյաների համար

ՍԱԼԳՈՒՆ - միանվագ տարեկան վճարվող հարկ, որը բաժանվում էր բնակիչների վրա

ՍԱՆՋԱԿ - վիլայեթի մեջ մտնող վարչական միավոր, որը ղեկավարում էր սանջակբեյը կամ միրլիվան

ՍԵԿԲԱՆ - 1. Արքունի որսորդական շներին խնամող ծառան; 2. Զինվորական դասակ ենիչերիական օջախում: Հրամանատարը կոչվում էր Սեկբան բաշի:

ՍԵՄԵՆ - երկու կողմերի համաձայնությամբ նշանակված հարկ, որի արժեքը կոչվում էր սեմեն-ի միսը

ՍԵՎ ԱԿՉԵ - Ակ-կոյունլուների պետության երեք սեւ ակչեն հավասար էր օսմանյան մեկ ակչեի

ՍԻԶԻԼ - շարիաթի դատարանի որոշումը կամ այն տոմարը, ուր արծաճագրվում էր տվյալ որոշումը

ՍԻՓԱՀԻ - Օսմանյան կայսրության հատուկ հեծյալ զորամաս, որը կազմված էր թիմարի եւ զեամեթի տերերից

ՍՈՒԲԱՇԻ - Քաղաքներում կարգ ու կանոնին հետեւող պաշտոնյա: Ոռոգման եւ խմելու ջրի բաժանմանը հսկող պաշտոնյա: Աջեմի օջախներում միջին աստիճան ունեցող սպա:

ՍՈՒՍԱՐ - կշռի չափ, որը հավասար է մեկ քիլեի (տես ՔԻԼԵ)

ՎԱԼԻ - վիլայեթի կառավարիչը

ՎԱԿՖ - Բարեգործական նպատակներով մզկիթներին նվիրված շարժական եւ անշարժ գույք, որոնք ազատ էին պետական հարկերից

ՎԱԿԻԵ (օքքա) - մոտ 25 կգ

ՎԻԼԱՅԵԹ ( էՅԱԼԵԹ ) - Օսմանյան կայսրության վարչական ամենամեծ միավորը, նահանգ

ՎՈՅՆՈՒԿ - Բառացի՝ զինվոր, սլավոներեն վոյնիկ բառից: Դեռեւս սուլթան Մուրադ II-ի (1421-1451) ժամանակ քրիստոնյա հպատակներին, հատկապես բուլղարներին, վերցնում էին բարձրաստիճան զինվորականների ծիծեր խնամելու համար, որոնց եւ անվանում էին վոյնուկներ:

ՎՈՅՎՈՂԱ - Բակկանյան երկրների իշխաններին թուրքերի կողմից տրված

անվանումը: Կոլվոդա էին կոչվում նաեւ այն պաշտոնյաները, որոնք հավաքում էին իլիիզամի տրված հողաբաժինների հարկերը:

ՓԱՐԱ - Օսմանյան կայսրության մեջ դրանական միավոր: 40 փարան 1 ղուրուշ էր: 1 փարան հավասար է եղել 3 ակչեի:

ՓԵՇԹԵՇ - Պարսկերեն փիշքաշ (մատուցել) բառից: Պետական պաշտոնյաներին նվերի անվան տակ մատուցվող ընծան:

ՓԵՐԱԲԵՆԴԵ - քաղաքի արվարձան

ՔԱՆԹԱՐ - կշռի չափ, հավասար է 100 կգ.

ՔԱՍԱՍ - շարիաթական դատարանի պաշտոնյա, որը զբաղվում էր ժառանգության եւ կտակների հարցերով

ՔԵԹՆՈՒՂԱ - Չինվորական եւ քաղաքացիական պետական բարձր պաշտոնյաներին տրվող անվանում: Հազինե քեթսուդասը (hazine kethudasi)՝ զանձարանի քեթսուդա, սեդարեթ քեթսուդասը (sedaret kethudasi)՝ վեզիրության քեթսուդա, թերսանե քեթսուդասը (tershane kethudasi)՝ նավաշինության քեթսուդա:

ՔԻԼԵ - Կշռի չափ: Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում քիլեի չափը տատանվել է: Ընդհանրապես գործածական է եղել Ստամբուլի քիլեն, որը հավասար է եղել 12-20 օրքայի, այսինքն՝ մոտավորապես 25 կգ.:

ՔԻՍԵ, ԲԵՍԵ - Փոքր տուպրակ, դրամապարկ, քսակ: Դրամի քեսեն հավասար էր 500 ղուրուշի:

ՔՅՈՒՐԵԿՉԻ - Բառացի նշանակում է թի բանեցնող: Կարիքի եւ զանազան արտակարգ դեպքերի, հատկապես՝ պատերազմների ժամանակ, գյուղացիները կատարում էին զանազան պարիակային կառուցումներ եւ այլն, այդ պարիակները կոչվել են Քյուրեկչի:

ՖԱՀԻՐ - բարձրորակ, բանկարժեք հագուստ

ՖԵԹՎԱ-Ի ՇԵՐԻՖ - դատական գործերի վերաբերյալ մյուֆթիի կողմից տրված գրություն

ՖԵՐԱՋԵ - լայն թևերով, ծածկոցանման հագուստ, որի մեջ փաթաթվում էին մահմեդական կանայք

ՖԵՐՄԱՆ - սուլթանի թուղթայով դրոշմված հրովարտակ

ՖԼՈՐԻ ( ՖԻԼՈՐԻ ) - եվրոպական ոսկեդրամին թուրքերի տված անվանումը

ՖՈՒԹՈՒՎԿԵԹ - կրոնա-տնտեսական հիմքի վրա առաջացած արիեստավորների եւ էսնաֆի միություններին տրվող անվանում



## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

### Ա

- Աբդուլ Ազիզ - 42, 205
- Աբդուլհակ Ա. - 110, 127
- Աբդուլ Քամիլ Ա. - 22, 35, 72, 90, 264
- Աբդուլ Մեջիդ - 66, 224
- Աբուլածե Տ. - 81, 103
- Աբուբեքր իբն Բահրամ - 110
- Աբուլ Ֆիդա - 112
- Աթալի Նեվիզադե - 15
- Ալի Չաուշ - 18, 31, 86, 87, 89
- Ակդադ Ա. - 92
- Ահմեդ Ա. - 16
- Ահմեդ Գ. - 20, 21, 25, 28, 42, 265
- Ահմեդ ԼյուքՖի - 204, 205, 224
- Ահմեդ Ջեվդեթ փաշա - 19, 20, 22, 57, 59, 63, 76, 128
- Ահմեդ Ուեֆիկ - 17, 28, 33, 37, 74-76, 224, 225
- Ահմեդ Վասըֆ - 11
- Աղանյանց գիւտ - 264
- Աճառյան Յ. - 45, 75, 76
- Այնը Ալի Էֆենդի - 11, 16, 31, 76, 111, 123, 127, 129
- Անանուն Սեբաստացի - 49
- Անասյան Յակոբ - 44, 75
- Անդոն Պետրոս Յասուն - 194, 195
- Աշ-Շարիշի - 111
- Առաքել Ակնեցի - 40
- Առաքել Դավրիժեցի - 54, 98, 104, 105
- Ասաֆ Յալետ Չելեբի - 18, 32
- Աստվածատուր Ակնեցի - 40
- Ավդալբեկյան Թ. - 104
- Ակրեփե Սյունիոր - 32

### Բ

- Բաբինգեր Ֆրանց - 203
- Բամպուրճեան Գ. - 76
- Բարկան Օմեր - 25, 32, 78, 82, 102, 103
- Բարթոլոմեոս Վ. - 106, 115, 116, 127, 128
- Բարս Թուղլաջը (Բարսեղ Թուղլաջյան) - 52
- Բերբերյան Յ. - 33, 73, 74, 203-205
- Բոջուլյան Մուրադ - 89, 90, 103, 104

### Գ

- Գերհարդ Մերկատոր - 107
- Գիբրոնս Յ. Ա. - 52, 76
- Գիւտ Աղանեանց - 264

Գիրգաս Վ. - 42, 74  
Գրիգոր Ղարանաղցի - 45, 51, 75  
Գրիգոր Պասմաճյան (Հայոց Պատրիարք) - 35, 36, 204, 264  
Գրիգոր Պատրիարք (Կ. Պոլիս) - 36, 182, 241  
Գուրգի Մահմադ փաշա - 98

## Դ

Դանեղյան Լորենտ - 42, 74  
Դավութ փաշա - 224  
Դելի Ռիդվան - 227

## Ե

Երեմիա Չելեբի Քեոմուրճյան - 41, 48, 74, 75, 105, 204, 224, 225

## Զ

Չաքարիա Պատրիարք - 35, 99, 241-243, 246, 264-265  
Չուլայան Մանվել - 25, 32, 74, 76, 95, 102-105, 118, 265

## Է

Էդիրնեյի Մեհմեդ - 15  
Էյուբ Էնսարի - 217, 223, 225  
Էվլիա Չելեբի - 57, 87, 91, 104, 106, 115-120, 125, 128

## Ժ

ժեյլազկովա Ա. - 43, 44, 52, 53, 75, 76

## Թ

Թահմասալ Շահ - 54,  
Թեյմուր փաշա - 24  
Թեշներ Փ. - 31  
Թովմաս Բերիացի - 37  
Թովչուլար Զյաթիբի Արդել Քադիր էֆ. - 15

## Ի

Իբրահիմ (սուլթան) - 93  
Իբրահիմ Սյուբեֆերիկա - 107-109  
Իբրահիմ Փեչեկի - 11, 13-15, 18, 54, 55  
Իզնատիոս Տիգրանակերտցի - 42  
Ինճիճեան Ղուկաս - 46, 74, 75, 204, 224  
Ինջե Ահմեդ - 227  
Իսմայիլ Ասլմ - 11, 20

## Լ

Լալա Մուստաֆա փաշա - 55  
Լեվոն Վարդան - 25

Լյութֆի փաշա - 10

## Խ

Խաչատուր Կողբեցի - 45

Խաջիրեկիչ Խ. - 31

Խաջիկյան Լեվոն - 46, 75

Խոջա Սադեղդին էֆ. - 30

## Կ

Կայքբայ (եզիպտոսի սուլթան) - 78

Կարաջելեբիզադե Աբդուլ Ազիզ - 11, 15, 18

Կանրապետ Պալատեցի (Կ.Պոլսի պատրիարք) - 204, 205

Կեննան փաշա - 88

Կոչի Բեյ Գյումյուրջինեւլի - 11, 17, 18, 31, 76, 93

Կոջա Գյուսեյն էֆ. - 11

Կոջա Նիշանջի - 111

Կոջա Սեհմեդ փաշա - 16

Կոջա Սիման (ճարտարապետ) - 52, 171

Կոջա Սիման փաշա (մեծ վեզիր) - 179

Կրաչկոպսկի Ի. - 107, 115, 116, 127, 128

Կուցիա Կ. - 79

## Յ

Յադիե Թունջեր - 25, 44, 49, 74, 75, 82, 103

Յակոբ եպիսկոպոս Պոլսեցի (պատրիարք) - 36, 203

Յակոբ Կարնեցի - 40

Յակոբ Մանվելյան - 36

Յակոբյան Վ. - 104

Յամբարյան Ազատ - 83, 102, 103

Յամդալլահ Ղազվինի - 111, 113, 127

Յամմեր Ի. - 16, 265

Յասան Բեյզադե - 15

Յաֆըզ Աիմեդ Լյութֆի - 11

Յեմդեմի Սուլթադադե - 11

Յյուսեյն - 30

Յյուսեյն Շաքիր - 11

Յովնան Ակնեցի - 40

Յովհաննես Արճիշեցի - 53

Յովհաննես Արշարունի (Կ.Պոլսի պատրիարք) - 199, 205

Յովհաննես Կոլոտ - 265

Յուսեյն Զադե - 17

## Ղ

Ղազարյան Յայկ - 77, 102

Լյուքսի փաշա - 10

## Խ

Խաչատուր Կողբեցի - 45  
Խաջիրեկիչ Խ. - 31  
Խաչիկյան Լեվոն - 46, 75  
Խոջա Սադեղդին էֆ. - 30

## Կ

Կայքբայ (Եգիպտոսի սուլթան) - 78  
Կարաչելեբիզադե Աբդու Ազիզ - 11, 15, 18  
Կարապետ Պալատեցի (Կ.Պոլսի պատրիարք) - 204, 205  
Կենան փաշա - 88  
Կոչի Բեյ Գյումյուրջինելի - 11, 17, 18, 31, 76, 93  
Կոջա Գյուսեյն էֆ. - 11  
Կոջա Նիշանջի - 111  
Կոջա Սեհմեդ փաշա - 16  
Կոջա Սիման (ճարտարապետ) - 52, 171  
Կոջա Սիման փաշա (մեծ վեզիր) - 179  
Կրաչկովսկի Ի. - 107, 115, 116, 127, 128  
Կուցիա Կ. - 79

## Չ

Չադիե Թունջեր - 25, 44, 49, 74, 75, 82, 103  
Չակոբ եպիսկոպոս Պոլսեցի (պատրիարք) - 36, 203  
Չակոբ Կարնեցի - 40  
Չակոբ Մանվելյան - 36  
Չակոբյան Վ. - 104  
Չամբարյան Ազատ - 83, 102, 103  
Չամդալլահ Ղազվինի - 111, 113, 127  
Չամմեր Ի. - 16, 265  
Չասան Բեյզադե - 15  
Չաֆրզ Աիմեդ Լյուքսի - 11  
Չեմդեմի Սուլթազադե - 11  
Չյուսեյն - 30  
Չյուսեյն Շաքիր - 11  
Չովնան Ակնեցի - 40  
Չովհաննես Արճիշեցի - 53  
Չովհաննես Արշարունի (Կ.Պոլսի պատրիարք) - 199, 205  
Չովհաննես Կոլոտ - 265  
Չուսեյն Ջադե - 17

## Ղ

Ղազարյան Չայկ - 77, 102

## Ս

- Մահմուդ Ա. (Մուլտան) - 28  
Մահմուդ Բ. (Մուլթան) - 36, 90, 204, 205  
Մահուեսի Մանուկ Աստվածատրյան - 47  
Մաղաքիա Դերջանցի - 51  
Մաղաքիա Չելեբի - 98  
Մանանդյան Գ. - 45, 75, 76  
Մելիք Աիմեղ փաշա - 98  
Մեհմեդ Իբն Կասիմ - 134  
Մեհմեդ Բ. (Մուլթան) - 23, 34, 78-80, 81  
Մեհմեդ Դ. (Մուլթան) - 17, 28, 39, 40, 204  
Մեհմեդ Ռաշիդ - 11  
Մեհմեդ Ռեշադ Բ. (Մուլթան) - 205, 237  
Մեյեր Ս. - 92  
Միքայելյան Գ. - 127, 128  
Մյունեջջիմ Բաշի - 106, 121, 122, 129  
Մյուֆթի Աբուսուդ - 85  
Մուհամմեդ մարգարե - 225  
Մուղտիսի - 75  
Մուստաֆա Բ. (Մուլթան) - 28, 88, 93  
Մուստաֆա Գ. (Մուլթան) - 28, 35, 204, 265  
Մուստաֆա Լալա փաշա - 55  
Մուստաֆա Նայիմա - 11, 18  
Մուստաֆյան Կոլո - 70  
Մուստաֆա Ռեշիդ փաշա - 63  
Մուստաֆա Սամի - 11  
Մուստաֆա Սելանիկի - 11, 12, 18, 30, 53  
Մուրադ Գ. (Մուլթան) - 12, 29, 47, 81, 84, 120, 135, 140, 180, 226  
Մուրադ Դ. (սուլթան) - 13, 15, 17, 56, 91, 178, 180, 203, 224-226, 264

## Յ

- Յակուտ ալ Գամալի - 113, 114  
Յավուզ Էրջան - 23, 30, 49, 52, 73  
Յուսուֆ Ջիա փաշա - 42

## Լ

- Լալբանդյան Գ. - 128  
Լայան Գակոբ - 204, 264  
Լեջիբ Ասլմ - 115  
Լիկողայոզ Այվազ - 45

## Շ

- Շահ Աբաս - 56  
Շահ Իսմայիլ - 99  
Շանի Ջադե - 43  
Շաքիր - 19



Շեյխ Մուհամմեդ Իխլասի - 122  
Շեյխ Վանի - 39  
Շերեֆ Խան Բիբլիսի - 111, 112

## Չ

Չելերի Ջադե (Իսմայիլ Ասլմ) - 19-21  
Չերքեզ Իսկենդեր փաշա - 91  
Չիխաչով Փ. - 64, 66, 69, 76  
Չինլիօղլու Չ. - 74

## Պ

Պալճյան Ա. - 77  
Պասմաճյան Գրիգոր (Կ.Պոլսի պատրիարք) - 35, 36, 204

## Ջ

Ջերրախ Ջադե - 15

## Ռ

Ռաշիդ Մուհամմեդ էֆ. - 19  
Ռաջաբ փաշա - 28  
Ռոբերթ Տանկով - 128  
Ռոլեն ժեկմեն - 62, 76  
Ռուստեմ փաշա - 10

## Ս

Սադուլլահ էնվերի - 11  
Սադեդդին Խոջա էֆ. - 30, 130  
Սամի - 19  
Սարգիս Գ. (Երուսաղեմի հայ պատրիարք) - 73  
Սարգիս Կարազոչ - 23  
Սարգսյան Երվանդ - 102  
Սաֆրաստյան Արամ - 9, 10, 18, 25, 30, 32, 74, 76, 116, 122, 128, 129  
Սելիմ Ա. (Սուլթան) - 29, 37, 43, 80, 81, 128, 174, 224  
Սելիմ Բ. (Սուլթան) - 23, 179, 203  
Սելիմ Գ. (Սուլթան) - 10  
Սիման Կազասկեր - 171  
Սիմեոն Լեհացի - 47, 58, 175  
Սիմեոն Տիգրանակերտցի - 58  
Սիրունի Հակոբ - 203, 204  
Սիմեոն Երեւանցի - 27, 28, 133  
Սմիռնով Վ. - 31  
Ստեփաննոս Աղավնի (Կ.Պոլսի պատրիարք) - 36, 205  
Սվանիձե Մ. - 26, 27, 79  
Սուրիի - 19  
Սուլեյման Իզզի - 11, 19  
Սուլեյման Ա. (Սուլթան) - 28, 80, 178, 180, 224, 225

Սուլեյման Բ. (Կանունի) - 10, 12, 13, 53, 81, 89, 116, 145, 146

#### Վ

Վասըֆ - 19

Վեյլամինով-Չերնով - 127

#### Տ

Տեր-Ղեւոնդյան Արամ - 113, 122, 129

Տիգրան Բ. - 113

Տվերիտինովա Ա. - 13, 18, 30-32, 80, 83, 102, 104

Տուլինա Ն. Ա. - 76

#### Ու

Ուզուն Բասան - 78, 79, 95

Ուզունչարշըլը Ի. - 31, 49, 51, 52, 75, 76, 127, 179, 180

#### Փ

Փալազյան Բակոբ - 24, 26, 32, 47, 88, 99, 105

Փիրի-փաշազադե - 15

#### Ք

Քեմանի Մուստաֆա փաշա - 20, 21

Քեմալփաշազադե - 10

Քյաթիբ Չելեբի - 11, 14-16, 18, 31, 43, 74, 87, 88, 103, 106-114, 117-125, 129, 178

Քյոփրյուկու Մեհմեդ փաշա - 37

Քյուլյուկ Նիշանջի - 10

#### Օ

Օզդեմիր Օսման փաշա - 55

Օսման Ա. (Հիմնադիր) - 25, 84

Օսման Բ. (Սուլթան) - 11

Օսման Գ. (Սուլթան) - 265

#### Ֆ

Ֆարիադ փաշա - 120

Ֆերիդուն Ահմեդ Բեյ - 11-13

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

### Ա

- Ադանա - 70, 112, 114, 150, 152
- Ադիլբեվազ (Արծկե) - 13, 54, 123, 228
- Ադրիանապոլիս (Եդիրնե) - 204
- Ադրպատական - 13, 55, 108, 112
- Ախթաճար - 41, 119, 120
- Ախալցխա - 26, 88, 109, 229
- Ակշեհիր - 118
- Ալշակալա - 123, 228
- Աղվանք (Առան) - 112
- Ամասիա - 55, 70, 175
- Այնթափ - 114
- Անատոլիա - 13, 36, 169, 172, 182, 191, 241, 242, 256, 260, 262
- Անգլիա - 65, 66, 204
- Անդրկովկաս - 9, 14, 20, 26, 55, 110, 116, 122, 130
- Անի - 114, 127
- Ամերիկա - 57, 108
- Ամիդ - 45, 100, 228
- Ասիա - 108, 109
- Ավստրիա - 22, 66
- Արաբկիր - 100, 148, 175
- Արգինա - 71
- Արեւմտյան Չայաստան - 9, 25
- Արճեշ - 13, 122, 123, 228
- Արմենիա - 109, 112, 113, 121, 127
- Արտահան - 124, 229

### Բ

- Բաբալան - 121
- Բաբերդ - 79
- Բաղդադ - 229
- Բաղեշ (Բիբլիս) - 112, 118, 122
- Բայան - 112
- Բայբուրդ (Բաբերդ) - 153, 154, 175
- Բայուր - 131
- Բանդրմա - 186, 188
- Բանհոր - 132
- Բասենի լիվա - 26, 140, 143
- Բասրա - 229
- Բարդա (Պարտավ) - 121, 123, 228
- Բարկիր (Բերկրի) - 123, 228
- Բաջու - 21
- Բելգորոդ - 204
- Բեյշեհիր - 170
- Բերդբերեք (Բերդագրակ) - 229
- Բյուզանդական կայսրություն - 34

Բուրսա (Բրուսա) - 45, 85

## Գ

Գալարա - 199, 216, 217, 220, 225  
Գեմջե (Գանձակ) - 120  
Գերմանիա - 115, 181  
Գյուրջիստան (Վրաստան) - 109, 127  
Գյումուշխանե - 69  
Գորիցա (Ալբանիա) - 17

## Դ

Դաղստան - 21  
Դամասկոս - 110  
Դերբենդ - 21  
Դիարբեքիր - 87, 95, 100, 113, 118, 123, 146, 171, 179, 228  
Դվին (Դարիլ) - 114, 122  
Դրեզդեն - 23  
Դուրսուդ - 133

## Ե

Եգիպտոս - 78, 115  
Եվրոպա - 9, 14, 19, 106, 117  
Երևան (Բևան) - 14, 15, 20, 26, 28, 32, 56, 83, 108, 114, 115, 120, 135  
Երզնկա (Էրզինջան) - 78, 118, 122  
Երուսաղեմ - 23, 120, 182

## Զ

Չեյթուն - 237  
Չուկկադերիե - 170, 171

## Է

Էդիրնե - 225  
Էլբիստան - 114  
Էնդերուս - 118  
Էջմիածին (Ուլ Քիլիսե) - 26, 28, 41, 42, 45, 119, 120  
Էրզանի - 100, 123, 228  
Էրզրում - 54, 56-58, 70, 71, 79, 88, 109, 112, 118, 119, 121, 123, 228  
Էրմենիստան (Չայաստան) - 250, 284-285  
Էքրեքտեն - 133

## Թ

Թարսուս - 70, 112  
Թավրիզ - 13, 54  
Թեթնիկ-ի Ուլիա - 133  
Թերջիլ - 123, 228  
Թիֆլիս (Թբիլիսի) - 20, 32, 112, 113, 121

Թորքաք - 40, 42, 70, 162, 232

Թուրքիա - 17, 19, 21, 23, 25, 29, 46, 47, 53, 54, 56, 57, 60, 62, 64-66, 69, 70, 72, 73, 78, 82, 93, 106, 125, 179

## Ի

Իսփիր - 68, 90, 123, 228

## Լ

Լեհաստան - 115

## Խ

Խաաքոյ - 186

Խարբերդ - 121, 123, 228

Խիզան - 112

Խլաք - 13, 54, 112, 121, 122

Խնուս - 112, 123, 228

Խոշաք - 112

## Ծ

Ծովք - 113

## Կ

Կախտա - 114

Կամախ - 78, 79, 175

Կասրի Շիրին - 56, 229

Կաստամունու - 122

Կարս - 26, 54, 109, 112, 113, 117, 124, 146, 229

Կարադերե - 46

Կարահիսարի Շարքի - 123, 228

Կարաման - 170, 179

Կարին (Կալիկալա) - 113, 118, 121

Կարկար - 123, 228

Կեսարիա - 52, 168, 170

Կըզըջա - 134, 228

Կիլիկիա - 24, 111, 113, 114, 194

Կիպրոս - 111, 112

Կ.Պոլիս - 29, 32, 34-37, 42, 45, 51, 57-59, 62, 70, 98, 110, 115, 131, 134, 179-182, 186, 188, 191, 194, 195, 199, 200, 202, 203, 205, 206, 211, 213-222, 224-226, 231, 236, 241, 242, 245, 246, 264

Կովկաս - 59, 115

Կուզիջան - 123

## Հ

Հաքեչստան - 115

Հայաստան - 13, 14, 20, 24, 26, 29, 30-32, 37, 39, 43, 44, 47, 49, 53-56, 70, 72, 74, 76, 78, 86, 90, 92, 93, 95, 102, 104-106, 108, 112-118, 122, 125, 127, 128, 228



Համչեն - 46  
Հասլար - 220, 223  
Հարրենդ - 132  
Հերսենիդ - 133  
Հոլանդիա - 115

## Ղ

Ղալարիա - 246, 247, 250-252, 256-258, 262  
Ղարաբաղ - 14, 108  
Ղրիմ - 57, 65, 69, 115

## Ս

Մազանդարանի նահանգ - 47  
Մալա - 132  
Մալարիա - 96, 97, 103, 114, 175  
Մամրվան - 123, 228  
Մանազկերտ - 122, 123, 228  
Մարաշ - 112, 114, 170  
Մենդերենդ - 133  
Մեծ Հայք - 78, 112  
Մեֆարկին - 228  
Միհալիճ - 186  
Միջագետք - 115  
Մոլդովա - 115  
Մուշ - 41, 45, 99, 112, 122, 123, 228

## Ն

Նախիջևան - 14, 108, 120  
Նիֆե - 131  
Նուրսենիկ - 133

## Շ

Շարին Կարահիսար - 119  
Շիմշատ (Աշմուշատ) - 121  
Շիրվանի խանություն - 21, 120-122

## Ռ

Ռակեղջուր - 225  
Ռատան - 122

## Չ

Չալդրան - 54  
Չղղըր - 27, 55, 109, 113, 124, 229  
Չմշկածագ - 100, 123, 175, 228

## Պ

Պաղեստին - 115

Պեյրուք - 32

## Ջ

Ջուրզան - 121

## Ռ

Ռումելի - 36, 121, 182, 191, 241, 242, 260, 262

Ռուսաստան - 21, 59, 64, 65

## Ս

Սամսուն - 122

Սարայ - 224

Սեբաստիա (Սվլազ) - 40, 99, 180, 227

Սիիրդ - 123, 228

Սինոպ - 122

Սիս - 100, 111, 112

Սիրիա - 115

Սոֆիա - 24, 26, 32, 206

Ստամբուլ - 13, 15, 17-19, 22, 23, 28, 30, 31, 33, 40, 48-51, 73, 91, 125, 139, 167-169, 173, 175, 177, 178, 185, 225, 250-253, 255-257, 262

Սուլու Մանաստր - 203, 211

Սուբմանարադ - 112

## Վ

Վաղարշապատ - 26, 33

Վան - 13, 56, 109, 112, 113, 118, 123, 227-229

Վիննա - 23, 59

Վրաստան - 55, 108, 111, 112

## Տ

Տիրեբուլու - 69,

Տրապիզոն - 26, 91, 117, 122

## ՌԼ

Ռևրաինա - 115

Ռուֆա (Ռուհա) - 146

## Փ

Փայտակարան (Բայլական) - 113, 121

Փերա - 199

Փերաքենդե - 36

Փոքր Հայք - 78, 112

**Ք**

Քանիսա - 114

Քըղի - 145

Քոնիա - 70, 179, 180

Քուրդիստան - 115

**Օ**

Օլբի - 114, 124, 229

Օսմանյան կայսրություն - 7, 10-24, 26, 29, 32-34, 36, 43, 55-57, 59-61, 64, 66, 71, 78-80, 82-85, 88, 89, 93, 94, 103, 108, 111, 120, 123, 125, 139, 166, 173, 175, 178, 179, 185, 186, 189, 198, 200, 229, 230, 232

Օվաջըք - 123, 228

**Ֆ**

Ֆարսի (նահանգ Պարսկաստանում)- 47

Ֆրանսիա - 22, 65, 66, 117, 204

## ERMENİSTANA VE ERMENİLERE AİT TÜRKÇE BELGELER

(Hulâsa)

Ermenistan tarihine ait yerli kaynakların yanında Rum, Arap, Fars, Batı Avrupa ve Transkafkasya halklarının dillerinde bol miktarda kaynak mevcuttur. Tabii tarihin bütün teferruatı ile incelenmesi için Osmanlı kaynaklarının vermiş olduğu bilgiler esasen 16-19-cı asırlarda Batı Ermenistanın tarihine ait tarihi ve belgesel mahiyetteki kayıtlar, bunlar arasında fermanlar, kanunlar, kanunnameler, büyük nem taşımaktadır.

Kuşkusuz, Osmanlı tarihileri kendi eserlerini yazarken, olaylardan bahsederken, aynı zamanda Ermenistan ve komşu ülkelerin halklarına, onların tarihi, coğrafyasına kısmende sosyo-ekonomik durumuna değinmiş, bu yönde önemli bilgiler kaydetmişlerdir.

Bilindiği gibi Osmanlı tarihçilerinin vermiş oldukları bilgiler, genellikle İmparatorluğun askeri ve siyasi düzeni bakımından oldukça önemli olmasına rağmen, ülkenin sosyo-ekonomik yapı açısından yetersiz kalmaktadır. Bu bakımdan Türkiyede ve diğer ülkelerdeki arşivlerde bulunan Osmanlı tarihine ait belgesel kaynaklar büyük önem taşımaktadır.

Son yıllarda Türk historiografisi Osmanlı İmparatorluğunun ilk döneminin tetkikine özen göstererek Türkiyede birçok tarihsel belgeler yayınlamıştır. Fakat bu yayınlarda Osmanlı İmparatorluğunun gayrimüslim halklarına ait belgelere gerekli önem verilmemiştir. Halbuki, Türk devlet arşivlerinde ve kitaplıklarında çok zengin koleksiyonlar mevcuttur.

Mesela İstanbulda, Divan-i Humayunda bulunan ÖGayrimüslim cemaatlara ait defterler arasında Ermenilere ait yedi sıra ile düzenlenmiş, 1860-1910 yılları kapsayan bir ok berat ve ahkam defterleri mevcuttur. Aynı arşivdeki 1869-1921 yıllarını içeren kilise defterleri özel önem taşımaktadır. Maalesef, bugün bu belgelerden istifade etmek hemen hemen imkânsız gibidir.

Genellikle Türkiyedeki ve diğer ülkelerdeki belgelerin yayını Osmanlı İmparatorluğun egemenliği altında yaşamış olan milletler için, özellikle Batı Ermenistan tarihinin etraflıca araştırılması için çok yararlı olabilir.

Bu güne kadar yayınlanmış olan belgeler Türkiye arşivlerinde bulunan zengin koleksiyonların yalnız bir kısmını kapsamaktadır. Fakat bu yayınlanmış belgelerde de Tarihi Ermenistanın batı bölümü, özellikle

Ermenilerin yaşadığı vilayetler için önemli malûmatlar bulunmaktadır.

Yayınladığımız bu eser iki bölümden, yani araştırma ve tarihi belgelerin tercümesinden ibarettir. Araştırma şu 3 bölümü kapsamaktadır; 1) OSMANLI İMPARATORLUĞUNDA ERMENİLERİN HUKUKİ DURUMU. 2) TOPRAK POLİTİKASI VE VERGİ SİSTEMİ. 3) TARİHİ ERMENİSTAN TÜRK COĞRAFYACILARI ESERLERİNDE.

Tercüme bölümünde tarafımızdan Ermenilere ait bir çok türkçeden çevrilmiş fermanlar, iradeler, kanunnameler ve diğer belgesel kaynaklar vardır.

Bu bakımdan tarihi Ermenistanın 16-19-cu asırlarını kapsayan sosyo-ekonomik tarihi araştırmalar için O.L.Barkanın yayınladığı ÖOsmanlı İmparatorluğunda zirai ekonominin hukuki ve mali esasları eseri oldukça önemlidir. Bu kanunlar Türkiyenin egemenliği altındaki Ermeni köylülerin hukuki durumunu, arazi mülkiyetlerini ve vergi sistemini daha birçok sorunları açıklığa kavuşturmaktadır.

Devşirmeye ait belegeleri I.H. Uzunçarşılının İstanbulun arşivlerinden tophıyarak ÖOsmanlı devleti teşkiltinden kapkulu ocakları başlığı altında yayınladığı kitabından seçtik.

Türk kanunnamelerini ve kanunlarını ise 1962 ve 1965 senelerinde Hediye Tuncer'in ÖOsmanlı İmparatorluğunda toprak hukuku, arazi kanunları ve kanun açıklamaları ve Osmanlı İmparatorluğunda toprak kanunları eserlerinden derleyerek Ermeniceye tercüme ettik. Bu belgelerde Osmanlıların Ermenistanda izledikleri tarım politikasına ve vergi sistemine ait etraflı malumat vardır.

İstanbulun Ermeni toplumu ve umumiyetli gayrimüslim cemaatlara ait türkçe belgeler Ahmet Refikin Ö16-cı asırda İstanbul hayatı kulliyatında bulunmaktadır. Neşredilen bu fermanlarda kiliselerin ve diğer hayırperver kurumların tahribine, din değiştirme sorunlarına, dinsel merasimlere milli giyisilere ve diğer konularda olan tahditlere ait belgeler mevcuttur. İstanbulun Ermeni Patrikhanesine ait bazı beratlar diğer neşriatlardan alınmıştır.

Bununla beraber belirtelim ki, Ermeni tarihçileri Osmanlı vakanüvislerinin eserlerini geniş çapta kullanmakta, ve 20-ci asırda Türk-Ermeni ilişkilerine ait Türk tarihçilerinin araştırmalarına özel önem göstererek, tarafsız olarak değerlendirmektedirler.



Ա. Փափազյան

**ԹՈՒՐԱԿԱՆ ԿԱԿԵՐԱԳՐԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**  
(16-19-րդ դարեր)

*Խմբագիր՝  
Սրբազրիչ՝  
Շարվաձբը՝  
Ձեռագիրում*

**Նիկոլայ Նովիաննիսյան  
Արա Չանգլյան  
Լուսինե Նակոբջանյան  
Նասմիկ Ծոտունյան**

*Նանձնված է շարվաձրի 05.03.1999թ.: Ստորագրված է Կրթագրություն  
10.04.1999թ.: Փորձապի՝ 84x60 1/16: Թ-ուղղ՝ օֆսեթ 1 կտրոց:  
Տառատեսակը՝ Arial Armenian: Տպագրական 17.75 մամուլ:*



© »ԵԳԵԱ« հրատարակչություն  
ՀՀ, Երևան-10, Խորենացու փ. 28. Հեռ. 58-51-02

A 85190

ԱՎԵՏԻԱ ՓԱՓԱԶՅԱԼԸ հայ-թուրքական հարաբերությունների միջնադարի մասնագետ է: Գիտական ավարտաճառը՝ «ԶՅԱԹԻԲ ՉԵԼԵԲԻԻ ՃԻՅԱՆ-ՆՅՈՒՄԱՆ ԵՎ ՖԵՋԼԵՔԵՆ ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» (17-րդ դար) խորագրով պաշտպանել է 1967 թ. Մոսկվայում եւ այնուհետեւ 32 տարի շարունակաբար աշխատել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտում:



Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետում դասավանդել է Թուրքիայի պատմությունն ու օսմաներեն լեզուն (արաբատառ թուրքերեն): Իր հրատարակությունների մեծ մասը նվիրված է Հայաստանի եւ հայ տղովորդի մասին միջնադարի թուրք պատմագիրների հաղորդած նյութերի ուսումնասիրությանը:

Օսմաներենի գիտակ եւ աղբյուրագետ-պատմաբանը 1983 թվականից սկսել է զբաղվել հայերի ցեղասպանության հարցերով եւ 1988 թ. Երեւանում հրատարակել է «ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԵՐԻՏ-ԹՈՒՐՔԵՐԻ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ» գիրքը եւ մի շարք գիտական այլ հոդվածներ:

1996 թ. Մեծ եղեռնի 80 ամյակի կապակցությամբ Լոս Անջելեսում լույս ընծայեց «ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԿՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ուսումնասիրությունը: Լոս Անջելեսի հայկական մամուլում լույս տեսած նրա գիտական հոդվածները ամփոփված են իր կազմած «ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՐՅԸ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ» խորագրով մատենաշարի 5 հատորներով:

Գիտական գեղուցումներով հանդես է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում:

Ավետիս Փափազյանը այսօր էլ բուռն կերպով շարունակում է զբաղվել միջնադարի թուրքական աղբյուրների, արխիվային նյութերի, ինչպես նաեւ հայկական հարցի եւ մեծ եղեռնին վերաբերող նյութերի ուսումնասիրությամբ:

